ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ



ԻՐԱՆ ՎԱՅՐ

TURKEY
Caspian Sea
IRAQ
Baghdad
LEGEND
Capital
Centre of Province
Centre of County
Airport
KUWAIT
Kuwait
Persian Gulf
SAUDI
ARABIA
Manama
BAHRAIN
QATAR

GENERAL MAP OF ISLAMIC REPUBLIC OF IRAN

TURKEY
Caspian Sea
IRAQ
Baghdad
LEGEND
Capital
Centre of Province
Centre of County
Other Cities
Port
International Boundary
Province Boundary
Freeway or Highway
Main Road
Secondary Road
Dirt Road
Railway
Permanent Lake
Seasonal Lake
Scale : 1: 6,000,000
KUWAIT
Kuwait
SAUDI
ARABIA
Persian Gulf
Manamah
BAHRAIN
QATAR

3 026
03 ~~Інформ~~
1 b Бібліотека
...10л

V

03
Բ-26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԻՐԱՆ ԱՅՍՕՐ

(ՏԵՂԵԿԱՏՈՒ)

3076

ԵՐԵՎԱՆ 1999



ԳՏԴ 950
ԳՄԴ 63-3 (5 Իրան)
Բ 260

Տպագրվում է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի Գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրությամբ պրոֆեսոր ***Նիկոլայ Հովհաննիսյանի***

Հովանավորությամբ ու մեկենասությամբ

իրանահայ Մեղա,
Մեպուհ և Նժդեհ
Մալանյաններ Գերդաստանի

Բաքուրդյան Վ.

Բ 260 ԻՐԱՆՆ ԱՅՍՕՐ (Տեղեկատու), եր.: Վահան, 1999 թ. 336 էջ, ներդիր 16 էջ:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Բաքուրդյանի աշխատանքը համակողմանի տեղեկություններ է պարունակում ժամանակակից Իրանի պատմության, տնտեսության, մշակույթի, պետական կառույցների, այդ երկրի ազգային կազմի, լեզուների, կրոնների և այլնի մասին: Հատուկ ուշադրություն է դարձված Իրանի հայ համայնքի պատմության լուսաբանմանը և արդի եռապատ հայ-իրանական հարաբերություններին:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, արևելագետների, միջազգայնագետների, ուսանողության և ընթերցող լայն հասարակայնության համար:

Բ $\frac{0503030000}{0065(01)-99}$ 99

ԳՄԴ 63-3 (5 Իրան)

ISBN 99930-833-0-5

© Վահան Բաքուրդյան

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Իրանը մարդկային քաղաքակրթության հնագույն օջախներից մեկն է: Վաղնջական ժամանակներից սկսած այդ երկիրը հանդիսացել է իշխանության, մշակույթի և տնտեսության ամենաաչքի ընկնող կենտրոններից մեկը: Իրանական ժամանակակից հասարակությունը մոտ երեք հազարամյակի ընթացքում մշակված ու հղկված հինավուրց քաղաքակրթության ու մշակույթի կրողն է, մի մշակույթ, որը բացառիկ խորն է ու ազգային, և իր մեջ պարունակում է մտքի զարգացման զարմանալի բազմազանություն: Իրանական բարձրավանդակը նաև հնագույն պետական միավորումների ու աշխարհակալությունների բնօջախն է, որտեղ իշխանության առաջին սաղմերը ստեղծվել են երկիր ներթափանցած արիական ցեղերի կողմից և շարունակվել աքեմենյանների, պարթևների, սասանյանների հզոր ու լայնածավալ աշխարհակալ պետությունների տիրապետության շրջանում: Իրանը այն բացառիկ ու եզակի երկրներից մեկն է, որ չունի անկախության օր, որովհետև երբեք չի կորցրել իր անկախությունը:

Ներկայումս Իրանը Միջին Արևելքի ամենախոշոր պետություններից մեկն է: Նա ունի ոչ միայն վիթխարի կենսական տարածություն, հսկայական բնական ռեսուրսներ, բազմաճյուղ ու զարգացած արդյունաբերություն, այլև ընդունակ ժողովուրդ: Նա գտնվում է առաջնակարգ ռազմագիտական դիրք Պարսից ծոցի, Հնդկական օվկիանոսի և Կասպից ծովի ավազաններում: Նրա վրայով են անցնում Եվրոպան, Ասիան և Աֆրիկան միմյանց կապող կարևորագույն ծովային, օդային և ցամաքային հաղորդակցության ճանապարհները:

Իրանը նաև մեր տարածաշրջանի այն երկրներից մեկն է, որի պատմությունը սերտորեն շաղկապված է Հայաստանի պատմության հետ: Հիրավի, այդ երկիրը ավելի քան երեք հազարամյակի ընթացքում հանդիսացել է հայ ժողովրդի պատմական ճակատագրի կերտման անմիջական ու գործուն մասնակիցը:

Հանրահայտ իրողություն է, որ հայերը դեռևս իրենց պատմության արշալույսին ամենաբազմազան շփումներ են ունեցել հարևան երկրների ու ժողովուրդների հետ: Սակայն պատմականորեն ո՛չ մի երկիր և ո՛չ մի ժողովուրդ աշխարհագրական, քաղաքական, հոգևոր-մշակութային և այլ առումներով այնքան մոտ չի եղել հայերին, որքան Իրանն ու իրանական ժողովուրդը: Պատահական չէ, որ այսօր էլ հայ և իրանական ժողովուրդների կենցաղի, վարք ու բարքի, մտածողության և նույնիսկ հոգեկան կերտվածքի բնագավառում կան բազմաթիվ ընդհանրություններ: Իրանական ժողովրդի աշխարհընկալումը ևս շատ ընդհանրություններ ունի հայերի աշխարհընկալման հետ: Երկու ժողովուրդներն էլ չեն հավատում բռնությանը, ծարավի են արդարության և անկոտրում են դրան հասնելու պայքարի ճանապարհին: Երկու ժողովուրդներն էլ աչքի են ընկնում իրենց պայծառ լավատեսությամբ: Գաղտնիք չէ, որ առանձին դարաշրջաններում Հայաստանն ու հայ ժողովուրդը Իրանի հետ գտնվել են սերտ դինաստիական կապերի մեջ, ապրելով գերազանցապես Իրանի քաղաքական և կուլտուրական շահերով:

Նորագույն ժամանակներում, հատկապես Հայաստանի երրորդ հանրապետության ստեղծումից հետո, հայ-իրանական հարաբերություններն ապրեցին բուռն ու անկասելի զարգացում: Պատմականորեն կարճ ժամանակամիջոցի ընթացքում, 1991 թ. Հայաստանի նորոգ անկախության ձեռք բերումից հետո, հայ-իրանական հարաբերություններն արձանագրեցին բարեկամության, փոխադարձ վստահության և եղբայրական համագործակցության բազմաթիվ հիշարժան էջեր: Անկախության ձեռք բերումով Հայաստանը Իրանի հետ հայտնվեց նույն տարածաշրջանում և նրանց համագործակցությունը դրանով ձեռք բերեց նոր որակ, երկկողմանի շփումներից թևակոխելով ավելի ընդարձակ ու ծավալուն տարածաշրջանային համագործակցության ոլորտը:

Իրանը առաջին պետություններից մեկն է, որ ճանաչել է Հայաստանի նորոգ անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ: Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը պարտադրում էր նրան Իրանի հետ հարաբերություններին տալու հույժ կարևորություն: Պատահական չէ, որ 1991 թվականից սկսած Հայաստանն սկսեց Իրանի նկատմամբ վարել դինամիկ ու եռանդուն, իր խորքում անկեղծ ու բարեկամական, երկարաժամկետ ծրագրերով օժտված, խոհուն ու հեռանկարային մի քաղաքականություն, որը

խարսխված էր երկու երկրների միջև դարավոր բարեկամության լավ պատմական հիմքի վրա: Այդ հարաբերությունների վերընթաց զարգացման առհավատչյան նաև այն էր, որ մեր օրերում երկու անկախ և ինքնիշխան այդ պետությունների միջև որևէ տարածքային կամ էթնիկական հիմնախնդիր կամ վեճ գոյություն չունի:

Իրանի Իսլամական Հանրապետությունը լիուլի արդարացրեց հայ ժողովրդի հույսերը: Նա օգնեց Հայաստանին ճեղքելու տրանսպորտային այն դաժան շրջափակումը, որ մեր մանուկ հանրապետության համար պատրաստել էին Ադրբեջանը և Թուրքիան: երկու երկրների համատեղ ջանքերով Արաքս գետի վրա կառուցված բարեկամության կամուրջը Հայաստանի համար դարձավ «հույսի կամուրջ», «կյանքի ճանապարհ»: Առհասարակ Իրանը Հայաստանի առջև բաց արեց պատուհան դեպի արտաքին աշխարհը: Իրանի ցամաքային ու օդային ճանապարհներով, ինչպես նաև Պարսից ծոցի նավահանգիստներով, մեր երկիրը կապվեց բարեկամ արաբական աշխարհի, Հնդկաստանի, Պակիստանի և Հարավ-Արևելյան Ասիայի արագ զարգացող պետությունների հետ:

Տարիներ շարունակ որպես իրանագետ, մտածումներ եմ ունեցել հայ ընթերցող լայն հասարակայնությանը ներկայացնել մի հանրամատչելի տեղեկատու «Իրանն այսօր» վերնագրով, որը պարունակեր համակողմանի տեղեկություններ մեր հարավային հարևանի, նրա բնակության երկրի, մշակութային կյանքի, հասարակական-քաղաքական միտքի, տնտեսության, ձեռակերտ ու անձեռակերտ հարստությունների, իսլամական հեղափոխությունից հետո նրանում տեղի ունեցած տեղաշարժերի մասին և այլն: Այդ մտահղացումը հրատապ անհրաժեշտություն էր դառնում նաև այն պատճառով, որ թեև հայ ժողովուրդը միշտ էլ սնեռուն հետաքրքրություն է դրսևորել դեպի Իրանը և նրա ժողովուրդը, սակայն վերջին 70-80 տարիների ընթացքում ապրելով խիստ գաղափարայնացված պետության կազմում, որոշակիորեն կտրվել էր այդ դարավոր հարևանից: Եվ Արաքս գետը դարձել էր ավելի շատ երկու ժողովուրդներին բաժանող, քան միացնող գետ: Ամենին, հայերի մոտ ձևավորվել էին ռեալ իրականությանը չհամապատասխանող, ավելի ճիշտ թյուր պատկերացումներ այդ երկրի իրական միտքի, զարգացման մակարդակի, հասարակական հարաբերությունների մասին և այլն: Մեղմ ասած, մեր հանրության պատկերացումները մեր կողքին գտնվող երկրի

մասին բավականին հնացել էին և շատերի ընկալման մեջ Իրանը ներկայանում էր որպես «էքստրավատոտիրական ու կիսակապիտալիստական, հետամնաց մի երկիր»: Այդ բոլորի արդյունքում հայ իրականության մեջ շատերի մոտ խամրել էր հետաքրքրությունը Իրանի նկատմամբ:

Անկախ այդ բոլորից, վերջին մի քանի տարիների ընթացքում հրապարակի վրա համարյա գոյություն չի ունեցել նորագույն գրականություն Իրանի պատմության տարբեր շրջանների, առավել ևս Իսլամական Հանրապետության վերաբերյալ:

1992-1998 թվականներին Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի հանգամանքով Թեհրանում իմ պաշտոնավարելու տարիներին ես վերջնորեն համոզվեցի, որ Իրանը Հայաստանին մոտեցնելու և մեր երկու ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների և փոխադարձ ճանաչողության գործը ավելի կայուն հիմքերի վրա դնելու համար հրամայական անհրաժեշտություն է կազմել «Իրանն այսօր» տեղեկատուն:

Անտարակույս այն չի կարող զերծ չլինել թերություններից ու բացթողումներից: Դրա համար ես հայցում եմ ընթերցողի ներողամտությունը: Ուզում եմ հավատալ, որ սույն տեղեկատուն ևս մի քար կավելացնի այն բարձր կամարին, որի վրա անջնջելի տառերով գրված է «Հայ-իրանական բարեկամություն»:

Վերջում ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնել իրանահայ Մեդա, Մեպուհ և Նժդեհ Ալչանյաններ հարգարժան Գերդաստանին սույն գրքի տպագրության հոգանավոր ու մեկենաս հանդիսանալու համար:

ԵՐԿՐԸ ԵՎ ԲԱԿՏՈՒԹՅՈՒՆԸ

ՖԻԶԻԿԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Իրանն ընկած է Ասիական մայր ցամաքի հարավ-արևմտյան մասում և գրաղեցնում է իրանական բարձրավանդակի ընդարձակ տարածքի 2/3 մասը, կիզիչ Միջագետքից մինչև Կոպետ-Դաղի կատարները տարածվելով հասնելով 1400 կմ, և Արաքսից մինչև Պակիստանի սահմանից Բելուջիստան՝ մոտ 2250 կմ: Իրանի ամենահյուսիսային կետը ընկած է հասնելով այն նույն լայնության վրա, ինչ Մադրիդը, իսկ ամենահարավայինը՝ Կենտրոնական Մահարայի լայնության վրա:

Երկրի տարածքը կազմում է 1 միլիոն 648 հազար քառ. կմ: Այն հավասար է Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Բելգիայի, Իռլանդիայի և Դանիայի տարածքներին միասին վերցրած: Հյուսիսում Իրանը սահմանակցում է ԱՊՀ անդամ երեք երկրների՝ Հայաստանի Հանրապետության (սահմանը իրանական տվյալներով 42 կմ է, այլ տվյալներով 46 կմ), Ադրբեջանի Հանրապետության, Թուրքմենստանի Հանրապետության հետ: Հյուսիս-արևմուտքում Թուրքիայի (սահմանը ըստ թուրքական տվյալների 454 կմ, ըստ իրանական տվյալների 470 կմ), արևմուտքում Իրաքի (սահմանը 1280 կմ), արևելքում Աֆղանստանի (սահմանը 850 կմ, աֆղանական տվյալներով 820 կմ), հարավ-արևելքում Պակիստանի հետ (սահմանը 830 կմ): Հյուսիսում Իրանի տարածքը ողողվում է Կասպից ծովի, հարավում՝ Պարսից ծոցի և Օմանի ծովի ջրերով:

Իրանական սահմանի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 7,6 հազար կմ, որից 1/3-ը ընկնում է ծովային սահմանին (2,5 հազար կմ): Երկրի աշխարհագրական դիրքը և հատկապես ծովային սահմանների առկայությունը հեշտացնում է նրա տնտեսական կապերը աշխարհի բազմաթիվ երկրների հետ:

Մակերևույթապատկերը: Իրանը լեռների ու բարձր լեռնաշղթաների երկիր է, որոնք զբաղեցնում են նրա տարածքի 4/5-ից ավելին: Ռելիեֆը շատ բարդ է, բարձրությունների տատանումները խիստ կտրուկ: Այսպես, Մերձկասպյան հարթությունը գտնվում է ծովի մակերևույթից 28 մետր ցածր, իսկ Իրանական լեռնաշխարհի առանձին շրջանները ծովի մակերևույթից ավելի քան 1000-1200մ բարձր են: Լեռնաշղթաների գագաթները հասնում են մինչև 3000-5500 մետրի:

Իրանական բարձրավանդակը երեք կողմերից շրջապատված է լեռնաշղթաներով. հյուսիսում՝ Թուրքմենա-Խորասանյան և Էլբուրսի, արևմուտքում և հարավում՝ Քրդստանի, Զագրոսի և Մեհրանի, հարավարևելքում և արևելքում՝ Արևելա-իրանական լեռներով: Իրանական բարձրավանդակը հանդիսանում է Առաջավոր Ասիայի ամենաչոր ու անապատային տարածքներից մեկը: Բարձրավանդակի կենտրոնական մասում են գտնվում միջին բարձրության Արևելա-Իրանական լեռները և Քոհրուդ լեռնաշղթան, որոնց առանձին գագաթները հասնում են 2-3 հազար մետրի:

Էլբուրս լեռնաշղթան հանդիսանում է Իրանում ամենաբարձրը: այն գտնվում է երկրի հյուսիսում և ձգվում է արևմուտքից-արևելք 900 կմ երկարությամբ: Էլբուրսի լեռները աչքի են ընկնում իրենց անմատչելիությամբ, կտրուկ ուրվագծերով, գահավեժ թեքություններով, խիստ կտրտված նեղ կիրճերով: Այդ լեռնային համակարգի բարձրագույն կետը Դեմավենդ լեռն է, 5604 մետր բարձրությամբ: (Վերջերս արտաստանյան որոշ աղբյուրներ տալիս են Դեմավենդի ճշտված բարձրությունը 5,771 մետր կամ 18,934 ոտնաչափ): Նրա գագաթը միշտ ձյունածածկ է: Գտնվում է Թեհրանից հյուսիս-արևելք մոտ 80 կմ հեռավորության վրա և նրա տպիտականեր գագաթը լավ երևում է մայրաքաղաքից:

Դեմավենդը հանգած հրաբուխ է և մինչև այժմ արտաթորում է տաք ջրային ու ծծմբային գոլորշիներ, որը երբեմն պատճառ է հանդիսանում ձյան խոշոր զանգվածների արագ հալչելուն և շրջակա հարթավայրերում անակնկալ ջրհեղեղների առաջացման: Դեմավենդը իրանցիների մոտ հանդիսանում է գեղեցկության, հզորության և ուժի խորհրդանիշ: Նրա ստորոտները, իրենց սառնորակ աղբյուրներով, պտղաբեր ու փարթամ մրգատու այգիներով թեհրանցիների ամառային հանգստի, ինչպես նաև ձմեռային սպորտի լավագույն վայրերից մեկն են:

Բարձրությամբ Էլբուրս լեռնաշղթայի երկրորդ գագաթը Բարիր կամ Ալամքուհի լեռն է՝ 4805 մետր բարձրությամբ: Դեմավենդը և Բարիրը երկրում ամենաբարձր լեռնագագաթներն են: Գետուք (2235 մ) լեռնանցքի վրայով անցնում է ավտոճանապարհ և Տրանսիրանական երկաթուղագիծը, Քուինի լեռնանցքով Թեհրան-Էնզելի ավտոճանապարհը, իսկ Քենդեվանի լեռնանցքով՝ Թեհրան-Չալուս ավտոճանապարհը:

Էլբուրսի ռելիեֆի բացառիկ բարդությունը ստիպել է Տրանսիրանական երկաթուղու շինարարության ժամանակ Շահի-Գերմար հատվածում կառուցել 93 թունել՝ 23,6 կմ ընդհանուր երկարությամբ: Այդ ճանապարհի հյուսիսային տեղամասի ամենաերկար թունելը Գետուքի թունելն է 2880 մետր երկարությամբ:

Կասպից ծովից արևելք ձգվում են Թուրքմենա-Խորասանյան լեռները, որոնք ունեն ավելի հարթ ռելիեֆ և ավելի մատչելի լեռնանցքներ: Այդ համակարգում առանձնանում են երեք լեռնաշղթաներ. հյուսիսային՝ Ղոփեթդաղ, միջին՝ Ալադաղ և հարավային՝ Նիշապուրյան լեռներ: Նշված լեռնաշղթաների առանձին հովիտներ (Քուչանա-Մեշհեդական, Նիշապուրի, Զամի) ունեն տնտեսական մեծ նշանակություն: Թուրքմենա-Խորասանյան լեռների առանձին գագաթներ հասնում են 3000 մետրի:

Արևելքում, աֆղանական սահմանի երկայնքով, գտնվում են Կայեն և Պելենգան ոչ բարձր լեռնաստանները: Դա իրանական բարձրավանդակի հնագույն հրաբխային շրջանն է, հանգած հրաբուխների կոնաձև լեռներով, որոնցից ամենաբարձր գագաթ ունեցողը Թեֆրան լեռն է (4042 մ):

Երկրի հարավում ձգվում են Մեհրան և Զագրոս լեռների լեռնաճյուղավորումները տափակ գագաթներով և զառիվայր ու կտրտված լեռնալանջերով: Այդ լեռների առանձին գագաթներ հասնում են 4000 մ բարձրության: Զագրոսի և Մեհրանի հարավային նախալեռների երկայնքով, Պարսից ծոցի առափնյա շրջաններով, նեղ շերտով ձգվում է Գերմեգիր անապատը:

Իրանի հյուսիս-արևմտյան և արևմտյան մասը զբաղեցնում է Հայկական բարձրավանդակը, որը հարավում վերածվում է Զագրոսյան լեռնաստանի: Հայկական բարձրավանդակը կտրտված է գետահովիտներով, բազմաթիվ գոգահովիտներով, որոնցից առանձնանում է Ուրմիա (Կապուտան) լճի իջվածքը: Լճի շուրջը ձգվում է տափարակ ադուտա-

յին ցածրադաշտ: Ուրմիայի իջվածքից արևելք, առանձնանում են հին հրաբխային Սեբելան (4821 մ) և Սահենդ (3710 մ) հրաբխային զանգվածները: Հյուսիսում հայկական լեռնաշխարհը աստիճանաբար վերածվում է հարթավայրային Մուղանի տափաստանի, կավահողերով, աղուտներով և կիսաանապատային բուսականությամբ. արևմուտքում այն միանում է Քրդստանյան (Կուրդվաց) լեռնաշղթային, որն ունի 2000 և ավել մետր բարձրություն:

Զագրոսի լեռնային համակարգը բաղկացած է զուգահեռ լեռնաշղթաներից, որոնք հյուսիս-արևմուտքից ձգվում են դեպի հարավ-արևելք, ընդհուպ մինչև Պակիստանի լեռները: Զագրոսի լեռնագագաթները հասնում են ավելի քան 4,5 հազար մետրի: Լեռնաշղթայի հարավային մասն ունի Հարավ-Իրանական լեռներ անվանումը, իսկ արևելյան մասը կոչվում է Մեքրան:

Իրանի լեռները երիտասարդ են (հատկապես Էլբուրսի համակարգը) և աչքի են ընկնում բարձր երկրաշարժատեսությամբ: Մահասարակ այդ երկրի տարածքը գտնվում է ակտիվ երկրաշարժերի գոտում: Իրանում հազվագյուտ չեն նաև տարերային այլ աղետները՝ ջրհեղեղ, անապատային փոթորիկներ և այլն:

Իրանի ռելիեֆում ցածրադիր վայրերը կազմում են համեմատաբար ոչ մեծ տարածք: Հյուսիսում, Կասպից ծովի ափերով, նեղ շերտով (2-ից մինչև 6 կմ) ձգվում է Մերձկասպյան հարթությունը: Ծովը լցվող գետերի դելտաներում այդ հարթությունը լայնանում է մինչև 30-40 կմ: Շնորհիվ կլիմայի խոնավության և բուսական աշխարհի հարստության, իրավամբ, Մերձկասպյան հարթությունը համարվում է երկրի մարգարիտը, «Իրանական դիվերանա»:

Կասպից ծովից արևելք, Աթրեք գետի ավազանում, տարածվում է Գորգանի հարթավայրը իր չոր կլիմայով և լայնարձակ աղուտային հողերով:

Իրանի հարավ-արևմուտքում ձգվում է Միջագետքյան հարթությունը:

Կլիման: Իրանի կլիման, նրա տարածքի մեծ մասում, չոր և ցամաքային է: Համարյա բոլոր կողմերից երկրի երիզումը բարձր լեռնաշղթաներով պայմանավորում է ծովային օդային զանգվածների չնչին դերը Իրանի տարածքի մեծ մասում, հատկապես նրա կենտրոնական շրջաններում, կլիմայի ձևավորման գործում:

Դրա հետ է կապված Իրանի բնապատկերների (լանդշաֆտ) յուրահատկությունը, որը մեծապես տարբերվում է նրա հետ միևնույն լայ-

նությունների վրա ընկած մի շարք երկրների, օրինակ, Հունաստանի և Հարավային Իտալիայի, Հյուսիս-Արևմտյան Հնդկաստանի, Բիրմայի, Հարավ-Արևելյան Չինաստանի լանդշաֆտներից: Կլիմայի և բուսականության միջերկրածովյան տիպը, որը բնորոշ է Հունաստանին ու Իտալիայի հարավին, ինչպես նաև Հնդկաստանին, Բիրմային և Հարավ-Արևելյան Չինաստանին հատուկ մուսոնային կլիման, բացարձակապես բնորոշ չէ Իրանի համար: Նրա համար բնորոշը կիզիչ չոր ամառն է և բավականին ցուրտ ձմեռը: Տեղումները չափազանց քիչ են, համենայն դեպս երկրի տարածքի մեծ մասում: Համեմատության համար նշենք, որ աշխարհում տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 860 մմ: Իրանում այն հավասար է 240 մմ-ի, ընդորում տեղումների նվազագույն չափը, որը հնարավորություն է տալիս գրաղվելու չոռոգվող հողագործությամբ, կազմում է 500 մմ: Իրանի այն շրջանները, որտեղ տեղումները տարեկան 500 մմ-ից ավել են, կազմում են երկրի ողջ տարածքի միայն 9 %-ը: Առավել շատ տեղումներն ընկնում են տարվա ձմեռային և գարնանային շրջաններին:

Առանձնապես չոր է իրանական բարձրավանդակի ներքին շրջաններում, քանի որ ծայրամասային լեռները կլանում են ողջ խոնավությունը: Երկրի ամենախոնավ շրջանը՝ Կասպից ծովի առափնյա շրջանն է, որտեղ տեղումների միջին տարեկան քանակը հասնում է 1500 մմ-ի և ավել: Դա իրենից ներկայացնում է մերձարևադարձային գոտի: Նվազագույն քանակով տեղումները ընկնում են երկրի կենտրոնական և արևելյան շրջաններին (տարեկան 100 մմ-ից ոչ ավել): Իրանական բարձրավանդակի ներքին շրջաններում են գտնվում երկու ամենախոշոր աղուտային, անպտուղ ու չոր անապատները՝ Դաշթե-Քեվիր (գրաղեցնում է 350 հազար քառ.կմ տարածք) և Դաշթե-Լութ անապատները, որոնք գրավում են երկրի տարածքի մեկ ութերորդ մասը: Իր չափերով երրորդ անապատը Ջազմուրյան անապատն է:

Դաշթե-Քեվիրը գիտնականների կարծիքով աշխարհում առավել անկենդան անապատն է: Այն սկսվում է համարյա Թեհրանի դարպասների մոտից և ձգվում է արևմուտքից արևելք 600 կմ երկայնքով և 300 կմ նվազագույն լայնքով: Այստեղ ամառը օդի ջերմաստիճանը ցերեկը բարձրանում է մինչև 50°, իսկ գիշերը իջնում է 4°: Անապատում երբեմն այնպիսի փոշու ամպեր են բարձրանում, որ նույնիսկ երկու քայլի վրա ոչինչ չի երևում: Նրա բուսականությունը վերին աստիճանի աղքատիկ

է ու դժգույն: Բացառություն են կազմում հազվագյուտ օազիսները (օրինակ Թեբես և այլն):

Դաշթե-Քեվիր անապատի վրայով հարավից-հյուսիս ուղղությամբ անցնում են երեք ճանապարհներ (ավելի ճիշտ շավիղներ): Դրանք են. Նային-Ջենդաք-Դամղան, Ցեզդ-Խոր-Թորուդ և Ջենդաք-Սեմնան:

Հարավ-արևելքում գտնվող Դաշթե-Լութ անապատը աշխարհի ամենակիզիչ և չոր անապատներից մեկն է: Այն Դաշթե-Քեվիրից բաժանվում է մի նեղ պատնեշով, որը ձգվում է Ցեզդից մինչև Թեբես: Նրա վրայով անցնում են երկու ոչ բանուկ ճանապարհներ, որոնք գնում են դեպի Մեշհեդ և գլխավորապես օգտագործվում են ուխտագնացների կողմից: Դաշթե-Լութ անապատի հարավային մասում նույնիսկ քարավանային ճանապարհները շատ քիչ են:

Աղուտային Դաշթե-Քեվիրից Դաշթե-Լութը տարբերվում է ավազներով ծածկված իսկական տարածություններով: Իսկապես, այն տահող ավազների մի իսկական ծով է: Վիթխարի տարածություններ նաև քարքարոտ են:

Դաշթե-Լութ անապատը համարյա զուրկ է բուսականությունից, բացառությամբ ծայրամասերի նախալեռնային շրջանների, որտեղ հազվագյուտ կերպով հանդիպում են դալուկ թփուտներ: Այն բացառիկ քրաքուրկ է, իսկ եթե առանձին վայրերում հանդիպում են աղբյուրներ, դրանց ջուրը այն աստիճանի աղի է, որ պիտանի չէ օգտագործման համար: Բնակավայրեր հանդիպում են միայն անապատի ծայրամասային շրջաններում: Դրանք ըստ էության ժամանակավոր բնակավայրեր են:

Սահաստակ ամառն Իրանում ամենուրեք շոգ է և չոր, բացառությամբ Կասպից ծովի ափերի, որը և ամռան ամիսներին իրեն է ձգում մայրաքաղաքի և այլ վայրերի հազարավոր հանգստացողների: Հիրավի, Կասպից ծովի առափնյա շրջանները հանդիսանում է լավագույն հանգստյան գոտի:

Պարսից ծոցի և Օմանի ծովի առափնյա շրջանների կլիման չոր մերձարևադարձային է և արևադարձային, որը նույնպես բնորոշվում է չափազանց քիչ խոնավությամբ և շոգ ամառով:

Իրանական բարձրավանդակի ներքին անապատներում և երկրի հյուսիս-արևելքում ձմռանը հազվագյուտ չեն սառը օդային զանգվածների ներխուժումները Սիբիրից և Արկտիկայից, որի հետևանքով տեղի է ունենում ջերմաստիճանի կտրուկ անկում՝ մինչև —20, —25 աստիճան:

Միաժամանակ երկրի շատ շրջաններում ամառային շոգը գերազանցում է +30, +35 աստիճանը:

Իրանի տարածքում, կախված խոնավության աստիճանից, կարելի է առանձնացնել հինգ ենթագոտիներ. 1. Երկրի հյուսիս-արևմուտքում ու արևմուտքում բարձր լեռնային շրջաններ, որտեղ տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 2000 մմ: (Որպես կանոն այդ շրջանները հանդիսանում են արոտավայրային անասնապահության շրջաններ): 2. Կասպից ծովի հարավ-արևմտյան ափը Ասթարայից մինչև Նոուշահր 1000-2000 մմ տեղումների քանակով (այդ գոտին առավել բարենպաստ է չոռոգվող բուսաբուծության համար): 3. Կասպից ծովի առափնյա շրջանը Նոուշահրից մինչև Բենդեր-Թորքեման և Էլբուրս լեռան հյուսիս-արևելյան ստորոտները, Քրդստանի և Ատրպատականի լեռնային շրջանները տարեկան 700-1000 մմ տեղումների քանակով: 4. Բեհշեհրի, Գորգանի, Ռեվանսերի, Բորուջերդի շրջանները 500-700 մմ տեղումների քանակով: 5. Ատրպատականի, Քրդստանի, Համադանի տարածքի հիմնական մասերը, Կենտրոնական օազանի հարավ-արևմտյան մասը, Ֆարսի և Խորասանի նահանգների մեծ մասը տարեկան 300-500 մմ տեղումների քանակով:

Աղյուսակ 1.

Օդի ջերմաստիճանը Իրանի մի շարք քաղաքներում (ըստ Ֆեչսիուսի):

Քաղաքը	Միջին մաքս.	Միջին մին.	Բացարձակ մաքս.	Բացարձակ մին.	Միջին ջերմաստ.
Անվազ	30,8	19,2	51,0	0,0	25,0
Արաք	18,0	5,5	39,5	-30,5	11,8
Բանդար-Աբբաս	30,4	21,9	45,0	4,8	26,2
Համադան	18,2	-0,9	37,0	-29,6	9,6
Սպահան	19,9	13,6	40,0	-8,6	16,8
Թեհրան	29,8	0,4	40,0	-14,0	16,1
Մաշհադ	20,6	8,0	41,0	-15,4	14,3
Ռաշտ	25,5	7,4	35,2	-8,2	16,5
Շիրազ	26,1	10,4	42,0	-6,2	18,2
Թավրիզ	16,7	5,7	38,6	-17,6	11,2
Թեհրան	22,3	12,4	40,4	-10,0	17,3
Ուրմիա	15,6	4,0	34,6	-16,4	9,8
Զահեդան	26,6	10,4	42,6	-9,8	18,5
Զանջան	23,6	-4,2	37,6	-27,6	9,3

Ջրային ցանցը: Գետերը, լճերն ու ծովերը: Իրանը երկու կողմերից՝ հյուսիսից և հարավից ողողվում է խոշոր ծովային ավազաններով: Հյուսիսում Կասպից ծովի ջրերով (մակերեսը 424,240 քառ.կմ): Այդ ծովի իրանական ափերի մոտ առկա են այսպես կոչված «ծանծաղուտային ծոցեր», որոնց առավելագույն խորությունը չի գերազանցում 15 մետրին: Այդ ծանծաղուտները թույլ չեն տալիս խոշոր նավերին մոտենալ ափին: Դրանք չափազանց հարուստ են ձկներով և միաժամանակ ծառայում են որպես թռչունների ձմեռանոցների վայրեր:

Կասպից ծովի իրանական հատվածի գլխավոր նավահանգիստներն են Բանդար Անզալին, Նոուշահրը և Բանդար Թորքեմանը:

Հարավում և հարավ-արևմուտքում Իրանի տարածքը ողողվում է Պարսից ծոցի (մակերեսը մոտ 250 հազ.քառ. կմ) և Օմանի ծովի ջրերով: Պարսից ծոցի միջին խորությունը 25 մետր է, առավելագույնը՝ 100 մետրից ավել (հարավ-արևելյան մասում): Պարսից ծոցի ջրերը չափազանց տաք են և աղով հագեցված: Ջրի միջին ջերմաստիճանը 18° է, ամռանը հասնում է 30-35°-ի, ձմռանը՝ 15,5-18°-ի: Աղիությունը գերազանցում է 40 %-ից: Ծոցը հարուստ է ձկներով, մարջանով (կորալլ) և մարգարտի խեցիներով: Հորմուզի նեղուցն ունի 60 կմ լայնություն և 70-90 մետր խորություն: Նեղուցի շրջանում ջրի ջերմաստիճանը փետրվարին միջին հաշվով 21,5° է, մայիսին՝ 28°, օգոստոսին՝ 32°:

Օմանի ծովը (մակերեսը 93 հազ.քառ.կմ) ավելի խոր է՝ Արաբական ծովի մուտքի մոտ նրա խորությունը կազմում է մինչև 3380 մետր: Նրանում ջրի ջերմաստիճանը ավելի բարձր է, քան Պարսից ծոցում, իսկ աղայնությունը քիչ ավելի պակաս: Օմանի ծովի նավահանգիստները խոշոր տնտեսական նշանակություն չունեն նախ այն պատճառով, որ ափամերձ շրջանները խորը չեն, ուստի չեն կարող ընդունել խոշոր նավեր և ապա նրանց կապը երկրի ներքին շրջանների հետ խիստ դժվար է՝ հաղորդակցության ճանապարհների բացակայության պատճառով:

Իրանի գետերի մեծ մասը վերաբերում է փակ ներքին ավազաններին: Նրանցից շատերը ամառվա շոգերին չորանում են և չեն հասնում մինչև ծովերը: Գետերի սնուցման հիմնական աղբյուրները գետնաջրերն են և մթնոլորտային տեղումները: Երկրի հյուսիսային մասում մի շարք գետեր սնուցվում են լեռների ձյունով և սառցադաշտերից: Ամբողջությամբ վերցրած Իրանի համար բնորոշ է ջրային ցանցի թույլ զարգացվածությունը և գետերը աչքի չեն ընկնում ջրառատությամբ:

Իրանի տարածքում կարելի է առանձնացնել վեց գետային ավազաններ.

1. Հյուսիսային — Կասպից ծովի ավազանը, որը գրավում է երկրի ողջ ջրահավաքման տարածքի 12 %-ը: Կասպից ծովն է տանում իր ջրերը Արաքս գետը (երկարությունը 920 կմ), որից 340 կիլոմետրը անցնում է Իրանի տարածքով: Այդ գետի ավազանի ընդհանուր տարածքը կազմում է 90 հազ.քառ.կմ: Կասպից ծովը թափվող մյուս գետերից հիշատակության արժանի են Սեֆիդրուդը (Ղզել-Ուզեն) (765 կմ), Կարասուն (85 կմ), Գորգանը (300 կմ), Աթրեքը (535 կմ), Շաղուսը: Կան նաև մի շարք այլ փոքր գետեր: Այդ ավազանի գետերի մեծ մասը իր սկիզբն առնում է Էլբուրսի լեռներում: Վերին հոսանքներում դրանք բուռն ու սահանքավոր են և հոսում են խորը ձորերով (կանյոն): Ցածրադիր վայրերում հոսում են ավելի հանգիստ և նրանցից շատերը ավարտվում են ճահճուտային դելտաներով: Կասպից ծովի ավազանի գետերը հարուստ են հիդրոէներգոռեսուրսներով և ձկների թանկարժեք տեսակներով:

2. Արևմտյան և հարավ-արևմտյան — Պարսից ծոցի և Օմանի ծովի ավազանը, զբաղեցնում է Իրանի ողջ ջրահավաքման տարածքի 25 տոկոսը: Այդ ավազանի առավել նշանակալից գետերն են Կարունը (890 կմ, հանդիսանում է Իրանի միակ նավարկելի գետը) Շաթթ-էլ-Արաբը (204 կմ), Քերխեն (755 կմ, Տիգրիսի ձախ վտակը), Հենդիջանը կամ Ջոհրեն (488 կմ), Մանդը (685 կմ) Մինաբը և այլն: Այս գետերը ջրառատ են բարձունքային շրջաններում, իսկ հարթավայրային մասերում սակավաջուր են և աղերով հագեցված: Օմանի ծովը թափվող գետերից առանձնապես աչքի է ընկնում Ջասկ գետը:

3. Ուրմիա լճի անջրթող ավազանը — ջրահավաքման տարածքը 3 %: Ուրմիա լիճը (հայկական աղբյուրներում Կապուտան), գտնվում է Արևմտյան Ադրբեջանում (Մարդասական): Նրա մակերեսը կազմում է 3,900-6000 քառ.կմ (կախված տարվա եղանակներից, ամռանը սովորաբար լճի հայելին կտրուկ նվազում է), բարձրությունը ծովի մակերևույթից 1275 մետր է, երկարությունը՝ 130 կմ, լայնքը՝ 15-ից մինչև 50: Լճի միջին խորությունը 5-6 մետր է, ամենամեծ խորությունը՝ 60 մետր: Ուրմիա լճի հատակում առկա է բուժիչ ցեխերի հզոր շերտ, որը բուժման նպատակներով լայնորեն օգտագործվում է ինչպես տեղական բնակչության, այնպես էլ երկրի տարբեր վայրերից եկածների կողմից: Ուր-

միա լիճը համարյա երբեք չի փոթորկում և չի սառչում: Լճի ջրերը աչքի են ընկնում հանքային աղերի բարձր խտությամբ (220 %), որի հետևանքով այն համարյա զուրկ է կենդանական աշխարհից: Լճի մեկ լիտր ջրի մեջ առկա է 188 գրամ զանազան հանքային աղեր և այդ առումով այն գերազանցում է օվկիանոսային ջրերին ու նույնիսկ Կարա-Բողազ-Գոլին: Մակայն Ուրմիա լիճը աղերի ընդհանուր պարունակությամբ զիջում է Մեռյալ ծովին (188,45-219,77 գրամ) և առավել ևս Էլտոն լճին (265 գրամ):

Լիճը թափվող գետերն են Նազլիչայը, Աջիչայը, Ջերրինդերուդը (Ջաղաթու), Սիմինրուդը:

4. Կենտրոնական անարտահոսք ավազան, որին բաժին է ընկնում երկրի ողջ ջրահավաքման տարածքի 50 %-ը: Այդ ավազանի առավել նշանակալից գետերն են Քերեջը, Ռուդե-Շուրը, Ջաջրուդը, Խելբերուդը, Սեմնանը, Դամղանը, Թեքաբը, Թեհրուդը, Ջայենդերուդը (405 կմ), Քուրը և ուրիշներ: Բոլոր այդ գետերը ջրառատ են միայն վերին հոսանքներում, իսկ ստորին հոսանքներում ջուրը խիստ պակասում է և աղիանում: Նրանց մեծ մասը լցվում է իրանական բարձրավանդակի ներքին մասերի աղի լճերը, իսկ շատերը ամառվա ամիսներին չորանում են: Այդ ավազանի ամենախոշոր լիճը հանդիսանում է Խամուն աղի լիճը, որի երկարությունը 60 կմ է, լայնքը 30 կմ:

5. Աֆղանստանին սահմանակից Սիստանի շրջանի աղի լճերի անարտահոսք ավազան: Այն ունի ջրահավաքման 7 %-ի տարածք: Այդ ավազանի հիմնական գետն է Գիլմենդը, որը սկիզբ է առնում Աֆղանստանում, իսկ ամենախոշոր լիճը Համուն Սարարին է:

6. Կարակումի անարտահոսք ավազան: Ընդգրկում է ջրահավաքման տարածքի ընդամենը 2 %-ը: Այդ ավազանի խոշորագույն գետը Գերիրուդն է, իր Քեշեֆրուդ ու Ջամ վտակներով:

Իրանի ամենաերկար գետը Սեֆիդրուդն է, (1000 կմ), որը սկիզբ է առնում Ալբորզ լեռներից:

Իրանի գետերը աչքի չընկնելով ջրային ռեսուրսների հարստությամբ, այնուամենայնիվ ունեն հսկայական տնտեսական նշանակություն՝ ոռոգման ու էլեկտրաէներգիայի արտադրության համար:

Ջրային պաշարների կուտակման տեսակետից Իրանում չափազանց կարևոր դեր են խաղում ջրամբարտակները: Ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետությունը ջրամբարտակների կառուցման ցուցանիշով

աշխարհում գրավում է չորրորդ տեղը: Խոշորագույն քրամբարտակներն են «Մեծ Քաբիրը» Քարաջ գետի վրա (որը Թեհրանին ջուր և էլեկտրականություն մատակարարող հիմնական քրամբարտակն է. ամառվա ամիսներին մեծ թվով թեհրանցիներ հանգստանում են քրամբարտակի գեղատեսիլ ափերին), Սեֆիդրուդ գետի վրա «Մանջիլ» քրամբարտակը, Մահաբադ գետի վրա նույնանուն քրամբարտակը, Կարուն գետի վրա «Շահիդ Աբասգուլի» քրամբարտակը, Դիզֆուլից հյուսիս ընկած Դեզ գետի վրա նույնանուն քրամբարտակը և այլն:

Իրանում ոռոգման նպատակներով լայնորեն օգտագործվում են նաև ստորերկրյա ջրերը: Դեռ հնագույն ժամանակներից սկսած իրանցիները ստեղծել են քյարիզների (ստորգետնյա ոռոգման ջրանցք) և ջրհորների լայն ցանց, որոնցից շատերը այսօր էլ օգտագործվում են: Իրանական կառավարության մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում ոռոգման ժամանակակից ջրանցքների կառուցման գործը:

Իրանում լճերի թիվը մեծ չէ, նրանց մեծ մասը անջրոդ է կամ անհոսք, տակավաղուր և աղի: Շատ լճեր ամռանը չորանում են: Կասպից ծովը պատկանում է այսպես կոչված փակ ջրավազանների թվին, այլ կերպ ասած նա լիճ է:

Քաղցրահամ ջրեր ունեցող լճերը հազվադեպ են Իրանում: Դրանց ընդհանուր թիվը չի անցնում 10-ից: Իրենց չափերով դրանք փոքր լճեր են:

Թեհրանից հարավ գտնվում է Դարյաչե-Նամակ խոշոր աղի լիճը (հայելու մակերեսը կազմում է 1806 քառ.կմ): Մյուս լճերից են Բախթեգանը (750 քառ.կմ), Թաշքը (442 քառ.կմ), Մահալուն (208 քառ.կմ) (բոլորը Ֆարսի նահանգում), Հովզ Սուլթանը (106,5 քառ.կմ) Կենտրոնական նահանգում, Աֆղանստանի սահմանակից շրջանում Սաբարի և Նամաքսար լճերը և այլն:

Իրանական բարձրավանդակում ամենախոշոր լիճը Խամունն է, որի ջրերը նույնպես աղի են: Նրա երկարությունը 60 կմ է, լայնքը՝ 30 կմ:

Պարսից ծոցը հանդիսանում է Հնդկական Օվկիանոսի ջրային ավազանի մի մասը: Այն ընկած է արաբական թերակղզու և հարավ-արևելյան Իրանի միջև: Ծոցի երկարությունը 990 կմ է, իսկ առավելագույն լայնքը՝ 338 կմ: Հյուսիսում, հյուսիս-արևելքում և արևելքում այն ողողում է Իրանի, հյուսիս-արևմուտքում Իրաքի և Քուվեյթի, արևմուտքում և հարավ-արևմուտքում Սաուդյան Արաբիայի, Բահրեյնի և Ղաթարի, իսկ հար-

ռավում և հարավ-արևելքում Արաբական Միացյալ Էմիրությունների, մասամբ նաև Օմանի ափերը:

Պարսից ծոցում Իրանին պատկանող առավել կարևոր կղզիներն են. Մինոո, Խարգ, Շեյխ Սաադ, Շեյխ Շո՛այբ, Հենդուրաբի, Քիշ, Ֆարուր, Միրրի, Աբու Մուսա, Մեծ Թոմբ, Փոքր Թոմբ, Ղեշմ, Հենգամ, Լարաք, Ֆարսի, Հորմուզ, Լավան:

Պարսից ծոցի իրանական առավել խոշոր նավահանգիստները հետևյալներն են. Աբադան, Խորրամշահր, Բանդար Իմամ Խոմեյնի, Մահշահր, Դեյլամ, Գոնավեհ, Ռիգ, Բուշեհր, Բանդար Լենգեհ, Բանդար Աբբաս:

Մինչև 1908 թ. Իրանում նավթի հայտնագործումը, Պարսից ծոցի և նրա առափնյա շրջանների տնտեսական նշանակությունը սահմանափակվում էր գլխավորապես ձկնորսության, մարգարիտի, մարջանի, աղի հանույթով, ուղտաբուծությամբ, կարմրավուն խսիրի արտադրությամբ, արմավ աճեցնելով, կարմիր հանքաներկի հանույթով և այլն: Ներկայումս այդ ավանդական արդյունագործությունը թեև շարունակում է գոյություն ունենալ, սակայն մեծապես նվազել է, իր տեղը զիջելով գերազանցապես նավթի ու գազի հանույթին և նավթարդյունաբերությանը:

Ներկայումս Պարսից ծոցի ավազանի երկրների կողմից նավթի հանույթը կազմում է ամբողջ աշխարհում նրա արտադրության 31 %-ը և հետախուզված պաշարների 63 %-ը: Ընտարկույս ծոցի ավազանի նավթային պաշարները դեռևս տևական ժամանակաշրջանի ընթացքում հանդիսանալու են նավթի համաշխարհային պաշարների կարևորագույն աղբյուրներից մեկը:

Հողերը և բուսականությունը: Իրանի հողերը աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ, սակայն նրանց բնորոշ առանձնահատկությունն է քարքարոտությունը և բարձր աղակալվածությունը: Իրանական բարձրավանդակում տարածված են անապատային գորշ, լեռներում՝ դարչնագույն և գորշ անտառային, օազիսներում՝ մշակված հողերը, հարավային շրջաններում՝ արևադարձային կարմրահողերը: Իջվածքներում կան աղուտներ:

Իր հարստությամբ և բազմազանությամբ աչքի է ընկնում նաև այդ երկրի բուսական աշխարհը: Այն ներկայացված է մերձարևադարձային հարուստ բուսականությունից մինչև կիսաանապատների աղքատ ֆլորայի բազմապիսի բույսերով: Առհասարակ Իրանում մեծ մասամբ տիրա-

պետում է անապատային և լեռնային չորասեր բուսականությունը: Երկրում հաշվվում է մոտ 6 հազար տեսակի կուլտուրական և վայրի բույսեր:

Իրանական բարձրավանդակի անապատային շրջաններում աճում է սաքսաուլ, մոշա, օշինդր և անապատային այլ բույսեր: Երկրի համար բնորոշ է տեղային (էնդեմիկ) բույսերի նշանակալից քանակություն:

Իրանի անտառածածկ տարածքը ներկայումս կազմում է 12,5 միլիոն հեկտար (երկրի ողջ տարածքի մոտ 11 %-ը): Անտառներում առկա են արժեքավոր փայտատեսակներ: Անտառները հիմնականում կենտրոնացած են Կասպից ծովի ափերին, Թուրքմենա-Խորասանյան լեռների ստորոտներում, Ատրպատականի լեռներում և առհասարակ երկրի հյուսիսային շրջաններում: Կասպից ծովի ափերին և Էլբուրսի ու Բաղրով-Դաղի (ծովի մակերևույթից մինչև 2500 մետր բարձրության վրա) աճում են լայնատերև անտառներ: Անտառային բավականին խոշոր զանգվածներ կան նաև Իրանի հյուսիս-արևմտյան շրջաններում, Իրանական Քրդստանի լեռներում և այլն:

Իրանի անտառներում ամենատարածված ծառատեսակներն են կաղնին, հաճարենին, թխկին, բոխին, հացենին, կնձենին, ընկուզենին, շիմշատը և այլն: Չափավոր խոնավ լայնատերև անտառները աճում են Թուրքմենա-Խորասանյան լեռների առավել խոնավ ստորոտներին: Զագրոսի փեշերին (ծովի մակերևույթից մինչև 2000 մետր բարձրության վրա) աճում են կաղնու, պիստակենու և նռենենու անտառներ, իսկ նրանցից բարձր թփուտներ են ու ալպիական մարգագետիններ: Իրանական բարձրավանդակի ներքին և հարավ-արևելյան մասերի լեռները համարյա անտառազուրկ են: Պարսից ծոցի և Օմանի ծովի ափամերձ շրջանի բուսականությունը արևադարձային է, գետերի ճահճուտ գետաբերաններում և մերձակա կղզիներում աճում են անապատային զանազան բույսեր: Առհասարակ հարավային շրջաններում գերակշռում է ակացիայի պուրակներով սավաննային, իջվածքներում՝ մարգագետնային և աղասեր բուսականությունը: Ծովափերին կան մանգրովային բուսածածկույթով տեղամասեր:

Իրանի օազիսներում լայնորեն տարածված է փյունիկյան արմավենին (ավելի քան 15 տեսակի): Երկրի հարավում աճում է կոկոսյան արմավենի, բանան, բամբուկ (հնդեղեգ), Մանգո և այլն:

Իրանում կան նաև մեծ քանակությամբ դեղաբույսեր (ավելի քան 500 տեսակի) և ներկաբույսեր (ինդիգո և այլն): Հաճախ են հանդի-

պում նաև հարուստ տանինիդներ պարունակող բույսեր, օրինակ սումախ (Phus Coriaria) և այլն:

Իրանական բարձրավանդակը բազմաթիվ կուլտուրական բույսերի՝ ցորենի, կորեկի, ձմերուկի, սերկևիլի, նուշի, կեռասի և այլն հայրենիքն է: Իրանում աճում են նաև 9 տեսակի կառչուկաբեր բույսեր:

Սակայն ընդհանրապես պետք է նշել, որ Իրանի տարածքի մեծ մասը ծածկված է անապատային և չոր դաշտային բուսականությամբ: Երկիրը հարուստ է նաև տարբեր սննդային բույսերով, որոնք հանդիպում են վայրի վիճակում: Լեռնային շրջաններում մեծ քանակությամբ տարածված է վայրի թուզը, ալոճենին, կեռասը, վայրի մորին, մոշը և այլն:

Կենդանական աշխարհը ևս բնութագրվում է տեսակների հարստությամբ ու բազմազանությամբ: Երկրում հաշվվում են մոտ 100 տեսակի կաթնասուններ, մինչև 400 տեսակի փետրավորներ, մոտ 80 տեսակի սողուններ և 175 ավել քաղցրահամ ջրերում ապրող ձկներ: Սմբակավորներից տարածված են արագավազ անտիլոպ-չեյրանը, վայրի խոյը, լեռնային ոչխարը, այծյամը, կովկասյան եղջերուն, կուլանը (վայրի էշ), վիթը, մեծ տարածում ունի վարազը և այլն: Իրանում հարուստ է նաև գիշատիչների աշխարհը՝ թուրանական վագր, հովազ, հեպարտ, եղեգնակատու, շերտավոր բորենի, ընձառյուծ, գայլ, շնագայլ, աղվես և այլն: Հանդիպում են գորշ արջ, մանգուստ և այլն:

Կան շատ կրծողներ. գետնասկյուռ, ճագարամուկ, նապաստակ, արջամուկ և այլն: Երկրի հարավային մասում ապրում են հսկայական չափերի չղջիկներ:

Իրանի կենդանական աշխարհը բացառիկ հարուստ է փետրավորներով: Կասպից ծովի ափերին ձմեռում են կռունկները, ջրագռավները, ձկնկուլները, բադերը, սագերը, ֆլամինգոները, սպիտակ և սև արագիլները, կարապները: Կան մեծ թվով փասիաններ, այդ թվում նաև պարսկական փասիան: Լեռնային շրջաններում շատ են կաքավները, տափաստաններում ու անապատներում՝ անգղները, արծիվները, բազեները, քարարծիվները:

Սողուններից առավել տարածված են վարանները (հսկայամողես), դաշտային վիշապօձերը, բազմապիսի թունավոր օձեր (գյուրզա կամ պարսկական իժ, կոբրա, էֆա) և այլն: Պարսից ծոցում և Օմանի ծովում ապրում են վիթխարի չափերի կրիաներ, ծովային օձեր, հարավիրանական գետերի դելտաներում՝ ճահճային կոկորդիլոսներ: Կասպից ծովի հարավային ջրերում հանդիպում է նաև փոկ:

Իրանը հարուստ է նաև ձկների տեսակներով: Կասպից ծովում և նրա մեջ լցվող գետերում կան շատ թանկարժեք ձկնատեսակներ, թառափ, զութխի (սեվրյուգա), շիղաձուկ (սուդակ), լոքո, ձիաձուկ, միրոն (ծածանաձկան մի տեսակ), շիպ (թառափազգի մեծ ձուկ): Արդյունագործական նշանակություն ունեն նաև մանր ծովաձկները, ծածանը, բրամը, կուտումը, կասպիական քարալեզը, երկայնաձուկը, պերկեսը, գայլաձուկը և այլն: Պարսից ծոցում և Օմանի ծովում լայնորեն տարածված է շնաձուկը, թրաձուկը, սղոցաձուկը և այլն: Մեծ քանակությամբ իրացվում է սարդինայի և թունիկի որս: Այդ ջրերը առատ են ծովախեցգետնով: Արդյունահանվում է նաև մարգարիտ ու մարջան:

Ընտանի կենդանիներից տարածված են ձին, էշը, խոշոր եղջերավոր անասունները, գոմեշը, ոչխարը, այծը, միասապատ ուղտը (դրոմադեր), երկսապատ ուղտը, շունը և կատուն:

Օգտակար հանածոներ: Իրանն աչքի է ընկնում իր բնական հարստություններով: Նա գտնվում է համաշխարհային գլխավոր նավթային պաշարներ ունեցող շրջանի կենտրոնում՝ Պարսից ծոցի գոտում: Այդ երկրի բնական հարստությունների մեջ առաջին տեղը անկասկած գրավում են հանքային էներգետիկ ռեսուրսները, նախ և առաջ նավթը: Նավթի պաշարներով Իրանը գրավում է աշխարհում առաջին տեղերից մեկը: Ընդորում իրանական նավթը աչքի է ընկնում իր բարձր որակով: Նավթի առավել խոշոր հանքավայրերը հայտնաբերվել են երկրի հարավ-արևմուտքում և Պարսից ծոցի առափնյա գոտում (Աղա-Ջարի, Գեչսարան, Մարուն, Բիբի Հաքիմե, Սիվազ, Նեֆթսեֆիդ, Հաֆթգել, Մասջեդ-Սուլեյման, Ջիհլայ, Լալի և այլն): Հարուստ հանքավայրեր կան նաև երկրի կենտրոնական շրջաններում, հարավ-արևելքում (Բախթարանի շրջանում), հյուսիսում (Ասրպատականում, Գիլյանում, Մազանդարանում), ինչպես նաև հյուսիս-արևելքում (Թուրքմենա-Խորասանյան լեռնամյուղավորումներում, մասնավորապես Գորգանում և Խորասանում): Նավթով չափազանց հարուստ է նաև Պարսից ծոցի ջրատարածությունը, ցամաքային շելֆը:

Իրանն ունի նաև բնական գազի վիթխարի պաշարներ, որոնք գնահատվում են 27 տրիլիոն խ.մ.: Դա կազմում է գազի համաշխարհային պաշարների 17 %-ը: Գազի հանքավայրեր կան և՛ երկրի հյուսիսում և՛ կենտրոնական շրջաններում, սակայն գազով առանձնապես հարուստ է Իրանի հարավ-արևմտյան մասը և Պարսից ծոցի գոտին: Գազի հա-

նույթի հիմնական շրջաններն են Խուզեստան, Բախթարան, Բուշեհր, Խորասան նահանգները, Փազենան, Մերախս քաղաքների շրջակայքը, Պարսից ծոցի Ղեշմ կղզին և այլն: Իրանական գազի բաղադրության մեջ 85 % կազմում է մեթանը, 9 % էթանը, 5 % պենտանը: Ջերմատվության գործակիցը ավելի քան 9700 կկալ/խ.մ. է:

1991 թ. տվյալներով Իրանում գազի հանույթը կազմել է 45 միլիարդ խորանարդ մետր, որից ներքին սպառման համար օգտագործվել է 30 միլիարդ խ.մ:

Հանքային էներգետիկ ռեսուրսներից Իրանն ունի նաև քարածուխի նշանակալից պաշարներ, որի հիմնական հանքավայրերը գլխավորապես ընկած են երեք գոտիներում: Առաջին գոտին անցնում է հյուսիսային լեռնային զանգվածների երկայնքով, երկրորդը Ղում-Քաշան-Սպահան-Ֆարս-Յեզդ-Բաֆդ-Քերման գծով, իսկ երրորդը Իրանի արևմտյան շրջաններով (Քրդստան, Համադան, Բախթարան, Լուրեստան): Հյուսիսում ամենահարուստ հանքավայրերը գտնվում են Էլբուրսի, Խորասանի և Քերմանի շրջաններում: Քարածուխի հանքավայրեր կան նաև Ատրպատականում:

Հյուսիսային շրջանների քարածուխը աչքի է ընկնում իր բարձր կալորիականությամբ՝ մինչև 7 հազար և ավել կալորիա: Իրանական քարածուխի մի զգալի մասը պիտանի է նաև կոկսացման համար: Քարածուխը հիմնականում օգտագործվում է երկրի ներսում՝ մետալուրգիական արդյունաբերության մեջ:

Իրանը չափազանց հարուստ է նաև երկաթի հանքերով: Երկաթի հանքավայրեր կան երկրի տարբեր մասերում, սակայն առավել հարուստները գտնվում են Թեհրանից արևելք՝ Սեմնանի մոտակայքում, Բաֆդում, Արաքում, Ամոլում, Ջենջանում, Անարում, Հորմոզում, Դամղանում, Քաշանում և այլն: Հիմնական հանքավայրերը կենտրոնացված են երկրի հյուսիս-արևմուտքում և կենտրոնական մասում: Մետաղի պարունակությունը երկաթի հանքաքարի մեջ կազմում է 37-ից մինչև 61 %: Իրանն ունի նաև քրոմի, մարգանեցի, մոլիբդենի նշանակալից պաշարներ: Մարգանեցի հանքավայրերը գտնվում են երկրի հյուսիս-արևմուտքում և Թեհրանի մոտակայքում: Մարգանեցի պարունակությունը հանքաքարի մեջ կազմում է 3 %: Քրոմիտների հանքավայրերը գտնվում են Քերմանից հարավ, Բելուջիստանում և Մեշհեդի մոտակայքում: Քրոմի օքսիդի պարունակությունը հանքաքարի մեջ կազմում է

45-50 %: Մոլիբդենի հարուստ հանքավայրեր կան Քերմանից ոչ հեռու՝ Սար-Չեշմեում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանակից շրջաններում:

Իրանը չափազանց հարուստ է նաև պղնձի հանքերով: Պղնձի հետախուզված պաշարներով նա գրավում է աշխարհում երկրորդ տեղը Չիլիից հետո: Խոշորագույն հանքավայրերից մեկը գտնվում է Քերման քաղաքից 64 կմ արևմուտք Սարչեշմե կոչված վայրում: Պղնձի հարուստ հանքավայրեր կան նաև Մնարեքի, Զենջանի, Աբրասաբադի շրջաններում, Թուրքմենա-Խորասանյան լեռների հարավային ստորոտներում, Սպահանի շրջանում և Բանդար Աբբասից հյուսիս ընկած տարածքում: Պղնձի պարունակությունը հանքաքարի մեջ կազմում է 1,3-2,5 %:

Կապարի և ցինկի հանքերը գտնվում են Թեհրանից հյուսիս, Սպահանից հյուսիս-արևելք, Քերմանից հարավ, ինչպես նաև Բաֆդի շրջանում: Նիկելի և կոբալտի հանքավայրերը գտնվում են Էնարեքի մոտակայքում: Երկրի բազմաթիվ շրջաններում կան հազվագյուտ և ազնիվ մետաղների հանքավայրեր, սակայն առանձնապես դրանցով հարուստ են Իրանի հյուսիս արևմտյան շրջանները, ինչպես նաև Էլբուրսի և Խորասանի լեռնաճյուղավորումները:

Դաշտե-Քեվիրի անապատային շրջաններում, ինչպես նաև երկրի հարավ-արևելքում կան ծծմբի հարուստ հանքավայրեր: Ծծումբով հարուստ է նաև Քոդստանը: Պարսից ծոցի կղզիներում կա քարաղ, երկրի հյուսիսում և հարավում՝ կերակրաաղ, Սեմնանի և Միանեի շրջաններում՝ կալիական աղ, Ղումի մոտակայքում՝ գլաուբերյան աղ, Քերմանից հարավ՝ մագնեզիական աղ:

Ատրպատականի լեռնային շրջաններում կան ֆլուորական ապաթ, ասբեստ, կորունդ, Համադանում՝ գրաֆիտ, Գիլյանի ու Մեշհեդի շրջաններում՝ տալկ և փայլատ, Խորասանում՝ փիրուզ: Քերմանի ու Թեհրանի շրջակայքում, Զագրոս լեռներում հայտնաբերվել են ֆոսֆորիտների խոշոր պաշարներ: Իրանը չափազանց հարուստ է բարիթով, որի առավել խոշոր հանքավայրը գտնվում է Էշտեհանում: Սպահանի մոտակայքում կան կոպինային կավեր: Երկիրն ունի նաև բենտոնիտի, սլյուդայի, բորսիդների, դոլոմիթների, ասբեստի, պերլիթի, գիպսի, գաջի խոշոր պաշարներ: Առհասարակ շինանյութերի պաշարները խիստ բազմազան են ու հարուստ: Կա մեծ քանակությամբ գրանիտ, մարմարի տարբեր տեսակներ, կրաքար, տուֆ և այլն: Երկրի լեռնային շրջանները հայտնի են հանքային առաջնակարգ ջրերով և բուժիչ տղմերով:

Իրանն ունի նաև ուրանի հանքաքարի պաշարներ: Ցեզդ նահանգի ուրանի հանքավայրերը հանդիսանում են Մերձավոր Արևելքում խոշորագույններից:

Չնայած այն հանգամանքին, որ XX դարի 60-ական թվականներից սկսած իրանական կառավարությունը հախուռն թափով ձեռնամուխ եղավ երկրի բնական հարստությունների հետախուզմանը, քարտեզագրմանը և շահագործմանը, սակայն դրանով հանդերձ անհրաժեշտ է նշել, որ երկրում բնական պաշարների օգտագործման աստիճանը առ այսօր դեռևս մեծ չէ: Նույնիսկ կան առանձին շրջաններ, որտեղ առհասարակ գոյություն չունի օգտակար հանածոների արդյունաբերական շահագործում:

Այսպես, երկրի հյուսիսում առկա են նավթի խոշոր հետախուզված պաշարներ, որոնց արդյունաբերական շահագործումը առ այսօր գտնվում է կուսական վիճակում: Դեռևս կատարելապես հետախուզված չեն նաև երկրի մի շարք շրջանների օգտակար հանածոները:

Հարուստ լինելով բնական հանքային հարստություններով, անտարակույս Իրանը հնարավորություն ունի առաջիկայում էլ ավելի զարկ տալու իր տնտեսական զարգացմանը: Այդ իսկ տեսակետից երբեմն Իրանը համարում են 21-րդ դարի երկիր: Արդեն այսօր հարուստ բնական հանածոների առկայությունը խոշոր ազդեցություն է թողել երկրի տնտեսական զարգացման վրա, պայմանավորելով նրա մի շարք կարևորագույն բնագավառների, մասնավորապես նավթաքիմիական արդյունաբերության բուռն զարգացումը:

Հարկ է նշել նաև, որ հանքային հանածոների շահագործման ոչ բավարար չափերը պատճառ են հանդիսանում մի անցանկալի երևույթի, այն է կախվածությունը արտասահմանյան հումքի աղբյուրներից:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Իրանը պատկանում է Ասիայի այն երկրների թվին, որտեղ վերջին երկու տասնամյակների ընթացքում նկատվում է բնակչության թվի առանձնակի աճ, որը բնութագրվում է որպես «ժողովրդագրական պայթյուն»:

Եթե երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին բնակչության տարեկան աճը չէր գերազանցում 1 %-ից, ապա 60-ական թվա-

կանների երկրորդ կեսին այն հասավ մոտ 3 %-ի: 1944 թ. Իրանի բնակչությունը կազմում էր մոտ 16,5 միլիոն մարդ: 1956 թ. նոյեմբերին Իրանում անց կացվեց այդ երկրի պատմության մեջ առաջին համընդհանուր մարդահամարը, որը ճշտեց երկրի բնակչության թիվը՝ 18,945 հազար մարդ:

1966 թ. նոյեմբեր-դեկտեմբերին իրագործվեց երկրորդ, ավելի խնամքով կատարված մարդահամար, որի հետևանքով պարզվեց, որ երկրի բնակչությունը կտրուկ ավելացել է, հասնելով 25,8 միլիոն մարդու: Այդպիսով, տասը տարվա ընթացքում բնակչությունն աճել էր 6,19 միլիոն մարդով, իսկ տարեկան աճը կազմում էր մոտ 2,6 %: Ըստ իրանական տվյալների, 1970 թ. վերջին երկրի բնակչության թիվը հասել էր 29,3 միլիոնի, այսինքն 1966 թ. համեմատ աճել էր 4,2 միլիոնով, իսկ տարեկան աճը կազմում էր մոտ 2,8 %:

1976 թ. իրագործված երրորդ համընդհանուր մարդահամարը ցույց տվեց, որ բնակչության թիվը հասել է 33,708,744 մարդու: Այդ մարդահամարից հետո տեղի ունեցավ իսկապես մի «թռիչք» և 1997 թ. Իրանի Իսլամական Հանրապետության բնակչության թիվը արդեն կազմում էր 62 միլիոն մարդ:

Այսպիսով 60-ական թվականներից սկսած Իրանում բնակչության տարեկան աճը կազմում էր մոտ 3 %: Ներկայումս աճի տեմպերը ավելի են մեծացել. երկրի բնակչությունը միջին հաշվով աճում է տարեկան 3,2 %-ով:

Կանխատեսումներ կան, որ գալիք 25 տարիներին Իրանն ունենալու է 100 միլիոն բնակչություն:

Իրանում բնակչության կտրուկ աճը նախ և առաջ կապված է առողջապահական և հակահամաճարակային միջոցառումների արդյունավետության բարձրացման հետ, որը հանգեցրեց մանկական մահացության նվազման: Իրանի Իսլամական Հանրապետության բնակչության արագ աճի պատճառներից մեկն էլ անտարակույս երկրում սոցիալ-տնտեսական պայմանների որոշակի բարելավումն է: Եթե համեմատելու լինենք ԻԻՀ սոցիալական ոլորտի որոշ ցուցանիշները մի շարք այլ երկրների հետ, միանգամայն ակներև կդառնա, որ ԻԻՀ-ում այդ տվյալները այնքան էլ վատը չեն:

Երկիր	Բնակչություն 1994 թ. միլիոն	Անձնական ՀՕԲ (ԱՄՀ ամ. 1994 թ. $	Կրտսեր տարիքի սեռատարիքային 1993 թ. %	Գրագիտություն 1993 թ. %	Բնակչության % -ը, որը մուտք ունի խմելի ապահով ջրով 1990-1995 թթ. %	Նորածնային 100 հազար կենդանի ծնվածների քանակը 1992 թ.
Իրան	61	4,650	68	66,1	84	6
Եգիպտոս	57,6	3,610	64	49,8	80	12
Հնդկաստան	913,6	1,290	61	50,6	81	4
Թուրքիա	60,8	4,610	67	81,1	80	18

Իրանական կառավարությանը հաջողվել է լուծել երկրի համար կենսական նշանակություն ունեցող մի հարց՝ բնակչությանը խմելու ջրով ապահովելու հարցը: Ներկայումս քաղաքներում ապրող բնակչության 95 % և գյուղական բնակչության մեծ մասը ապահովված է խմելու ջրով:

ԻԻՀ կառավարությունը աշխատում է իրականացնել բնակչության վիճակը ինչ-որ չափով բարելավելու քաղաքականություն: Այսպես, հացը, բենզինը, դեղորայքը և մի շարք այլ ապրանքներ ենթակա են պետական դոտացիայի (կամ սուբսիդավորման), ուստի դրանց գինը բավականաչափ ցածր է: Ցածր է նաև գազի, էլեկտրականության գները, որն անմիջականորեն ազդում է նաև ապրանքների ինքնարժեքի վրա: Ասիայի բոլոր երկրների նման Իրանը ևս աչքի է ընկնում ծնողականության բարձր ցուցանիշով:

Ծնողականության տեմպի կարևոր պատճառներից մեկն էլ վաղ ամուսնություններն են: ԻԻՀ-ում ընտանիքների ավելի քան 40 % ունեն վեց և ավել երեխաներ: 80-ական թվականներին ծնունդը կազմում էր 42,5, մահացությունը՝ 11,5, մանկական մահացությունը (մինչև մեկ տարեկան) հազար հոգուն 108: 1995 թ. տվյալներով տղամարդկանց կյանքի միջին տևողությունը 67 էր, կանանցը՝ 68 տարեկանը:

Թափչքաձև աճը, որը չի համապատասխանում երկրի տնտեսական զարգացման տեմպերին, ստիպում է ԻԻՀ կառավարությանը միջոցներ որոնել «ընտանիքի պլանավորման» համար:

1995 թ. տվյալներով Իրանի քաղաքային բնակչությունը կազմում էր 59 %, գյուղական բնակչությունը 41 %: Իրանը դասվում է աշխարհի երիտասարդ բնակչություն ունեցող երկրների շարքին: Ներկայումս իրանցիների միջին տարիքը չի անցնում 30-ից: Դա ինքնաստինքյան

ստեղծում է աշխատանքային ռեսուրսների միջխարի ռեզերվ: Բնակչության երիտասարդացումը վկայում է նաև ԻԻՀ հասարակական-տնտեսական և մշակութային զարգացման աճող դինամիզմի մասին: ԻԻՀ բնակչության երիտասարդացումը անմիջականորեն ազդում է նաև տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի վերելքին և միաժամանակ նպաստում բնակչության գործունեության համակարգերի ստվարաթիվ դառնալուն:

Բնակչության խտությունը: Ժողովրդագրական թռիչքը, ինչպես նաև ներքին տեղափոխությունների (միգրացիա) գործընթացի ակտիվացումը նկատելի ազդեցություն են թողնում բնակչության խտության վրա: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը բնակչության միջին խտությունը կազմում էր 1 քառ.կմ վրա մոտավորապես 9 մարդ: 50-ական թվականներին այն աճեց մինչև 12 մարդու, 70-ական թթ. սկզբին մոտ 15,6 մարդու: 80-ական թվականներին բնակչության խտությունը ավելացավ մինչև 1 քառ.կմ վրա 55,33 մարդու:

Բնակչության խտությունը Իրանի տարբեր շրջաններում ծայրահեղ անհավասարաչափ է, որը հանդիսանում է բնակլիմայական պայմանների, քաղաքական և այլ գործոնների ազդեցության ներքո ձևավորված առանձնահատկությունների հետևանք: Բնակլիմայական պայմանները, մշակման համար պիտանի հողերի քանակը և հատկապես ջրային ռեսուրսները ուղղակի ազդեցություն են ունենում բնակչության խտության վրա: Քաղաքների և բնակավայրերի մեծ մասը տեղաբաշխված է հովիտներում, լեռնաշղթաների ստորոտներում, որտեղ կլիմայական պայմանները բարենպաստ են և տարեկան տեղումների քանակը 400 մմ-ից պակաս չէ: Դրանք ԻԻՀ տնտեսապես առավել զարգացած շրջաններն են, որտեղ կենտրոնացված է երկրի բնակչության 2/3-ը և բնականաբար դրանք բնակչության բարձր խտություն ունեն:

Առանձնապես խիտ են բնակեցված կենտրոնական օազիսը, ներառյալ նաև Թեհրանն ու նրա շրջակայքը (մեկ քառ.կմ վրա 194 մարդ 1976 թվականին և 288 մարդ 1986 թվականին), Մերձկասպյան նահանգները (Գիլյանը՝ մեկ քառ.կմ վրա 33,5, Մազանդարանը՝ 26), Ատրպատականը (25): Երկրի հարավ-արևելքում բնակչության խտությունը նշանակալիորեն ցածր է: Օրինակ, Բելուջիստանի և Սիստանի տարածքում մեկ քառ.կմ վրա ապրում են ընդամենը 0,5-20 մարդ:

Իրանական բարձրավանդակի մեծ ադուտներն ու քարքարոտ անապատները (քեվիրները՝ Դաշթե Քեվիր, Դաշթե Լութ և այլն) փաստորեն

անմարդաբնակ են: Նրանցում բնակչություն կա միայն հազվագյուտ օազիսներում և ծայրամասային շրջաններում:

Երկրում շարունակվում է հետամնաց ագրարային շրջաններից (Արևմտյան Ադրբեջան, Քերման, Սիստան, Բելուջիստան, Քուրդստան) դեպի ակտիվ տնտեսական զարգացման կենտրոնները բնակչության միգրացիան (գլխավորապես կենտրոնական օազան, մերձկասպյան նահանգներ, Խուզեստան, Ֆարս, Սպահան), որի հետևանքով նշված վայրերում բնակչության խտությունը հարաճուն կերպով մեծանում է:

Աղյուսակ 3

Բնակչության թիվը ըստ օազաների (նահանգների) - 1991 թ.
(հազ. մարդ)

Օազան (նահանգ)	Տարածք	Բնակչությունը
Թեհրան	28221	9982
Կենտրոնական	29530	1183
Գիլյան	14820	2204
Մազանդարան	46645	3793
Արևելյան Ադրբեջան	65842	4420
Արևմտյան Ադրբեջան	37599	2284
Բախթարան (Քերմանշահան)	23622	1622
Խուզեստան	66532	3176
Ֆարս	120006	3544
Քերման	185675	1863
Խորասան	315687	6013
Սպահան (Իսֆահան)	105805	3682
Սիստան և Բալուջեստան	181471	1455
Քուրդիստան	27858	1234
Համադան	19445	1651
Շահարմահալ և Բախթիարի	14820	747
Լորեստան	28560	1502
Իլամ	19086	441
Բոյերահմադի և Քոհգիլույե	13699	497
Բուշեհր	25360	694
Զենջան	36382	1776
Սեմնան	91544	458
Յազդ	69605	691
Հորմուզգան	65379	925

Աղբյուրը՝ Իրանի Վիճակագրական կենտրոն:

Իրանի բնակչությունը ըստ տարիքային խմբերի (հազ.մարդ)

Բնակչության խումբը	1966/67	1976/77	1986/87	1991/92
4	4,556,035	5,429,712	9,044,823	8,141,285
5-9	4,232,870	5,276,533	7,525,894	9,035,458
10-14	3,098,101	4,203,118	5,903,300	7,547,131
15-19	2,180,887	3,600,265	5,192,202	5,908,903
20-24	1,722,673	27,92,215	4,193,724	4,947,260
25-29	1,698,884	2,111,585	3,652,297	4,005,278
30-34	1,722,546	1,706,997	2,927,983	3,504,220
35-39	1,461,411	1,626,619	2,117,211	2,866,669
40-44	1,360,458	1,668,685	1,655,351	2,037,477
45-49	866,446	1,389,465	1,585,398	1,577,983
50-54	767,312	1,329,049	1,599,018	1,570,622
55-59	437,094	703,887	1,337,746	1,442,929
60-64	690,956	584,144	1,184,632	1,303,390
65-69	352,175	347,238	573,796	885,077
70-74	351,265	380,164	342,020	465,167
75-79	106,206	204,097	209,530	185,993
80-84	109,088	145,678	183,587	139,781
85 և ավել	74,312	109,293	192,785	214,175

Աղբյուրը՝ Իրանի Վիճակագրական կենտրոն:

Զբաղվածությունը: *Վերջին տասնամյակներին Իրանում լույծ տեղաշարժեր տեղի ունեցան ինքնուրույն գործող բնակչության կառուցվածքի մեջ, փոխվեց նրա թվաքանակը, տեղաբաշխումը ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի, սեռատարիքային և ընտանեկան կազմը:*

80-ական թվականների սկզբին երկրի տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմեց 11,368 հազար մարդ, որից 9609 հազ.՝ տղամարդիկ և 1759՝ կանայք: Քաղաքային բնակիչների շրջանում տնտեսապես ակտիվները հաշվվում էին 5046 հազ. մարդ (4461 հազ. տղամարդ և 585 հազ. կին) : Գյուղական շրջաններում՝ 6322 հազ. (5148 հազ. տղամարդ և 1174 հազ. կին) :

Իրանի տնտեսության զարգացման պլաններին համապատասխան 1982-1983 թթ. գյուղատնտեսության մեջ զբաղված էր 3343 հազ. մարդ, արդյունաբերության մեջ և արդյունահանող արդյունաբերության

ճյուղերում՝ 3493 հազ., սպասարկումների ոլորտում, այդ թվում նաև շինարարական ինդուստրիայի մեջ՝ 5200 հազ. մարդ, 1987-1988 թթ.՝ համապատասխանաբար 3262 հազ., 4603 հազ. և 6222 հազար մարդ:

Դպիրքանց հետաքրքրական է ուսումնասիրել բնակչության զբաղվածության հարցը տնտեսության զանազան ճյուղերում ըստ օրթաններ-ի, քանի որ դա վառ պատկերացում է տալիս նաև տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների մասնակցությանը երկրի տարբեր շրջանների զարգացման գործում: Առավել զարգացած են հանդիսանում Խորասանը, Թեհրանը, Արևելյան Ատրպատականը, Մազանդարանը, Սպահանը, Ֆարսը, Խուզեստանը: Առավել քիչ զարգացած՝ Բոյերահմեդին և Քոհ գիլույեն, Բուշեհրը, Բախթիարին ու Չհարմահալը, Սիստանն ու Բելուջիստանը:

Ընտանիքը, ընտանեկան հարաբերությունները: 1979 թվականից ԻՀՀ-ում պաշտոնապես թույլատրված է բազմակնությունը, թեև դրանից առաջ ևս տարբեր ժողովուրդների մոտ, չնայած օրենքով սահմանված արգելքին, այն գոյություն ուներ: Նվազեցվեց նաև կանանց համար ամուսնության տարիքը մինչև 15 տարեկանը (սակայն հոգևորականությունը հաճախ արձանագրում է ամուսնությունները, եթե թեկուզ աղջիկը դեռևս չի հասել այդ տարիքին): Թույլատրված են նաև այսպես կոչված «արձաքանկետ կամ ժամանակավոր ամուսնությունները» (սիղե):

20-24 տարեկան տարիքային խմբում ամուսնացած տղամարդկանց թիվը 80-ական թվականներին կազմում էր 84,8 %: 80-ական թվականների սկզբին ԻՀՀ-ում պաշտոնապես հաշվվում էին 354 հազար արձանագրված ամուսնություններ:

Մահմեդական օրենսդրությանը (շարիաթ) համապատասխան ամուսնալուծությունները ծայրահեղորեն հազվագյուտ են: 1982 թ. ամբողջությամբ վերցրած երկրի քաղաքային բնակչության շրջանում արձանագրվել էր 215 հազ. ամուսնություն, իսկ գյուղական բնակչության շրջանում՝ 139 հազար: Ամուսնալուծությունները համապատասխանաբար կազմել են՝ 26 հազար և 5 հազար:

Իրանում ամուսնությունների և առհասարակ ընտանեկան հարաբերությունների մեջ որոշակի դերակատարություն ունեն նահապետական ավանդույթները, ազգակցական հարաբերությունները, կլանային կապերը և այլն: Ազգականների միջև ամուսնություններին հաճախ տրվում է առավելություն: Իրանում ծնողների (հատկապես հոր) կամքը իրենց

զավակների ամուսնությունների հարցում դեռևս մեծ դեր է խաղում, հաճախ ծնողներն են ընտրում հարսնացուին: Ամուսնացած որդիները հաճախ չեն բաժանվում ծնողներից: Ընտանեկան խմբերը, որոնք հաշվվում են տարբեր սերունդներից բաղկացած մի քանի տասնյակ մարդկանցից, պահպանվում են նաև ներկայումս, առավելապես նստակյաց-քոչվորական ցեղերի շրջանում:

Ժամանակակից ընտանեկան հարաբերությունները հաճախ բնութագրվում են կլանային կապերի թուլացմամբ, նահապետական ավանդույթների վերացմամբ, որը հանդիսանում է երիտասարդության կուլտուրական մակարդակի, նրա աճող շարժունակության բարձրացման արդյունք: Սակայն պետք է նշել, որ ընտանեկան կենսաձևի վերակառուցումը ուղեկցվում է ավագ և կրտսեր սերունդների միջև փոխհարաբերությունների պրոբլեմի սրմամբ:

Ներքին տեղափոխությունները (միգրացիա): Վերջին տասնամյակներում խոշոր փոփոխություններ են տեղի ունեցել քաղաքային և գյուղական բնակչության համամասնության մեջ, որը հանդիսանում է Իրանի առավելապես ագրարային երկրից ագրարային-ինդուստրիալ երկրի ակտիվ վերածման հետևանք: Գյուղական բնակչության տեսակարար կշիռը մշտապես կրճատվում է. բնակչության երկրորդ համընդհանուր մարդահամարը ցույց տվեց, որ գյուղական բնակչությունը կազմում է 61,3 % (15,3 միլիոն մարդ): 70-ական թվականների սկզբին գյուղական բնակչությունը կազմում էր 57,3 % (17,7 միլիոն մարդ): Հետագայում նրա տեսակարար կշիռը իջնում էր գյուղական բնակչության թվի բացարձակ մեծացման առընթեր:

Ներքին տեղափոխությունների հիմնական ուղղվածությունը «գյուղ-քաղաք» ուղղությունն է: Մեծանում է նաև «քաղաք-քաղաք» միգրացիան, առավելապես փոքր քաղաքներից դեպի մեծ քաղաքները: Դա ներկայումս կազմում է երկրի բոլոր տեղաշարժերի մոտ 60 %-ը: Բնակչության աճող շարժունակությունը պայմանավորված է ոչ միայն երկրի տարբեր շրջաններում արդյունաբերության զարգացմամբ, այլև ագրարային գերբնակվածությամբ, գյուղում մեխանիզացիայի բավականին բարձր մակարդակ ունեցող կապիտալիստական տնտեսությունների զարգացմամբ, վարձու աշխատուժի օգտագործման մեծացմամբ, հողի մանր սեփականատերերի քայքայմամբ, տրանսպորտային հնարավորությունների բարելավմամբ, նահապետական ընտանեկան հարաբերությունների թուլացմամբ և այլն:

Ներկայումս ոչ միայն շարունակում է աճել գյուղական բնակչության միգրացիան դեպի քաղաքները, այլև փոխվում է նրանց սոցիալական կազմը: Եթե նախկինում դրանք հիմնականում աղքատներ էին, աշխատանք գտնելու նպատակով քաղաքներ մեկնող քայքայված գյուղացիներ, որոնք գյուղ՝ իրենց ընտանիքների մոտ էին վերադառնում միայն դաշտային աշխատանքների ժամանակ, ապա վերջին տարիներս ավելի շատ պոտենցիալներ մնում են քաղաքներում, այնտեղ տեղափոխելով նաև իրենց ընտանիքներին: Աճել է նաև գյուղի ունևոր խավերից սերած միգրանտների թիվը, որոնք քաղաքներն են մեկնում ոչ միայն աշխատանք գտնելու, այլև կյանքի ավելի հարմարավետ պայմաններ որոնելու, ուսում ստանալու, հավելյալ դրամ վաստակելու նպատակով: Այդ միգրանտներին ձգում է նաև քաղաքային կյանքի հրապուրանքը: Բնականաբար գյուղից հեռանում են գերազանցապես աշխատունակ տարիքի տղամարդիկ և առաջին հերթին երիտասարդությունը, որի հետևանքով տեղի է ունենում գյուղատնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշռի նվազում:

Փոքր քաղաքներն են տեղափոխվում, իսկ այնտեղից ավելի խոշոր քաղաքները հիմնականում աշխատունակ տարիքի տղամարդիկ, ձեռնարկատերերն ու վաճառականները, փնտրելով կապիտալների ներդրման առավել ձեռնտու պայմաններ, ծառայողները, որոնք հույս ունեն քաղաքներում կարիերա ստեղծել, մտավորականությունը և կրթված երիտասարդությունը: Պետք է նշել, որ երկրի արդյունաբերական հասարակական զարգացման մասշտաբներն ու տեմպերը դեռևս հետ են մնում ներքին միգրացիաների տեմպերից, որը և հանդիսանում է մշտական գործազրկության և բնակչության ոչ լրիվ զբաղվածության գլխավոր պատճառներից մեկը:

Աղյուսակ 5

Քաղաքային և գյուղական բնակչության հարաբերությունը

Տարին	Ողջ բնակչությունը, հազ. մարդ	քաղաքային հազ. մարդ	Գյուղական հազ. մարդ	Քաղաքային բնակչությունը %	Գյուղական բնակչությունը %
1981/82	41 469	21 114	20 355	50,9	49,1
1986/87	47 366	25 591	21 775	54,0	46,0
1991/92	53 532	30 380	23 152	56,8	43,2

Անշուշտ ուրբանիզացված տարածքները անխուսափելիորեն ծնում են մի շարք խնդիրներ, ինչպես օրինակ քաղաքների բնապահպանական և ժողովրդագրական պրոբլեմներ, արդյունաբերական արտադրության և գիտական ու մշակութային արժեքների կենտրոնացում, հաղորդակցության ծառայությունների և մատակարարման կազմակերպման դժվարություններ և այլն:

Քաղաքային բնակչությունը: ԻԻՀ քաղաքային բնակչության թիվը արագ տեմպերով աճում է: Դա առանձնապես վերաբերում է խոշոր քաղաքներին: Օրինակ, Թեհրանի բնակչության սրընթաց զարգացումը ընդունում է գերուրբանիզացման գծեր: Ուժգին տեմպերով աճում է նաև նահանգների կենտրոնների և ինդուստրիալ շրջաններում գտնվող քաղաքների բնակչությունը:

Երկրի ողջ քաղաքային բնակչության կեսից ավելին բնակվում է հետևյալ քաղաքներում. Թեհրան, Մեշհեդ, Սպահան, Թավրիզ, Շիրազ, Աբադան, Սիվազ, Ղում, Համադան, Ուրմիա:

Աղյուսակ 6

Քաղաքային բնակչության աճը 1976-1986 թթ. (հազար մարդ)

Քաղաք	1976	1986
Թեհրան	4496,2	10,000
Սպահան	671,8	1,000
Մեշհեդ	670,2	500
Թավրիզ	598,6	700
Շիրազ	416,4	300
Աբադան	296,1	—
Բախթարան	290,2	152
Ռեշտ	—	150
Սիվազ	329,0	175

Տնտեսական զարգացման անհամաչափության հետևանքով օտարներում ուրբանիզացման մակարդակը միանգամայն տարբեր է: Քաղաքային տիպի բնակավայրերի մեծ մասը (5 հազար մարդուց ավել) տեղաբաշխված են կենտրոնական օտարներում, Սպահանում և Խուզեստանում: Կենտրոնական օտարներում քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմում է մոտ 80 %, այն դեպքում, երբ Բելուջիստանում ու Սիստանում, նաև Քրդստանում այն չի գերազանցում 20 %-ը:

Խոշոր քաղաքների բնակչության աճը գերազանցում է ինդուստրացման և քաղաքային շինարարության տեմպերին: Այդ կապակցությամբ արվում է աշխատանքի տեղավորման պրոբլեմները, ինչպես նաև բնակարանային, տրանսպորտային և առողջապահական խնդիրները:

Թեև Թեհրանում և երկրի մյուս քաղաքներում քաղաքային շինարարությունը առավել ծավալող բնագավառներից մեկն է, սակայն դրանով հանդերձ բնակարանները չեն բավականացնում և բնակվարձը շատ բարձր է (այն միջին հաշվով կազմում է բանվորի և ծառայողի աշխատավարձի 40 %-ը): Քաղաքների աղքատ թաղամասերում բնակարանները հաճախ գերբնակեցված են: Քաղաքների մեծ մասի համար բնորոշ է ոչ պլանային, տարերային շինարարությունը: Շքեղ և բարեկարգ թաղամասերի կողքին, ծայրամասերում գոյանում են խրճիթային բնակավայրեր, որոնք զուրկ են տարրական հարմարություններից:

Սկսած XX դարի 20-30-ական թվականներից Իրանի խոշոր քաղաքները մշտապես ենթարկվում են վերակառուցման:

Թեհրանը Իրանի մայրաքաղաքն է 1785 թվականից սկսած: Հանդիսանում է երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնը: Այստեղ է կենտրոնացած երկրի արդյունաբերական ձեռնարկությունների 60 %-ից ավելին, երկրի ողջ պետական ծառայողների 35 %-ը, ինժեներների 44 %-ը և ամբողջ բանվորության մոտ 1/3-ը: Թեհրանում է կենտրոնացված ստեղծագործական մտավորականության, ազատ մասնագիտությունների ներկայացուցիչների հիմնական մասը, երկրի ողջ ուսանողության մոտ կեսը:

Քաղաքը հատում են մի քանի լայն պողոտաներ և արագընթաց ավտոմայրուղիներ: Թեհրանում է գտնվում Մերձավոր և Միջին Արևելքի խոշորագույն փակ շուկաներից մեկը՝ Թեհրանի նշանավոր «բազարը», բազմաթիվ ուսումնական հաստատություններ, թանգարաններ և այլն: Քաղաքում կան մոտ 1000 մզկիթներ և 70-ից ավել իմամզադեներ, բազմաթիվ հին ու նոր աչքի ընկնող ճարտարապետական հուշարձաններ և այլն: Քաղաքի հյուսիսում են գտնվում նոր և շքեղ թաղամասերը: Վերջին տարիներս քաղաքապետարանը քաղաքի արևելյան և հարավային մասերում կառուցել է ժամանակակից տների մի քանի թաղամասեր:

Թեհրանը տեղադրված է Իրանի ամենաբարձր լեռան՝ Դեմավենդի հարավային ստորոտների լայնատարած հովտում: Քաղաքի հյուսիսի ողջ տարածքով անցնում է Էլբուրսի հզոր լեռնաշղթան, որը ոչ միայն

առանձին գեղեցկություն է տալիս քաղաքին, այլև ստեղծում է բարենպաստ կլիմայական պայմաններ: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1100-ից մինչև 1300 մետր բարձրության վրա: Թեհրանն արագ զարգանում ու ծավալվում է: 1939 թ. նա ունեցել է ընդամենը 540 հազար բնակչություն, 1949 թ. 1,1 միլիոն, 1956 թ. 1,5 միլիոն, 1966 թ. 2,7 միլիոն, 1976 թ. 4,496,159, 1986 թ. 10 միլիոն: 1997 թ. «Մեծ Թեհրանիս» (քաղաքն իր արվարձաններով) բնակչությունը անցավ 12 միլիոնից (պաշտոնական վիճակագրությամբ 9 միլիոն) և այն հանդիսանում է մերձավոր ու Միջին Արևելքի խոշորագույն քաղաքներից մեկը, ինչպես նաև աշխարհի արագ ուրբանիզացվող քաղաքներից մեկը: Այդ երևույթը մայրաքաղաքում ստեղծում է ոչ միայն աշխատատեղերի դեֆիցիտ, այլև առաջ է բերում սոցիալական բնույթի բազմապիսի պրոբլեմներ (օրինակ համայնքային անլուծելի բնապահպանական խնդիրներ, աշխատատեղերի սուր պակաս և այլն):

Ամբողջ երկրից Թեհրան են տեղափոխվում մեծ թվով վերաբնակիչներ, որի հետևանքով քաղաքի ազգային կազմը բավականին խայտաբղետ է: Կան թաղամասեր և փողոցներ, որոնք գերազանցապես բնակեցված են ազերիներով, հայերով, փարսերով, հրեաներով: Սակայն ընդհանուր առմամբ Թեհրանում տարբեր ազգություններ ապրում են խաղաղ միմյանց: Թեհրանում, ինչպես և Իրանի մյուս խոշոր քաղաքներում, ժամանակակից արդյունաբերական ձեռնարկությունների կողքին դեռևս գոյատևում են բազմապիսի արհեստները: Ընդորում իրանական արհեստագործական արտադրանքը դեռևս ունի մեծ պահանջարկ:

Թեհրանի մագնիսական դեկլիացիան (շեղումը) կազմում է +4 աստիճան: Նրա ժամանակը հավասար է Գրինվիչի ժամանակ (GMT) +3 ժամ:

Իրանի հնագույն քաղաքների թվին են պատկանում Սպահանը, Շիրազը, Թավրիզը, Մեշհեդը, Յեզդը, Համադանը և այլն: Այդ քաղաքների փառավոր անցյալը արտացոլված է նրանց գունագեղ ճարտարապետական հուշարձաններում: Նման քաղաքները, որպես կանոն, հայտնի են իրենց ավանդական արհեստներով և գեղարվեստական իրերով: Այսպես, Սպահանը հայտնի է իր դաջված կտորներով (դալամքարներով) և քանդակադրոշմներով, Քաշանը՝ պղնձե ամանեղենով, Քերմանը՝ այծի բրդից շալերով, Մեշհեդը՝ բրուտագործական իրերով ու հախճա-

սալիկներով, Համադանը՝ կաշվեղենով, Քաշանը, Քերմանը, Թավրիզը, Ղումը, Սպահանը և մի շարք այլ քաղաքներ հիացմունք առաջացնող իրենց ձեռագործ գորգերով:

ԻՍՀ-ում ներկայումս հաշվվում են մոտ 300 տեսակի տնայնագործական արհեստներ:

Սակայն վերոհիշյալ քաղաքների մեծ մասում գործում են նաև ժամանակակից տեխնիկայով ու տեխնոլոգիայով հագեցված խոշոր ու բազմապրոֆիլ արդյունաբերական ձեռնարկություններ:

Սպահանը գտնվում է ծովի մակերևույթից 1555 մետր բարձրության վրա և հանդիսանում է Սպահանի օազիսի կենտրոնը: Դա իսկական քաղաք-հուշարձան է: Այնտեղ կենտրոնացած են գլխավորապես Սեֆյան շրջանում ստեղծված բազմաթիվ ճարտարապետական ու գեղարվեստական հուշարձաններ (Սեֆյանների հարստության ժամանակ նա հանդիսացել է պետության մայրաքաղաքը): Մաքուր, լայն փողոցները, որոնք թաղված են այգիների ու դեկորատիվ կանաչ գոտիների մեջ, առանձնակի հմայք են հաղորդում այդ քաղաքին: Քաղաքի միջով անցնում է Զայենդերուդ գետը, որի վրա XVII դարում կառուցված կամուրջը գործում է մինչև օրս: (Ըստ հայկական աղբյուրների, այն կառուցել են նոր ջուղայեցի հայերը): Սպահանի հնագույն փակ շուկան հազվագյուտ ճարտարապետական հուշարձաններից մեկն է:

Արդյունաբերական ձեռնարկությունների մեջ հատկապես աչքի է ընկնում մետալուրգիական գործարանը և տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունները:

Թավրիզը Արևելյան Ատրպատականի նահանգի կենտրոնն է, գտնվում է ծովի մակերևույթից 1416 մետր բարձրության վրա: Նա ընկած է Իրան, Թուրքիա և Անդրկովկաս տանող ճանապարհների խաչմերուկի վրա: Հիմնադրվել է ավելի քան հազար տարի առաջ (հայկական աղբյուրներում հայտնի է Դավրեժ, Գանձակ շահաստան և այլ անուններով): երկրաշարժերի պատճառով բազմիցս ավերվել է:

ժամանակակից Թավրիզը ողջ Հյուսիս-Արևմտյան Իրանի տնտեսական ու մշակութային կենտրոնն է, ճանապարհների խոշոր հանգույց, երկրի կարևոր արդյունաբերական ու առևտրական կենտրոն: Քաղաքում գործում են խոշոր մոտորաշինական, տրակտորաշինական, նավթաքիմիական, ինչպես նաև թեթև արդյունաբերության բազմաթիվ ձեռնարկություններ:

Մեշհեդը Խորասան նահանգի խոշորագույն քաղաքն է, Իրանի հնագույն քաղաքներից մեկը և միաժամանակ երկրի կարևոր արդյունաբերական կենտրոնը:

Մեշհեդից 37 կմ հեռավորության վրա (Թուս գյուղ) գտնվում է միջնադարյան հայտնի բանաստեղծ Ֆիրդուսիի դամբարանը:

Շիրազը Ֆարս նահանգի կենտրոնն է: Գտնվում է ծովի մակերևույթից 1585 մետր բարձրության վրա: Ընկած է կարևորագույն խճուղային ճանապարհների խաչմերուկի վրա:

Շիրազը Իրանի հնագույն և գեղեցկագույն քաղաքներից մեկն է, այգիների, նռնիների և վարդերի քաղաք: Շիրազում է գտնվում անցյալի ամենատարբեր ժամանակների հուշարձաններ, այդ թվում նաև միջնադարյան հանճարեղ բանաստեղծներ Սաադիի և Հաֆեզի դամբարանները: Շիրազից ոչ մեծ հեռավորության վրա է գտնվում Աքեմենյան շրջանի հուշարձաններից մեկը՝ Պերսեպոլիս քաղաքը: Շիրազը համալսարանական քաղաք է, ունի խոշոր մշակութային կենտրոններ: Միաժամանակ նա աչքի է ընկնում իր զարգացած ու բազմաճյուղ արդյունաբերությամբ: Իրանի «միջին» քաղաքների թվին են պատկանում Սիվազը, Սարին, Համադանը, Բախթարանը (Նախկինում Քերմանշահ), Քերմանը, Յազդը և այլն:

ԻԻՀ բնակչության նշանակալից մասը կենտրոնացված է փոքր քաղաքներում: Դրանք շահրեստանների վարչական կենտրոններն են, ունեն ոչ մեծ արդյունաբերական, ինչպես նաև արհեստագործական ձեռնարկություններ: Սակայն նրանց տնտեսությունը առավելապես կապված է գյուղատնտեսության հետ (գործում են բազմաթիվ գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկություններ):

Հարկ է նշել, որ Իրանում դեռևս իսլամի տարածման դարաշրջանում ձևավորվել է իրանական քաղաքի ավանդական կերպարանքը, որն ամբողջությամբ վերցրած նմանություններ ունենալով մահմեդական Արևելքի մյուս քաղաքների հետ, միաժամանակ ունի իր բնորոշ յուրահատկությունները ինչպես արտաքին տեսքում, այնպես էլ կենսաձևի բնագավառում: Հին քաղաքները և նույնիսկ մեծ թվով գյուղեր ունեն բերդապարիսպներ: Քաղաքի կենտրոնում գտնվում էր հրապարակը (մայդան), որին հարում էր քաղաքի կառավարչի (հաքիմ) պալատը, ոստիկանությունը (ադլ), նրա գրասենյակը (դիվան), մայր մզկիթը (մասջեդե ջոմա), քարվանսարան և բազարը իր փակ առևտրական շարքերով: Խոշոր

քաղաքներում թաղամասերը (մահալլա) իրարից բաժանվում էին բարձրադիր, առավելապես կավաշեն ու աղյուսաշեն պատերով: Այդ թաղամասերից յուրաքանչյուրը բնակեցված էր որոշակի առևտրա-արհեստավորական գիլդիայի ներկայացուցիչներով և ունեին իրենց մզկիթները, բազարները, բաղնիսները: Այդ գիլդիաների մրցակցությունը, որն հաճախ ընդունում էր քաղաքական կամ կրոնական երանգ, կարևոր տեղ էր գրավում քաղաքների կյանքում:

Մեր օրերում մզկիթների հետ միաժամանակ Իրանի շատ քաղաքներում կան նաև տեղական տրբավայրեր (իմամզադե): Պետք է նշել նաև, որ այնպիսի քաղաքներում, ինչպիսիք Թեհրանն է, Շիրազը, Սպահանը, Թավրիզը և այլն կան նաև քրիստոնեական (հայ-լուսավորչական, կաթոլիկ, ուղղափառ, բողոքական) եկեղեցիներ և հրեական սինագոգներ:

Ավանդական տիպի քաղաքներից տարբերվում են նորակառույց կամ երիտասարդ արդյունաբերական քաղաքները, ժամանակակից ճարտարապետական շինություններով, լայն փողոցներով, շքեղ վաճառատներով, մշակութային բազմապիսի հիմնարկություններով և այլն, որոնց սոցիալական զարգացումը և հասարակական կյանքը շատ դինամիկ է: Որպես կանոն այդ քաղաքներն ունեն ժամանակակից քաղաքի իրենց դիմագիծը:

Գյուղական բնակչությունը: Գյուղը (դեհ) հանդիսանում է գյուղական համայնքի սկզբնական վարչական միավորը և միաժամանակ նրա հիմնական սոցիալական և տնտեսական բջիջը: Ներկայումս Իրանում ընդամենը հաշվվում է մոտ 50 հազար գյուղ: Ավանդական գյուղական բնակարանի տիպի (տեսակի), նրա չափերի, արտաքին տեսքի, ներքին ձևավորման և այլն վրա ազդում են շատ գործոններ. բնական պայմանները, բնակչության գերակշռող զբաղմունքը և տնտեսության ուղղությունը, տեխնիկայի մակարդակը, ունեցվածքային տարբերությունները, ընտանեկան կենցաղավարության ձևերը, հասարակական ավանդույթները, բնակչության էսթետիկական պատկերացումները, կրոնական հավատալիքները: Վաչկատուն ժողովուրդների բնակարանի հիմնական տիպը վրաններն են:

1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո ԻԻՀ կառավարությունը պաշտոնապես դատապարտեց շահի իրականացրած ագրարային վերափոխությունը: Դա հիմք տվեց շատ կալվածատերերի ու ցեղերի առաջնորդների պահանջելու, որ ագրարային ռեֆորմի ժամանակ իրեն-

ցից վերցված հողերը հետ վերադարձվեն: ԻԻՀ-ն կառավարությունը հայտարարեց, որ երկրում ագրարային բարեփոխումը պետք է իրականացվի «արդարության իսլամական սկզբունքներիս» հիման վրա:

Ներկայումս իրանական գյուղը գնալով փոխվում է, նախ իր արտաքին տեսքով: Հին կավաշեն տներին փոխարինելու են գալիս նոր, հարմարավետ աղյուսաշեն կամ քարաշեն տները, որոնք ունեն կոմունալ հարմարություններ, հեռախոս և այլն և ամենակարևորը կառուցված են ոչ թե խճողված ձևով, այլ խստիվ պլանավորված են, լուսավորված փողոցներով և այլն: Գյուղերի մի զգալի մասում գործում են մշակութային տներ:

Գնալով իրանական գյուղերում մեծանում է գյուղատնտեսության մեքենայացման մակարդակը, բարձրանում է գյուղացիության ընդհանուր կրթական մակարդակը և այլն:

Գյուղական շրջանների բնակչությունը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում երկրի հասարակական-քաղաքական կյանքին, փոխվում է գյուղերի արտաքին տեսքը, գյուղերում ստեղծվում են արդյունաբերական ձեռնարկություններ, մշակութային հիմնարկներ, զարգացվում է կրթական համակարգը:

Արտասահմանյան փախստականներ: Իրանում կան արտասահմանյան փախստականների երկու մեծ խմբեր. աֆղանցիներ և իրաքցիներ, որոնց ընդհանուր թիվը, ըստ որոշ տվյալների, կազմում է մոտ 2,5 միլիոն մարդ:

Աֆղանական փախստականների առաջին ալիքը Իրան է տեղափոխվել Խորհրդային Միության զորքերի Աֆղանստան մուտք գործելուց անմիջապես հետո և շարունակվել է հետագա տարիներին:

Աֆղանական փախստականների ժամանակավոր ճամբարներ էին գոյացել Խորասանում, Սիստանում ու Բելուջիստանում, Քերմանի նահանգում և այլն: Մեծ թվով աֆղանական փախստականներ բնակություն են հաստատել Թեհրանում և նրա շրջակա բնակավայրերում: 1988թ. Իրանում աֆղանական փախստականների թիվը կազմում էր 2 միլիոն մարդ: Հետագա տարիներին, Աֆղանստանում քաղաքացիական պատերազմի առնչությամբ, աֆղանների միգրացիոն գործընթացները մշտապես շարունակվել են:

Արտասահմանյան փախստականների պրոբլեմը ԻԻՀ համար առաջ է բերում լրացուցիչ դժվարություններ (գործազրկություն և այլն):

Սակայն ԻԻՀ կառավարությունը լրջորեն զբաղվում է փախստականների հարցերով (աշխատանքի տեղավորման, առողջապահության և այլն): Կառավարությունը նաև պայմաններ է ստեղծում աֆղանցի փախստականների հայրենիք վերադառնալու հարցում: Պետք է նշել, որ այդ քաղաքականությունը տալիս է դրական արդյունքներ և հարյուր հազարավոր աֆղանցիներ արդեն վերադարձել են իրենց երկիրը:

Այն հանգամանքը, որ իրաքցի փախստականները դավանակից են իրանցիների հետ (հաճախ ազգակից), ինչպես նաև կրթական մակարդակով ու մասնագիտությունների տիրապետմամբ ավելի բարենպաստ միմյանց մոտ են գտնվում, ԻԻՀ-ում նրանք տեղայնանալու և հարմարվելու այնպիսի պրոբլեմներ չունեն, ինչպես աֆղանցիները:

Ազգային կազմը: Գրավելով միջանկյալ դիրք Կենտրոնական Ասիայի, Միջերկրածովյան ավազանի և արաբական աշխարհի միջև, դարերի ընթացքում Իրանի տարածքը բազմիցս ենթարկվել է տարալեզու ժողովուրդների ներխուժումների ու արշավանքների, որոնց հետևանքով Իրանի ազգային կազմը ձեռք է բերել բազմազան ու խայտաբղետ բնույթ:

Իրանի ժողովուրդները գտնվում են ազգային ընդհանրությունների ձևավորման տարբեր աստիճաններում, սկսած էթնիկական այն խմբերից, որոնք դեռևս պահպանել են իրենց քոչվորական անասնապահական ապրելակերպը, տոհմացեղային բաժանումը և այլն, վերջացրած նրանցով, որոնք արդեն ավարտել են ազգային համախմբման էտապը:

ԻԻՀ-ում գոյություն ունի «Իրանական ժողովուրդ» հասկացությունը, որը խարսխված է ազգային-քաղաքական ընդհանրության հիմքի վրա: Այդ հասկացությունը ձևակերպվում է նաև հետևյալ կերպ. «Մեկ ժողովուրդ, մեկ լեզու»:

Պարսկերեն լեզուն (զեբանե ֆարսի) հանդիսանում է ԻԻՀ պետական լեզուն: Այն Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզու է: Միաժամանակ պարսկերենը ԻԻՀ ժողովուրդների ազգամիջյան շփումների հիմնական միջոցն է:

Իրանի Իսլամական Հանրապետությունը բազմազգ երկիր է, որտեղ բնակվում են երկրի ողջ տարածքում ցրված ավելի քան 40 ազգեր, ազգություններ ու ժողովուրդներ:

Ըստ լեզվական հատկանիշի ԻԻՀ բնակչությունը բաժանվում է երեք հիմնական խմբերի. իրանախոս (65-68 %), թրքախոս (28-32 %),

և պարսախոս (4 %), որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է էթնիկական մեծ բազմազանությամբ:

Պարսիկները (Ֆարսերը) հանդիսանում են իրանալեզու խմբի կորիզը և կազմում են երկրի բնակչության 42–43 %-ը: Նրանք հարաբերականորեն հաստատված խմբերով բնակվում են երկրի կենտրոնական ու հարավային շրջաններում, (Թեհրան, Սպահան, Ֆարս, Խորասան, Քերման, Յազդ և այլն), այն դեպքում, երբ ազգային փոքրամասնությունները գերազանցապես բնակվում են ծայրամասային շրջաններում: Պարսիկները կազմում են նաև խոշոր արդյունաբերական քաղաքների հիմնական մասը և նատանյաց գյուղացիության նշանակալից մասը:

Պարսկերեն լեզուն ունի բազմաթիվ բարբառներ ու խոսվածքներ: Իրանում բնակչության 98,4 %-ը կազմում են մահմեդականները, որից 91 %-ը շիաներ կամ շիիթներ են, մնացածը՝ սուննիներ կամ սուննիթներ: Բոլոր ուղղությունների քրիստոնյաները կազմում են 0,6 %-ը, հրեաները 0,2 %-ը, զրադաշտականները՝ 0,1 %-ը, մնացածները 0,3 %-ը:

Կարևոր է նշել, որ ազգային հարցը Իրանում չի կարելի մեկնաբանել միանշանակ ձևով: Այդ երկրում այն մշտապես ունեցել է և այսօր էլ ունի իր յուրահատկությունները: Այսպես, ԻԻՀ-ում ազգային փոքրամասնությունների ազգային ինքնագիտակցության ձևավորումը նրանց գիտակցության միջից դեռևս դուրս չի մղել այս կամ այն չափով նրանց պատկանելիության գիտակցությունը համաիրանական հոգեբանական ընդհանրությանը, որը պայմանավորված է պատմական ճակատագրի միասնությամբ, մահմեդական կրոնով, միասնական պետականությամբ, ավանդույթներով և վերջապես իրանական մշակույթի ողջ հավաքականությամբ, որի զարգացման մեջ անվիճելի ներդրում ունեն Իրանի բոլոր ժողովուրդները:

Ընդուշտ ազգային ընդհանրության որոշակի տարրերի առկայությունը ի վիճակի չէ կոծկելու Իրանի փոքրամասնությունների էթնիկական յուրահատկության գծերը: Այդ փոքրամասնություններից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը, իր սեփական մշակութային ավանդույթները և այլն:

ԻԻՀ-ն Հիմնական օրենքում ասվում է, որ «Իսլամական համայնքը դա մի միասնական ազգ է»: Այնուհետև «բոլոր մահմեդականները կազմում են մեկ համայնք» (հոդված 11): Դա նշանակում է, որ իս-

լամական հանրապետության սահմանադրությունը ազգություններ ու ազգային բաժանումներ չի ճանաչում: Բոլոր մահմեդականները, անկախ իրենց ազգային պատկանելությունից, համարվում են միասնական համայնքի անդամներ: Այսպիսով, ազգի հատկանիշ է ճանաչվում կրոնը, անտեսելով հավատացյալների այլազանությունը ըստ ազգային հատկանիշի: Ոչ մահմեդականները՝ հայերը, ասորիները, հրեաները, զրադաշտականները և այլն համարվում են ոչ թե ազգային, այլ կրոնական փոքրամասնություններ:

ԻԻՀ սահմանադրությունը մահմեդական ազգաբնակչությանը հրահանգում է ունենալ «հարգալից վերաբերմունք ոչ մահմեդականների նկատմամբ», առաջնորդվելով իսլամական արդարության սկզբունքներով, ինչպես նաև հարգել նրանց մարդկային իրավունքները (հոդված 14): Նույն հոդվածում պարզաբանվում է, որ այդ սկզբունքը գործում է «այն մարդկանց իրավունքների նկատմամբ, որոնք հանդես չեն գալիս իսլամի դեմ և դավադրություններ չեն հյուսում իսլամական Հանրապետության նկատմամբ»:

Ցեղերը: Իրանի նստակյաց-քոչվորական ցեղերը կազմում են 3 միլիոն մարդ, դրանցից քոչվոր-անասնապահները՝ մոտ 600 հազար: Սակայն այս տվյալները հավաստի չեն: Որոշ աղբյուրների տվյալներով, ներկայումս քոչվորների թիվը Իրանում կազմում է 1,152,099 մարդ, որոնցից տղամարդիկ՝ 597,774 մարդ և կանայք 554,325: Վաչկատուն կենսաձևը և տոհմա-ցեղային կազմակերպությունը այս կամ այն չափով պահպանվել է քրդերի, լուրերի, արաբների, դաշտայինների, բախթիարների, թուրքմենների, բելուջների, շահսևենների և այլն մոտ: Վաչկատուն ցեղերի մեծ մասը վերաբերում է կիսաքոչվորների կամ կիսանստակյացների կատեգորիային, որոնց տնտեսական կենսաձևը բնորոշվում է անասնապահության և հողագործության համատեղմամբ, որոնք լրացվում են օժանդակ զբաղմունքներով և տնայնագործությամբ (հիմնականում գորգագործությամբ): Որպես կանոն, այդ ցեղերը ունեն մշտական բնակավայրեր (դշլաղներ), որոնց բնակիչները դաշտային աշխատանքները հերթագայում են սեզոնային քոչերով (գարնանը և աշնանը) դեպի ամառային և ձմեռային արոտավայրերը: Նրանք քոչում են ոչ մեծ խմբերով, որոնք հաճախ բաղկացած են ցեղակից ընտանիքներից: Քոչերի ժամանակ ապրում են վրաններում կամ յուրտերում (թուրքմենները): Առանձին ցեղեր (դաշտայիներ, բախթիար-

ներ), քոչավայրերում անց են կացնում տարեկան 2-4 ամիս, հաղթահարելով 400-600 կմ տարածություն:

Ցեղերի անասնահոտը գլխավորապես բաղկացած է ոչխարներից և այծերից, ինչպես նաև կովերի ու բեռնակիր անասունների ոչ մեծ թվից: 1987 թ. տվյալներով Իրանում վաղկատուն ցեղերի տրամադրության տակ կային 9,282,846 ոչխարներ, 7,678,755 այծեր, 185,800 կովեր, 6,508 եզներ և 29,609 ուղտեր:

Ներկայումս Իրանում զանգվածաբար տեղի է ունենում քոչվորների և կիսաքոչվորների անցում դեպի նստակեցություն:

Իրանալեզու ժողովուրդներ: Ինչպես նշվեց վերևում, իրանալեզու ամենախոշոր ժողովուրդը պարսիկներն են կամ ֆարսերը: Ըստ թվաքանակի հաջորդը քուրդն է: ԻԻՀ-ում բնակվող քուրդերի թվաքանակի մասին իրանական պաշտոնական վիճակագրությունը ստույգ տեղեկություններ չի հայտնում: Ըստ որոշ տվյալների, քուրդը կազմում են երկրի բնակչության մոտ 8-10-%-ը, կամ 5-6 միլիոն մարդ: Առանձին աղբյուրներում (իրանական և այլն) նրանց թվաքանակը նշվում է 1,5 միլիոն մարդ: Երբեմն նշվում է, որ քուրդը կազմում են երկրի ողջ բնակչության 7 % և այլն:

ԻԻՀ քուրդը բաժանվում են մոտ 30 ցեղերի, որոնցից խոշորագույններն են մուքրի, բիլբաս, շեքբաքի, քելհոր, սենջաբի, գուրան, բանիարդալան և այլն:

Իրանի քուրդերի բնակության հիմնական վայրերն են Իրանական Քուրդստանը (երկրի արևմուտքում, Թուրքիայի սահմանակից շրջաններում) և Արևմտյան Ադրբեջան նահանգը (Մակուի, Սուջբուլաղի, Բանեի, Մեհաբադի, Սենենդեջի, Բախթարանի (Նախկինում Քերմանշահ), և մի շարք այլ վայրեր:

ԻԻՀ-ում քուրդեր են ապրում նաև Հյուսիսային Խորասանում (Բոջնուրդ, Քուչան, Շիրվան), որտեղ նրանք տեղափոխվել են XVII դարում շահ Աբբաս I-ի կողմից, իրանական սահմանները թուրքմենների ասպատակություններից պաշտպանելու նպատակով: Խորասանյան քուրդերի ցեղերը մտնում են երկու խոշոր միավորումների մեջ. զաֆարանլու (որն ավելի խոշոր է) և շադլու: Ի տարբերություն արևմտյան Իրանի քուրդերի, որոնք շաֆիիթական ուղղության սուննիթներ են, խորասանյան քուրդերը իրենց մեծ մասով շիաներ են: Նրանց միջև կան նաև լեզվական տարբերություններ: Խորասանի քուրդերի լեզվում առկա են

շատ թյուրքական փոխառություններ: Իրանում բնակվում են նաև «Ահլե-հաղ» աղանդին պատկանող քրդեր, չնչին թվով եզիդականությունը դավանողներ, ինչպես նաև սուֆիզմի Ղադերի և Նախշբանդի միաբանությունների հետևորդներ:

Ասանձին քրդական խմբեր բնակվում են նաև Թեհրանի շրջանում, Գիլյանում, Ֆարսում, Քերմանում և Բելուջիստանում:

Իրանի քրդերը խոսում են գլխավորապես գուրանի, զազա և կուրմանջի բարբառներով: Նրանց ճնշող մեծամասնությունը վարում է նստակյաց և կիսանստակյաց կյանք, ապրելով քաղաքներում և գյուղերում: Քրդերը զբաղվում են գլխավորապես ոչխարաբուծությամբ և այգեգործությամբ: Նրանց շրջանում լայն տարածում ունեն զանազան արհեստները (գորգագործություն, կաշեգործություն, քանդակագործություն, փայտի փորագրություն և այլն): Քաղաքներում շատերը ներգրավված են արդյունաբերության և առևտրի մեջ: Կան նաև քոչվորական ու կիսաքոչվորական անասնապահությամբ զբաղվող քրդեր, որոնց բնակավայրերը սովորաբար բարձրադիր լեռնային շրջաններն են:

Քրդերը միասնական ժողովուրդ են, որոնք համախմբված խմբերով ապրում են Իրանում, Թուրքիայում, Իրաքում և Սիրիայում: Սակայն նրանք միմյանցից բաժանվում են պետական սահմաններով: Իրանի սահմանամերձ շրջաններում ապրող մի շարք ցեղեր (խարքի, քաֆ, բիլբաս) իրենց ցեղակիցներն ունեն Թուրքիայում և Իրաքում:

Քրդերը Իրանում դեռևս մեծ մասամբ պահպանում են իրենց ավանդական զգեստը:

Քրդական ազգայնականությունը ժամանակակից իմաստով ձևավորվել է դեռևս XX դարի սկզբին, երբ քրդերը սկսեցին, ճիշտ է դեռևս տարտամ ձևով, բայց հարց բարձրացնել «անկախ Քրդստանի» ստեղծման մասին:

1925 թ. Իրանում Ռզա-շահ Փեհլևիի դիկտատուրայի հաստատումից հետո իրանական կառավարությունը զենքի ուժով քրդերին ստիպում էր անցնել նստակեցության: 1946 թ. Խորհրդային Միության հրահրումով ու նրա գործոն աջակցությամբ, այսպես կոչված «Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը» Ղազի Մուհամմեդի գլխավորությամբ, Քրդստանը հռչակեց «ժողովրդական հանրապետություն»՝ Մեհաբադ մայրաքաղաքով: Այդ նույն թվականին, Իրանի տարածքից Կարմիր բանակի դուրս գալուց հետո, իրանական զինված ուժերը վերստին գրա-

վեցին իրանական Քրդստանը, այնտեղ վերականգնելով իրանական կառավարության գերիշխանությունը:

Ներկայում ԻԻՀ կառավարությունը կարևոր նշանակություն է տալիս Իրանական Քրդստանի տնտեսական և մշակութային զարգացման հարցին: Երկրամասում կառուցվում են ժամանակակից արդյունաբերական ձեռնարկություններ, ճանապարհներ, զարկ է տրվում դպրոցական ցանցին, ստեղծվում են մշակութային հիմնարկություններ և այլն:

ԻԻՀ-ն տարածքում բնակվող իրանալեզու ժողովուրդների թվին են պատկանում նաև **լուրերը կամ լորերը**, որոնք բաժանվում են մի քանի ցեղակից էթնիկական խմբերի՝ բուն լուրեր, մամասանի, քուհգիլույե, որոնք, իրենց հերթին, բաղկացած են խոշոր ցեղային միություններից ու առանձին ցեղերից: Լուրերի թվի մասին ստույգ տեղեկություններ չկան: Առանձին աղբյուրներ տալիս են 700 հազար թիվը, ոմանք պնդում են, որ լուրերը կազմում են Իրանի բնակչության 2 %:

Բուն լուրերը բնակվում են Լուրեստան կամ Լորեստան կոչված լեռնային շրջանում, որն ընկած է ԻԻՀ հարավ-արևմուտքում, Խորրամաբադ-Մրաք գծից արևմուտք, մինչև Իրաքի սահմանը: Լուրեստանի տարածքում բնակվում են երկու ցեղակից էթնիկական խմբեր, որոնք միմյանցից բաժանված են Զագրոսյան լեռնաշղթայով. դրանք են Փիշ-ե Քուհի (Նախալեռնային) լուրեր և Փոշթ-ե Քուհի (լեռների ետևում) գտնվող լուրեր: Լուրեր են բնակվում նաև Քուհգիլույեյում, Բախթիարիում և Չհարմահալում: Առանձին խմբեր բնակվում են Ղազվինի և Համադանի շրջաններում: Նրանք, ինչպես և բախթիարները, կազմում են հարավային Խուզիստանի քաղաքային բնակչության մի մասը: Ընդհանրապես լուրերը վարում են նստակյաց, քոչվորական ու կիսաքոչվորական կյանք:

Էթնիկական առումով լուրերը մոտ են իրենց հյուսիսային հարևաններին՝ քրդերին: Այդ ժողովուրդների լեզուները ևս ունեն շատ ընդհանրություններ:

Լուրերը բաժանվում են չորս ցեղախմբերի, որոնք են. բալա գարիդեհ, դեյֆան, սեյսեյլեհ, թարհան:

Քուհգիլույե և մամասանի նստակյաց-քոչվոր լուրական ցեղերը բնակվում են Զագրոսի նախալեռնային շրջաններում, Ֆարս և Խուզեստան նահանգներում: Լեռնային լուրերի հասարակական հարաբերություններում առավել շատ, քան այլ ցեղերի մոտ, պահպանվում է ցեղա-

յին առաջնորդների իշխանությունը, տոհմացեղային կազմակերպությունը և նահապետական ընտանեկան կապերը:

Բախթիարները լուրերին և քրդերին ազգակից նստակյաց-քոչվորական ցեղերի էթնիկական խումբ է, որը բնակվում է Սպահանից արևմուտք ընկած լեռնային շրջանում (Բախթիարական լեռներ) և Խուզեստանյան հարթավայրի նախալեռնային արևելյան մասում: Բախթիարները բաժանվում են երկու հիմնական խմբերի. հաֆթլենգ, որում գերակշռում են քոչվոր-անասնապահները և չահար-լենգ՝ առավելապես նստակյաց: Ցուրաքանչյուր խումբը բաղկացած է բազմաթիվ ցեղերից ու տոհմերից: Բախթիարների ընդհանուր թիվը հաշվում են մոտ մեկ միլիոն մարդ:

Բախթիար հողագործները բնակվում են գլխավորապես Շահրմահալի, Ֆարիդանի, Քյարվանդի բախշերում (գավառ): Վաչկատուն բախթիարները ամառն անցկացնում են Բախթիարիի բարձր լեռնային շրջաններում, իսկ ձմռանը քոչում են դեպի Խուզեստանի հարթությունը:

Բախթիարական ցեղերի քաղաքական գործոնը տեղի ունեցավ 1905-1911 թթ. իրանական տահմանադրական շարժման տարիներին, երբ նրանք այդ շարժման մեջ խաղացին կարևոր դեր երկրում տահմանադրական-միապետական կարգեր հաստատելու գործում: Մինչև 20-ական թվականների վերջերը Բախթիարին հանդիսանում էր կենտրոնական իշխանությունից համարյա անկախ մի շրջան, որտեղ ավատական առաջնորդները (իլխանները) հանդիսանում էին լիիշխան կառավարիչներ: Ռզա շահ Փեհլևիի տիրապետության շրջանում Բախթիարին ենթարկվեց կենտրոնական կառավարությանը և բազմաթիվ քոչվոր ցեղեր բռնի ուժով անցան նստակեցության:

Բախթիարների մոտ դեռևս մի որոշ աստիճան պահպանվում է նահապետական ապրելակերպը: Սակայն Իրանի նավթի և գազի արդյունաբերության մեջ աշխատող բանվորների զգալի մասը լուրեր և բախթիարներ են: Բախթիարների մոտ ևս, հատկապես գյուղական վայրերում, դեռևս պահպանվում է ավանդական զգեստը:

Իրանաբնակ ժողովուրդներից են նաև բելուջները կամ բալուջները, որոնք բնակվում են ԻԻՀ հարավ-արևելյան ծայրամասում՝ Բելուջիստանում ու Սիստանում, որը հանդիսանում է Իրանի առավել հետամնաց շրջաններից մեկը: Այդ տարածքի գլխավոր քաղաքներն են Զահեդանը, Զաբոլը, Իրանշահրը, Սարավանը, Շահրեհարը և այլն: Բելուջների

առանձին խմբեր բնակվում են նաև Խորասանում, Քերմանում և Արևմտյան Մեքրանում: Իրանի տարածքում ոչ ստույգ տվյալներով բնակվում են 1 միլիոն բելուջներ: Անգլիայի գաղութային քաղաքականության, իրանական շահերի և տեղական ավատատերերի տարրանքների հետևանքով բելուջները բաժանված են Իրանի, Պակիստանի և Աֆղանստանի միջև: Սակայն դա մի միասնական ժողովուրդ է, որն ապրում է այդ երեք պետությունների սահմանագծում, միավորված լեզվական ընդհանրությամբ (կան միայն բարբառային տարբերություններ), կրոնական միասնությամբ (սուննիթական -հանաֆիական ճյուղի իսլամ), մշակութային ու կենցաղային ավանդույթներով:

Բելուջները գերազանցապես զբաղվում են օազիսային տիպի հողագործությամբ և կիսաքոչվորական անասնապահությամբ: Նրանց շրջանում դեռևս որոշ չափով պահպանվում է տոհմացեղային բաժանումն ու բազմաթիվ ավանդույթները, որոնք բնորոշ են նահապետական ցեղային կացութաձևին:

Բելուջների լեզուն կամ բելուջերենը հանդիսանում է արևելիրանյան բարբառներից մեկը: Նա ունի երկու ճյուղավորում, որոնցից մեկը՝ հյուսիսայինը կոչվում է սրբհադի կամ սորհադի, իսկ հարավայինը՝ մաքրանի: Բելուջական ամենախոշոր ցեղերն են բամերի, բալիդեի, բոզորգզադե, դիգգի, սարդար զայե, շահբախշ, լաշարի, մոբարաքի, միր մորադ զայե, Նարոյե, Նուշիրվանի, բարոհոյե, բարամ-զեհի և շիրխանզայե: Սիստանում բնակվող մի շարք ցեղեր թեև առնչվում են բելուջներին, սակայն խոսում են սիստաներեն լեզվով (Սիստանի), որը հանդիսանում է պարսկերենի խոսվածքներից մեկը: Այդ խոսվածքով խոսող առավել նշանավոր ցեղերն են. սարբանդի, շահրաքի, սարգազի, զամիր-Ֆարսյուն, միր-արաբ և տանքարանի:

Իրանալեզու գիլյանցիները կազմում են մերձկասպյան Գիլյան նահանգի (օստան) բնակչության 80 տոկոսը: Դարերի ընթացքում անանցանելի անտառներն ու ճահիճները գիլյանցիներին պաշտպանում էին արտաքին ներխուժումներից ու ասպատակություններից, որի հետևանքով նրանց հաջողվել է անաղարտ պահպանել իրենց էթնիկական դիմագիծը: Գիլյանցիներին համարում են շրջանի հին իրանական բնակչության հետնորդները: Սակայն մեր օրերում գիլյանցիների կենցաղում, լեզվի և նույնիսկ արտաքին կերպարանքի մեջ կան բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք նրանց տարբերում են ֆարսերից:

Գիլյանցիների գերակշռող մասը զբաղվում է հողագործությամբ (աճեցնում են բրինձ, ծխախոտ, ցիտրուսային կուլտուրաներ), շերամապահությամբ, ձկնորսությամբ, անտառային արդյունահանությամբ: Գիլյանցի կանանց զգեստները կտրուկ տարբերվում են պարսկուհիների զգեստներից:

Գիլյանցիներին մոտ են գալեշները, որոնք ապրում են նահանգի լեռնային շրջաններում:

Մազանդարանցիները, ինչպես և գիլյանցիները, որոնց հետ նրանք ունեն բազմաթիվ ընդհանրություններ, համարվում են իրանական մերձկասպյան շրջանի հնագույն բնակիչներ: Այդ շրջանը վաղ աշխարհագրական գրականության մեջ հայտնի է Թաբարիստան անունով:

Ծովափնյա շրջանների մազանդարանցիները հիմնականում զբաղվում են հողագործությամբ (բրինձ, ցիտրուսային կուլտուրաներ, ծխախոտ, բամբակ): Լեռնային Մազանդարանում լայնորեն զարգացած է արածովի անասնապահությունը: Շատ գյուղեր լեռներում ունեն լրացուցիչ բնակավայրեր, որոնք ամառվա ամիսներին օգտագործվում են որպես յայլաղներ:

Գիլյանցիներն ու մազանդարանցիները միասին կազմում են 2,5 միլիոն մարդ:

Թալիշները բնակվում են Ադրբեջանի Հանրապետության Լենքորանի հարթավայրին սահմանակից մերձկասպյան շերտում: Լեզվական առումով թալիշները կազմում են մի խումբ, որն ազգակից է գիլյանցիներին, որոնց հետ նրանք տնտեսական ու կենցաղային բնագավառում ունեն բազմաթիվ ընդհանրություններ: Նրանց հիմնական զբաղմունքը հողագործությունն է, ավելի պակաս չափով զբաղվում են անասնապահությամբ, ձկնորսությամբ, որսով, տնայնագործությամբ:

Թաջիկները հանդիսանում են հնագույն հողագործական բնակչություն, որը ֆարսերի ու աֆշարների հետ խառը ապրում են Մաքզեվարի և Նիշապուրի միջև ընկած շրջանում: Թաջիկների առանձին խմբեր բնակվում են նաև Գորգանում: Նրանք բոլորը վարում են նստակյաց կյանք:

Ջեմշիդները լեզվական առումով թաջիկներին ազգակից ժողովուրդ են: Ապրում են Խորասանում, որտեղ նրանք տեղափոխվել են Աֆղանստանից XIX դ. վերջին: Ջեմշիդների հիմնական զբաղմունքը անասնապահությունն է, մասամբ նաև երկրագործությունը: Նրանցից շատերը

տարվա մի մասը ապրում են շարժական վրաններում, իսկ ձմռանը տեղափոխվում են կավաշեն խրճիթներ: Ջեմշիդները խոսում են թաջիկերեն լեզվով, որը խառն է մեծ թվով թուրքմենական բառերով:

Արևելյան Խորասանում ապրում են Աֆղանստանից տեղափոխված բերբեր խազարեցիները: Դրանք այն բնակչության հետնորդներն են, որոնք ժամանակին մտնում էին բազմացեղ մոնղոլական հորդաների կազմի մեջ: 1935թ. Իրանի կառավարությունը բերբերների ցեղը վերանվանեց խալերի (արևելցիներ) անունով:

Արևելյան Խորասանում ու Միսթանում ապրում են աֆղանների ցրված խմբեր:

Ջեմշիդներին ազգակից **Թեյմուրները** բնակվում են Մեշհեդի, Ջամի և Խաֆի շրջաններում: Նրանց մեծ մասը զբաղվում է քոչվորական անասնապահությամբ: Քոչվոր թեյմուրները իրենց մեծ մասով սունիթ-մահմեդականներ են, մինչդեռ նստակյաց թեյմուրները դավանում են շիիթական ուղղության իսլամը:

Իրանական խմբի մեջ մտնող ժողովուրդ են նաև **թաթերը:**

Թուրքալեզու ժողովուրդներ: Թուրքալեզու ժողովուրդները հանդիսանում են Իրանում ոչ պարսկերեն խոսող ամենախոշոր էթնիկական խումբը: Ստույգ տվյալներ նրանց իրական թվի մասին գոյություն չունի: Թուրք ազգայնական աղբյուրները պնդում են, որ Իրանի ողջ բնակչության մեկ երրորդը թյուրքեր են: 1944թ. Իրանական Ադրբեջանում թյուրք ազգայնականները Խորհրդային Միության հրահրմամբ և նրա աջակցությամբ ծավալեցին անջատողական շարժումներ: Այսպես կոչված «Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցությունը» Իրանական Ադրբեջանը հռչակեց ինքնավար հանրապետություն: Այդ ինքնակոչ հանրապետության կառավարությունը իրանական Ադրբեջանի պաշտոնական լեզու հռչակեց թուրքերենը: Իրանի տարածքից Կարմիր Բանակի դուրս գալուց հետո, 1946թ. Իրանական Ադրբեջանի «ինքնավար հանրապետությունը» փլուզվեց և դադարեց գոյություն ունենալուց: Իրանական զորքերը մուտք գործեցին Ատրպատական և այնտեղ վերականգնվեց իրանական պետության գերիշխանությունը:

Ազերիները կամ ադրբեջանցի թյուրքերը Իրանի թուրքալեզու ժողովուրդների մեջ խոշորագույնն են: Իրենց թվաքանակով նրանք ֆարսերից հետո գրավում են երկրորդ տեղը: Ըստ որոշ տվյալների, նրանց թիվը Իրանում հասնում է 12 միլիոնի: Ազերի ազգայնականները գըստ-

նում են, որ ազերիները կազմում են Իրանի բնակչության 25-28 % և նույնիսկ ավելի:

Ազերիները համախմբված զանգվածով բնակվում են Արևելյան, Արևմտյան Ադրբեջան և Արդաբիլ օսթաններում (նահանգ), ինչպես նաև Զենջան նահանգում, որտեղ նրանք կազմում են բնակչության մոտ 80 %-ը: Ազերիները նշանակալից թիվ են կազմում նաև Կենտրոնական օսթանում, հատկապես Թեհրան քաղաքում, ինչպես նաև Համադան, Ղում, Սավե, Արաք, Ղազվին քաղաքներում, Խորասան նահանգում և ցրված են Իրանի բազմաթիվ այլ մասերում: Իրանում և Ադրբեջանի Հանրապետությունում թյուրքերի (ազերիների) մայրենի լեզուն օղուզերենն է: Այս լեզուն բաժանվում է երկու ճյուղերի. հյուսիսային, որով խոսում են Ադրբեջանի Հանրապետությունում և Հարավային՝ Իրանում: Հարավային խոսվածքի մեջ ուժգին կերպով թափանցել է ֆարսի լեզուն:

XI դարից սկսած ընդհուպ մինչև XX դարը Իրանում կառավարել են մի շարք թյուրքական դինաստիաներ. Ղազնևիդների, Սելջուկների, Սեֆյանների, Ղաջարների:

Ազերիների հիմնական զբաղմունքը նստակյաց հողագործությունն է, անասնապահությունը (ոչխարաբուծությունը), այգեգործությունը, խաղողագործությունը, քաղաքներում առևտուրը և արհեստները:

Ազերիների կազմի մեջ են մտնում նաև մանր թյուրքական խմբեր, որոնք լրիվ կամ մասնակի կերպով ասիմիլացված համաձուլված են (մուղադեմներ, բայաթներ, ջեվանշիրներ և այլն): Խոշոր թյուրքական խմբեր կազմող աֆշարներին, շահսևեններին և դարադաղցիներին ևս հաճարում են ազերիների խմբի մեջ մտնող հավաքականություն, սակայն այնուհանդերձ սրանց մոտ կան նաև որոշակի տարբերություններ: Շահսևենները բնակվում են Իրանական Ադրբեջանի (Ատրպատական) արևելյան մասում և Մուղանի տափաստանում, ինչպես նաև Սավե և Համադան քաղաքների միջև ընկած շրջանում: «Շահսևեններ» անվանումը (բառացիորեն «շահին սիրողներ») նախապես ունեցել է ոչ թե էթնիկական, այլ քաղաքական իմաստ, նշանակելով սեֆյան շահերի կողմից XVI-XVII դարերում արհեստականորեն ստեղծված տարբեր թյուրքական ցեղերի մի միավորում: Որպես իրանական շահերի ռազմական հենարան, շահսևենները օգտվում էին զանազան արտոնություններից:

Աֆշարները բնակվում են Ուրմիա լճից արևելք, Համադանի և Բախթարանի (նախկինում Քերմանշահ) միջև: Աֆշարների առանձին խմբեր՝ քոչվորներ ու հողագործներ, հանդիպում են Խուզեստանում, Ֆարսում և Քերմանում:

Ղարադաղցիները ռուս-պարսկական պատերազմների ժամանակներում Անդրկովկասից Իրան գաղթած մի ցեղի հետնորդներ են: Բնակվում են Իրանի հյուսիսի սահմանամերձ շրջաններում, Արաքս գետի ափերին: Բաղկացած են յոթ ցեղերից: Զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Իրանի թուրքմենները բաղկացած են երեք հիմնական ցեղախմբերից, որոնցից յոմուդները և գոկլանները ապրում են Գորգանում կամ այսպես կոչված թուրքմենական տափաստանում (Թուրքման սահրա), իսկ տալորները՝ Խորասանի հյուսիս-արևելյան ծայրամասում, Դերեգեզի և Սերախսի շրջաններում: Յոմուդների բնակավայրը գտնվում է Կասպից ծովին կից Գորգանի մի մասում: Նրանց հիմնական զբաղմունքը հողագործությունն է, արածովի անասնապահությունը և ձկնորսությունը: Գոկլանները վարում են նստակյաց և կիսանստակյաց կյանք և ապրում են Գոմբեդ-Քավուսից արևելք, Գորգան գետի ավազանում: Թուրքմենական տափաստանում թուրքմենները համարյա ամբողջապես անցել են նստակեցության և հիմնականում զբաղվում են բամբակի և հացահատիկի մշակմամբ: Իրանում թուրքմենների թիվը հասնում է 1 միլիոն 200 հազարի:

Թուրքմենները խոսում են թուրքերենի արևելյան օղուզական բարբառով, որը հանդիսանում է նաև Թուրքմենստանի Հանրապետությունում գործածվող լեզուն: ԻԻՀ-ում բնակվող ամենախոշոր թուրքմենական ցեղերն են կուկլան և համոթ, աթաբայ և զաֆարբայ ցեղերը, որոնք իրենց հերթին բաժանվում են մի շարք ճյուղավորումների: Օրինակ կուկլանները բաժանվում են չորս ճյուղերի, որոնք բնակվում են թուրքմենական տափաստանի կենտրոնական և արևելյան մասերում: Յոմուտները բաժանվում են երկու խոշոր կլանների, որոնք են աթաբայ և ջաֆարբայ: Նրանք ապրում են թուրքմենական տափաստանի արևմտյան մասում: Թուրքմենների բնակության վայրերում ամենախոշոր քաղաքներն են՝ Գոնբադ Քավուսը, Բանդար Թուրքմանը, Ագ Ղալան և Գոմիշանը:

Թուրքմենների մեծագույն մասը դավանում է սուննիզմի հանաֆիական ուղղությունը: Սակայն մի որոշ մասը հանդիսանում է սուֆիզմի նաքշբանդիե միաբանության հետևորդ:

Իրանի թյուրքալեզու ցեղերի մեջ են մտնում նաև **դաշդաքիները, դաքարները** և **դարադաղախները**: Դաշդաքիները թյուրքալեզու քոչվորական ցեղ է, որի զբաղեցրած տարածքը սկսվում է Սպահանի նահանգի Աբադեհ և Շահրեզա վայրերից մինչև Դարսից ծոց ընկած շրջանը: Դաշդաքիները բաժանվում են մի քանի ցեղերի, որոնցից կարևորագույններն են. քաշքյուլի, շեշ բլրջի, քյալլաջ, ֆարսի մադան, սաֆի խանի, ռահիմի, բայաթ, դարդե շույլե: Դաշդաքիները ցեղակցական կապեր ունեն Իրանի Միսթան նահանգի և Հնդկաստանի միջև բնակվող թյուրքական Հալլաջ ցեղի հետ: Վարում են քոչվորական և կիսաքոչվորական կյանք:

Դաքարները ապրում են գլխավորապես Մազանդարանում և հարևան Գորգանում: Նրանց ընդհանուր թիվը հաշվում են 700 հազարից մինչև 1 միլիոն: Իրանում հայտնվել են XV դարում: Հետագայում, Մեֆյան դինաստիայի տիրապետության շրջանում, նրանք բնակեցվեցին Գորգանի տարածքում՝ պետության հյուսիս-արևելյան ծայրամասերում, արտաքին թշնամիների դեմ հուսալի պատնեշ ստեղծելու նպատակով: XVIII դարի վերջին օգտվելով հարևան թուրքմենական ցեղերի աջակցությունից, դաքարները պայքարի դուրս եկան երկրում տիրապետող ուժերի դեմ և հաղթանակ տանելով նրանց նկատմամբ 1797 թ. Իրանում հիմնադրեցին մի նոր դինաստիա, որը գոյություն ունեցավ մոտ 150 տարի, մինչև 1925 թվականը:

Դաքարները գերազանցապես շիա-մահմեդականներ են: Նրանց մի մասը վարում է նստակյաց կյանք և զբաղվում է հողագործությամբ:

Դարադաղախները ապրում են Ուրմիա լճի հարավ-արևմտյան ափերի մոտ՝ Սուլդուզի շրջանում: Դրանք XIX դարի ռուս-պարսկական պատերազմների շրջանում Անդրկովկասից եկվորներ են: Վարում են նստակյաց կյանք, զբաղվելով հողագործությամբ: Նրանց մի մասը խառնվել է քրդերի հետ: Դավանանքով հիմնականում շիա մահմեդականներ են:

Թյուրքալեզու հոծ բնակչություն կա նաև ԻԻՀ հյուսիս-արևելյան Մեշհեդ քաղաքում:

Ֆարսի նահանգի արևելյան ու հարավ-արևելյան մասում և Լուրիստանի մի մասում ապրում է **Խամսե** կոչված ցեղային միավորումը, որը

էթնիկական առումով մի խառը խմբավորում է և ունի լուրական, թուրքական ու արաբական ծագում:

«Խամսե» համադաշնությունը արհեստականորեն ստեղծվել է XIX դարի կեսերին, որպես վարչաքաղաքական մի միավորում, որը գտնվում էր Ղավամ Շիրազիների ժառանգաբար կառավարող ավատական ընտանիքի իշխանության ներքո: Խամսեների բնակության տարածքը սահմանակցում է դաշտային հողերին, ուստի այդ երկու ցեղերի միջև գոյություն ունի ավանդական թշնամանք, որի պատճառը արոտավայրերի համար պայքարն է:

Խամսեների կազմի մեջ մտնում են հինգ ցեղեր, որոնցից բահարլու, նաֆար և ինանլու ցեղերը խոսում են խառը թյուրքական լեզվով, բասերի ցեղը՝ լուրերենի բարբառով, իսկ արաբ կոչված ցեղը պահպանում է արաբական բարբառը, որի մեջ առկա են պարսկերենի մեծ քանակությամբ բառեր:

Առհասարակ պետք է նշել, որ վերևում թվարկված բոլոր թյուրքալեզու ժողովուրդները խոսում են թյուրքերեն լեզուներով և նրանց բարբառներով, որոնք խառն են պարսկերեն լեզվի բառերով:

Արաբները և առհասարակ սեմիթական ժողովուրդները: Պատմական աղբյուրները վկայում են, որ արաբական ցեղերը Իրանի հարավ-արևմտյան շրջան՝ Խուզիստան են ներթափանցել Արաբական թերակղզուց, մեր թվարկության առաջին դարերի ընթացքում: Ներկայումս Իրանում արաբական ցեղերը զբաղեցնում են մի տարածք, որն ընկած է հարավում Շաթթ-էլ-Արաբ գետից մինչև Պարսից ծոց և հյուսիսում մինչև Շոշ:

Իրանում արաբների ստույգ թվի մասին հավաստի տեղեկություններ չկան: Իրանական պաշտոնական վիճակագրությունը նրանց թիվը ներկայացնում է 500 հազար: Եվրոպական ու ամերիկյան աղբյուրները գտնում են, որ արաբները կազմում են Իրանի ողջ բնակչության մոտ 3 %-ը:

Արաբների հիմնական զանգվածը բնակվում է Խուզիստան նահանգում և Պարսից ծոցի ափերին: Առանձին խմբեր ապրում են Ֆարսի նահանգում, Քերմանում, Խորասանում և Դաշթե-Քեվիր անապատի ծայրամասային շրջաններում:

Կարուն գետի ստորին հոսանքի մոտ և Շաթթ-էլ-Արաբ գետի երկայնքով ապրում են բենի-քաաբ, բենի-լրամ, բենի-թամիմ, բենի-սաղեհ,

բենի-թորոֆ, բենի-մարվան, ալ-խամիս, բավի և քենան հնագույն ցեղային միավորումների ցրված մնացուկները, որոնց մի մասը բնակվում է Իրաքի տարածքում: Պարսից ծոցի առափնյա շրջաններում ապրող արաբները հիմնականում հողագործներ են և ձկնորսներ: Ի դեպ, 1980թ. Իրաք-Իրանյան պատերազմը սկսվելուց հետո, երբ իրանական արաբների բնակության վայրերը վերածվեցին ռազմական գործողությունների թատերաբեմի, արաբների մի խոշոր զանգված տեղափոխվեց Իրանի այլ շրջաններ, հաստատելով մշտական բնակություն: Արաբների հետ միասին ԻԻՀ բնակչության սեմական խմբի մեջ են մտնում նաև ասորիները և հրեաները:

Ասորիների հիմնական բնակավայրը Ուրմիա լճից արևմուտք ընկած շրջանն է: Ասորիներն իրենց անվանում են սուրայի: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան Թուրքիան և նրա կողմից հրահրված իրանական քրդերը Ուրմիայի շրջանում կոտորեցին մեծ թվով ասորիների: Դրանից հետո զգալի թվով ասորիներ փախել են Իրաք և Անդրկովկաս, գլխավորապես Հայաստան, ապաստան գտնելով այդ երկրներում: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ներքին միգրացիոն գործընթացների հետևանքով, ասորիների մի զգալի մասը տեղափոխվել է քաղաքները՝ Թեհրան, Համադան, Թավրիզ, Աբադան, Բախթարան, Սիվազ և այլն:

Ասորիները Իրանում զբաղվում են հողագործությամբ, հատկապես այգեգործությամբ ու խաղողագործությամբ: Քաղաքներում նրանց մեծ մասը զբաղվում է արհեստներով և առևտրով: Դավանում են նեստորականություն և կաթոլիկություն: Իրանական մեջլիսում ունեն մեկ պատգամավոր: Ասորիները Իրանում ունեն եկեղեցիներ (այդ թվում նաև Թեհրանում), ասորական ակումբ-հավաքատեղիներ, ինչպես նաև հրատարակում են գրականություն:

Սեմական ժողովուրդներից հնուց անտի Իրանում բնակվում են նաև հրեաներ: Իրանում հրեաները նախապես հաստատվել են Համադանում (հնում Էկբաթան) և Դեմավենդի շրջաններում: Ներկայումս նրանք հիմնականում բնակություն են հաստատել խոշոր քաղաքներում՝ Թեհրանում, Սպահանում, Յեզդում, Քերմանում, Մեշհեդում և Շիրազում, որտեղ հրեաներից շատերը արդեն ապրում են իրենց ավանդական թաղամասերից՝ գետտոներից դուրս: Իրանում հրեաները առավելապես զբաղվում են առևտրով և տարբեր արհեստներով:

1948 թվականից սկսած մոտ 45 հազար իրանական հրեաներ մշտական բնակության համար տեղափոխվել են Իսրայել:

Իրանում հրեաները խոսում են պարսկերենի հատուկ խոսվածքով: Նրանք համարյա բոլորը տիրապետում են նաև պարսկերենին: Որոշ հրեա մտավորականներ խոսում և կարդում են իվրիթ լեզվով: ԻԻՀ բնակչության մեջ հրեաները գրագիտությամբ գրավում են առաջին տեղը 100 %: Իրանական մեջլիսում ունեն մեկ պատգամավոր:

Ոչ մահմեդական ազգային կամ կրոնական փոքրամասնությունների մեջ իրենց թվաքանակով առաջին տեղը գրավում են հայերը: 1978 թ. տվյալներով, հայերը կազմում էին երկրի ողջ բնակչության 0,8 %-ը, այսինքն կրկնակի ավել էին Իրանի մյուս կրոնական փոքրամասնություններից՝ ասորիներից, հրեաներից և զրադաշտականներից, որոնք միասին վերցրած կազմում էին բնակչության ընդամենը 0,4 %-ը:

ԻԻՀ բնակչության կազմում կան նաև աննշան թվով վրացիներ (մահմեդականացած), չերքեզներ, ռուսներ, լազեր, աֆղաններ, Հնդկաստանից, Պարսկաստանից և Աֆրիկյան երկրներից եկածներ: Բավականին մեծ թիվ են կազմում նաև գնչուները (լուլի), որոնք վարում են թափառաշրջիկ կյանք:

ԼԵԶՈՒՆԵՐԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի Իսլամական Հանրապետությունը բազմալեզու պետություն է, որի տարածքում տարածված են ոչ միայն հնդեվրոպական ընտանիքին պատկանող իրանական խմբի լեզուները, այլև այլ խմբերի լեզուներ, մասնավորապես թյուրքական ու սեմիթական ընտանիքներին պատկանող լեզուներ: Այդ լեզուների մեջ առանձին տեղ է գրավում պարսկերենը (կամ ֆարսին), որը պատկանում է իրանական լեզվախմբին և հանդիսանում է ԻԻՀ-ն պետական լեզուն: Այն հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական խմբին պատկանող լեզու է:

Պարսից լեզվի հետ համատեղ Իրանի տարածքում տարածված են նաև իրանական խմբի այլ լեզուներ. քրդերենը, բելուջերենը, գիլյաներենը, մազանդարաներենը, թաթերենը, թալիշերենը, լուրերենը, բախթիարերենը, ինչպես նաև նրանց բազմաթիվ բարբառները:

Թյուրքական լեզուներից Իրանում տարածված են ադրբեջաներենը և թուրքմեներենը:

Սեմիթական լեզուները ներկայացված են ժամանակակից սորերենով և արաբերեն լեզվի տարբեր բարբառներով:

Իրանը վերին աստիճանի առատ է տեղական լեզուներով, բարբառներով ու խոսվածքներով, որոնց միջև հնչյունաբանության, բառապաշարի և քերականության բնագավառում կան ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ:

Այդպիսի խայտաբղետ լեզվական պատկերը ձևավորվել է բազմաթիվ գործոնների և առանձնահատուկ պատմա-աշխարհագրական պայմանների ազդեցության ներքո, որը բնորոշ էր Իրանին: Երկիրը բազմիցս ենթարկվել է օտարերկրյա ներխուժումների ու արշավանքների: Դարերի ընթացքում Իրանի վրայով անցնում էին համաշխարհային նշանակություն ունեցող առևտրական ուղիներ, որոնք Եվրոպան կապում էին Առաջավոր Ասիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Հարավ-Արևելյան Ասիայի ու Հեռավոր Արևելքի երկրների հետ: Այդ բոլորը պատճառ էր հանդիսանում երկրի տարածքում ցեղակից ու ոչ ցեղակից ցեղերի ու ժողովուրդների անթիվ ու անհամար գաղթերի, որը պայմաններ էր ստեղծում տարբեր լեզուների տարածման համար: Պարսկերեն լեզվի շփումները իրանական մյուս լեզուների, ինչպես նաև լեզուների այլ խմբերի ու այլ լեզվաընտանիքների հետ նպաստում էր բազմաթիվ բարբառների առաջացմանը:

Դարերով գոյություն ունեցող երկրի ամատական տրոհվածությունը, առանձնահատուկ աշխարհագրական պայմանների հետևանքով բազմաթիվ շրջանների մեկուսացվածությունը, սերտ տնտեսական կապերի բացակայությունը, բազմաթիվ երկպառակչական պատերազմները ուժեղացնում էին լեզվական տրոհվածությունը և նպաստում էին երկրի ողջ տարածքում տեղական լեզուների պահպանմանը:

Պարսկերեն լեզուն տարածված է երկրի ողջ տարածքում. նրանով է կատարվում դասավանդումը դպրոցներում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում, դատավարությունները, վարչական գործավարությունը, պարսկերեն լեզվով են հրատարակվում թերթերն ու ամսագրերը, գիտական ու գեղարվեստական գրականությունը, նրանով են ռադիոն ու հեռուստատեսությունը վարում իրենց հաղորդումները: Այսպիսով Իրանի բնակչության մեծամասնությունը երկլեզվյան է: Պարսկերենը խաղում է դրական դեր երկրի տարբեր շրջանների միջև տնտեսական կապերի զարգացման գործում:

Ֆարսի լեզուն կամ պարսկերենը աշխարհի հնագույն լեզուներից մեկն է: Նրա զարգացման պատմության մեջ առանձնացնում են երեք շրջան. հնագույն (մ.թ.ա. VI-III դարեր), միջին (մ.թ.ա. IV-մ.թ. VII-VIII դարեր և նոր (մ.թ. IX դարերից սկսած):

Հին շրջանը ներկայացված է հին պարսկերեն լեզվով, որը տարածված էր Իրանական բարձրավանդակի հարավ-արևմտյան մասում: Հին պարսկերեն լեզվով պահպանվել են ոչ մեծ քանակությամբ գրավոր հուշարձաններ. դրանք գլխավորապես ժայռերի վրա փորագրված աքեմենյան թագավորների սեպագիր արձանագրություններն են:

Պարսկերեն լեզվի զարգացման միջին շրջանին է պատկանում միջին պարսկերենը կամ պահլավերենը, որը տարածված էր Իրանի Հարավ-Արևմտյան մասում և հանդիսանում էր Մասանյան պետության պաշտոնական լեզուն: VII դարում Իրանը արաբների կողմից նվաճվելուց հետո մոտավորապես երկու հարյուրամյակ երկրի պաշտոնական լեզու էր հանդիսանում արաբերենը, իսկ պարսկերենը որպես տեղացիների լեզու օգտագործվում էր տեղական բնակչության կողմից լոկ որպես միմյանց միջև հաղորդակցման միջոց կամ ընտանեկան շրջանակում:

Հետագայում Արաբական խալիֆաթի իշխանության թուլացման կապակցությամբ, աստիճանաբար տեղի է ունենում պարսկերենի կողմից արաբերենի դուրս մղում և արդեն IX դ. վերջին Իրանի հյուսիս-արևելյան նահանգներում՝ Մավերանահրում, Խորասանում, Բալխում՝ երևան են գալիս առաջին բանաստեղծական ստեղծագործությունները վաղ պարսկերեն լեզվով, որն այն ժամանակ կոչվեց փարսի (կամ ֆարսի), փարսի-յե (ֆարսի-յե) դարի: Պարսկերեն լեզվի գրության հիմքը կազմում էր արամեերեն այբուբենը, իսկ առավել գործածական բառերը պատկերվում էին գաղափարագիրներով՝ արամեերեն լեզվի բառերով, որոնք կարդացվում էին միջին պարսկերենով: Հին պարսկերեն լեզվի համեմատ միջին պարսկերեն լեզուն ենթարկվեց հնչյունաբանական փոփոխությունների, նշանակալիորեն պարզեցվեց նրա ձևաբանական կառուցվածքը և շարահյուսությունը:

Ժամանակակից պարսկերեն լեզվի հիմքում ընկած է վաղ նոր պարսկերեն լեզուն (դարի), որը ձևավորվել է Միջին Ասիայի տարածքում և Իրանի հյուսիս-արևելյան նահանգներում մ.թ. IX-X դարերում:

Ժամանակակից պարսկերենը ունի հարուստ գրավոր ավանդույթ: X-XV դարերի ընթացքում նրանով ստեղծվել է հարուստ գրականություն, գլխավորապես պոեզիա:

Սրդի պարսկերեն լեզուն բառապաշարի բնագավառում կրել է մեծ փոփոխություններ (դասական գրականության հուշարձաններում օգտագործված բազմաթիվ բառեր կամ հնացել են, կամ լրիվ դուրս են եկել օգտագործումից, լեզվի մեջ մտել են մեծ քանակությամբ նոր բառեր, այդ թվում նաև փոխառություններ)։ Փոփոխություններն ընդգրկել են նաև քերականական կառուցվածքն ու հնչյունաբանությունը։

XX դարի սկզբից սկսած Իրանական գրական լեզուն մերձենում է խոսակցական լեզվին, նրա մեջ լայնորեն ներթափանցում են ժողովրդական խոսվածքի բառերն ու դարձվածքները, լեզուն ազատագրվում է ճոռոմաբանություններից ու մանր արարականացված դարձվածքներից։ Դրանով հանդերձ ներկայումս ևս դեռևս պահպանվում են տարբերությունները (գլխավորապես բառա-ոճական) գրավոր և խոսակցական լեզվի միջև։ Գրավոր լեզվում հանդիպում են մեծ թվով բառական ու քերականական հնաբանություններ, օգտագործվում են վերամբարձ ու փքուն դարձվածքներ, որը բնորոշ է գործարար ու անձնական գրագրությանը։

Երկրում լայնորեն տարածված է Թեհրանի բարբառը, որը հանդիսանում է ժամանակակից պարսկերեն գրական լեզվի ձևավորման հիմնական աղբյուրներից մեկը։

Պարսկերենը հարուստ է փոխառված բառապաշարով. բառապաշարի ավելի քան կեսը կազմում են արաբական ծագում ունեցող բառերը։ Նրա մեջ մուտք են գործել նաև թյուրք-մոնղոլական բազմաթիվ բառեր, ինչպես նաև փոխառություններ արևմտաեվրոպական լեզուներից՝ գլխավորապես ֆրանսերենից ու անգլերենից։ Որոշ քանակությամբ բառեր պարսկերենը փոխառել է ռուսերենից, հունարենից, հնդկերենից և այլ լեզուներից։

Վերջին տաս-քսան տարիների ընթացքում պարսկերեն լեզվի մեջ թափանցում են հսկայական քանակությամբ օտարերկրյա (առանձնապես անգլիական) տերմիններ։ Լեզվի մեջ օտարերկրյա բառերի ներթափանցման դեմ եռանդուն կերպով հանդես են գալիս իրանական գիտնականներն ու առհասարակ մտավորականությունը։ Այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվում նաև պետական մակարդակով։ Կառավարական հիմնարկներում հրապարակվում են հատուկ շրջաբերականներ ու հրահանգներ, որոնք սահմանափակում կամ արգելում են գրագրության մեջ օտար բառերի օգտագործումը։

Ինչպես նախկինում, այսօր ևս օրակարգի հրատապ հարց է գիտատեխնիկական տերմինաբանության ստեղծման ու հարստացման խնդիրը: Նոր տերմինների անբավարարությունը զգացվում է գիտելիքների բոլոր բնագավառներում:

Պարսկերենի գրությունը հիմնված է արաբերեն այբուբենի վրա, որից պարսիկները սկսեցին օգտվել մ.թ. VII դարում արաբների կողմից Իրանը նվաճելուց հետո: Արաբերեն 28 տառերին ավելացվեցին 4 պարսկերեն տառեր: Գրության դեպքում տողի ուղղությունը՝ աջից ձախ է, մեծատառերը բացակայում են:

ԻԻՀ-ն տարածքում ապրող ոչ պարսիկ բնակչության մեծամասնությունը տիրապետում է պարսկերեն լեզվին և իր մայրենի լեզվի հետ միաժամանակ օգտագործում է այն: Երկրի տարածքում գոյություն ունեն պարսկերենի բազմաթիվ բարբառներ և խոսվածքներ: Նրանց մեջ իր նշանակությամբ առանձնանում է Թեհրանի բարբառը կամ Թեհրան քաղաքի խոսակցական լեզուն: Այդ բարբառի ազդեցությունը պարսկերենի գրական լեզվի և մյուս բարբառների նկատմամբ գնալով մեծանում է: Այն աստիճանաբար տարածվում է Իրանի ողջ տարածքում, վերածվելով երկրի ընդհանուր գործածական-խոսակցական լեզվի: Այդ լեզվով ռադիոն ու հեռուստատեսությունը ձայնասփռում են իրենց հաղորդումները, կատարվում են թատերական ներկայացումներ և այլն:

ԻԻՀ-ում տարածված իրանական լեզուներից առավել ուսումնասիրված լեզուն (պարսկերենից հետո) պետք է համարել քրդերենը: Այն իրանական մյուս լեզուներից խոսողների թվով գրավում է երկրորդ տեղը: Քրդերեն լեզուն տարածված է Իրանական Քրդստանի և Արևմտյան Ադրբեջանի տարածքում, Խորասանի մի շարք շրջաններում (Քուչան, Բոջնուրդ, Մեշհեդ): Քրդերի որոշ խմբեր են ապրում նաև Բելուջիստանում, Լուրեստանում, Թեհրանի, Շիրազի, Ղազվինի շրջաններում:

Քրդերեն լեզվով (նրա հիմնական բարբառներով) կա հարուստ գեղարվեստական գրականություն ու բանահյուսություն:

Քրդերեն լեզուն ունի բազմաթիվ բարբառներ ու խոսվածքներ, որոնք ընդունված է բաժանել երեք հիմնական խմբերի. հյուսիսային (կուրմանջի), կենտրոնական (սորանի) և հարավային: ԻԻՀ-ում տարածված են քրդերեն լեզվի բոլոր երեք բարբառային տարատեսակները: Կուրմանջին տարածված է Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք (Մակու և Խոյ) ապրող քրդերի շրջանում և Խորասանում: Մուքրի բարբառը, որը պատ-

կանում է տրանի խմբին, տարածում է գտել Մեհաբադի, Բոքանի, Բանեի, Սեքքեզի, Սենենդեջի, Բախթարանի շրջաններում բնակվող քրդերի շրջանում: Հարավային խմբի բարբառները տարածված են Բախթարանի և Սենենդեջի շրջաններում:

Հարկ է նշել, որ քրդերեն լեզվի բարբառային տարատեսակների մեջ նկատվում է մեծ ընդհանրություններ: Միաժամանակ նրանց միջև առկա են զգալի տարբերություններ, որոնք դրսևորվում են հնչյունարանության, բառակազմության ու քերականության մեջ:

ԻԻՀ-ում քրդերեն լեզվի գրության հիմքում ընկած է արաբա-պարսկական այբուբենը:

Բելուջերեն լեզուն (բալուչի) տարածված է գլխավորապես Իրանի հարավ-արևելքում՝ Բելուջիստանում և Սիստանում, հանդիպում է նաև Քերմանում ու Խորասանում: Այդ լեզուն բաժանվում է բարբառների երկու խմբի. արևելյան (կամ հյուսիս-արևելյան) և արևմտյան (կամ հարավ-արևմտյան): Իրանում տարածված են հիմնականում արևմտյան խմբի բարբառները:

Բելուջերեն լեզվի բառամթերքի հիմնական մասը կազմում են իրանական ծագում ունեցող բառերը: Փոխառությունների մեջ կան շատ պարսկերեն բառեր, ինչպես նաև արաբերեն բառեր ու հնդկական ծագում ունեցող բառեր (սինդհի, բրահուի և այլ լեզուներից):

Բելուջերեն լեզուն որպես գրություն օգտագործում է արաբա-պարսկական այբուբենը:

Կասպից ծովի ափերի երկայնքով ապրող ժողովուրդների մեծ մասի համար (Գիլյան և Մազանդարան նահանգներ) մայրենի լեզու է հանդիսանում գիլյաներեն ու մազանդարաներեն լեզուները: Երկու լեզուներն էլ մոտ են իրար, գրություն չունեն ու թույլ են ուսումնասիրված: Այդ լեզուներով կան բանահյուսական ստեղծագործություններ, ժողովրդական երգեր ու հեքիաթներ: Երկու լեզուներն էլ ունեն պարսկերենի հետ շատ ընդհանուր բառեր և գտնվում են պարսկերենի ուժեղ ազդեցության տակ:

Կասպից ծովի հարավային ու հարավ-արևմտյան ափին տարածված են թաթերեն ու թալիշերեն լեզուները (Գիլյան, Արևելյան Ադրբեջան օստաններում): Այդ երկու լեզուներն էլ գրություն չունեն: Քերականական և բառակազմական կառուցվածքով և հատկապես բառամթերքով թաթերեն լեզուն մոտ է պարսկերենին: Թալիշերենը պատկանում է լե-

զուների իրանական խմբի հյուսիս-արևմտյան ճյուղին և քերականական կառուցվածքով շատ ընդհանրություններ ունի գիլյաներեն լեզվի հետ:

Իրանի արևմուտքում և հարավ-արևմուտքում իրանա-իրաքյան սահմանի երկայնքով (գլխավորապես Լուրեստան, Բախթիարի, Չհարմահալ և Խուզիստան օստաններում) տարածված են լուրերեն ու բախթիարերեն բարբառները: Դրանք ևս գրավոր ներկայացված չեն և հանդիսանում են Լուրեստանի ու Բախթիարիի քոչվոր ու կիսաքոչվոր բնակչության շրջանում հաղորդակցման միջոց: Լուրական բարբառները տարածված են նաև ֆարս օստանի արևմտյան մասում բնակվող ցեղերի՝ բուհգիլյե, մամասանի և ֆեյլի ցեղերի շրջանում: Սակայն են բախթիարական բարբառների հետևյալ խմբերը. չհարլյանգ, հաֆթլյանգ: Ե՛վ լուրական և՛ բախթիարական բարբառային խմբերը մոտ են պարսկերեն լեզվին: Այդ բարբառներն ունեն հարուստ երգային բանահյուսություն: Բախթիարական բարբառներով գոյություն ունեն միջնադարյան ձեռագրեր, մասնավորապես միջնադարյան սուֆիական բանաստեղծ Բաբա Թահեր Ուրիանիի բանաստեղծությունները:

ԻԻՀ-ն արևելյան և հարավ-արևելյան շրջաններում (Խորասան, Սիստան) բնակվում են աֆղանական ցեղեր (փուշտուններ), որոնք օգտվում են իրենց մայրենի փուշտու լեզվից, որը հանդիսանում է Աֆղանստանի պետական լեզուներից մեկը: Իսկ Խորասանի հյուսիս-արևելքում և արևելքում հանդիպում են թաջիկերեն լեզվի բարբառներ:

ԻԻՀ-ն տարածքում վերևում նշված ինքնուրույն լեզուներից և նրանց բարբառներից բացի գոյություն ունեն մեծ քանակությամբ մանր իրանական լեզուներ ու բարբառներ: Նրանք դասակարգվում են ոչ այնքան լեզվաբանական, որքան աշխարհագրական հատկանիշներով:

Պարսկերեն լեզվից հետո ԻԻՀ-ն բնակչության մեջ իր աշխարհագրական տարածման մասշտաբներով և խոսողների թվով երկրորդ տեղն է գրավում թյուրքերեն լեզուն: Այդ լեզուն, սկսած XI դարից, տարածում գտավ գլխավորապես երկրի հյուսիս-արևմտյան շրջաններում, Ատրպատականում (ներկայումս Արևելյան, Արևմտյան Ադրբեջան և Արդաբիլի օստաններ): Թյուրքերեն լեզվով խոսողներ են բնակվում նաև Խորասանում, երկրի կենտրոնական ու հարավային շրջաններում՝ Թեհրանում, Ղազվինում, Համադանում, Սավեում, Արաքում և այլն: Ազերի լեզվի բարբառներով խոսում են Իրանի մի շարք քոչվոր ցեղերը՝ ղաշղայիները (Ֆարս), աֆշարները (Խորասան) և այլն:

Իրանի ազերի լեզուն, ի տարբերություն Ադրբեջանի Հանրապետության գրական լեզվի, ձևավորվել է հարավային բարբառների հիմքի վրա և պարունակում է մեծ քանակությամբ արաբա-պարսկական փոխառություններ: Սակայն դրանով հանդերձ, այդ երկու խոսվածքները շատ մոտ են իրար և ԻԻՀ ու Ադրբեջանի հանրապետության ազերիները առանց դժվարության հասկանում են միմյանց: Իրանի ազերիները օգտագործում են արաբա-պարսկական այբուբենը:

Իրանում ազերի լեզվով տպագրվել է մեծ քանակությամբ գեղարվեստական և հրապարակախոսական ստեղծագործություններ: Թավրիզում և Թեհրանում ազերի լեզվով ձայնասփռվում են ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ:

Խորասանի հյուսիս-արևելյան մասում, Գորգան քաղաքի շրջանում և թուրքմենական տափաստանում, Թուրքմենա-Խորասանյան լեռնաշղթայի նախալեռներում ու հովիտներում տարածված է թուրքմեներեն լեզուն, որը պատկանում է թյուրքական լեզվաընտանիքին: Թուրքմեներեն լեզուն ենթարկվել է պարսկերեն լեզվի ուժեղ ազդեցությանը և պարունակում է զգալի քանակությամբ արաբա-պարսկական փոխառություններ: Արաբա-պարսկական այբուբենով հրատարակվել են թուրքմենական ոտանավորներ ու ու երգեր և բանահյուսական նյութեր: Այդ լեզվի կատարելագործման ու զարգացման հնարավորությունները խիստ սահմանափակ են, քանի որ այն հիմնականում ծառայում է որպես շփման միջոց ընտանիքներում և կենցաղում:

Իրանի տարածքում բնակվող մյուս թյուրքալեզու ժողովուրդներից ու ցեղերից պետք է հիշատակել Ֆարսի և Լուրեստանի արևմտյան շրջանների քոչվոր և կիսաքոչվոր դաշդաշի ցեղին, Հյուսիսային Խորասանում աֆշարներին, Արևելյան Ադրբեջանում շահսևեններին, Մազանդարանի հյուսիսային շրջաններում և Գորգան քաղաքի շրջակայքում՝ դաքարներին, երկրի հյուսիս-արևմտյան շրջաններում դարադաղցիներին, Ուրմիա լճի հարավային ափում կարապապահներին: այդ բոլոր ցեղերը օգտվում են թյուրքերեն լեզվին մոտ թյուրքական տարբեր բարբառներից:

Ուրմիա քաղաքի շրջանում տարածված է ասորերեն լեզուն, որը վերաբերում է սեմիթական լեզվախմբին: Այդ լեզվից օգտվող ասորիներ են ապրում նաև Թեհրանում, Թավրիզում, Աբադանում և Իրանի մի շարք այլ քաղաքներում:

Իրանի ասորի բնակչությունը օգտվում է ժամանակակից ասորերենից, որը պատկանում է սեմիթական լեզվաընտանիքին: Գոյություն ունեն ասորական մի քանի բարբառներ, սակայն նրանք այնքան մոտ են իրար, որ նրանց կրողները առանց որևէ դժվարության հասկանում են միմյանց: Իրանի ասորիների բառապաշարի մեջ թափանցել են որոշ քանակությամբ բառեր պարսկերեն և ադրբեջաներեն լեզուներից, իսկ առանձին բարբառներում՝ նաև քրդերենից:

Ասորիներն օգտվում են իրենց սեփական գրությունից, որը ստեղծվել է մ.թ. I դարի սկզբում և ունի երեք այբուբեն. էսթրանգելո, նեստորական և սերթո: Գրում են աջից ձախ: Ժամանակակից ասորերեն լեզվի հիմքում ընկած է նեստորական գրությունը: Ամենահին այբուբենը՝ էստրանգելոն, օգտագործվում է միայն վերնագրերում, տիտղոսաթերթերում, իսկ երբեմն նաև գլխատառեր գրելիս: Սերթո այբուբենը օգտագործվում է հակորիկյան ճյուղի քրիստոնեական կրոնը դավանող ասորիների կողմից, որոնք գլխավորապես բնակվում են Ուրմիա լճի շրջանում:

Լեզուների սեմիթական ընտանիքը Իրանում ներկայացված է նաև մի քանի քիչ ուսումնասիրված արաբական բարբառներով, որոնք տարածված են գլխավորապես Ֆարսի և Խուզիստանի քոչվոր ու կիսաքոչվոր ցեղերի շրջանում:

Առանձին արաբական բարբառներ հանդիպում են Պարսից ծոցի ափի երկայնքով ընկած շրջաններում և մասամբ Խորասանում:

Իրանի հայերը խոսում են հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղ հանդիսացող հայերեն լեզվով: Նրանք խոսում են արևելահայերենով և նրա մի շարք բարբառներով: Հայերի խոսվածքի մեջ ներթափանցել են բազմաթիվ պարսկերեն բառեր: Իրանում հայերեն լեզվով հրատարակվում են թերթեր, ամսագրեր, գրականություն: Իրանի ռադիոն հայերեն լեզվով ձայնասփռում է հաղորդումներ:

Իրանի կյանքում ոչ պակաս կարևոր դեր են խաղում նաև արևմտաևրոպական լեզուները: XIX դ. վերջին և XX դ. սկզբին լայն տարածում գտավ ֆրանսերենը, որից լայնորեն օգտվում էին բնակչության կրթված խավերը: Թեհրանում և մի շարք այլ քաղաքներում գործում էին ֆրանսիական դպրոցներ: Ունևոր ընտանիքների զավակները միջնակարգ և բարձրագույն կրթություն ստանալու համար հիմնականում ուղարկվում էին Ֆրանսիա: Ֆրանսերեն լեզվի ներթափանցումը երկրի կյանքի

բոլոր բնագավառները շարունակվեց ընդհուպ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբը: Դրանից հետո երկրում սկսեց արմատավորվել անգլերենը: 50-60-ական թվականներին բացվեցին անգլիական դպրոցներ, մի շարք բարձրագույն ու միջնակարգ ուսումնական հաստատություններում դասավանդումը կատարվում էր անգլերեն լեզվով, ռադիոյով ու հեռուստատեսությամբ անգլերեն լեզվով ձայնափոխում էին հաղորդումներ: Ներկայումս Իրանի բարձրագույն ուսումնական հաստատություններում արաբերենի հետ համատեղ ուսուցվում են նաև արևմտաևրոպական լեզուներ՝ ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն:

Ըստ ԻԻՀ սահմանադրության, պարսկերեն լեզուն հանդիսանում է երկրի գլխավոր լեզուն (կամ պետական լեզուն): Իր նշանակությամբ երկրորդ տեղում է գտնվում արաբերենը, որպես Ղուրանի լեզու, երրորդ տեղում՝ ազգային և կրոնական փոքրամասնությունների լեզուները (սահմանադ., 2-րդ բաժին, էջ 15,16):

ԿՐՈՆՆԵՐԸ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԻՍԼԱՄԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Իրանի բնակչության բացարձակ մեծամասնությունը դավանում է մահմեդականությունը կամ Իսլամը: Այդ կրոնի տարածման սկիզբը Իրանում վերաբերում է VII դարին, Խալիֆ Օմարի (634-644) կառավարման շրջանին, երբ Սասանյանների պետության տարածքի մեծ մասը նվաճվեց արաբ մահմեդականների կողմից:

Մինչև XVI դարը Իրանում դավանում էին սուննիթական ուղղադավան իսլամը: Սակայն Սեֆևյան պետության (1501-1736) հիմնադիր շահ Իսմայիլ I-ը (1501-1524) Իրանի պետական կրոն հռչակեց «12 իմամների» վերաբերյալ շիիթական ուսմունքը: Նա եռանդուն միջոցներ ձեռնարկեց, որպեսզի ստիպի պետության բոլոր հպատակներին ընդունելու այդ նոր ուսմունքը, որը հայտնի է շիիզմ կամ շիիթականություն անունով: Արդեն XVII դարի երկրորդ կեսին երկրի բնակչության մեծագույն մասը դավանում էր շիիզմը:

Այդ ուսմունքն ունի արաբական և ոչ թե իրանական ծագում: Այն ծնունդ է առել գահաժառանգության հարցի կապակցությամբ արաբների

շրջանում գոյություն ունեցող քաղաքական տարաձայնությունների հետևանքով: Շիիթների և սուննիթների միջև հիմնական տարաձայնությունը կայանում է նրանում, որ ի հակակշիռ սուննիթների, որոնք չեն ընդունում Խալիֆաթի ժառանգականության սկզբունքը և Մուհամմեդի օրինական ժառանգորդներ են համարում երեք խալիֆների (Աբու-Բեքր, Օմար և Օսման), որոնք սերված չեն մարգարեից (Մուհամմեդից), շիիթները հանդես են գալիս որպես Խալիֆաթի ժառանգականության սկզբունքի կողմնակիցներ և մարգարեի օրինական ժառանգորդ են համարում նրա ազգական ու փեսա Ալիին, ինչպես նաև մյուս որդիներին ու ժառանգներին: Այսպիսով շիիզմի բազան քաղաքականության մեջ հանդիսանում է լեգիտիմիզմը: Շիիզմը հանդես էր գալիս որպես ընդդիմադիր մի ուսմունք, որը բողոքում է անօրինական խալիֆների դեմ և գտնում է, որ Ալին հանիրավի կերպով հեռացվել էր խալիֆաթից, մինչդեռ նա Մուհամմեդ մարգարեի միակ օրինական ժառանգորդն է: Շիաները վկայակոչում են Ղուրանի հադիսներից մեկը, որտեղ ասվում է, որ մարգարեն իր բազմաթիվ հետևորդների ներկայությամբ պաշտոնապես Ալիին ճանաչել է որպես իր ժառանգորդ: Շիիթների աչքում Ալին և նրա 12 ուղղակի ժառանգորդները իսկական խալիֆներ են կամ ավելի ճիշտ իմամներ: Ալիի ժառանգորդների ուղիղ գիծը ընդհատվում է 12-րդ իմամ Մահդիով, որը ոչ թե մահացել է, այլ 887 թ. անհետացել և սպասում է իր ժամին, որ վերադառնա և երկրի վրա հաստատի արդարություն: Այսպիսով շիիզմի հիմքում ընկած է նաև մեսիականության սկզբունքը:

VIII դարում շիիզմը լայնորեն տարածվեց Իրանում որպես պայքարի խորհրդանիշ ոչ միայն այն ժամանակ կառավարող Օմայանների դինաստիայի, այլև ամբողջությամբ վերցրած արաբ զավթիչների դեմ:

Շիիզմի, ինչպես և սուննիզմի եզակետային դրման միասնական աստծո՝ Ալլահի գոյության և նրա մարգարե Մուհամմեդի ճանաչումն է: Շիաների կարծիքով, մարգարեի տեղապահը, որն իր մահից հետո կոչված է կառավարելու մահմեդական համայնքը, չի կարող ընտրվել մարդկանց կողմից (ինչպես ենթադրում են սուննիները), այլ կարող է մատնանշվել միայն Ալլահի պատվիրանով՝ այն էլ Մուհամմեդ մարգարեի միջոցով: Շիիթական վարկածի համաձայն, Մուհամմեդն իրեն ժառանգորդ է համարել հենց Ալիին: Շիա-իմամականները մեծ հար-

գանք ունեն նաև Մուհամեդի աղջկա՝ Ֆաթիմայի նկատմամբ, որը Ալիի կինն էր: Բացի 12 իմամներից, շիաները «14 ճշմարտացիներին» թվին են դասում նաև Մուհամեդին և Ֆաթիմային:

Շիիթների մոտ առանձնապես մեծ հարգանք է վայելում երրորդ իմամը՝ Հուսեյինը (Ալիի որդին), որը մարտիրոսական մահով մահացել է Քյարբալայի մոտ սուննիթների դեմ մղված ճակատամարտում: Հուսեյինի ծննդյան օրը Իրանում նշվում է որպես մեծ տոն, իսկ մահվան օրը՝ տասը օր շարունակ տեղի են ունենում սգո հանդիսություններ (աշուրայի օրեր):

Շիիթներն իրենց առանձնահատուկ վերաբերմունքն ունեն նաև Ղուրանի նկատմամբ, գտնելով, որ նրանում պարունակվում է այլաբանական իմաստ:

Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրության 12-րդ հոդվածը իսլամի շիիթական ուղղությունը (շի՛է-յե ասնաաշարի) հռչակում է պետության պաշտոնական կրոն: Սակայն մահմեդականության մյուս ուղղությունները ևս (սուննիզմը և նրա առանձին ճյուղերը) ճանաչվում են որպես օրինական, թեև պետք է նշել, որ պատմականորեն շիաների և սուննիների միջև ինչպես Իրանում, այնպես էլ տարածաշրջանի մյուս երկրներում, եղել են սուր հակասություններ:

Ներկայումս ԻԻՀ-ն բնակչության 91 %-ը հանդիսանում է շիիթական ուսմունքի հետևորդներ: Պարսիկների (Ֆարսերի), ազերիների, գիլյանցիների, մազանդարանցիների, բախթիարների, արաբների, ղաշղայիների, թաթերի մեծ մասը, իրանական քրդերի մոտ կեսը դավանում են շիիթականություն: Բացի այսպես կոչված «ուղղափառ շիիթականությունից», Իրանում լայն տարածում ունի նաև ծայրահեղ շիիթական աղանդի մի ուսմունք, որի հետևորդներին անվանում են «Ալի իլլահիներ» կամ «ճշմարտության մարդիկ» («Ալիի հաղթ»):

Այդ աղանդի հետևորդներն են հանդիսանում Իրանական Քրդստանի կենտրոնական և հարավային շրջանների բնակչության նշանակալի մասը, Լուրեսթանի, Ֆարսի, Ադրբեջանի և մի շարք այլ վայրերի բնակիչների մի մասը:

Երկրի բնակչության մի մասն էլ հանդիսանում է շիիզմի աղանդներից մեկի՝ շեյխիդների աղանդի հետևորդ (Քերման, Ասորաստական և այլն):

ԻԻՀ-ում մի քանի հազար մարդ համարվում են իսմայիլիզմի հետևորդներ (Սպահանում, Թեհրանում, Մեշհեդում, Ղազվինում): Իսմայի-

լիզմը շիիթականության ուղղություններից մեկն է: Համաձայն այդ ուսմունքի, իմամների ազգակցական գիծը ավարտվում է յոթերորդ իմամ Իսմայիլով (12 իմամների վերաբերյալ ուսմունքի համաձայն Իսմայիլը իմամ չէր): Ջաֆար Սադեղ (մահացել է 765 թ.) վեցերորդ իմամը իր ավագ որդուն՝ Իսմայիլին (մահացել է 760 թ.) զրկել էր իմամի աստիճանը ժառանգելու իրավունքից և այդ իրավունքը շնորհել էր իր կրտսեր որդուն՝ Մուսա-ալ-Քազեմին (մահացել է 799 թ.): Իսմայիլի կողմնակիցները չեն ճանաչել այդ քայլի օրինականությունը: Այստեղից էլ հիշյալ ուսմունքի անվանումը՝ Իսմայիլիզմ: Այդ ուսմունքը, որն իր մեջ կուտակել է Իրանի մինչիսլամական հավատալիքներից բազմաթիվ տարրեր, դարերի ընթացքում անցել է զարգացման մեծ ուղի:

Ստույգ տվյալներ գոյություն չունեն Իրանում բեհայիզմի հետևորդների թվի մասին (սկզբնապես այն եղել է շիիթական դավանանքի աղանդներից մեկը): Դեռևս 1955 թ. «Ժողքաթիե» կրոնական կազմակերպության և մի քանի շիիթական հեղինակությունների պահանջով իրանական կառավարությունը արգելել էր այդ աղանդի գործունեությունը: ԻԻՀ-ը ևս բեհայիզմը չի ճանաչում որպես կրոն, այլ համարում է հերձված և արգելում է նրա գործունեությունը:

Իրանի բնակչության մոտ 7,8 %-ը դավանում է սուննիզմը: Շաֆիիթական ուղղության սուննիթներ են հանդիսանում ԻԻՀ քրդերի համարյա կեսը: Սուննիզմի հանիֆիական ճյուղի հետևորդներ են հանդիսանում բելուջները (Բելուջիստան և Միսթան), Պարսից ծոցի առափնյա շրջանների արաբների մի մասը, թուրքմենները:

Անցյալում ինչպես շիիզմի, այնպես էլ սուննիզմի հետևորդների շրջանում մեծ տարածում են ունեցել տարբեր սուֆիական միաբանությունները: Իսլամի մեջ միստիկա-ճգնավորական այդ ուղղությունը՝ սուֆիզմը Իրանում տարածվել է XI դարում: Սկզբնական շրջանում այն դիտվում էր որպես մաքուր իրանական հոգևոր իդեալների վերածնունդ՝ Իրանում արաբների քաղաքական և կրոնական տիրապետությունից հետո:

Մեր օրերում ևս սուֆիական միաբանությունները մասնակիորեն պահպանում են իրենց նշանակությունը երկրի որոշ, հիմնականում գյուղական վայրերում: Այսօր էլ Իրանի տարբեր վայրերում կարելի է հանդիպել սուֆիզմի հետևորդ թափառող դերվիշների, որոնք ունեն իրենց հավաքատեղիները և կատարում են ծիսակատարություններ:

Շիա-իմամիթների համար Մեքքայի ու Մեդինայի (Սաուդյան Արաբիա) հետ միաժամանակ սրբազան վայրեր (հետևաբար նաև ուխտագնացության վայրեր) են հանդիսանում Քարբալան, Նաջաֆը և Քազեմեյնը (Իրաք): Իրանում շիաների համար գլխավոր սրբավայր է հանդիսանում Մեշհեդ քաղաքը, որտեղ գտնվում է ութերորդ իմամ Ալի-ար-Ռեզայի (մահացել է 817 թ.) դամբարանը: Այդ դամբարանն են այցելում ուխտավորներ ոչ միայն Իրանից, այլև Միջին Արևելքի հարևան երկրներից, Հնդկաստանից և այլն: Դեպի Մեշհեդ ուխտագնացության գնացածների ազգանվանը ավելանում է «Մեշհեդի» պատվավոր տիտղոսը, որի կրողների նկատմամբ շիաների մոտ գոյություն ունի մեծ հարգանք:

Իրանում կարևոր շիիթական սրբավայր է նաև Ղում քաղաքում իմամ Ռեզայի քրոջ՝ Ֆաթիմայի (մահացել է 816 թ.) դամբարանը:

Հավատացյալները ուխտագնացություն են կատարում նաև այն դամբարանները, որտեղ, ըստ ավանդության, թաղված են շիիթական իմամների ժառանգորդները: Այդ վայրերը սովորաբար կոչվում են «իմամզադե»: Դրանցից կարելի է հիշատակել Շահ Աբդոլ-Ազիմը Ռեյում (այժմ միացել է Թեհրան քաղաքին), Շահ Չերաղը՝ Շիրազում, Ամոլի, Ռեշտի, Լահիջանի, Սպահանի, Շիմրանի և այլ վայրերի իմամզադեները:

Իրանում շիիթական հոգևորականության (ռուհանիյաթ) կարևորագույն առանձնահատկությունը հնուց անտի հանդիսացել է այն, որ նա ունեցել է և ներկայումս էլ ունի պետական իշխանությունից անկախ ինքնավար կազմակերպչական կառույցի բնույթ: Բացի այդ, Իրանում շիիթական հոգևորականությունը զանգվածների նկատմամբ միշտ էլ ունեցել է չափազանց մեծ ազդեցություն: Համարյա մշտապես շահական իշխանության և շիիթական հոգևորականության միջև առկա են եղել սուր հակասություններ, որոնց հանգուցալուծումը հաճախ հանգեցրել է զանգվածային անկարգությունների և նույնիսկ ապստամբությունների: Շիա Հոգևորականության դիրքերը թուլացնելու նպատակով Ռզա շահ Փեհլևին, իսկ հետագայում նրան փոխարինած որդին՝ Մուհամմեդ Ռզա շահը աշխատել են հենվել Իրանի նախաիսլամական շրջանի ավանդույթների վրա:

Ներկայումս, ըստ որոշ տվյալների, ԻԻՀ-ում կուլտի սպասավորների թիվը հասնում է 200 հազարի: Շիիթական հոգևորականության մեծ մասը ծխական մոլլաներ են (ախունդներ), որոնք ստանում են աշխատավարձ և ապրում են ծխականների նվիրատվություններով:

Իրանում շիիթական հոգևորականության կենտրոնը Ղում քաղաքն է, որտեղ գործում է բարձրագույն կրոնական դպրոց: Ինչպես բուն հոգևորականության, այնպես էլ նրա կողմից վերահսկվող ուսումնական և այլ կարգի հիմնարկությունների գոյության հիմնական աղբյուր է հանդիսացել և ներկայումս էլ հանդիսանում է վակուֆներից (մզկիթապատկան կալվածքներ) և կրոնական հարկերի ու տուրքերի համակարգից ստացվող եկամուտները:

Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրությունը օրինականացրել է մզկիթների ներգրավումը պետական-քաղաքական համակարգի մեջ: Գործնականում տեղի է ունեցել բոլոր կրոնական հիմնարկությունների պետականացում: Իսկ «Վելայաթ-ե Ֆաքիհի» սկզբունքի իրականացումը, ըստ որի Իրանում գերագույն իշխանությունը դարձավ հանրահայտ շիիթական օրենսդիրների (Ֆաքիհների) առանձնաշնորհը, շիիթական խոշոր հոգևորականության համար ապահովեց գերիշխանություն նաև քաղաքականության մեջ:

Շիիթների մոտ և առհասարակ ամբողջությամբ վերցրած իսլամի մեջ խստիվ կրոնական նպիրապետություն կամ աստիճանակարգ գոյություն չունի, թեև մուշտահիդները, որոնք XX դ. սկզբին երկրում հաշվվում էին մի քանի տասնյակ, կազմում էին մի հոգևոր ժողով՝ շիիթական հոգևորականության փաստացի վերնախավը: Ի դեպ, իրանական մուշտահիդների հետ անբաժան ու սերտ կապի մեջ էին գտնվում շիիթական խոշոր հեղինակությունները, որոնց մշտական տրբավայրերն էին Քարբալան, Նաջաֆը և Քազեմեյնը: Նրանց հաջորդում էին իշխանություններին մոտ կանգնած կրոնական դատարանների դեկավարները, խոշոր քաղաքներում ուրբաթօրյա մզկիթների դեկավարները, վակուֆային կալվածքների կառավարիչները, մեդրեսեների հոգաբարձուները (շեյխ ալ-իսլամները, իմամ ջոմեները, մութավալլիները, մուդարրեսները):

Ներկայումս շարքային հոգևորականը, դա որպես կանոն, ախունդն է կամ մոլլան: Բարձրաստիճան ախունդը կոչվում է **հոջաթ ալ-էսլամ** (լրիվ՝ **հոջաթ ալ-էսլամ վա-լ-մուսլեմին**): Իրենց դիրքով ավելի բարձր հոգևորականները կոչվում են մուշտահիդներ, թեև 1978-1979 թթ. հեղափոխությունից հետո այդ կոչումը դարձավ քիչ գործածական: Նրա փոխարեն օգտագործվում է **այաթոլլա** տերմինը:Առավել հեղինակավոր այաթոլլաներին այժմ անվանում են նաև **մարջա օթ-թաղլիդ**, նաև **այաթոլլա ալ-ուզմա** (մեծ այաթոլլա): Մարջա օթ-թաղլիդ մուշտահիդ-

ները սովորաբար շատքային այաթոլլաներից տարբերվում են նրանով, որ ունենում են սեփական գրասենյակ, որը զբաղվում է ֆինանսական հարցերով, գրագրությամբ և այլ գործերով:

ԻԻՀ-ում խոշոր կրոնական հեղինակությունները՝ այաթոլլաները և այլն հաճախ ելույթներ են ունենում ռադիոյով և հեռուստատեսությամբ, ինչպես նաև ուրբաթօրյա հասարակական աղոթքների ժամանակ, որոնց մասնակցում են հազարավոր մարդիկ և որոնք ձայնասփռվում են ռադիոյով ու հեռուստատեսությամբ:

Բոլոր մահմեդականների հիմնական կրոնական գիրքը Ղուրանն է: Շիաների սրբազան ավանդությունները (ախբարները) միայն առանձին դեպքերում են տարբերվում սուննիթական ավանդություններից (հադիս):

Շիիթների կրոնական տոների մեծամասնությունը վերաբերում է համապետական տոների թվին: Սակայն կան նաև այնպիսիները, որոնք տոնվում են միայն շիաների կողմից:

Իրանական շիաների հիմնական կրոնական տոները հետևյալներն են. ռաբի ալ-ավվալի 17-ը՝ Մուհամմեդ մարգարեի ծննդյան օրը. ռաջաբի 27-ը՝ մաբ՛աս՝ Մուհամմեդի հանդես գալու օրը իր մարգարեական առաքելությամբ. Շաբանի 13-ը՝ իմամ Ալիի ծննդյան օրը. շաբանի 3-ը՝ իմամ Հուսեյինի ծննդյան օրը. շաբանի 15-ը՝ 12-րդ իմամ Մահդիի ծննդյան օրը. շավվալի 1-ը՝ ֆիթր տոնը, զոհաբերության օր հոգուտ ընչազուրկների. զու-լ-քաադայի 11-ը՝ իմամ Ռեզայի ծննդյան օրը. զու-լ-հիջջայի 10-ը՝ զոհ մատուցելու տոնը (պարսկերեն՝ էյդե զոր-բան.) զու-լ-հիջջայի 18-ը՝ Ղադիրքում տոնը, ի նշանավորումն այն օրվա, երբ նույն անունով վայրում, ըստ ավանդության, Մուհամմեդը իր ժառանգորդ անվանեց Ալի իբն Աբու Թալիբին:

Շիիթների համար սգո օրերը ունեն առանձնահատուկ նշանակություն: Նրանց համար ամենակարևոր սգո օրերն են «աշուրայի» օրերը. դրանք շիա նահատակների և առաջին հերթին իմամ Հուսեյինի հիշատակի օրերն են: Մուհարրամի առաջին օրերից բոլոր բնակավայրերում ստեղծվում են այսպես կոչված «աշուրախանաներ». դրանք սև խոշոր վրաններ են, որոնց ներսում դրվում են դատարկ դագաղներ: այդ վրաններում երեկոները խմբերգային ձևով երգում են սգո երգեր («մարսիյե») ի հիշատակ Հուսեյինի և շիիթական նահատակների: Մուհարրամի իններորդ երեկոյան («թասուա») ամեն մի թաղամասի ներկա-

յացուցիչները (որպես կանոն երիտասարդներն ու պատանիները) առանձին շարքերով սկսում են քայլարշավ քաղաքի փողոցներով, շղթաներով հարվածելով իրենց կրծքին ու թիկունքին և խմբովին կրկնելով հետևյալ բառերը. «Շահ Հուսեյին, վայ Հուսեյին»: Նախկինում այդ քայլարշավների ժամանակ հավատացյալները դաշույններով, սրերով և այլ իրերով իրենց հարվածներ էին հասցնում: Սակայն ներկայումս, որպես կանոն, քայլարշավին մասնակից սև վերնաշապիկներ հագած տղամարդիկ ներդաշնակ շարժումներով իրենց հարվածում են այդ նպատակի համար հատուկ պատրաստված ալյումինե թեթև շղթաներով:

Մուհարրամի տասներորդ օրը բոլոր շարասյունները դրոշներով և թմբուկների հարվածների ուղեկցությամբ աշուրախանեներից շարժվում են դեպի քաղաքի կենտրոնը: Այդ օրը հատուկ թատերախումբը հավատացյալների առջև ներկայացնում է կրոնական դրամա շիաների կոտորածի, իմամ Հուսեյինի և նրա մանկահասակ երեխաների սպանության մասին: Այդ թատերականացված միստերիաների (թազիյե») տեքստերը կազմվել են Սեֆյանների շրջանում:

«Աշուրայի» օրերից բացի, սգո օրեր են հանդիսանում նաև սաֆարի 20-ը՝ իմամ Հուսեյինի սպանության քառասունքը. սաֆարի 28-ը՝ Մուհամմեդ մարգարեի մահվան և իմամ Հասանի սպանության օրը. ռամազանի (ռամադանի) 19-ը՝ իմամ Ալիի վիրավորվելու օրը. և ռամադանի 21-ը՝ նրա մահվան օրը և վերջապես շավալի 1-ը՝ իմամ Ջաֆար աս-Սադեղի մահվան օրը:

Կրոնական տոների և սգո օրերին բազմաթիվ մասնավոր ու պետական հիմնարկություններ փակվում են: «Աշուրայի» օրերին ռադիոն և հեռուստառեսությունը ձայնասփռում է հատուկ ծրագրերով:

Հարկ է նշել, որ Իրանի Իսլամական Հանրապետության ողջ քաղաքականությունը խարսխված է կրոնական սկզբունքների վրա: Կառավարությունը իսլամի շիիթական ուղղությունը դիտում է որպես պաշտոնական գաղափարախոսություն:

Այսպիսով Իսլամը ժամանակակից Իրանում հանդիսանում է ակտիվ քաղաքական գործոն: Միաժամանակ իսլամական արժեքները հաճախ կազմում են ազգային մշակութային ժառանգության բաղկացուցիչ մասը: Իսլամական կոնցեպցիայի կողմից պատմական պրոցեսը դիտվում է որպես «մարդու վերադարձ Ալլահին»: Այսինքն մարդկության ուղին՝ դա դեպի Ալլահը գնացող ուղին է («սաբիլուլլահ»): Օժտված լինելով բա-

նականությամբ, մարդիկ կարող են ընտրություն կատարել բարու և չարի միջև, այսինքն միանալ «Ալլահի կուսակցությանը» («հիզբուլլա») կամ սատանայի կուսակցությանը («հիզբուշշայթան»):

ԻԻՀ-ում բարձր հոգևորականությունը հետևողական աշխատանք է տանում «ճշմարտական իսլամի մաքրությանը» վերադառնալու համար: Ըստ այնմ, կազմակերպվում են զանազան հանդիսություններ ու տոնախմբություններ, որոնց նպատակն է զանգվածներին ներկայացնել Մուհամմեդ մարգարեի կերպարը որպես իդեալական մարդու, սրբության ու բարոյական մաքրության տիպարի:

Մուհամմեդ մարգարեն վկայակոչվում է նաև իշխանության գաղափարը հիմնավորելու համար: Այն ձևակերպվում է հետևյալ կերպ. ալլահը միասնական ու եզակի է, հետևաբար իշխանությունը ևս միասնական է և չի կարող տրոհվել: Իշխանության բոլոր տեսակներն ու ֆունկցիաները պետք է կենտրոնացված լինեն միասնական ձեռքերում: Այդ գաղափարը հաստատելու համար վկայակոչվում է ոչ միայն Ղուրանը, այլև սուննան՝ Մուհամմեդի ասույթները:

Հատկանշական է, որ ԻԻՀ-ում հաճախ աշխարհիկ-լաիցիստական մտածելակերպ ունեցող իրանական ազգայնականները ևս դիմում են իսլամին որպես ազգային արժեքների աղբյուրներից մեկի:

ԻԻՀ-ն հասարակական կյանքում մեծ դեր են խաղում այսպես կոչված «ժողովրդական իսլամի» ներկայացուցիչները (շեյխերը, սուֆիական միաբանությունների, մահդիստական համայնքների ղեկավարները, սրբավայրերի պահապանները, թափառող դերվիշները և այլն), որոնք ավանդաբար կապված են ոչ միայն գյուղի, այլև քաղաքային բնակչության ստորին խավերի հետ: Ռլամաների և կուլտի այլ սպասավորների կարևորագույն քաղաքական ամբիոն է հանդիսանում մզկիթը: Այստեղ իրանցիները ոչ միայն աղոթում են, այլև քննարկում բոլոր քաղաքական նորությունները, իրենց քաղաքական վարքի մասին հոգևոր անձանցից ստանում են հրահանգներ և այլն:

ԻԻՀ-ում աշխարհիկ կրթության հետ համատեղ գոյություն ունի ուսումնառության ավանդական իսլամական համակարգ: Այն սկսվում է տարրական մեդրեսեներից և հասնում է մինչև մահմեդական համալսարանները: Ղում քաղաքում գործում է ամենահայտնի կրոնական համալսարաններից մեկը: Այդ նույն քաղաքում հրատարակվում է մեծ քանակությամբ կրոնական գրականություն: Ընդհանրապես պետք է

նշել, որ ԻԻՀ-ում ուսումնական հաստատությունները հանդիսանում են զանգվածային գիտակցությունը ձևավորելու կարևորագույն կենտրոններ:

Պետական իրավունքի հիմք է հանդիսանում շարիաթը: Իսլամական սահմանադրությունը երկրի քաղաքացիների, այդ թվում նաև կրոնական փոքրամասնությունների համար ճանաչում է բազմաթիվ քաղաքացիական իրավունքներ: Սահմանադրությունը հրապարակում է տարբեր սեռի, տարբեր ազգության և կրոնական համայնքների պատկանող իրանցիների իրավահավասարության սկզբունքը:

Իսլամական սկզբունքը որոշիչ դեր ունի նաև Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության բնագավառում: Իսլամական սահմանադրության 11-րդ հոդվածը ազդարարում է, որ բոլոր մահմեդականները կազմում են մեկ համայնք («ումմա») և պետությունը պարտավոր է իր քաղաքական կուրսը իրականացնել իսլամական ժողովուրդների միավորման ու դաշինքի հիմքի վրա, հետևողականորեն գործադրել քայլեր, որոնք ուղղված լինեն իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնության ամրապնդմանը: Պարզաբանվում է, որ «մարդկության» (իմա՝ իսլամական ժողովուրդների Վ.Բ.) նպատակը՝ բոլոր մարդկանց կատարյալ հնազանդությունն է ալլահի կամքին և համաշխարհային մի պետության ստեղծումը, որտեղ բոլորը կդառնան «ումմայի», այսինքն իսլամական համայնքի անդամներ:

Դժվար չէ նկատել, որ այս կոնցեպցիայի մեջ անսքող կերպով դրսևորվում են դեռևս XIX դարում Իրանում ծնունդ առած համաիսլամականության (պանիսլամիզմ) սկզբունքները, որոնք մեր օրերում հանդես են գալիս ժամանակի ոգով վերանայված տարբերակով:

Իրանական պաշտոնական քարոզչությունը աշխատում է Իսլամի բարոյա-էթիկական սկզբունքները սերտորեն կապել ազգային ավանդույթի հետ, որպես ազգային պատմական անհատականության բաղկացուցիչ մաս: Թեև ազգայնականությունը իր ողջ էությամբ աշխարհիկ գաղափարախոսություն է, սակայն Իրանում իսլամը և ազգայնականությունը ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական ոլորտներում ոչ միայն սերտորեն համագործակցում են միմյանց հետ, այլև զգում են մեկը մյուսի կարիքը: ԻԻՀ-ում անձի կամ հավաքականության իսլամի շիիթական ուղղությանը պատկանելությունը դիտվում է որպես կոնֆեսիոնալ ազգայնականության հիմք:

ԻԻՀ-ում պետական կրոն հռչակված շիիզմը դիտվում է որպես եզակի մի ուսմունք, որն ի վիճակի է լուծել ժամանակակից մարդու առջև կանգնած պրոբլեմները և մոբիլիզացնել հասարակության բոլոր անդամների եռանդը ստեղծագործ աշխատանքի համար:

Իմամ Խոմեյնին հոգևորականությանը համարում էր հասարակության էլիտար խավ և գտնում էր, որ պետության մեջ իշխանությունը պետք է կենտրոնանա «աստծո ծառաների», այսինքն հոգևորականության ձեռքերում: Նա «Իսլամական հանրապետությունը» բնութագրում է որպես «Մեծն Ալլահի պետություն»: Ուստի ԻԻՀ քաղաքական ղեկավարությունը աշխատում է համոզել սեփական ժողովրդին, որ Իրանը, ինչպես նաև մահմեդական մյուս պետությունները, պետք է զարգանան «ինքնուրույն իսլամական ուղիով»:

Ի սկզբանե իսլամին բնորոշ է եղել կրոնի և քաղաքականության միասնության գաղափարը: Այդ իսկ տեսակետից պատահական չէ, որ ժամանակակից Իրանում իսլամը ըստ էության հանդիսանում է և՛ կրոնական ուսմունք և՛ քաղաքական ծրագիր: Ուստի ԻԻՀ-ն քաղաքական ղեկավարությունը կարիք ունի մահմեդական ուլեմայի ծառայությանը որպես միջնորդի, ապահովելու համար շիիզմները քաղաքական ավանդարդի և զանգվածների միջև՝ բնակչությանը մոբիլիզացնելու համար ինչպես ազգային նպատակները իրագործելու, այնպես էլ ընդդիմության դեմ պայքարելու համար, որը նույնպես հաճախ հանդես է գալիս կրոնական կարգախոսների ներքո:

ԻԻՀ-ն պաշտոնական քարոզչությունը մշտապես այն միտքն է պրոպագանդում, որ միայն կրոնն է ի վիճակի երաշխավորելու մարդու և ողջ հասարակության առողջ բարոյական ոգին և նրա բարոյաքաղաքական միասնությունը: Այդ սկզբունքը ենթադրում է, որ «կրոնն ամեն ինչ է» և նույնիսկ բարձր է քաղաքականությունից: Դա ենթադրում է, որ բոլոր իրանցիները պետք է քաղաքականապես ակտիվ լինեն և պետք է համախմբվեն իսլամի կանաչ դրոշի ներքո:

Իրանում մահմեդականությունից բացի որոշ տարածում ունեն նաև մի շարք այլ կրոններ (քրիստոնեություն, զրադաշտականություն և հուդայականություն): ԻԻՀ սահմանադրությունը ընդունում է այդ կրոնների օրինականությունը, նրանց հետևորդներին համարելով կրոնական փոքրամասնություններ (հոդված 13):

Քրիստոնեությունը Իրանում տարածվել է հնագույն ժամանակներից սկսած, երբ այդ երկրում հիմնավորվեցին վաղ քրիստոնեական հա-

մայնքներ: Ներկայումս քրիստոնեությունը դավանում է այդ երկրի բնակչության համեմատաբար ոչ մեծ մասը (0,7 %-ը): Իրանում քրիստոնյաների հիմնական խումբը կազմում են հայերը: Նրանց մեծագույն մասը հանդիսանում է հայ առաքելական եկեղեցու հետևորդներ: Ոչ մեծ թվով հայեր (մոտ 2000 մարդ) դավանում են կաթոլիկությունը: Կան նաև հայ բողոքականներ, գալստականներ և այլն, որոնց թիվը սակայն մեծ չէ: Իրանում ապրում են նաև որոշ թվով անգլիկանյան և ուղղափառ («պրավոսլավ») եկեղեցու հետևորդներ:

Հայերից հետո ամենախոշոր քրիստոնեական համայնքը կազմում են ասորիները, որոնք սակայն հանդիսանում են քրիստոնեության տարբեր ուղղությունների հետևորդներ: Իրանում ասորիների մեծ մասը ուղղափառ եկեղեցու հետևորդներ են: Կան նաև ասորի նեստորականներ, կաթոլիկներ, բողոքականներ:

Իրանում ապրում են նաև մինչիսլամական կրոնի հետևորդները՝ զրադաշտականները կամ փարս-կրակապաշտները: Ներկայումս նրանց թիվը հասնում է մոտ 15 հազարի: Զրադաշտականները այն պարսիկների ժառանգորդներն են, որոնք իր ժամանակին հրաժարվեցին ընդունել դրսից պարտադրված նոր կրոնը՝ իսլամը:

VII դարից սկսած մինչև XII դարը Իրանի զրադաշտականների մի խոշոր հատվածը տեղափոխվել է Արևմտյան Հնդկաստան, որտեղ ներկայումս նրանց թիվը կազմում է մոտ 100 հազար մարդ (գլխավորապես Բոմբեյի շրջանում): Հնդկաստանում նրանք կորցրել են իրենց լեզուն և խոսում են գուջարաթի լեզվով:

Իրանում զրադաշտականներին անվանում են նաև գյաբրեր: Ներկայումս առանձնացված համայնքներով նրանք ապրում են գլխավորապես Յեզդում, Քերմանում, Զահեդանում ու Թեհրանում: այդ քաղաքներից յուրաքանչյուրում նրանք ունեն տաճարներ, որտեղ և գտնվում են ատրուշանները իրենց «անմահ կրակով»:

Իրանի զրադաշտականները գլխավորապես զբաղվում են այգեգործությամբ, առևտրով (հատկապես անշարժ գույքի) և այնպիսի արհեստներով, որոնք չեն պահանջում կրակի օգտագործում:

Հուդայականությունը դավանում են իրանցի հրեաները: Նրանք կազմում են երկրի ողջ բնակչության 0,3 %-ը: Ի դեպ, հրեաներն Իրանում ապրում են խորը հնությունից սկսած: Քաղաքներում սովորաբար նրանք ապրել են իրենց մեկուսի կյանքով՝ հրեական գետտոներում:

Ներկայումս Իրանի տարածքում կան 30 սինագոգներ, որոնցից գլխավորները գտնվում են Թեհրանում, Շիրազում, Համադանում, Սպահանում և Աբադանում:

Իրանում հրեաներն ունեն մասնավոր դպրոցներ, մշակութային միություններ, «Թալմուդ» անունով հայրենակցական միություն, զանազան ակումբներ և այլն: Ինչպես և ասորիները, հրեաները իրանական մեջլիսում ունեն մեկ պատգամավոր:

ԻԻՀ-ում կրոնական բոլոր փոքրամասնությունները օգտվում են իրենց դավանած կրոնի արարողություններին մասնակցելու համար երկրից դուրս տարբեր արբամայրեր ուխտագնացության մեկնելու ազատությունից:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրանական պետության պաշտոնական անվանումը՝ Ջումհուրի-ե Էսլամի-ե Իրան է (Իրանի Իսլամական Հանրապետություն): Պետական դրոշն ուղղանկյուն է՝ հորիզոնական ուղղությամբ ձգվող եռագույն շերտով՝ կանաչ, սպիտակ, կարմիր: Միջին շերտում ԻԻՀ խորհրդանշանն է և նշանաբանը՝ «Ալլահը մեծ է»:

ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1905-1911 թթ. հեղափոխության հետևանքով բացարձակ միապետությունից Իրանը դարձավ սահմանադրական կամ պառլամենտական միապետություն և ստացավ իր առաջին սահմանադրությունը, որը բաղկացած էր երկու մասից՝ Հիմնական օրենքից (ընդունվել է 1906 թ. դեկտեմբերին) և Հիմնական օրենքի հավելումներից (1907 թ. հոկտեմբեր):

Հետագայում չնայած երկրի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած նշանակալից փոփոխությունների, 1907-1979 թթ. ընթացքում իրանական սահմանադրության մեջ էական փոփոխություններ չէին մտցվել, բացառությամբ այն ճշտումների, որոնք վերաբերում էին շահի առանձնաշնորհումներին ու իրավունքներին: Այսպես, 1925 թ. Ղաջարների դինաստիայի տապալման և Ռզա-խան Փեհլևիի շահ հռչակվելու կապակցությամբ սահմանադրության մեջ կատարվեցին այնպիսի ուղղումներ, որոնք ընդլայնում էին շահի լիազորությունները և իրավասության սահմանները:

Իրանի սահմանադիր ժողովը վերստին սահմանադրության մեջ փոփոխություններ մտցրեց 1949 թվականին, այս անգամ Ռզա-շահի թա-

գահի որդու՝ Մուհամմեդ Ռզա շահի, որպես պետության ղեկավարի, իրավասությունները ընդլայնելու նպատակով: Ավելի ուշ, 1957 թ. մեջլիսը շահին տրամադրեց մի նոր առանձնաշնորհում՝ հետաձգման վետոյի իրավունք: Աշխատելով էլ ավելի ծավալել ու զարգացնել իր իրավասությունների շրջանակը, Մուհամմեդ Ռզա-շահը 1967 թ. Սահմանադիր ժողովից կորզեց մի նոր բացառիկ առանձնաշնորհում՝ իր ժառանգորդին սեփական կամքով որոշելու լիազորություն:

Հետևողականորեն առաջ տանելով իր մենատիրական իշխանությունը ուժեղացնելու և ընդլայնելու քաղաքականությունը, 70-ական թվականներին շահը երկրում հաստատեց միանձնյա կառավարման ավտորիտար վարչակարգ, որի նկատմամբ սահմանադրությունը ըստ էության որևէ ազդեցություն չուներ:

1979 թ. միապետության տապալումից և իսլամական հանրապետության պաշտոնական հայտարարումից հետո օրակարգի հարց դարձավ նոր սահմանադրություն ընդունելու և նոր պետականություն ձևավորելու հույժ կարևոր խնդիրը: Որոշ լիբերալ գործիչներ առաջարկեցին հիմք ընդունել 1906 թ. սահմանադրությունը, նրա միջից հանելով այն բոլորը, ինչ վերաբերում է միապետությանը և ավելացնելով իսլամական հանրապետությանը վերաբերող սկզբունքները: Սակայն այդ գաղափարը լայն աջակցություն չստացավ: Ի վերջո մշակվեց սահմանադրության մի նախագիծ, որն ամբողջապես կազմված էր իմամ Խոմեյնիի գաղափարների ազդեցության ներքո: 1979 թ. դեկտեմբերի 2-3-ին սահմանադրության այդ նախագիծը դրվեց հանրաքվեի և ձայների ճնշող մեծամասնությամբ հաստատվեց: Այլ կերպ ասած, ԻԻՀ ներկա սահմանադրությունը գործում է 1979 թ. դեկտեմբերից սկսած: Նրա ընդունումից տասա տարի հետո սահմանադրության մեջ մտցված են մասնակի ուղղումներ, որոնք հավանության են արժանացել 1989 թ. հուլիսի 28-ի հանրաքվեի ժամանակ:

ԻԻՀ սահմանադրությունն օժտված է ներածական բաժնով (պրեամբուլա), որտեղ շարադրված է Իրանի պատմության ընթացքը ըստ այն կազմողների մեկնաբանության և միաժամանակ պարզաբանվում է ԻԻՀ մոտեցումները այնպիսի հարցերի նկատմամբ, ինչպիսիք են իսլամական իշխանությունը, իսլամի մեջ կառավարման մեթոդը, տնտեսությունը, բանակը, պետական իշխանության ճյուղերը, զանգվածային լրատվության միջոցները, կինը հասարակության մեջ և այլն:

Սահմանադրության հիմնական տեքստը բաղկացած էր 12 բաժիններից, որոնք համախմբված էին 175 հոդվածների մեջ: 1989թ. մտցված ճշտումներից հետո, բաժինների թիվը մեծացավ մինչև 14-ի, իսկ հոդվածներինը՝ մինչև 177-ի: Նրանցում իրենց արտացոլումը գտան հետևյալ թեմաները. պետականության ընդհանուր սկզբունքները, պետական իշխանության ատորիբուտները, ժողովրդի իրավունքները, տնտեսությունը և ֆինանսները, ազգային անկախության ու ինքնիշխանության իրավունքներն ու պետական իշխանության ճյուղերը, օրենսդրական իշխանությունը, առաջնորդը, գործադիր իշխանությունը, դատական իշխանությունը, զանգվածային լրատվության միջոցները, Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդը և հիմնական օրենքի մեջ փոփոխություններ ու ճշտումներ մտցնելու կանոնակարգը:

ԻԻՀ սահմանադրությունը ամբողջապես խարսխված է կառավարման իսլամական ձևի կամ «վելայաթե-ֆաղիհի» վրա:

Դա նշանակում է, որ ա. Իրանում ժամանակակից իրավունքը ենթակա է կրոնական նորմերին և բ. իրավունքի երեք հիմնական աղբյուրներից՝ (կրոնական, սահմանադրական և աշխարհիկ օրենսդրության) առաջնությունը պատկանում է իսլամական սկզբունքներին: «Վելայաթե Ֆաղիհի» բուն էությունը կայանում է նրանում, որ պետական իշխանության այլևայլ մարմինները, այդ թվում նաև խորհրդարանը, կառավարությունը և այլն, ներքևից վերև ուղղահայաց գծով ենթարկվում են իսլամական հեղափոխության առաջնորդին (ռահբար) և նրա անմիջական հսկողության ներքո գտնվող այսպես կոչված «Դիտողական խորհրդին» (օրենսդրական իշխանության նկատմամբ կրոնական հսկողության մարմին):

Սահմանադրության մեջ նշվում է, որ «Վելայաթե ֆաղիհը» կոչված է նաև «օգնել Իրանի մահմեդական ժողովրդին պարզորոշ կերպով գիտակցելու իսլամական գաղափարների համար առաքինի պայքարի շարունակման ու ընդլայնման ուղիները»:

Կարելի է անվարան ասել, որ «Վելայաթե Ֆաղիհը» հանդիսանում է Խոմեյնիզմի ուսմունքի պտակը կամ ելակետային սկզբունքը: Ի դեպ, «առաջնորդի» կամ «ռահբարի» պաշտոնի ստեղծումը ևս բխում էր հենց Խոմեյնիի «Վելայաթե Ֆաղիհ» սկզբունքից: Այդ սկզբունքի վրա խարսխված Խոմեյնիի ուսմունքը և նրա նորագույն զարգացումները ներկայումս հանդիսանում են երկրում տիրող գաղափարախոսությունը:

1979 թ. սահմանադրությունը ազդարարում է, որ աշխարհի նկատմամբ բացարձակ իշխանությունը պատկանում է Աստծուն (Ալլահին), սակայն միևնույն ժամանակ ընդունում է, որ մարդը իր սեփական ճակատագրի տերն է (հոդ. 56): Ինքնորոշումը սրբազան իրավունք է, որը մարդուն ու ժողովրդին շնորհված է Ալլահի կողմից և ոչ մի մարդ կամ մարդկանց խումբ չի կարող խլել այդ իրավունքը:

Սահմանադրությունը երկրի քաղաքացիների համար ճանաչում է բազմաթիվ քաղաքացիական իրավունքներ, սակայն հատուկ շեշտվում է, որ այդ իրավունքները պետք է համապատասխանեն իսլամի սկզբունքներին:

Սահմանադրության 11-րդ հոդվածը հայտարարում է, որ բոլոր մահմեդականները կազմում են մեկ համայնք («ումմա») և ԻԻՀ պետությունը պարտավոր է իր քաղաքական կուրսը իրականացնել իսլամական ժողովուրդների միավորման և դաշինքի հիմքի վրա, հետևողականորեն գործադրել քայլեր, որոնք ուղղված լինեն իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնության ամրապնդմանը: Առհասարակ պետք է նշել, որ սահմանադրության մեջ մեծ ուշադրություն է դարձվում Իրանի արտաքին քաղաքականության խնդիրներին:

Ազգային հարցի վերաբերյալ դրույթներ մշակելիս, 1979 թ. սահմանադրության հեղինակները առաջնորդվել են հետևյալ մահմեդական դրվագով. «Իսլամական համայնքը դա միասնական ազգ է»: Ըստ այնմ, սահմանադրության մեջ արձանագրվեց, որ «բոլոր մահմեդականները կազմում են մեկ համայնք» (հոդ.11):

Սահմանադրության մեջ Իրանի պաշտոնական կրոն է հռչակվում (հոդ.12) ջաֆարիտական ուղղության իսլամը և նշվում է, որ հավիտյանս հավիտենից այդ սկզբունքը փոփոխության ենթակա չէ: Միաժամանակ շեշտվում է (հոդ.13), որ «պետք է պահպանվեն այլ (ոչ մահմեդական) կրոնների հետևորդների իրավունքները»: Զրադաշտականները, հուդայականները և քրիստոնյաները ճանաչվում են որպես միակ կրոնական փոքրամասնություններ, որոնք օրենքի շրջանակներում ազատ են կատարելու իրենց կրոնական արարողությունները և իրենց անձնական կյանքում գործում են իրենց ավանդույթներին համապատասխան:

Սահմանադրությունը մահմեդական բնակչությանը հրահանգում է «բարյացակամ վերաբերմունք ոչ մահմեդականների նկատմամբ՝ ա-

ուղղորդվելով իսլամական արդարության սկզբունքով, ինչպես նաև հարգել նրանց մարդկային իրավունքները (հոդ.14): Այդ նույն հոդվածում պարզաբանվում է, որ նշված դրույթը կիրառելի է «այն մարդկանց իրավունքների նկատմամբ, որոնք հանդես չեն գալիս իսլամի դեմ և դավեր չեն հյուսում իսլամական հանրապետության նկատմամբ»:

Սահմանադրությամբ ճանաչվում է օրենսդրական, գործադիր և դատական իշխանությունների բաժանումը, որոնց վերևում կանգնած է Գերագույն Առաջնորդը:

Հեղափոխությունից անմիջապես հետո պետական իշխանության բարձրագույն մարմին փաստորեն դարձավ Իսլամական Հեղափոխական խորհուրդը (ԻՀԽ): Այն ձևավորվել էր դեռևս 1979 թ. հունվարին, այաթոլլա Խոմեյնիին մոտ կանգնած գործիչներից, և գործում էր նրա անմիջական ղեկավարության ներքո: ԻՀԽ-ն բարձր էր կանգնած բոլոր քաղաքական ինստիտուտներից և ուներ ռեալ իշխանություն, որն իրագործվում էր այսպես կոչված իսլամական կոմիտեների միջոցով: Բացի այդ, նրա հովանավորության ներքո գործում էր Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը:

Մինչև 1979 թ. նոյեմբերը գործադիր իշխանությունը իրականացվում էր նույն թվականի փետրվարին կազմավորված ժամանակավոր հեղափոխական կառավարության կողմից: Սահմանադրության ընդունումից հետո, 1979 թ. վերջերից, սկսվում է սահմանադրությամբ նախատեսված իշխանության պետական մարմինների ձևավորման գործընթացը:

Իրանում պետական իշխանության համակարգը, իշխանության աղբյուրների նկատմամբ իսլամական սկզբունքների գերակայությանը համապատասխան, բաղկացած է երկու կառույցներից՝ իշխանության աստվածապետական (թեոկրատիկ) և հանրապետական ինստիտուտներից:

Աստվածապետական ինստիտուտների կառույցին են վերաբերում. Առաջնորդը (Ռահբար), Փորձագետների խորհուրդը, Սահմանադրությունը պահպանողների խորհուրդը, Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը, Վերածնության քաղաքականության խորհուրդը, Մշակութային հեղափոխության բարձրագույն խորհուրդը:

1997 թ. նոյեմբերին ԻՀՀ նախագահ Խաթամիի հրամանագրով երկրում առաջին անգամ կազմակերպվեց մի նոր մարմին՝ Սահմանադրական օրենքի գործադրությանը հետևող և դրան հսկող վարչությունը:

Փորձագետների խորհուրդը (Շուրա-ե Խոբրեգան), նկատի ունենալով նրա անձնակազմն ու լիազորությունները, իրենից ներկայացնում է Իրանում իշխանության բարձրագույն մակարդակ:

Փխ լիազորությունների շրջանակը հիմնականում կապված է Առաջնորդի և սահմանադրության հետ: Նրա մեջ մտնում են. ԻԻՀ առաջնորդի ընտրությունների կազմակերպումը և անցկացումը: Փխ ինքն է որոշում այդ պաշտոնի համար առաջադրվող թեկնածուների շրջանակը, պարզում է նրանց բարոյական, կրոնա-քաղաքական և ախտաստվարժական որակները, բանիմացության ու գիտակության մակարդակը: Հենց ինքն էլ ընտրում է Առաջնորդին, ընդունում է նրա հրաժարականը, իսկ անհրաժեշտության դեպքում պարզում է նրա գործունակությունը և պաշտոնի վրա հետագայում մնալու նպատակահարմարությունը: Փխ նաև քննարկում և պատրաստում է ԻԻՀ սահմանադրության մեջ կատարվող փոփոխություններն ու ճշտումները, և միայն նրա հավանության արժանանալուց հետո դրանք ներկայացվում են ավելի լայն քննարկման: Քաղաքական պրակտիկան այնպիսին է, որ և՛ 1979 թ. Սահմանադրությունը և՛ 1989 թ. ճշտումները սկզբում մշակվել են Փխ կողմից, իսկ ապա հաստատման համար ներկայացվել են համազգային հանրաքվեի:

Իր անձնակազմով Փխ հանդիսանում է բարձրագույն դասային մի ֆորում, որը բաղկացած է շիիթական հոգևորականության վերին շերտի՝ մուշտեհիդների ներկայացուցիչներից: Նրա թվական կազմը տատանվում է 70-ից մինչև 80 անդամի, որը մոտավորապես ընդգրկում է վարչակարգի բոլոր ղեկավար գործիչներին: Փխ քանակական կազմը, ընտրությունների կարգը, կանոնադրությունը և նրա լիագումար նիստերը անցկացնելու կանոնակարգը որոշող օրենքը մշակում է Սահմանադրությունը պահպանողների խորհուրդը, որը նաև գրանցում ու նախնական քննարկման է ենթարկում առաջադրվող անձանց թեկնածությունները, ընդորում ունենալով ցանկացած անձանց մերժելու իրավունք: Այսպիսով, Սահմանադրությունը պահպանողների խորհուրդը խաղում է ընտրական հանձնաժողովի դեր: Այն բանից հետո, երբ թեկնածուները որոշվել են, նրանք ընտրվում են համազգային ընտրությունների միջոցով՝ ուղղակի քվեարկությամբ: Փխ ընտրվում է ութ տարի ժամանակով: Փխ լիագումար նիստերը անց են կացվում ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

Առաջնորդը (Ռահբար)։ Իրանական շիիթական քաղաքական դոկտրինի հիմնական դրույթը սահմանադրության մեջ ձևակերպված է հետևյալ կերպ. «երկրի գործերի և ողջ մահմեդական համայնքի կառավարումը հավերժ ու մշտապես գտնվում է իմամի ձեռքերում», որը ներկայումս բացակայում է այս աշխարհից։ Թաքնված իմամի բացակայության շրջանում «համայնքի ղեկավարման գործը դրվում է Ֆաղիհի վրա»։ ԻԻՀ սահմանադրության համաձայն, ի դեմս Առաջնորդի պաշտոնում ընտրված ֆաղիհի, մեկ անձի մեջ միավորվում է և՛ աշխարհիկ և՛ հոգևոր իշխանությունը։ Դրա հետևանքով նա ձեռք է բերում լայն լիազորություններ ու իրավասություններ, որոնց շրջանակը որոշվում է սահմանադրությամբ։

Առաջնորդի ընտրության կարգը, նրա նկատմամբ ներկայացվող պահանջները, նրա իրավունքներն ու պարտականությունները, նրա անգործունեության դեպքում պաշտոնից հեռացնելու ընթացակարգը և այլն պատվաստված են ԻԻՀ Սահմանադրության հատուկ բաժնում (VIII)։

Առաջնորդի ընտրության պատասխանատվությունը դրվում է ՓԽ վրա (հոդ. 107), որն անց է կացնում նախնական խորհրդակցություններ և որոշում է թեկնածուների շրջանակը։ Ընդորում այդ տվյալների հավաստարության դեպքում նախապատվությունը տրվում է հոգևոր դեմքերին, որոնք օժտված են իրավական և քաղաքական փորձով։

ԻԻՀ Առաջնորդի իրավասությունների մեջ է մտնում հարցերի լայն շրջանակ, որը գործնականում ընդգրկում է հասարակության և պետության կենսագործունեության բոլոր ոլորտները. ԻԻՀ քաղաքականության գլխավոր ուղղության որոշումը և նրա իրականացման նկատմամբ հսկողությունը, հանրաքվեների անցկացման որոշման ընդունումը, զինված ուժերի բոլոր տեսակների հրամանատարությունը, պատերազմի հայտարարումն ու խաղաղության կնքումը, համընդհանուր զորահավաքի անցկացման իրավունքը, բարձրագույն պաշտոնատար անձանց (Սահմանադրությունը պահպանողների խորհրդի անդամների, դատական իշխանության ղեկավարի, զանգվածային լրատվության միջոցների ղեկավարի, Միացյալ շտաբի պետի, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հրամանատարի, զորքերի տարբեր տեսակների հրամանատարների և հատուկ մարմինների ղեկավարների, գերագույն դատարանի ղեկավարի նշանակումը, օրենսդրական, գործադիր և դատական իշխանությունների միջև ծագած վիճելի հարցերի լուծումը,

նախագահի ընտրությունից հետո նրա նշանակման վերաբերյալ հրամանագրի ստորագրումը, ինչպես նաև նախագահի հեռացումը իշխանությունից՝ նրա անգործունեության դեպքում (եթե այդ մասին լինի Գերագույն դատարանի կամ խորհրդարանի որոշումը), ներման հայտարարումը և հանցագործների ներումը և այլն: Բացի այդ, 1989թ. մտցված սահմանադրության նոր հոդվածին (112) համապատասխան, Առաջնորդը նշանակում է Հանկարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի մշտական ու ժամանակավոր անդամներին: Այսպիսով ԻԻՀ Առաջնորդի ձեռքերում կենտրոնացված է վիթխարի իշխանություն: Սակայն, դրանով հանդերձ, Առաջնորդի վրա ևս տարածվում է օրենքի առջև հավասարության սկզբունքը:

ԻԻՀ առաջին Առաջնորդ դարձավ այաթոլլա Խոմեյնին (1979-1989): 1989թ. հունիսի 3-ին նրա մահվանից հետո այդ պաշտոնում ընտրվեց այաթոլլա Սեյեդ Ալի Խամենեին, որի օգտին 1989թ. ամռանը քվեարկեցին Փորձագետների խորհրդի 74 անդամներից 60-ը: Առաջնորդի պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանադրությամբ չի սահմանափակվում:

Սահմանադրությունը պահպանողների խորհուրդ (Շուրա-ի նեգահբան-է զանուն-է ասասի): Երբեմն այդ անվանումը թարգմանվում է որպես Դիտորդների խորհուրդ: Այն բաղկացած է 12 անդամներից, որից վեցը նշանակվում է Առաջնորդի կողմից, իսկ վեցին, որոնք երաշխավորվել են Դատական իշխանության նախագահի կողմից, ընտրում է խորհրդարանը: Յուրաքանչյուրի լիազորությունների ժամկետը վեց տարի է:

ՍՊԽ պարտականությունների մեջ է մտնում որոշել, թե որքանով է խորհրդարանի օրինաստեղծ գործունեությունը, նրա կողմից ընդունված որոշումները և օրենսդրական ակտերը համապատասխանում իսլամի և սահմանադրության դրույթներին: ՍՊԽ-ն քննարկում է բոլոր նորմատիվային ակտերը և միայն նրա հաստատումից հետո դրանք մտնում են ուժի մեջ: Նրան տրամադրված է վետոյի իրավունք: ՍՊԽ-ն վերահսկում է Առաջնորդի և ՓԽ ընտրությունները գործընթացը, նախագահի և պառլամենտի ընտրությունները և հանրաքվեների անցկացումը: Սահմանադրական վեճերի առաջացման դեպքում ՍՊԽ-ն տալիս է ԻԻՀ Հիմնական օրենքի համապատասխան հոդվածների մեկնաբանությունը: Նախատեսված է, որ պառլամենտի գործունեությունը ՍՊԽ-ի բացակայության պայմաններում անվավեր է:

Իրանի պայմաններում ՍՊԽ-ն հանդիսանում է իր ծագմամբ իշխանության աստվածապետական ինստիտուտ, որը կանգնած է պառլամենտից վեր և փաստորեն զուգակցում է տահմանադրական վերահսկողության և պառլամենտի վերին պալատի ֆունկցիաները:

Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը (Մաջմա-յե թաշխիս մասլհաթ-ե նեզամ) առաջին անգամ կազմավորվել է 1988թ. սկզբին: Ստեղծելով ՀՆՄԽ-ը, այաթոլլա Խոմեյնին աստիճանաբար նրան հանձնեց որոշումների ընդունման գործընթացը կարգավորելու ուղղությամբ իր լիազորությունների մի մասը: Դրանով իսկ նա այն դարձրեց քաղաքականության մշակման վերջին առյանը:

ՀՆՄԽ-ը ձևավորում է ինքը՝ ԻԻՀ Ալաքնորդը, որը որոշում է Խորհրդի թվական և անձնական կազմը, նրա մշտական ու ժամանակավոր անդամներին: Փաստորեն նրանք երկրի բարձրագույն իշխող հիմնարկությունների ղեկավարներն են:

Քաղաքական համակարգի մեջ իր զբաղեցրած տեղով, իր ֆունկցիաներով ու լիազորություններով ՀՆՄԽ-ը հանդիսանում է բարձրագույն քաղաքական խորհուրդ:

Վերականգնման քաղաքականությունը մշակող խորհուրդ: 1988թ. օգոստոսին այաթոլլա Խոմեյնին նշեց Իրանի միասնական տնտեսական քաղաքականության մշակման անհրաժեշտության մասին: Ի կատարումն այդ հանձնարարականի ստեղծվեց ՎՔՄԽ-ը, որն ընդգրկում էր գործնականում երկրի ողջ բարձրագույն ղեկավարությանը:

ՎՔՄԽ-ը, ըստ էության, դարձավ բարձրագույն տնտեսական խորհուրդ, որը որոշում էր ազգային տնտեսության զարգացման բոլոր ուղղությունները: Նա ունի յոթ ենթակոմիտեներ. ագրարային, արդյունաբերական, առևտրական, ֆինանսական, տրանսպորտային, սոցիալ-կենցաղային և բնակարանային հարցերի գծով:

Կուլտուրական հեղափոխության գծով բարձրագույն խորհուրդը միաժամանակ հանդիսանում է մշակույթի և կրթության բնագավառում բարձրագույն օրենսդրական և գործադիր-կարգադրիչ մարմին: Իր բնագավառում նա ունի այնպիսի լիազորություններ, որոնք նույնական են պառլամենտի և մինիստրների խորհրդի լիազորություններին: ԿՀԲԽ նորմատիվ ակտերը ուժի մեջ են մտնում նրանց ընդունման պահից և ենթակա չեն լրացուցիչ հաստատման: ԿՀԲԽ կազմի մեջ մտնում է երկրի բարձրագույն ղեկավարությունը, մշակույթի, բարձրագույն կրթության,

լուսավորության, առողջապահության նախարարները, մշակույթի գծով փոխվարչապետները:

Օրենսդիր իշխանություն: ԻԻՀ բարձրագույն օրենսդիր մարմինը Մեջլիսն է, միապալատ պառլամենտը (Մաջլես-ե շուրայ-ե էսլամի), որի գումարման վայր է հանդիսանում ԻԻՀ մայրաքաղաք Թեհրանը: Նրա լիազորությունների ժամկետը չորս տարի է: Մեջլիսի կազմում կան 270 պատգամավորներ: Մեջլիսի իրավունքներն ու ֆունկցիաները սահմանվում են սահմանադրությամբ (հոդվածներ 71-90):

Իսլամական հեղափոխությունից հետո առաջին գումարման Մեջլիսը բացվել է 1980թ.: Մեջլիսի աշխատանքները ղեկավարում է նախագահը կամ խոսնակը, որն ունի երկու տեղակալներ: Նախագահի բացակայության դեպքում տեղակալները իրավասու են վարելու նիստերը:

Մեջլիսը բաղկացած է տարբեր հանձնաժողովներից (խորհրդարանական կոմիտեներից), կրթության ու մշակույթի, իսլամական առաջնորդության, արվեստի ու մամուլի, տնտեսության ու ֆինանսների, պլանի և բյուջեի, նավթի, արդյունաբերության ու հանքերի, աշխատանքի ու սոցիալական հարցերի, ճանապարհների ու տրանսպորտի, արդարադատության ու իրավական հարցերի, պաշտպանության, արտաքին քաղաքականության, ներքին գործերի, առողջապահության ու սոցիալական ապահովության, փոստի, հեռախոսի և էներգետիկայի, առևտրի, գյուղատնտեսության ու գյուղական շինարարության և այլն:

Նկատի ունենալով, որ ԻԻՀ-ում քաղաքական կուսակցությունների գործունեությունը սահմանադրությամբ արգելված է, Մեջլիսում գոյություն չունեն կուսակցական խմբակցություններ: Նրանց փոխարինում են բուն Մեջլիսում գոյություն ունեցող խմբակցությունները:

Մեջլիսի նիստերը հաճախ հեռարձակվում են ռադիոյով ու հեռուստատեսությամբ: Նրա գործունեությունը լայնորեն լուսաբանվում է նաև մամուլում: Առանձին հարցերի քննարկման դեպքում գումարվում են Մեջլիսի փակ նիստեր: Մեջլիսի որոշումները օրենքի ուժ են ստանում միայն այն դեպքում, երբ քվեարկությունը տեղի է ունեցել քվորումի ապահովմամբ: Մեջլիսի անդամներն օգտվում են անձեռնամխելիության իրավունքից:

Ծուրաքանչյուր տասը տարին մեկ երկրի բնակչության թվի մեծացման դեպքում ավելացվում է նաև մանդատների թիվը: Զրադաշտականները և հրեաները Մեջլիսում ունեն մեկական պատգամավոր, քրիստոն-

յա-ասորիները և քրիստոնյա-քաղդեացիները համատեղ մեկ պատգամավոր, հայերը, որոնք հանդիսանում են ամենախոշոր կրոնական փոքրամասնությունը, երկու պատգամավոր (մեկը հյուսիսային իրանահայության, մյուսը հարավային իրանահայության):

Մեջլիսը օրենքներ է ընդունում այն բոլոր հարցերի շրջանակներում, որոնք սահմանված են հիմնական օրենքով: Նա իրավունք չունի հաստատելու այն օրինագծերը, որոնք հակասում են կրոնի կամ սահմանադրության սկզբունքներին: Դրա հսկողությունը և օրենքների համապատասխանումը իսլամի նորմերին իրականացնում ու որոշում է Դիտորդների խորհուրդը: Մեջլիսի իրավասությունների մեջ է մտնում նաև աշխարհիկ օրենքների պարզաբանումն ու մեկնաբանումը: Միջազգային բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը, պարտավորություններն ու կոնվենցիաները ենթակա են մեջլիսի հաստատմանը: Մեջլիսը հաստատում է նաև փոխառությունների ստացումն ու տրամադրումը, անհատույց օգնությունը ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Օտարերկրացիների մասնակցությամբ ցանկացած ձեռնարկության ստեղծում ենթակա է մեջլիսի հաստատմանը: Մեջլիսը պետք է պարտադիր կերպով հաստատեսի նաև պետական շինությունների ու արժեքների վաճառքը կամ դրանց փոխանցումը որևէ մեկին:

Մինչև իր պարտականությունների կատարմանը անցնելը, մինիստրների կաբինետը մեջլիսում պետք է ստանա վստահության քվե:

Մեջլիսի գործունեությունը իրականացվում է Դիտորդների խորհրդի հսկողության ներքո, ուր ուղարկվում են նրա բոլոր որոշումները: ԴԽ-ը տասն օրվա ընթացքում պետք է տա դրական կամ բացասական պատասխան, բարդության դեպքում խնդրելով հարցի հետաձգում ևս տասը օր:

Մեջլիսի գործունեության մեջ և երկրի քաղաքական կյանքում կարևոր դեր է խաղում մեջլիսի նախագահը:

Գործադիր իշխանությունը: Այն կենտրոնացված է ԻԻՀ նախագահի ձեռքերում: Սահմանադրության 113-րդ հոդվածի համաձայն, «Առաջնորդի պաշտոնից հետո նախագահի պաշտոնը հանդիսանում է երկրում բարձրագույն պաշտոնը: Նախագահի վրա է դրվում Սահմանադրությունն իրագործելու պատասխանատվությունը, գործադիր իշխանության ղեկավարումը, ի բացառյալ այն հարցերի, որոնք անմիջականորեն վերաբերում են Առաջնորդի իրավասություններին»: Նախագահն ընտրվում է չորս տարի ժամկետով, ժողովրդի ուղղակի քվեարկության մի-

ջոցով: Չի թույլատրվում այդ պաշտոնի զբաղեցում երկու ժամկետից ավել: Թեկնածուին ներկայացվում է մի շարք պահանջներ, մասնավորապես նա պետք է լինի բնիկ իրանցի, խորապես կրոնասեր մարդ, նվիրված ԻԻՀ սկզբունքներին ու երկրի պաշտոնական կրոնին: Իր պաշտոնում ընտրվելուց հետո, պառլամենտի նիստում Դատական իշխանության նախագահի և Դիտորդների խորհրդի անդամների ներկայությամբ նախագահը տալիս է երդում:

Նախագահը նշանակում է մինիստրների և նրանց ներկայացնում է մեջլիսին՝ վստահության քվե ստանալու համար: Նրա վրա դրված են անմիջական լիազորություններ զարգացման ծրագրերը, բյուջեն ռեալիզացնելու և իրանական պետական կառավարման մարմինների ողջ համակարգի ֆունկցիաները իրագործելու ուղղությամբ: Նախագահի իրավասությունների մեջ է մտնում երկրի տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքի բոլոր կարևորագույն խնդիրների ղեկավարումը, հասարակական կյանքի ապահովումը, կրոնի սկզբունքների և առհասարակ պետության շահերի պաշտպանությունը: Նա է իրագործում տնտեսական և մշակութային կապերը օտարերկրյա պետությունների հետ: Նրա իրավասության մեջ է մտնում պետական պարգևներով պարգևատրելը:

Թեև ԻԻՀ նախագահը հանդես է գալիս որպես գործադիր իշխանության ղեկավար, սակայն նրա իրականացրած քաղաքականությունը պարտադիր կերպով պետք է համաձայնեցվի Առաջնորդի (ռահբար) հետ: Առանց վերջինիս վավերացման, համաժողովրդական քվեարկությամբ ընտրված հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել իր պաշտոնը:

Ի դեպ, 1979թ. ընդունված իսլամական սահմանադրությունը չէր նախատեսում հանրապետության նախագահի պաշտոն: Այդպիսի պաշտոն նախատեսված չի եղել նաև «իսլամական կառավարման» վերաբերյալ Խոմեյնիի հանրահայտ ուսմունքի մեջ: Նրանում «Վելայաթե ֆաղիհիս» հիմնարար սկզբունքի համաձայն, «ռահբարը» (առաջնորդը) հանդիսացել է պետության և՛ կրոնական և՛ աշխարհիկ ղեկավարը:

ԻԻՀ կառավարությունը կազմված է հետևյալ նախարարություններից. արտաքին գործերի (վեզարաթ-ե օմուր-ե խարեջե), պաշտպանության (վեզարաթ-ե դեֆա), ներքին գործերի (վեզարաթ-ե քեշվար), բարձրագույն կրթության (վեզարաթ-ե ամուզեշ-ե ալի), մշակույթի և իսլամական կողմնորոշման (վեզարաթ-ե ֆարհանգ վա էրշադ-ե էսլամի),

տնտեսության և ֆինանսների (վեզարաթ-ե էդթեսադի վա դարայի), ինֆորմացիայի (վեզարաթ-ե էթթելաաթ) [այս նախարարության վրա է դրված ազգային անվտանգության պաշտպանության հարցերը], առևտրի (վեզարաթ-ե բազարգանի), առողջապահության (վեզարաթ-ե բեհդաշտ), փոստի, հեռագրի և հեռախոսի (վեզարաթ-ե փոստ, թելեգրաֆ վա թելեֆոն), ստեղծագործ շարժման կամ կառուցողական ջիհադի (վեզարաթե ջիհադ-ե սազանդեգի), արդարադատության (վեզարաթ-ե դադգոստարի), տրանսպորտի (վեզարաթ-ե թարաբարի), արդյունաբերության (վեզարաթ-ե սանայե), աշխատանքի և սոցիալական գործերի (վեզարաթ-ե քար վա օմուր-ե էջթեմայի), գյուղատնտեսության (վեզարաթ-ե քեշավարզի), բնակարանային շինարարության և քաղաքային գործերի (վեզարաթ-ե մասքան), լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերության (վեզարաթ-ե մա՛դան վա ֆելեզզաթ), նավթի (վեզարաթ-ե նաֆթ), էներգետիկայի (վեզերաթ-ե նիրու), լուսավորության և կրթության (վեզարաթ-ե ամուզեշ վա փարվարեշ):

Պետական ապարատի վերոհիշյալ կառուցվածքային օղակներից բացի, առկա են նաև տարբեր գլխավոր վարչություններ, որոնք կամ անմիջականորեն ենթարկվում են նախագահին, կամ գտնվում են առանձին նախարարների իրավասության ներքո (օրինակ, պլանային և բյուջետային կազմակերպությունը (սազեման-ե բարնամե վա բուջեի), ատոմային էներգիայի կազմակերպությունը (սազեման-ե էներջի-ե ատոմ) և այլն: 1989թ. ստեղծվել է պետռադիոհեռուստատեսության (ռադիոյի և հեռուստատեսության կազմակերպություն) նախագահի պաշտոն, որը նշանակվում է ԻԻՀ առաջնորդի կողմից:

Ներկայումս ԻԻՀ գործադիր իշխանության գլուխ է կանգնած նախագահ Սեյյեդ Մոհամմադ Խաթամին (այդ պաշտոնում ընտրվել է 1997թ. մայիսի 23-ին), որը փոխարինել է նախկին նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիին:

1981 թվականից սկսած երկու ժամկետ ԻԻՀ նախագահի պաշտոնը զբաղեցրել է ներկայիս առաջնորդ Սեյյեդ Ալի Խամենեին:

Կառավարման տեղական մարմինների համակարգի մեջ են մտնում նաև քաղաքապետարաններն ու նրանց խորհուրդները: Իսլամական խորհուրդներ գոյություն ունեն ոչ միայն յուրաքանչյուր քաղաքում ու բնակավայրում, այլ սահմանադրության համաձայն նրանք պետք է ստեղծվեն նաև հիմնարկություններում ու ձեռնարկություններում, ուսումնա-

կան հաստատություններում, կոոպերատիվներում և այլն: Խորհուրդների բոլոր տեսակները ներառվում են իշխանության տեղական մարմինների համակարգի մեջ:

Դատական իշխանությունը: Մինչև XXդ. Իրանում դատական իշխանությունը հիմնականում գտնվում էր հոգևորականության ձեռքերում և իրականացվում էր շարիաթական դատարանների միջոցով: 1906-1907 թթ. հետո երկրում գործում էր իշխանության երկակի համակարգ՝ աշխարհիկ և կրոնական: Ռեզա-շահի կառավարման շրջանում Իրանի իրավական դաշտը ենթարկվեց աշխարհիկացման: Ըստ այնմ 1922-1935 թթ. ընթացքում դատական իշխանությունը ենթարկվեց արմատական վերակառուցման:

Իսլամական հեղափոխությունից հետո, 1979 թ. Սահմանադրությունը պահանջում էր (հոդ. 4 և 170), որ դատա-իրավական իշխանության հիմքում պետք է ընկած լինի իսլամական սկզբունքը և նրան չհամապատասխանող բոլոր օրենքները պետք է վերացվեն:

Մինչև 1982 թ. ԻԻՀ դատական մարմինները կամ օգտագործում էին մինչհեղափոխական օրենսդրությունը, կամ առաջնորդվում էին այաթոլլա Խոմեյնիի հրապարակած «Ենթամաքին շրջանի ժամանակավոր օրենքներով»:

1982թ. օգոստոսի 22-ին այաթոլլա Խոմեյնին հրապարակեց հատուկ կարգադրություն, որտեղ պահանջում էր այլևս չօգտագործել նախահեղափոխական օրենսդրությունը: Դրանից հետո Գերագույն դատական խորհուրդը (ԳԴԽ) հրապարակեց հինգ հոդվածներից բաղկացած մի Դիրեկտիվ, որի 2-րդ հոդվածը վերացնում էր իսլամական սկզբունքներին չհամապատասխանող բոլոր հոդվածները: Առանձնապես արմատական փոփոխությունների ենթարկվեցին քրեական օրենքները: Վերականգնվեց հատուցման հնագույն սկզբունքը (ակն ընդ ական): Բազմաթիվ իրավախախտումների համար որպես պատիժ սահմանվեց մահապատիժը, ճիպոտահարումը, քարեթափ անելը, ձեռք կտրելը (գողության համար) և այլն: Վերացվեց բողոքարկման իրավունքը: «Իշխանության դեմ հանցագործություններ» կատարելու դեպքում մտցվեց գույքի բռնագրավում: Շարիաթի նորմերը բարձրացվեցին օրենքի աստիճանի: Դատաիրավական համակարգը ամբողջապես դրվեց կրոնական գործիչների իրավասության ներքո: Փոխվեց նաև դատական կազմակերպությունը:

ԽՍՀ-ում դատական իշխանության բարձրագույն մարմինն է հանդիսանում Դատական իշխանության նախագահը, որը նշանակվում է Լեաջենորդի կողմից հինգ տարի ժամկետով (հոդ.157): Դատական իշխանության նախագահը նշանակում է Գերագույն Դատարանի նախագահին, ձևավորում է այդ մարմնի կազմը, որոշում է Գլխավոր դատախազին և նախագահին ներկայացնում է արդարադատության նախարարի պաշտոնի համար թեկնածություն:

Գերագույն դատարանը իր նշանակությամբ դատական իշխանության երկրորդ մարմինն է: Նրա խնդիրն է վերահսկել «օրենքների ճիշտ կատարմանը, միասնականացնել դատական համակարգի գործունեությունը» և այլն (հոդ. 161):

Դատական համակարգում իրավասությունների հաջորդ մակարդակը դատարաններն են: Նրանք բաղկացած են երկու կառույցներից.

— **ընդհանուր դատարաններ.** ներառնում են քրեական և քաղաքացիական դատարանները, որոնք կազմված են երկրի վարչական բաժանմանը համապատասխան.

— **հատուկ դատարաններ.** ներառնում են հատուկ քրեական և քաղաքացիական դատարանները, որոնք կազմված են ըստ համապատասխան հանցագործությունների տեսակների:

Հատուկ քաղաքացիական դատարանների վարույթին են հանձնվում այնպիսի գործեր, որոնք կապված են ընտանեական հարաբերությունների, ամուսնալուծությունների, գույքային գործերի, անչափահասների իրավախախտումների հետ և այլն: Այդ դատարանների որոշումները վերջնական են:

Հատուկ դատարանների համակարգի մեջ կարևոր դեր են խաղում **իսլամական հեղափոխական դատարանները:** Այդ դատարանների իրավասությանն են հանձնված այն բոլոր գործերը, որոնք կապված են արտաքին ու ներքին անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների հետ, քաղաքական դեկավարների կյանքի նկատմամբ մահափորձի, հողի սպեկուլյացիայի, թմրանյութերի վաճառքի ու արտադրության, պետական և հասարակական գույքի հափշտակման հետ: Գոյություն ունեն նման դատարանների երեք կատեգորիաներ. տնտեսական հարցերի, քաղաքական հարցերի և թմրանյութերի հետ կապված հարցերի գծով իսլամական հեղափոխական դատարաններ:

Հատուկ դատարանների թվին են պատկանում նաև հոգևոր դեմքերի գործերով դատարանները, ռազմական տրիբունալները, հատուկ ծառա-

յությունների դատարանները, դասայ ին-ցեխային գործերի գծով դատարանները և այլն: 1989թ. ստեղծվեցին նոր հատուկ դատարաններ այնպիսի գործեր քննելու համար, որոնք կապված են կոռուպցիայի, անառակության, երեխաների հափշտակման հետ և այլն:

Նշված ինստիտուտներից բացի դատական համակարգի մեջ մտնում են.

— **Վարչական արդարության դատարանը** (Դադգահ-ե էդարե), որոնց ֆունկցիան է քննել բնակչության և գործադիր մարմինների միջև ծագած վեճերը: Այն գործում է անմիջականորեն Դատական իշխանության նախագահի ղեկավարության ներքո:

— **Գլխավոր տեսչություն** (Սազման-ե բազրեսի-ե քոլ), որն իրականացնում է օրենքների և որոշումների կատարման նկատմամբ հատուկ հսկողություն: Գործում է Դատական իշխանության նախագահի անմիջական ղեկավարության ներքո:

— **Իրավաբանական ոստիկանություն** (փոլիս-ե ղազաի) — իրականացնում է հսկողություն իրավաբանական վարչության և դատական համակարգի աշխատակիցների նկատմամբ:

Իրավապահ մարմինները, ինչպես և պետական իշխանության մնացած ոլորտները, բաղկացած են երկու կառույցներից՝ աստվածապետական և հանրապետական: Առաջինը կազմում են իսլամական կոմիտեները, երկրորդը՝ ոստիկանությունն ու ժանդարմերիան:

Իսլամական հեղափոխական կոմիտեները (ԻՀԿ) ստեղծվել են 1978-1979թ.թ. հեղափոխական իրադարձությունների ընթացքում: 1983թ. վերջին պառլամենտը օրինականացրեց ԻՀԿ գործունեությունը: ԻՀԿ-ի իրավասության մեջ է մտնում պայքարը ընդդիմադիր խմբերի ընդհատակյա քաղաքական գործունեության, ահաբեկչության և այլ քաղաքական իրավախախտումների, հակահիսլամական ու հակահոգևորական գործունեության, թմրամոլության ու անբարոյականության դեմ, ինչպես նաև կարգ ու կանոնի պահպանումը քաղաքների կենտրոնական շրջաններում (ոստիկանության հետ համատեղ) և գյուղական վայրերում (ժանդարմերիայի հետ համատեղ):

Կազմակերպչական առումով ԻՀԿ-ները, ինչպես և ոստիկանությունը ենթարկվում է ներքին գործերի նախարարությանը, սակայն ԻՀԿ-ի հրամանատարը նշանակվում է ԻԻՀ Առաջնորդի կողմից: ԻՀԿ-ի գլխավոր շտաբ-բնակարանը գտնվում է Թեհրանում, խոշոր քաղաքներում ու

նահանգների վարչական կենտրոններում կան շրջանային բաժանմունքներ:

Ոստիկանությունը իրավապահ պարտականություններ է իրականացնում քաղաքներում: Ոստիկանության իրավասության մեջ է մտնում մի շարք կենտրոնական հիմնարկությունների ու դիվանագիտական ներկայացուցչությունների պահպանությունը:

Ժանդարմերիայի խնդիրն է ապահովել կարգ ու կանոնի պահպանումը գյուղական վայրերում և պետական սահմանների պահպանումը: Նրա կառուցվածքը հար և նման է բանակի կառուցվածքին, զորամասերը տեղաբաշխված են ծառայություն կատարելու վայրերում՝ կայազորային սկզբունքով: Սահմանների պահպանությունից ու գյուղում կարգ ու կանոնի պահպանումից բացի նրա պարտականությունների մեջ է մտնում գյուղական վայրերում հաշվառումը և զորակոչի իրականացումը, տրանսպորտային կոմունիկացիաների և կարևոր օբյեկտների (կամուրջներ, թունելներ և այլն) պահպանումը: Նրա կառույցի մեջ է մտնում այդ խնդիրն իրագործող ճանապարհային ոստիկանությունը:

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Իրանի վարչատարածքային բաժանման վերաբերյալ օրենքը մյուս օրենքների համեմատ ավելի հաճախակի է ենթարկվել փոփոխությունների:

Ներկայումս վարչական առումով ողջ երկիրը բաժանվում է 28 օսթանների (նահանգապետությունների), որոնց գլուխ են կանգնած օսթանդարները (նահանգապետերը): Օսթանդարը ղեկավարում է նահանգի բոլոր հասարակական-քաղաքական և տնտեսական գործերը, իրականացնելով կառավարության քաղաքականությունը: Այսպիսով օսթանը հանդիսանում է ԻԻՀ-ում ամենախոշոր վարչատարածքային միավորը: Նահանգները բաժանվում են շահրեսթանների (մարզ), որոնց գլուխ են կանգնած ֆարմանդարները (մարզպան): Վարչատարածքային բաժանման երրորդ մակարդակը՝ դա շրջաններն են (բախշերը), որոնք ղեկավարվում են բախշդարների կողմից: Գյուղական վայրերը բաժանվում են դեհիսթանների, կամ գյուղախմբերի՝ դեհդարի (գյուղապետ) գլխավորությամբ:

ԻԻՀ օսթաններն են. Թեհրան (կենտրոնը Թեհրան քաղաք). Խորասան (ք. Մեշհեդ). Սպահան (ք. Սպահան). Արևելյան Ադրբեջան (ք.

Թավրիզ). Արևմտյան Ադրբեջան (ք. Ուրմիա). Արդեբիլ (ք. Արդեբիլ). Խուզեստան (ք. Սիվազ.). Մազանդարան (ք. Սարի). Ֆարս (ք. Շիրազ). Գիլյան (ք. Ռեշտ). Քերման (ք. Քերման). Բախթարան (ք. Բախթարան). Դարտից ծոցի և Օմանի ծոցի առափնյա նավահանգիստների և կղզիների օպրան (ք. Բենդեր-Աբբաս). Սիստան և Բելուջիստան (ք. Զահեդան). Քուրստան (ք. Սենենդեջ): Օպրաններ են հանդիսանում նաև Բախթիարին ու Չհարմահալը, Սեմնանը, Մարքազի (կենտրոնական Օպրանը), Բոյերահմեդին ու Քոհգիլույեն, Համադանը, Լուրստանը, Իլամը Յեզդը, Զենջանը, Բուշեհրը Հորմոզգանը:

Օպրանների ներկայացուցիչներից կենտրոնում ստեղծվում է Օպրանների բարձրագույն խորհուրդ, որն իրավունք ունի տարբեր նախաձեռնություններով մտնել պառլամենտ և կառավարություն:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Իրանի Իսլամական Հանրապետության զինված ուժերի պատմությունը սկիզբ է առնում 1979թ. փետրվարից: Գալով իշխանության գլուխ, իսլամական ղեկավարությունը իր կառավարման առաջին իսկ ամիսներից իրականացրեց մի շարք միջոցառումներ ռազմական նոր քաղաքականության բնագավառում: Այսպես, զինված ուժերում ժամկետային ծառայության ժամկետը 2 տարուց իջեցվեց 1 տարվա, չեղյալ հայտարարվեցին ԱՄՆ-ից զենք և զինամթերք ներմուծելու վերաբերյալ մի շարք պայմանագրեր, իրանական բանակում դադարեցվեց ամերիկյան ռազմական խորհրդականների և մասնագետների գործունեությունը, դադարեցվեց Իրանում ռազմական օբյեկտների շինարարությունը, հաստատ կիսով չափ կրճատվեց ռազմական բյուջեն: Իրանը դուրս եկավ ՍԵՆՏՕ-ի բլոկի կազմից, դրանով իսկ արագացնելով նրա լրիվ քայքայումը:

Հետհեղափոխական Իրանում ռազմական շինարարության ծրագրերի ակտիվացման համար հզոր խթան հանդիսացավ Իրան-Իրաքյան պատերազմը: ԻԻՀ ռազմա-քաղաքական ղեկավարությունը կարողացավ համեմատաբար կարճ ժամանակաշրջանի ընթացքում իր ուշադրությունն ու ջանքերը կենտրոնացնել Իսլամական Հանրապետության նոր զինված ուժերի ստեղծման խնդիրների վրա:

Նախ, Իմամ Խոմեյնիի հանձնարարությամբ 1979թ. մայիսին ստեղծվեց իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ): Այն նախապես կազմվեց 10 հազար կամավորներից: Կորպուսի անդամները՝ փասդարները, որոնք ռազմադաշտում գործում էին ընչազուրկների մոբիլիզացման կազմակերպության (Սազման-ե բասիջ-ե մոստազաֆին, կրճատ՝ բասիջ) հետ համատեղ, ցուցադրեցին անձնազոհություն ու նվիրվածություն իսլամական հեղափոխության գաղափարներին:

Կառավարությունը անմիջականորեն զբաղվեց նաև բանակի վերակառուցման գործով: Ժամկետային ծառայության ժամկետը երկարացվեց 24 ամսվա, կարգավորվեց զինակոչման գործը, իրենց պաշտոններում մասնակիորեն վերականգնվեցին բանակից հեռացված շահական սպաները: Միաժամանակ ուժեղացվեց բանակի անձնակազմի իսլամականացման գործը: Զինված ուժերի բոլոր օղակներում արմատավորվեց և ամրապնդվեց իսլամական ներկայացուցիչների վարչական ինստիտուտը:

Կառավարության ձեռնարկած եռանդուն միջոցառումների շնորհիվ 1980-ից մինչև 1987թ. ընթացքում բանակի թվաքանակը աճեց կրկնակի անգամ և անցավ 400 հազարի սահմանագիծը: Բարելավվեց նաև բանակի մատակարարումը զենքով, զինամթերքով և ռազմական տեխնիկայով: Սեփական արդյունաբերական հզորությունների բազայի վրա սկսվեց զենքի մասնակի արտադրություն և վերանորոգում:

Կարևոր ուշադրություն է դարձվում իրանական բանակի մարտական ոգու բարձրացման հարցի վրա, այն համարելով հաղթանակ ձեռք բերելու ռեալ գործոն: Ոչ պակաս կարևոր ուշադրություն է դարձվում ժամանակակից ռազմական գիտության յուրացման հարցերին:

Անհրաժեշտ է նշել, որ ԻԻՀ բանակի զարգացման հետ զուգահեռ աներևակայելի արագ տեմպերով զարգանում էր նաև ԻՀՊԿ-ն: Այսպես, հետհեղափոխական տասը տարիների ընթացքում Կորպուսի անձնակազմի թվաքանակը աճեց ավելի քան 50 անգամ և 90-ական թվականների սկզբին հասավ կես միլիոնի: ԻՀՊԿ-ի ներկա կառուցվածքն իր մեջ ներառնում է զինված ուժերի հետևյալ տեսակները՝ ցամաքային զորքեր, ռազմա-օդային և ռազմա-ծովային ուժեր: Բացի այդ, ԻՀՊԿ-ի մեջ կազմակերպչորեն մտնում են «բասիջ» աշխարհազորի զորամասերը: Զենքի և մարտական տեխնիկայի մի շարք տեսակների հագեցվածութ-

յամբ ԻՊՀԿ-ն գերազանցում է բանակին: Այսպիսով, ԻՀՊԿ-ը կամավորական ջոկատներից վերածվել է հզոր կանոնավոր բանակի:

Հետևաբար ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետության զինված ուժերը իրենցից ներկայացնում են երեք կանոնավոր զինված կազմավորումների մի միասնություն, որի մեջ են մտնում. բանակը, բաղկացած ցամաքային զորքերից, ռազմա-օդային և ռազմա-ծովային ուժերից: Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը, որը նույնպես բաղկացած է զինված ուժերի երեք տեսակներից՝ ցամաքային զորքերից, ռազմա-օդային և ռազմա-ծովային ուժերից և վերջապես «բասիջ» անկանոն, աշխարհազորային տիպի զինված կազմավորումները: Վերջինս ստեղծված է ԻՀՊԿ-ի հովանու ներքո և գտնվում է նրա կառարյալ հսկողության տակ:

Իրանի կանոնավոր զինված ուժերը 90-ական թվականների սկզբին հաշվվում էին համարյա մոտ 1 միլիոն մարդ, անկանոն «բասիջ» կազմավորումները՝ 3 միլիոն և պատրաստված ռեզերվը՝ ավելի քան 5 միլիոն: Ընդամենը մոտ 10 միլիոն «իսլամի զինված մարտիկներ»:

ԻԻՀ ռազմական շինարարության հեռանկարային ծրագրերով նախատեսվում է ստեղծել «20 միլիոնանոց իսլամական բանակ»:

Ըստ ԻԻՀ ռազմա-քաղաքական դոկտրինայի, իրանական բանակի գլխավոր խնդիրն է ապահովել ազգային անկախության ու ինքնիշխանության պաշտպանությունը:

ԻԻՀ բանակը իր սպառազինությունը և մարտական տեխնիկան ապահովում է ինչպես սեփական արդյունաբերական հզորությունների, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին: Պետք է նշել, որ ԻԻՀ կառավարությունը կարևոր ուշադրություն է դարձնում իր ռազմաարդյունաբերական համալիրը մշտապես արդիականացնելու խնդրին:

Համաձայն Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության, երկրի ողջ զինված ուժերի գլխավոր հրամանատար է հանդիսանում շիիթական համայնքի հոգևոր առաջնորդը՝ Ֆաղիհը, որը միաժամանակ երկրի քաղաքական առաջնորդն է: Բոլոր ռազմական և ռազմաքաղաքական հարցերում բահբարը գործնականում ունի անսահմանափակ լիազորություններ: Բահբարին կից գոյություն ունի Ազգային անվտանգության Բարձրագույն խորհուրդ, (ԱԱԲԽ), որը հանդիսանում է խորհրդակցական մարմին: ԱԱԲԽ-ը մշակում է ռազմական շինարարության հարցերի վերաբերյալ հանձնարարականներ, առաջադրում է զին-

ված ուժերում բարձրագույն ղեկավար պաշտոնների թեկնածություններ, իր տեսակետներն է հայտնում պատերազմ հայտարարելու և խաղաղություն կնքելու հարցերում և այլն: ԱԱՊԽ-ն գլխավորում է ԻՀՀ նախագահը: Նրա կազմի մեջ մտնում է երկրի բարձրագույն ռազմա-քաղաքական ղեկավարությունը: ԱԱՊԽ-ն բաղկացած է երկու մասից՝ Պաշտպանության խորհուրդ և Անվտանգության խորհուրդ, որոնք նիստեր են գումարում ըստ անհրաժեշտության:

Բոլոր զինված ուժերի գլխավոր հրամանատարը նրանց ղեկավարումը իրականացնում է Գերագույն գլխավոր հրամանատարության շտաբի միջոցով, որին ենթարկվում են Բանակի միացյալ շտաբը, ԻՀՊԿ-ի Գլխավոր շտաբը և պատերազմական շրջանում՝ Հասարակական կարգի պաշտպանության ուժերի հրամանատարությունը, որի մեջ ժանդարմերիայի հետ համատեղ մտնում են նաև Իսլամական հեղափոխության կոմիտեն և ոստիկանությունը: Պաշտպանության նախարարությունը չի զբաղվում բանակի և ԻՀՊԿ-ի օպերատիվ ու մարտական պատրաստության հարցերով: Նրա իրավասության մեջ է մտնում միայն վարչական, տնտեսական և ֆինանսական հարցերի շրջանակը:

ԻԻՀ գերագույն գաղափարախոս է հանդիսանում երկրի Առաջնորդը (ռահբարը): Նա է իր գրասենյակի միջոցով ղեկավարում և ուղղություն տալիս երկրում, այդ թվում նաև զինված ուժերում, ողջ քաղաքական-գաղափարական աշխատանքին:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Իրանը հնագույն շրջանում: *Իրանը հնագույն և բարձր զարգացած քաղաքակրթության երկիր է: Նրա հնագույն բնակիչները առաջիններից մեկն էին, որ մուտք գործեցին պատմական առաջընթացի ուղին, դեռևս մ.թ.ա. III հազարամյակի սկզբին ստեղծելով իրենց գրությունը և պետական միավորումները: Հենց այդ նույն շրջանում, մ.թ.ա. IV-III հազարամյակներում ներկա Իրանի բազմաթիվ շրջաններում հողագործությունը հասել էր բարձր մակարդակի: Իրանում առաջին մետաղյա իրերը հայտնվել են մ.թ.ա. 6500 տարի առաջ:*

Մ.թ.ա. III հազարամյակի սկզբին Իրանի հարավ-արևմուտքում հայտնվեցին առանձին քաղաք պետություններ, իսկ քիչ ավելի ուշ, Կարուն գետի հովտում, Խուզեսթանի, Արևմտյան Լուրեստանի և Ֆարսի մի մասի տարածքում ձևավորվեց Էլամ պետությունը, որը մ.թ.ա. III-II հազարամյակների ընթացքում անընդհատ պատերազմներ էր մղում Միջագետքի ավելի զարգացած պետությունների՝ Շումերի, Աքքադի, Բաբելոնի ու Ասորեստանի դեմ: Քաղաքական առումով իր երկարատև պատմության նշանակալից ժամանակահատվածներում Էլամը բաղկացած էր համարյա անկախ թագավորություններից, որոնք արտաքին վտանգի դեպքում ստիպված էին համախմբվել:

Էլամական պետության ծաղկումը վերաբերում է մ.թ.ա. XIV-XIII դդ. Էլամը գտնվում էր Շումերի և Աքքադի մշակույթի ուժեղ ազդեցության ներքո, որը վկայված է բազմաթիվ փաստերով:

Իր ուժեղ հարևանների հետ տևական պատերազմների ընթացքում Էլամական պետության ուժերը նվազում ու հյուծվում էին և մ.թ.ա. 639թ. Ասորեստանի թագավորին հաջողվում է նվաճել ու հնազանդեցնել Էլամը: Մ.թ.ա. VII դ. սկզբին Էլամն անցավ Մեդական պետության իշխանության տակ և կորցրեց իր ինքնուրույնությունը:

Երկրի քաղաքական թատերաբեմում Էլամցիներին փոխարինելու են գալիս մարերը կամ մեդացիները, որոնք իրանական բարձրավանդակ

էին ներթափանցել II հազարամյակի վերջին և I հազարամյակի սկզբին և նախապես հիմնավորվել են Հյուսիս-Արևմտյան Իրանում:

Մեդական պետությունը ստեղծվեց Հյուսիս-Արևմտյան Իրանի և Ասորեստանի տարածքում մ.թ.ա. VII դ. վերջին՝ վեց ցեղերի միավորման ճանապարհով: 624 թ. մարերի թագավոր Կիյաքսարը (մարերեն Խուվախշտրա) պարտության մատնեց սկյութներին, որոնք ներխուժել էին Մեդիա և վերջնականապես միավորեց մեդական ցեղերին մեկ միասնական պետության մեջ, որի մայրաքաղաքը դարձավ Էկբաթանը (Ներկայիս Համադանը): Արդեն VII դ. կեսերին Մեդիան դարձավ խոշոր պետություն: Մեդացիները ստիպված էին մշտական պայքար մղել իրենց հարևանների՝ արևելքում քոչվորական ցեղերի, արևմուտքում՝ Ասորեստանի, Ուրարտուի և հին արևելյան այլ պետությունների դեմ: Մ.թ.ա. 616-615 թթ. Բաբելոնի դաշնակցությամբ Մեդիան կամ Մարաստանը կործանեց Ասորեստանը, գրավեց Մաննան և Ուրարտուն: Ըստ Մովսես Խորենացու, Ասորեստանի գրավման ժամանակ մարերին օգնել է հայոց թագավոր Պարույր Սկայորդին: Այնուհետև մարերը հնազանդեցրին իրանական ցեղերի հարավային ճյուղը հանդիսացող պարսու կամ պարսկական ցեղերին, որոնք բնակվում էին իրանական բարձրավանդակի հարավ-արևմուտքում: Հյուսիս-արևելքում համարյա մինչև Ամու-Դարյա գետն ընկած շրջանից մինչև Պարսից ծոց ընդգրկվեց մեդական թագավորության կազմի մեջ: Երբ 584թ. Կիյաքսար թագավորը մահացավ, նա որպես ժառանգություն Աստիագին թողեց մի հզոր պետություն: Մեդական ցեղերը հիմնականում զբաղված էին անասնապահությամբ, թեև երկրի մի շարք շրջաններում զարգացում ստացավ նաև երկրագործությունը:

Մ.թ.ա. մոտ 2000 և 1500 թ.թ. միջև ընկած շրջանում Իրանի տարածքում հայտնվեցին իրենց պրիացիներ անվանող հնդեվրոպական ցեղեր, որոնք հանդիսանում են պարսիկների և այլ իրանալեզու ժողովուրդների նախահայրերը: Նրանք Իրանի տարածք մուտք գործեցին հյուսիսից: Արիներ անունից է հավանաբար առաջացել Իրան անվանումը:

Մ. թ. ա. VIII դ. վերջին Պարսամաշ նահանգում (Զագրոսյան լեռների շրջանում) հին պարսիկները հիմնեցին իրենց պետությունը: Այդ ժամանակ նրանք ըստ երևույթին, կազմում էին ցեղային մի դաշինք, որը գլխավորում էին աքեմենյանների տոհմի առաջնորդները: 558 թ.

պարսկական ցեղերի թագավոր դարձավ Կյուրոսը (պարսկերեն Կուրուշ): 553 թ. նա ապստամբեց Մեդացիների թագավոր Աստիագի դեմ, որից պարսիկները գտնվում էին վասալական կախման մեջ: Պատերազմը տևեց երեք տարի և ավարտվեց պարսիկների կատարյալ հաղթանակով: 550 թ. նվաճելով Մեդական պետությունը, Աքեմենյանները այնուհետև գավթեցին Ասորեստանը, Հայաստանը և Կապադովկիան, Էգեյան ծովի ափի և փոքր Ասիայի հունական հարուստ քաղաք-պետությունները, Բաբելոնը, Սիրիան, Պաղեստինը, Խորեզմը, Սոդդիանան, Բակտրիան: Կյուրոսի որդու՝ Քյամբիզի կառավարման շրջանում նվաճվեց Եգիպտոսը, որը 525թ. վերածվեց պարսկական սատրապության: Աքեմենյանների պետությունը առավել մեծ հզորության հասավ Դարեհ I-ի (521-485թթ. մ.թ.ա.) օրոք, երբ իրագործվեցին մի շարք քաղաքական ու տնտեսական բարեփոխումներ, մասնավորապես կարգավորվեց հարկային համակարգը, պետությունը հատեց իր սեփական դրամը և այլն: Ցեղային ազնվականության հետ միաժամանակ Աքեմենյանների պետության մեջ ազդեցիկ իշխանություն ունեին նաև քրմերը, զորապետերը և խոշոր վաճառականները:

519-512 թ.թ. միջև ընկած շրջանում պարսիկները նվաճեցին Թրակիան, Մակեդոնիան և Հնդկաստանի հյուսիս-արևմտյան մասը: Այսպիսով, մ.թ.ա. VI դ. վերջին Աքեմենյան պետության տահմանները տարածվում էին արևելքում Հինդոս գետից մինչև արևմուտքում Էգեյան ծով, հյուսիսում Հայաստանից մինչև հարավում Նեղոսի առաջին տահանքը:

Մակայն շուտով սկսվեց պարսկական պետության թուլացումը: Դարեհ I-ի պայքարը Փոքր Ասիայի Արևմուտքում առևտրական ճանապարհները ձեռք բերելու համար, հանգեցրին Աթենքի հետ բախման: Հույն-պարսկական պատերազմների ժամանակ (V դ. առաջին կես) պարսիկները թե՛ ցամաքում և թե՛ ծովում կրեցին մի շարք խոշոր պարտություններ: V դարում Եգիպտոսը, Բաբելոնը, Մեդիան, Փոքր Ասիայի նահանգները և այլ երկրներ բազմիցս ապստամբեցին պարսիկների դեմ, որոնց հետևանքով վերջիններս սկսեցին կորցնել տարածքներ:

Ռազմական պարտությունները ստիպեցին աքեմենյան թագավորներին արմատապես փոխել իրենց դիվանագիտությունը և այսուհետև լայնորեն կիրառել մեկ պետությունը մյուսի դեմ հրահրելու քաղաքականությունը, որպես ազդու զենք օգտագործելով կաշառքը: Հունաստանի թուլացման մեջ շահագրգռված Պարսկաստանը Պելոպոնեսյան

պատերազմի ժամանակ օգնում էր մեկ Սպարտային, մեկ Աթենքին: 449թ. պարսիկները խոշոր դրամական փոխհատուցմամբ հաշտեցին աթենքցիներին հրաժարվել ապստամբած եգիպտացիներին օգնություն ցուցաբերելուց և այդ նույն թվականին նրանց հետ կնքեցին «հավերժական դաշնագիր», ըստ որի իրենք ստիպված էին ճանաչել փոքրասիական հունական քաղաք-պետությունների և Էգեյան ծովում բոլոր կղզիների անկախությունը:

Մ.թ.ա. 358թ. Պարսկաստանի թագավոր դարձավ Արտաքսերքսես III-ը, որը եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ պետության նախկին սահմանների վերականգնման գործին: Փոքր Ասիայում և Սիրիայում ճնշվեցին բազմաթիվ ապստամբություններն ու խռովությունները, վերականգնվեց պարսկական տիրապետությունը Եգիպտոսում և Կիպրոսում: Սակայն մ.թ.ա. 337թ. Արտաքսերքսես III-ի այդ գործունեությունը վերջ գտավ. նա իր անձնական բժշկի կողմից թունավորվեց ու մահացավ: Գահ բարձրացրին Արտաքսերքսես III-ի որդուն՝ Արսեսին, որը շուտով (336թ. հունիսին) դարձավ նոր դավադրության զոհ և իր ողջ ընտանիքի հետ սպանվեց: Այժմ պալատական ավագանին գահ բարձրացրեց Հայաստանի սատրապ Կոդոմանին, որն ընդունեց Դարեհ II գահակալական անունը:

Այն ժամանակ, երբ պարսկական ավագանու վերնախավը զբաղվում էր պալատական սադրանքներով և հեղաշրջումներով, քաղաքական ասպարեզում հայտնվեց մի վտանգավոր հակառակորդ: Հունական պետությունների միավորման գործընթացը, որն ուժեղացավ Մակեդոնիայի թագավոր Ֆիլիպի օրոք, Աքեմենյանների համար առանձնակի սպառնալից չափեր ընդունեց Ալեքսանդր Մակեդոնացու օրոք (մ.թ.ա 356-323թթ.): Մ.թ.ա. 334թ. գարնանը Ալեքսանդրի մակեդոնական բանակը արշավանքի դուրս եկավ Պարսկաստանի դեմ: Այդ բանակը բաղկացած էր 30.000 հետևազորից և 5000 հեծյալներից:

Թեև Դարեհն իր տրամադրության տակ ուներ ավելի բազմամարդ բանակ, սակայն այն իր մարտական հատկանիշներով խիստ զիջում էր մակեդոնական բանակին:

Մ.թ.ա. 334թ. գարնանը Գրանիկա գետի մոտ պարսկական բանակը մակեդոնացիներից կրեց իր առաջին պարտությունը, որին հետևեց 333թ. հոկտեմբերին նոր պարտությունը Իսսայի մոտ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 331թ. հոկտեմբերի 1-ին Սիրիայում Գաուգա-

մեկա կոչված վայրում, որտեղ պարսիկները կրեցին կատաղյալ պարտություն և այլևս ի վիճակի չէին մակեդոնական բանակին ցույց տալ կազմակերպված դիմադրություն: Այդ ճակատամարտից հետո Ալեքսանդր Մակեդոնացու զորքերը գրավեցին Բաբելոնը, Պարսկաստանի գլխավոր քաղաքներ Սուզիանան, Էկբաթանը, իսկ ապա Պերսիդան (Ներկայիս Ֆարսի նահանգը), որտեղ գտնվում էր աքեմենյան թագավորների Պարսա մայրաքաղաքը, որը պատմության մեջ առավել հայտնի է Պերսեպոլիս անվանումով: Ի վերջո ողջ Աքեմենյան պետության տարածքը անցավ Ալեքսանդր Մակեդոնացու գերիշխանության տակ: Ջախջախելով պարսկական պետությունը, հույները ստեղծեցին մի հսկայական ռազմա-ստրկատիրական կայսրություն, որն արևելքում տարածվում էր մինչև Հնդկաստան: Ըստ էության դա նոր համաշխարհային կայսրություն էր: Սակայն նրա հիմնադրի՝ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից (մ.թ.ա. 323թ.) անմիջապես հետո այն քայքայվեց ու տրոհվեց բազմաթիվ ստրկատիրական պետությունների, որոնց զարգացման մեջ կարևոր դեր էին խաղում հույները (հելլենները): Ուստի այդ պետությունների տիրապետության դարաշրջանը ընդունված է անվանել հելլենիստական: Արևմուտքում Սիրիայի, Փյունիկիայի և Փոքր Ասիայի տարածքում, իսկ արևելքում մինչև Հինդոս գետը կազմակերպվեց մի պետություն Ալեքսանդրի զորահրամանատարից մեկի՝ Սելևկ Նիկատորի գլխավորությամբ: Ուստի այդ դարաշրջանն էլ ընդունված է անվանել հելլենիզմի դարաշրջան: Աքեմենյանների նախկին պետության հիմնական սատրապությունները մտան Սելևկյան պետության կազմի մեջ: Հնդկաստանից մինչև Էգեյան ծովի ափերը ընկած տարածքների առևտրական ու ռազմավարական ճանապարհների վրա սելևկյանները ստեղծեցին քաղաք-ամրոցների մի ամբողջ համակարգ:

Սակայն հույների համար շատ դժվար էր միասնական պետության կազմում պահպանել այդպիսի լայնատարած տարածք: Մ.թ.ա. 281թ. սելևկյանների պետության հիմնադրի մահվանից հետո նրա ժառանգորդները ստիպված էին լարված պայքար մղել ինքնուրույնության ձգտող տեղական ժողովուրդների տոհմիկ ազնվականության դեմ: Սելևկյանների համար առանձնակի մեծ վտանգ ներկայացրեց պետության արևելյան շրջաններում ապարն (կամ պարթև) ցեղի ապստամբությունը, որն ընդգրկեց Կասպից ծովի ողջ հարավ-արևելյան ծովափը և Միջին Ասիան:

Ապարների ապստամբության հետևանքով նրանց հայրենիքում՝ Պարթևստանում ստեղծվեց Արշակունիների պետությունը (մ.թ.ա. մոտ 248/247-մ.թ.ա. 224թթ.): Այդ դինաստիայի և պետության հիմնադիրը Արշակ Մեծն էր (մ.թ.ա 247-212թթ.): Հաճախակի միաժամանակ Միջին Ասիայում և ժամանակակից Աֆղանստանի տարածքում ստեղծվեց Հույն-Բակտրիական պետությունը:

Սկզբնական շրջանում Պարթևստանը ստիպված էր ճանաչել Սելևկյանների գերագույն իշխանությունը: Սակայն Սելևկյանների պետության թուլացման և Հույն-Բակտրիական թագավորության տրոհման ու քայքայման դարաշրջանում պարթևները վճռական քայլեր կատարեցին իրենց տարածքների ընդլայնման և անկախության ամրապնդման ուղությամբ: Միհրդատ I-ի օրոք (մ.թ.ա 150-139թ.թ.) պարթևները նվաճեցին Մեդիայի (Մեդական պետության) մեծ մասը, իսկ ապա Բաբելոնը, Պերսիդան, Հայաստանը և մի շարք այլ նահանգներ: Այսպիսով պարթևական պետությունը գրաղեցնում էր յայնաձավալ մի տարածք: Արշակունիները ձգտում էին իրենց տիրույթներն ընդլայնել նաև ի հաշիվ Արևմտյան Արաբիայի, Փոքր Ասիայի և եգիպտոսի, այսինքն իրենց տիրույթները հասցնել այնպիսի սահմանների, որ ժամանակին ուներ Աքեմենյան պետությունը: Արևելքում պարթևական թագավորությունը շփման մեջ մտավ Չինաստանի հետ: Մ.թ.ա. II դարի կեսերից հյուսիսում Արշակունիները ստիպված էին հետ մղել հոների հարձակումները: Մեծագույն VII Միհրդատի զորքերի նկատմամբ հաղթանակ տանելուց հետո (մ.թ.ա. 129թ.) պարթևները վերջնականապես քանդեցին Արևելքում Սելևկյանների իշխանությունը:

Պարթևական հասարակության մեջ հունական ավանդույթները պահում էին իրենց կենսունակությունը. պետական գրասենյակներում պաշտոնական լեզուն շարունակում էր մնալ հունարենը, թեև ավելի ուշ շրջանում, թագավորող տոհմի մեկ այլ պարթևական դինաստիայով փոխարինվելուց հետո օգտվում էին պարթևական լեզվից կամ պահլավերենից: Պարթևական արքունիքի հիմնական հենարանը քոչվորական ցեղերն էին: Քաղաք-ամրությունները կորցրին իրենց նախկին նշանակությունը:

Պետության արևելքում պարթևները ստիպված էին ծանր պայքար մղել սաք կոչված ցեղերի դեմ, իսկ հյուսիս-արևելքում՝ մասագետների դեմ: Սակայն առավել հզոր ուժը, որը Պարթևստանի հետ մտավ հակամարտության մեջ, դա Հռոմեական հանրապետությունն էր:

Իր հզորության գագաթնակետի շրջանում պարթևական կայսրությունը տարածվում էր արևելքում Հինդուկուշի լեռնաշղթայից մինչև արևմուտքում Եփրատ գետը: Պետության կազմի մեջ մտնող հունական քաղաք-պոլիսները պահպանում էին իրենց հարաբերական անկախությունը, իսկ մի շարք հողեր՝ Ատրպատականը, Էլամը և Պերսիդան (Ֆարսը), ինչպես նաև հարավում մի շարք տարածքներ գտնվում էին պարթևներից վասալական կախման մեջ:

Պարթևստանի քաղաքական հակամարտությունը Հռոմի հետ, որի մեջ ընդգրկված էին նաև մի շարք նվազ հզորություն ունեցող պետություններ, ինչպիսին, օրինակ, Հայաստանն էր, շարունակվեց երեք հարյուրամյակից ավել: Մ.թ.ա. 53 թ. Հայոց թագավոր Արտավազդ Բ-ն Հռոմի հետ դաշինք կնքեց պարթևաց թագավոր Որոդես II-ի (Մ.թ.ա. 56-37) հետ: Մ.թ.ա 50-40-ական թ.թ. հայ-պարթևական զորքերը արշավեցին Ասորիք, Փյունիկիա և Պաղեստին: Մ.թ. 54-64-ին պարտության մատնեցին հռոմեական զորքերին և Հայաստանի թագավոր ճանաչվեց պարթևաց արքա Վաղարշ I-ի եղբայր Տրդատ II: Սասանյանների ցեղը քախքախեց ներքին երկպառակություններից ու համարյա անվերջ արտաքին պատերազմներից թուլացած պարթևների պետությունը: 224 թ. Իրանի Ֆարս նահանգում ապստամբություն բռնկեց պարթևների դեմ և քրմապետ Սասանի թոռ Արտաշիր I-ը հիմնեց Սասանյանների պետությունը, որը գոյատևեց մինչև VII դարը:

Արշակունիների տիրապետության շրջանում կրոնը զրադաշտականությունն էր, նախնիների, արևի, լուսնի, ինչպես նաև հունական աստվածությունների պաշտամունքի հետ խառը տարրերով: Կանայք մեկուսացվում էին տղամարդկանց հասարակությունից և գլխներին կրում էին ծածկոց: Ընդհանուր գործածական լեզուն պարթևերենն էր, որն հետագայում ստացավ պահլավերեն լեզու անվանումը:

Իրանը միջին դարերում: Մ.թ. 224 թ. հարավ-արևմտյան Իրանում (Ներկա Ֆարսում) պարթևների դեմ ապստամբեց երկրի մանր տիրակալներից մեկը՝ Արտաշիր Պապականը, որը վերջ տվեց ներքին հակասություններից թուլացած պարթևական դինաստիային և Իրանում սկիզբ դրեց մի նոր դինաստիայի՝ Սասանյանների հարստությանը (Նոր դինաստիայի հիմնադրի պապ Սասանի անունով) : Արտաշիրին հաջողվեց տարածել իր իշխանությունը ոչ միայն ողջ Ֆարսի նկատմամբ, այլև հետագայում նաև ողջ Իրանի նկատմամբ: Մ.թ. 224թ. ռազմական հաղ-

թանակ տանելով պարթևական Արտաբան V թագավորի նկատմամբ, Արտաշիրը ձեռնամուխ եղավ Պարթևստանից կախում ունեցող ոչ մեծ թագավորությունների նվաճմանը: 226թ. Արտաշիրը գրավեց Տիգրիսի ափին գտնվող պարթևական պետության մայրաքաղաք Տիզբոնը (Բուեսիֆոն): Հետագայում Արտաշիրին հաջողվեց իրեն ենթարկել Միջագետքը, Մեդիան, Ատրպատականը, Սաքաստանը, Խորասանը և այլ հողեր: Դրանից հետո Արտաշիրը իրեն ենթարկեց այն բոլոր տարածքները, որոնք նախկինում մտնում էին Պարթևական պետության կազմի մեջ:

Արևմուտքում Սասանյանների հիմնական թշնամին Հռոմեական հանրապետությունն էր, որի հետ նրանք մղում էին դաժան պայքար Սիրիայի, Միջագետքի, Հայաստանի և Անդրկովկասի նկատմամբ տիրապետություն ձեռք բերելու համար: Այդ պայքարի ընթացքում Սասանյանները բազմիցս փայլուն հաղթանակներ էին տանում հռոմեացիների նկատմամբ: Կայսրության հյուսիս-արևելքում Սասանյանները անընդմեջ պայքար էին մղում Կենտրոնական Ասիայում պետական կազմավորումների դեմ, իսկ Կովկասում՝ ալանների, խազարների և այլ ժողովուրդների դեմ, որոնք հաճախակի ներխուժումներ էին կատարում Անդրկովկասի և Ատրպատականի տարածքները:

Սասանյան պետությունը առավել մեծ հզորության հասավ Շապուհ I-ի օրոք (241-272 թ.թ), որի կառավարման շրջանում խոշոր հաղթանակներ ձեռք բերվեցին Հռոմի նկատմամբ: Շապուհ I գրավեց հարուստ Անտիոքը և հասավ մինչև Միջերկրական ծովի ափերը: Նրա երկրորդ արշավանքը (256-259 թթ.) էլ ավելի հաջող էր. գերի վերցվեց ինքը հռոմեական կայսր Վալերիանը մեծաթիվ զորքերի հետ միասին: Այդ գերիները օգտագործվեցին Կարուն գետի վրա ջրամբարտակի և շլուզների կառուցման համար: Այդ շրջանում Սասանյանների իշխանության տակ էին գտնվում Իրանը, Անդրկովկասը և Միջին Ասիայի մեծ մասը: Պայքարը Հռոմի, իսկ ապա Բյուզանդիայի և Սասանյանների միջև ընթանում էր Փոքրասիայի հաջողությամբ: Այդ երկիարյուրամյա պայքարի հետևանքով 428 թվականից Հայաստանի արևելյան մասը վերածվեց Սասանյան Իրանի նահանգի: Հայ ժողովուրդը բազմիցս ապստամբում էր Սասանյան լծի դեմ: Այսպես, 451 թ. տեղի ունեցավ հայերի ապստամբություն Սասանյանների դեմ (Ավարայրի ճակատամարտը): Այդ նույն շրջանում Սասանյանների դեմ ընդվզումներ տեղի ունեցան նաև

Վրաստանում և Ազվանքում: Խիրի թագավորությունը (Արարատ) ևս հանդիսանում էր Սասանյանների վասալը: Շապուհ II-ի օրոք (309-379 թթ.) Սասանյանները արևելքում ջախջախեցին հզոր Քուշանական կայսրությունը:

V-VI դարերում արևմուտքում և հյուսիս-արևմուտքում Սասանյանները շարունակում էին պայքարը Հռոմի ժառանգորդ Բյուզանդիայի դեմ: Կայսրության հյուսիս-արևելքում VI դ. վերջից սկսած Սասանյաններին առանձնակի անհանգստություն սկսեցին պատճառել Միջին Ասիայի թյուրքերը:

Սասանյան շահնշահերը, աքեմենյան թագավորների նման, ունեին հսկայական իշխանություն: Սակայն դրանով հանդերձ պետության կառավարման գործում նշանակալից դեր էին խաղում տոհմիկ ազնվականությունը, զորապետներն ու քրմերը: Կարևորագույն պետական որոշումները կայացվում էին պալատական երևելիների խորհրդում:

V դարից սկսած Սասանյանների իշխանությունը կայուն կերպով ամրապնդվեց Կասպից ծովի ափերին և Սասանյանները հսկողություն սահմանեցին քարավանային մեծ ճանապարհի նկատմամբ, որը Չինաստանը կապում էր Միջին և Առաջավոր Ասիայի և Բյուզանդիայի հետ: Սասանյանները իրենց ձեռքը վերցրին նաև ծովային առևտուրը Մերձավոր Արևելքի, Հնդկաստանի ու Չինաստանի միջև:

Ներքին քաղաքականության բնագավառում Սասանյանները վարում էին տեղական ժողովուրդների ու կառավարիչների կողմից անկախության ու ինքնուրույնության ամեն տեսակի դրսևորումների դեմ դաժան պայքարի քաղաքականություն:

Սասանյան պետությունը դարձավ հարաբերականորեն կենտրոնացված պետություն, որի գլուխ էր կանգնած շահին շահը: Թագավորից հետո կայսրության մեջ ամենակարևոր դեմքերը հոգևորականության ղեկավարն էր, զորքերի հրամանատարը և այն աստիճանավորը, որը վերահսկում էր երկրի ֆինանսները և սենդամթերքները: Ողջ կայսրությունը բաժանված էր 18 նահանգների՝ սատրապությունների, որոնք կառավարում էին անձամբ թագավորի կողմից նշանակված սատրապները կամ մարզպանները:

Սասանյան պետության պաշտոնական կրոնը զրադաշտականությունն էր: Ըստ այդ ուսմունքի, հին պարսիկների գերագույն աստվածություն Ահուրա Մազդան հայտարարվել էր որպես բարի սկիզբ, պայքարի մեջ մտնելով չար սկզբի՝ Ահրիմանի հետ: Զրադաշտական ուս-

մունքի մեջ բարու ու չարի միջև պայքարը գրավում էր կենտրոնական տեղ: Զրադաշտականությունից բացի, Սասանյաններին ենթակա երկրներում տարածում գտան նաև քրիստոնեությունը, բուդդայականությունը, հուդայականությունը, տաբեիզմը, իսկ III դ. կեսերից նաև մանիքեականությունը: Առաջին սասանյան թագավորները պահպանում էին հանդուրժողականություն այլ կրոնների և նրանց հետևորդների նկատմամբ, սակայն հայտնի է, որ Վահրամ (Բահրամ) II-ի (276-293 թթ.) կառավարման շրջանում «մոգպետաց մոգպետ» Քարթիրը կազմակերպեց քրիստոնեության, բուդդայականության և մանիքեականության հետևորդների հալածանքներ: Այդ հալածանքները, կրոնական անհանդուրժողականությունը և զրադաշտականության բռնի տարածումը V-VI դարերում Հայաստանում, ինչպես նաև Իբերիայում և Աղվանքում առաջ էին բերում ապստամբություններ ու ընդվզումներ սասանյան տիրապետության դեմ:

Հայ Արշակունի թագավորները պայքարում էին Սասանյանների դեմ՝ նրանց համարելով դինաստիական հակառակորդներ: Սասանյանները, ինչպես նշվեց, իրենց հերթին ձգտել են նվաճել Հայաստանը: 387 թ. Իրանը և Հռոմեական կայսրությունը Հայաստանը բաժանեցին միմյանց միջև: 428 թ. Սասանյանները իրենց տիրապետության տակ գտնվող մասում վերացրին հայկական պետականությունը:

Սասանյանների կառավարման շրջանում առավել նշանակալից ու աչքի ընկնող սոցիալ-քաղաքական շարժում հանդիսացավ Մազդակի և նրա հետևորդների ելույթը: Մազդակյան շարժումը (V դարի վերջ VI դ. սկիզբ) կրում էր շեշտված սոցիալական բնույթ: Մազդակը կոչ էր անում վերականգնել նախապետական համայնքը և դատապարտում էր գույքային անհավասարությունը: Սասանյան Կավադ թագավորը, ձգտելով թուլացնել ազնվականության ազդեցությունը, աջակցում էր Մազդակին ու նրա կողմնակիցներին, որը և պատճառ հանդիսացավ նրա գահի կորստին (496 թ.): Իր փեսայի կողմից կազմակերպված պալատական հեղաշրջման հետևանքով ենթարկվելով բանտարկության և ապա փախչելով ազատագրվումից, Կավադը ապաստան գտավ հոն-էֆթալիթների մոտ, որոնց օգնությամբ 499 թ. նա իրեն վերադարձրեց գահը: Վերստին դառնալով թագավոր, Կավադը դաժան հալածանքներ ձեռնարկեց տոհմիկ ազնվականության այն մասի նկատմամբ, որն իր հանդեպ տրամադրված էր թշնամաբար: Նրանց հողերի նշանակալից մասը

հանձնվեց մանր և միջին հողատերերին («ազատներին»), որոնք տոհմիկ ազնվականության դեմ պայքարում հանդիսանում էին Կավադի հիմնական սոցիալական հենարանը: Սակայն Կավադը փոխեց իր վերաբերմունքը Մազդակի նկատմամբ, որի աջակցության կարիքը նա այլևս չուներ: Կավադի որդու՝ Խոսրով I (531-578թթ.) հրամանով 529թ. Մազդակը մահապատժի ենթարկվեց: Սասանյանների պետությունը իր ծաղկման գագաթնակետին հասավ VIդ.

Խոսրով I կառավարման շրջանում իրագործվեցին մի շարք սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումներ. կարգավորվեց հողային հարկման ու շնչահարկի համակարգը, իրականացվեց ռազմական ռեֆորմ և այլն: Իրանը բաժանված էր վարչական 4 միավորի՝ քուստակների: Հայաստանի՝ Իրանին անցած արևելյան մասը, իբրև մարզպանություն, մտնում էր Հյուսիսային քուստակի մեջ:

Իրանի ձուլման քաղաքականությունը հանգեցրեց ապստամբությունների (Վարդանանց պատերազմ 481-484, Վարդան Մամիկոնյան (Կարմիր):

VI դարում պարսկա-բյուզանդական պատերազմների հետևանքով Հայաստանը 591թ. երկրորդ անգամ բաժանվեց Իրանի և Բյուզանդիայի միջև: Խոսրով I-ի բարեփոխումները նպաստեցին քաղաքների աճին և արհեստագործական ու գյուղատնտեսական արտադրության ընդլայնմանը: Խոսրովն աշխատում էր թուլացնել զորաշտական քոմերի, ինչպես նաև ազնվականության այն մասի տնտեսական ու քաղաքական դիրքերը, որոնք աշխատում էին սահմանափակել թագավորի իշխանությունը:

Պետության ամրացումը և Խոսրով I շրջանում համեմատական տնտեսական վերելքը Սասանյաններին հնարավորություն տվեցին ժամանակավորապես նվաճել Անտիոքը, գրավել Յեմենը և Կենտրոնական Ասիայում հայտնված թուրքերի հետ դաշնակցելով քախջախել էֆթալիթներին: Խոսրով II (590-628) կառավարման վերջին տարիներին սասանյան բանակը կրկին գավթեց Անտիոքը, ինչպես նաև Դամասկոսն ու Երուսաղեմը:

616թ. (կամ 619թ.) նա ներխուժեց Եգիպտոս:

Սակայն այդ բոլորով հանդերձ, Սասանյանների պետության մեջ սոցիալական ու քաղաքական հակասությունները, ամատատերերի կենտրոնախույս ձգտումները ավելի ու ավելի հաճախակի էին զգացնել տալիս իրենց:

Սասանյանների համար առավել վտանգավոր հանդիսացավ արաբական ցեղերի շարժումը, որոնք միավորվել էին նոր կրոնի՝ իսլամի հենքի վրա: Միջերկրական ծովի ափին գտնվող Սասանյանների տիրույթները առաջիններից մեկն էին, որոնք հանդիսացան իսլամի դրոշի ներքո իրականացված արաբական արշավանքների օբյեկտ:

Արդեն իսլամի հիմնադիր և արաբական մահմեդական պետության ստեղծող Մուհամմեդի (մահացել է 632թ.) առաջին հետնորդների՝ Աբու-Բաքր (632-634 թթ.), Օմար (634-644 թթ.) և Օսման (644-656) խալիֆների օրոք նոր հողերի նվաճումը դարձավ արաբական մահմեդական պետության քաղաքականության անբաժանելի մասը: Կադիսիի (637թ.) և Նեհավենդի մոտ արաբների հաղթանակները (642թ.) պարսկական զորքերի նկատմամբ վիթխարի վնաս հասցրին Սասանյանների հզորությանը, առաջ բերելով կայսրության քայքայում: Սակայն Իրանի, Միջին Ասիայի, Անդրկովկասի և մյուս երկրների ժողովուրդները հերոսական դիմադրություն էին ցուց տալիս արաբական արշավանքներին: Արաբներին պահանջվեց ավելի քան 10 տարի, որպեսզի նվաճեն նախկին Սասանյան կայսրության տարածքը: Իրանը դարձավ Արաբական խալիֆայության նահանգներից մեկը: Իրանին պարտադրվեց արաբների կրոնը՝ իսլամը:

Արշավանքների ժամանակ կողոպտված շարժական գույքը և թանկարժեք իրերը հիմնականում բաժանվում էին արաբ-զինվորների միջև որպես ռազմական ավար: Այդ նույն կերպ վարվում էին գերիների նկատմամբ: Բացառություն էր կազմում այդ գույքի մեկ հինգերորդ մասը, որը պետք է ուղարկվեր խալիֆի գանձարանը: Զավթված երկրներում հողը դիտվում էր որպես «ֆայ»՝ ողջ համայնքի ընդհանուր ստացվածք: Տեղական ավատատերերից արաբները գանձում էին հողային հարկ՝ «խարաջ» հօգուտ գանձարանի:

Իրանական ավատատերերի՝ դիհգանների կողմից մահմեդականության ընդունումը, իրանցի ռազմագերիների մեծ թվի առկայությունը, արաբների կողմից իրանական ատոհճանավորների օգտագործումը նոր պետական ապարատ ստեղծելու գործում արդեն արաբական մահմեդական պետության՝ խալիֆաթի գոյության առաջին տասնամյակներին սասանյան հասարակության ունևոր խավերի համար ճանապարհ բաց արին դեպի նոր պետության քաղաքական կյանքը, թեև անշուշտ որոշ սահմանափակումներով:

Իրանցիները հատկապես կարևոր դեր սկսեցին խաղալ Մուհամմեդի մահվանից հետո իշխանության համար արաբական ազնվականության երկու խմբավորումների միջև ծավալված պայքարի ընթացքում: Միրիայի կառավարիչ Մուավիի, որին աջակցում էին սիրիական արաբները և Մուհամմեդի փեսա Ալիի, որի կողմնակիցներն էին Իրաքի արաբները, միջև բորբոքված երկպառակտական պայքարի ընթացքում շատ իրանցիներ հանդես էին գալիս որպես վերջիններիս կողմնակիցներ: Ալիի և նրա կողմնակիցների քաղաքական խմբավորումը, որին նախապես անվանում էին «շիաթ Ալի», այսինքն «Ալիի կուսակցություն կամ խմբավորում», նպաստում էր շիիզմի կրոնական ու քաղաքական հոսանքի ձևավորմանը, մի հոսանք, որը լայն տարածում ձեռք բերեց Խորասանում, Գիլյանում և Իրանի այլ շրջաններում: Այդ պայքարից հաղթող դուրս եկավ Մուավին, որը 661թ. Ալիի սպանությունից հետո դարձավ պետության գլուխ, հիմք դնելով մի դինաստիայի կառավարման, որը հայտնի է Օմայանների դինաստիա անունով:

Իրանական բազմաթիվ շրջանների բնակիչներ, որոնք դժգոհ էին իրենց նկատմամբ սահմանված լծի ուժեղացումից, ակտիվորեն աջակցում էին շիաների և այլ ընդդիմադիր հոսանքների շարժմանը: Իրանի հյուսիս-արևելքում գտնվող լայնատարած Խորասանի շրջանը դարձավ մի վայր, որտեղ VIIդ սկզբին տեղափոխվեց հակաօմայան շարժումը: Շիաները ակտիվորեն մասնակցում էին այդ շարժմանը, որի մեջ միավորված էին Օմայաններից դժգոհ ուժերը, ընդորում ինչպես արաբներ, այնպես էլ իրանցիներ: Առավել հուժկու հակաօմայան ելույթ հանդիսացավ Աբու Մուսլիմի (իսկական անունը Բեհզադ) գլխավորությամբ բռնկված զինված ապստամբությունը, որը սկսվեց 747թ. Մերվի շրջանում: Այն նախապատրաստվեց գահի նկատմամբ հավակնություն ունեցող Աբբասյանների տոհմի (որոնք հանդիսանում էին Մուհամմեդի հորեղբոր ժառանգորդներ) ակտիվ աջակցությամբ: Այդ ապստամբությունն ավարտվեց Օմայանների կատարյալ պարտությամբ և նրանց պետության փլուզմամբ (750թ.)

Օմայան դինաստիայի անկման հետևանքով իշխանության գլուխ եկան Աբբասյանները (750-945թթ.), որոնց կառավարման շրջանում խալիֆայի հասարակական-քաղաքական կարգի մեջ տեղի ունեցան որոշակի տեղաշարժեր: Նախ ամրապնդվեց պետական իշխանությունը: Հատուկ ուշադրություն դարձվեց հարկահավաքման գործի կարգավոր-

ման և դատական համակարգ ստեղծելու հարցի վրա: Արաբական ցեղերի ազնվականությունը զրկվեց այն արտոնություններից, որոնցից նա անբաժան կերպով օգտվում էր Օմայանների ժամանակ: Մավալիները (այդպես էին անվանում խալիֆաթում ոչ արաբ ազատ մահմեդականներին) ձեռք բերեցին արաբների հետ հավասար քաղաքական իրավունքներ: Եթե Օմայանների ժամանակ պետական կառույցների վրա մեծ ազդեցություն ունեին արաբական քոչվոր ցեղերի շրջանում գոյություն ունեցող նահապետական ցեղային ինստիտուտները, ապա Աբբասյանների շրջանում ավարտվեց անցումը կառավարման կարգավորված քաղաքացիական համակարգին չինովնիկների մշտական ապարատի առկայությամբ:

Աբբասյանների շրջանում ժողովրդական զանգվածների վիճակը չբարելավվեց, այլ ընդհակառակը, պետական իշխանության ամրապնդման և ավատական շահագործման ուժեղացման հետևանքով վատթարացավ: VIII դ. երկրորդ կեսին և IX դ. սկզբին ողջ խալիֆաթով մեկ կրկին ծայր առան ապստամբական շարժումներ՝ ուղղված կենտրոնական իշխանության դեմ: Այդ ելույթների հետևանքով Իրանի ու Միջին Ասիայի տարածքում ծնունդ առան խալիֆաթից անվանապես կախման մեջ գտնվող մի շարք ավատական պետություններ, որոնցից առավել հզորներն էին Թահիրիդների պետությունը Խորասանում, Սաֆարիդներինը՝ Սիստանում և Սամանիդներինը Մավերաանահրում:

IX-X դարերում Իրանի մերձկասպյան նահանգներում ծնունդ առան նոր ավատական պետություններ, որոնց հիմնադիր հանդիսացան միջնադարյան Գիլանի լեռնային շրջանների (Դեյլեմա) ժողովուրդները: Դեյլեմցիները հանդիսացան այն քաղաքական ուժը, որը փաստորեն վերջ դրեց Աբբասյանների ազդեցությանը Արևմտյան ու Կենտրոնական Իրանում: X դ. սկզբին դեյլեմցիներն ընդգրկվեցին հարավային մերձկասպյան նահանգներում Սամանիդների կամ Սամանյանների (874-999 թթ.) և Ալիդների շիիթական դինաստիաների միջև ծավալված քաղաքական պայքարի մեջ: Այդ պայքարից դուրս գալով որպես հաղթանակածներ, դեյլեմցիները կազմավորեցին Զիարիդների պետությունը (928-1045): Զիարիդական կառավարիչներից մեկը՝ Մարդավիջը, իր ազդեցությունը տարածեց Կենտրոնական Իրանի նկատմամբ: Նրա սպանությունից հետո Բուիդ եղբայրները հիմնադրեցին նոր դեյլեմյան մի պետություն: Եղբայրներից մեկը 945 թ. գրավելով Բաղդադը, ստի-

պեց Խալիֆին իրեն շնորհել «ամիրաց ամիր» տիտղոսը և ըստ էության հրաժարվել աշխարհիկ իշխանությունից: Բուիդները ձգտում էին տարածել իրենց իշխանությունը ողջ Իրանի նկատմամբ: Սակայն դա նրանց չհաջողվեց իրագործել:

Իրանական բարձրավանդակի արևելքում հանձինս Միջին Ասիայի թյուրքերի հայտնվեց նոր, առավել ազդու մի ուժ, որը Խորասանում տապալելով Մասանյաններին, ձևավորեց Ղազնևիդների ռազմաավատարական պետությունը: Նոր պետությունը առավելագույն հզորության հասավ Մահմուդ Ղազնևիդի (998-1030) կառավարման շրջանում: Մահմուդը տարածեց իր ազդեցությունը արևելքում Գանգեսից մինչև Արևմուտքում Բրդստան հսկայական տարածքների վրա: Մահմուդի ժամանակ իսլամի համար պայքարի դրոշի ներքո իրագործվում էին անընդմեջ կողոպտչական արշավանքներ դեպի Հինդուստանի թերակղզու խորքերը: Ծայրահեղ դաժանությունն ու բռնակալությունը չէին խանգարում Մահմուդին ունենալու նաև գրականության ու արվեստի հովանավորի հռչակ: Ղազնիում նրա արքունիքը հանդիսանում էր պարսկալեզու պոեզիայի կենտրոն:

Մահմուդի կառավարման շրջանում Խորասան տեղափոխվեց վաչկատուն թյուրք-օղուզների մի մեծ զանգված: Հդ. վերջին և նրանից առաջ իսլամն ընդունած Միջին Ասիայի օղուզական ցեղերի մեջ սկսեց առանձնանալ սելջուկների ցեղը: Ճանաչելով Ղազնևիդների իշխանությունը, նրանք վերջիններիս համաձայնությամբ անցան Խորասան: Սելջուկների կողմից ղեկավարվող օղուզական ցեղերը հետագայում հրաժարվեցին ենթարկվել սուլթան Մահմուդին: 1038 թ. ղազնևիդյան զորքերի ջախջախումից հետո սելջուկների առաջնորդներից մեկը՝ Թողրուլ Բեկը Նիշապուրում հայտարարվեց սուլթան:

Բավականին կարճ ժամանակամիջոցի ընթացքում սելջուկների կողմից ղեկավարվող օղուզական ցեղերը նվաճեցին Կենտրոնական Իրանի մեծագույն մասը, ինչպես նաև Խորեզմը, Միսթանը, Քերմանը, Հերաթը և այլ հողեր: Թողրուլի կողմից Բաղդադը գրավելուց հետո, 1055թ. նա խալիֆի կողմից պաշտոնապես ճանաչվեց որպես այն երկրների աշխարհիկ իշխանության ղեկավար, որոնք ճանաչում էին Աբբասյան խալիֆների հոգևոր իշխանությունը:

Մանազկերտի մոտ 1071թ. սելջուկների հաղթանակը բյուզանդական զորքերի նկատմամբ թյուրքերի առջև բաց արեց հետագա նվաճողական-

նության ճանապարհը դեպի արևմուտք: Մի քանի տարիների ընթացքում սելջուկները նվաճեցին Հայաստանը, Միջագետքի մի մասը: Մելիք-շահի օրոք (1072-1092) Սելջուկների պետությունը հասավ իր առավելագույն հզորությունը: Հարավ-Արևմտյան ու Կենտրոնական Ասիայում նվաճվեցին նոր տարածքներ (Խորեզմը, Մավերաուանհրը, Անթակյան, եմենը և այլն):

Սելջուկ-օղուզական նվաճումները ուժգին ազդեցություն գործեցին ողջ Մերձավոր ու Միջին Արևելքի, այդ թվում նաև Իրանի քաղաքական զարգացման վրա: Եթե IX-XդԴ. Իրանում ընթանում էր իրանալեզու ժողովուրդների ավատական պետական կազմավորումների համախմբման գործընթաց, որոնք հանդես էին գալիս խալիֆայի դեմ, ապա Ղազնևիդների պետության ստեղծումով և հատկապես քաղաքական ասպարեզում սելջուկ-օղուզների հանդես գալով, այդ գործընթացը դանդաղեց և համարյա իսպառ կանգ առավ: Թյուրք-օղուզների հսկայական զանգվածներ տեղափոխվեց Իրան, Փոքր Ասիա և Անդրկովկաս:

Իրենց նախորդների՝ Ղազնևիդների, Բուիդների և ուրիշների նման, սելջուկյան պետության հիմնադիրները ևս հանդիսանում էին քոչվորական ցեղերի ներկայացուցիչներ, որոնց շրջանում տեղի էր ունենում ավատականացման գործընթաց: Սելջուկյան պետության քաղաքական մեխանիզմի վրա նշանակալից ազդեցություն գործեցին իրանա-արաբական հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալ-քաղաքական ինստիտուտները: Միաժամանակ սելջուկների պետության մեջ զարգացում ստացան նաև այն քաղաքական ինստիտուտները, որոնք բնորոշ էին վաչկատուն թյուրքական հասարակությանը:

Ավատական զարգացումը, որն ուղեկցվում էր կենտրոնական իշխանության թուլացմամբ, XI դարում հանգեցրեց միասնական պետության տրոհմանը և Իրանում, Փոքր Ասիայում, Միջագետքում և Քերմանում, իսկ քիչ ավելի ուշ՝ XIIդ. առաջին կեսին Ատրպատականում, Ֆարսում և այլն մեկը մյուսից անկախ սելջուկյան պետությունների կազմավորմանը:

Իրանում սելջուկների կառավարման շրջանում երկրի բնակչության էթնիկական կազմում տեղի ունեցան մեծ փոփոխություններ: Կատարվեց թյուրքական ցեղերի խոշոր զանգվածների տեղափոխություն դեպի Իրանի մի շարք շրջաններ, հատկապես Ատրպատական, Խորասան, Ֆարս և այլն: Սելջուկների կառավարման շրջանում, ինչպես և նախկինում, ժողովրդական զանգվածների բողոքը ուժեղացող ավատական

շահագործման նկատմամբ իր պատահայտություն էր գտնում մի շարք ելույթներում, որոնք ընդունում էին կրոնական գունավորում: Նրանցից ամենախոշորն ու նշանավորը իսմայիլիթական շարժումն էր Հասան Սաբրահի (1090-1124) գլխավորությամբ: Իրանում իսմայիլիթների շարժումը ավարտվեց XIդ. վերջին Էլբուրսի լեռներում աստվածապետական պետության ստեղծմամբ: Իսմայիլիթների գլխավոր նստավայրն էր Ալամութ ամրոցը:

Իսմայիլիթների կազմակերպությունն ուներ գաղտնի բնույթ: Իրենց հակառակորդների դեմ նրանց պայքարի ձևերից մեկը ահաբեկչությունն էր: Նախապես պատահայտելով լայն զանգվածների շահերը, իսմայիլիթական պետությունը ամենի ուշ, XIIIդ. սկզբին վերածվեց սովորական ավատական պետության:

Մինչդեռ երկպառակչական պատերազմներն ու պառակտումները, որոնք շարունակվեցին հաստատ ողջ XIIդ. ընթացքում, հեշտացրին Իրանի նվաճումը սելջուկների նախկին վասալներ Խորեզմի կառավարիչների՝ խորեզմշահերի կողմից: Վերջիններիս, սակայն, հաջողվեց մասնակիորեն հաստատել իրենց իշխանությունը այն երկրների նկատմամբ, որոնք մտնում էին սելջուկների կայսրության կազմի մեջ: Այն տարիներին, երբ խորեզմշահերը միջինասիական կարակիտների ու հուրիդների (Աֆղանստանում ու Հնդկաստանում մահմեդական կառավարիչներ) նկատմամբ հաղթանակ տանելուց հետո որոշեցին ամրապնդել իրենց իշխանությունը Իրանում ու Իրաքում, մոնղոլները ձեռնամուխ եղան Միջին Ասիայի նվաճմանը:

1218թ. մոնղոլական պետության հիմնադիր Չինգիզխանը մեծ բանակ ուղարկեց Միջին Ասիան նվաճելու համար: Մոհամմադ Խորեզմշահը, չկարողանալով կազմակերպել դիմադրություն, փախավ Խորասան, որը շուտով նվաճվեց մոնղոլների կողմից: Մոհամմադի որդին ջալալեդդինը (1220-1231), փորձեց դիմադրել մոնղոլներին, սակայն Հինդոս գետի ափին տեղի ունեցած վճռական ճակատամարտում պարտություն կրելով, ստիպված էր փախչել Հնդկաստան: Հետագայում Ջալալեդդինին հաջողվեց իր իշխանությունը վերականգնել Իրանում: (Նրա կտրուկ քաղաքականությունը հարևան երկրների նկատմամբ, իր իսկ ժողովրդի հանդեպ իրագործած դաժանությունները և այլն հանգեցրին նրան, որ Իրանի նկատմամբ մոնղոլների արշավանքի ժամանակ նա մնաց մենակ և ջախջախվեց):

Մոնղոլների առաջին արշավանքը Արևմտյան Իրան և Անդրկովկաս իրականացվեց 1220-1222թթ.: Մոնղոլների նոր հարձակումը Հյուսիսային Իրան, Ատրպատական, Իրաք և այլ շրջաններ, որը սկսվեց 1229-1230թթ. ավարտվեց Իրանում, Իրաքում և Ատրպատականում ավատական պետությունների մեծ մասի վերացմամբ: Սակայն մի շարք քաղաքների ու հողերի (Մազանդարան, Ղազվին, Սպահան, Թավրիզ և այլն) բնակչության հերոսական դիմադրության հետևանքով մոնղոլներին միայն 1239թ. հաջողվեց իրենց ենթարկել Արևմտյան Իրանը: Հարավում և հարավ-արևմուտքում (Ֆարս, Լուրեստան) դեռևս գոյություն ունեին աթաբեկների ինքնուրույն պետություններ, իսկ Կենտրոնական Իրանում՝ իսմայիլիթների պետությունը:

Մանկու (Մունկե) մեծ խանի կառավարման տարիներին (1251-1259) նրա եղբայր Հուլաղու-խանը մեծ և լավ զինված բանակի գլուխ անցած Թուրքեստանի (Միջին Ասիա) վրայով արշավեց դեպի Իրան:

Գրավելով աբբասյան խալիֆաթի և իսմայիլիթների տիրույթները, ինչպես նաև Սիրիայի մի մասը, Հուլաղու-խանը (1256-1265) ստեղծեց սեփական պետություն, որն անվանապես կախում ուներ մեծ խանից: Հուլաղուի պետությունը, որ հայտնի է որպես իլխանների պետություն, իր մեջ ընդգրկում էր ժամանակակից Իրանի մեծագույն մասը և Թուրքեստանի մի մասը: Փոքր Ասիայի սելջուկները, Կիլիկյան հայկական թագավորությունը, Տրապիզոնի պետությունը, Վրաստանը, Շիրվանի թագավորությունը, կուրտերի պետությունը Հերաթում հանդիսանում էին նրա վասալները:

Հուլաղուի կողմից ստեղծած իլխանների (Հուլաղուիդների) նոր պետությունը, որի մայրաքաղաք հռչակվեց Թավրիզը, տևական պայքար էր մղում մեկ այլ թաթար-մոնղոլական պետության՝ Ոսկե Հորդայի դեմ Կովկասում գերիշխանություն ձեռք բերելու համար:

Արևմուտքում Հուլաղուիդները մշտական պայքար էին մղում եգիպտոսի և Սիրիայի սուլթանների դեմ: Դեպի Իրան և հարևան այլ երկրներ կազմակերպած արշավանքների ժամանակ մոնղոլական զավթիչները հսկայական վնասներ պատճառեցին նվաճված երկրների արտադրողական ուժերին, ոչնչացնելով մարդկանց մեծ զանգվածների, քաղաքներն ու գյուղերը վերածելով ավերակների, ոչնչացնելով ոռոգման համակարգերը: Այդ երկրների նկատմամբ ամրապնդելով իրենց իշխանությունը, մոնղոլները այնուամենայնիվ ստիպված էին ուշադրություն

դարձնել ավերված տնտեսությունը վերականգնելու հարցին: Մակայն Հուլագուիդների դինաստիայի առաջին վեց խաների կառավարման շրջանում այդ ուղղությամբ շատ քիչ բան կատարվեց: Ամենին, արոտավայրերի և հողերի համար քոչվորական ազնվականության պայքարը, խորացնելով երկպառակությունները, նպաստեց, հատկապես XIII դ. 80-90-ական թվականներին, տնտեսական դրության կտրուկ վատթարացմանը:

Միայն Ղազան-խանի (1295-1304) կառավարման տարիներին սկսվեց սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի բնագավառում մի շարք կարևոր վերափոխությունների իրականացումը: Ջորքերին որպես իքտա հատկացվեցին հողային տիրույթներ: Հաճախ Ղազան-խանի հրամանագրի, զինվորները պետք է ստիպեին գյուղացիներին մշակել հողը և նրանցից գանձել դիվանի կողմից սահմանված հարկեր և տուրքեր: Սկսատտերների կողմից գյուղացիների և արհեստավորների գիշատիչ շահագործումը չափավորելու համար փորձ կատարվեց միասնականացնել հողային հարկի և տուրքերի չափերը: Իլխանների պետության մեջ պետական հողատիրությունը հասավ հսկայական չափերի: Ընդհանուր առմամբ Ղազան-խանի բարեփոխումները նպատակաուղղված էին կենտրոնական իշխանության ամրապնդմանը:

Առաջին իլխանների ժամանակ պետության մեջ գոյություն ուներ որոշակի կրոնական հանդուրժողականություն: Դրանով հանդերձ ընթանում էր սուր պայքար իսլամի, հուդայականության, քրիստոնեության, բուդդայականության և շամանիզմի միջև: Այդ պայքարից հաղթանակող դուրս եկան իսլամի ներկայացուցիչները, քանի որ իլխանների ժամանակ ազնվականության մեծ մասը թե՛ թյուրքեր և թե՛ պարսիկներ, դավանում էին մահմեդականությունը: Մտեփանոս եպիսկոպոս հայ պատմիչը գրում է, որ հենց Թեքուդեր Ահմեդի կառավարման շրջանում «զչխավոր պաշտոնները զբաղեցրին թուրքերը»: Նույն հեղինակը նաև վկայում է, որ Թեքուդերի ժամանակ ուժեղացավ Իրանի մահմեդական հոգևորականության դերը: Մոնղոլական իլխանական ազնվականության կատարյալ իսլամականացումը, որն ուղեկցվում էր այլադավանների, և հատկապես հրեաների ու բուդդայականների, նկատմամբ թշնամական գործողություններով, տեղի ունեցավ Ղազան-խանի կառավարման շրջանում:

Պետք է նշել նաև, որ իլխանների, հատկապես Ղազանի, կառավարման տարիներին գիտությունը, մշակույթը և արվեստը հաջողությամբ

զարգանում էին: Բացի այդ, իրականացվեցին մի շարք բարեփոխումներ, որոնք նպաստեցին արտադրողական ուժերի որոշակի զարգացմանը: Նշանակալիորեն ավելացան պետական գանձարանի եկամուտները: Մակայն խոշոր քոչվորական ազնվականությունը և ծայրամասային շրջանների ավատատերերը հանդես էին գալիս երկրի կենտրոնացումն ամրապնդելու դեմ:

Ենթավոդական ձգտումները առանձնապես ուժեղացան XIVդ. սկզբից և արդեն 30-ական թ.թ.-վերջերին իլխանների պետությունը տրոհվեց միջին և ոչ մեծ ավատական պետությունների: Իլխանների պետության խոշոր նահանգների ու հողերի տարածքը վերածվեց իշխանության համար սուր պայքարի ասպարեզի մոնղոլական, թյուրքական, իրանական քոչվորական ազնվականության առանձին ավատական ընտանիքների ու ցեղերի միջև: Նախկինում իլխաններից վասալական կախման մեջ գտնվող ավատատերերը փաստորեն դարձան անկախ: Նրանց մեջ առավել հզորագույններն էին Չոբանյանները (Իրաք, Քրդստան, Ադրբեջան), Ջելայիրյանները (Ադրբեջան, Հայաստան, Իրաք), Մուզաֆարյանները (Յեզդ, Քերման, Կենտրոնական Իրան և այլն): Այդ ավատական պետական կազմավորումներից տարբերվում էր սոցիալ-կրոնական շարժման հետևանքով Խորասանում առաջացած սերբադարների ատյանապետական պետությունը (XIVդ. առաջին կես):

Ավատական տրոհվածությունը և անվերջ երկպառակչական պատերազմները հեշտացրին Թուրքեստանում Թեմուրյանների նոր պետության հիմնադիր Թեմուրի (Լենկ-Թեմուր) կողմից Իրանի նվաճումը: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում նրան հաջողվեց նվաճել Իրանը, Իրաքը, Անդրկովկասի երկրները, Ղիչաղական տափաստանը, Ղրիմը, կազմակերպել կողոպտչական արշավանք դեպի Հնդկաստան (1398-1399թթ.) և 1402թ. պարտության մատնել օսմանյան սուլթան Բայազետ I:

Թեմուրի մահվանից հետո (1405թ.), նրա վիթխարի պետությունը քայքայվեց: Արևմուտքում (Ատրպատական, Իրաք, Քրդստան) Թեմուրյանները պարտություն կրեցին Ջելայիրյաններից և նրանց դաշնակիցներից, Ղարա-Ղոյունլու պետությունից, որը ստեղծվել էր համանուն թյուրքական քոչվորական ցեղի կողմից: Թեմուրի որդին՝ սուլթան Շահրուհը (1405-1446), որն ամրապնդվել էր Արևելյան Իրանում, փորձեց պահպանել իր իշխանությունը Միջին Ասիայի և Իրանի մեծ մասի

նկատմամբ: Նրան հաջողվեց ժամանակավորապես կանգնեցնել Ղարա-Ղոյունլու պետության շարժումը դեպի արևելք: Դրանով հանդերձ Հասանի Բայքարիի (1469-1506) կառավարման շրջանում ավատական երկպառակությունների հետևանքով Թեմուրյանների պետությունը քայքայվեց ու բաժանվեց երկու մասի՝ միջինասիական և խորասանյան:

Այդ նույն շրջանում Ատրպատականում, Իրաքում, Քրդստանում և Հայաստանում Ղարա-Ղոյունլու և Աղ-Ղոյունլու (կազմավորվել է թյուրքական քոչվորական ցեղի կողմից) պետությունների միջև ընթանում էր սուր պայքար: Այդ պայքարից հաղթանակող դուրս եկավ Աղ-Ղոյունլուն: Այդ պետության հիմնադիր Ուզուն Հասանը (1453-1478) իր մայրաքաղաքը դարձրեց Թավրիզը:

Ուզան Հասանին հաջողվեց իրեն ենթարկել համարյա ողջ Արևմտյան Իրանը: Նա ձգտում էր ընդլայնել իր տիրույթները փոքր Ասիայում և Օսմանյան կայսրության դեմ պայքարում իր դիրքերն ամրապնդելու համար դաշինք կնքեց Վենետիկի հետ, աշխատում էր բարեկամական հարաբերություններ հաստատել եգիպտոսի մամլուկների հետ, մերձեցման քայլեր էր կատարում Հունգարիայի, Լեհաստանի, մոլդավական գոսպոդարյաի հետ, քաղաքական կապեր հաստատեց Ռուսաստանի հետ:

Աղ-Ղոյունլու դինաստիայի վերջին շահերի շրջանում ծայր առած երկպառակությունները և միասնական կենտրոնացված իշխանության բացակայությունը նպաստեցին Սեֆեվիյե սուֆիական միաբանության ամրապնդմանը: Սեֆևիների ծագումը սկսվում է սուֆիական շեյխ Սաֆի ադ-Դին Իսխաքից (1252-1334): XV դ. միաբանության ղեկավարներից մեկը, շեյխ Ջունեյդը, Փոքր Ասիայի և Ատրպատականի թյուրք քոչվորներից ստեղծեց աշխարհազոր և կրոնական աղջամանքներ կազմակերպեց դեպի Դաղստան և Հյուսիսային Շիրվան: Այդ արշավանքների ժամանակ Ջունեյդը սպանվեց, սակայն նրա որդի Հեյդարը շարունակեց իր հոր գործը: Իր կողմնակիցներից նա հավաքեց զինված քոկատներ, որի զինվորները կրում էին 12 կարմիր շերտերով չալմաներ՝ ի պատիվ շիաների կողմից մեծարվող իմամների: Այդ պատճառով նրանք հայտնի են նաև «ղզլբաշներ» (կարմրագլուխ) անվանումով: Հեյդարը ամուսնացած էր Ուզուն Հասանի աղջկա հետ, սակայն Ուզուն Հասանի որդին՝ սուլթան Յաղուբը (1479-1491), վախենալով Սեֆևյան տոհմի ազդեցության հետագա մեծացումից, շիրվանշահի հետ

դաշնակցած հանդես եկավ շեյխ Հեյդարի դեմ: Ճակատամարտում վերջինս սպանվեց: Յաղուբը հաշվեհարդար տեսավ նաև Հեյդարի ավագ որդու հետ, իսկ կրտսեր որդին՝ Իսմայիլը, ստիպված էր մի քանի տարի թաքնվել: 1499 թ. պատանի Իսմայիլը, թուրքմենական այն ցեղերի առաջնորդների աջակցությամբ, որոնք հանդիսանում էին Սեֆևիե միաբանության հետևորդներ, ապստամբեց Աղ-Ղոյունլու իշխանավորների դեմ:

Իսմայիլի աշխարհազորի հիմնական կորիզը բաղկացած էր Ասորպատականի և Փոքր Ասիայի թուրքական ցեղերից: Նրա կողմնակիցների թվում էին նաև Գիլանի և Թալիշի ավատատերերը: 1500-1501 թթ. Իսմայիլը ջախջախեց շիրվանշահի և Աղ-Ղոյունլու սուլթանի զորքերին: Տիրելով Ասորպատականին, նա իրեն հռչակեց շահ (1501 թ.): Թավրիզը դարձավ Սեֆյանների պետության մայրաքաղաք: Ընդամենը տասը տարվա ընթացքում Իսմայիլին հաջողվեց իրեն ենթարկել իրանական հողերի մեծ մասը:

1507-1508 թթ. Սեֆյանները գրավեցին Հայաստանը, Քրդստանը և Միջագետքը:

Նոր կազմակերպված պետության համար երկրի արևելքում հիմնական թշնամի էր հանդիսանում վաչկատուն ուզբեկների պետությունը: Երկարատև և համառ պայքարից հետո շահ Իսմայիլին հաջողվեց ամրապնդվել Խորասանում, թեև մինչև իր կողմից ստեղծված պետության անկումը այդ նահանգը շարունակում էր հանդիսանալ կռվախնձոր Սեֆյանների և ուզբեկների միջև:

Սեֆյանների պետությունը, հատկապես սկզբնական շրջանում, ուներ աստվածապետական բնույթ: Շահ Իսմայիլը ոչ միայն սուլթան էր, այսինքն աշխարհիկ կառավարիչ, այլև շիաների հոգևոր առաջնորդ: Նա հայտարարվեց շիիթական իմամներ Մուսա Քազեմի և Ալիի ուղղակի հետևորդ: Նրա կառավարման շրջանում շիիզմը կամ 12 իմամների վերաբերյալ շիիթական ուսմունքը, հայտարարվեց որպես պաշտոնական կրոն: Իշխանության համար պայքարում շահ Իսմայիլը շիիթականությունն օգտագործում էր որպես կարևորագույն գաղափարական զենք:

Իսմայիլը, հատկապես իշխանության համար պայքարի շրջանում, սուննիթների նկատմամբ կիրառում էր ծայրահեղ միջոցներ: Սեֆյան շահերի կողմից շիիթական քարոզչությունը լայնորեն օգտագործվում

էր օսմանյան Թուրքիայի դեմ պայքարում: XVI-XVII դարերում Անատոլիայում թուրքական սուլթանի դեմ համարյա բոլոր ապստամբություններն ունեին ուղիղ և անուղղակի կապ սեֆևյան շիիթական քարոզիչների գործունեության հետ:

Չալդրանի ճակատամարտից (1514թ.) հետո, երբ թուրքական սուլթան Սելիմ «Ցավուզ» I զորքերը ջախջախեցին Սեֆյաններին, շահ Իսմայիլը դադարեցրեց արևմուտքում իր զավթողական նկրտումները: Սուլթանին ուղղված նամակներում նա խաղաղության կոչ էր անում: Սակայն վախենալով երկրի ներսում զգլբաշական շարժումներից, թուրքական սուլթանը շարունակում էր թշնամական քաղաքականությունը շահ Իսմայիլի և նրա ժառանգորդների դեմ: Միայն 1555թ., արդեն Թահմասպ I (1524-1576) կառավարման շրջանում, Իրանին հաջողվեց Թուրքիայի հետ կնքել հաշտության պայմանագիր:

Թահմասպ I օրոք ավարտվեց Սեֆյանների կողմից Շիրվանի և Գիլյանի նվաճումը: Չորս ավերիչ արշավանքների հետևանքով սեֆյաններին հաջողվեց ժամանակավորապես կոտրել վրացական իշխանների դիմադրությունը: Թեև առանձին ժամանակահատվածներում արևելքում Հերաթը և մի շարք հարևան շրջաններ անցնում էին ուզբեկական խանների տիրապետության ներքո, այնուհանդերձ Աֆղանստանի տարածքի մեծ մասը ևս մտնում էր Սեֆևյան պետության կազմի մեջ: XVI դ. երկրորդ կեսին Սեֆյանները ստիպված էին Բաղդատն ու Դիարբեքիրը զիջել օսմանյան Թուրքիային:

Թահմասպ I կառավարման վերջին տարիները նշանավորվեցին քոչվորական զգլբաշական ցեղերի առաջնորդների միջև ներքին երկպառակությունների ուժեղացմամբ: Ներքին քաղաքական պայքարի սրումը հնարավորություն տվեց օսմանյան Թուրքիային XVI դ. վերջին նվաճել համարյա ողջ Անդրկովկասը և Ատրպատականը:

Իրանը նոր շրջանում: 1588թ. Ուսթաջլու և Շամլու թյուրքական ցեղերի աջակցությամբ շահ հայտարարվեց Աբբաս Միրզան (1581-1629) թ.թ., որն ընդունեց շահ Աբբաս I գահակալական անունը: Չնայած իր երիտասարդ տարիքին, շահ Աբբաս I իրեն դրսևորեց որպես վճռական ու ընդունակ քաղաքական գործիչ: Ստիպված լինելով ընդունել թուրքական սուլթանի կողմից իրեն պարտադրված ծանր հաշտության պայմանագիրը (1590թ.), շահ Աբբասը կարճատև դադարն օգտագործեց Խորասանի նկատմամբ ուզբեկական նվաճողականությանը դի-

մագրավելու համար: 1599 թվականից սկսած ղզլբաշները Խորասանից դուրս մղեցին ուզբեկական Շեյբանի խանի զորքերին: Գրավելով Խորասանը, շահ Աբբասը սկսեց արշավանքներ կազմակերպել դեպի Միջին Ասիա:

1603թ. աշնանը սկսվեց շահ Աբբասի զորքերի արշավը դեպի Ատրպատական: Թուրք օսմանցիների դեմ հինգ տարի տևած պայքարից հետո վերստին հաջողվեց նվաճել Ատրպատականը, Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը և Դաղստանի մի մասը: 1612թ. Իրանի և Թուրքիայի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որը հօգուտ Սեֆյանների ճանաչեց նոր գրավված տարածքները:

Շահ Աբբաս I հաջող պատերազմները նշանակալից չափով հանդիսանում էին նրա ներքին բարեփոխումների հետևանք: Նախ նա իրականացրեց ռազմական բարեփոխում, կազմակերպելով շահական գվարդիա (գլխավորապես Դաղստանի ժողովուրդների ներկայացուցիչներից, վրացիներից և հայերից) և հրաձիգների կանոնավոր ջոկատներ («թյուֆանգչի»): Կազմակերպվեցին նաև հրետանային զորամասեր: Կանոնավոր բանակի ստեղծմանը, ինչպես նաև ռազմական ծառայության մեջ արաբական, ուզբեկական, աֆղանական և այլ ցեղերի ներգրավումը որոշ չափով թուլացրեց թյուրքական (ազերիական) ղզլբաշական ցեղերի առաջնորդների քաղաքական դիրքերը:

Իրականացվեցին նաև մի շարք միջոցառումներ, որոնք կոչված էին ամրապնդելու կենտրոնական իշխանությունը: Պետության մեջ մեծ դեր սկսեց խաղալ քաղաքացիական բյուրոկրատիան:

Շահ Աբբաս I առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում առևտրի, մասնավորապես արտաքին առևտրի զարգացման վրա: Արևելյան Հայաստանից Իրան գաղթեցված հայ վաճառական-խոջաներին նա հատկացրեց մի շարք արտոնություններ ու իրավունքներ Իրանից հումմետաքսի և իրանական այլ ապրանքների արտահանումը Եվրոպա իրագործելու համար:

Շահ Աբբասը իր մայրաքաղաքը տեղափոխեց Սպահան, որպեսզի ավելի դյուրացնի իր մտահղացումը հում-մետաքսի արտահանումը թուրքական ցամաքային ճանապարհներից դեպի Պարսից ծոցի ծովային ճանապարհները տեղափոխելու համար:

Արևելյան Հայաստանից 1604թ. 330.000 հայերի բռնագաղթի ենթարկելով դեպի Իրանի խորքերը, շահը մտադիր էր նաև իր երկրի

և Թուրքիայի միջև ստեղծել «այրված հողի» մի տարածք, թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի իր տիրույթները կասեցնելու համար: Շահի հրամանով Սպահանում Զենդերուդ գետի աջ ափին հայերը կառուցում են նոր Ջուղա քաղաքը, որի վաճառական-խոջաները ողջ XVII դարի ընթացքում հանդիսանում էին Իրանի և եվրոպական երկրների միջև առևտրի միջնորդներ:

Սեֆյանների ժամանակ, հատկապես շահ Աբբաս I կառավարման տարիներին, սկսվեց եվրոպական պետությունների հետ (Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Լեհաստանի և այլն) դեսպանությունների համեմատաբար կանոնավոր փոխանակումներ: Շահ Աբբաս I ակտիվ քաղաքականություն էր վարում Պարսից ծոցի գոտում, ձգտելով իր շահերի օգտին օգտագործել եվրոպական պետությունների միջև գոյություն ունեցող թշնամանքը: Աբբաս I օրոք շարունակվում էր Իրանի մերձեցման քաղաքանությունը Օսմանյան կայսրությանը դիմակայող եվրոպական պետությունների՝ Գերմանիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և ուրիշների հետ:

Սեֆյանների շրջանում կենտրոնական իշխանության ամրապնդումը նպաստեց հոգևորականության ազդեցության էլ ավելի կայունացմանը: Խոշոր հոգևորականությունը, որի ձեռքերում կենտրոնացված էր դատաիրավական համակարգը և վակֆների կամ վակուֆների կառավարումը (մզկիթապատկան հողեր և անշարժ գույք), վերածվեց ավատական դասի հիմնական խավերից մեկի: Հսկայական չափերի հասան պետական և շահապատկան հողերը:

Սեֆյանների ժամանակ, հատկապես XVI-XVII դ.դ., նշանակալից հաջողություններ ձեռք բերվեցին նաև մշակույթի բնագավառում:

XVII դ. վերջում - XVIII դ. սկզբում տեղի ունեցած տնտեսական անկումը ուղեկցվում էր Սեֆյանների կենտրոնական պետական իշխանության քայքայմամբ: Կենտրոնը արդեն ի վիճակի չէր իր իշխանությունը տարածել ծայրամասերի վրա: XVII-XVIII դ.դ. սահմանագծին իր տարածքով հսկայական Սեֆյան պետության մեջ իրար հետևից տեղի էին ունենում ապստամբություններ: Դրանցից ամենախոշորն ու նշանակալիցը, որի հետևանքով Սեֆյան պետությունը քայքայվեց, դա աֆղանական ցեղերի ապստամբությունն էր: Այն բռնկեց Գիլզայի աֆղանական ցեղի առաջնորդ Միր Վեյսի գլխավորությամբ 1709 թ.: Շարժումն ընթանում էր սուննիզմի դրոշի ներքո ընդդեմ շիա Իրանի:

Ապստամբությանը հարեցին նաև աֆղանական մյուս ցեղերը և առհասարակ Մեֆյան պետության արևելյան ծայրամասերի բոլոր ժողովուրդներն ու ցեղերը: 1711 թ. Միր Վեյսը իրեն հռչակեց անկախ կառավարիչ:

Նրա որդի Մահմուդը, ուրախությամբ պաշարումից հետո գրավեց Մեֆյանների մայրաքաղաք Սպահանը: Շահ Հուսեյինը ստիպված էր հրաժարվել գահից հօգուտ Մահմուդի: Աֆղաններին հաջողվեց կարճ ժամանակահատվածի ընթացքում իրենց իշխանությունը տարածել Կենտրոնական Իրանի մեծագույն մասի վրա:

Օգտվելով ստեղծված վիճակից, Ռուսաստանն ու Թուրքիան ուժեղացրին իրենց նվաճողական քաղաքականությունը Իրանի նկատմամբ, ձգտելով նվաճել Դաղստանը, Վրաստանը, Հայաստանը, Ադրբեջանը, Գիլյանը և այլն: Այդ նպատակով երկու պետություններն էլ աջակցություն էին ցույց տալիս կովկասյան ժողովուրդների ազատագրական շարժումներին (Ռուսաստանը՝ հայերին ու վրացիներին, օսմանյան Թուրքիան՝ դաղստանցիներին): 1722-1723 թթ. Պետրոս I կողմից կազմակերպված արշավանքը նպատակ ուներ տարածել Ռուսաստանի ազդեցությունը Կովկասի նկատմամբ և կասեցնել թուրքական նվաճողականության ծավալումը: Ռուսական զորքերը գրավեցին Բաքուն, Դերբենտը և Գիլյանի մի մասը: Օսմանյան Թուրքիան ձգտում էր իր հսկողության տակ դնել ոչ միայն Կովկասի մեծ մասը, այլև Արևմտյան Իրանը: Կովկասում և Մեֆյան պետության հյուսիսային նահանգներում գերիշխանություն ձեռք բերելու պայքարը անօրինակ կերպով սրեց ռուս-թուրքական հարաբերությունները: Սակայն 1724 թ. ամռանը ստորագրվեց ռուս-թուրքական պայմանագիր, ըստ որի որոշվում էին այն նահանգները, որոնք Մեֆյան Իրանից անցնում էին այդ երկու պետություններին: Իրանի կողմից այդ պայմանագրի ճանաչման դեպքում Ռուսաստանն ու Թուրքիան խոստանում էին իրենց աջակցությունը Սուլթան Հուսեյինի որդուն՝ Թահմասպին (1722-1732), որը 1722 թ. վերջին հռչակվել էր շահ:

Թահմասպի փորձերը կազմակերպելու դիմադրություն աֆղանների նկատմամբ առանձնակի հաջողություններ չունեցան: Պարտություն կրելով աֆղանցի Աշրաֆի կողմից, Թահմասպը ստիպված էր փախչել Մազանդարան: Այնտեղից նա շարժվեց Խորասան: Այդ նահանգի համար Թահմասպի մղած պայքարի ժամանակ ասպարեզ եկավ մի տաղանդա-

վոր զորավար՝ Նադիրը, որը շուտով դարձավ բոլոր հակաաֆղանական ուժերի ղեկավարը:

Նադիրը սերում էր թյուրքական աֆշար ցեղի Գերխլու կոչված տոհմից, որի մի հատվածը Մեֆյանների շրջանում Ուրմիայի շրջանից տեղափոխվել էր Խորասան: 1729 թ. Հերատի շրջանում աֆղանների նկատմամբ տանելով խոշոր հաղթանակ, Նադիրը այնուհետև լայնամասշտաբ պայքար ծավալեց Կենտրոնական Իրանում ծվարած աֆղանների դեմ: Իրանից աֆղանների վտարումից հետո Նադիրը հաջող պայքար սկսեց Իրանի արևմտյան շրջանները գավթած թուրքերին վանդելու համար:

Այդ պայքարի ընթացքում սուր հակասություններ դրսևորեցին Նադիրի և Թահմասպ II միջև: Վերջինս վախենում էր, որ ռազմական հաղթանակներից հետո մեծ հեղինակություն ձեռք բերած Նադիրը ողջ իշխանությունը կկենտրոնացնի իր ձեռքերում: Որպես պատրվակ օգտագործելով Թահմասպ II կողմից օսմանյան Թուրքիայի հետ կնքած ոչ ձեռնտու պայմանագիրը, 1732 թ. Նադիրը կարողացավ գահընկեց անել Թահմասպին: Շահ հայտարարվեց Թահմասպ II ութամսական որդին՝ Աբբաս III (1732-1736), իսկ նրա խնամակալ (ռեգենտ) Նադիրը, որը փաստորեն դարձավ անսահմանափակ իշխանություն ունեցող կառավարիչ:

1732 թ. պայմանագիր կնքվեց Ռուսաստանի հետ, ըստ որի Իրանին վերադարձվեցին Գիլյանը, Մազանդարանը և Աստրաբադը:

Ռուսաստանը խոստացավ այն բանից հետո, երբ Իրանի և Անդրկովկասի տարածքից շահը կվանդի թուրքերին, Իրանին վերադարձնել Բաքուն ու Դերբենտը:

1733-1735թ.թ. Նադիրը նշանակալից հաջողությունների հասավ Անդրկովկասում օսմանյան Թուրքիայի հետ պայքարում: Անդրկովկասը լրիվ մաքրվեց թուրքական զորքերից: Իր այդ նոր ռազմական հաջողությունները ամենազոր ռեգենտը փորձեց օգտագործել շահական գահը հափշտակելու համար: Այդ նպատակով 1736 թ. սկզբին Մուղանի դաշտավայրում նա գումարեց մեծ կուրուլթայ, որին մասնակցելու համար հրավիրված էին ողջ Իրանի, Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի խոշոր ավատատերերն ու հոգևոր դեմքերը: Կուրուլթային մասնակցում էր նաև հայոց կաթողիկոս Աբրահամ Կոստացին: Հիշյալ կուրուլթայի ժամանակ Նադիրը հասավ նրան, որ իրեն հռչակեն Իրանի շահ:

Մուղանի կուրուլթայի ժամանակ կազմվեց նաև կարևոր քաղաքական մի հռչակագիր: Նրանում նշվում էր, որ շիիթական հավատքը կամ այսպես կոչված իմամ Ջաֆար Սադեղի հավատքը, մահմեդական իրավագիտության չորս սուննիթական հավատքների հետ համատեղ պետք է ճանաչվի որպես իսլամի հինգերորդ հավատք կամ ուղղություն: Այդ հռչակագրի իրականացումը պետք է նպաստեր Նադիրի նոր ընդարձակ կայսրության համախմբմանը:

Կրոնական հակասությունները հարթելու ձգտումը միաժամանակ ուղղված էր Սեֆյանների սոցիալական ու քաղաքական գլխավոր հենարաններից մեկի՝ շիիթական խոշոր հոգևորականության դեմ:

Նադիր-շահը, սակայն, ի վիճակի չեղավ իր տասնվեցամյա կառավարման շրջանում դնել ու ամրապնդել նոր պետական իշխանության հիմքերը: Ռազմական ու քաղաքական գործչի նրա ողջ տաղանդը ուղղված էր զավթողական արշավանքներ կազմակերպելուն:

Դառնալով շահ, Նադիրը որոշեց Իրանին միացնել Ղանդահարի շրջանը, որը երկու հարյուրամյակի ընթացքում կռվախնձոր էր Սեֆյանների ու Հնդկաստանի մեծ Մողոլների միջև: Գրավելով ու ավերելով Ղանդահարը և նվաճելով Բելուջիստանը (1737-1738թթ.), 1738-1739թթ. Նադիրն իրագործեց թալանչիական արշավանք դեպի Հնդկաստան, իսկ 1740թ. նաև դեպի Բուխարա և Խիվա:

1741թ. գարնանը Խորեզմից Նադիր-շահը շարժվեց դեպի Դաղստան: Սակայն հանդիպելով կորովի դիմադրության, Նադիր-շահին այնտեղ չհաջողվեց ձեռք բերել կատարյալ ռազմական հաղթանակ: 1743թ. փետրվարին Նադիրը ստիպված էր հրաժարվել Դաղստանը նվաճելու մտքից և այնտեղից նա շարժվեց դեպի հարավ՝ Ադրբեջան, որտեղից նա մտադիր էր նոր արշավանք կազմակերպել օսմանյան Թուրքիայի դեմ: Ի դեպ, վերջինիս հետ հաշտության պայմանագիր կնքվեց միայն 1746թ. սեպտեմբերին:

Դաղստանի ժողովուրդների դեմ պայքարում Նադիր-շահի ռազմական անհաջողությունները առաջ բերեցին նրա պետության կազմի մեջ մտնող երկրների ժողովուրդների ազատագրական և անջատողական շարժումների վերելք (Հայաստանում, Շիրվանում, Քրդստանում, Բելուջիստանում, Խորեզմում և այլն): Դա ոգևորեց նաև ղզլբաշական ամիրներին, որոնք 1747թ. հուլիսի 20-ին կազմակերպեցին Նադիր շահ Աֆշարի սպանությունը:

Նադիր-շահի կայսրությունը կարճ ժամանակահատվածի ընթացքում փլուզվեց: Միայն Խորասանում Նադիրի թոռը՝ Շահրուխը, կարողացավ մնալ իշխանության ղեկի մոտ: Արևմտյան և հյուսիսային Իրանում ավատական առանձին խմբավորումների միջև ընթանում էր սուր երկպառակչական պայքար, որում գլխավոր դերակատարներն էին լուրերի, ազերի-թյուրքերի, բախտիարների և թուրքմենների առաջնորդները: Այդ դաժան ու արյունոտ պայքարից հաղթող դուրս եկան բախտիարների առաջնորդ Ալի Մարդան-խանը և լուր ցեղի զենդ կոչված ոչ մեծ ցեղախմբի պարագլուխ Մոհամմեդ Քերիմ-խանը (1750-1779), որն ըստ էության դարձավ պետության գլուխ, թեև նա համեստորեն իրեն անվանում էր «վաքիլ», այսինքն Մեֆյանների անունից կառավարող մի ներկայացուցիչ: Նա իր մայրաքաղաքը հռչակեց Շիրազ քաղաքը: Թեև Քերիմ-խանը սերում էր մի ցեղից, որի համար թալանն ու կողոպուտը համարվում էր գոյություն պահպանելու սովորական միջոց, սակայն նա ձգտում էր ամրապնդել կառավարման պետական համակարգը, խրախուսում էր առևտուրն ու գյուղատնտեսական արտադրության զարգացումը: Քերիմ-խանի կառավարման վերջին շրջանում նրա զորքերը գրավեցին Պարսից ծոցի գոտում գտնվող կարևոր առևտրական կենտրոն Բասրան:

1779 թ. Քերիմ-խանի մահը ազգակիցների միջև առաջ բերեց սուր երկպառակություններ, որից օգտվեցին զենդերի հնամենի հակառակորդները՝ թյուրքական ցեղախմբերից մեկին պատկանող դաջարները, որոնց հաջողվեց կործանիչ հարված հասցնել և պատմության թատերաբեմից վերացնել զենդերի պետությունը:

Դաջարները հիմնականում բնակվում էին այսպես կոչված Հյուսիսային Ադրբեջանում և Մազանդարանում: Նոր պետության հիմնադիր հանդիսացավ Մազանդարանում ապրող դաջարների առաջնորդներից մեկը՝ Աղա Մոհամմեդ-խանը (1778-1797): Իր ծայրահեղ դաժանությամբ աչքի ընկած Աղա Մոհամեդ-խան Դաջարին հաջողվեց իր իշխանությունը հաստատել սկզբում Կենտրոնական և Հյուսիսային Իրանում, Ադրբեջանում և Արևելյան Անդրկովկասում, իսկ ապա նաև Քերմանում, Արևմտյան Բելուջիստանում, Միսթանում, ինչպես նաև Մեշհեդում: Աղա Մոհամմեդ խանը հիմք դրեց Դաջարական դինաստիային (1796-1925): Նոր շահը իր համար մայրաքաղաք ընտրեց երկրի հյուսիսում գտնվող մի փոքրիկ քաղաք՝ Թեհրանը:

Ղաջարները հանդիսանում էին քոչվորական ազնվականության ներկայացուցիչներ, սակայն մեծ քանքեր էին գործադրում կենտրոնացված ավատական պետության ստեղծման ուղղությամբ: Բուն իրանական հողերում ղաջարներին հաջողվեց հաղթահարել անքատվողականությունը, ինչ չի կարելի ասել Դաղստանի և Վրաստանի վերաբերյալ: Այդ երկրներում տեղական ավատապետերը, իսկ Վրաստանում և Արևելյան Հայաստանում նաև եկեղեցու ներկայացուցիչները, օգտվելով զանգվածների աջակցությունից, ակտիվորեն հանդես էին գալիս հանուն անկախ պետությունների ստեղծման: Ընդորում վրացիներն ու հայերը Իրանի, ինչպես նաև օսմանյան Թուրքիայի դեմ պայքարում ձգտում էին հանդես գալ Ռուսաստանի հետ դաշնակցած:

Հենց այդ շրջանում, այսինքն XVIII դ. վերջում և XIX դ. սկզբում ղաջարների ավատական պետությունը ընդգրկվում է եվրոպական պետությունների քաղաքականության շրջանակների մեջ:

Ձգտելով խանգարել Նապոլեոն Բոնապարտին, Իրանի տարածքն օգտագործելու նրա ծրագրերին՝ Հնդկաստանում բրիտանական տիրույթների վրա հարձակվելու նպատակով, 1800 թ. Թեհրան ժամանեց Հնդկաստանում անգլիական իշխանությունների ներկայացուցիչ Ջոն Մալքոլմը, որը Մեծ Բրիտանիայի անունից պայմանագիր կնքեց իրանական կառավարության հետ: Ղաջարները խոստանում էին պատերազմ սկսել Աֆղանստանի հետ, եթե նրա կառավարիչը հարձակում գործեր Հնդկաստանի վրա: Թեհրանը խոստանում էր նաև թույլ չտալ, որ ֆրանսիացիները մուտք գործեն Իրան:

Վրաստանի միացումը Ռուսաստանին (1801 թ.), Անդրկովկասում տիրապետություն ձեռք բերելու համար ռուս-իրանական առաջին պատերազմի բռնկումը (1804 թ.), ստիպեցին շահին և գահաժառանգ Աբբաս Միրզային (1789-1833), որը հանդիսանում էր շահական դոմենի՝ Ատրպատականի կառավարիչը, օգնության խնդրանքով դիմել Անգլիային: Սակայն անգլիացիները Իրանին գործուն օգնություն չցուցաբերեցին: Մինչդեռ Նապոլեոնի դիվանագիտությունը ակտիվացրեց իր գործունեությունն Իրանում, աշխատելով օգտագործել նրան իր հակառուսական ու հականգլիական քաղաքականության մեջ: 1807 թ. Ֆինկենշտեյնում կնքվեց մի պայմանագիր, որով Ֆրանսիան խոստանում էր աջակցել ողջ Անդրկովկասի նկատմամբ իրանական իշխանություն տարածելու գործում և ղաջարներին ակտիվ օգնություն ցուցաբերել բա-

նակի վերակառուցման համար: Այդ նպատակով Թեհրան ուղարկվեց մի դեսպանություն գեներալ Գարդանի գլխավորությամբ: Ռուսաստանի և Պրուսիայի հետ Տիլզիթի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո (1807թ.), Ֆրանսիան զգալիորեն կորցրեց իր հետաքրքրությունը Իրանի նկատմամբ, իսկ անգլիական կառավարությունը, ընդհակառակը, ուժեղացրեց իր ուշադրությունը իրանական գործերի նկատմամբ: 1809թ. կնքվեց իրանա-անգլիական դաշնակցային պայմանագիր, ըստ որի Մեծ Բրիտանիան խոստանում էր Իրանին հատկացնել ամենամյա դրամական օժանդակություն (160 հազ. թուման) այնքան ժամանակ, քանի դեռ շարունակվում էր պատերազմը Ռուսաստանի դեմ:

1810թ. անգլիացիներն ավելացրին այդ դրամական օժանդակության չափերը: 1810-1811թթ. Մաչքոլմի և դեսպանորդի պաշտոնում նրան փոխարինած Անգլիի կողմից շահական զորքերի համար Իրան բերվեցին թնդանոթներ, հրացաններ, փամփուշտներ և այլն: Անգլիական ռազմական խորհրդականներն օգնում էին Աբբաս Միրզային իրանական բանակի մասնակի վերակառուցման (կանոնավոր զորամասեր ստեղծելու) և ամրություններ կառուցելու համար: Սակայն ոչ այդ օգնությունը, ոչ Նապոլեոնի հարձակումը Ռուսաստանի վրա չփրկեցին Իրանին իրանա-ռուսական պատերազմում պարտություն կրելուց: Այդ պատերազմի ելքի համար կարևոր նշանակություն ունեցան Անդրկովկասի ժողովուրդների հակաիրանական ելույթները: 1813թ. վերջին Իրանը ստիպված էր Ռուսաստանի հետ կնքել Գյուլիստանի հաշտության պայմանագիրը, ըստ որի Ղաջարները պաշտոնապես հրաժարվում էին Վրաստանի, Դաղստանի և Ադրբեջանի խանությունների նկատմամբ իրենց իշխանությունից (Արևելյան Հայաստանում գտնվող Նախիջևանի և Երևանի խանությունները շարունակում էին մնալ դաջարական պետության կազմում):

Առաջին ռուս-իրանական պատերազմից հետո Իրանը 1814թ. Մեծ Բրիտանիայի հետ կնքեց նոր, «վերջնական» պայմանագիր, որի մեջ առաջին անգամ իր պաշտոնական արտահայտությունը գտավ Իրանը Բրիտանական Հնդկաստանի մատույցներում բուֆերի դեր խաղացող պետության վերածելու անգլիական քաղաքականությունը: Ըստ այդ պայմանագրի, Ֆաթհ Ալի շահը իր վրա պարտավորություն էր վերցնում թույլ չտալ որևէ պետության զորքերի շարժումը Իրանի վրայով դեպի Հնդկաստան: Անգլիացիները խոստանում էին նաև հոգալ Իրանի

վերանայել Գյուլիստանի պայմանագիրը: Որևէ երկրի հետ պատերազմի դեպքում Անգլիան պարտավորվում էր կրկին շահին տրամադրել դրամական օժանդակություն տարեկան 200 հազար թուման գումարով, կամ նրան օգնություն ուղարկել զորքեր ու սպառազինություն:

Անգլիական դիվանագիտությունը շահին և Աբբաս Միրզային մղում էր նոր պատերազմի Ռուսաստանի դեմ: Այդ նպատակով անգլիացիները եռանդուն քայլեր ձեռնարկեցին նաև 1821թ. սկսված իրանա-թուրքական պատերազմը դադարեցնելու ուղղությամբ:

1826թ. հուլիսին իրանական բանակը անսպասելի կերպով ներխուժեց Մեղրիկովկասի սահմանները և գրավեց Ադրբեջանի տարածքի նշանակալից մասը: Սակայն նոր պատերազմը ևս ավարտվեց պարսկական զորքերի պարտությամբ: 1828թ. սկզբին կնքված Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանն անցնում էր Ռուսաստանին: Իրանը պարտավորվում էր մուծել ռազմատուգանք 20 միլիոն ռուբլի (արծաթով) գումարով: Բացի այդ, Ռուսաստանը ստանում էր արտաերկրայնության (կապիտուլյացիոն) իրավունք:

Ռուսաստանի հետ անհաջող պատերազմները ուժգին ներգործություն ունեցան Իրանում քաղաքական իրադրության վրա: Երկրի ներքին կյանքում զգացվում էին սուր լարվածության նշաններ: Սակայն չնայած դրան, Ֆաթհ Ալի-շահը որոշեց իր իշխանությունը վերականգնել արևելքում կորցրած տարածքների նկատմամբ: Նա զորքեր ուղարկեց Հերաթ, այդ կիսանկախ խանությունը Իրանին միացնելու նպատակով: Իրանական բանակը պաշարեց Հերաթը: Սակայն տեղեկանալով Աբբաս Միրզայի մահվան և դրանից հետո Ֆաթհ Ալի-շահի մեռնելու մասին, իրանական զորքերի հրամանատար Մոհամմեդ Միրզան, բավարարվելով Հերաթի կառավարիչ Քամրան Միրզայի բանավոր խոստումով այն մասին, որ ինքը ճանաչում է իր վասալական կախումը դաշնակիցներից՝ շտապեց դեպի Թեհրան, որպեսզի իր ձեռքից բաց չթողնի իրանական գահը ժառանգելու հնարավորությունը:

1837թ. Մոհամմեդ-շահը (1834-1848) ձեռնամուխ եղավ նոր արշավանքի դեպի Հերաթ, սակայն Անգլիայի կողմից բացահայտ սպառնալիքների պատճառով շահը ստիպված էր 1838թ. աշնանը հանել Հերաթի պաշարումը: Աջակցելով Իրանին ընդդեմ Ռուսաստանի, անգլիական կառավարության դեկավար Պալմերստոնը միաժամանակ օգնություն էր ցույց տալիս աֆղանական էմիրին ընդդեմ Իրանի:

1851 թ. վերջին և 1852թ. սկզբին կրկին զորքեր ուղարկելով Հերաթ, Թեհրանը հանդիպեց Անգլիայի կոշտ հակազդեցությանը: Անգլիական զորքերը գրավեցին Պարսից ծոցի Խարգ կղզին, պահանջելով, որ իրանական զորքերը հեռանան Հերաթից: Անգլիական դիվանագետներին հաջողվեց ստիպել իրանական սադր-ազամին ստորագրելու մի պայմանագիր, ըստ որի շահական կառավարությունը խոստանում էր այսուհետև չմիջամտել Հերաթի խանության ներքին գործերին:

1856 թ. սկզբին Նասր էդ-Դին շահը (1848-1896) տեղեկանալով, որ անգլիացիների կողմից աջակցություն գտնող աֆղանական էմիր Դոստ Մուհամմեդ-խանը հավակնություններ է ներկայացնում Հերաթի նկատմամբ, կրկին զորքեր ուղարկեց այնտեղ, այս անգամ նրա կառավարիչ Մուհամմեդ Յուսֆին օգնելու պատրվակի ներքո: Դա անգլիացիների կողմից օգտագործվեց նոր կոպիտ միջամտության համար: 1856 թ. նոյեմբերի 1-ին Հնդկաստանի գեներալ-նահանգապետը բրիտանական կառավարության անունից պատերազմ հայտարարեց Իրանին: 1856 թ. վերջին 1857թ. սկզբին անգլիական էքսպեդիցիոն կորպուսը Իրանի դեմ ռազմական գործողություններ սկսեց Պարսից ծոցում, գրավելով Խարգ կղզին, Բուշեհր, Մոհամմարա և Ահվազ քաղաքները, ինչպես նաև այլ կետեր: Իրանական զորքերը այդ պատերազմում, որը հայտնի է երկրորդ Հերաթի պատերազմ անունով, կրեցին պարտություն:

1857թ. մարտին իրանական կառավարությունը Անգլիայի հետ կնքեց հաշտության պայմանագիր, ըստ որի Իրանը հրաժարվում էր իր բոլոր հավակնություններից Հերաթի և առհասարակ աֆղանական մյուս նահանգների նկատմամբ:

Իրանա-ռուսական և իրանա-անգլիական պատերազմներում Ղաջարական Իրանի կրած պարտությունները նպաստեցին եվրոպական տերությունների և առաջին հերթին Անգլիայի և Ռուսաստանի էլ ավելի հուժկու թափով ներթափանցմանը Իրան: Այդ ֆոնի վրա ավելի ուժգին կերպով սկսեց դրսևորվել Իրանի տնտեսական, քաղաքական ու ռազմական հետամնացությունը: Սադր-ազամ Միրզա Թաղի-խան Ամիր Նիզամի կողմից ձեռնարկված հասարակական-քաղաքական ու ռազմական բարեփոխումները, Իրանի ավատական դասի շրջանում չգտնելով պատշաճ աջակցություն, ավարտվեցին ձախողմամբ:

Եվրոպական պետությունների հետ առևտրատնտեսական կապերի ընդլայնումը և մասնավորապես հուժկու թափով եվրոպական ապրանք-

ների հոսքը Իրան, հանգեցրին արհեստագործական արտադրության անկմանը, որը խիստ բացասական անդրադարձներ ունեցավ ոչ միայն արհեստավորական խավերի, այլև առհասարակ ժողովրդի լայն զանգվածների նյութական վիճակի վրա: Հենց դրանով է բացատրվում այն լայն մասնակցությունը, որ ունեցան արհեստավորներն ու մանր վաճառականները XIXդ կեսերին ողջ Իրանն ընդգրկած Բաբիական կամ բաբիների շարժման մեջ:

Այդ շարժման գաղափարական հիմք էր հանդիսանում Շիրազցի վաճառական Ալի Մոհամմեդի ուսմունքը, որն իրեն հայտարարել էր «Բաբ», այսինքն մի դարպաս, որի միջոցով շիաների կողմից պաշտելի «թաքնված իմամ Մահդին» պետք է իր պատգամները հայտնի ժողովրդին: Ալի Մոհամմեդը շարադրեց մի գիրք «Բեյան» (հայտնություն) անունով, որի մեջ շարադրում էր իր ուսմունքի հիմնական դրույթները: Պետք է նշել, որ չնայած Բաբի ուսմունքի կրոնամիստիկական բնույթին, նրա մեջ պարունակվում էին նաև մի շարք դեմոկրատական տարրեր, որոնք ուղղված էին հետադիմության, պահպանողական ավատական կարգերի, անիշխանության ու բռնակալության դեմ: Բաբիական ուսմունքի մեջ կային նաև եվրոպական գաղութատիրության դեմ ուղղված տարրեր:

1847թ. Ալի Մոհամմեդը ձերբակալվեց և նրա ուսմունքը հայտարարվեց հերետիկոսական:

Բաբիզմի գաղափարախոսի աշակերտներն ու հետևորդները էլ ավելի զարգացրին նրա ուսմունքի դեմոկրատական տարրերը, հանդես գալով գույքային անհավասարության և կամայականությունների դեմ:

Իր հիմքում ունենալով բաբիական գաղափարախոսությունը, 1848-1850թթ. Մազանդարանում, Զենջանում և Նեյրիզում բռնկեցին մի շարք զանգվածային ապստամբություններ, որոնք տակայն զորքերի օգնությամբ ճնշվեցին շահական իշխանությունների կողմից:

Իրանում անգլիացիները իրենց առաջին կոնցեսիաները ստացան 1862-1872թթ. Դրանք հիմնականում Իրանի տարածքով անցնող հեռագրական գծեր կառուցելու վերաբերյալ կոնցեսիաներ էին: 1872թ. Բարոն Ռեյտերը իրանական կառավարությունից ստացավ երկաթուղիներ ու տրամվայի գծեր, ջրանցքներ կառուցելու, անտառների շահագործման, խոպան հողերի յուրացման, բացի ոսկու, արծաթի և թանկարժեք քարերի, մնացած բոլոր հանքերի շահագործման մենաշնորհային

իրավունք: Այդ կոնցեսիան, որն իր մասշտաբներով աննախադեպ էր նույնիսկ այդ ժամանակների համար, առաջ բերեց ոչ միայն իրանական ժողովրդի բուռն դիմադրությունը, այլև ռուսական դիվանագիտության վճռական հակազդեցությունը, որի հետևանքով և շահի կողմից այն չեղյալ հայտարարվեց:

Սակայն անգլիական իշխանությունների օժանդակությամբ Բարոն Ռեյտերին հաջողվեց 1889թ. ստանալ Իրանում բանկի հիմնադրման և հանքերի մշակման մենաշնորհային իրավունք: Այդ բանկը, որը կոչվեց Շահնշահական, ընհուպ մինչև 1928թ. կատարում էր Իրանի պետական բանկի դեր և ուներ թղթադրամ կտրելու մենաշնորհային իրավունք:

1901թ. անգլիական դրամատեր Դ'Արսիին հաջողվեց աննշան գումարով ստանալ ողջ Իրանի տարածքում, բացառությամբ հինգ հյուսիսային նահանգների, նավթի հանքավայրերի շահագործման իրավունք: 1909թ. դ՝ Արսիի կողմից ստացված կոնցեսիայի հիման վրա կազմակերպվեց «Անգլո-պարսկական նավթային ընկերություն», որը մինչև XXդ. 50-ական թվականները հանդիսանում էր Անգլիայի հիմնական քաղաքական ու տնտեսական լծակն Իրանում:

1888թ. հայկական ծագում ունեցող ռուսահպատակ Լիանոզովը շահից ստացավ Կասպից ծովի հարավային մասում և նրա հարակից գետերում ձկնային հարստությունների շահագործման իրավունք: Երկու տարի անց, 1890 թ., մեկ այլ ռուս դրամատեր, Պոլյակովը, ստացավ «Պարսկաստանի հաշվառու-վարկատու բանկի» հիմնադրման իրավունք:

Իրանում ռուսական ցարիզմի ձեռքում կարևորագույն լծակ էր հանդիսանում այսպես կոչված իրանական կազակական զորամասը, որը կազմակերպվեց 1879թ.: Նրանում շարքայիները և կրտսեր սպայական կազմը պարսիկներ էին, իսկ բարձր և միջին սպայական կազմը ռուսներ: Այն կազմակերպված էր ռուսական կազակական զորքերի օրինակով, և ընդօրինակում էր նրա համազգեստը, զինվորական կանոնադրությունը և այլն:

Իրանը իր առաջին փոխառությունները նա վերցրեց Անգլիայից և Ռուսաստանից: 1892թ. ժողովրդական ելույթների ճնշման ներքո շահական կառավարությունը ստիպված էր չեղյալ հայտարարել անգլիական «Տալբոթ» ընկերությանը հատկացված կոնցեսիան, որը տալիս էր ողջ Իրանի տարածքում ծխախոտի մեծածախ վաճառքի և նրա վերամշակման մենաշնորհային իրավունք:

Իրանում կոնցեսիաներ էին ձեռք բերում նաև եվրոպական այլ պետություններ: Օրինակ, 1898թ. բելգիացիները ստացան մաքսատներ բաց անելու իրավունք, այնուհետև հույները ստացան Իրանի անտառային հարստությունների շահագործման իրավունք և այլն:

Արտաքին առևտրի զարգացումը, մեքենայական արտադրության եվրոպական ապրանքների ներմուծումը նպաստեցին նախկինում մի շարք կարևոր արհեստագործական արտադրության (ջուլհակություն, կաշեգործություն, մետաքսի արտադրություն, կենցաղային ապրանքների արտադրություն և այլն) անկմանը, դրանով իսկ վատթարացնելով քաղաքի և գյուղի չունևոր խավերի նյութական վիճակը:

Հենց այդ տարիներին հրապարակ իջավ առաջին կարկառուն լուսավորիչ, հայազգի Միրզա Մալքոմ (Մելքոն) խանը, որին Իրանում համարում են «լուսավորչական շարժման հայր»: Լինելով փայլուն կրթություն ստացած և լայնախոհ ու լուսամիտ մի անձնավորություն, նա իր գեղարվեստական ստեղծագործություններում և պրակտիկ գործունեության մեջ (շահական պալատում զբաղեցնում էր բարձր պաշտոններ) քննադատում էր Իրանի հասարակական-քաղաքական կյանքում տիրապետող միջնադարյան ինստիտուտները, դրանք համարելով հնացած ու ժամանակավրեպ և պնդում էր տնտեսական, քաղաքական և մշակութային բարեփոխումներ իրականացնելու հույժ կարևորության ու անհրաժեշտության վրա:

1905 թվականը հանդիսացավ 1905-1911թթ. իրանական հեղափոխության սկիզբը: Հեղափոխական պայքարի հիմնական պահանջը երկրում տահմանադրական կարգերի և օրինականության արմատավորումն էր: Հեղափոխության ընթացքում ստեղծվեցին էնջումեններ (հեղափոխական խորհուրդներ), որոնք կարևորագույն դեր խաղացին տահմանադրական վարչակարգի համար մղվող պայքարում: Ի դեպ, այդ հեղափոխությանը իրենց գործուն մասնակցությունն են բերել հայերը: Մասնավորապես իրանական պատմագրությունը հեղափոխության կարկառուն դեմքերից մեկին՝ եփրեմ խան Դավթյանին, անվանում է «իրանական հեղափոխության հերոս»:

1906թ. օգոստոսի 5-ին Մոզաֆֆար էդ-Դին շահը ստորագրեց հրամանագիր խորհրդարանի գումարման մասին: Առաջին գումարման մեջլիսը 1906թ. դեկտեմբերի 30-ին ընդունեց Հիմնական օրենքը, իսկ 1907թ. հոկտեմբերին նրա Հավելումները, որոնք իրավաբանորեն ձե-

վանկերպեցին երկրի անցումը սահմանադրական միապետության վարչակարգի: Սակայն 1908թ. նոր շահը՝ Մոհամմեդ Ալին, իրանական կազակական զորամասի օգնությամբ կազմակերպեց հեղաշրջում: Դրանից հետո հեղափոխական շարժումը տեղափոխվեց երկրի հյուսիս՝ Ատրպատական, որտեղ այն ճնշվեց ցարական Ռուսաստանի օգնությամբ:

1909թ. հուլիսին ֆիդայիների ջոկատները Գիլյանից և բախտիարական ցեղերի մի մասը հարավից արշավանք կազմակերպեցին դեպի Թեհրան: Մոհամմեդ-Ալի շահը ստիպված էր գահը զիջել իր մանկահասակ որդուն՝ Ահմեդին (1909-1925): Վերականգնվում էր սահմանադրությունը և գումարվում նոր մեջլիս (1909թ. նոյեմբեր):

1907թ. Անգլիան և Ռուսաստանը համաձայնագիր ստորագրեցին Իրանը, Աֆղանստանը և Տիբեթը ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ: Իրանի հյուսիսային մասը մինչև Սպահան քաղաքը հայտարարվում էր ռուսական ազդեցության գոտի, իսկ Սպահանից հարավ ընկած մասը՝ անգլիական ազդեցության գոտի: Երկու գոտիների միջև թողնվում էր մի բարակ շերտ, որը կոչվելու էր չեզոք գոտի: Այն խաղալու էր բուֆերի կամ զսպանակի դեր անգլիական և ռուսական գոտիների միջև:

Հեղափոխության ժամանակ քաղաքական ասպարեզ դուրս եկած իրանական բուրժուազիան և լիբերալ կալվածատերերը, ավատական ազնվականության դեմ պայքարում, որին աջակցում էին Անգլիան և ցարական Ռուսաստանը, փորձում էին օգնություն որոնել Գերմանիայի և ԱՄՆ -ի կողմից: 1911թ. մեջլիսի որոշումով Իրան հրավիրվեց ամերիկյան խորհրդականների մի խումբ Մորգան Շուստերի գլխավորությամբ: Վերջինս առաքելություն ուներ վերակառուցել Իրանի հարկային համակարգը: Սակայն նա հանդիպեց ավատական շրջանների և ռուսական ցարիզմի հակազդեցությանը, որի հետևանքով Շուստերի վերափոխություններն ավարտվեցին ձախողմամբ: Նախկին շահ Մոհամմեդ-Ալիի կողմից ավատական հետադիմության օգնությամբ գահին վերադարձնելու անհաջող փորձից հետո, 1911թ. հոկտեմբեր-նոյեմբերին ցարական Ռուսաստանը խոշոր զորամասեր ուղարկեց Իրան, որոնք երկրի հյուսիսում ջախջախեցին հեղափոխական ջոկատները: Իսկ երկրի հարավում հեղափոխական շարժման օջախները ճզմվեցին Անգլիայի կողմից:

XXդ. սկզբին Իրանում ազդեցություն ձեռք բերելու պայքարի մեջ ընդգրկվեց նաև Գերմանիան, որն աշխատում էր հենվել գլխավորապես

ազգայնական ուժերի վրա: Ռուսաստանում մեծ անհանգստություն առաջ բերեց գերմանացիների կողմից առաջ քաշված Բաղդադի երկաթուղու (Բեռլին-Բաղդադ-Բասրա) շինարարության նախագիծը, որի կոնցեսիան Գերմանիան ստացել էր թուրքական սուլթան Աբդուլ Համիդ II-ից: Ռուսների այդ անհանգստությունը էլ ավելի մեծացավ, երբ 1907թ. գարնանը Թեհրան ժամանած Գերմանական արևելյան բանկի տնօրեն Գուտմանը սկսեց քայլեր կատարել Իրանում գերմանական բանկ բացելու կոնցեսիան ձեռք բերելու ուղղությամբ:

1907թ. ցարական դիվանագիտությունը Գերմանիայի հետ սկսեց բանակցություններ վարել «իրանական հարցի» վերաբերյալ, որոնք ավարտվեցին 1911թ. Պոդստամի համաձայնագրի ստորագրմամբ: Այն փաստորեն զիջում էր Ռուսաստանի կողմից, քանի որ ցարական կառավարությունը պաշտոնապես հրաժարվում էր հակազդել Բեռլին-Բաղդադ երկաթուղու շինարարությանը:

Գերմանական ներթափանցումը Իրան առանձնակի թափով ուժեղացավ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Այդ շրջանում Գերմանիայի հետ դաշինքի գաղափարը Անգլիային և Ռուսաստանին հակազդելու նպատակով կողմնակիցներ ուներ նաև շահական արքունիքի ներկայացուցիչների և հատկապես բուրժուազիայի և լիբերալ կալվածատերերի մոտ:

1914-1918թ.թ. առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո գերմանական գործակալությունը եռանդուն գործունեություն ծավալեց Իրանում: Թեև պատերազմի հենց սկզբում իրանական կառավարությունը հայտարարեց իր չեզոքության մասին, սակայն դրանով հանդերձ երկրի տարածքը վերածվեց Անտանտի պետությունների և պրոգերմանական բլոկի երկրների միջև ռազմական գործողությունների թատերաբեմի: Դեռևս պատերազմի սկզբին Ամրպատականում թուրքական և ռուսական զորքերի միջև գնում էին ռազմական գործողություններ: Պատերազմի տարիներին Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցիչները և Իրանում գործող մեծ թվով հետախույզները տեղական բնակչությունից կազմակերպեցին զինված ջոկատներ: Իրանական կազակական գումարտակը, որի հրամանատարները հիմնականում ցարական սպաներ էին, հանդես էր գալիս Ռուսաստանի կողմից, մինչդեռ շվեդական սպաների կողմից կազմակերպված իրանական ժանդարմերիան ծառայում էր Գերմանիայի և Թուրքիայի շահերին: Հարավում

քոչվոր ցեղերի մի մասը հանդես էր գալիս Անգլիայի կողմից, իսկ մյուսները՝ գերմանացիների:

Պատերազմի ժամանակ (1915թ.) ի հակակշիռ շահական կառավարության, ազգայնականների կողմից ստեղծվեց այսպես կոչված ժամանակավոր կառավարություն, որը գերմանացիների ու թուրքերի օգնությամբ մտադիր էր Իրանից վռնդել անգլիացիներին ու ռուսներին: Սակայն Անտանտի պետությունների ձեռք բերած ռազմական հաջողությունները և 1916թ. Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի կողմից նոր զորամասերի ուղարկումը Իրան հանգեցրին այն ուժերի թուլացմանը, որոնք կողմնորոշվում էին դեպի կենտրոնական պետությունները:

Պատերազմը վերին աստիճանի ծանր անդրադարձներ ունեցավ իրանական տնտեսության վրա: Գյուղատնտեսական արտադրությունը, ներքին և արտաքին առևտրի ծավալները կտրուկ անկում ապրեցին, շատ նահանգներում ավազակախմբերը կատարում էին սանձարձակություններ ու անկարգություններ:

Այդ իրադրության պայմաններում Իրանում տեղի էր ունենում կառավարությունների հաճախակի փոփոխություն: Այս կամ այն կողմի հաջողությունները առաջին համաշխարհային պատերազմի ճակատներում իրենց արտացոլումն էին գտնում իրանական այս կամ այն խմբավորման իշխանության գլուխ գալու խնդրում:

Իրանը նորագույն շրջանում: 1919թ. օգոստոսի 9-ին Թեհրանում Վոսուղ օդ-Դոուլեի կառավարության և Մեծ Բրիտանիայի միջև ստորագրվեց անգլո-իրանական համաձայնագիր, որը Մեծ Բրիտանիային տրամադրում էր իրավունք դե-ֆակտո սահմանելու հսկողություն Իրանի քաղաքականության ու տնտեսության բոլոր հիմնական բնագավառների նկատմամբ: Այդ համաձայնագրով Իրանի բոլոր հիմնարկությունների նկատմամբ սահմանվում էր բրիտանական հսկողություն: Հսկողության տակ էին անցնում նաև Իրանի զինված ուժերն ու ֆինանսները: Հիշյալ համաձայնագրով անգլիացիները ըստ էության ցանկանում էին իրենց հովանավորությունը հաստատել Իրանի նկատմամբ: Համաձայնագիրը Թեհրանում առաջ բերեց իսկական քաղաքական փոթորիկ: Երկրի տարբեր շրջաններում ծայր առան հակաանգլիական ելույթներ, որոնց մասնակիցները պահանջում էին չեղյալ հայտարարել անգլո-իրանական համաձայնագիրը: Հակաանգլիական շարժումները հատկապես լայն թափ ստացան երկրի հյուսիսային շրջաններում՝ Ատրպատականում,

Գիլյանում և այլն: Մասնավորապես զանգվածային բնույթ ուներ այսպես կոչված ջենգելիների («անտառաբնակ») շարժումը Գիլյանում: Կենտրոնական կառավարությանը հաջողվեց այդ շարժումը վերջնականապես ճզմել միայն 1922թ.: Հուժկու շարժումների ազդեցության ներքո 1921թ. սկզբին իրանական մեջլիսը հրաժարվեց հաստատել 1919թ. անգլո-իրանական համաձայնագիրը:

1920թ. մայիսին Իրանի և ՌՍՖՍՀ-ի միջև հաստատվեցին մշտական դիպլոմատիկական հարաբերություններ, իսկ 1921թ. փետրվարի 26-ին կնքվեց սովետա-իրանական պայմանագիր: Հիշյալ պայմանագրով չեղյալ էին հայտարարվում Իրանի հետ կնքած ցարական Ռուսաստանի բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնք ոտնահարում էին Իրանի ազգային անկախությունը:

Դեռևս սովետա-իրանական պայմանագրի ստորագրման նախօրյակին, այսինքն 1921թ. փետրվարի 21-ին, Իրանում տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Այն իրագործեց անգլիացիների հետ կապված Սեյիդ Զիա էդ-Դին Թաբաթաբային իրանական կազակական գումարտակի Ղազվինի ջոկատի օգնությամբ, որի հրամանատարն էր Ռեզա-խանը: Փետրվարի 22-ին Ահմեդ-շահ Ղաջարը Սեյիդ Զիային հանձնարարեց ձևավորել նախարարների կաբինետ:

Հեղաշրջումն իրագործելու շրջանում հասարակական կարծիքը բնավ 1919թ. անգլո-իրանական համաձայնագրի օգտին չէր: Այդ պատճառով գալով իշխանության գլուխ, Սեյիդ Զիյան, որն անցյալում հանդես էր գալիս այդ համաձայնագիրը հաստատելու օգտին, հայտարարեց (փետրվարի 26-ին) նրա վերացման մասին:

Շուտով Սեյիդ Զիյան բախվեց Ռեզա-խանի հետ, որի ձեռքերում, շնորհիվ այն բանի, որ երկրի առավել նշանակալից զինված ուժերը գտնվում էին նրա ենթակայության տակ, ուներ ռեալ իշխանություն: Իշխանության համար այդ պայքարն ավարտվեց նրանով, որ 1921թ. մայիսի 25-ին Սեյիդ Զիյան շահի կողմից հեռացվեց իր պաշտոնից: Նոր կառավարության կազմում Ռեզա-խանը գրացենում էր ռազմական մինիստրի պաշտոնը:

Պարզվեց, որ ռազմական մինիստրը հենց այն «ուժեղ մարդն էր», որի կարիքն ուներ ավատական ազնվականությունը, կալվածատերերն ու վաճառականությունը: Նրանց կատարյալ աջակցությամբ Ռեզա-խանին հաջողվեց մի քանի տարվա ընթացքում ճնշել երկրում ընթացող ինչ-

պես հակակառավարական շարժումները, այնպես էլ ծայրամասային շրջանների կիսաանկախ ավատապետերի անջատողական շարժումները: 20-ական թվականների առաջին կեսին Ռեզա-խանը սիրախաղ էր անում բուրժուական ժողովրդավարների հետ և հենց այդ նպատակով նա հրահրեց «հանրապետական շարժում»: Սակայն իր անձնական իշխանության ամրապնդմանը զուգընթաց (1924թ. հոկտեմբերին Ռեզա-խանը արդեն վարչապետ էր) նա սկսեց մեջտեղից հանել իշխանության համար պայքարում իր մրցակիցներին, նրանցից շատերի հետ ուղղակի տեսնելով հաշվեհարդար:

Անգլիացիները չէին արգելակում քաղաքական այն ուժերի համախմբումը, որոնք աջակցում էին Ռեզա-խանին: Վերջինիս 1925թ. առանց մեծ դժվարության հաջողվեց գահընկեց անել Ահմեդ-շահ Ղաջարին և իրեն հայտարարել Իրանի շահ, իր դինաստիայի համար ընդունելով Փեհլևի անունը:

Գահ բարձրանալուց հետո Ռեզա-շահը դարձավ համարյա լիիշխան դիկտատոր: Միապետի ձեռքում պառլամենտը վերածվեց հլու հնազանդ գործիքի: Սկզբնական շրջանում նոր դինաստիայի հիմնական հենարանը բարձրաստիճան զինվորականներն էին, որոնք հակակառավարական ապստամբությունների ճնշման ժամանակ իշխանություններին թշնամի անձանց հողերի և գույքի բռնագրավման հետևանքով վեր էին ածվել խոշոր հողատերերի: Ամենախոշոր կալվածատերը դարձավ հենց ինքը Ռեզա-շահը: 30-ական թվականների վերջին նրա անձնական կալվածքները կազմում էին 2 հազար գյուղ: Ակտիվան ազնվականությունը, դաշինքի մեջ մտնելով նոր վարչակարգի հետ, որոշակի չափով պահպանեց իր քաղաքական դիրքերը: Վարչակարգի հիմնական սոցիալական հենարան դարձան խոշոր կալվածատերերը, նրանց հարում էր խոշոր վաճառականությունը և 30-ական թվականներին երևան եկած արդյունաբերական բուրժուազիան:

Երկրի քաղաքական և տնտեսական զարգացման տեսակետից Ռեզա-շահի կառավարման տարիները բարդ ու հակասական էին: Մի կողմից նա հանդես էր գալիս որպես բռնատեր, մյուս կողմից երկրի կենտրոնացման և իր իշխանության ամրապնդման նպատակով իրականացնում էր որոշ բարեփոխումներ: Ստեղծվեց կանոնավոր բանակ, անցում կատարվեց դեպի կրթության աշխարհիկ ձևը, բարեփոխումներ կատարվեցին դատական համակարգում և այլն: 1928թ. ստեղծ-

վեց Իրանի Ազգային բանկը, որը 1932թ. սկսեց իրականացնել կենտրոնական պետական բանկի ֆունկցիաներ: Այդ ժամանակվանից սկսած Շահնշահական բանկը զրկվեց թղթադրամ կտրելու իրավունքից: Հարկահավաքման գործը հանձնվեց ֆինանսների նախարարությանը: 1931թ. կառավարությունը ձեռնամուխ եղավ արդյունաբերության մեջ պետական-կապիտալիստական սեկտորի ստեղծմանը: 20-ական թթ. երկրորդ կեսից կառավարությունը սկսեց վարել պետական կապիտալիզմի քաղաքականություն: 1923-1924թթ. սահմանափակ կառավարական հսկողություն սահմանվեց առևտրի նկատմամբ, որը նպաստեց արդյունաբերության զարգացմանը: 1927-1939թ.թ. ընթացքում կառուցվեց տրանսիրանական երկաթուղին (Պարսից ծոցից մինչև Կասպից ծով) 1394կմ երկարությամբ: Երկրում ստեղծվեց տեքստիլ, շաքարի և ցեմենտի արդյունաբերություն: 1928թ. վերացվեց կապիտուլյացիոն ռեժիմը և ընդունվեց օրենք ինքնավար մաքսային տարիֆի վերաբերյալ, որը Իրանի համար ունեցավ հսկայական տնտեսական նշանակություն:

Չնայած արդյունաբերության զարգացման բնագավառում ձեռք բերված որոշակի հաջողություններին, Իրանը մնում էր ագրարային երկիր: 20-30-ական թվականների բարեփոխումները չփոխեցին Իրանի տնտեսության կիսագաղութային բնույթը: Արդյունաբերության առավել զարգացած ճյուղը նավթարդյունաբերությունն էր, որը ամբողջապես պատկանում էր Անգլո-Պարսկական նավթային ընկերությանը (1935 թվականից այն կոչվեց Անգլո-Իրանական նավթային ընկերություն) և արտադրական տեսակետից համարյա կապ չուներ իրանական տնտեսության հետ: ԱՊՆԸ ըստ էության հանդիսանում էր պետություն պետության մեջ: Նրա և իրանական կառավարության միջև մշտապես առաջ էին գալիս վեճեր: 1932թ. իրանական կառավարությունը չեղյալ հայտարարեց ԱՊՆԸ հետ կոնցեսիոն համաձայնագիրը, որը առաջ բերեց անգլիական կառավարության սուր ռեակցիան, որի մոտ էր գտնվում ընկերության բաժնետոմսերի հսկողական ծրարը:

Ռեզա-շահ փեհլևիի կառավարման շրջանում 1932-1933թ.թ. անգլո-իրանական կոնֆլիկտը հանդիսացավ Իրանի պատմության մեջ արտաքին քաղաքական ամենասուր բախումներից մեկը: Եվ այն լուծվեց հակառակ երկրի ազգային շահերի: 1933թ. Իրանը ընկերության հետ կնքեց նոր կոնցեսիոն համաձայնագիր: Իրանը սահմանափակվեց իր

պահանջների նվազագույն բավարարմամբ, մինչդեռ ընկերությունը կարողացավ երկարաձգել կոնցեսիայի ժամկետը 32 տարով և ձեռք բերեց իրավունք այլևս Իրանին չվճարել եկամտահարկ: Այսպիսով Ռեզա-շահը ընկրկեց անգլիական ճնշման առջև և կտրուկ նահանջեց ընկերության նկատմամբ որդեգրած իր նախկին քաղաքականությունից:

30-ական թվականների երկրորդ կեսի Իրանի հասարակական բնորոշ են բացասական տեղաշարժերը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության բնագավառում: Տնտեսական դրության որոշակի կայունացումը և արտադրողական ուժերի, տրանսպորտի, առողջապահության զարգացման բնագավառում ձեռք բերված որոշակի հաջողությունները չհանգեցրին բնակչության նյութական վիճակի բարելավմանը: Ընդհակառակը, անուղղակի հարկերի մեծացումը կալվածատիրական և կապիտալիստական շահագործման ուժեղացմամբ և այլ գործոններ հանգեցրին բնակչության նյութական վիճակի էլ ավելի վատթարացմանը: Սոցիալական հուզումները կանխելու նպատակով Ռեզա շահի կառավարությունը 30-ական թվականներին ուժեղացրեց հալածանքները վարչակարգի հակառակորդների և հասարակության առաջադեմ հայացքներ ունեցող ներկայացուցիչների նկատմամբ:

Նոր միտումներ էին դրսևորվում նաև Իրանի արտաքին քաղաքականության բնագավառում: Գնալով Ռեզա-շահը ավելի սերտ հարաբերություններ էր հաստատում ֆաշիստական Գերմանիայի հետ: 1937թ. Իրանը ստորագրեց այսպես կոչված Սաադաբադյան պակտը, որը Իրանի, Թուրքիայի, Իրաքի և Աֆղանստանի միջև տարածաշրջանային մի դաշինք էր: Իր դիկտատորական վարչակարգն ամրապնդելու նպատակով Ռեզա-շահը հետևողականորեն ուժեղացնում էր բանակը, ոստիկանությունն ու ժանդարմերիան: Ջարդ էր տրվում շովինիզմի քաղաքականությանը, որը մատուցվում էր իբրև «ազգի միասնություն» ապահովող գործոն:

30-ական թվականների երկրորդ կեսին ֆաշիստական Գերմանիային հաջողվեց լայնորեն ներթափանցել Իրանի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքի բոլոր ոլորտները:

1941թ. ՍՍՀՄ-ի կառավարությունը երեք անգամ (հունիսի 26-ին, հուլիսի 19-ին և օգոստոսի 16-ին) նոտաներ ներկայացրեց իրանական կառավարությանը, որոնցում նշվում էր, որ իրանական իշխանությունների կողմից Իրանում գերմանական գործակալության գործունեության

թողտվությունը անհամատեղելի է 1921թ. սովետա-իրանական պայմանագրի դրույթների, ինչպես նաև իրանական կառավարության կողմից պաշտոնապես հայտարարված չեզոքության քաղաքականության հետ:

Այսպիսով վկայակոչելով 1921թ. սովետա-իրանական պայմանագրի 6-րդ կետի դրույթն այն մասին, որ եթե Իրանում ստեղծվի վտանգավոր իրավիճակ Խորհրդային Միության անվտանգության համար, ապա վերջինս իրավունք ունի զորքեր մտցնել Իրանի տարածքը, 1941թ. սեպտեմբերին խորհրդային զորքերը անցան սահմանը և մուտք գործեցին Իրան:

Միաժամանակ երկրի հարավից Իրան մտան անգլիական զորքերը: Իրանի զինված ուժերը դաշնակիցների զորքերի նկատմամբ ցուցաբերեցին թույլ դիմադրություն և ընդամենը մի քանի օրվա ընթացքում կամպանիան հասավ իր ավարտին:

Դաշնակիցների զորքերի մուտքից հետո տեղի ունեցավ կառավարության անկում և գահից Ռեզա-շահի հրաժարում (1941թ. սեպտեմբերի 16-ին) հօգուտ գահաժառանգ Մոհամմեդ Ռեզա Փեհլևիի: Նոր շահը և նորաստեղծ կառավարությունը ցանկություն հայտնեցին համագործակցել դաշնակցային պետությունների հետ: Գերմանահպատակների և ֆաշիստական ակտիվ գործակալների մեծ մասը ձերբակալվեցին կամ վտարվեցին երկրից:

1942թ. ստորագրվեց պայմանագիր ՍՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Իրանի միջև դաշինքի վերաբերյալ, որը սահմանում էր Գերմանիայի դեմ պատերազմի շրջանում այդ պետությունների հարաբերությունների քաղաքական-իրավական հիմքերը: Պատերազմի ավարտից հետո ՍՍՀՄ և Անգլիայի զորքերը երեք ամսվա ընթացքում պետք է հեռանային Իրանի տարածքից:

Իրանը իր պատկառելի ներդրումն ունեցավ ֆաշիստական Գերմանիայի դեմ պայքարի ասպարեզում, ապահովելով հուսալի կապ ՍՍՀՄ-ի և նրա դաշնակիցների միջև, մասնավորապես անգլո-ամերիկյան օգնության գծով բեռների տեղափոխման բնագավառում դեպի Խորհրդային Միություն:

1943թ. հակահիտլերյան կոալիցիայի երեք պետությունները՝ Անգլիան, ԱՄՆ-ը և ՍՍՀՄ-ն Թեհրանն ընտրեցին որպես իրենց կոնֆերանսի վայր: Թեհրանի հայտնի կոնֆերանսը նվիրված էր ֆաշիստական Գերմանիայի դեմ հաջող պայքարի կազմակերպման հարցերին: Այդ կոնֆե-

ռանի ժամանակ ընդունվեց Իրանի մասին երեք պետությունների Հռչակագիրը, որտեղ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները նշեցին այն օգնության մասին, որ Իրանը ցուցաբերեց ընդհանուր թշնամու դեմ պատերազմ մղելու հարցում, ինչպես նաև խոստացան տնտեսական օգնություն ցուցաբերել իրանական կառավարությանը:

Դեռևս 1942թ. Դավամ օս-Սալթանեի կառավարման շրջանում Իրան ժամանեցին երկու ամերիկյան ռազմական միսիաներ բանակում և ժանդարմերիայում աշխատելու համար: Շուտով ամերիկյան խորհրդականները հայտնվեցին բազմաթիվ նախարարություններում և պետական այլ հիմնարկություններում:

1943թ. ամերիկացիները նա զորքեր մտցրին Իրան: Այդ նույն ժամանակ (1943թ. հունվարին) Իրան ժամանեց ամերիկյան ֆինանսական խորհրդական Արթուր Միլսպոն: Սակայն նրա գործունեության հետևանքով Իրանի ֆինանսական և տնտեսական դժվարությունները չմեղմացան: 1944թ. մայիսի վերջին մեջլիսի XIV գումարման պատգամավորները մեջլիսին ներկայացրին մի օրինագիծ Միլսպոյի արտակարգ լիազորությունները վերացնելու մասին: Սակայն Միլսպոյի կողմնակիցներին հաջողվեց հաղթահարել ճգնաժամը, թեև որոշ ժամանակ անց մեջլիսը այնուամենայնիվ որոշում ընդունեց Միլսպոյի լիազորությունների դադարեցման մասին: Այդ հանգամանքը տակայն բնավ չէր նշանակում, որ երկրում ամերիկյան ազդեցությունը թուլացել է: Ընդհակառակը, երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին էտապում ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական կշիռը երկրում գնալով մեծանում էր:

Իր հերթին Խորհրդային Միությունը նա փորձում էր ակտիվորեն միջամտել Իրանի ներքին գործերին: Այդ նպատակով Իրանական Ադրբեջանում և Քրդստանում Խորհրդային Միության հրահրմամբ սկսվեց մի շարժում այդ երկրամասերը Իրանից անջատելու համար: Իրանական Ադրբեջանում այդ շարժումը ղեկավարվում էր այսպես կոչված «Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցության» կողմից, որը իր հրամանագրերը ստանում էր Մոսկվայից (Բերիա) և Բաքվից (Միր Ջաֆար Բաղիրով) կողմից: Շարժման վերջնական նպատակն էր Իրանական Ադրբեջանը միացնել Սովետական Ադրբեջանին: 1945թ. նոյեմբերին Թավրիզում գումարված «ժողովրդական ժողովը» ընդունեց մի հռչակագիր, որի մեջ առաջ էր քաշվում Ադրբեջանին «լայն ինքնավարություն» տրամադրե-

լու հարցը: 1945թ. վերջին Իրանական Ադրբեջանում գումարվեց ազգային ժողով և ստեղծվեց «Իրանական Ադրբեջանի» առանձին կառավարություն: Իրադարձությունները սրընթաց կերպով տանում էին դեպի իրանական պետությունից նրա կարևորագույն նահանգներից մեկի անջատմանը:

«Իրանական Ադրբեջանի կառավարությունը» իրար հետևից ընդունում էր կոմունիստական ոգով օրենքներ, որոնք կոչված էին օրինականացնել Ադրբեջանի «անկախությունը»:

Ղավամ ոս-Սալթանեի կառավարությունը ստիպված էր 1946թ. հունիսի 13-ին համաձայնագիր կնքել «Իրանական Ադրբեջանի դեմոկրատական իշխանության» ներկայացուցիչների հետ, ճանաչելով Ադրբեջանի «ազգային մեջլիսը» և այդ «կառավարությանը» շնորհելով մի շարք իրավունքներ: Իրանական կառավարությունը նույնպիսի իրավունքներ շնորհեց նաև Հյուսիսային Քրդստանի կառավարությանը:

Դեռևս մինչև «Իրանական Ադրբեջանի կառավարության» ներկայացուցիչների հետ համաձայնագրի կնքումը, Ղավամի կառավարությունը ՍՍՀՄ-ի հետ ստորագրեց համաձայնագիր (1946թ. ապրիլի 4-ին) Հյուսիսային Իրանում նավթի հետախուզման ու շահագործման համար մի համատեղ ձեռնարկություն ստեղծելու վերաբերյալ: Երկու կառավարությունների միջև նաև պայմանավորվածություն ձեռք բերվեց Իրանում մնացած Սովետական բանակի զորամասերի երկրից դուրս բերման ժամկետների վերաբերյալ:

Միաժամանակ Ղավամի կառավարությունը քայլեր ձեռնարկեց Իրանում կոմունիստական քարոզչությանը հակազդելու նպատակով: Նրա իրագործած միջոցառումները նպատակ ունեին նպաստել երկրի քաղաքական իրավիճակի կայունացմանը և տնտեսական դրության բարելավմանը:

Երկրի ներսում բողոքի շարժում սկսվեց Իրանական Ադրբեջանն ու Քուրդիստանը երկրից անջատելու փորձերի դեմ: Մասնավորապես երկրի հարավում՝ Ֆարսի նահանգում սկսվեց մի շարժում, որի մասնակիցները պահանջում էին կտրուկ միջոցառումներ ձեռնարկել՝ կասեցնելու համար Իրանական Ադրբեջանի և Քրդստանի անջատումը Իրանից: Շարժման մասնակիցները պահանջում էին նաև կառավարության կազմից հեռացնել կոմունիստներին կամ «Իրանի ժողովրդական կուսակցության» (Թուդե) ներկայացուցիչներին:

1946թ. հոկտեմբերին Ղավամը վերահիմնեց իր կառավարությունը, նրանից հեռացնելով ԻԺԿ-ի անդամ նախարարներին: Երկրի մի շարք նահանգներում կառավարությունը մտցրեց ռազմական դրություն: 1946թ. դեկտեմբերին կառավարությունը իր զինված ուժերը մտցրեց Իրանական Ադրբեջան և Քրդստան, այդ երկրամասերում օրինականությունն ու կարգ ու կանոնը վերականգնելու համար:

Այդ իրադարձություններից հետո XV գումարման մեջլիսը որոշում ընդունեց չեղյալ հայտարարել 1946թ. ապրիլի 4-ի սովետա-իրանական նավթային համաձայնագիրը:

1947թ. հոկտեմբերի 6-ին Ղավամի կառավարությունը ԱՄՆ-ի հետ կնքեց ռազմական համաձայնագիր: Այն նախատեսում էր նաև ամերիկյան ռազմական միսիայի ժամանում Իրան: 1948թ. ԱՄՆ-ը Իրանին հատկացրին 10 միլիոն դոլար գումարով մի փոխառություն՝ զենք և զինամթերք գնելու համար: Դա կատարվում էր Իրանի նկատմամբ «Տրումենի դոկտրինայի» շրջանակներում:

1949թ. փետրվարին կազմակերպվեց մահափորձ Մոհամմեդ Ռեզա-շահ Փեհլևիի նկատմամբ, որի հետևանքով շահը վիրավորվեց: Այդ դեպքից հետո կառավարությունն արգելեց Իրանի ժողովրդական Կուսակցության գործունեությունը:

Քաղաքական այս իրադարձությունները ուղեկցվում էին երկրի տնտեսական վիճակի վատթարացմամբ: 1948-1949թթ. արտահանումն ապրեց կտրուկ անկում, իրանական ռեալի կուրսը արագ արժեքազրկվում էր: Իրանական դրամի ռեալ արժեքի անկումը տանում էր դեպի լայն ապառման ապրանքների թանկացում: Մի երկրում, որտեղ ինքնագործ բնակչության 80%-ը կապված էր հողագործության ու անասնապահության հետ, գյուղատնտեսությունը ավելի ու ավելի նվազ չափով էր բավարարում ներքին շուկայի պահանջները:

Երկրում ստեղծված այդ վիճակը առաջ էր բերում անսքող դժգոհություն: Լարվածության թուլացման նպատակով Իրանի կառավարող շրջանները դեռևս 1946թ. ձեռնամուխ եղան զարգացման ու վերակառուցման առաջին հնգամյա պլանի կազմմանը, որը կոչված էր լուծել մի քանի օրախնդիր տնտեսական պրոբլեմներ: Այդ պլանը կազմվեց 1946-1948թթ. ամերիկյան ընկերությունների հետ համագործակցությամբ: Ամերիկյան մասնագետների խորհրդով նրանում հիմնական ուշադրությունը դարձված էր գյուղատնտեսական արտադրության բարձ-

ռացմանը, իսկ արդյունաբերության զարգացմանը հատկացվում էր անբնական տեղ:

40-ական թվականների վերջին և 50-ական թվականների սկզբին Իրանում ծայր առավ համաժողովրդական շարժում հանուն երկրի հարստի նավթի ազգայնացման: Հակառանգլիական գործադուլային շարժումն ընդգրկեց Անգլո-իրանական նավթային ընկերության (ԱԻՆԸ) բոլոր ձեռնարկությունները: Այդ շարժման ճնշման ներքո 1951թ. ապրիլին մեջլիսը օրենք ընդունեց նավթային արդյունաբերության ազգայնացման մասին: Այդ շարժումը ղեկավարում էր Ազգային ճակատի ղեկավար, վարչապետ դոկտոր Մոհամմեդ Մոսադեղը: Բրիտանական կառավարությունը ԱՄՆ-ի հետ սերտ համագործակցությամբ ճնշում էր գործադրում իրանական կառավարության վրա, պահանջելով վերանայել ու չեղյալ հայտարարել նավթի ազգայնացման վերաբերյալ օրենքը: Քաղաքական ճանապարհով չհասնելով իրենց նպատակին, միասնական ճակատով հանդես եկող միջազգային նավթային կորպորացիաները («յոթ քույրեր»), որոնց հսկողության տակ էին գտնվում արևմտյան աշխարհի համարյա բոլոր նավթի վաճառահանման շուկաները և տանկերային նավատորմի մեծագույն մասը, թույլ չտվեցին Մոսադեղի կառավարությանը դուրս գալու նավթի համաշխարհային շուկա:

Սակայն դա չվիատեցրեց Մոսադեղին և նրա կառավարությանը, որոնք առաջ քաշեցին «տնտեսությունը առանց նավթի» գաղափարը: Սակայն այդ քաղաքականությունը Իրանի նավթային շրջափակման պայմաններում չարդարացրեց իրեն: Նավթային ճգնաժամի կապակցությամբ Իրանը ավելի ու ավելի ուժգին կերպով էր զգում տարադրամի պակաս: Նման պայմաններում Մոսադեղը մեջլիսից պահանջեց իր կառավարությանը տրամադրել արտակարգ լիազորություններ, իսկ իրեն ռազմական նախարարի պաշտոնը, որը առաջ բերեց ոչ միայն մեջլիսի պատգամավորների մի մասի դիմադրությունը, այլև բարդությունների տեղիք տվեց արքունիքի հետ: Ի վերջո 1952թ. հուլիսի 16-ին Մոսադեղը ստիպված էր հրաժարական տալ: Սակայն նոր վարչապետ Ահմեդ Ղավամի կառավարությունը ի վիճակի չեղավ կայունացնելու երկրի ներքին իրադրությունը: Գործադուլային շարժումները ընդունել էին հումքու թափ: Իր գործունեությունը անօրինակ կերպով ակտիվացրել էր Իրանի ժողովրդական կուսակցությունը («Թուդե»), որը իր ամբոխավարական կարգախոսներով կարողացել էր մեծ թվով զանգվածների ներգրավել «պայքարի» մեջ:

Այդ պայմաններում Իրանի շահը ստիպված էր կրկին հանձնարարել Մոսադեղին ձևավորելու նոր կառավարություն, միաժամանակ համաձայնվելով նրան տրամադրել ռազմական մինիստրի պաշտոնը:

Երկրի ներքաղաքական դրության շիկացման պայմաններում 1953թ. հոկտեմբերի 16-ին Մոսադեղը խզեց դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի հետ:

1953թ. մայիսի 28-ին իրանական կառավարությունը դիմեց ԱՄՆ-ին խնդրելով կամ ազդել Մեծ Բրիտանիայի կառավարության վրա, որպեսզի նա ընդունի Իրանի ներկայացրած պահանջները նավթային ճգնաժամի հետ կապված հարցերի լուծման համար և կամ Իրանին ցուցաբերել ֆինանսական օգնություն:

Սակայն Իրանի խնդրանքը մերժվեց, իսկ ԱՄՆ-ի պետդեպարտամենտը հրապարակեց մի հայտարարություն, որտեղ նշվում էր, որ Իրանը կարող է հաղթահարել իր ֆինանսական դժվարությունները միայն անգլո-իրանական կոնֆլիկտը լուծելու դեպքում:

Մինչդեռ Մոսադեղի սոցիալական հենարանը գնալով նեղանում էր: Նրան նախկինում աջակցություն ցույց տվող ուժերը աստիճանաբար հեռանում էին նրանից, հիասթափելով կամ չհավատալով նրա քաղաքականության հաջողությանը:

1953թ. մարտին Մոսադեղի և «Թուդեհ» կուսակցության նախաձեռնությամբ Թեհրանում տեղի ունեցան զանգվածային հանրահավաքներ և ցույցեր: Իր ելույթներում Մոսադեղն առաջարկում էր շահին հեռանալ երկրից: Առհասարակ նա զարգացնում էր այն միտքը, որ շահը պետք է թագավորի և ոչ թե կառավարի: Ժողովրդին ուղղված իր դիմումի մեջ նա մեղադրում էր թագավորող դինաստիայի ներկայացուցիչներին արյունահեղությունների կազմակերպման և զանգվածային ցույցերի գրգռման մեջ:

1953թ. օգոստոսի 19-ին տեղի ունեցավ հեղաշրջում, որի հետևանքով Մոսադեղի կառավարությունը տապալվեց: Իշխանության գլուխ անցավ հեղաշրջումն իրականացրած պաշտոնաթող գեներալ Զահեդիի կառավարությունը: 1953թ. վերջին Մեծ Բրիտանիայի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին:

Արևմտյան նավթային ընկերությունները ԻՄՆԸ (Իրանի նավթի ազգային ընկերություն) հետ կնքեցին պայմանագրեր, ստեղծելով մի կոնսորցիում (Միջազգային նավթային կոնսորցիում՝ ՄՆԿ), որը ձեռք

էր բերում իրանական նավթի հանույթի, մշակման և արտահանման իրավունքը: ՄՆԿ-ի բաժնետոմսերի 4%-ն անցավ «Բրիտիշ Պետրոլեում Կոմպանիին (նախկին ԱՐՆԸ-ը), 14 %-ը՝ անգլո-հոլանդական «Ռոյալ-Դաչ-Շելլին», 35%-ը՝ ամերիկյան «Մեծ հնգյակին» («Ստանդարտ Օյլ օֆ Նյու-Ջերսի», «Սոքոնի Մոբիլ Օյլ», «Ստանդարտ օյլ օֆ Կալիֆորնիա», «Թեքսակո Ինք», «Գալֆ Օյլ Կորպորեյշն»), 5 %-ը՝ «Միդիկոն Էքսպլոր» ամերիկյան ընկերությունների խմբին և 6%-ը՝ ֆրանսիական «Կոմպանի ֆրանսեզ դե պետրոլ» ընկերությանը:

Այսպիսով ՄՆԿ-ի ստեղծումով ամերիկյան կապիտալը թափանցում էր աշխարհի ամենախոշոր նավթ արդյունահանող երկրներից մեկի մեջ:

ՄՆԿ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն իրանական նավթի շահագործումից ստացված եկամուտները բաշխվելու էին «Հիսուն առ հիսուն» («Ֆիֆթի-ֆիֆթի») սկզբունքով, այսինքն Իրանական ազգային նավթային ընկերությունը ստանալու էր ՄՆԿ-ի կողմից արդյունահանվող հում նավթի վաճառքի եկամուտների 50%-ը:

Իրանի ներքին կյանքում տեղի ունեցող վերոհիշյալ իրադարձությունները ուղեկցվում էին արտաքին քաղաքականության բնագավառում իրականացվող մի շարք փոփոխություններով: Իրանական դեկավարները հանդես եկան մի շարք հայտարարություններով այն մասին, որ չեզոքության կուրսը, որին Իրանը հետևել էր վերջին 150 տարիների ընթացքում, ոչ մի լավ բան չի խոստանում»: Առաջարկվում էր համարձակորեն ընտրել նոր ուղի և «ձեռք բերել արժանավոր դաշնակիցներ»:

1955 թ. հոկտեմբերի 11-ին նոր վարչապետ Հուսեյին Ալան հայտարարեց, որ Իրանը ցանկություն ունի մտնելու Բաղդադի պակտի մեջ: (Բաղդադի պակտին անդամակցում էին Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Իրաքը, Իրանը և Պակիստանը): Այդ պակտին անդամակցելուց հետո 1957 թ. իրանական կառավարությունն ընդունեց «Էյզենհաուերի դոկտրինան», խոստանալով ռազմական բնագավառում սերտորեն համագործակցել ԱՄՆ-ի հետ:

Զգուշով կասեցնել Իրանի մերձեցումը արևմուտքի հետ, Խորհրդային Միությունը 1954 թ. դեկտեմբերին Թեհրանի հետ կնքեց մի համաձայնագիր սահմանային և ֆինանսական հարցերի վերաբերյալ: Այդ համաձայնագրով Մոսկվան պարտավորվում էր երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում Իրանի ճանապարհներից օգտվելու դիմաց վճարել նրան հասանելիք խոշոր գումարը: Իրանին վերադարձվեց

նաև նրա ոսկու պաշարը: 1957թ. ապրիլին Թեհրանում ստորագրվեցին արձանագրություններ սովետա-իրանական սահմանների ճշտման վերաբերյալ, ինչպես նաև մեկ այլ համաձայնագիր ՍՍՀՄ տարածքով տրանզիտի վերաբերյալ: 1957թ. օգոստոսին կնքվեց համաձայնագիր Արաքս և Աթրեք գետերի սահմանամերձ շրջանների ջրային և էներգետիկ ռեսուրսների համատեղ օգտագործման վերաբերյալ:

Սակայն վերոհիշյալ համաձայնագրերը ի վիճակի չեղան որևէ փոփոխություններ մտցնելու շահական կառավարության կողմից ընտրած քաղաքական կուրսի մեջ: Մերժելով Խորհրդային Միության կողմից առաջարկված «չհարձակվելու վերաբերյալ պակտի» կնքումը, 1959թ. մարտի 5-ին Իրանը երկկողմանի ռազմական համաձայնագիր կնքեց ԱՄՆ-ի հետ: Հիշյալ համաձայնագրի ստորագրումից հետո շահական կառավարությունը սկսեց սպառազինությունների անզուսպ մրցավազք: Միաժամանակ Էբբայի կառավարությունը սկսեց վարել «բաց դռների» քաղաքականություն:

Տնտեսության զարգացումը խթանելու և ինֆրաստրուկտուրան բարելավելու նպատակով 1956թ. ընդունվեց «երկրորդ յոթնամյա պլանը»: Սակայն այն կրում էր չափազանց սահմանափակ բնույթ թե՛ իր նպատակներով և թե՛ իր բյուջեով:

Կառավարող վերնախավը փորձում էր գոյություն ունեցող վարչակարգի ամրապնդման և նրա կենսունակության բարձրացման նպատակով իրագործել լիբերալիզացման պատրանք ստեղծող քաղաքականություն: Այսպես, թույլատրվեց բուրժուական, մանր-բուրժուական և կեղծ սոցիալիստական կուսակցությունների ու կազմակերպությունների լեգալ գործունեությունը:

50-ական թվականների վերջին և 60-ական թվականների սկզբին Իրանում սկսված ֆինանսական ճգնաժամը և նրան ուղեկցող անկումը արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրության բնագավառում, ինչպես նաև երկրում գնալով ուժեղացող սոցիալական խմորումներն ու բացահայտ ելույթները վկայում էին, որ երկրում հասունանում է քաղաքական ճգնաժամ: Այդ պայմաններում, շահական արքունիքն ու նրան մոտ կանգնած բյուրոկրատիայի ներկայացուցիչները, սկսեցին խոսել շտապ կարգով սոցիալ-տնտեսական բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտության մասին, գիտակցելով, որ հակառակ դեպքում գործը կարող է հասնել սոցիալական ցնցումների: Հենց այդ նպատակով որոշվեց իրականացնել մի շարք բարեփոխումներ, որոնք

Իրանի տիրապետող շրջանների կողմից կոչվեցին «Մպիտակ հեղափոխություն» կամ «Շահի և ժողովրդի հեղափոխություն»:

Նախ, 1961թ. ընդունվեց օրենք ագրարային բարեփոխում իրականացնելու վերաբերյալ: Այն սահմանափակում էր կալվածատիրական հողատիրությունը մեկ գյուղի հողերով, սահմանվում էր փոխհատուցման չափերը, որոնք կալվածատերերը պետք է ստանային իրենց այն հողերի դիմաց, որոնք ըստ օրենքի հանձնվել էին գյուղացիությանը և այլն: Ճիշտ է, ագրարային բարեփոխումների (1961-1971) հետևանքով հողերի մի մասը անցավ գյուղացիությանը, իրանական գյուղում կապիտալիստական հարաբերությունները սկսեցին զարգացում ապրել և այլն, սակայն այնուամենայնիվ այդ բարեփոխումը չլուծեց Իրանում գյուղատնտեսական արտադրության շեշտակի բարձրացման պրոբլեմը և արմատապես չբարելավեց գյուղացիության վիճակը:

Ինչ վերաբերում է Իրանի տնտեսությանը, ապա այն 60-ական թվականների կեսերից զարգանում էր բարձր տեմպերով: 70-ական թվականների կեսերից նավթից ստացվող եկամուտների արտակարգ բարձր լինելու հետևանքով երկիրը թևակոխեց ֆինանսատնտեսական աննախընթաց վերելքի ուղին: 60-70-ական թվականներին երկրում սկսեց իրականացվել լայնամասշտաբ ինդուստրացում, որը միտված էր պատմականորեն կարճ ժամանակամիջոցի ընթացքում հաղթահարել տնտեսական հետամնացությունը:

Սոցիալ-տնտեսական բարեփոխումների հանրագումարը Մոհամմեդ Ռեզա շահը անվանեց «Շահի և ժողովրդի հեղափոխություն»: Իր տնտեսական, սոցիալական, փիլիսոփայական-գաղափարական սկզբունքները երկրի վեստերնիզացման վերաբերյալ շահը շարադրեց իր «Դեպի մեծ քաղաքակրթություն» գրքում:

Իրանի շիիթական հոգևորականությունը երկրի արևմտականացման կուրսը ընդունեց սվիններով: Հոգևորականության ու մտավորականության այդ տրամադրությունները և նրանց կողմից մղվող գաղափարական պայքարը դարձավ երկրում հեղափոխական իրադրության ձևավորման գործոններից մեկը:

Հենց այդ շրջանում (1963թ. մարտին) իրանական հոգևորականության ականավոր ղեկավարներից մեկը՝ այաթոլլա Ռուհոլլա Խոմեյնին (ծնվել է 1900թ. մայիսի 18-ին, Թեհրանից 250կմ. հեռավորության վրա գտնվող Խոմեյն քաղաքում) Ղումում հրապարակեց մի հայտարա-

ություն, որտեղ սպանիչ քննադատության էր ենթարկում Իրանում իշխանության քաղաքական էությունը, այն բնորոշելով որպես պրոիմպերիալիստական և հակաժողովրդական իշխանություն, որը ժողովրդին զրկում է իր օրինական իրավունքներից:

1963թ. հունիսի 4-ին բացահայտ հակաշահական ելույթի համար Խոմեյնին ձերբակալվեց: Դա պատճառ հանդիսացավ Թեհրանում զանգվածային հակակառավարական ելույթների համար: Սակայն իշխանությունները դաժան հաշվեհարդար տեսան այդ ելույթների հետ, չխնայելով ոչ աջ և ոչ էլ ձախ ընդդիմության ղեկավարներին: 1963թ. հունիսի 5-8-ի ընթացքում հարյուրավոր մարդիկ սպանվեցին ու վիրավորվեցին, հազարավորներ նետվեցին բանտերը: Երկրում դրությունը գնալով շիկանում էր:

Իրանում բարեփոխումների իրականացումը հանգեցրեց ինչպես տնտեսության մեջ, այնպես էլ քաղաքական կյանքում պետության դերի մեծացմանը: Շահն աշխատում էր այդ բարեփոխումներն օգտագործել նաև իր անձնական իշխանության ուժեղացման նպատակով: Նա սկսեց խաղալ վճռական դեր բոլոր հիմնական պետական գործերում: Պաշտոնապես նա դիտվում էր որպես մի եզակի անձ, որը լիազորված էր մշակելու արտաքին ու ներքին քաղաքականության գիծը:

Ազգային հարցում Փեհլևիների դինաստիան առաջ քաշեց «միասնական իրանական ազգի» կոնցեպցիան, որի հիմքի վրա կառավարությունը վարում էր ազգային փոքրամասնությունների բռնի համաձուլման ու «ազգականացման» քաղաքականություն:

Սակայն կարճ ժամանակաշրջան պահանջվեց համոզվելու համար, որ սոցիալ-ռեֆորմիզմի պետական քաղաքականությունը ճեղքվածքներ է տալիս և ի վիճակի չէ հարթեցնելու իրանական հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալական ու քաղաքական հակասությունները:

70-ական թվականներին նավթային եկամուտների շեշտակի արագ տեմպերով աճի կապակցությամբ, XX դարում առաջին անգամ Իրանի պատմության մեջ հայտնվել էին բացառիկ ֆինանսական հնարավորություններ, որոնց արդյունավետ օգտագործումը կարող էր ստեղծել երկրի սոցիալ-տնտեսական հետամնացությունը հաղթահարելու հիմքեր: Սակայն այդ աճող եկամուտների օգտագործման քաղաքականության մշակումը ամբողջապես գտնվում էր շահի և նրա մերձակա շրջապատի ձեռքերում, որոնք սոցիալ-տնտեսական բնույթի կարևորագույն

հարցեր լուծելիս, որպես կանոն, նախապատվությունը տալիս էին իրենց անձնական շահերին, որոնք հակասում էին հասարակության և ժողովրդական լայն զանգվածների իրական կարիքներին: Նման գիծը անխուսափելիորեն տանում էր դեպի իրանական քաղաքականության մեջ հասարակության և պետության համար կործանարար վոլյունտարիզմի:

Շահը առաջ քաշեց արագացված տեմպերով Իրանը արդյունաբերական տեսակետից զարգացած պետության վերածելու ծրագիրը և ըստ այնմ նավթադոլարների հաշվին խոշոր մասշտաբներով ձեռք էին բերվում ժամանակակից տեխնոլոգիա, պայմանագրեր էին կնքվում երկրում ատոմային էլեկտրակայաններ, աշխարհում ամենախոշոր նավթաքիմիական կոմբինատ, մետալուրգիական գործարաններ և այլն կառուցելու վերաբերյալ՝ առանց հաշվի առնելու երկրի առկա տնտեսական հնարավորությունները, նրա արտադրական ու սոցիալական ինֆրաստրուկտուրայի մակարդակը: Այդ բոլորը ինքստինքյան պայմանավորում էր երկրի արագացված տեմպերով արդյունաբերական զարգացման պլանների ձախողումը:

Մոհամմեդ Ռեզա Փեհլևին երկրում սահմանել էր անձնական իշխանության, ավելի ճիշտ դինաստուրայի վարչակարգ, դրանով իսկ ոտնահարելով տահմանադրական ազատությունները: Ժողովրդին հնազանդության մեջ պահելու համար լայնորեն օգտագործվում էր ճնշման ու հարկադրման ապարատը: Այդ գործընթացը, որը ձգվում էր տարիների ընթացքում և որոշում էր իրանական հասարակության քաղաքական մթնոլորտը ի վերջո հանգեցրեց 1978-1979թ.թ. հեղափոխությանը:

Ընդդիմության առավել ակտիվ դեմքերից շարունակում էր մնալ Խոմեյնին, որը բացահայտ ձևով հանդես էր գալիս միապետության և նրա արևմտյան հովանավորողների դեմ: 1964թ. նոյեմբերին շահական կառավարության կողմից նա վտարվեց Թուրքիա: 1965թ. նա տեղափոխվում է Էն-Նեջեֆ (Իրաք), այնտեղ մնալով 13 տարի: Հենց այստեղ էլ նա գրեց իր հայտնի «Իսլամական կառավարություն» աշխատությունը, որտեղ հիմնավորում էր կառավարման իսլամական ձևի առավելությունը: 1978թ. հոկտեմբերին շահական կառավարության խնդրանքով Սադդամ Հուսեյինը Խոմեյնիին վտարում է Իրաքից: Իրաքի նախագահը դիմեց այդ քայլին նաև այն պատճառով, որ վախենում էր Խոմեյնիի ազդեցության մեծացումից Իրաքի շիաների նկատմամբ:

Խոմեյնին հաստատվեց Փարիզի Նոֆլ-լե-Շատո արվարձանում, որտեղ նրա շուրջը սկսեցին հավաքվել կրոնական ու աշխարհիկ շրջաններից նրա համակիրներն ու հետևորդները, որոնց օգնությամբ նա ղեկավարում էր հեղափոխական շարժումներն Իրանում:

Անվարան կարելի է ասել, որ 1978թ. օգոստոսի վերջերից սկսած հակամիապետական շարժման նախաձեռնությունն անցավ Խոմեյնիի կողմից ղեկավարվող հոգևորականության արմատական մասի ձեռքը, որն առաջ քաշեց հասարակ ու պարզ մի կարգախոս «Մահ շահին»:

1978թ. սկզբներից Իրանում ծայր առան հակաշահական ցույցեր և ելույթներ, որոնք իրենց գագաթնակետին հասան աշնանը: Սեպտեմբերի 8-ին Թեհրանի փողոցները դուրս եկավ մոտ մեկ միլիոն մարդ: Կառավարությունը ցուցարարների դեմ հանեց ոստիկանական և բանակային ուժեր: Ընդհարումների հետևանքով եղան մեծ թվով զոհեր ու վիրավորներ: 1978թ. սեպտեմբերի 8-ը ստացավ «Սև ուրբաթ» անվանումը: Երկրում ծավալվեց հզոր գործադուլային շարժում: Տարեվերջին լայն թափ ընդունեցին ուսանողական ելույթները: Քաղաքային ապստամբությունների ղեկավարությունը հաճախ անցնում էր կրոնա-քաղաքական ղեկավարներին: Հետագա իրադարձությունները էլ ավելի շեշտադրեցին այդ միտումը:

1979թ. փետրվարի 16-ին Մոհամմեդ Ռեզա-շահը թագուհու հետ հեռացավ երկրից: Փետրվարի 1-ին այաթոլլա Խոմեյնին Փարիզից ինքնաթիռով վերադարձավ Թեհրան: Նրան դիմավորեցին հարյուր հազարավոր մարդիկ: 1979թ. փետրվարի 9-ին ապստամբություն սկսվեց Թեհրանի Դուշան-թեփե ռազմա-օդային ուժերի հենակետում, որին միացավ նաև քաղաքային բնակչությունը: Փետրվարի 12-ին Թեհրանի ռադիոն հայտարարեց հեղափոխության հաղթանակի և շահական վարչակարգի տապալման մասին: Բախթիարի կառավարության տապալման և շահական վարչակարգի քայքայման հետևանքով իշխանության գլուխ եկան Խոմեյնիի կողմնակիցները: Այսպիսով Իրանի ժամանակակից պատմության մեջ սկսվեց նոր շրջան: Մոտ երեք հազարամյակ երկրում գոյություն ունեցած շահական միապետությանը փոխարինելու եկավ թեոկրատիկ-աստվածապետական բնույթ ունեցող հանրապետական վարչակարգը:

1979թ. մարտի 30-31-ին տեղի ունեցավ հանրաքվե, որի արդյունքներով ապրիլի 1-ին Իրանը պաշտոնապես հռչակվեց Իսլամական

հանրապետություն: Ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի խնդիրն էր հանրապետության սահմանադրության տեքստի մշակումը:

1979 թ. նոյեմբերի 4-ին Խոմեյնիի կոչով երիտասարդների մի խումբ, որն իրեն անվանում էր «Իմամի կուրսի հետևորդ ուսանող-մահմեդականներ» գրոհով գրավեցին Թեհրանում ամերիկյան դեսպանատունը, պատանդ վերցնելով նրա անձնակազմի 66 անդամների:

1979 թ. նոյեմբերի 6-ին Մեհդի Բազարգանի կառավարությունը ստիպված էր իր ողջ կազմով հրաժարական տալ: Ռեալ իշխանությունը ամբողջապես կենտրոնացավ Իսլամական հեղափոխական խորհրդի ձեռքերում:

1979 թ. դեկտեմբերի 2-3-ին տեղի ունեցած համընդհանուր հանրաքվեն հաստատեց Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրությունը: Համաձայն Սահմանադրության, իրանական պետության ցմահ գերագույն առաջնորդ հռչակվեց Իմամ Խոմեյնին:

1980 թ. հունվարին ընտրվեց հանրապետության առաջին նախագահը, որը դարձավ Աբուլհասան Բանիսադրը: Վարչապետ նշանակվեց Մ. Ռաջային:

1980 թ. սեպտեմբերի 22-ին սկսվեց իրանա-իրաքյան պատերազմը, որն ավելի բարդացրեց երկրի ներքին քաղաքական իրավիճակը: Սրվեցին հակասությունները նաև երկրի առաջնորդի՝ Իմամ Խոմեյնիի և նախագահ Բանիսադրի միջև, որի հետևանքով 1981 թ. հունիսի 21-ին վերջինս հեռացվեց նախագահի պաշտոնից և քիչ ժամանակ անց փախավ արտաքսման:

1981 թ. ամռանից երկրի կառավարող կրոնական վերնախավի նկատմամբ սկսվեց ահաբեկչական ակտերի մի ալիք: 1981 թ. հունիսի 28-ին Իսլամական Հանրապետական Կուսակցության շտաբ-բնակարանում տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհվեցին իրանական պետության 74 բարձրաստիճան դեկավարներ: Նույն թվականի օգոստոսի 30-ին տեղի ունեցած ևս մեկ պայթյուն կյանքից զրկեց ԻՀՀ նոր նախագահ Մոհամմեդ Ալի Ռաջաիին և վարչապետ հոջաթ-օլ-էսլամ, դոկտոր Բահոնարին: Այդ ամիսներին զոհվեցին նաև այաթոլլա Խոմեյնիի շրջապատից տասնյակ հոգևորականության ներկայացուցիչներ: Անկասկած, այդ ակցիաների նշանակալից մասը իրագործվել էր իսլամական վարչակարգին պատերազմ հայտարարած «Մոջահեդինե խալքե Իրան» կազմակերպության կողմից: Կառավարությանը հաջողվեց կոտ-

ռել ահաբեկչության ալիքը և ճզմել զինված ընդդիմության հիմնական օջախները:

1981 թ. հոկտեմբերի 2-ին ԻԻՀ նոր նախագահ ընտրվեց Իսլամական Հանրապետական Կուսակցության գլխավոր քարտուղար, հոջաթ-օլ-էսլամ Սեյյեդ Ալի Խամենեին: Նա դարձավ ԻԻՀ նախագահի պաշտոնում առաջին կրոնական գործիչը: Հոկտեմբերի 29-ին մեջլիսը Իսլամական Հանրապետական Կուսակցության մեկ այլ գործչի՝ Միր Հոսեյին Մուսավիին հաստատեց ԻԻՀ վարչապետի պաշտոնում: Այսպիսով հեղափոխության հաղթանակից հետո ընդամենը երկու տարուց քիչ ավել ժամանակաշրջանի ընթացքում ԻԻՀ քաղաքական իշխանության հիմնական լծակներն անցան հոգևորականության ձեռքը: Իրանում նոր վարչակարգը քայլ առ քայլ ամրապնդում էր իր դիրքերը: 1983 թ. փետրվարին արգելվեց պրոխորհրդային «Հեզբ-ե Թուդեե Իրան» (Իրանի ժողովրդական կուսակցություն) կուսակցությունը, որն իրականում Կոմունիստական կուսակցություն էր: Նրա ղեկավարները ձերբակալվեցին և մեղադրվեցին լրտեսության ու պետական դավաճանության մեջ:

ԻԻՀ ղեկավարությունը կարևոր նշանակություն էր տալիս արտաքին աշխարհի հետ հարաբերությունները զարգացնելու խնդրին, առաջնորդվելով ԻԻՀ արտաքին քաղաքական հայտնի դոկտրինի սկզբունքներով, ըստ որի Իրանը պետք է բնականոն հարաբերություններ ունենա տարածաշրջանի երկրների, ինչպես նաև բոլոր այն պետությունների հետ, որոնք հարգում են Իրանի պետական անկախությունն ու ինքնուրույնությունը: Ըստ այնմ, Իսլամական մեջլիսի նախագահ, հոջաթ-օլ-էսլամ Աբբաս Հաշեմի Ռաֆսանջանին 1985 թ. հուլիսին պաշտոնական այցով մեկնեց Չինաստան և Ճապոնիա: Դա ԻԻՀ բարձրաստիճան որևէ քաղաքական գործչի առաջին այցն էր արդյունաբերական տեսակետից աշխարհի զարգացած երկրներից մեկը՝ Ճապոնիա: Այդ այցից հետո իրանա-ճապոնական տնտեսական հարաբերությունները սկսեցին բուռն թափով զարգանալ:

1985թ. օգոստոսին Սեյյեդ Ալի Խամենեին երկրորդ անգամ վերընտրվեց ԻԻՀ նախագահի պաշտոնում:

80-ական թվականներին երկիրը լարել էր իր ուժերը Իրաքի դեմ ծանր ու հյուծիչ պատերազմ մղելու համար, որը ոչ միայն խլում էր հարյուր հազարավոր մարդկային զոհեր, այլև վիթխարի նյութական վնասներ էր պատճառում Իրանին: Իմամ Խոմեյնին դեմ էր պատերազմն

ավարտելուն, պնդելով, որ այն պետք է շարունակել մինչև հաղթական ավարտ, որը հնարավորություն կտա պատժելու Իրաքի Բաասիստական վարչակարգի ղեկավարությանը և անձամբ նախագահ Սադդամ Հուսեյինին, որին նա անվանում էր պատերազմի հանցագործ: Սակայն ի վերջո, իր մերձակա զինակիցների հորդորների և պատերազմն ավարտելու նպատակահարմարության վերաբերյալ նրանց բերած ծանրակշիռ փաստարկների ճնշման ներքո, Խոմեյնին հայտարարեց, որ ինքը «պատրաստ է խմելու թույնի գավաթը» և հաշտություն կնքելու Սադդամ Հուսեյինի հետ: 1988թ. օգոստոսին Իրանի և Իրաքի միջև կնքվեց զինադադար: Դրանով իսկ վերջ տրվեց Իրանի և Իրաքի միջև ութամյա պատերազմին, որն համարվում է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամենատևական լոկալ պատերազմը:

1989թ. հունիսի 4-ին ԻԻՀ Առաջնորդ Իմամ Խոմեյնին կնքեց իր մահկանացուն: Նրա գաղափարական սկզբունքներով կառուցված պետությունը և քաղաքական համակարգը շարունակեց իր գործունեությունը, առաջնորդվելով Առաջնորդի նախանշած հունով: Փորձագետների խորհուրդը 1989թ. հունիսի 4-ին Սեյյեդ Ալի Խամենեիին ընտրեց Իրանի Իսլամական Հանրապետության նոր Առաջնորդ: Նույն թվականի հուլիսին ԻԻՀ նախագահ ընտրվեց հոջաթ-օլ-էսլամ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին, իսկ օգոստոսին մեջլիսի նախագահ ընտրվեց հոջաթ-օլ-էսլամ Մեհդի Քյարուբին:

1990թ. հունվարին մեջլիսը հաստատեց ԻԻՀ զարգացման առաջին հնգամյա պլանը, որի կարևորագույն խնդիրն էր պատերազմի հետևանքով երկրի առջև ծառացած դժվարությունների հաղթահարումը:

1990թ. հունիսին Իրանի հյուսիս-արևմտյան շրջանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքով մահացավ ավելի քան 50.000 մարդ, վիրավորվեց 100.000 և 500.000 մարդ դարձան անտուն: Դա ծանր փորձություն էր ԻԻՀ համար: Կառավարությունը վճռական քայլեր կատարեց երկրաշարժի հետևանքով երկրի առջև ծառացած հավելյալ դժվարությունները հաղթահարելու համար:

1990թ. Իրաքի կողմից Քուվեյթի վրա հարձակում գործելուց հետո, որը հայտնի է «Ծոցի պատերազմ» անունով, նախագահ Ռաֆսանջանին հայտարարեց, որ այդ պատերազմում Իրանը պահպանելու է չեզոքություն և ամեն ինչ անելու է, որպեսզի պատերազմը չընդլայնի իր աշխարհագրական սահմանները և իր բոցերի մեջ չներքաշի Ծոցի երկրնե-

ին: Դրանով ԻԻՀ վերստին հաստատեց իր այն վճռականությունը, որ ոչ մի գնով չի խախտելու Իրաքի հետ կնքված զինադադարը:

1996թ. ԻԻՀ կառավարությունը մի շարք նոր քայլեր ձեռնարկեց Իրանի հանրապետաններն «իսլամականացնելու» ուղղությամբ: Այդ ոգով կազմվեցին ուսումնական նոր ծրագրեր: «Հեղափոխության առաջնորդ» այաթոլլա Խամենեին կոչ արեց ամբողջապես իսլամականացնել Իրանի բուհերն ու կրթական և մշակութային մյուս հիմնարկությունները: Նա նշեց, որ այսուհետև կրթության և դաստիարակության բնագավառում ևս անհրաժեշտ է ապահովել «վճռական ֆաղիհիս» կրոնական սկզբունքը:

1997թ. մայիսի 23-ին ԻԻՀ-ում տեղի ունեցան նախագահական նոր ընտրություններ, որի ընթացքում հաղթանակ տարավ Մեյյեդ Մոհամմադ Խաթամին, ընտրվելով ԻԻՀ 5-րդ նախագահ:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

80-ական թվականների սկզբից երկրի տնտեսական շրջափակման և Իրաքի հետ պատերազմի պայմաններում ԻԻՀ տնտեսությունը ընթանում էր զարգացման կենտրոնացված մոդելի կամ կենտրոնացված տնտեսության ուղղությամբ:

Երկրի տնտեսական կուրսի փոփոխության համար շրջադարձային նշանակություն ունեցավ զարգացման հնգամյա պլանը (1989-1993), որը, ըստ էության, հանդիսացավ երկրի տնտեսության անցման ծրագիր դեպի շուկայական հարաբերությունները: Պլանում օրենսդրորեն նախատեսված էր փոխառությունների, վարկերի և ծառայությունների ձևով օտարերկրյա կապիտալի օգտագործման հնարավորություն:

Մահմանադրական արգելքի նման փոփոխությունը հնարավորություն տվեց Իրանին օտարերկրյա առաջատար ընկերությունների հետ կնքել պայմանագրեր բարձր տեխնիկական արտադրությունների շինարարության ու տարբավորման համար:

Միաժամանակ կառավարության կողմից ընդունվեց ծրագիր ազատ շուկայական գոտիների ստեղծման վերաբերյալ: Նման գոտիներում կարող են կողք-կողքի գործել պետական, մասնավոր և օտարերկրյա կապիտալները:

90-ական թվականներին կառավարությունը վերցրեց նաև պետական սեփականության մի մասի սեփականաշնորհման կուրս ի բացառյալ նավթի և գազի արդյունաբերության: Միաժամանակ տեղի էր ունենում գների աստիճանական լիբերալիզացում: Ավելի ուշ կառավարությունը հայտարարեց, որ ինքը առհասարակ հրաժարվում է գնագոյացմանը, այդ թվում նաև պետական սեկտորում, մասնակցություն բերելուց: Կառավարությունը հրաժարվեց նաև վնասաբեր ձեռնարկություններին դրամական հատկացումներ (դոտացիաներ) տրամադրելուց: Պետական

սեկտորի գծով ինվեստավորումը հիմնականում կատարվում էր էներգետիկայի, լեռնահանքային և վերամշակող արդյունաբերության, նավթաքիմիայի, տրանսպորտի, կապի և այլ առաջատար ճյուղերի գծով:

Նշված միջոցառումների համալիր իրականացումը հնարավորություն տվեց Իրանին հաղթահարելու տնտեսության մեջ նկատվող ճգնաժամային երևույթները: Արդեն 1989/1990թ. ներքին համախառն արտադրանքի (ՆՀԱ) անկումը կանգնեցվեց և այն աճեց 4%: 1990/91թ. աճը կազմեց արդեն 8%: Արդյունաբերական արտադրության ընդհանուր ինդեքսը, որը 1985-1988թ. անկում էր ապրում միջին հաշվով 10%, սկսեց բարձրանալ:

Մակայն այդ բոլորով հանդերձ ԻԻՀ տնտեսությունը շարունակում էր ապրել որոշակի դժվարություններ: Տնտեսության ապակայունացման գլխավոր պատճառներ էին շարունակում մնալ դեռևս պահպանվող նավթի արտահանության միակողմանի կողմնորոշումը, տնտեսության տարբեր ճյուղերի ոչ համամասնական զարգացումը, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների համեմատաբար ցածր արտադրողականությունը, իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները, աշխարհում Իրանի որոշակի քաղաքական և տնտեսական մեկուսացվածությունը և այլն:

Այդ պատճառով ԻԻՀ կառավարությունը որդեգրել էր ոչ նավթային ապրանքների արտահանության խրախուսման, արտադրական և գյուղատնտեսական ձեռնարկությունների աշխատանքի ինտենսիֆիկացման, անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման, ճյուղերի և երկրի շրջանների միջև զարգացման անհամամասնության վերացման քաղաքականություն: Լուրջ ուշադրություն դարձվեց արտասահմանից արդյունաբերական հումքի և սարքավորումների ներմուծումը (որը կազմում էր տարեկան 10-12 միլիարդ դոլար) տահմանափակելու և տեփական ռեսուրսները խթանելու գործին: Ընդհանուր առմամբ պետությունը ստեղծեց համապատասխան պայմաններ աշխատանքի արտադրողականության ռեալ զարգացման համար:

Մեր այսօր, սակայն, նավթը շարունակում է մնալ գործնականում տարադրամային մուտքերի գլխավոր աղբյուր: Նավթի վաճառքից ձեռք բերված գումարների զգալի մասը ներդրվում է նավթաքիմիական արդյունաբերության և առհասարակ երկրի տնտեսական ներուժը մեծացնելու գործի մեջ:

ԻԻՀ տնտեսական զարգացման առաջին և երկրորդ հնգամյա պլանները խնդիր են դրել, որ ԻԻՀ-ը «զարգացող» երկրից վերածվի «զարգացած» երկրի: Ուստի նավթի արտահանումից ստացված եկամուտների մեծ մասը ներդրվում է այնպիսի նախագծերի իրականացման մեջ, որոնք կարող են խթանել տնտեսության ենթակառուցվածքային զարգացումը: Կառավարության սնեռուն ուշադրության կենտրոնում է գտնվում բարձր տեխնոլոգիական արտադրության զարգացումը և տեխնոլոգիապես հնացած ձեռնարկությունների արդիականացումը: Հենց այդ պատճառով, 1997թ. սկսած ԻԻՀ-ում հիմնական կապիտալի վերանորոգումն առաջ է ընթանում բավականին արագ տեմպերով: Ի դեպ, այդ ժամանակաշրջանից սկսած, խոշոր միջոցներ ներդրվեցին նաև ատոմային էներգետիկայի բնագավառում:

Ազատ տնտեսական գոտիներ: Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո Իրանը միաժամանակ ընկավ միջազգային տնտեսական և քաղաքական մեկուսացման մեջ: Այն հաղթահարելու նպատակով, իրանական կառավարությունը միջոցներ ձեռնարկեց երկրի տարբեր մասերում, առավելապես Պարսից ծոցի շրջանում, ստեղծելու ազատ տնտեսական գոտիներ: Այդ գոտիները կոչված էին ոչ միայն զարկ տալու Իրանի արտաքին տնտեսական կապերին, այլև ներգրավելու օտարերկրյա կապիտալներ՝, երկրի տնտեսական ու ֆինանսական ակտիվությունը խթանելու համար:

ԻԻՀ ազատ տնտեսական գոտիները գտնվում են Պարսից ծոցի Ղեշմ և Քիշ կղզիներում, Օմանի ծովի Չաբահար քաղաքում, ինչպես նաև Խորրեմշահրում և Միրջանում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի Իսլամական Հանրապետության արդյունաբերությունը ներկայացված է երեք հիմնական ճյուղային սեկտորներով. նավթային, լեռնահանքային և վերամշակող: Ամենել զարգացածը նավթարդյունաբերությունն է, որն ուղղակի և անուղղակի կերպով ազդում է Իրանի ողջ տնտեսության զարգացման վրա (Նավթի արտահանումից ստացվող եկամուտների միջոցով):

Դեռևս իսլամական հեղափոխությունից առաջ, 60-70ական թվականներին Իրանում կառուցվեցին խոշոր ժամանակակից մետալուրգիական

գործարաններ, նավթաքիմիական համալիրներ, ավտոմոբիլային գործարաններ, ռադիո և հեռուստաապարատների, կենցաղային տեխնիկայի և այլն արտադրության ձեռնարկություններ:

Իսլամական հեղափոխությունից հետո, իրականացվեց բանկային համակարգի և խոշոր արդյունաբերության ազգայնացում, որն ուղեկցվում էր օտարերկրյա ընկերություններից արժեթղթերի հետ գնումով: Ազգայնացման և պետական ու իսլամական կազմակերպություններին ձեռնարկությունների փոխանցման հետևանքով մասնավոր խոշոր ձեռնարկատիրության, մասնավորապես արդյունաբերության բնագավառում, գործունեության շրջանակը նեղացավ: Մանր արտադրությանը աջակցելը դարձավ Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Իսկ խոշոր արդյունաբերությունը հիմնականում գտնվում է պետական սեկտորի կազմում: Ազգայնացված ձեռնարկությունների մի մասը գտնվում է հեղափոխությունից հետո ստեղծված տարբեր իսլամական ֆոնդերի հսկողության տակ: Իսլամական ֆոնդերից խոշորագույնը՝ ընչազուրկների ֆոնդը («Բոնյադե Ջանբազան վա մոստազաֆան») ստեղծվել է 1979թ. մարտին Փեհլևի ֆոնդի բռնագրավված գույքի բազայի վրա: 1986թ. այդ ֆոնդի տրամադրության տակ կային տարբեր ճյուղերի պատկանող 1698 ձեռնարկություններ: Ընդհանուր կապիտալը և սեփականությունը գնահատվում էր 481 միլիարդ դոլար: Մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ գտնվում են այլ իսլամական ֆոնդերի՝ «Բոնյադե Ջիհադե սազանդեգի» (1982թվականից վեր է ածվել նախարարության), «Բոնյադե շահիդ», «Բոնյադե 15 խորդադ» «Բոնյադե օմուրե մոհաջերինե ջանգե թահմիլի», «Բոնյադե մաաբան», «Բոնյադե դին վա ֆարհանգի վա Մադուլ բոզորգ» և այլն:

Իսլամական հեղափոխությունից հետո առաջին անգամ 1985/86թթ. կատարված քաղաքային տնտեսական ձեռնարկությունների հետազոտությունը ցույց տվեց, որ երկրի քաղաքներում կան 1,4 միլիոն տարբեր տեսակի ձեռնարկություններ, որոնցից 97,5%-ը մանր ձեռնարկություններ են: Ձեռնարկությունների 93,6% պատկանում էին մասնավոր սեկտորին, 22,6 %-ը՝ գործում էին Թեհրանում: Բոլոր ձեռնարկություններում զբաղված էր 3,9 միլիոն մարդ, որը համարյա երկու անգամ ավել է, քան 1975/76թթ.:

Նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին առաջ քաշեց հետևյալ կարգախոսը. 1990-ից 2000 թվականները վերածել «ժողովրդական տնտե-



Ազատության աշտարակը Թեհրանում

Թեհրանի ջրազտման կայանը

Տեսարան Թավրիզ քաղաքից

Կամուրջ Սպահան քաղաքում (XVII դար)

Մեծիդ բուն գետի ջրամբարակը



Ավիցեննայի հրապարակը Համադան քաղաքում

Ղեռավենդ լիճը

Բախթիար ցեղի կանայք վրանում

Թբիլիսի – Գորգան երկաթուղու կամուրջներից մեկը

Թադեոս Առաքյալի (Ս. Թադեի) վանքը Մակուի մոտ



Ս. Ստեփանոսի վանքը Ատրպատականում



Իմամ Ռեզայի մզկիթը Մաշհադ քաղաքում

Տեսարան Բալիբե Նամաք անապատից

Թուս քաղաքի ջերմաէլեկտրակայանը

Թեհրանի բազարը

Շեյխ Լոթֆոլլահի ճակատը

Նոր Ջուղայի Ամենափրկչյան վանքը (XVII դար)

Պրանցիս

Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցին

Իսլամական հեղափոխության հրապարակը Թեհրանում

Տեսարան Թեհրանից



Հաֆեզի դամբարանը Շիրազ քաղաքում

սության վերականգնման տասնամյակի»: Ըստ այնմ առանձնացվեցին Իրանի ժողովրդական տնտեսության հետևյալ գերակայող ուղղությունները. էներգետիկա, նավթաքիմիական, պողպատաձուլական արդյունաբերություն, մեքենաշինություն և տրանսպորտ: Առանձնակի ուշադրություն էր դարձվում իրանական պոտադրանքի արտահանման մեծացման վրա: Իրանական կողմի նախաձեռնությամբ, 1991թվականից սկսած բոլոր երկրների հետ առևտրատնտեսական համագործակցությունը իրականացվում է տարադրամային վճարումներով:

1989/90-1993/94թթ. տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման առաջին հնգամյա պլանով հատուկ ուշադրություն էր դարձվում հետևյալ հարցերին.

1. Նոր ռազմավարական խնդիրներին համապատասխան վերականգնել և զարգացնել երկրի պաշտպանունակությունը:

2. Վերականգնել և արդիականացնել արդյունաբերական ձեռնարկությունները:

3. Գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում իրականացնել ներուժի որակական և քանակական աճ:

4. Պայմաններ ստեղծել երկրի տնտեսական հետագա զարգացման համար, նպատակ ունենալով զարկ տալ արտադրության ծավալներին, աշխատատեղերի ստեղծմանը, նվազեցնել երկրի կախվածությունը ներմուծումից, զարգացնել հումքային բազան, գյուղատնտեսությունը, սննդամթերքների արտադրությունը և այլն:

5. Ամրապնդել և ընդլայնել տնտեսության տարածքային-արտադրական կառուցվածքը, այդ թվում նաև ռազմաքաղաքական և տնտեսական տեսակետներից:

1990 թվականից ԻԻՀ-ում սկսվեց փոքր պետական ձեռնարկությունների վաճառքը մասնավոր սեկտորին, որի արդյունավետությունը, հատկապես վերամշակող արդյունաբերության բնագավառում, նշանակալիորեն բարձր է պետականից:

1991 թվականից սկսած պետությունը գործնականում դադարեցրեց ոչ եկամտաբեր պետական ձեռնարկությունների ֆինանսավորումը և որդեգրեց նրանց սեփականաշնորհման կուրսը: Ստացված լրացուցիչ գումարները պետությունը ուղղեց զարգացման ծրագրերի իրագործմանը:

Աշխատատեղերի թվի մեծացման նպատակով, 1991թվականից սկսած գյուղական վայրերում սկսվեց թվով 683 արդյունաբերական ձեռ-

նարկությունների շինարարությունը, որի հետևանքով կարճ ժամանակ անց ստեղծվեց մոտ 7000 լրացուցիչ աշխատատեղ: Դրանք հիմնականում նախնական հումքի վերամշակման, ինչպես նաև ժողովրդական սպառման ապրանքների արտադրության ձեռնարկություններ էին:

Նույն 1991 թվականից կառավարության կողմից մասնավոր սեկտորին իրավունք շնորհվեց անմիջականորեն դիմել արտասահմանյան երկրներին՝ օտարերկրյա ֆինանսական և տեխնիկական օգնություն ձեռք բերելու համար, պայմանով, որ այն ներդրվի արդյունաբերության վիճակի բարելավման ծրագրի մեջ:

Գիտակցելով ոչ նավթային ապրանքների արտահանման մեծացման նշանակությունը Իրանի տնտեսության համար, երկրի ղեկավարությունը հետևողականորեն պայմաններ է ստեղծում նրա ընդլայնման համար:

Այսպիսով, վերջին տասը տարիների ընթացքում ԻԻՀ կառավարության վարած տնտեսական քաղաքականությունը դրական պայմաններ ստեղծեց երկրի արդյունաբերական ներուժի իրական աճի ու զարգացման համար:

ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրանում նավթի արդյունաբերական շահագործումը սկսվել է 1901 թվականից, երբ անգլոհպատակ ավստրալիացի Վիլյամ Դ'Արսին ձեռք բերեց իրանական նավթի շահագործման կոնցեսիոն իրավունքը՝ 60 տարի ժամկետով: 1905 թ. մայիսին Բիրմայի նավթային ընկերության հետ համատեղ Դ'Արսին ստեղծեց մի սինդիկատ, որը ձեռնամուխ եղավ իրանական նավթի շահագործմանը: Իրանում առաջին ամենախոշոր նավթային հանքավայրը հայտնաբերվեց 1908 թ. ապրիլին: Դա Մասջեթ Սուլեյմանի հանքավայրն էր, որն աչքի էր ընկնում իր նավթային պաշարների բացառիկ հարստությամբ: Իրանական և առհասարակ Պարսից ծոցի ավազանի շրջանի նավթի նկատմամբ հետաքրքրությունը աննախընթաց կերպով մեծացավ այն բանից հետո, երբ 1908 թ. բրիտանական նավատորմը անցավ հեղուկ վառելիք օգտագործելուն: 1909 թ. Դ'Արսիի ստեղծած նավթային սինդիկատը վերածվեց Անգլո-Պարսկական նավթային ընկերության՝ 2 միլիոն ֆունտ ստերլինգ կապիտալով: Այն 1935 թ. վերանվանվեց Անգլո-Իրանական նավթային ընկերության: Վերոհիշյալ ընկերությունները 1913 թվականից ձեռք էին բերել իրա-

նական նավթի հանույթի, գտման և արտահանման մենաշնորհային իրավունքը:

50-ական թվականների սկզբին Իրանում ծայր առավ նավթի ազգայնացման համար հուժկու մի շարժում, որի հետևանքով 1951թ. Իրանի վարչապետ դոկտոր Մոհամմադ Մոսադդեղը, որն հայտնի էր իր ազգայնական ձգտումներով, ազգայնացրեց Անգլո-իրանական նավթային ընկերությունը:

1953թ. պետական հեղաշրջումից հետո, իրանական նավթի շահագործման իրավունքն անցավ այսպես կոչված «Միջազգային նավթային կոնսորցիումին», որը բաղկացած էր եվրոպական և ամերիկյան նավթային ընկերություններից: 1979թ. իսլամական հեղափոխությունից հետո իրանական նավթը կրկին ազգայնացվեց, այս անգամ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից:

Ներկայումս ԻԻՀ նավթի նախարարության իրավասության ներքո գործում են երեք խոշոր ընկերություններ. «Իրանական Ազգային Նավթային Ընկերությունը (NIOC), «Իրանական Ազգային Գազի Ընկերությունը» (NIGC) և «Իրանական Ազգային Նավթաքիմիական ընկերությունը» (NIPC):

Իրանը աշխարհում նավթ արդյունահանող խոշորագույն պետություններից մեկն է: Պատահական չէ, որ նավթարդյունաբերությունը, որը հանդիսանում է ԻԻՀ տնտեսության առաջատար ճյուղը, մշտապես գտնվել է կառավարության տնտեսական ռազմավարության ուշադրության կենտրոնում: 1997թ. տվյալներով ԻԻՀ-ը արդյունահանում էր օրական 3,6 միլիոն բարել նավթ, հաստատուն կերպով մուտք գործելով հեղուկ վառելիքի արտահանման համաշխարհային շուկա:

Իրանում նավթի հիմնական հանքավայրերը տեղաբաշխված են երկրի հարավ-արևմուտքում: Աղա-Ջարին համարվում է հարստագույն հանքավայրերից մեկը: Խոշորագույն հանքավայրեր են գտնվում Գաչսարանում, Սիվագում, Բիբի Հաքիմեում, Մարունում, Լաբ-Սեֆիդում, Հաֆթգելում, Բենիքում, Քյարանքում, Պարիսում, Ռամշիրում, Կոսպալում, Դեհլորանում, Սարախսում, Ղալա-Նարում, Մասջեդ Սուլեյմանում և այլն:

1991թ. տվյալներով, Իրանում գազի հետազոտված ու հաստատված պաշարները կազմում էին 17 տրիլիոն խ.մ.: 90-ական թվականներին հայտնագործվեցին մի շարք նոր հանքավայրեր և այժմ գազի հետա-

զոտված պաշարները գնահատվում են 27 տրիլիոն խ.մ.: Ներկայումս ԻԻՀ-ը պատրաստվում է Օմանի հետ համատեղ շահագործել Խանգան կոչված գազի հանքավայրը, որի 80% պատկանում է Իրանին, իսկ 20%-ը՝ Օմանին: Այդ հանքավայրի պաշարները գնահատվում են 523 միլիարդ խ.մ. գազ և 120 միլիոն բարել գազային կոնդենսատ: Շահագործման հանձնումից հետո օրական հանույթը կկազմի 200-250 միլիոն խ.մ. գազ և 20-25 հազար բարել կոնդենսատ: 1997թ. տվյալներով Իրանում գազի հանույթը կազմել է տարեկան 57 միլիարդ խ.մ.: Երկրում գազի խոշորագույն հանքավայրերը կենտրոնացած են Աղա Ջարիում, Մարունում, Սիվազում, Փազնանում, Գաչսարանում, Բիբի-Հաքիմեյում, Ղեշմ կղզում և Բանդար Մահշարում: Գազավերամշակման գործարանները գտնվում են Բիդ-Բոլանդում (Աղա Ջարի), Վալի-Ասրում (Կանգան) և Շահիդ Հաշեմինեջադում (Սարախս-Կանգուիրան): Նրանցից խոշորագույնը Նար- Կանգան գործարանն է:

Առհատակ պետք է նշել, որ Իրանին է պատկանում աշխարհի նավթի 10% և գազի 13%, որը չափազանց բարձր ցուցանիշ է: Համեմատության համար նշենք, որ Պարսից ծոցի 5 խոշորագույն նավթ արդյունահանող երկրների նավթի հետախուզված պաշարները ըստ 1997թ. տվյալների ներկայացնում է հետևյալ պատկերը.

Սաուդյան Արաբիա	—	35,4	միլիարդ տոն
Իրաք	—	15	„—„—„
Քուվեյթ	—	13	„—„—„
ԱՄԷ (Արաբական Միացյալ Էմիրություններ)	—	12,9	„—„—„
Իրան	—	12,7	„—„—„

Իրանը աչքի ընկնող տեղ է զբաղեցնում նաև նավթի հանույթի բնագավառում: Այսպես, 1985թ. նրան բաժին էր ընկնում նավթի համաշխարհային հանույթի 4,1 %, Մերձավոր Արևելքում՝ 22,4 % և ՕՊԵԿ-ում՝ 14,1 %: Անհրաժեշտ է նշել, որ իրանական հեղափոխության նախօրեին Իրանն ուներ նավթի վերամշակման գծով նշանակալից հզորություններ՝ տարեկան մոտ 50 միլիոն տոն:

Միապետության տապալումից ընդամենը մեկ տարի և յոթ ամիս անց Իրանի նավթարդյունաբերությունը մեծապես տուժեց 1980թ. սեպտեմբերին սկսված Իրան-Իրաքյան պատերազմի հետևանքով: Պատերազմի ութ տարիների ընթացքում այն հանդիսանում էր Իրաքի ռազմատդային,

ռազմածովային և ցամաքային ուժերի գլխավոր թիրախը: Պարսից ծոցում ընթացող այսպես կոչված «տանկերային պատերազմի» հետևանքով Իրանի նավթահորերի և նավթարդյունաբերական ձեռնարկությունների մեծագույն մասը (այդ թվում նաև Աբադանի խոշորագույն նավթավերամշակման համալիրը) շարքից դուրս եկավ: Դրա հետևանքով 1980-1981թ.թ. նավթի համաշխարհային արտահանության մեջ Իրանի բաժինը կտրուկ կրճատվեց: ԱՄՆ-ի կողմից Իրանին շրջափակման ենթարկելը (1979թ. նոյեմբերի 4-ին Թեհրանում ԱՄՆ-ի դեսպանության գրավումից և նրա աշխատակիցներին պատանդ վերցնելուց հետո) նույնպես ծանր վնասներ հասցրեց Իրանի նավթարդյունաբերությանը: Վերջապես այդ ճյուղի գործունեության վրա բացասաբար ազդեց նաև համաշխարհային շուկայում նավթի գների կտրուկ տատանումները:

Իրան-իրաքյան պատերազմի ավարտից հետո իրանական կառավարությունը խոշոր միջոցներ ներդրեց նավթաքիմիական համալիրները վերականգնելու և նորերը կառուցելու համար: Առհասարակ պետք է նշել, որ հետպատերազմյան վերականգնողական աշխատանքների մեջ գերակայող ուղղությունը նավթաքիմիական ձեռնարկությունների արագ վերականգնումն էր: Բավական է ասել, որ պատերազմի հետևանքով այդ ձեռնարկությունների շարքից դուրս գալու պատճառով Իրանը ստիպված էր արտասահմանից ներմուծել մեծ քանակությամբ նավթաքիմիական ապրանքներ, որոնք կազմում էին նրա ողջ ներմուծումների ավելի քան 16%: Հետպատերազմյան առաջին տարիներին Իրանը իր նավթային կարիքները բավարարում էր նաև հետևյալ կերպ. նա հում նավթը հանձնում էր հարևան պետություններին՝ վերամշակման համար, ստանալով գտված նավթի իր հասանելիք բաժինը:

Հետպատերազմյան շրջանում նավթաքիմիական ձեռնարկությունների կառուցումը կարևորագույն գործոն հանդիսացավ մի շարք արդյունաբերական ճյուղերի երևան գալն ու զարգացումը խթանելու համար:

1979-1980 թվականներից սկսած ԻԻՀ նավթարդյունաբերության ողջ գործունեությունը (սկսած նավթահանքերի հետախուզումից մինչև նավթի վաճառքն ու արտահանումը) սկսեց իրագործվել նավթի արդյունաբերության նախարարության ղեկավարության ներքո:

90-ական թվականների սկզբին ճյուղի արտադրական հզորությունը ապահովվում էր հինգ նավթաքիմիական համալիրների գործունեությամբ: Դրանք էին՝ Ռազիի, Ֆարաբիի (երկուսն էլ Բանդար Խոմեյնիի շրջանում), Արադանի, Խարքի և Շիրազի գործարանները, ինչպես նաև մի շարք ընկերությունների ձեռնարկությունները («Իրան կարբոն կոմպանի լիմիտեդ», «Պոլիկա ֆակտորի», «Փասարգաթ չեմիկալ կոմպանի», «Ռաֆսանան ատոմաթիկ կոմպլեքս», «Թարրիզ պետրոշեմիքալս կոմպլեքս», «Արաք կոմպլեքս», «Բանդար Իմամ Խոմեյնի պետրոշեմիքալս կոմպլեքս» և այլն:

Ընդորում պետք է նշել, որ Իրանի նավթաքիմիական ձեռնարկությունները որպես կանոն ունեն բարձր տեխնիկա-տեխնոլոգիական մակարդակ և տալիս են բարձր որակի բազմապիսի արտադրանք:

1997թ. Բանդար-Աբբասում շահագործման հանձնվեց Իրանի նավթաքիմիական արդյունաբերության գիգանտը՝ նավթաքիմիական համալիրը, որն իր տեսակի մեջ ամենախոշորն է աշխարհում: Այդ համալիրի շահագործման հանձնումով Իրանը պաշտոնապես անցնում է աշխարհի նավթամթերքներ արտահանող կարևորագույն երկրների շարքը: 1997թ. շարք մտավ նաև Թավրիզի նավթաքիմիական համալիրի առաջին փուլը, որի շնորհիվ երկրի նավթաքիմիական արտադրանքն ավելացավ տարեկան 500.000 տոննայով:

Ներկայումս խոշոր նավթազտման գործարաններ են գործում Սպահանում, Շիրազում, Թեհրանում, Թավրիզում, Արաքում, Բանդար-Աբբասում, Բանդար Թահերիում, Լավանում, Բախթարանում և այլ վայրերում:

ԼԵՌՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԻՀՀ տնտեսության մեջ նշանակալից տեղ է գրավում լեռնահանքային արդյունաբերությունը: 1979թ. հեղափոխական իրադարձություններից հետո բոլոր խոշոր հանքերն ու հանքավայրերը ազգայնացվեցին: Ազգայնացվեցին նաև հանքային հանածոների վերամշակման այն բոլոր ձեռնարկությունները, որոնք պետության համար ունեին ռազմավարական նշանակություն: Ներկայումս հանքերի և հանքավայրերի մի չնչին մասը (մոտ 5%) պատկանում է մասնավոր սեկտորին:

Համաձայն Հանքերի շահագործման մասին օրենքի, որն ընդունվել է իսլամական հեղափոխությունից հետո (1983 թ.), բոլոր օգտակար

հանածոները, նրանց հետախուզման ու արդյունահանման առումով, բաժանվում են չորս խմբերի:

Առաջին խումբ — շինարարության կամ շինանյութերի արտադրության մեջ օգտագործվող օգտակար հանածոներ. շինարարական քար, մարմար, դոլոմիտներ, կավիճ, կավ և այլն: Այս խմբի մեջ են մտնում նաև կերակրի աղի, գիպսի, ավազի և խճի հանքավայրերը: Նրանց հետախուզումն ու մշակումը թույլատրվում է տնտեսության տարբեր ճյուղերին՝ պետական, կոոպերատիվ և մասնավոր:

Երկրորդ խումբ — հանածոների հիմնական խմբերի հանքավայրեր. երկաթ, քրոմիտներ, պղինձ, նիկել, կապար, ոսկի, ցինկ, արճիճ, տիտան և այլն. մետաղների աղեր (նիտրատներ, ֆոսֆորներ, բորակ, հանքային ջրեր). կոշտ վառելիքի տարբեր տեսակներ, ազբեստ, ծծումբ, գրաֆիտ, հրակայուն կավեր, փայլար. թանկարժեք քարեր:

Երրորդ խումբ — նավթի, գազի, ասֆալտի հանքավայրեր:

Չորրորդ խումբ — ռադիոակտիվ նյութերի հանքավայրեր:

Իրանում քարածխի հավանական պաշարները գնահատվում են ավելի քան 37 միլիարդ տոննն, իրական պաշարները՝ 413 միլիոն տոննն: Հիմնական հանքավայրերը գտնվում են Քերման նահանգում:

Քարածխի, ներառյալ նաև կոկսացվող, ծավալը կազմում է 700-ից մինչև 970 հազ. տոննն:

Իրանում ժամանակակից մետալուրգիայի ստեղծումը զարկ տվեց երկաթի հանքաքարի հանույթին: Նրա հավանական պաշարները գնահատվում են 3226 միլիոն տոննն, արդյունաբերական պաշարները՝ 1618 միլիոն տոննն, երկաթի պարունակությունը 39-64 %: Հիմնական երկաթահանքերը գտնվում են Բաֆդի, Բենդեր-Աբբասի, Քերմանի, Խորասանի շրջաններում: Երկաթի հանքաքարը հիմնականում գնում է բավարարելու Իրանի մետալուրգիական արտադրության կարիքները: Մետալուրգիական արդյունաբերության ժամանակակից ճյուղերը Իրանում հայտնվել են համեմատաբար ոչ վաղուց. սև մետալուրգիան՝ 60-70-ական թվականներին, գունավոր մետալուրգիան՝ 70-80-ական թվականներին:

Ներկայում ԻԻՀ-ում գործող պողպատաձուլական ձեռնարկություններն են.

1. Սպահանի մետալուրգիական կոմբինատը:

2. Սիվազի պողպատաձուլական համալիրը, որն աշխատում է երկաթի ուղղակի վերականգնման տեխնոլոգիայով:

3. Սիվազի թերթագլանման գործարանը:

4. Սիվազի խողովակների արտադրության գործարանը (տարեկան 500 հազար տոնն նախագծային հզորությամբ):

5. Մորաբերի մետալուրգիական գործարանը (տարեկան 2,6 հազար տոնն հզորությամբ):

6. Սիվազի «Քավլան» գլանման գործարանը (տարեկան 800 հազ. տոնն գլանվածք հզորությամբ):

Ներկայումս ԻԻՀ մետալուրգիական ձեռնարկությունները արտադրում են ավելի քան 20 մակնիշի հատուկ պողպատ:

Անկա են մի շարք խոշոր նախագծեր երկրի մետալուրգիական արդյունաբերության հզորությունների հետագա մեծացման վերաբերյալ:

Ներկայումս ԻԻՀ-ը պողպատի արտադրության ցուցանիշով արդեն անցել է տարեկան 6,5 միլիոն տոննի սահմանագիծը: Նախատեսված է առաջիկա մի քանի տարիների ընթացքում տեքստիլ արդյունաբերության համեմատաբար դանդաղեցված տեմպերի հաշվին զարկ տալ մետալուրգիային, հատկապես պողպատի արտադրությանը:

Իրանը հարուստ պաշարներ ունի նաև գունավոր մետալուրգիայի զարգացման համար: ԻԻՀ պղնձի պաշարները կազմում են 1,2 միլիարդ տոնն (պղնձի պարունակությունը 7 %): Սարչեշմեում (Քերմանի շրջան) է գտնվում պղնձի խոշորագույն հանքավայրը, որի պաշարները գնահատվում են 400-500 միլիոն տոնն: Նույն վայրում գործում է պղնձաձուլական խոշոր համալիր, որի նախագծային հզորությունը տարեկան 144 հազար տոնն պղինձ է: 1997թ. ճապոնական «Թումեն» և ավստրալիական «էմ-Ի-էմ» և «Բի-էՀ-Բի» ընկերությունների հետ ստորագրվեց Սարչեշմեի պղնձաձուլարանի զարգացման նախագծի վերաբերյալ մի պայմանագիր, որի համաձայն պղնձի տարեկան արտադրությունը հասցվելու է 200.000 տոննի:

Սարչեշմեի պղնձի հանքանյութը պարունակում է նաև արծաթ, ոսկի, մոլիբդեն: Ոսկու և արծաթի ստացման հնարավորությունը այդ վայրում գնահատվում է համապատասխանաբար տարեկան 500կգ. և 12 տոնն: ԻԻՀ-ը ներկայումս դարձել է բարձրորակ պղնձի արտահանող:

Կապարի և ցինկի հավանական պաշարների գնահատումը խիստ հակասական է՝ 11 միլիոնից մինչև 100 միլիոն տոնն: Այդ մետաղների հիմնական հանքավայրերը գտնվում են Սպահանի, Զենջանի, Համադանի, Կենտրոնական օսթանի նահանգներում: Կապարի և ցինկի ար-

տադրության գործարաններ կան Զենջանում և Բաֆդի շրջանում (Յեզդի մոտ): Առաջինի նախագծային հզորությունը տարեկան 60 հազար տոննն է, երկրորդինը՝ 40 հազար տոննն: Այդ գործարաններն ունեն նաև արծաթի, սնդիկի և կադմիումի արտադրության ցեխեր:

Իրանում կատարվում է նաև բոքսիդների հանույթ, որի հիմքի վրա զարգացվում է ալյումինի արտադրությունը: Հայրենական հումքի վրա աշխատող Արաքի ալյումինի գործարանը տարեկան արտադրում է 120 հազար տոննն ալյումին: Ալյումինի գործարան կա նաև Ղազվինում: 1997թ. Բենդեր-Աբբասում շահագործման հանձնվեց «Ալ-Մեհդի» կոչված ալյումինի համալիրը, որը հնարավորություն տվեց Իրանին դառնալու աշխարհի ալյումին արտահանող երկրներից մեկը: Նկատի ունենալով, որ ԻԻՀ-ը ունի ալյումին արտադրելու համար մեծ քանակությամբ հումք և հսկայական էներգետիկ ռեսուրսներ, առկա է ռեալ հնարավորություն, որպեսզի այդ երկիրը մոտ ժամանակներս առաջատար տեղ գրավի ալյումին արտադրող աշխարհի առաջատար պետությունների կողքին:

ԻԻՀ-ում կան նաև մարգանեցի խոշոր պաշարներ: Նրա խոշորագույն հանքավայրերից մեկը գտնվում է Վենարաքում (1987թ. գնահատմամբ՝ 45 հազար տոննն): Նկատի ունենալով, որ մարգանեցը ստրատեգիական հումք է, Իրանը ձեռնպահ է մնում այն արտահանելուց:

Շահագանց զարգացած է նաև շինանյութերի հանույթն ու մշակումը: Չնայած Իրանում շինարարական տարբեր տեսակի քարերի առկայությանը, շինությունների կառուցման գործում նախապատվությունը տրվում է աղյուսին, որը արտադրվում է մեծ քանակությամբ: Երկրում զարգացած է նաև ցեմենտի արդյունաբերությունը: Մարմարը, մարմորիթը, տրավերտինը և բենտոնիտը ոչ միայն լայնորեն օգտագործվում է երկրում, այլև արտահանվում է հարևան երկրներ:

Իրանում հեռանկարային է նաև ուրանի հանույթը, որի հետախուզված պաշարները 1991թ. տվյալներով գնահատվում են 3,200 տոննն: Ուրանի հանքեր են հայտնաբերվել Մեգենդում (Յեզդի օստան), ինչպես նաև Բանդար-Աբբասի, Նիշապուրի, Բաֆդի շրջաններում և Սիստան ու Բելուջիստան օստանում:

Մոլիբդենի հետախուզված պաշարները գնահատվում են 5 հազար տոննն: Կատարվում է նաև տիտանի հանույթ (հետախուզված պաշարները՝ 2 միլիոն տոննն, ենթադրյալ պաշարները՝ 10 միլիոն տոննն, մետաղի պարունակությունը՝ 6%):

Լայն մասշտաբներով Իրանում կատարվում է բարիումի սուլֆատի՝ բարիթի հանույթ, որը օգտագործվում է հորատման աշխատանքների համար և յաքի ու ներկի արդյունաբերության մեջ: Բարիթի արտադրության գծով հզորությունը կազմում է տարեկան մոտ 260 հազ. տոննա, տակայն պահանջարկի դեպքում հնարավորություն կա ավելացնել և նույնիսկ պատահանել:

90-ական թվականներին տնտեսության զարգացման պլաններում Իրանի լեռնահանքային արդյունաբերության ընդլայնմանը և արդիականացմանը տրվում է մեծ նշանակություն: Կարևոր ուշադրություն է դարձվում նաև ճյուղի գիտական ներուժի բարձրացման վրա: Մի շարք տեխնիկական կոլեջներ և բարձրագույն ուսումնական հաստատություններ պատրաստում են լեռնահանքային գործի գծով մասնագետներ:

Իրանը արտահանում է զգալի քանակությամբ զանազան հանքանյութեր: Վերջին 10-15 տարիների ընթացքում իրանական հանքանյութերի հիմնական ներմուծողներ են հանդիսանում Գերմանիան, Ճապոնիան, Հարավային Կորեան, Իտալիան, Հարավսլավիան, Լեհաստանը և Ռուսաստանը: Երկրում բացվում են մեծ քանակությամբ նոր հանքավայրեր, արդիականացվում, ընդլայնվում են հները, գնալով ավելի են ծավալվում լեռնահանքային արդյունաբերության ենթակառուցվածքները:

ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի արդյունաբերության վերամշակող ճյուղերը հուժկու թափով սկսեցին զարգանալ դեռևս 60-70-ական թվականներին: Այդ ճյուղերը դարձան երկրի ինդուստրացման գլխավոր ուղղություններից մեկը: Արմատավորվեցին նորագույն տեխնոլոգիաներ, ստեղծվեցին գերարդիական հոսքային գծեր: Ներկայումս ԻԻՀ-ում բարձր զարգացման են հասել վերամշակող արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են սննդի, ծխախոտի, տեքստիլ, գորգագործական, կոշիկի, փայտամշակման, թղթի և ստվարաթղթի, կաշվի, ռետինի և այլ ճյուղեր:

Վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունները պատկանում են ինչպես պետությանը և զանազան ֆոնդերին, այնպես էլ մասնավոր անձանց, կամ մասնավոր ընկերություններին: Ընդորում նրանք գործում են ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղական վայրերում, ապա-

հովելով հավելյալ աշխատատեղեր: Բավական է ասել, որ հիմնականում գյուղական վայրերում գործազրկության մեջ զբաղված է 4-5 միլիոն մարդ:

Մենդի արդյունաբերության զարգացումը նախ և առաջ պայմանավորված է սպառողական պահանջարկի արագ աճով, հատկապես կապված երկրի արագացված ուրբանիզացման հետ: Մենդի արդյունաբերության մեջ շարունակում են զարգանալ նաև արտահանության ճյուղերը՝ չոր մրգերի, ձկան, խավիարի և այլն:

Այդ ճյուղի մեջ կազմակերպման հնարավորությունը առանց խոշորամասշտաբ մեքենայացված աշխատանքի օգտագործման, արտադրությունը կազմակերպելու համար անհրաժեշտ ներդրվող կապիտալների ոչ մեծ չափերը և նրա բարձր շրջանառունակությունը ապահովում են այդ ճյուղում մանր ձեռնարկատերերի լայն մասնակցություն:

Տեքստիլ և կոշիկի արտադրությունը հանդիսանում են իրանական արդյունաբերության հնագույն ճյուղերից մեկը: Խոշոր ձեռնարկությունների հետ միաժամանակ կան մեծ ու փոքր քաղաքներում ցրված բազմաթիվ մանր ձեռնարկություններ, որոնք աշխատում են խոշոր ընկերությունների պատվերներով, նրանցից ստանալով հումք և կիսաֆաբրիկատներ և նրանց հանձնելով իրենց պատրաստի արտադրանքը: Այդ նույնը վերաբերում է նաև գործագործությանը: Ինչպես և գործագործությունը, տրիկոտաժի ու կոշիկի արտադրությունը ևս հանդիսանում են էքսպորտային ճյուղեր: Բավականին զարգացած բնագավառ է հանդիսանում նաև զգեստների արտադրությունը:

Փայտաշվաքման ու կահույքի արդյունաբերության ճյուղը ևս հանդիսանում է Իրանում արտադրության հնագույն բնագավառներից մեկը: Ճյուղի զարգացման ու ծավալման գործընթացի վրա խոշոր ազդեցություն է գործում քաղաքային բնակչության բուռն աճը, դպրոցական և առողջապահական հիմնարկությունների ծավալումը և այլն: Այս ճյուղում գերակշռող է հանդիսանում մանր ձեռնարկատիրությունը: Մանր ձեռնարկությունների նշանակալից մասը անմիջականորեն կապված է արտադրական, առևտրական և շինարարական ընկերությունների հետ, աշխատելով նրանց պատվերներով: ԻԻՀ վերամշակող արդյունաբերության ճյուղում պատշաճ ձևով ներկայացված է նաև թղթի և պոլիգրաֆիկ արդյունաբերությունը: Պետական և մասնավոր խոշոր տպա-

ռանների հետ կողք-կողքի գործում են նաև բազմաթիվ մանր տպարաններ: Թղթի և ստվարաթղթի արտադրության առավել խոշոր գործարանները գտնվում են Գիլյանում: Դրանց մեջ աչքի է ընկնում «Զուկա» գործարանը, որի նախագծային հզորությունը տարեկան 145 հազ. տոննա թուղթ է և 15 հազ. տոննա ստվարաթուղթ: Թեհրանում է գտնվում թղթի-ցելուլոզի «Քաղազ Նոուզոխուրի» գործարանը (հզորությունը՝ տարեկան 4,8 հազ. տոննա):

Քիմիական արդյունաբերությունը: *Քիմիական արդյունաբերության ժամանակակից ճյուղերը երկրում երևան են եկել համեմատաբար ոչ վաղուց՝ 60-70-ական թվականներին, երբ շահագործման հանձնվեցին խոշոր, առաջավոր տեխնոլոգիայով ու սարքավորումներով հագեցված նավթաքիմիական ապրանքների, լվացող նյութերի, դեղագործական և հիգիենիկ իրերի, զանազան տեխնիկական յուղերի, պլաստմասսայից իրերի, զանազան դողերի և այլն արտադրության գծով գործարաններ: Երկրում առավել արագ տեմպերով զարգանում է նավթաքիմիական արդյունաբերությունը, որը հանդիսանում է բազա քիմիական արդյունաբերության մի շարք ճյուղերի զարգացման համար: Իրանում գործում են Միջին Արևելքում խոշորագույն մի շարք նավթաքիմիական համալիրներ:*

ԻԻՀ-ում վերջին տարիներս կառուցվել են բազմաթիվ մեծ ու փոքր դեղագործական ֆաբրիկաներ, պլաստմասսայից իրերի, տեխնիկական յուղերի, ավտոդողերի և այլն արտադրության գործարաններ:

ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեքենաշինությունը իրենից ներկայացնում է մի ճյուղ, որտեղ առավել մեծ չափով ներկայացված են արտադրության կազմակերպման ամենաժամանակակից ձևերը, սկսած ավտոմոբիլային գործարաններից, վերջացրած համակարգիչների արտադրությամբ:

80-ական թվականներից սկսած ԻԻՀ-ում սկսեցին արագորեն զարգանալ էլեկտրոնիկան ու սարքաշինությունը, բնագավառներ, որոնք պահանջում են բարձր տեխնիկական պատրաստվածություն և թանկարժեք սարքավորումներ: ԻԻՀ-ը արտադրում է հաշվիչ մեքենաներ, մետաղամշակման ու փայտամշակման հաստոցներ, օպտիկական և ֆո-

տոապարանքներ, չափիչ սարքավորումներ և այլն: Իրանն ունի խոշոր մեքենաշինություն և մետաղամշակման արտադրություն, մոտորաշինություն, ավտոմոբիլաշինություն, ռադիո և հեռուստատեսային, էլեկտրաենергետիկայի, մոտոցիկլետներ ու հեծանիվներ արտադրող գործարաններ, տրանսպորտային մեքենաշինություն և այլն:

Իրանի ավտոմոբիլաշինությունը համեմատաբար երիտասարդ ճյուղ է: Նա ունի ընդամենը 35 տարվա պատմություն: Սակայն այն առավել արագ զարգացում ապրեց վերջին 10-15 տարիների ընթացքում: Ազգային ավտոմոբիլաշինությունը զարգացնելու նպատակով 1980-1981 թվականներին կառավարությունն արգելեց արտասահմանյան ավտոմոբիլների ներմուծումը: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ ԻԻՀ-ը կտրուկ փոփոխության ենթարկեց առաջատար արևմտյան պետությունների, հատկապես ԱՄՆ-ի հետ, տնտեսական հարաբերությունների քաղաքական կուրսը:

Ներկայումս թեև արտասահմանյան ավտոմոբիլների ներմուծման արգելքը վերացված է, սակայն կառավարությունը շարունակում է վարել ներմուծումը սահմանափակելու կուրս:

1984/85թ.թ. տվյալներով Իրանում կային ավտոմոբիլային արտադրության 73 գործարաններ, որոնցից խոշորագույնները պետական են կամ խառը պետական-մասնավոր: Ամենախոշոր ավտոգործարանը «Իրան-խոդրոու»-ն է, որն արտադրում է «Փեյքան» մակնիշի մարդատար ավտոմոբիլներ, միկրոավտոբուսներ, շտապ օգնության մեքենաներ:

ԻԻՀ-ում գործում է «Իրան Մայկիա» ավտոգործարանը, որն արտադրում է «Ռենո», «Պեժո» մակնիշի ավտոմոբիլներ: «Ջամյադ» գործարանում հավաքվում են «Նիսսան» ու «Ջամյադ» տիպի բեռնատարներ:

Իրանի ավտոգործարանները արտադրում են նաև ավտոբուսներ, «Ջիպ» տիպի զանազան մեքենաներ, բեռնատար ու կիսաբեռնատար տիպի ավտոմոբիլներ և այլն:

Երկրում գործում են բազմաթիվ փոքր ձեռնարկություններ, որոնք ավտոմոբիլային արդյունաբերության համար արտադրում են զանազան դետալներ և համակցող առարկաներ: Ավտոմատների որոշ տեսակներ ներմուծվում են արտասահմանից:

Արտադրվել ՝

Արտադրանքի տեսակը	1991 .	1992
Ավտոբուսներ	3209	2546
Մինի ավտոբուսներ	7727	5687
Բեռնատար մեքենաներ	10977	7168
Մարդատար ավտոմոբիլներ	48782	33151
Թեթև բեռնատար ավտոմոբիլներ	21576	23188
Տրակտորներ	12727	9320
Ջիպ տիպի ավտոմոբիլներ	5404	3237
Ավտոմոբիլների կցորդներ	559	578
Ավտոմոբիլ կռունկներ	672	408
Բուլդոզերներ, բեռնիչներ, գրեյդերներ, էքսկավատորներ	1513	1313
Վագոններ	434	825
Ավտոմոբիլային դիզելային շարժիչներ	16005	13312
Ավտոմոբիլների արագությունների տուփեր	13740	14670
Ավտոմոբիլային գործիքներ	6089	3391
Կոմպրեսորներ	1731	1103
Ռադիատորներ	3014	3002,6

Աղբյուրը՝ Իրանի առևտրի տան բյուլետեն:

Գյուղատնտեսական մեքենաշինությունը ներկայացված է այնպիսի խոշոր գործարաններով, ինչպես օրինակ Թավրիզի տրակտորաշինական գործարանն է (կառուցվել է Ռումինիայի տեխնիկական աջակցությամբ), որը 80-ական թվականներին արտադրում էր տարեկան միջին հաշվով 10-12 հազար տրակտորներ, Արաքի գյուղատնտեսական տեխնիկայի գործարանը արտադրում է տրակտորներ (մինչև 3 հազար), կոմբայններ և մինչև 20 տեսակի գյուղատնտեսական սարքավորումներ:

Ընդհանուր մեքենաշինության խոշորագույն գործարաններն են. Արաք քաղաքինը, (կառուցվել է ԽՍՀՄ-ի տեխնիկական օգնությամբ), որի նախագծային հզորությունն է 30 հազ. տոնն կիսաձանր սարքավորումներ ու մեքենաներ (մամլիչներ, փոքր վագոններ, գյուղատնտեսական մեքենաներ և այլն): Թավրիզի մեքենաշինական գործարանը («Մաշին սազիե Թաբրիզ») կառուցվել է Չեխոսլովակիայի տեխնիկական օգնությամբ, նախագծային հզորությունը՝ տարեկան 10 հազ. տոնն (հաստոցներ, պոմպեր, կոմպրեսորներ, էլեկտրաշուրջներ): ԻԻՀ-ում արտադրվող մետաղամշակման հաստոցների մոտ 80%-ը արտադրվում

է Թավրիզի մեքենաշինական գործարանում: Այդ գործարանում տարեկան արտադրվում է մոտ 5000-5500 տարբեր տիպի հաստոցներ:

Իրանական մեքենաշինական արդյունաբերությունը արտադրում է նաև հիդրավլիկ մամլիչներ, քերմոպլաստավտոմատներ, դարբնային մուրճեր և այլն:

Ինչպես նշվեց վերևում, ԻԻՀ-ում գոյություն ունի նաև էլեկտրամեքենաշինություն և կենցաղային տեխնիկայի արտադրություն (սառնարաններ, լվացքի մեքենաներ, գազի և էլեկտրական օջախներ, էլեկտրալամպեր, չոր էլեկտրամարտկոցներ, էլեկտրամոտորներ, տրանսֆորմատորներ, էլեկտրահաշվիչներ և այլն):

Ճյուղի ձեռնարկությունների մեծ մասը գտնվում է Ծանր արդյունաբերության նախարարության հսկողության տակ:

ԻԻՀ սեփական արտադրությունը, սակայն, չի բավարարում իր մեքենաշինական ապրանքների պահանջարկը: Ուստի նա արտասահմանից (գլխավորապես ԳԴՀ-ից, Իտալիայից, Ֆրանսիայից, Անգլիայից, Իսպանիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Չեխիայից, Հունգարիայից և այլն) ներմուծում է նման ապրանքներ:

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Էլեկտրաէներգետիկան պատկանում է այն ճյուղերի թվին, որոնց զարգացումից կախված է Իրանի ողջ տնտեսության տեխնիկական մակարդակը:

ԻԻՀ-ում էներգետիկայի զարգացման հարցերով զբաղվում է էներգետիկայի նախարարությունը, որի ֆունկցիաների մեջ է մտնում նրա արտադրությունն ու բաշխումը, քաղաքների և գյուղերի մատակարարումը խմելու ջրով, արդյունաբերության և գյուղատնտեսության կարիքների բավարարումը ջրով: Բացի այդ, նրա պատասխանատվությունների մեջ է մտնում ճյուղի զարգացման բնագավառում կարճաժամկետ և երկարաժամկետ քաղաքականության մշակումը և այլն:

Էներգետիկայի նախարարության տնօրինության ներքո գտնվող էլեկտրակայաններից բացի երկրում կան նաև մասնավոր էլեկտրակայաններ, գլխավորապես արդյունաբերական ձեռնարկություններին կից:

Ըստ որոշ տվյալների, ԻԻՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրությունը 1997թ. անցավ 80 միլիարդ կվտ/ժամ-ի սահմանագիծը: Վերջին երկու

երեք տարվա ընթացքում շարք մտան մի շարք նոր, արդիական տեխնիկայով ու տեխնոլոգիայով հագեցված հիդրոէլեկտրակայաններ և ջերմաէլեկտրակայաններ: Բուշեհրում շարունակվում է ատոմային էլեկտրակայանի շինարարությունը:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԻԻՀ տնտեսության առաջնային ճյուղերից է պաշտպանական արդյունաբերությունը, որը վերջին տարիներս վերածվել է Միջին Արևելքում իր ներուժով ամենահզորագույններից մեկը: Այս ճյուղում կենտրոնացված է ինչպես նշանակալից տեխնիկական, այնպես էլ գիտական ներուժ: Կարելի է անվարան ասել, ԻԻՀ-ն ռազմաարդյունաբերական համալիրի ձևավորումը արդեն կայացել է և ռազմական արդյունաբերության ձեռնարկությունների հզորությամբ, արտադրանքի ծավալով և նոր տեխնոլոգիաների առկայությամբ ներկայումս ԻԻՀ-ը տարածաշրջանում գրավում է առաջատար տեղ:

ԻԻՀ-ն ռազմական արդյունաբերությունը ներկայացված է մի շարք ճյուղերով.

Հրթիռաշինություն. ԻԻՀ արտադրում է տարբեր տեսակի հրթիռներ (տակտիկական, օպերատիվ տակտիկական, հակատանկային և այլն): «երկիր-երկիր» հրթիռների ընտանիքը 1997թ. համալրվեց ավելի կատարելագործված «Ֆաջր-3» հրթիռներով: ԻԻՀ ռազմական արդյունաբերությունը արտադրում է նաև «օդ-երկիր» տեսակի հրթիռներ, համազարկային կրակի շարժուն համակարգեր, զանազան հրթիռանետներ, լազերային ռումբեր և այլն: Ըստ որոշ աղբյուրների, իրանական մասնագետները աշխատանքներ են տանում նաև բալիստիկ հրթիռներ ստեղծելու վրա:

Հրետանային-հրաձգային զենքի արտադրություն: Արտադրվում է 20 և 35 մմ տրամաչափի հակազենիթային հրանոթներ, 60, 81 և 120մմ ականանետներ, 105, 122 և 155 մմ տրամաչափի թնդանոթներ, MG-1, MG-3, «Model -22», «Uzy» տիպի ավտոմատներ:

Ռադիոէլեկտրոնիկայի արդյունաբերությունը արտադրում է էլեկտրոնիկ սարքեր հրթիռների ու ավիացիայի համար, ռադիոլոկացիոն սարքեր, տարբեր տեսակի ռազմական ապարատներ, սարքեր ու սարքավորումներ:

Զրահապատ մեքենաների գործ: ԻԿԼ-ը արտադրում է «Զուլֆիզար» տանկեր, զրահապատ ռազմական մեքենաներ («Բառաղ»), «Փի-ԷՄ-Փի» զինվորական մարդատար մեքենաներ և բանակի համար այլ տրանսպորտային միջոցներ:

Ռազմական նավաշինություն: Պարսից ծոցի և Կասպից ծովի մի շարք նավահանգիստներում (Բանդար-Աբբաս, Բուշեհր, Բանդար-Խոմեյնի, Խարք, Էնզելի) կան նավաշինական ձեռնարկություններ, որտեղ արտադրվում են տարբեր տեսակի ոչ մեծ ռազմանավեր, (այդ թվում նաև փոքր սուզանավեր), բազմանպատակ էսկադրային ականակիրներ, արագընթաց պահակային նավեր, դեսանտային կատերներ և այլն, ինչպես նաև կատարվում է ռազմանավերի վերանորոգման-պրոֆիլակտիկ աշխատանքներ:

Զինամթերքի արտադրություն: Արտադրվում է տարբեր տրամաչափի զինամթերք, ինչպես նաև ականներ: 1986 թ. համեմատությամբ 1990 թ. զինամթերքի արտադրությունը աճել է երկու անգամ:

Ավիացիոն արդյունաբերություն ներկայացված է ռազմական ինքնաթիռների վերանորոգման ու սպասարկման արհեստանոցներով: Արտադրվում են նաև ինքնաթիռների պահեստամասեր: Կան զինվորական ուղղաթիռների ու ինքնաթիռների հավաքման գործարաններ: Սպահանում յուրացված է առանց օդաչուի թռչող հետախուզական ինքնաթիռների արտադրությունը:

ԻԿԼ-ում աշխատանքներ են տարվում ոչ մեծ ինքնաթիռներ արտադրելու ուղղությամբ, որոնք պետք է հիմք հանդիսանան հետագայում ռազմական ինքնաթիռներ արտադրելու համար:

Ռազմա-արդյունաբերական արտադրության հետագա զարգացման նպատակով կարևոր ուշադրություն է դարձվում ռազմական գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքների վրա: Այդ նպատակով գործում են բազմաթիվ գիտա-հետազոտական կենտրոններ, լաբորատորիաներ, ուսումնական հաստատություններ և այլն:

Տարեցտարի ԻԿԼ կատարելագործում է ռազմա-արդյունաբերական արտադրությունը, յուրացնում է նոր տիպի սպառազինություն:

Ռազմաարդյունաբերական համալիրի բնագավառում ձեռք բերված խոշոր հաջողությունները հնարավորություն տվեցին ԻԿԼ-ը արտահանել սպառազինության որոշ տեսակներ:

ներկայումս ԻԻՀ առջև կանգնած է ռազմական արդյունաբերության բնագավառում ինքնաբավության խնդիրը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի կլիմայական և աշխարհագրական պայմանները բարենպաստ են գյուղատնտեսական արտադրության զարգացման համար: Մասնագետների հաշվարկով, Իրանում օգտագործման ենթակա ջրի բալանսը տարեկան 160 միլիարդ խորանարդ մետր է, որից օգտագործվում է միայն 85 միլիարդ խորանարդ մետրը: ԻԻՀ-ն ունի 51 միլիոն հեկտար մշակովի հողեր, որից միայն 16 միլիոն հեկտարն է օգտագործվում: Կասպից ծովը և Պարսից ծոցը Իրանը ապահովում են ծովային մթերքներով:

Իսլամական հեղափոխությունից անմիջապես հետո ԻԻՀ ղեկավարությունը ձեռնամուխ եղավ գյուղատնտեսության բնագավառում բարեփոխումների իրականացման: Մասնավորապես 1980թ. ապրիլի 15-ին ընդունվեց օրենք ագրարային հարցի մասին, ըստ որի գյուղացիությունը ստացավ մշտական օգտագործման համար 577 հազ. հեկտար և ժամանակավոր օգտագործման համար 792 հազ. հեկտար հողեր:

1982թ. մարտի 2-ին ընդունվեց ագրարային ռեֆորմի մասին օրենք, որը խնդիր էր դնում ինտենսիֆիկացնել գյուղատնտեսական արտադրությունը, առավել արդյունավետ կերպով շահագործել մշակվող հողերը, յուրացնել նոր հողեր, ավելացնել գյուղատնտեսական արտադրությունը, հատկապես նրա սննդամթերքային ճյուղերը և այլն:

Գյուղատնտեսության արտադրության զարգացումը խթանելու նպատակով կառավարությունը ընդունեց երաշխիր խոշոր տնտեսություններին դրամական հատկացումներ տրամադրելու վերաբերյալ: Միաժամանակ ամեն կերպ խրախուսվում էր բուսաբուծության և անասնապահության բնագավառում տարբեր գյուղատնտեսական մեքենաների օգտագործումը: Այդ քաղաքականության հետևանքով 1986թ. կեսերին գյուղատնտեսական արտադրության մեջ տրակտորների թիվը հասավ 140-170 հազարի, կոմբայններինը՝ 3,5 հազարի: Կտրուկ ավելացավ նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը, կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում բուսաբուծության և անասնապահության մեջ ժամանակակից մեթոդներ կիրառելուն, ոռոգման ցանցի ըն-

դարձակմանը: Այդ բոլորի հետևանքով նկատվում էր գյուղատնտեսական արտադրության համեմատաբար արագացված տեմպերով զարգացում:

Սակայն դրանով հանդերձ պետք է նշել, որ գյուղատնտեսական արտադրության աճի տեմպերը մեծապես զիջում են քաղաքային բնակչության աճի արտակարգ բարձր տեմպերին և գյուղատնտեսական արտադրության (սննդամթերքների) վճարունակ պահանջարկին: ԻԻՀ-ը շարունակում է մնալ գյուղատնտեսական մթերքներ ներմուծող երկիր:

Իրանական բուսաբուծության հիմնական սննդամթերքային կուլտուրան ցորենն է: Ցորենագրի կուլտուրաների մշակման մեջ զբաղված է հողագործությամբ զբաղվող ընտանիքների գերակշիռ մեծամասնությունը: Երկրում ցորենի ցանքսերը հանդիպում են ամենուրեք: Այդ կուլտուրայի արտադրության մեջ գերակշռում են չոռոգվող ցանքատարածությունները:

Պետք է նշել սակայն, որ հացահատիկային կուլտուրաների արտադրության աճը մեծապես հետ է մնում պահանջարկից և չի բավարարում ԻԻՀ բնակչության կարիքները: Ներքին պահանջարկը բավարարելու համար ԻԻՀ կառավարությունը ներմուծում է ցորեն: Այդ կենսական նշանակություն ունեցող խնդիրը լուծելու համար կառավարությունը միջոցներ է ձեռնարկում երկրում ցորենի արտադրությունը ավելացնելու համար: Այդ նպատակով ձեռնարկվում են հատկապես միջոցառումներ, ինչպես օրինակ, բարելավվում են սերմերը, աշխատում են ավելի լայնորեն օգտագործել քիմիական պարարտանյութեր, հողագործներին հատկացվում են վարկեր, տրվում են խրախուսական պարգևատրումներ և այլն:

Ցանքսերի գծով երկրորդ տեղը զբաղեցնում է գարին, որը նույնպես մշակում են ԻԻՀ շրջանների մեծ մասում: Այն աճեցնում են նշանակալից չափով որպես կերային կուլտուրա և առավելապես ոչ ոռոգվի հողերում:

Բրինձը ԻԻՀ բնակչության շրջանում ամենատարածված ու հարգի սննդամթերքներից մեկն է: Այն մշակում են առավելապես ոռոգվի հողերում՝ Գիլյանի և Մազանդարանի նահանգներում, որոնք տալիս են Իրանում բրնձի ողջ արտադրության 85%-ը: Բրինձ է աճեցվում նաև Խուզեստան նահանգում և ոչ մեծ քանակությամբ նաև Ֆարսում, Սպահանում, Քրդստանում, Լուրեստանում, Միսթանում և Բելուջեստանում:

երկրում բրնձի պահանջարկի մեծ լինելու պատճառով, ԻԻՀ-ը արտասահմանից ներմուծում է զգալի քանակությամբ բրինձ: Իրանական բրինձը աչքի է ընկնում իր բարձր որակով:

Այլ հացահատիկային կուլտուրաներից Իրանում մշակվում է գլխավորապես եգիպտացորեն, կորեկ, սորգո:

Լոբին, սիսեռը, ոսպը և այլ լոբազգի կուլտուրաները կազմում են իրանական ընտանիքի սննդամթերքի հիմնական բաղադրամասերից մեկը: Այդ կուլտուրաները աճեցվում են երկրի շրջանների մեծ մասում, սակայն առանձնապես Արևելյան և Արևմտյան Ադրբեջանում, Խորասանում, Գիլյանում, Մազանդարանում, Գորգանում և Սպահանում:

Տեխնիկական կուլտուրաներից աճեցվում է բամբակ, ճակնդեղ, յուղաբեր կուլտուրաներ, թեյ, կենաֆ (կանեփատեսակ), վուշ, ծխախոտ, ափիոնի կակաչ:

Իրանական բնակչության սննդի չափաբաժնի մեջ կարևոր տեղ է գրավում շաքարը: Ուստի շաքարի ճակնդեղից և շաքարեղեգնից նրա արտադրությանը վերջին տարիներս մեծ ուշադրություն է դարձվում: Ճակնդեղի արտադրությունը խթանելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ 1960 թվականից մինչև 1990 թվականն ընկած շրջանում շաքարի ճակնդեղի արտադրությունն աճեց ավելի քան 7 անգամ: 90-ական թվականների սկզբին շաքարի արտադրությունն ԻԻՀ-ում կազմում էր տարեկան 500-ից 600 հազար տոն: Այդ քանակությունը, սակայն, չի բավարարում երկրի բնակչության կարիքները, ուստի Իրանը ստիպված է այլ երկրներից ներմուծել շաքար (տարեկան մոտ 100 միլիոն դոլարի չափով):

Բնական ներկերի արտադրությունը Իրանում ունի խորը ավանդույթներ: Ներկաբույսերից աճեցվում են տորոն (ալիզարին), ինդիգո, հակիրուկ:

Իրանում հնուց անտի զբաղվում են հինայի արտադրությամբ: Այն օգտագործվում է մազերի ներկման, դեղագործական արդյունաբերության և օճառի արտադրության մեջ: Նրա արտադրության հիմնական կենտրոնը Քերմանն է:

Խեժերի և բուսախեժերի արտադրության մեջ առաջատար տեղ է գրավում կատիրան կամ գումմիդրագանտը, որը պատրաստում են Իրանի լեռնային շրջաններից մեծ մասում աճող աստրագալի հյութից: Արտադրության հիմնական շրջաններն են Ֆարսը, Սպահանը, Քերմանը

և Լուդիսթանը: Գումմիդրագանդի մեծ մասը արտահանվում է: Արտաքին շուկա է հանվում նաև բուրավետ բուսախեժը, որն օգտագործվում է որպես համեմունք, ինչպես նաև բժշկական և տեխնիկական նպատակներով:

Համաշխարհային շուկայում մեծ պահանջարկ ունի նաև կանաչ և սև չամանը, որի արտադրության կենտրոնը Խորասանն է: Այդ նույն վայրում արտադրվում է նաև զաֆրան (քրքում):

Ֆարսում, Ծեզդում և Իրանի մի շարք այլ շրջաններում աճեցվում է վարդ: Ֆարսում և մասամբ նաև Քերմանում մշակվում է մաստուտակ, որը նույնպես արտաքին շուկայում ունի մեծ պահանջարկ:

Իրանական բուսաբուծության մեջ նշանակալից տեղ է գրավում մրգերենի և ընկուզեղենի արտադրությունը: Առհասարակ Իրանում այգեգործությունը բնորոշվում է կուլտուրաների բազմազանությամբ: Խնձոր, տանձ, սերկևիլ և խուրմա Իրանում աճեցնում են համարյա ամենուրեք. բալ և կեռաս՝ գլխավորապես Ատրպատականում Քրդստանում, Քերմանշահում, Լուրեսթանում, Սպահանում, Բախթիարիում և Ֆարսում, տալոր և դեղձ՝ Ֆարսում, Սպահանում, Բախթարանում, Ատրպատականում, Խորասանում, Մազանդարանում և Գորգանում, նուռ և թուզ՝ հյուսիսային և կենտրոնական շրջաններում:

Իրանում տարածված կուլտուրաներից մեկն է ծիրանը, որն աճեցնում են Իրանի շրջանների մեծ մասում՝ բացառությամբ հարավային նահանգների: Չորացրած ծիրանը Իրանի արտահանության կարևորագույն հոդվածներից մեկն է:

Իրանական այգեգործության հիմնական ճյուղերից մեկը ցիտրուսային կուլտուրաների՝ նարնջի, մանդարինի, լիմոնի թուրինջի արտադրությունն է: Ցիտրուսային կուլտուրաների (առավելապես նարնջի) արտադրության կենտրոնը Մազանդարանն է: Այդ նահանգում մշակվում է նաև կիվի:

Իրանի հարավային նահանգների այգեգործության մեջ առաջատար տեղ է գրավում արմավի (խուրմա) արտադրությունը (Խուզիսթանում, Ֆարսում, Քերմանում, Սիստանում և Բելուջիստանում, Պարսից ծոցի և Օմանի ծովի ափերին): Արմավի արտադրությամբ Իրանը գրավում է աշխարհում առաջին տեղերից մեկը: Մեծ քանակությամբ այն արտահանվում է:

Խորոեմշահրում, Սիվազում, Դիզֆուլում, Բանդար-Աբբասում, Մինաբում, Բելուջիստանի առանձին շրջաններում աճեցվում է նաև բանան: Կան նաև մանգոյի ծառեր:

Իրանում մեծ քանակությամբ աճեցվում է պիստակ, որի արտադրության կենտրոնը Քերմանի նահանգի Ռաֆսանջան շրջանն է, նուշ, կաղին:

Իրանական այգեգործության մեջ արտադրության ծավալներով առաջատար տեղ է գրավում խաղողը: Աճեցվում է 70-ից ավելի տեսակների խաղող, որոնցից առավել տարածվածը քիշմիշն է: Նրանից պատրաստված քիշմիշի զգալի մասը արտահանվում է: Խաղող աճեցնում են համարյա ամենուրեք, սակայն նրա արտադրության հիմնական շրջաններն են Ատրպատականը, Ղազվինը, Խորասանը, Արաքը, Սպահանը և Ֆարսը:

Իրանում արտադրվող բանջարեղենը և մրգերենը բավարարում է երկրի ներքին կարիքները (տարեկան արտադրվում է մոտ 20 միլիոն տոնն բանջարեղեն և մրգերեն, այդ թվում 12 միլիոն տոնն բանջարեղեն և 8 միլիոն տոնն մրգերեն): Բանջարեղենի և մրգերենի ավելցուկը արտահանվում է հիմնականում Պարսից ծոցի արաբական երկրներ:

ԻԻՀ ունի գյուղատնտեսական տեխնիկայի սեփական արտադրություն: 90-ական թվականների սկզբի տվյալներով, նա տարեկան արտադրում էր 17 հազար տրակտոր, մինչև 650 կոմբայն, և ավելի քան 1,5 հազար այլ գյուղատնտեսական մեքենաներ: Արտահանմանից նա ԻԻՀ-ը ներմուծում է գյուղատնտեսական զանազան մեքենաներ:

Իրանի գյուղատնտեսության կարևոր ճյուղ է հանդիսանում անասնապահությունը, որին բաժին է ընկնում ագրարային սեկտորի բոլոր եկամուտների երրորդ մասը: Գյուղատնտեսության մեջ զբաղված է մոտ 5 միլիոն մարդ: Ըստ իրանական տվյալների, 1991թ. ԻԻՀ-ում կար մոտ 9 միլիոն գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 37 միլիոն ոչխար և 15 միլիոն այծ: Իրանական կառավարության կողմից կերային բազայի ընդլայնման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ (հողերի մի զգալի մասը հատկացված է անասնապահներին երկարաժամկետ վարձակալության սկզբունքով) վերջին տարիներս խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների և այծերի գլխաքանակը նշանակալիորեն աճել է: Անասունների գլխաքանակի շեշտակի ավելացմանը նպաստել է նաև ցեղային խոշոր եղջերավոր անասունների ներմուծումը, ինչպես նաև անասնաբուժական սպասարկումների բարելավումը:

Հիմնական կաթնային ձեռնարկությունները տեղաբաշխված են Թեհրանում, ինչպես նաև Ադրբեջան, Ֆարս Գիլյան, Գորգան, Քերման և Խորասան նահանգներում:

ԻԻՀ-ում կան 80-ից ավել բավականաչափ խոշոր թռչնաբուծական տնտեսություններ:

Սակայն այդ բոլորով հանդերձ, մսի, կաթի, պանրի սեփական արտադրությունը չի բավարարում այդ մթերքների գծով երկրի աճող պահանջները, ուստի և կառավարությունը ստիպված է արտասահմանից ներմուծել զգալի քանակությամբ կաթնամթերքներ և միս:

Երկրում բավականաչափ զարգացած է նաև մեղվաբուծությունը: Կան մեղվաբուծական 150-ից ավել կոոպերատիվներ:

Անտառները Իրանում զբաղեցնում են երկրի ընդհանուր տարածքի 11-12 %-ը, սակայն առկա է միայն ապրանքային անտառի 1,3 միլիոն հեկտար: ԻԻՀ-ն ունի նաև թղթի սեփական արտադրություն: 1990 թ. թղթի տարբեր տեսակների արտադրությունը կազմեց մոտ 60 հազար տոննա:

ԻԻՀ-ում առկա է հիանալի բազա ձկնային տնտեսության զարգացման համար. երկրի տարածքի մոտ 35 տոկոսը ելք ունի դեպի ծովային ջրերը, որոնք ունեն ձկի հարուստ պաշարներ: Հարավային և հյուսիսային ջրերում, ինչպես նաև երկրի ներքին ջրամբարներում վերջին տարիներս ձկան որսը կազմում էր տարեկան 200-250 հազար տոննա: Որը ձկան որսի մոտ 70 տոկոսը իրագործվում է կոոպերատիվների և մասնավոր անձանց կողմից: Պետական ընկերությունները Պարսից ծոցում, Օմանի ծովում և Կասպից ծովում ունեն ձկնորսական բավականին հզոր նավատորմ: Հարավային ջրերում իրականացվում է նաև մանր ծովախեցգետնի նշանակալից որս (միջին հաշվով տարեկան մոտ 1500 տոննա): Ձկնային արտադրանքի մի մասը կոնսերվացվում է: Ձկնապահածոյական արդյունաբերության հզորությունը 1990թ. կազմում էր տարեկան 35 միլիոն տուփ:

ԻԻՀ-ում առկա է նաև ձկնաբուծության արտադրություն: Կասպից ծովում և նրա հարակից գետերում կատարվում է թանկարժեք ձկնատեսակների խոշորամասշտաբ որս: Իրանը խավիար արտադրող խոշորագույն երկրներից մեկն է (տարեկան արտադրվում է 320 տոննա): ԻԻՀ-ը ամբողջապես բավարարում է ձկնեղենի գծով իր պահանջարկը: Թանկարժեք ձկնատեսակների և բարձրորակ սև խավիարի մի զգալի մասը արտահանվում է արևմտյան երկրներ:

Իրանական կառավարությունը մեծ նշանակություն է տալիս երկրի գյուղատնտեսության զարգացմանը և այդ նպատակների համար հատկացնում է խոշոր միջոցներ: Երկրի գյուղատնտեսական բանկի գծով ևս նշանակալից միջոցներ են տրամադրվում մասնավոր տնտեսություններին (կոոպերատիվներին):

Պետությունը անբերքատվության դեպքում իր վրա է վերցնում ֆերմերների ապահովագրումը, իրականացնում է հացահատիկային և այլ կուլտուրաների երաշխավորված գնումներ, ֆերմերներին օգնում է որակյալ սերմերով, պարարտանյութերով, հսկում է գյուղտեխնիկայի բաշխումը, ինչպես նաև տնտեսություն է վարում պետական ագրոարդյունաբերական համալիրներում (գլխավորապես անասնապահական և շաքարի արտադրության համար հումքի արտադրության գծով):

Անտարակույս ապագայում գյուղատնտեսության բնագավառում չօգտագործվող ներուժի օպտիմիզացման դեպքում Իրանը ի վիճակի է դառնալու իրեն սննդով և գյուղատնտեսական այլևայլ մթերքներով ապահովող ինքնաբավ երկիր:

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ԵՎ ԿԱՊԸ

Տրանսպորտը ԻԻՀ-ն տնտեսության առանցքային ճյուղերից մեկն է, որի զարգացմանը մեծ նշանակություն է տրվում:

Ավտոմոբիլային տրանսպորտը: Իրանում տրանսպորտի առաջատար տեսակ է, նրանով է իրականացվում ներքին փոխադրումների ծավալի մոտ 80%-ը: Արտաքին առևտրական բեռների հիմնական մասը ևս տեղափոխվում է ավտոտրանսպորտի միջոցով, գլխավորապես Թուրքիայի վրայով:

ԻԻՀ-ում գոյություն ունի ավտոմոբիլային ճանապարհների բավականին զարգացած ցանց, որոնք պահվում են լավ վիճակում և մշտապես լայնացվում ու արդիականացվում են: Ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը 1991թ. դրությամբ կազմում էր ավելի քան 160 հազար կիլոմետր, որոնցից 659 կիլոմետրը արագընթաց ճանապարհներ են (ավտոբաններ):

ԻԻՀ հիմնական ճանապարհների երկարությունը.

— Քառաշարք, 839կմ:

— Դաստառի լայնքը 11 մետրից ավել, 4318 կմ:

— Դաստառի լայնքը 11 մետրից պակաս, 16, 420կմ:

երկրորդական ճանապարհների երկարությունը.

— Դաստաքի լայնքը 9 մետրից ավել, 3240կմ:
— Դաստաքի լայնքը 9 մետրից պակաս, 17534կմ:
— Դաստաքի լայնքը 6-7 մետր, 15,569կմ:

Տեղական նշանակություն ունեցող ճանապարհների երկարությունը.

— ասֆալտապատված, 4100կմ:
— խճաածուկ, 38900կմ:
— հողաածուկ, 69 000կմ:

Հիմնական արագընթաց ավտոճանապարհներն են՝ Թեհրան-Ղազվին (150 կմ), Թեհրան-Ղում (125 կմ), Քերման-Սեմնան (600 կմ), Սպահան օսթանի ավտոմայրուղիները և այլն:

Ավտոճանապարհների առավել խիտ ցանցը գտնվում է երկրի հյուսիսում, հետևյալ օսթաններում. Կենտրոնական, Գիլյան, Մազանդարան, Ադրբեջան, ինչպես նաև Դարսից ծոցի ափերին և Խուզեսթան օսթանում: Երկրի հյուսիսը հարավի հետ կապված է միայն երեք խոշոր ավտոմայրուղիներով. Թեհրան-Սպահան-Սիվազ, Թեհրան-Յեզդ-Քերման-Բանդար-Աբբաս և Սեմնան-Քերման:

ԻԻՀ ողջ հիմնական ճանապարհային ցանցը հսկողության և կառավարման կենտրոնացման նպատակով բաժանվում է 10 հիմնական ուղղությունների.

Թեհրան-Բազերգան	781 կմ
Թեհրան-Ռեշտ	325 կմ
Թեհրան-Չալուս	194 կմ
Թեհրան-Շիրազ-Բուշեհր	1230 կմ
Թեհրան-Մեշհեդ (Քենարեյի վրայով)	966 կմ
Թեհրան-Մեշհեդ (Սեմնանի վրայով)	1037 կմ
Թեհրան-Սիվազ-Բանդար-Խոմեյնի	1037 կմ
Թեհրան-Ղում-Սպահան-Շիրազ-Բուշեհր	1230 կմ
Թեհրան-Սպահան-Քերման-Բանդար-Աբբաս	1454 կմ
Թեհրան-Սպահան-Զահեդան	1555 կմ:

Իրանը Եվրոպայի հետ կապվում է գլխավորապես Թուրքիայի վրայով անցնող ավտոմոբիլային ճանապարհներով: Ներմուծումների առնվազն 20%-ը իրականացվում է թուրքական տարանցիկ ճանապարհով:

Հարկ է նշել, որ ԻԻՀ ավտոճանապարհներն աչքի են ընկնում իրենց համեմատաբար բարձր որակով: Սակայն այլ երկրների (օրինակ Թուրքիայի) հետ համեմատած Իրանն ունի ավտոճանապարհային ենթակառուցվածքի չափազանց ցածր ցուցանիշներ:

ԻԻՀ ավտոմոբիլային պարկը 80-ական թվականների կեսերին կազմում էր մոտ 2,8 միլիոն ավտոմեքենա, որոնց տեղաբաշխումը երկրի տարբեր շրջաններում ծայրահեղ անհավասարաչափ էր: Այսպես, 1991թ. տվյալներով երկրում կար 487,861 միավոր բեռնատար ավտոմոբիլներ: Ընդհանուր առմամբ Իրանի տրանսպորտային միջոցները ի վիճակի են համարյա լրիվ բավարարել բեռների տեղափոխման ներքին պահանջները:

ԻԻՀ-ում մարդատար ավտոմոբիլների հիմնական արտադրողը «Իրան խոդրոու» ընկերությունն է (նախկինում այն կոչվում էր «Իրան նեշընալ»): Իրանը արտադրում է նաև ավտոբուսներ և միկրոավտոբուսներ, վանեթներ (փոքր տոննաժի ոչ մեծ բեռնատարներ), որոնք գլխավորապես արտադրվում են «Զամյադ» ավտոգործարանում:

Արաք քաղաքում արտադրվում է ԻԻՀ ճանապարհային շինարարական մեքենաների մեծ մասը:

Երկաթուղային տրանսպորտը: Ներքին փոխադրումների ծավալով տրանսպորտի այս տեսակը ավտոտրանսպորտից հետո զբաղեցնում է երկրորդ տեղը: ԻԻՀ կառավարությունը հետևողական քայլեր է գործադրում երկաթուղային ցանցի զարգացման, գործող երկաթուղիների վերակառուցման և նոր երկաթուղագծերի կառուցման ուղղությամբ:

Իրանում երկաթուղիների ընդհանուր երկարությունը 1984/85թթ. կազմում էր 5821 կմ, որից 4567 կմ-ը՝ հիմնական երկաթուղիներն են, 1235կմ-ը երկրորդական և մանևրային ուղիները: Այժմ Իրանն ունի 7,740կմ երկարությամբ երկաթուղագծեր, որից 1476 կմ-ը կառուցվել է 1979թ. հեղափոխությունից հետո:

Իրանի երկաթուղագծերի անվաճիրը 1435մմ է, որը համապատասխանում է եվրոպական ստանդարտին: Բացառություն է կազմում Զահեդան-Միրջավե (94կմ) գիծը, որի անվաճիրի լայնքը 1676մմ է: Էլեկտրիֆիկացված է միայն երկաթուղագծի մեկ հատված՝ Թավրիզ-Ջուլֆա հատվածը (146կմ):

Մինչև վերջերս Իրանը երկաթուղագծերով կապված էր միայն երեք երկրների՝ Թուրքիայի, Պակիստանի և Ադրբեջանի հանրապետության

հետ: 1996 թ. մայիսին շահագործման հանձնվեց Մեշհեդ-Սարախս-Թաջան երկաթուղագիծը, որի շնորհիվ Իրանը կապվեց նաև Թուրքմենիստանի հանրապետության հետ:

ԻԻՀ կառավարությունը նախագծեր է մշակել առաջիկայում զարգացնելու երկաթուղային հաղորդակցությունը Թուրքիայի և Պակիստանի հետ:

Իրանի հիմնական երկաթուղագծերն են. Տրանսիրանական երկաթուղին, որը Պարսից ծոցի Խորրեմշահր, Աբադան և Բանդար-Խոմեյնի նավահանգիստները կապում է Թեհրանի հետ, իսկ ապա շարունակվում է մինչև Կասպից ծովի Բանդար Թորքեման նավահանգիստը: Նրա ընդհանուր երկարությունը 1440 կմ է: Մյուս երկաթուղիներն են. Թեհրան-Թավրիզ-Ջուլֆա (896 կմ), Թեհրան-Մեշհեդ (925 կմ), Թեհրան-Սպահան-Յեզդ-Քերման (մոտ 950 կմ), Բանդար-Աբբաս-Բաֆդ (631 կմ), Թեհրան-Ղում (230 կմ), Բանդար-Խոմեյնի-Սիվազ (240 կմ), Սիվազ-Խորրեմշահր (110 կմ), Շիրազ-Սպահան (480 կմ), Բաֆդ-Մեշհեդ-Սարախս, Ղազվին-Ռեշտ (240 կմ, շինարարությունը դեռ չի ավարտվել), Բաֆդ-Միրջան (260 կմ): Թավրիզ-Ջուլֆա ճյուղով Իրանի երկաթուղային ցանցը միացված է Ադրբեջանի հանրապետության հետ, իսկ Թավրիզ-Ղոթուր հատվածով՝ Թուրքիայի հետ: Շինարարության ընթացքում է գտնվում Թաջան-Մեշհեդ-Բանդար-Աբբաս երկաթուղին, որը հսկայական նշանակություն կունենա երկրի հյուսիս-արևելքը հարավի և Պարսից ծոցի հետ կապելու գործում: Իսկ Բաֆդ-Մեշհեդ երկաթուղու շինարարության նախագիծը հանդիսանում է ԻԻՀ և տարածաշրջանի երկաթուղային նախագծերի մեջ կարևորագույններից մեկը: Այն ունենալու է 770 կմ. երկարություն և 208 կմ. պահեստային ուղի: Այդ երկաթուղու նշանակությունը բազմապլանային է, այդ թվում նաև այն կոչված է ապահովել ապրանքների տարանցիկ փոխադրումներ Միջին Ասիայի երկրների և Պարսից ծոցի միջև, օգտագործելով Սարախս-Մեշհեդ և Բաֆդ-Բանդար-Աբբաս երկաթուղագծերը:

1985թ. տվյալներով ԻԻՀ երկաթուղային տրանսպորտի մեջ զբաղված էր 40 հազարից ավել մարդ:

Երկաթուղային ցանցի զարգացման բնագավառում ԻԻՀ լայնորեն համագործակցում է արտասահմանյան երկրների հետ: Ավստրիան, օրինակ, տեխնոլոգիա է տրամադրում Արաքի «Փարս» վագոնաշինական գործարանում բեռնատար և մարդատար վագոններ արտադրելու հա-

մար: 1990թ. վերջին այդ գործարանում արտադրվել է 2600 տարբեր վագոններ:

1990թ. Քերեջ քաղաքում սկսվեց լոկոմոտիվային գործարանի շինարարությունը, որը ներկայումս արտադրում է տարեկան 50 դիզելէլեկտրաքարշեր:

Պետք է նշել սակայն, որ ԻԻՀ երկաթուղային տրանսպորտի ցուցանիշները նշանակալիորեն ցածր են տարածաշրջանի երկրների մեծ մասից, այդ թվում նաև հարևան Թուրքիայից:

1986 թվականից վերսկսվեց Թեհրանի մետրոյի շինարարությունը, որն ընդհատվել էր 1978-1979թթ. հեղափոխությունից հետո: Այն ունենալու է երկու ուղղություն՝ հյուսիսից-հարավ 28 կմ, արևելքից-արևմուտք մինչև Քերեջ քաղաքը (62 կմ): Ընդորում ճանապարհների մի մասը ստորգետնյա է, մյուսը՝ վերգետնյա:

Ծովային տրանսպորտը: Ծովային տրանսպորտը ԻԻՀ տնտեսության մեջ ունի կարևորագույն նշանակություն: Երկրի ապրանքաշրջանառության հիմնական մասը, մոտ 3/4-ը, ընկնում է տրանսպորտի այդ տեսակին: Իրանական արտաքին առևտրի բեռների հիմնական մասը տեղափոխվում է Պարսից ծոցի նավահանգիստներից, որոնց զարգացման վրա դրվում են նշանակալից միջոցներ:

1986թ. դրությամբ ԻԻՀ ծովագնացության ընկերությունը բաղկացած էր 86 նավերից, ներառյալ 72 օվկիանոսային նավեր: Նավատորմի կառուցվածքը հետևյալն էր. 45 չոր բեռներ տեղափոխող նավեր, 21 կոնտեյներներ փոխադրող նավեր, 11 նավթատար տանկերներ և 8 մարդատար նավեր: Առևտրական նավատորմի ընդհանուր բեռնունակությունը գերազանցում էր 2 միլիոն տոննից:

Ներկայումս ակտիվ կերպով գործում է նաև «Իրանա-հնդկական նավային ընկերությունը», որի մեջ Իրանին է պատկանում բաժնետոմսերի 51%-ը: Այդ ընկերությունը զբաղված է Իրանի, Հնդկաստանի և Հարավ-Արևելյան Ասիայի երկրների միջև բեռների փոխադրումներով:

ԻԻՀ-ն ունի համատեղ ծովային ընկերություններ նաև Օմանի, Արաբական Միացյալ Էմիրությունների և Պակիստանի հետ:

1989 թվականից սկսվեցին արտաքին առևտրական և տարանցիկ ապրանքների փոխադրումները Բաքու-Էնզելի և Բաքու-Նոուշահր գծով ադրբեջանա-իրանական համատեղ ծովային գծի նավերով:

Ներկայումս «Իրանի Իսլամական Հանրապետության նավագնացության գծեր» ընկերությունը իրականացնում է մարդատար և բեռնատար

փոխադրումներ Պարսից ծոցի և Օմանի ծովի իրանական նավահանգիստների և Արաբական Միացյալ Էմիրությունների, Ղաթարի ու Բահրեյնի նավահանգիստների միջև: Ստեղծված է ուղիղ ծովային հաղորդակցություն Արգենտինայի, Բրազիլիայի, Ավստրալիայի հետ: Բանդար-Աբբասի վրայով բացվել է նաև ծովային գիծ Աֆրիկայի արևելյան ափի հետ (Տանզանիա, Մոզամբիկ, Կամորյան կղզիներ և այլն):

Նավթային բեռների և հում նավթի փոխադրումները իրականացվում են 1960թ. ստեղծված «Իրանական Ազգային տանկերային ընկերություն» (NITC) նավերով: 1991թ. տվյալներով այդ ընկերությունն ուներ 26 տանկերներ 4568 հազար տոնն ջրատարողությամբ: ԻԻՀ տանկերային նավատորմը աշխարհում գրավում է 12-րդ տեղը և ՕՊԵԿ-ի երկրների կազմում հանդիսանում է խոշորագույնը:

Այսպիսով ծովային տրանսպորտը և նավահանգիստները վճռական դեր են խաղում ԻԻՀ արտաքին տնտեսական գործունեության մեջ:

Ներկայումս ունենալով տարածաշրջանի ամենախոշոր առևտրական նավատորմը (75 օվկիանոսային նավեր՝ 2,218 հազար տոնն ընդհանուր ջրատարողությամբ), ԻԻՀ-ը ստիպված է իր ձեռքն է վերցնում ծովային բեռնափոխադրումների մենաշնորհը ոչ միայն Պարսից ծոցում, այլև Հնդկական օվկիանոսի արևմտյան հատվածում:

ԻԻՀ առևտրական նավատորմի նավերով փոխադրվում է իրանական ներմուծումների մինչև 50 %-ը:

Պարսից ծոցի խոշորագույն նավահանգիստներն են.

Իմամ Խոմեյնին, որը երկաթուղով և ավտոմոբիլային ճանապարհներով կապված է երկրի հիմնական քաղաքների հետ: Այն հանդիսանում է երկրի ամենաժամանակակից նավահանգիստներից մեկը և կարող է մշակել ամեն տեսակի բեռներ:

Բանդար Աբբաս, որն ընդունակ է միաժամանակ ընդունելու 6 նավեր մինչև 175 մետր երկարությամբ: Նավահանգիստը հագեցված է արդիական ամբարձիչներով և այլ տեխնիկայով:

Շահիդ Ղաջաանի նավահանգիստը գտնվում է Բանդար Աբբասից 30 կմ հեռավորության վրա:

Խորոմշահր նավահանգիստը առավել մոտ է երկրի հիմնական արդյունաբերական կենտրոններին, որոնց հետ կապված է երկաթուղով և ավտոմոբիլային ճանապարհներով: Մինչև իրանա-իրաքյան պատերազմը հանդիսանում էր երկրի հիմնական նավահանգիստը:

Պարսից ծոցի նավահանգիստներից են նաև Բուշեհրը և Չաբահարը: Նավթի արտահանման խոշոր տերմինալները գտնվում են Պարսից ծոցի Խարգ և Սիրրի կղզիներում:

Կասպից ծովի իրանական գլխավոր նավահանգիստներն են Էնզելին, Նոուշահրը և Բանդար-Թորքեմանը:

Իրանը ունի նաև ձկնորսական նավատորմ, որի նավերի մի մասը իրանական արտադրության են, մնացածները՝ ներմուծված:

Օդային տրանսպորտը: Վերջին տարիներս ԻԻՀ օդային տրանսպորտը զգալի զարգացում է ապրել: Բազմաթիվ քաղաքներում՝ Թեհրանում, Արադանում, Բանդար-Աբբասում, Սպահանում, Շիրազում, Մեշհեդում, Թավրիզում, Սիվազում, Քերմանում, Զահեդանում, Յեզդում, Բուշեհրում, Համադանում, Արդեբիլում, Իլամում, Բանդար Լենգեյում, Քիշ կղզում, Ռաշտում, Չաբահարում, Ուրմիայում, Բախթարանում, Բիրջանդում, Զաբոլում, Իրանշահրում, Լարում, Խորրամաբադում, Սանանդաջում, Ռամսարում, Նոուշահրում և այլ քաղաքներում գործում են օդանավակայաններ:

ԻԻՀ միջազգային օդանավակայաններն են, Թեհրանի Մեհրաբադ օդանավակայանը (կառուցման ընթացքում է գտնվում նաև Իմամ Խոմեյնի օդանավակայանը), Սպահանի, Շիրազի, Մեշհեդի, Թավրիզի և Բուշեհրի օդանավակայանները:

ԻԻՀ-ում գործում են երկու հիմնական ավիաընկերություններ. «Իրան էյր» (Իրանական ազգային ավիաընկերություն) և «Մասման»: Գործող մասնավոր ընկերություններից են «Քասպիան էյրլայնզը» և «Քիշ» ընկերությունները:

«Իրան էյրի» և մասնավոր ընկերությունների ինքնաթիռները ներքին չվերթներից բացի իրագործում են նաև միջազգային թռիչքներ աշխարհի բազմաթիվ երկրներ, այդ թվում նաև ԱՊՀ երկրներ (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ռուսաստան, Թուրքմենստան, Ուկրաինա, Տաջիկստան, Ուզբեկստան):

ԻԻՀ հետ օդային հաղորդակցություն ունեն բազմաթիվ արտասահմանյան ավիաընկերություններ, որոնցից հիշատակելի են «Էյր ֆրանսը», «Մերոֆլոտը», «Հայկական ավիաուղիները», «Էյր Ինդիան», «Ալիտալիան», «Ավստրիան էյրլայնը», «Էմիրատս», «Գալֆ էյր», «ԿԼՄ», «Լուֆտհանզա», «Պակիստան ինթերնեյշընալ էյրլայն», «Սվիս էյր», «Սիրիան էյրլայն», «Թյուրք հավայոլլարի» օդային ընկերությունները:

Պետք է նշել սակայն, որ Իրանի օդային տրանսպորտը բեռների տեղափոխման բնագավառում էական դեր չի խաղում:

Խողովակաշարային տրանսպորտը: ԻԻՀ տնտեսության մեջ առանձնակի նշանակություն ունի խողովակաշարային տրանսպորտը: Հիմնական խողովակաշարերի ընդհանուր երկարությունը կազմում է 15 հազար կմ (դրանք նավթամուղներ են, գազատարներ և զանազան մթերքներ տեղափոխող խողովակաշարեր):

ԻԻՀ-նն ունի գազատարների լայն ցանց: Հիմնական մագիստրալային գազատարներն են.

— ՏԻՄԳ-1 (Բիդբոլանդ-Ասթարա), 1106 կմ երկարությամբ: Սա տրանսիրանական մագիստրալային գազամուղ է:

— ՏԻՄԳ-2, Կանգան-Սպահան, 600 կմ երկարությամբ:

— Սերախս-Նեքա 800 կմ երկարությամբ:

— Ղեշմ կղզի-Բանդար-Աբբաս, 70 կմ երկարությամբ:

—Մարխուն գազի հանքավայրերից (Բանդար-Աբբասի շրջանում) մինչև Մարջեշմեի պղնձի հանքավայրն ու Քերման նահանգի քաղաքներին գազ մատակարարող գազամուղ (400կմ)

— Գազամուղների ցանց, որոնք անց են կացված Սիվազի շրջանից դեպի երկրի արևմտյան նահանգները՝ Բախթարան, Քրդստան և Լուրեստան:

Ամենաերկար իրանական գազատարը, որն անցնում է Բեհբեհան-Ասթարա գծով, ԻԻՀ տնտեսության մեջ խաղում է չափազանց կարևոր դեր: 1983 թվականից գործող Սերախս (Խորասանի օսթան) -Նեքա գազատարը Սերախսի գազազտման համալիրը միացնում է Կասպից ծովի հարավային ափի հետ: Այդ գազատարի թողունակությունը տարեկան մոտ 7 միլիարդ խ.մ է:

1986թ. շահագործման է հանձնվել Կանգան (Իրանի հարավում գազի հանքավայր) - Սպահան գազատարը 588 կմ երկարությամբ, որը հանդիսանում է ՏԻՄԳ-2-ի հարավային հատվածը: Նրա թողունակությունը տարեկան 10 միլիարդ խ.մ. է:

Համադան-Մազդեր գազամուղ:

ԻԻՀ հիմնական նավթատար և մթերատար խողովակաշարերն են. Արադան-Թեհրան (950 կմ), Սիվազ-Թեհրան (750 կմ), Թեհրան-Մեշհեդ (850 կմ), Թեհրան Ռեշտ (330 կմ), Թեհրան-Թավրիզ (550 կմ), Գաչսարան-Շիրազ (330կմ): Առանձնահատուկ նշանակություն ունեն

Իրանի հարավի նավթահանքերը Պարսից ծոցի խարբ կղզու հետ կապող նավթատարները, որտեղից գլխավորապես իրականացվում է նավթի արտահանումը այլ երկրներ: Դրանք են. Բանդար-Աբբաս-Ռաֆսանջան նավթամուղ (444կմ), Արաք-Մալայեր-Համադան (172կմ), Բեհբեհան-Սիվազ (343կմ):

Երկրի հարավից դեպի կենտրոնական և հյուսիսային տնտեսական շրջանները նավթի և նավթամթերքների տեղափոխման համար դեռևս 1956թ. կառուցված է Աբադան-Ազնա տրանսիրանական նավթամուղը: Հետագայում անց կացվեցին Ազնա-Ռեյ, Ազնա-Սպահան հատվածները: Այդ նավթամուղի ընդհանուր երկարությունը 9500կմ է: Նավթամուղի Ռեշտ-Էնզելի հատվածը (42կմ) օգտագործվում է դիզելային վառելիք փոխադրելու համար:

Պետք է նշել, որ ԻԻՀ-ում արագ տեմպերով կառուցվում են նոր նավթատարներ ու գազատարներ և արդիականացվում ու նորացվում են հները:

Առհասարակ հիշատակելի է, որ ԻԻՀ կառավարությունը հաջողությամբ իրականացրեց երկրորդ հնգամյա պլանով նախատեսված ծրագիրը տրանսպորտային ենթակառույցներ ստեղծելու ուղղությամբ: Շարք մտան մի շարք նոր, ժամանակակից ավտոմայրուղիներ, որոնք երկրի ծայրամասային շրջանները կապում են արդյունաբերական և վարչական կենտրոնների հետ: ՄՄԿ-ի ALTID ծրագիրը, որը նպատակ ունի ընդլայնել Ասիայում գոյություն ունեցող ճանապարհների ցանցը, Իրանի առջև բաց է անում նոր հեռանկարներ, որպես համաշխարհային նշանակություն ունեցող տրանսպորտային հանգույցի: Այդ ծրագրով երեք ճանապարհներից երկուսը, որոնք Հարավ-Արևելյան Ասիան կապում են Եվրոպայի հետ, անցնում են Իրանի տարածքով: ՄՊՀ-ի յոթ ցամաքային երկրները հույս ունեն միանալու այդ երկու ճանապարհներին և մուտք գտնելու դեպի ազատ ջրեր և Միջին Արևելքի ու Հարավ-Արևելյան Ասիայի երկրներ:

Կապը: Իրանն ունի կապի բավականին ծավալուն ցանց: 1977/78թ. մինչև 1984/85թ. տարբեր տիպի փոստային բաժանմունքների թիվը 2,2 հազարից ավելացավ մինչև 3,3 հազարի: Նոր բաժանմունքները, որպես կանոն, ստեղծվում էին գյուղական և հեռավոր շրջաններում:

Հեռախոսային և հեռագրական կապի մեջ ընդգրկված են գործնականում երկրի բոլոր շրջանները: 1987թ. Իրանում հաշվվում էր մոտ 1,8

միլիոն հեռախոսային աբոնենտներ, այսինքն 2 անգամ ավել, քան մինչև հեղափոխությունը: Ընդորում հեռախոսային կապից օգտվելու հնարավորություն ունեին 2,8 հազ. գյուղեր, այն դեպքում երբ 70-ական թվականների վերջին այդ հնարավորությունից օգտվում էին միայն 300 գյուղեր:

Ամտոմատ հեռախոսային կայանների միջոցով Իրանը կապված է աշխարհի համարյա բոլոր երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության հետ:

Ներկայումս ԻԻՀ-ում լայն տարածում ունի բջջային կամ շարժունակ հեռախոսը, տելեքսային կապը և այլն: Իրանը վարձել է արբանյակային կապի մի քանի կանալներ:

1948/85թ. երկրում հաշվվում էին 46 հեռուստաստուդիաներ, 139 ռադիոկայաններ: Այդ նույն ժամանակահատվածում նշանակալիորեն աճել է նաև հեռուստատեսային ռետրանսլյատորների թիվը՝ 350-ից հասնելով 592-ի:

ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

ԻԻՀ-ն ներկա վարչակարգին ժառանգություն հասավ նախկին շահական վարչակարգի ֆինանսական բոլոր պրոբլեմները (բյուջեի դեֆիցիտը, սղաձի բարձր տեմպերը, զարգացման վիթխարի, սակայն կասկածելի նախագծերը, սպառողական ապրանքների ներմուծման հիպերտրոֆիկ աճը, ֆինանսական միջոցների փոշիացվածությունը ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում, արտաքին պարտքի պատկառելի չափերը և այլն):

1979թ. հունիսին Իսլամական հեղափոխական խորհրդի որոշմամբ Իրանի վարկա-բանկային համակարգը ենթարկվեց վերակառուցման: Ազգայնացված բոլոր մասնավոր և օտարերկրյա բանկերի հիման վրա ենթադրվում էր ստեղծել նոր բանկային համակարգ, որը պետք է բաղկացած լիներ համարյանական նշանակության խոշորացված բանկերից և նահանգական բանկերի լայն ցանցից:

Մասնավոր և օտարերկրյա բանկերի անցումը պետության ձեռքը իրագործվեց ըստ բուրժուական ազգայնացման ավանդույթի, այսինքն առանց ավանդների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց գույքի կոնֆիսկացման: Այդպիսով պետությունը կարծես թե իր պաշտպանութ-

յան տակ էր վերցնում մասնավոր սեկտորին, որի ֆինանսական հիմքերը կարող էին լրջորեն տուժել երկրում հեղափոխական իրադրության հետագա ծավալման դեպքում:

Ազգայնացման հետևանքով բանկային համակարգի ղեկավար դիրքում մնաց «Բանք-ե մարքազին» (Կենտրոնական բանկը), որը պահպանեց կենտրոնական բանկի բոլոր ավանդական ֆունկցիաները. դրամանիշների էմիսիան, երկրի ոսկու և տարադրամի պաշարների պահպանումը, դրամաշրջանառության ու վարկերի կարգավորումը և այլն: Տարբեր բանկերի միացման ու խոշորացման ճանապարհով ստեղծվեց առևտրական բանկերի մի ցանց, որն իր մեջ ներառում էր հետևյալ բանկերին. «Բանք-ե մելլի» (Ազգային բանկ), «Բանք-ե սեպահ» (Ռազմական բանկ), «Բանք-ե ռեֆահ-ե քարգյարան» (Բանվորների բարեկեցության բանկ», «Բանք-ե թեջարաթ» (Առևտրական բանկ), «Բանք-ե մելլյաթ» (Ժողովրդական բանկ), «Բանք-ե թեջարաթ-ե խարեջի» (Արտաքին առևտրի բանկ), «Բանք-ե սադերաթ» (Արտահանման բանկ) և այլն:

1980-1981թ.թ. Իրանում ստեղծվեցին նաև բազմաթիվ նահանգային բանկեր, (23) որոնց գործունեությունը սահմանափակված էր տարածքային սկզբունքով:

ԻԻՀ-ում գոյություն ունեն երեք մասնագիտացված բանկեր. «Բանք-ե մասքյան» (Բնակարանային շինարարության բանկ), «Բանք-ե թոուսե-յե սանաթ վա մադան» (Արդյունաբերության և հանքերի զարգացման բանկ), «Բանք-ե քեշավարզի» (Գյուղատնտեսական բանկ):

Իրանի բանկային համակարգի կառավարման գլխավոր օրգանը դա գլխավոր ասամբլեան է:

Բանկերի գործունեության կոորդինացման և նրանց օպերատիվ ղեկավարման համար գոյություն ունի Բանկերի բարձրագույն խորհուրդ:

Սղաձի աճը կասեցնելու նպատակով իրանական կառավարությունը ձեռնարկում է մի շարք հակաինֆլյացիոն միջոցառումներ:

Իսլամական հեղափոխությունից հետո կառավարությունը վարում էր բանկային համակարգի «իսլամականացման» քաղաքականություն, որը դրսևորվեց նրանում, որ 1984/85թ. իրանական բանկերում առաջին անգամ բացվեցին անտոկոս ավանդներ (իսլամական օրենքներով բանկային տոկոսը արգելված է) մոտ 1,5 տրիլիոն ռիալ գումարով: «Իսլամական անտոկոս բանկային համակարգի» սկզբունքների համաձայն, տոկոսի փոխարեն ավանդատուին հատկացվում էր ֆիքսացված «պար-

գնատրում»: Սակայն պետք է նշել, որ ներկայումս իրանական բանկային համակարգը չի ժխտում տոկոսի հատկացման սկզբունքը և իրանական բանկերը նայած դրված ավանդների տեսակին, ավանդատուներին վճարում է տարբեր, ընդորում բավականին բարձր տոկոսադրույքներ:

Դրամական համակարգը: Երկրի դրամական միավորը իրանական ռիալն է, որը հավասար է 100 դինարի: Ներկայումս շրջանառության մեջ են գտնվում հետևյալ դրամանիշները՝ 10.000, 5000, 2000, 1000, 500, 200, 100 ռիալ. մետաղյա մանրադրամ՝ 250, 100, 50, 20, 10, 5, 2, 1 ռիալ:

Միապետության տապալումից հետո շրջանառության մեջ դրվեց նոր թղթադրամ, որտեղ շահի պատկերի փոխարեն տպված էր Իրանի Իսլամական Հանրապետության զինանշանը: 10.000 ռիալ թղթադրամի վրա պատկերված է իմամ Խոմեյնիի դիմանկարը:

Հեղափոխությունից հետո փոխվել է նաև մետաղյա մանրադրամը. նոր մետաղադրամի երեսի կողմում ֆարսի լեզվով գրված է «Իրանի Իսլամական Հանրապետություն» և ձեռագրով տրված է դրամի նոմինալը, հակառակ կողմում տրվում է նոմինալը թվով և նշվում է դրամի հատման տարին:

Իրանի պետական բյուջեն քննարկման և հաստատման է ենթարկվում մեջլիսում: Ընդունված պրակտիկայի համաձայն, բյուջետային տարին Իրանում ընդգրկում է ընթացիկ տարվա մարտի 21-ից մինչև հաջորդ տարվա մարտի 20-ը:

Անհրաժեշտ է նշել, որ համաշխարհային վարկային շուկայում ԻԻՀ վիճակը բավականաչափ կայուն է: Ներդրումների համար ֆինանսական ռիսկի ընդհանուր ցուցանիշի առումով «Մուդի ստրիթ Ջորնելի» գնահատմամբ ԻԻՀ-ը աշխարհի 129 երկրների մեջ գրավում է 71-րդ տեղը:

ԻԻՀ ոսկու և տարադրամի ռեզերվները, ներառյալ նաև օտարերկրյա բանկերում նրա ավուրները, բավականաչափ բարձր աստիճանով երաշխավորում են միջազգային տարադրամային վճարումների գծով նրա բանկային ռեզերվային համակարգի հուսալիությունը:

ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Իրանի արտահանության գլխավոր հոդվածը նավթն է: 90-ական թթ. սկզբին նրա արտահանումը կազմեց օրական 2,4 միլիոն բարել: Իրա-

նական նավթի գլխավոր գնորդները Արևմուտքի երկրներն են և Ճապոնիան:

Ոչ նավթային արտահանության ապրանքներից կարևորագույններն են. ձեռագործ գորգեր, պիստակ, մորթիներ, հագուստ, ծովային մթերքներ, հանքային հումք (հանքային խտանյութեր, շինարարական քար), արդյունաբերական ապրանքներ (տրիկոտաժ, կոշիկ, պղնձի մետաղալար), քիմիական ապրանքներ:

Իրանի ներմուծման հիմնական ապրանքներն են. արդյունաբերական սարքավորումներ, արդյունաբերության համար կիսաֆաբրիկատներ, սննդամթերքներ: Չնայած հիմնական սննդամթերքների գծով ինքնաբավության հասնելու Իրանի ռազմավարությանը, 80-90-ական թվականներին ԻԻՀ-ը ստիպված էր արտահանմանից որոշակի քանակով ներմուծել ցորեն, միս, պանիր, կարագ: 1985/86թ. ներմուծման հաշվին ապահովվում էր ցորենի պահանջարկի 96%-ը, գարու՝ 20,8, բրնձի 27,6, եգիպտացորենի՝ 68,5-ը, մսի՝ 22,6-ը, կարագի՝ 40,9-ը, պանրի՝ 93,3-ը, բուսական յուղի՝ 79-ը, շաքարի՝ 54,7%-ը:

Իրանական ներմուծման կարևոր հոդվածներից մեկը, ինչպես և շահական վարչակարգի ժամանակ, մնացել է ռազմական ներմուծումը (ինչպես պատրաստի սպառազինության, այնպես էլ պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների համար ռազմական տեխնոլոգիայի):

Հեղափոխությունից հետո արտաքին առևտրական քաղաքականության այլևայլ մոտեցումների հետ համատեղ, վերանայման ենթարկվեց արտաքին առևտրի կոնցեպտուալ մոտեցումները այն հարցի կապակցությամբ, թե որ երկրներին պետք է տրվի առաջնություն և ում գերակայություն: Արտաքին տնտեսական գործունեության հիմքում դրվեցին հետևյալ սկզբունքները, առաջնությունը տալ մահմեդական և չմիացված երկրների հետ կապերին, և ընդհակառակը, սահմանափակել կապերը «գերպետություններիս» հետ և այլն:

Դրա հետևանքով 80-ական թվականներին ավելացավ զարգացող պետությունների բաժինը Իրանի արտաքին տնտեսական շրջանառության մեջ: Դրան նպաստող կարևորագույն գործոններ հանդիսացան Իրանի տնտեսական դժվարությունները, ԱՄՆ-ի հետ կապերի խզումը, որին հետևեց Իրանի հետ առևտրի բնագավառում արևմուտքի երկրների եմբարգոն: Իրանի տնտեսական շրջափակման այդ քաղաքականությու-

նը ձեռք բերեց տնական բնույթ, մանավանդ որ ԱՄՆ-ը սպառնում էին իրենց դաշնակիցներին, որ նրանց դեմ կկիրառվեն պատժամիջոցներ, եթե նրանք փորձեն տնտեսական-քաղաքական ծավալուն համագործակցության մեջ գտնվել ԻԻՀ հետ: Այսպես, «Դ'Ամատո» օրենքով ամերիկյան պատժամիջոցներին ենթակա են ԻԻՀ հետ տնտեսական հարաբերություններ ունեցող ավելի քան հարյուր երկրներ: ԱՄՆ-ը 1996թ. ընդունեցին մեկ այլ օրենք ևս, ըստ որի, այն ընկերությունները (ոչ ամերիկյան), որոնք ցանկանում են մեկ տարվա ընթացքում 20 միլիոն դոլարից ավել ներդնել ԻԻՀ-ում, կպատժվեն:

Այսպիսով, գործնականում ԻԻՀ արտաքին տնտեսական կապերը արևմտյան աշխարհի հզորագույն պետության՝ ԱՄՆ-ի հետ գործնականում խզված են: Ամերիկյան վերոհիշյալ քաղաքականության հետևանքով զգալիորեն սահմանափակված են նաև ԻԻՀ տնտեսական հարաբերությունները ոչ միայն այսպես կոչված «Յոթնյակի երկրների» հետ, այլև տնտեսապես զարգացած մի շարք եվրոպական երկրների հետ:

Սակայն այդ բոլորով հանդերձ, արևմտյան երկրների մեծ մասը կարողացավ Իրանի շուկայում պահպանել իր դիրքերը, իսկ մի քանիսը նույնիսկ նախահեղափոխական շրջանի համեմատ էլ ավելի ամրապնդեց դրանք (ԳԴՀ, Իտալիան, Ավստրիան, Ավստրալիան, Կանադան, Ֆրանսիան, Նիդերլանդները, Բելգիան, Իսպանիան և այլն):

Իրաքի հետ պատերազմի ավարտից հետո, հատկապես 1990թ. սկսած, իրանական ղեկավարությունը մեծ քանքեր էր գործադրում Արևմուտքի երկրների հետ համագործակցությունը ամրապնդելու ուղղությամբ: Թեհրանը ջանում էր այդ երկրներին ավելի լայնորեն ներգրավել երկրի տնտեսական զարգացման, և մասնավորապես առաջին հերթին նավթի արդյունահանման մեջ: Պատահական չէ, որ այդ երկրների դերը Իրանի արտաքին առևտրի, ինչպես նաև ինվեստիցիոն համագործակցության բնագավառում աննախադեպ կերպով մեծացավ:

ԻԻՀ արտաքին տնտեսական կապերի մեջ առաջատար տեղերից մեկը գրավում է Ճապոնիան: Վերջինս հանդիսանում է իրանական հում նավթի խոշորագույն ներմուծողներից մեկը: Հատկապես մեծ զարգացման է հասել իրանա-ճապոնական համագործակցությունը նավթային և նավթաքիմիական արդյունաբերության, սև մետալուրգիայի, լեռնահանքային արդյունաբերության բնագավառներում: Այդ երկրից Իրանը ներմուծում է գլխավորապես նոր տեխնոլոգիաներ, մեքենայական, տրանս-

պորտային, էներգետիկ սարքավորումներ, պողպատի գլանվածք, մեծ քանակությամբ մոտոցիկլիտներ և այլ ապրանքներ: Ճապոնիան Իրանին հատկացնում է նաև վարկեր:

Արտաքին տնտեսական կապերի բնագավառում ԻԻՀ խոշորագույն գործընկերներից մեկն է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը: Գերմանիայի ձեռքում է կենտրոնացած Իրանի ողջ ներմուծումների 20-ից 25 տոկոսը: Գերմանիայից Իրանը գլխավորապես ներմուծում է մեքենայական և էներգետիկ սարքավորումներ, ավտոմոբիլաշինական արդյունաբերության արտադրանք, գյուղատնտեսական մթերքներ և այլն:

ԻԻՀ-ից Գերմանիան ներմուծում է հում նավթ, ոչ նավթային բազմապիսի ապրանքներ (հատկապես ձեռագործ գորգեր և գյուղատնտեսական ապրանքներ): Գերմանիան իր խոշոր մասնակցությունն է բերում նաև ԻԻՀ-ում արդյունաբերական շինարարությանը, նավահանգիստների կառուցմանը ու նավահանգստային կառույցների ստեղծմանը, երկաթի և քարածխի հանքավայրերի մշակմանը, մի շարք ձեռնարկությունների ավտոմատիզացմանը, շինարարական քարերի ձեռնարկությունների ստեղծմանը և այլն: Հատկապես խոշոր մասշտաբի համագործակցություն գոյություն ունի նավթաքիմիայի բնագավառում: ԻԻՀ-ը Գերմանիայի հետ լայնորեն համագործակցում է նաև ավտոմոբիլաշինության, ջերմաէլեկտրակայանների շինարարության և այլ բնագավառներում:

Հաջողությամբ զարգանում են նաև առևտրատնտեսական հարաբերությունները ԻԻՀ և Իտալիայի միջև: Վերջինս հանդիսանում է ԻԻՀ խոշորագույն առևտրատնտեսական գործընկերներից մեկը: Տարեցտարի ավելանում է իտալական արտահանումը Իրան: Հարկ է նշել, որ Իտալիան իր ձեռքում է պահում Իրանում ժողովրդատնտեսական օբյեկտների շինարարության գծով կոմպլեքսային սարքավորումների բոլոր մատակարարումների 10 տոկոսից ավելին:

ԻԻՀ-ը Իտալիայից գլխավորապես ներմուծում է մեքենայական, էներգետիկ, մետաղամշակման, ավտոտրանսպորտային միջոցների և արդյունաբերական այլ սարքավորումներ:

Իտալիան ԻԻՀ-ից ներմուծում է նաև նավթ, տեքստիլ արտադրանք, պիստակ և այլ ընկուզեղեն, չոր մրգեր և այլ ապրանքներ: Իտալիան իր խոշոր մասնակցությունն է բերում իրանական նոր նավահանգիստների

կառուցման և հների արդիականացման գործում: Հռոմը վարկեր ու նորագույն տեխնոլոգիա է տրամադրում ԻԻՀ-ը արդյունաբերության արդիականացման, սև մետալուրգիայի զարգացման համար: Երկու երկրները լայնորեն համագործակցում են նաև Իրանում ժամանակակից նավթաքիմիական համալիրներ կառուցելու գործում (օրինակ Արաք և Բանդար իմամ Խոմեյնի քաղաքներում), տրակտորաշինության, տեքստիլ գործարաններ կառուցելու գործում: Իտալիան լայն մասնակցություն է բերում նաև Իրանում գազի նոր հանքավայրերի հետախուզման, նրանց հորատման, գազի հանույթի, մաքրման, տեղափոխման աշխատանքներում: Այդ երկիրը ԻԻՀ հետ համագործակցում է նաև ջերմային ու հիդրավլիկ էլեկտրակայանների կառուցման, ցեմենտի, շաքարի գործարանների շինարարության բնագավառներում: Իրանը Իտալիայից ներմուծում է նաև մեծ քանակությամբ բեռնատար ավտոմոբիլներ:

Արդյունաբերական առումով զարգացած երկրներից, որպես Իրանի աջակցող գործընկեր, առանձնանում է նաև Ֆրանսիան: Վերջինս նույնպես հանդիսանում է իրանական հում նավթի խոշոր գնորդներից մեկը: Ֆրանսիան Իրան է արտահանում մեքենայական և այլ տարբերումներ, սննդամթերքներ (հիմնականում միս, եգիպտացորեն և այլ մթերքներ), ավտոմոբիլներ, մոտոցիկլետներ, հեծանիվներ, քիմիական նյութեր, մետաղներ և քիմիական արդյունաբերության արտադրանք, լայն սպառման ապրանքներ: Ֆրանսիական «Տոտալ» ընկերությունը Իրանի հետ պայմանագիր է կնքել Դարսից ծոցում նավթի երկու հանքավայրերի համատեղ շահագործման համար: Ֆրանսիան մասնակցում է Ֆարսի նահանգում գազազտման գործարանի կառուցման տարբերումների մատակարարման, Հորմոզգան, Խորասան և Խուզեստան նահանգներում ցեմենտի գործարանների կառուցման, նավթաքիմիական համալիրների շինարարությանը:

Վերջին տարիներս ԻԻՀ առևտրական կապերը Մեծ Բրիտանիայի հետ ապրում է հետևողական վայրէջք: Մասնավորապես Անգլիան կտրուկ կրճատել է հում նավթի ներմուծումը Իրանից: Իրանա-բրիտանական առևտրատնտեսական համագործակցությունը կաշկանդող ամենակարևորագույն պատճառը քաղաքական է: ԱՄՆ-ը ըստ էության արգելում են Արևմուտքից ստրատեգիական ապրանքների և հատուկ ապրանքների մատակարարումները Իրան:

Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ը ոչ միայն իրենք են վարում ԻԻՀ նկատմամբ տնտեսական շրջափակման քաղաքականություն, այլև մյուս երկրներին ևս պարտադրում են վարել նման քաղաքական գիծ:

ԻԻՀ-ը առևտրատնտեսական հարաբերություններ ունի նաև Արևմուտքի մի շարք այլ զարգացած երկրների (Բելգիա, Հոլանդիա, Իտալիա, Շվեդիա, Շվեյցարիա) ինչպես նաև Արևելյան Եվրոպայի երկրների (Լեհաստան, Ռումինիա, Չեխիա, Սլովակիա, Հարավսլավիա, Հունգարիա, Բուլգարիա), Ասիայի, հարավ-արևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի երկրների (Չինաստան, Հարավային Կորեա, Հնդկաստան, Պակիստան, Թաիլանդ, Մալայզիա և այլն), Հարավային Ամերիկայի (Բրազիլիա, Արգենտինա), Աֆրիկյան մայր ցամաքի պետությունների և բնականաբար Թուրքիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների և արաբական այլ երկրների հետ:

ԻԻՀ և Ռուսաստանի դաշնության տնտեսական հարաբերությունները 90-ական թվականներին զարգանում էին վերընթաց գծով: 1997թ. տվյալներով երկու երկրների ապրանքաշրջանառության ծավալը կազմում էր տարեկան 450 միլիոն դոլար: Ռուսաստանի տարողունակ շուկան կատարելապես բաց է իրանական ապրանքների համար: Թեհրանը ծրագրել է առաջիկայում Ռուսաստան արտահանվող ապրանքների գումարային արժեքը հասցնել տարեկան մինչև 1 միլիարդ դոլարի: Երկու երկրների միջև կատարվում են քայլեր արդյունաբերության մի շարք բնագավառներում ինտեգրացման ուղղությամբ: Ստեղծվել են իրանա-ռուսական մի շարք համատեղ ձեռնարկություններ: Մոտավորապես 60 իրանական տնտեսական ծրագրերից շուրջ 20-ը իրագործվում է Ռուսաստանի օգնությամբ: Դրանց թվում են Բուշեհր քաղաքում 800 միլիոն դոլար արժողությամբ և 1000 մեգավատ հզորությամբ տարածաշրջանի խոշորագույն ատոմային էլեկտրակայանի կառուցումը, ԽՍՀՄ օգնությամբ կառուցված Սպահանի մետալուրգիական կոմբինատի վերակառուցումն ու արդիականացումը և այլն:

Երկու երկրների միջև կանոնավոր կերպով իրագործվում են ծովային առևտրական կապեր Կասպից ծովով, Վոլգայով մինչև Բալթիկ ծով: Զարգանում է նաև իրանա-ռուսական ռազմաարդյունաբերական համագործակցությունը: ԻԻՀ-ը Ռուսաստանից ձեռք է բերում զենք և ռազմական տեխնիկա, ինչպես նաև զանազան տեխնոլոգիաներ: 1997թ. Ռուսաստանի և Իրանի միջև ստորագրվեց 145 միլիոն դոլարի արժողութ-

յամբ պայմանագիր՝ ռուսական ինքնաթիռների շարժիչների համատեղ արտադրության վերաբերյալ: Ստորագրվել է նաև ռուս-իրանական մի համաձայնագիր, որով ռուսական կողմը հանձն է առել Օմանի ծոցի Չաբահարի ազատ տնտեսական գոտում կառուցել մի նավթազտարան և նավթաքիմիական խոշոր գործարան: Ռուսաստանը նաև պատրաստակամություն է հայտնել համագործակցել հիշյալ գոտու երկաթուղագծի և նավթի ու գազի կոմունիկացիաների կառուցման գործում: Այսպիսով Ռուսաստանը առաջին անգամ ներդրումներ է կատարում Իրանի «ազատ տնտեսական գոտիներում»:

Զարգանում է նաև Իրան-Միջինասիական անկախ հանրապետություններ տնտեսական համագործակցությունը: Միջին Ասիայի նկատմամբ ԻԻՀ հետաքրքրության գլխավոր շարժառիթները բազմապիսի են. Իրանին հետաքրքրում է ավելի քան 4 միլիոն քառ.կմ. տարածք ունեցող Միջին Ասիայի վիթխարի էներգետիկ ու հանքային հարստությունները, գյուղատնտեսական ապրանքների, մասնավորապես բամբակի և ցորենի արտադրության հսկայական հնարավորությունները, երկրամասում առկա արդյունաբերության հզոր պոտենցիալը՝ ճյուղավորված ենթակառուցվածքներով հանդերձ, իրանական ապրանքների համար տարողունակ շուկան և այլն:

Իրանական կառավարությունը կարևոր նշանակություն է տալիս Միջին Ասիան Իրանի հետ կապող տրանսպորտային ճյուղավորված ինֆրաստրուկտուրա ստեղծելու հարցին: Միջին Ասիայի հանրապետությունները իրանական տրանսպորտային ցանցի մեջ ընդգրկելը հնարավորություն կտա ավելի մեծացնել Իրանի առանցքային աշխարհագրական դիրքի դերը որպես կապող օղակի Միջին Ասիայի և Պարսից ծոցի միջև: 1996թ. շահագործման հանձնված Մեշհեդ-Սարախս-Թաջան երկաթուղագիծը հենց հանդիսանում է այդ ծրագրի բաղկացուցիչ մասը: Թեհրանը ենթադրում է, որ Իրան-Միջին Ասիա տրանսպորտային կապը կնպաստի Իրանի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև տնտեսական համագործակցության հումքու թափով զարգացմանը: Թեհրանը հետևողականորեն առաջ է մղում նաև այն գաղափարը, որ Միջին Ասիայի էներգետիկ ռեսուրսները համաշխարհային շուկա հանելու ամենակարճ ու արդյունավետ ճանապարհը անցնում է Իրանի տարածքով մինչև Պարսից ծոց: Վերջապես ԻԻՀ երազում է նաև դառնալ պատմական «մետաքսի ճանապարհի» վերականգնման նախաձեռնողն ու կազմակերպիչը:

Իրանա-թուրքմենական առևտրատնտեսական հարաբերությունները զարգանում են բարձր տեմպերով: 90-ական թվականների երկրորդ կեսին այդ երկրների միջև առևտրատնտեսական փոխանակումների ծավալը հասարակ կրկնապատկվել է: Երկու երկրները իրականացնում են մի շարք համատեղ ծրագրեր նավթի, գազի և գյուղատնտեսության, հատկապես բամբակի ցանքատարածությունների ընդլայնման ու ինտենսիֆիկացման բնագավառում: 1997թ. տվյալներով Թուրքմենստանի հանրապետությունում Իրանի ներդրումները կազմում էին մոտավորապես 250 միլիոն դոլար: Ներդրումների ստրատեգիան հիմնականում նպատակաուղղված է Թուրքմենստանում ինֆրաստրուկտուրային ուղղությունների զարգացմանը: Բացի այդ, իրանական ներդրումների հաշվին Թուրքմենստանը Իրանից ներմուծում է նավթի և գազի արդյունաբերության տեխնոլոգիաներ, զանազան սարքավորումներ և այլն: Երկու երկրները հետևողականորեն զարգացնում են միմյանց հետ կապող տրանսպորտային կոմունիկացիաները:

ԻԻՀ և Թուրքմենստանի միջև կնքվել են մոտ 110 պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնցից սակայն ոչ բոլորն են գործող:

Թուրքմենստան-Թուրքիա հարաբերությունների բնագավառում վերջին տարիներս տեղի ունեցած աննախընթաց վերելքը, Թուրքիայի կողմից Միջին Ասիայի թյուրքալեզու հանրապետություններում և մասնավորապես Թուրքմենստանում կատարվող խոշոր ներդրումները և այլն, Իրանին նպատակաուղղեցին եռակողմ համագործակցության հիմքի վրա համագործակցել Թուրքիայի հետ: Այսպես, 1997թ. մայիսին կողմերի միջև ստորագրվեց եռակողմ տնտեսական համագործակցության պայմանագիր, որն իր մեջ ներառում է նաև Թուրքմենստան-Իրան-Թուրքիա գազատարի շինարարության նախագիծը:

Ղազախստանի հանրապետության համար Իրանի հետ հարաբերություններում գլխավոր խնդիրը իրանական նավահանգիստների միջոցով Պարսից ծոց ելքի ապահովումն է: Ներկայումս Իրան-Ղազախստան հարաբերությունները, երկու կողմերի գնահատմամբ, ունեն զարգացման մեծ ներուժ: Երկու երկրների միջև ստորագրվել են հարյուրից ավել համաձայնագրեր բեռների տարանցիկ տեղափոխման, տրանսպորտի, կապի, առևտրի, արդյունաբերության, շինարարության, գիտության, մշակույթի, զբոսաշրջիկության, բանկային գործի, գյուղատնտեսության և այլ բնագավառներում համագործակցության վերաբերյալ:

1996թ. Ղազախստան-Իրան առևտրաֆինանսական ծավալը կազմել է 65 միլիոն ամերիկյան դոլար, իսկ 1997թ. կազմեց 100 միլիոն դոլար:

1996 թ. ԽՀՀ-ը և Ղազախստանը ստորագրեցին պայմանագիր Իրանի տարածքով ղազախական նավթը համաշխարհային շուկա փոխադրելու վերաբերյալ: 1997թ. հունվարից այդ պայմանագիրը մտավ ուժի մեջ: Ղազախստանը հիշյալ պայմանագրի համաձայն, տարեկան 2 միլիոն տոննն հում նավթ է հանձնելու Իրանին Կասպից ծովի իրանական նավահանգիստներում և փոխարենը Իրանից Պարսից ծոցում տանալու է համապատասխան քանակությամբ գտված նավթ՝ համաշխարհային շուկայում այն վաճառքի հանելու համար:

Մշակվել է նաև Ղազախստան-Թուրքմենստան-Իրան նավթամուղի շինարարության նախագիծ, որն արժանացել է ԷԿՕ-ի անդամ պետությունների հավանությանը: Միջազգային փորձագետների հաշվարկներով, Կասպից ծովի միայն ղազախական սեկտորից նավթի հանույթը հաջորդ դարի առաջին տասնամյակի վերջում կհասնի 100 միլիոն տոննի: Ղազախստանի մասնագետների հաշվումներով, այդ թիվը հավասար կլինի 150-200 միլիոն տոննի: Հետևաբար Իրան-Ղազախստան նավթային համագործակցությունը երկու երկրների միջև երկարաժամկետ համագործակցության մի գործոնը է:

Ղազախստանի և Իրանի միջև գոյություն ունի նաև համագործակցություն ռազմական բնագավառում: Ղազախստանը Իրանին վաճառում է խորհրդային արտադրության ռազմական տեխնիկա, սպառազինությունների արտադրության գծով խորհրդային տեխնոլոգիա և այդ բնագավառի գիտելիքներ:

Միջին Ասիայի նորանկախ հանրապետություններից Իրանը առավել սառը հարաբերություններ ունի Ուզբեկստանի հետ, որի պատճառները գլխավորապես քաղաքական են: Ուզբեկստանի ղեկավարությունը բացարձակապես չի ընդունում իրանական նմուշի իսլամական պետության տեսակը՝ առավելություն տալով թուրքական աշխարհիկ նմուշաձևին: Ըստ այնմ, Ուզբեկստանում գնալով ուժեղանում ու թափ է առնում թուրքական ազդեցությունը և ընդհակառակն, սահմանափակվում Իրանի տնտեսական, քաղաքական, մշակութային ու գաղափարական ազդեցության դաշտը:

Սակայն այդ բոլորով հանդերձ, երկու երկրների միջև առևտրական ու տնտեսական հարաբերությունները շարունակվում են: Վերջին մի քանի

տարիների ընթացքում Իրանի և Ուզբեկստանի միջև ստորագրվել են մեկ ու կես տասնյակի հասնող տնտեսական համագործակցության վերաբերյալ պայմանագրեր, որոնց զգալի մասը չի գործում, կամ գործում է ոչ լրիվ ծավալով: Այդ երկու երկրների միջև առևտրական հարաբերությունների դինամիկայի միջև տեղաշարժը ուղղակի չնչին է: Այսպես, 1995թ. երկու երկրների միջև առևտրափոխանակության ծավալը կազմել էր ընդամենը 4,5 միլիոն դոլար: Երկու տարի անց, 1997թ. այն չկարողացավ անցնել նույնիսկ տարեկան 10 միլիոնի սահմանագիծը:

Պետք է խոստովանել սակայն, որ միջինասիական մյուս հանրապետությունների նման Ուզբեկստանը ևս հետաքրքրություն է դրսևորում Իրանի տարածքով իր էներգակիրները Պարսից ծոց արտահանելու հարցի վերաբերյալ, սակայն այդ ուղին դիտարկելով ոչ հիմնական, այլ այլընտրանքային:

Ակնհայտ չէ հիշատակել նաև, որ թեև 1995թ. Ուզբեկստանի, Թուրքմենստանի ու Իրանի միջև ստորագրվել է մի պայմանագիր այդ երեք երկրները իրար հետ միացնող մի երկաթուղու շինարարության մասին (Թաջան-Թերաք-Մեշհեդ գծով), սակայն Ուզբեկստանի կողմից որդեգրած քաղաքական դիրքորոշումները ԻԻՀ-ն հանդեպ, կասկածի տակ է դնում տեսանելի ապագայի շրջանում այդ երկաթուղագծի գործնական իրականացման հարցը:

Ներկայումս Իրանը փորձում է Անկարայի կողմից առաջ քաշվող Միջին Ասիայի թյուրքալեզու ժողովուրդների տնտեսական ու քաղաքական ինտեգրացման ծրագրերին հակադրել պարսկալեզու պետությունների համագործակցության գաղափարը, որը թեև առայժմ չի ստացել կազմակերպչական ձև ու մարմին, սակայն դրանով հանդերձ Թեհրանը լուրջ կարևորություն է տալիս դրան: Այդ առումով Իրան-Տաջիկստան հարաբերությունների զարգացմանը տրվում է մեծ նշանակություն: Սակայն Տաջիկստանում քաղաքացիական տնական պատերազմը և դրա հետևանքով երկրի տնտեսական քայքայումը լուրջ խոչընդոտ է հանդիսանում դրան: ԻԻՀ և Տաջիկստանի միջև ստորագրված մեկ տասնյակից ավել համաձայնագրերը համարյա չեն գործում, կամ գործում են մասնակիորեն, առանց շոշափելի արդյունքների: Առավել արդյունավետ է Իրանի կողմից Տաջիկստանին հատկացվող մարդասիրական օգնությունը:

ԻԻՀ և Ղրղզստանի միջև փոխանակվեցին դիվանագիտական ներկայացուցչություններ՝ դեսպանների մակարդակով 1996թ.: Դրանից հե-

տո ընկած կարճ ժամանակամիջոցի ընթացքում այդ երկու երկրների միջև հարաբերությունները ակնառու վերելք ապրեցին: Կողմերի միջև ստորագրվեցին մոտ երեք տասնյակ առևտրական-տնտեսական պայմանագրեր, որոնց մեծ մասը գործող է:

Իրանը Ղրղզստանից հիմնականում ներմուծում է սիլիցիում, մետաղներ և ղրղզական ավանդական արտադրության ապրանքներ: Իր հերթին Իրանը այդ երկիրն է արտահանում սննդամթերքներ, թեթև արդյունաբերության ապրանքներ և այլն: Ղրղզստանը ակնկալում է, որ Իրանը կօգնի իրեն ընդերքի հետազոտության, նավթի և գազի շահագործման, էլեկտրաէներգիայի արտադրության, տեխնիկական և արդյունաբերական կառավարման գծով կադրեր պատրաստելու, տրակտորաշինության և արդյունաբերական արտադրության մի շարք այլ բնագավառներում:

Իրան-Ադրբեջանի հանրապետություն հարաբերությունները, որպես սահմանակից պետություններ, սկզբնական էտապում ապրում էին բուռն զարգացում: Սակայն երբ Թեհրանի համար պարզ դարձավ, որ «աշխարհի երկրորդ շիիթական պետությունը»՝ Ադրբեջանը, քաղաքական կողմնորոշման ընտրության նախապատվությունը տալիս է թուրքական լայիք նմուշաձևին, այդ հարաբերությունները սկսեցին վայրէջք ապրել: Ընդորում Ադրբեջանի սահմանադրության մեջ լայիք-սեկուլյարիստական համակարգի սկզբունքների որդեգրումը Թեհրանում ոչ անհիմն կերպով ընկալվեց որպես Թուրքիայի հետ տնտեսական ու քաղաքական ինտեգրացման ձգտում, որը ԻԻՀ մեկնաբանությամբ ուղղված է տարածաշրջանում Իրանի ռազմավարական շահերի դեմ:

Իրանա-ադրբեջանական հարաբերությունների մեջ որոշակի բարդություն է մտցնում նաև Կասպից ծովի իրավական կարգավիճակի լուծված չլինելը:

Սակայն չնայած այդ բոլորին, իրանա-ադրբեջանական տնտեսական հարաբերությունները բավականին ծավալուն բնույթ են կրում: 1996թ. մարտին Իրանը միացավ Ադրբեջանի «Շահ Դենիզ» կոչված նավթաբեր շրջանը շահագործելու նպատակով կազմված արտասահմանյան երկրների կոնսորցիումին: 1997թ. մայիսին ԻԻՀ և Ադրբեջանի միջև ստորագրվեց նավթային մի նոր պայմանագիր, ըստ որի Ադրբեջանի «Սուբար» նավթային ընկերությունը «Դենիզ Լենքորան» և «Թալիշ Դենիզ» նավթային շրջանների նավթի արդյունաբերական հանույթի բաժնետոմսերի 10%-ը տրամադրում էր Իրանին:

ԻԻՀ-ը դեռևս հույսը չի կորել այն բան ից, որ երբևիցէ թե՛ Ադրբեջանում և թե՛ Արևմուտքում կգան այն համոզման, որ կասպիական նավթը համաշխարհային շուկա հանելու լավագույն ուղին Իրանի տարածքով անցնող ճանապարհն է:

Իրանա-ադրբեջանական առևտրի ծավալները, ԱՊՀ մյուս երկրների համեմատությամբ, չափազանց մեծ են: Ըստ իրանական վիճակագրության, 1997թ. Իրանի և Ադրբեջանի միջև ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը գումարային առումով կազմել է 500 միլիոն ամերիկյան դոլար: Իրանը Ադրբեջանից գնում է մեծ քանակությամբ դիզելային վառելիք: Այդ նույն թվականի տվյալներով, Ադրբեջանում առևտրատնտեսական գործունեություն էին ծավալել 221 իրանական ընկերություններ, իսկ իրանա-ադրբեջանական համատեղ ձեռնարկությունների թիվը անցել էր 300-ից: Երկու երկրների միջև ձևավորվում է տրանսպորտային ինֆրաստրուկտուրա: Մասնավորապես քայլեր են կատարվում ԻԻՀ և Ադրբեջանի երկաթուղագծերի ու ավտոմոբիլային ճանապարհների միացման ուղղությամբ, որի նախագիծը հաստատման ենթարկվեց 1997թ. Աշգաբատում տեղի ունեցած ԷԿՕ-ի հերթական նիստի ժամանակ: Ենթադրվում է, որ երկու երկրների երկաթգծերի միացման աշխատանքները իրենց ավարտին կհասնեն մինչև 2000 թվականը: Դրանով Ադրբեջանը իր համար կապահովի երկաթուղային ելք դեպի բաց ջրեր՝ Պարսից ծոց և Օմանի ծով:

1997թ. Բաքվում ԻԻՀ և Ադրբեջանի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, ըստ որի Իրանը Ասթարայի շրջանում վերանորոգելու և արդիականացնելու էր երկու երկրները իրար միացնող ավտոմոբիլային ճանապարհները:

Կասպից ծովի համագործակցության երկրների կազմակերպության անդամ պետությունների հետ առևտրատնտեսական հարաբերություններ իրականացնելիս, Ադրբեջանը արտոնյալ պայմաններով է օգտվում Կասպից ծովի էնգելի և Նոուշահր նավահանգիստներից, ինչպես նաև առհասարակ Իրանի բոլոր ճանապարհներից ու հաղորդակցության միջոցներից:

Կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել գործարկելու Ամիրաբադ (Իրան)-Բաքու լաստանավային հաղորդակցությունը: Այն բանից հետո, երբ Կասպից ծովի իրանական ափին կավարտվի Ամիրաբադ նավահանգստի կառուցումը, Ադրբեջանը, օգտագործելով լաստանա-

վային կապը, առնվազն 1000 կիլոմետրով կկրճատի Բաքու-Թուրքիա, Բաքու-Պարսից ծոց, Բաքու-Նախիջևան երթուղին:

«Ազարբայջան հավայուլլարի» և իրանական «Քասպիան էյրլայնզ» օդային ընկերությունները իրականացնում են օդային չվերթներ Թեհրան-Բաքու, Բաքու-Թեհրան, Թավրիզ-Նախիջևան երթուղիներով: Ադրբեջանը հետևողականորեն աշխատում է համոզել Իրանին, որպեսզի վերջինս օգնի իրեն արդյունաբերական, մասնավորապես նավթարդյունաբերության տեխնոլոգիայի արդիականացման համար:

Իրանա-ադրբեջանական առևտրական հարաբերությունների համար դյուրություններ ստեղծելու նպատակով, Բաքվում գործում է «Իրան-Ադրբեջան առևտրական պալատը»:

ԻԻՀ-ը լայնամասշտաբ առևտրատնտեսական ծրագրեր է իրագործում Նախիջևանի հետ: 1997թ. կողմերի միջև ստորագրված փոխըմբռնման համաձայնագրի համաձայն, Իրանը պարտավորվում է Նախիջևան քաղաքում բաց անել իրանական որևէ բանկի բաժանմունք, կառուցել երկաթուղագծերի առանձին հատվածներ այն հաշվով, որ Նախիջևանը երկաթուղային հաղորդակցությամբ կապվի Իրանի Խորասանի նահանգի կենտրոն Մեշհեդ քաղաքի հետ, կազմակերպել Իրանի տարածքի վրայով Նախիջևանը Բաքվի հետ կապող ավտոբուսային երթևեկություն, Արաքս գետի վրա կառուցել համատեղ «Օրդուբադ» և «Խուդաֆարին» անվանումներով հիդրոհանգույցներ, ինչպես նաև Փոլդաշտշահ թախթի կոչված սահմանային շրջանում կառուցել մշտական կամուրջ:

Փոխըմբռնման համաձայնագիրը կետեր է պարունակում նաև Իրանի և Նախիջևանի միջև կապի ու առևտրական հարաբերությունների զարգացման, ներդրումների խրախուսման վերաբերյալ և այլն: Կողմերի միջև առանձին համաձայնագրեր են կնքված Իրանի կողմից Նախիջևանում ցեմենտի գործարան և Խոյ-Նախիջևան գազատար կառուցելու, Նախիջևան քաղաքում առևտրական խոշոր կենտրոն բացելու, սահմանամերձ առևտուր իրագործելու համար սահմանային շուկա կազմակերպելու, վերջապես Բաքու-Իրան-Նախիջևան երկաթուղագիծ կառուցելու նախագծին Իրանի կողմից մասնակցություն բերելու վերաբերյալ և այլն:

Անտարակույս վերոհիշյալ խոշորամասշտաբ ծրագրերի իրագործումը ապագայի խնդիր է: Այն մեծապես կախված է նաև Իրան-Ադրբեջան քաղաքական հարաբերությունների զարգացման հետագա միտումներից:

Իրան-Վրաստանի հանրապետություն առևտրատնտեսական հարաբերությունները գտնվում են չնչին մակարդակի վրա: Իրանական ապրանքների մուտքը Վրաստան տեղի է ունենում անշնչան չափերով, իսկ Վրաստանից ապրանքների արտահանում Իրան գործնականում գոյություն չունի: Երկու երկրների միջև ստորագրված համաձայնագրերը առևտրի, արդյունաբերության ու էներգետիկայի բնագավառում համագործակցության վերաբերյալ համարյա չեն գործում:

Թեև իրանական «Քասպիան էյրլայնզ» մասնավոր ավիաընկերությունը 1995թ. սկսած շաբաթը մեկ անգամ իրականացնում է Թեհրան-Թբիլիսի-Թեհրան օդային չվերթ, սակայն ուղևորների պակասի պատճառով ի սկզբանե նրա վրա կախված էր փակվելու սպառնալիքը:

Այս բոլորը վկայում է այն մասին, որ Վրաստանը գերադասում է տնտեսական-քաղաքական հարաբերություններ ունենալ իր սահմանակից Թուրքիայի հետ:

Մնարակույս Վրաստանի հետ հարաբերությունների զարգացման հարցում առավել մեծ շահագրգռվածություն է դրսևորում Իրանը: Վերջինս ձգտում է Հայաստանի և Վրաստանի վրայով դուրս գալ Սև ծով և Բաթում ու Փոթի նավահանգիստներով կանոնավոր հաղորդակցություն հաստատել Ռուսաստանի, Ուկրաինայի, Բուլղարիայի, Ռումինիայի և առհասարակ արևելյան և արևմտյան եվրոպայի երկրների հետ: Սակայն պետք է խոստովանել, որ մինչև օրս Իրանի այդ ձգտումը չի արդյունավորվել կոնկրետ ձեռքբերումներով:

Այդ բոլորով հանդերձ, Վրաստանը շարունակում է Իրանի հետ հարաբերություններում պահպանել «պատշաճ տոն»: Մասնավորապես վրացական կողմը աշխատում է շեշտը դնել մշակութային համագործակցության վրա: Ժամանակ առ ժամանակ Իրան են ժամանում վրացական մշակութային պատվիրակություններ: Երբեմն Թեհրան են ժամանում նաև տնտեսական-քաղաքական պատվիրակություններ, որոնք որպես կանոն ստորագրում են «մտադրությունների» վերաբերյալ զանազան համաձայնագրեր, որոնք սակայն զուրկ են իրագործման հավանականությունից:

1991թ. Հայաստանի անկախության ձեռք բերումից հետո Հայաստան- Իրան քաղաքական հարաբերությունների բուռն զարգացման հետ զուգընթաց, վերընթաց կերպով սկսեցին զարգանալ նաև այդ երկու հարևան ու բարեկամ պետությունների առևտրական-տնտեսական հարաբերությունները (այդ մասին տե՛ս ստորև):

Վերջին տարիներս իրանա-թուրքական հարաբերությունները կրում են «փուլային» բնույթ, այսինքն մշտապես վայրէջքին փոխարինելու է գալիս վերելքը և հակառակը: Անտարակույս այդ երկու հարևան ու սահմանակից պետությունները իրենց յուրահատուկ պրոբլեմների հետ միաժամանակ, ունեն ընդհանուր տնտեսական ու քաղաքական շահեր: Այդ երկու երկրներն էլ Իսլամական կոնֆերանս, ԷԿՕ և այլ տարածաշրջանային ու միջազգային կազմակերպություններում սերտորեն համագործակցում են միմյանց հետ: Նրանց երկուսին էլ ոգևորում է «Մեսոաքսի մեծ ճանապարհի» վերականգնման գաղափարը, երկուսն էլ շահագրգռված են երկկողմ համագործակցությունը խթանելու հարցերում և այլն: Թուրքիան ներկայումս Իրանից գնում է էլեկտրաէներգիա: 1995թ. երկու երկրների միջև ստորագրվեց 23 միլիարդ դոլար արժողությամբ մի պայմանագիր, ըստ որի 1999 թվականից սկսած 23 տարի շարունակ Իրանը բնական գազ է մատակարարելու Թուրքիային: Պայմանագրի ստորագրումից հետո սկսվեց Իրան-Թուրքիա գազամուղի շինարարությունը: 1996թ. կողմերի միջև ստորագրվեց մի նոր պայմանագիր, որով Իրանը պարտավորվել է 600 միլիոն դոլար արժողությամբ նավթ վաճառել Թուրքիային:

Կարևոր է նշել, որ Թուրքիան երազում է դառնալ տարածաշրջանի էներգակիրների հիմնական պահեստարան ու բաշխիչ կայան: Միանգամայն հասկանալի է, որ առանց Իրանի մասնակցության, այդ ծրագիրը չի կարող ունենալ իրականացման լրիվ հնարավորություն: Այս կոնտեքստում հաջորդ հարյուրամյակում Իրանի հետ սերտ տնտեսական հարաբերությունները Թուրքիայի համար դառնում է հրամայական պահանջ:

Անկասկած Իրանը ևս, իր հերթին, կենսականորեն շահագրգռված է ոչ միայն իր սեփական էներգակիրները վաճառելու, այլև դառնալու կապիտալ ու միջինասիական նավթի ու գազի տարանցիկ արտահանման օղակ:

Թուրքիան և Իրանը երկուստեք կենսականորեն շահագրգռված են միմյանց հետ ընդարձակելու օդային ու ցամաքային հաղորդակցությունը, միացնելու իրենց ավտոմայրուղիներն ու երկաթուղիները: Իրանի համար հատկապես չափազանց կարևոր է Վանա լճի երկայնքով կառուցվող երկաթուղին, որի շահագործման հանձնումը հուժկու զարկ կտա տարանցիկ բեռների փոխադրմանը Թուրքիայից Իրան: Իսկ դա իր հերթին կակտիվացնի ոչ միայն Մեշհեդ-Մարախս-Թաքան երկաթու-

դագծի գործունեությունը, այլև Միջերկրական ծովի Ալեքսանդրեթ (Իսկենդերուն) թուրքական նավահանգստից մինչև Կենտրոնական Ասիա տանող տրանսպորտային կոմունիկացիաները:

Զարգացման ակներև միտումներ են նշմարվում նաև Իրանի և արաբական մի շարք երկրների միջև: Տարիների սառը հարաբերություններից հետո, Իրաքի հետ տեղի է ունենում տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի վերականգնման գործընթաց: Նրանց միջև գնալով մեծանում են ապրանքափոխանակության ծավալները: Նախկինի պես վերընթաց զարգացում են ապրում Իրան-Սիրիա հարաբերությունները: Գնալով ընդլայնվում ու ծավալվում են ԻԻՀ առևտրատնտեսական հարաբերությունները ծոցի երկրների՝ Արաբական Միացյալ Էմիրությունների, Քուվեյթի, վերջերս նաև Սաուդյան Արաբիայի հետ:

ԻԻՀ և Հնդկաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունները տարեցտարի նոր թափ են ստանում: Իրանը Հնդկաստան է արտահանում էներգակիրներ (նավթ և գազ), ինչպես նաև մեծ քանակությամբ ոչ նավթային ապրանքներ: Նախագծեր կան Իրան-Հնդկաստան գազատար կառուցելու, ինչպես նաև Իրանի տարածքով միջինասիական հանրապետություններից էներգակիրներ Հնդկաստան տեղափոխելու վերաբերյալ: Երկու երկրներն էլ մեծ շահագրգռվածություն են դրսևորում երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհներով միմյանց կապվելու համար:

Հնդկաստանը բավականին խոշոր ներդրումներ է կատարել (և շարունակում է կատարել) Պարսից ծոցի Ղեշմ կղզու և Օմանի ծովի Չաբահարի ազատ տնտեսական գոտիներում:

Հնդկաստանը ԻԻՀ համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև նորագույն տեխնոլոգիաներ ներմուծելու հարցում: Մահասարակ Իրանը մեծ համարում ունի Հնդկաստանի նվաճումների նկատմամբ գիտության ու տեխնիկայի ամենատարբեր բնագավառներում, ուստի եռանդուն կերպով այնտեղից ներմուծում է նաև հիմնարար նշանակություն ունեցող գիտական նորույթներ:

ԻԻՀ-ը կարևորագույն նշանակություն է տալիս Չինական ժողովրդական Հանրապետության հետ տնտեսական կապերի զարգացմանը: 1996թ. այդ երկու երկրների միջև առևտրատնտեսական փոխանակումների ծավալը կազմել էր 700 միլիոն դոլար: 1997թ. այն աճեց և հասավ մեկ միլիարդ դոլարի մակարդակին: Կողմերը քայլեր են ձեռնարկում

մոտ ապագայում ապրանքափոխանակության ծավալները հասցնելու տարեկան մինչև 2 միլիարդ դոլարի:

1997թ. կողմերի միջև ստորագրվեց համագործակցության վերաբերյալ ավելի քան 60 փաստաթուղթ: Դրանք ընդգրկում են ամենատարբեր բնագավառներ, այդ թվում էներգետիկայի, նավթի, տրանսպորտային փոխադրումների, գյուղատնտեսության, Թեհրանում մետրոպոլիտենի շինարարության և այլն: Այդ փաստաթղթերի փաթեթում առկա են նաև համաձայնագրեր ռազմատեխնիկական համագործակցության մասին:

Չինաստանի օգնությամբ ԻԻՀ-ում իրականացվում են մի շարք խոշոր նախագծեր. Թեհրանի մետրոն, հիդրո և ջերմային էլեկտրակայաններ, ցեմենտի խոշոր գործարաններ, ապակու արտադրության գործարան, Բաֆդ քաղաքի ցինկի ձուլման գործարանը, Խաթունաբադի պղնձի ձուլարանը և այլն: Չինաստանը առանձնակի հետաքրքրություն է դրսևորում Իրանի լեռնահանքային արդյունաբերության նկատմամբ: Արևելյան Ատրպատականի «Մունգունի ահարդ» պղնձահանքերի շահագործման համար Իրանն ու Չինաստանը կատարել են 350 միլիոն դոլարի հասնող կապիտալ ներդրում: 1997թ. տվյալներով Չինաստանի ներդրումների ծավալը իրանական նախագծերի մեջ կազմում էր մոտ 1,36 միլիարդ դոլար:

ՉԺՀ-ը Իրանից ներմուծում է մեծ քանակությամբ նավթ և նավթամթերքներ, մետաղի խտանյութ, երկաթ, ավտոմոբիլներ, ավտոբուսներ, ինչպես նաև իրանական արտադրության ավանդական ապրանքներ:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա նա Չինաստանից գլխավորապես ներմուծում է մեքենաներ և սարքավորումներ, հաստոցներ, տեխնոլոգիա, էլեկտրոնիկ սարքավորումներ, ներկեր և ներկանյութեր, տեքստիլ ապրանքներ, ձկնորսանավեր, զանազան արդյունաբերական ապրանքներ և այլն:

Առհասարակ իրանա-չինական տնտեսական համագործակցության շրջանակները խիստ լայն են և դրանք գնալով ավելի են ընդլայնվում: Այդ համագործակցությունը ընդգրկում է հետևյալ բնագավառները. արդյունաբերություն, գյուղատնտեսություն, ձկնորսություն և ձկնաբուծություն, անասնապահություն և անասնաբուծություն, շաքարի, բրդի և մետաքսի արտադրություն, ռադիոն համակարգ, տրանսպորտ և կոմունիկացիոն համակարգ, շինարարություն, նավթաքիմիա, ջրամբարտակների, էլեկտրակայանների կառուցում, կոոպերատիվների կազմակերպման բնագավառում փորձի փոխանակում և այլն:

Զարգանում է երկու երկրների արդյունավետ համագործակցությունը նաև գիտության, կրթության, մշակույթի բնագավառներում:

Իրանական երկաթուղային ցանցի ընդլայնումը, մասնավորապես Մեշհեդ-Թաջան-Մարախս երկաթուղու բացումը, դրական ներգործություն ունեցավ Կենտրոնական Ասիայի վրայով Իրանի հետ Չինաստանի տրանսպորտային կապի բարելավման համար:

Ճապոնիան պատկանում է այն երկրների թվին, որոնց հետ Իրանը միշտ ունեցել է կայուն, առանց շեշտակի տատանումների քաղաքականություն: Ճապոնիան հանդիսանում է իրանական նավթի խոշորագույն ներմուծող: ԻԻՀ-ից ներմուծվող նավթը կազմում է Ճապոնիայի ողջ նավթային ներմուծումների 8 տոկոսը, որը գումարային առումով (1997թ. գներով) կազմում էր տարեկան 2,5 միլիարդ դոլար: 1997թ. Իրանի և Ճապոնիայի միջև առևտրի տարեկան ծավալը կազմել էր 4 միլիարդ դոլար:

«Ցոթնյակի» երկրների շարքում Ճապոնիան Իրանի զարգացման ծրագրերին ձեռք մեկնող թիվ առաջին պետությունն էր: Սակայն վերջերս, գլխավորապես ամերիկյան ճնշումների հետևանքով, Ճապոնիան էապես սահմանափակել է իր մասնակցությունը Իրանում զանազան նախագծերի իրականացմանը:

Թեև Իրանը մեծ շահագրգռվածություն է դրսևորում Ճապոնիայից նորագույն տեխնոլոգիաներ, զանազան արդյունաբերական ապառնագրեր (պատենտներ) և այլն ներմուծելու գծով, սակայն ԻԻՀ նկատմամբ Արևմուտքի կողմից իրականացվող շրջափակման քաղաքականությունը արգելք է հանդիսանում դրան:

Հարավ-Արևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի համարյա բոլոր մեծ ու փոքր պետությունները և նրանցից առաջին հերթին իսլամը դավանող երկրները, գտնվում են ԻԻՀ տնտեսական ու քաղաքական հետաքրքրությունների կիզակետում: Թեհրանը հատկապես չափազանց մեծ կարևորություն է տալիս աննախընթաց կերպով արագ զարգացող պետությունների, կամ այսպես կոչված «վիշապների» հետ հարաբերությունների ծավալմանը և նրանց հետ տնտեսական ինտեգրացմանը:

Թեհրանը փորձում է համոզել վերոհիշյալ պետություններին, որ Իրանը, որը տեղակայված է ստրատեգիական առաջնակարգ նշանակություն ունեցող շրջանում և հանդիսանում է կապող օղակ Հարավ-Արևելյան Ասիայի և Կենտրոնական Ասիայի միջև, կարող է խաղալ

վիթխարի տարածքներում փռված երկրներին «միացնող դեր», նաև այդ երկրների համար ծառայել որպես մի դարպաս դեպի Եվրոպա: Մասնավորապես Թեհրանը աշխույժ ակտիվություն է դրսևորում SAARC-ի (South Asian Association for Regional Cooperation), որին անդամակցում են Բանգլադեշը, Բութանը, Նեպալը, Հնդկաստանը, Մալդիվյան կղզիները, Պակիստանը և Շրի Լանկան, ASEAN-ի (Association of South- East Asian Nations) և ԷԿՕ-ի (Economic Cooperation Organization) կազմակերպությունների միջև համագործակցությունը ուժեղացնելու գծով կապող օղակի դեր խաղալու ուղղությամբ:

Իրանական նավթի խոշորագույն գնորդներ են նաև Հարավային Կորեան, Տայվանը և Տայլանդը: Հարավային Կորեան հանդիսանում է Իրանի գլխավոր առևտրատնտեսական գործընկերներից մեկը: Այդ երկիրը իր մասնակցությունն է բերում Իրանի գազի արդյունաբերության, էներգետիկայի, երկաթուղային շինարարության և ձկնորսության, շինարարական այլազան ծրագրեր իրականացնելու բնագավառում: ԻԻՀ-ը Հարավային Կորեայից ներմուծում է նոր տեխնոլոգիաներ, մարդատար ավտոմոբիլներ, նավթատար նավեր, տեքստիլ ապրանքներ և այլն: Իր հերթին ԻԻՀ-ը Հարավային Կորեա է արտահանում հում նավթ, նավթամթերքներ, մետաղի խտանյութ, իրանական ավանդական արտադրության ապրանքներ և այլն: 1997թ. երկու երկրների ապրանքափոխանակության ընդհանուր ծավալը կազմել էր մոտ 2,2 միլիարդ դոլար:

Այդ բնագավառում նկատվում է բուռն աճի միտում (նախատեսվում է այն հասցնել 4 միլիարդ դոլարի):

Ընդհանուր առմամբ Իրանի ամերիկյան էմբարգոն բացասական ազդեցություն թողեց երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների վրա, թեև պետք է նշել, որ նրանց միջև նախապես ձեռք բերված համաձայնությունը այսպես կոչված «7 առանցքների շուրջ», մնաց ուժի մեջ: Այդ սկզբունքը նախատեսում է ԻԻՀ և Հարավային Կորեայի միջև հարաբերությունների հետևյալ շրջանակի զարգացում ու ընդլայնում. առևտուր, ֆինանսական, տեխնիկական, արդյունաբերական համագործակցություն, համատեղ կապիտալ ներդրումներ, էներգետիկա, մշակույթ և զբոսաշրջիկություն:

Իրանը հարաբերություններ է զարգացնում նաև Հյուսիսային Կորեայի հետ: Սակայն նկատի ունենալով, որ վերջինս աչքի չի ընկնում իր

ինդուստրիալ զարգացման տեսակետից, ԻԻՀ-ն կապերը այդ երկրի հետ կրում են խիստ միակողմանի բնույթ:

Ինչպես նշվեց վերևում, Իրանը իր արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկն է համարում Հարավ-Արևելյան Ասիայի մահմեդական երկրների հետ համագործակցության սերտացումը: Դինամիկ հարաբերություններ գոյություն ունեն հատկապես Մալայզիայի հետ: Այդ հարաբերությունների սպեկտրը բավականին լայն է, սակայն գերակշռողը նավթային համագործակցությունն է: Ի դեպ, Մալայզիան ֆրանսիական «Տոտալ» ընկերության բաժնետեր է (այդ ընկերությունը գազի վերաբերյալ խոշոր պայմանագիր է կնքել Իրանի հետ):

Զարգանում է նաև Իրան-Բանգլադեշ տնտեսական համագործակցությունը: Իրանը Բանգլադեշից ներմուծում է հիմնականում թեյ, քնքուշ և տեղական արտադրության բազմապիսի այլ ապրանքներ: Բանգլադեշն իր հերթին Իրանից գնում է նավթ, նավթային տեխնոլոգիա, երկաթուղային վագոններ և այլն:

1996 թվականից սկսած տնտեսական հարաբերությունների վերելք է նկատվում նաև Իրանի և Վիետնամի միջև: Կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել այն մասին, որ կտրուկ ավելացվելու են Վիետնամից բրնձի (500 հազար տոննն), թեյի, բնական կաուչուկի ներմուծումներն Իրան: Վերջինս պատրաստակամություն է հայտնել Վիետնամին փոխանցելու իր փորձառությունները տեխնիկական ու ճարտարվեստական, գյուղատնտեսության, քիմիական և մետալուրգիական արդյունաբերության բնագավառում: Կողմերը պայմանավորվել են նաև կատարել համատեղ ներդրումներ ենթակառուցվածքային բնագավառի նախագծերում, մասնավորապես երկաթգծերի ու կամուրջների շինարարության մեջ: Վերջապես Իրանը Վիետնամին ցուցաբերում է տեխնիկական և ինժեներական օգնություն նավթազտարաններ կառուցելու համար:

Ներկայումս ԻԻՀ արտաքին քաղաքականության ակտիվ ուղղություններից մեկը աֆրիկյան երկրների նկատմամբ իրագործվող ուղղությունն է: Թեհրանը իր պատրաստակամությունն է հայտնում համակողմանի կերպով զարգացնելու իր հարաբերությունները աֆրիկյան պետությունների հետ, ցուցաբերել ամեն տեսակի օգնություն նրանց զարգացման ծրագրերին և այլն: ԻԻՀ-ը հետաքրքրում է աֆրիկյան մայր ցամաքի հարուստ բնական ռեսուրսները, նրա աշխարհագրական դիրքը, ծավալուն շուկան և այլն:

Իրանը աֆրիկյան պետությունների օգնությամբ աշխատում է նաև ճեղքել ԱՄՆ-ի կողմից իրականացվող էմբարգոյի և միջազգային մեկուսացման քաղաքականությունը:

1997թ. հուլիսին Թեհրանում գումարվեց Իրանի և Աֆրիկայի միջև հարաբերությունների զարգացմանը նվիրված կոնֆերանս, որն ընդունեց մի շարք որոշումներ կողմերի միջև հարաբերությունների ընդլայնման վերաբերյալ:

Աֆրիկյան մայր ցամաքում իրանական նավթի խոշորագույն ներմուծողը Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունն է (1997թ. ՀԱՀ-ը Իրանից ներմուծեց 12 միլիոն տոն նավթ):

ԻԻՀ արտաքին տնտեսական քաղաքականությունը ուղղված է պետական սեկտորի գծով մասշտաբային ինվեստավորմանը այնպիսի կարևորագույն բնագավառներում, ինչպիսիք են նավթային արդյունաբերությունը, նավթաքիմիան, էներգետիկան, վերամշակող արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Ընդորում այդ խնդրի իրագործման համար ԻԻՀ գլխավորապես օգտագործում է ներքին ռեսուրսները, միաժամանակ աշխատելով Արևմուտքի զարգացած երկրներից և Ճապոնիայից ձեռք բերել արտաքին ֆինանսավորում և ներմուծել նորագույն տեխնոլոգիաներ ու սարքավորումներ: Արտասահմանից ներգրավված կապիտալը լայնորեն օգտագործվում է ոչ միայն նոր, արդիական ձեռնարկությունների կառուցման, այլև հների վերականգնման ու արդիականացման համար:

ԻԻՀ համար տարադրամային ձեռքբերումների հիմնական աղբյուր է հանդիսանում արտասահմանյան երկրներին հում նավթի վաճառքը: Վերջին տարիներս համաշխարհային շուկայում նավթի գների կտրուկ անկումը մեծ վնասներ հասցրեց Իրանին, կտրուկ կրճատելով նավթի վաճառքից գոյացած նրա հասույթները:

Ներկայումս համաշխարհային շուկայում նավթի գների աճի միտումը հնարավորություն տվեց ԻԻՀ-ը կայունացնել իր ֆինանսատնտեսական վիճակը և ավելացնել ներդրումները երկրի տնտեսության տարբեր բնագավառներում:

Սահմանակ պետք է նշել, որ ԻԻՀ-ը արդեն տարիներ շարունակ քանքեր է գործադրում, որպեսզի նվազեցվի երկրի տնտեսության կախվածությունը նավթից: Սակայն դա մինչև օրս չի հաջողվել: Կառավարությունն աշխատում է մեծացնել ոչ նավթային ապրանքների արտա-

հանման ծավալները, իր տարադրամային հասույթներն ավելացնելու համար: Մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական նոր շուկաներ ձեռք բերելու հարցին: Այդ խնդիրը լուծելու կարևորագույն միջոցառում է դիտվում արտադրվող ապրանքների որակը բարձրացնելու հարցը: Առհասարակ պետք է նշել, որ ԻԻՀ ազգային կապիտալն արդեն ձեռք է բերել կրիտիկական զանգված: Թեև իրանական շուկան դեռևս սպառված չէ, սակայն ԻԻՀ զգում է նոր շուկաների կարիք: Ուստի նա փորձում է շուկաներ գտնել ԱՊՀ տարածքում, Ասիայի զարգացող երկրներում ու Աֆրիկայում:

Օգտվելով իր աշխարհա-ռազմավարական դիրքից, ԻԻՀ-ը ձգտում է տարածաշրջանում առևտրային-տնտեսական տիրապետություն ստանալ: Սակայն դեռևս ներմուծման և արտահանման հաշվեկշիռը բացասական է ԻԻՀ համար: Երկիրը դեռևս ի վիճակի չէ արտահանելու բավարար քանակությամբ մրցունակ ապրանքներ: Ամեն քայլափոխում իրեն զգացնել է տալիս նաև ԻԻՀ նկատմամբ ԱՄՆ-ի իրագործած տնտեսական շրջափակման քաղաքականությունը:

ՄՇԱԿՈՒՅԹԸ
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև XIXդ. կեսերը Իրանում տիրապետող էր կրթության կրոնական համակարգը: Հիմնական ուսումնական հաստատություններ էին հանդիսանում տարրական հոգևոր դպրոցները (մաքթաբները) և աստվածաբանական ուսումնարանները (մեդրեսե): XIXդ. կեսերին Իրանում հայտնվեց աշխարհիկ տիպի առաջին ուսումնարանը՝ Դարոլֆոնունը, որը բացվել էր վարչապետ Միրզա Թաղի-խանի նախաձեռնությամբ:

Իրանում աշխարհիկ տիպի առաջին ուսումնական հաստատությունները սկսեցին երևան գալ անցյալ դարի 90-ական թվականների վերջից: Սակայն այդ բոլորով հանդերձ, մինչև մեր դարի 30-ական թվականների սկիզբը, ամբողջությամբ վերցրած, Իրանում կրթության համակարգը գտնվում էր հոգևորականության հսկողության տակ:

60-ական թվականներին Իրանում իրականացված բարեփոխումների ստամանափակ բնույթը հնարավորություն չտվեց էապես փոխել բարձրագույն կրթության հետ կապված իրադրությունը: 1956թ. կառուցված առաջին համընդհանուր մարդահամարի համաձայն, երկրի բնակչության 85%-ը անգրագետ էր:

Անգրագիտության դեմ պայքարի նպատակով 60-ական թվականների բարեփոխումների ժամանակ ստեղծվեց այսպես կոչված «լուսավորության կորպուս», որի մասնակիցները՝ միջնակարգ դպրոցների, տեխնիկումների և բուհերի շրջանավարտները, բանակ զինակոչվելուց հետո որպես ուսուցիչներ ուղարկվում էին հեռավոր և դժվարամատչելի շրջանների գյուղական վայրերը: 1968թ. «լուսավորության կորպուսի» աշխատանքների մեջ սկսեցին ընդգրկվել նաև միջնակարգ դպրոցների, մանկավարժական տեխնիկումների և բուհերի շրջանավարտ աղջիկները:

«Սպիտակ հեղափոխության» շրջանակներում իրականացվող միջոցառումները հնարավորություն տվեցին որոշ չափով բարելավել Իրանում կրթության բնագավառում գոյություն ունեցող իրադրությունը: Սակայն սոցիալ-տնտեսական, քաղաքական և դեմոգրաֆիական պրոբլեմները, որոնք 60-ական թվականների կեսերին սուր կերպով զգացնել էին տալիս իրենց, թույլ չտվեցին դրականորեն լուծել այդ բնագավառի բազմաթիվ ցավոտ խնդիրները:

Միջնակարգ ընդհանուր հանրակրթական դպրոցը Իրանում միապետական կառավարման շրջանում վճարովի էր և ոչ պարտադիր: Այն երկաստիճան էր, ոչ լրիվ միջնակարգ (6-8 դասարաններ) և լրիվ (9-11 դասարաններ): Լրիվ միջնակարգ դպրոցի ուսումնառության վերջին տարին համարվում էր բուհ ընդունվելու համար նախապատրաստական տարի կամ նախահամալսարանական տարի:

Պրոֆեսիոնալ ուսուցումը բաղկացած էր երկու տարուց (որակյալ բանվորների պատրաստում) և չորս տարուց (պատրաստում էր տեխնիկներ): Բացի այդ, գոյություն ունեին բանվորների որակավորման բարձրացման տարբեր կարճաժամկետ կուրսեր:

70-ական թվականների կեսերին Իրանում գործում էին ավելի քան 20 համալսարանական համալիրներ և տասնյակ բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնցում սովորում էին ավելի քան 150 հազ. ուսանողներ: Նրանց թվում էին այնպիսի խոշոր ուսումնական հաստատություններ, ինչպիսիք էին Թեհրանի պետական համալսարանը, Թեհրանի ազգային համալսարանը, Շիրազի պետական համալսարանը, Թավրիզի պետական համալսարանը, «Մոիա մեհր» ինդուստրիալ համալսարանը, Համադանում Ավիցեննայի անվան համալսարանը, Քերմանում և Քերմանշահում գործող համալսարանները և այլն:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները միավորվում էին համալսարանական համալիրների մեջ, որոնք ի վիճակի էին իրագործել լուրջ գիտական հետազոտություններ: Նրանք ֆինանսական և վարչական առումով անկախ էին և գործում էին ինքնակառավարման սկզբունքով: Համալսարանների անկախ ստատուսի պայմաններից մեկը այն էր, որ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները չպետք է զբաղվեին քաղաքական գործունեությամբ:

Բացի այդ, մեծ թվով իրանցի ուսանողներ ուսանում էին ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում:

1978-1979թ.թ. հեղափոխությունից և Իրանի Իսլամական Հանրապետության կազմավորումից հետո, կրթական համակարգը Իրանում էական փոփոխությունների ենթարկվեց: Դա նախ և առաջ կապված է 1980թ. հունիսի 13-ին հռչակված «Իսլամական կուլտուրական հեղափոխության» հետ: Մշակվեց «կրթության իսլամականացման» կոնցեպցիա, որը բաղկացած էր երկու հիմնական սկզբունքներից՝ ուսումնական պրոցեսի ձևի փոփոխություն և ուսուցման բովանդակության փոփոխություն: ԻԻՀ կրթության կոնցեպցիայի հիմքում դրվեց Իմամ Խոմեյնիի ցուցումը կրթության բարոյա-էթիկական ասպեկտի գերակայության վերաբերյալ գիտա-ինֆորմացիոնի նկատմամբ:

Ուսումնական պրոցեսի ձևի իսլամականացման հասկացության մեջ մտնում էր վարքի և բարոյա-էթիկական նորմերի բնագավառում իսլամի բոլոր պատվիրանների պահպանման անհրաժեշտությունը:

Կրթության համակարգի կազմակերպչական և ուսումնական սկզբունքների փոփոխություն կատարելիս, հատուկ ուշադրություն էր դարձվում աշխարհիկ և հոգևոր դպրոցների «ներձեցման» խնդրին: Ենթադրվում էր աշխարհիկ դպրոցի կողմից դաստիարակչական սկզբունքների փոխառնմանը ավանդական իսլամական մեդրեսեներից և հակառակը՝ աստվածաբանական կենտրոններում դասավանդման գիտա-ինֆորմացիոն սկզբունքի ընդլայնմանը: Աշխարհիկ դպրոցի ուսուցման ծրագրի մեջ հատուկ առարկաներից բացի, պարտադիր կերպով ընդգրկվում է նաև կրոնի հիմունքների, իսլամի սուրբ գրքերի (Ղուրան, սուննա, հադիսներ) ուսումնասիրումը, արաբերենի ուսուցումը գեթ այնպիսի ծավալով, որ աշակերտները ի վիճակի լինեն կարդալ և հասկանալ կրոնական գրականությունը: Ի դեպ, կրոնական գիտելիքները մեծ մասամբ ձեռք են բերվում և խորացվում իսլամագիտության (էսլամշենասի) առարկան անցնելիս:

ԻԻՀ-ում ստեղծվել էր «համալսարանական ջիհադ» անունով մի հատուկ մարմին, որը կոչված էր հետևել համալսարանների «իսլամականացման» ծրագրի իրագործմանը: Այդ կենտրոնները ղեկավարվում էին այաթոլլա Ռ. Խոմեյնիի հատուկ ներկայացուցիչների կողմից:

Տարբեր կառուցվածքային փոփոխությունների իրականացման հետ միաժամանակ, 1980-1985թթ. կրթության «կուլտուրական հեղափոխության» շրջանակներում, դպրոցների և բուհերի ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի մեծ մասը նորացվեց: Տարրական դպրոցի համար

կազմվեց «Իսլամական մշակույթի և կրոնական դաստիարակության վերաբերյալ» դասագիրք (2-5-րդ դասարանների համար), ինչպես նաև նմանատիպ դասագրքեր կրոնական փոքրամասնությունների համար. (Հանձայն ԻԻՀ Մահմանադրության, իսլամի հետ միաժամանակ պաշտոնական կրոններ են հռչակվում քրիստոնեությունը, հուդայականությունը և զրադաշտականությունը, իսկ այդ կրոնների հետևորդները համարվում են կրոնական փոքրամասնություններ: «Ազգային փոքրամասնություններ» տերմինը Իրանում ընդունված չէ): Բացի այդ, բուհերում մտցվեց նոր առարկա՝ աստվածաբանության հիմունքներ: Այդ առարկային զուգահեռ երկու կուրսերում անցնում են «Իսլամագիտություն 1» և «Իսլամագիտություն 2» դասընթացները:

Նշանակալից փոփոխությունների ենթարկվեցին նաև իրանական դասագրքերի գաղափարական հիմունքները: Շահական վարչակարգի շրջանում պաշտոնական մակարդակով գոյություն ունեցող միապետական գաղափարախոսության փոխարեն, 1978-1979 թթ. հեղափոխությունից հետո, դասագրքերում արմատավորվեց աստվածապետական սկզբունքներին և առաջին հերթին իսլամի շիիթական ուղղությանը նվիրվածության գաղափարախոսությունը:

Տարրական դպրոցի պարտկերեն լեզվի, իսլամական մշակույթի, աստվածաբանության և իսլամական աշխարհայացքի (մահմեդական դպրոցների համար) և կրոնական հավատալիքների (կրոնական փոքրամասնությունների դպրոցների համար) դասագրքերի տեքստերը կազմված են մի այնպիսի ձևով, որպեսզի իրագործվի «իսլամական հանրապետության քաղաքացու միասնական դաստիարակչական պրոցես»: Դաստիարակչական գործընթացի հիմնական նպատակը «իդեալական իսլամական անհատականության» ձևավորումն է: Նման անհատականությունը բնորոշող հիմնական գծերն են դիտվում գլխավոր իսլամական առաքինությունները համարվող հետևյալ հատկանիշները. բարեպաշտություն, աստվածավախություն, բարոյական մաքրություն, ասկետիզմ, անձնազոհության պատրաստակամություն, անձնական խիզախություն, ձեռնահասություն, ինչպես նաև մեծահոգություն, բարություն, կարեկցություն, հավատարմություն, նվիրվածություն: Նման մարդկային որակներ ունենալը պարտադիր պայման է դիտվում իսլամական համայնքի ղեկավարի և շարքային անդամների համար:

Իրանական դասագրքերում գաղափարական առումով առանձնանում են երկու սկզբունքներ՝ կրոնը և հայրենասիրությունը, որոնք փոխա-

դարձաբար պայմանավորված են իրարով և լրացնում են մեկը մյուսին: Դա ներառվում է «միասնության» գաղափարի մեջ, որի տակ հասկացվում է ժողովրդի, Հայրենիքի, կրոնի և պետության դաշինքի գաղափարը:

Կրոնական փոքրամասնությունների համար նախատեսված դասագրքերում հատուկ ուշադրություն է դարձվում տարբեր կրոնների ներկայացուցիչների միջև հարաբերությունների էթիկային: Այդ հարաբերությունները պետք է կառուցվեն ելնելով աշխարհի «աստվածային ծագման» և Ամենի միասնության սկզբունքից, որպես ողջ բնության՝ կենդանի ու անկենդան աղարշի: Նման մոտեցման էությունը՝ կրոնների միջև տարբերությունների հարթեցումն է, ինչպես նաև Իրանում պաշտոնապես ճանաչվող կրոնական հավատալիքների մերձեցումը:

Ջարգացվում է նաև այն տեսակետը, որ իսլամը և քաղաքականությունը անբաժան են միմյանցից և իրեն մահմեդական գիտակցելը արդեն իսկ նշանակում է շփում քաղաքական կյանքի հետ:

Հատուկ ուշադրություն է դարձվում նաև «ջիհադ» հասկացողության պրոպագանդմանը, դրա տակ հասկանալով ոչ այնքան որպես մահմեդականների պատերազմի ելնելու կոչ, որքան անձնական օրինակ և «պայքար», «ջանքերի գործադրում» հանուն ամբողջ աշխարհում արդարության սահմանման, հանուն «իդեալական իսլամական անհատականություն» ձեռք բերելու պայքար:

Ընդհանուր առմամբ ԻԻՀ դասագրքերի կողմից առաջարկվող արժեքների համակարգը կողմնորոշում է դեպի «ներդաշնակ անհատի» դաստիարակումը, անհատ, որի «ինտելեկտուալ ազատությունը» զուգորդվում է «բարձր սոցիալական ակտիվության» հետ:

Ուսումնական նյութերի թեմատիկայի փոփոխությունը հիմնականում վերաբերում էր հումանիտար ցիկլի առարկաներին և գաղափարական ուղղվածությանը: Բնագիտական բովանդակության դասագրքերի նյութերը որևէ էական փոփոխության չենթարկվեցին: Ինչ վերաբերում է պատմության դասագրքերին, ապա նրանցում ավելացել է տեղեկատվությունը իսլամի և իսլամական հեղափոխության մասին:

Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծումից անմիջապես հետո, կառավարությունը պայքար ծավալեց երկրում անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ: 1979 թ. դեկտեմբերի 29-ին հրապարակվեց ԻԻՀ կրոնա-քաղաքական առաջնորդ այաթոլլա Խոմեյնիի հրամանագի-

ը «Ամբողջական դեմ պայքարի նպատակով համընդհանուր մոբիլիզացիայի մասին»: Այդ հրամանագրի համաձայն, ստեղծվեց «Գրագիտություն սովորեցնելու շարժում» անունով կազմակերպությունը, որի հիմնական խնդիրն էր ուսումնական դասարանների ստեղծումը այն բնակավայրերում, որտեղ դպրոցներ և այլ ուսումնական հաստատություններ չկային: Բնականաբար դրանք գյուղական շրջաններն էին, ինչպես նաև ցեղերի ավանդական բնակության վայրերը: Շարժման դասարաններ ստեղծվեցին նաև քաղաքներում:

1984 թ. «Գրագիտություն սովորեցնելու շարժումը» (ԳՍՇ) ստացավ պետական կառույցի կարգավիճակ, իսկ նրա ղեկավարը այդ պաշտոնին նշանակվում էր անձամբ իմամի կողմից: ԳՍՇ-ը աշխատում էր ոչ միայն քաղաքացիական բնակչության, այլև բանակի, Իսլամական հեղափոխության պահապանների, ժանդարմերիայի և ոստիկանության ծառայողների շրջանում:

Սակայն այդ կառույցի գործունեության ոչ բավարար արդյունավետությունը անհրաժեշտություն առաջ բերեց ստեղծել անգրագիտության վերացման այլ կառույցներ: Դրանցից մեկը հանդիսացավ, օրինակ, «Մզկիթների ծրագիրը», ըստ որի, գրագիտության ուսուցումը պետք է տեղի ունենար նրանց հիմքի վրա: 1984 թվականից այդ ծրագիրը սկսեց իրականացվել մայրաքաղաքի մզկիթների մեծ մասում, իսկ հետագայում աստիճանաբար տարածվեց նաև երկրի մյուս շրջանների վրա:

1987 թվականից ԳՍՇ-ն բանակային զորամիավորումների հետ համատեղ սկսեցին իրագործել «զինվոր-ուսուցիչ» ծրագիրը: Ըստ այդ ծրագրի, բանակ զորակոչված միջնակարգ դպրոցների շրջանավարտները, նախնական հատուկ պատրաստություն անցնելուց հետո, ուղարկվում էին հեռավոր շրջանները որպես ուսուցիչներ: Շարժման գծով աշխատանքը հաշվվում էր որպես զինվորական ծառայություն: ԳՍՇ-ի դասարաններն ավարտած բոլոր շրջանավարտները ստանում էին համապատասխան վկայական, որը հիմք կարող էր հանդիսանալ միջնակարգ դպրոցի ավելի բարձր աստիճաններում կրթությունը շարունակելու համար:

Շարժման գոյության ընթացքում նրա դասարաններով անցավ ընդամենը 6 միլիոն մարդ:

Բնակչության գրագիտությունը ըստ 1986 թ. մարդահամարի

Շրջան	Բնակչության թիվը	Բնակչությունը 6 տարեկանից	և բարձր
		Ողջ գրագետները	% գրագետներ
Ողջ երկիրը	49 764 874	38 416 394	23 805 554	62
Քաղաք	26 952 894	21 000 352	15 374 589	73,2
Գյուղ	22 563 517	17 226 010	8 393 616	48,7
Ճեղեր	248 463	190 032	37 349	19,7

ԽՍՀ Սահմանադրության համաձայն, երկրում պետք է ապահովվի «Բոլոր մակարդակներում համընդհանուր անվճար կրթություն»: Ներկայումս Իրանում հանրակրթական դպրոցը եռաստիճան է. տարրական դպրոց (1-5 դասարաններ), կողմնորոշման դպրոց (6-8-րդ դասարաններ), միջնակարգ դպրոց (9-11-րդ դասարաններ): Ուսումնառությունը դպրոցում սկսվում է 7 տարեկանից: Ուսումնական տարին սկսվում է արևային հիջրայի իրանական օրացույցով մեր ամսի 1-ից (համապատասխանում է եվրոպական օրացույցի սեպտեմբերի 20-21-ին), ավարտվում է խորդաղ ամսին (հունիսի 20-21-ին):

Ուսուցման միջանկյալ աստիճանի՝ կողմնորոշման դպրոցի առկայությունը պայմանավորված է նրանով, որ ուսուցման այդ էտապում նպատակասլաց կերպով աշակերտներին կողմնորոշում են ընտրելու իրենց հետագա մասնագիտությունը կամ ուսուցման պրոֆիլը: Դպրոցում աշխատող խորհրդականները պետք է օգնեն աշակերտներին որոշելու իրենց ուսուցման հետագա պրոֆիլը՝ հատուկ դպրոցում, արհեստավարժական-տեխնիկական, առևտրական, մանկավարժական կամ այլ մասնագիտացված ուսումնական հաստատությունում:

Լրիվ միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանը համարվում է նախահամալսարանական: Նրա դերը կայանում է նրանում, որ միջնակարգ դպրոցի վերջին դասարանի ուսուցման ծրագիրը համաձայնեցվի ուսուցման հետագա էտապի՝ բարձրագույն դպրոցի ծրագրի ու պահանջների հետ:

«Իսլամական կուլտուրական հեղափոխության» հռչակման կապակցությամբ, սկսեց իրագործվել ԽՍՀ մշակույթի ու կրթության «իսլամականացման» կուրս: 1980/81 ուսումնական տարում երկրում գործող բո-

լոր օտարերկրյա դպրոցները փակվեցին: Այնուհետև փակվեցին 70-ական թվականներին տարածում գտած մասնավոր դպրոցները:

1981 թվականից սկսած ԻԻՀ դպրոցական կրթության համակարգում գործում է «հոգևոր դաստիարակի» ինստիտուտը: Նրանց հիմնական խնդիրն է աջակցել «աշակերտների իսլամական դաստիարակության» գործին:

Օտարերկրյա դպրոցների փակումից հետո, 1985/86 ուսումնական տարում Թեհրանում կրկին բացվեցին Հնդկաստանի, Պակիստանի, Լիբիայի, Հարավային Կորեայի դպրոցները, ինչպես նաև Թեհրանի միջազգային դպրոցը, որտեղ գերազանցապես սովորում են համապատասխան օտարերկրյա ներկայացուցչությունների աշխատակիցների երեխաները:

Սովորական միջնակարգ դպրոցներից բացի, Իրանում գոյություն ունեն նաև շնորհալի կամ տաղանդավոր երեխաների դպրոցներ: Դրանց թվում կան նաև գեղարվեստական թեքումով դպրոցներ: Նման դպրոցներ սովորաբար բացվում են մայրաքաղաքում կամ նահանգների կենտրոններում:

ԻԻՀ միջնակարգ դպրոցի համակարգին են պատկանում նաև տարբեր արհեստակցական-տեխնիկական ուսումնական հաստատությունները: Արհեստակցական-տեխնիկական կադրերի պատրաստումը հանդիսանում է Իրանում կրթության կոնցեպցիայի գլխավոր ուղղություններից մեկը: Այդ իսկ պատճառով, 1979 թ. հետո արհեստակցական դպրոցների և տեխնիկական ուսումնարանների թիվը նշանակալիորեն մեծացավ: Մեծ ուշադրություն է դարձվում նման նոր ուսումնական կենտրոնների ստեղծմանը:

ԻԻՀ-ում առկա է արհեստակցական-տեխնիկական կրթության երեք հիմնական ուղղություններ. բանվորների և տեխնիկական կադրերի պատրաստում արդյունաբերության համար. գյուղատնտեսական կադրերի պատրաստում. սպասարկման ոլորտի համար մասնագետների պատրաստում: Արհեստակցական-տեխնիկական դպրոցներում ուսուցումը քառամյա է: Քանի որ օժտված երեխաների համար դպրոցները ևս հանդիսանում են մասնագիտորեն կողմնորոշված, ուստի նրանք ևս ընդգրկվում են արհեստակցական-տեխնիկական կրթության համակարգի մեջ: 1985/86 ուսումնական տարում Թեհրանում գործում էին շնորհալի և օժտված երեխաների 11 դպրոցներ:

Ուսումնառության բուհական աստիճանը բաժանվում է երկու շրջանի. թերի կամ անավարտ համալսարանական կրթություն (բարդանի), որի տևողությունը 3-3,5 տարի է: Բարդանի անցածը ստանում է ոչ լրիվ լիցենցիատի աստիճան: Լրիվ համալսարանական կրթությունը (բարշենասի) տևում է 6-6,5 տարի: Բարշենասի ավարտածը ստանում է լրիվ լիցենցիատի աստիճան: Ընդունվողների համար սահմանված է տարիքային ցենզ. 23 տարեկան բարդանիի ուսումնառության շրջանը ընդունվողների համար (25 տարեկան՝ բանակում ծառայածների համար), և 30 տարեկան բարշենասի աստիճանում ուսումնառություն անցնելու համար:

Համալսարան ընդունվելու հատուկ առարկաների գծով քննություններ հանձնելուց բացի, դիմորդները քննություններ են հանձնում նաև հանրակրթական առարկաներից, որոնք ընդգրկում են. պարսկերեն և արաբերեն լեզուները, իսլամական լուսավորություն առարկան, օտար (նախրոպական) լեզու և հարցազրույց հասարակական-քաղաքական հարցերի շուրջ:

Համալսարանում սովորողները ուսումնասիրում են ինչպես մասնագիտական առարկաներ, այնպես էլ իրենց ընտրությամբ անցնում են ֆակուլտատիվ առարկաների դասընթացներ:

ԻԻՀ-ում գործող նշանավոր ուսումնական հաստատություններից կարելի է հիշատակել. Թեհրանի համալսարանը, «Շահիդ Բեհեշթի» համալսարանը, «Ամիր Քյաբիր» արդյունաբերական համալսարանը» (Նախկինում կոչվել է Պոլիտեխնիկական համալսարան), «Շարիֆ» արդյունաբերական համալսարանը, Շիրազի ,Սպահանի, Թավրիզի համալսարանները, Ռուսցիչների պատրաստման համալսարանը և այլն: Մեշհեդում գործում է ողջ Միջին Արևելքում ամենախոշոր իսլամական համալսարանը: 1989թվականից Թեհրանում բացվեց գյուղատնտեսության և բնական ռեսուրսների համալսարանը: ԻԻՀ-ում ներկայումս հաշվվում է 25 բժշկական ինստիտուտներ:

1984 թվականից սկսեց գործել նաև այսպես կոչված Ազատ իսլամական համալսարանը, որն իր բաժանմունքներն ունի Իրանի ավելի քան 20 քաղաքներում: Իսլամական Ազատ համալսարան ընդունվելու պայմանները նույնպիսին են, ինչպես Իրանի ցանկացած այլ համալսարանում: Այդ համալսարանում սովորողները ունեն ազատ ունկնդրի իրավունք: Ուսուցման ժամկետը չի սահմանափակվում և տարիքային ցենզ

չի սահմանվում: Համալսարանական դասընթացն ավարտելուց հետո ունկնդիրները ստանում են համապատասխան վկայական, որը սակայն չի հավասարվում բուհի շրջանավարտի դիպլոմին: Բացի այդ, քանի որ ԻՍՀ ուսուցումը ազատ է, նրա ունկնդիրները չեն ստանում արտոնություններ բանակում ծառայությունից ազատվելու կամ տարկետում ձեռքերպելու համար: Ունկնդիրները չեն հեռացվում ԻՍՀ-ից նույնիսկ մի քանի կիսամյակ պարապմունքներին չմասնակցելու դեպքում: ԻՍՀ-ում գոյություն ունի ուսումնառության երկու ձև. լրիվ, երբ ուսուցումը ընթանում է բուհի լրիվ դասընթացի ծրագրով և այսպես կոչված միառարկայական, երբ ուսանողը ուսումնասիրում է միայն մեկ առարկա: Այս երկրորդ ձևը առավել տարածվածն է:

ԻԻՀ-ում գոյություն ունի նաև հեռակա ուսուցման ձև (Դանեշգահ ազ Ռահահ-ե դուր), որը հիմնադրվել է 1987թ.:

Համալսարանական համալիրներին կից գործում է ասպիրանտուրա: Ասպիրանտուրայի ընդունելության պայմանները նույնպիսին են, ինչպես բուհ ընդունվելիս. իսլամը կամ ԻԻՀ պաշտոնական կրոններից մեկի դավանումը. մահմանադրության դրույթների ընդունումը և պահպանումը. «հակափսլամական» ոչ մի կուսակցությանը կամ խմբավորմանը չանդամակցելը, բացի «Ամստծո կուսակցությունից» («Հիզբոլլահ»): Ասպիրանտուրա ընդունվողները չպետք է լինեն 40 տարեկանից բարձր և պետք է ունենան լրիվ համալսարանական լիցենզիատի վկայական: Ասպիրանտուրան ավարտելուց և դիսերտացիա պաշտպանելուց հետո հայցողին շնորհվում է դոկտորի գիտական աստիճան: Գոյություն ունի գիտական աստիճանի շնորհման մեկաստիճան համակարգ:

Գնալով ընդլայնվում է իրանական բուհերի աշխարհագրությունը և նրանցում մասնագիտությունների թիվը: Ներկայումս առաջատար բնագավառներ են համարվում. էկոնոմիկան, արդյունաբերության տարբեր բնագավառները, բժշկությունը, մանկավարժությունը, գյուղատնտեսությունը:

Մշակված է ծրագիր, որը նախատեսում է համալսարանական կենտրոն ստեղծել Իրանի յուրաքանչյուր նահանգում:

Իրանցի ուսանողների մի զգալի մասը բարձրագույն կրթություն է ստանում արտասահմանում (ԱՄՆ, Անգլիա, ԳԴՀ, Ֆրանսիա, Իտալիա, Թուրքիա, Քուվեյթ, Արաբական Միացյալ Էմիրություններ և այլն): Արտասահման մեկնող ուսանողը իր վրա պարտավորություն է վերցնում

պահպանել իսլամի բարոյական նորմերը և թույլ չտալ այնպիսի արարքներ, որոնք վնաս հասցնեն ԻԻՀ միջազգային հեղինակությանը: Այս կամ այն երկրի լեզվի իմացությունը, որտեղ ուսանողը պետք է անցնի իր ուսումնառությունը՝ պարտադիր պայման է:

Արտասահմանում բուհն ավարտելուց և հայրենիք վերադառնալուց հետո, օտարերկրյա դիպլոմ ունեցող մասնագետները ստանում են ժամանակավոր վկայական (երկու տարի ժամկետով): Այդ ժամկետը լրանալուց հետո նրանք պետք է հանձնեն «գնահատման քննություն» իրենց աշխատանքի վայրում: Դրանից հետո բարձրագույն կրթության վերաբերյալ նրանց ստացած դիպլոմը ձեռք է բերում օրինական ուժ:

Իրանում կրթություն են ստանում զգալի թվով օտարերկրյա ուսանողներ:

Ընդհանրացնելով վերևում նշվածը պետք է ասել, որ ԻԻՀ-ը ունի կադրերի պատրաստման բավականաչափ հզոր բազա:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

Իրանում գիտության և գիտական հիմնարկների զարգացման սկիզբը վերաբերում է XX դարի 30-ական թվականներին: Կարևոր իրադարձություն էր 1934թ. Թեհրանի համալսարանի ստեղծումը, որը հետագայում դարձավ իրանական գիտության, լուսավորության և մշակույթի գլխավոր օջախը:

Իրանի Իսլամական Հանրապետությունում գիտահետազոտական աշխատանքները հիմնականում տարվում են համալսարաններում, նախարարություններին և գերատեսչություններին կից գիտական կենտրոններում և այլն: Գիտահետազոտական աշխատանքների կառավարման գործը կոորդինացնելու նպատակով ստեղծվել է հատուկ կազմակերպություն, որը կոչվում է «Շորայ-ե փաժուհեշ-ե քեշվարի»: Մշակույթի և բարձրագույն կրթության նախարարությանը կից գործում է նաև տեխնիկական և գիտական հետազոտությունների կազմակերպություն («Սազեմանե փաժուհեշիայե էլմի վա սանաթի»):

ԻԻՀ համալսարանները և այլ գիտական կենտրոնները համալրված են փորձառու և որակյալ կադրերով, դրանք հագեցված են արդիական սարքավորումներով և ունեն աշխատանքային լավ պայմաններ: Կատարվում են ինչպես ֆունդամենտալ բնույթի հետազոտություններ,

այնպես էլ գործնական նշանակություն ունեցող ուսումնասիրություններ, որոնց արդյունքները ներդրվում են արդյունաբերության, գյուղատնտեսության և տնտեսական կյանքի այլ բնագավառների մեջ:

Իրանական գիտնականները աչքի ընկնող հաջողությունների են հասել մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, բժշկագիտության, բիոֆիզիկայի, բիոքիմիայի, հիդրոլոգիայի, հիդրոդինամիկայի, էլեկտրոնիկայի, միջուկային ֆիզիկայի, երկրագիտության, միկրոբիոլոգիայի և այլ բնագավառներում:

Գնալով ընդլայնվում է իրանական գիտնականների կապերը արտասահմանյան մի շարք երկրների գիտական կենտրոնների, ինչպես նաև տարբեր երկրներում աշխատող իրանցի գիտնականների հետ: Գիտական լայն համագործակցություն գոյություն ունի Ռուսաստանի Դաշնության և ՍՊՀ նորանկախ հանրապետությունների գիտական կենտրոնների հետ:

Իրանում լույս են տեսնում բազմաթիվ գիտական ամսագրեր ու հանդեսներ:

Գիտական հիմնարկությունների համար կադրեր պատրաստվում են ինչպես բուն երկրում, այնպես էլ արտասահմանում:

Նախկինի պես, ներկայումս ևս շարունակվում է Իրանից «ուղեղների հոսքը» արտասահման:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Իրանում առողջապահության համակարգի կազմակերպումը սկսվել է միայն XX դ. 30-ական թվականների սկզբին:

60-ական թվականների սկզբին կառավարությունը միջոցներ ձեռնարկեց առողջապահական ծառայության համընդհանուր բարելավման ուղղությամբ: Այդ նպատակով ստեղծվեց կիսառազմական «առողջապահության կորպուս», որը բժշկական կադրերի 14-ամսյա պատրաստությունից հետո, նրանց ուղարկում էր գյուղական շրջանները առողջապահության ծառայության կազմակերպման համար:

Ներկայումս ԻՀՀ-ում կան պետական և մասնավոր հիվանդանոցներ: Բացի այդ, մի շարք հիվանդանոցներ պատկանում են բարեգործական և զինվորական կազմակերպություններին:

Բժիշկների ընդհանուր թվի մոտ 50%-ը աշխատում է Թեհրանում: Գոյություն ունի բժշկական ապահովագրության համակարգ: Կառավա-

ությունը դեղորայքի համար հատկացնում է պետական դոտացիա, դրանով իսկ հնարավորություն ստեղծելով չունևոր խավերի համար մատչելի ձևով օգտվել դեղորայքից:

Երկրում գործող բարձրագույն բժշկական ուսումնական հաստատությունները ապահովում են բժշկական անձնակազմի գծով երկրի կարիքները: Նահանգներում կազմակերպված են ֆելդշերական բժշկական կետեր: Միջին և ստորին բժշկական անձնակազմի պատրաստումը իրագործվում է միջնակարգ բժշկական ուսումնական հաստատություններում:

Կառավարությունը ծրագիր է ընդունել հիվանդությունների կանխման, բնակչությանը հիգիենայի տարրական պայմանների հետ ծանոթացնելու, մանկական մահացածության տոկոսի նվազեցման ուղղությամբ: Երկրի տարբեր քաղաքներում կազմակերպվում են նոր բժշկական կենտրոններ: Ավելացվում է հիվանդանոցային մահճակալների թիվը: Քանքեր են գործադրվում բժշկական հիմնարկությունները ժամանակակից սարքավորումներով ապահովելու և դրանք մշտապես նորացնելու ուղղությամբ:

Մայրաքաղաքի բժշկական կենտրոններից շատերը հագեցված են ամենատրդիական հայրենական և արտասահմանյան արտադրության բժշկական սարքավորումներով ու գործիքներով:

Երկրում կտրուկ միջոցներ են ձեռնարկվում թմրանյութերի օգտագործումը նվազեցնելու ուղղությամբ:

ԻԻՀ առողջապահության նախարարությունը 1988թ. սկսած ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ ակտիվորեն իրականացնում է մանկական հիվանդությունների պրոֆիլակտիկայի ծրագիր: Այդ ծրագիրը տալիս է որոշակի դրական արդյունքներ:

Այս բոլորի հետ միաժամանակ պետք է նշել, որ երկրի գյուղական բնակչության մի մասը դեռևս հնարավորություն չունի ստանալու կանոնավոր ու որակյալ բժշկական օգնություն: Որակյալ բուժումը շատերի համար անմատչելի է նաև բժշկական ծառայությունների բարձր գների պատճառով: Սոցիալական ապահովության համակարգի, ինչպես նաև կարմիր մահիկի ընկերությանը պատկանող անվճար հիվանդանոցների ոչ մեծ թիվը հնարավորություն չի տալիս, որ չունևոր խավերի ավելի խոշոր զանգվածներ օգտվեն անվճար բժշկական ծառայությունից:

Այդ բոլորը նկատի ունենալով, ԻԻՀ կառավարությունը լուրջ ուշադրություն է դարձնում նոր հիվանդանոցների կառուցմանը, բժշկական

կադրերի պատրաստմանը, դեղորայքի և բժշկական սարքավորումների արտադրության գծով ձեռնարկությունների ցանցի ընդլայնմանը: ԻԻՀ-ն ունի դեղորայքի արտադրության գծով զարգացած արդյունաբերություն: Նա դեղորայք և բժշկական բազմապիսի սարքավորումներ է արտահանում տարածաշրջանի մի շարք երկրներ:

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

Իրանում թանգարանային գործը սկսել է արագորեն զարգանալ XXդ. 30-ական թվականներից հետո: Մինչ այդ, նշված բնագավառում հիմնական արգելքը էր հանդիսանում Իրանում պեղումներ կատարելու գծով Ֆրանսիական հնագիտական միսիայի բացառիկ իրավունքը և այդ պատճառով Իրանի տարածքում համապատասխան մակարդակի թանգարանային ցուցանմուշների կազմակերպման անհնարինությունը: 1925թ. կազմակերպվում է Ազգային հուշարձանների ընկերությունը, իսկ քիչ ավելի ուշ, 1927թ., ֆրանսիացիները զրկվում են երկրում պեղումներ կատարելու իրենց բացառիկ իրավունքից: Հենց այդ նույն ժամանակ ստեղծվում է Հնագիտության գլխավոր վարչությունը, որն ընդլայնում է հնագիտական աշխատանքների մասշտաբները և արգելում է պատմության ու մշակույթի հուշարձանների դուրս բերումը երկրից: Դրանից հետո Իրանում բացվում են մի շարք թանգարաններ, այդ թվում նաև արդեն գոյություն ունեցող թանգարանների ու հավաքածուների հիմքի վրա:

Առավել աչքի ընկնող թանգարանները գտնվում են երկրի մայրաքաղաք Թեհրանում:

«Գոլեստան» պետական թանգարանը — Իրանի ամենահին թանգարանն է: «Գոլեստան» նշանակում է «վարդերի այգի»: Պալատի շինարարությունը սկսվել է Ղաջարների դինաստիայի առաջին թագավորի օրոք և ավարտվել է XIXդ. սկզբին Ֆաթհ Ալի շահի կողմից: Այն հանդիսացել է դաջարական շահերի նստավայրը, իսկ հետագայում վեր է ածվել թանգարանի, որտեղ երբեմն անց էին կացվում պաշտոնական արարողություններ:

«Գոլեստան» պալատի շենքը անցյալ հարյուրամյակի իրանական ճարտարապետության ամենաաչքի ընկնող ստեղծագործություններից մեկն է: Այն հայտնի է իր հիանալի դահլիճներով, որոնք զարդարված են հայելիներով, քանդակներով, խճանկարով:

«Գոլեստանում» հավաքված է XIX-XXդդ. իրանական հայտնի նկարիչների և գծանկարիչների ստեղծագործությունների եզակի հավաքածու: Այնտեղ ներկայացված է նաև գորգերի, թագերի, հին սառը զենքի, սաղավարտների, ոսկեզօծ զրահների, սևրական, մեյսենական, չինական և ճապոնական ճենապակու հիանալի հավաքածուներ:

Պալատում ցուցադրվում են հազվագյուտ արնելյան ձեռագրեր, գեղագրության վարպետների, հայտնի կազմարարների, մանրանկարիչների գործեր:

Ազգագրական թանգարանը («Մուզե-յե մարդում շենասի») բացվել է 1927թ.: Թանգարանը այցելուներին ծանոթացնում է երկրի ավանդույթների, նրանում ապրող ժողովուրդների կենցաղի ու ապրելակերպի հետ:

Թանգարանը հայտնի է նաև իր ազգագրական ցուցանմուշներով: Ցուցադրվում է Իրանի տարբեր ժողովուրդների ու ցեղերի զգեստների հարուստ հավաքածու: Նշանակալից տեղ է հատկացված ժողովրդական ստեղծագործության նմուշներին, ինչպես նաև տարբեր արհեստագործական արտադրանքներին: Առանձնակի տեղ է զբաղեցնում երաժշտական գործիքների հավաքածուն:

Ազգային արվեստների թանգարանը («Մուզե-յե հոնարհայե մելլի») բացվել է 1930թ.: Նրանում հավաքված է XXդ. իրանական նկարիչների՝ Հոսեյին Բեհզադի, Հաքի Թաքամիդիի, Հոսեյին Շեյխի, Ալի Քարիմիի և այլն ստեղծագործությունները:

Թանգարանի ցուցանմուշների նշանակալից մասը կազմում են ազգային կերպարվեստի և կիրառական արվեստի ստեղծագործությունները: Դրանք մանրանկարչության, դրվագազարդի, մետաղի վրա փորագրության, գեղարվեստական գործվածքի, գորգերի, մետաքսի վրա նկարների հիանալի նմուշներ են:

Թանգարանը հայտնի է նաև նրանով, որ այցելուները կարող են անմիջականորեն դիտել մանրանկարների, քանդակագրոշմների, դրվագազարդերի, ոսկերչական իրերի և այլնի ստեղծման աշխատանքներին: Թանգարանի հատուկ արհեստանոցներում աշխատում են վարպետներ, որոնք իրենց ստեղծագործությունները ստեղծում են XV, XVI և XVII դարերին բնորոշ ավանդույթներով ու ոճով:

Էնագիտական թանգարան («Մուզե-յե Իրան-ե բաստան»): Երկրում ամենախոշոր այդ թանգարանը բացվել է 1937թ., նրա համար հատուկ կառուցված շենքում:

Ներկայումս Հնագիտական թանգարանը, կամ ինչպես այն անվանում են նաև «Հին Իրանի թանգարանը»՝ իր ցուցանմուշների թվով և հարստությամբ երկրում ամենահարուստն է: Նրանցից ամենահները վերաբերում են մ.թ.ա. VI հազարամյակին:

Թանգարանի ցուցանմուշները տեղաբաշխված են ժամանակագրական և դինաստիական սկզբունքներով: Առաջին հարկում տեղադրված են այն ցուցանմուշները, որոնք հայտնաբերվել են Բախթարանի (Քերմանշահ), Սուզայի, Պերսեպոլիսի, Թեփե Սիլքի, Թեփե Հեսարի, Լասանլուի և Լուրեստանի հնագիտական պեղումների ժամանակ: Նրանք վերաբերում են մինչպատմական շրջանից մինչև Սասանյանների կառավարման վերջը (VII դ.) ընդգրկող շրջանը: Այստեղ կարելի է տեսնել քարից և ոսկորից պատրաստված հնագույն իրեր: Սասանյանների դարաշրջանի ցուցանմուշներից կարելի է հատուկ նշել արվեստի ստեղծագործությունները՝ որմնանկարները, մետաղյա իրերը:

Աքեմենյանների շրջանի հուշարձաններից մեծ արժեք են ներկայացնում Դարեհ I-ի հարթաքանդակը, Սուզայի գինվորի պատկերաքանդակը, ոսկյա և արծաթյա զարդերենը, Պերսեպոլիսի պալատի խոյակները:

Արշակունիների շրջանի ցուցանմուշներից գիտական առումով ամենաարժեքավորը հանդիսանում է Բախթիարիում գտնված բրոնզաձույլ արձանը:

Թանգարանի երկրորդ հարկը հատկացված է իսլամական շրջանի Իրանի նյութական մշակույթի նմուշներին: Ուշադրություն են գրավում կավից, հախճապակուց պատրաստված և ջնարակված իրերը, դրամների հավաքածուն: Առավել աչքի են ընկնում կավե սկահակները, որոնք զարդարված են արաբական գրերով:

Աչքի են ընկնում նաև սելջուկների շրջանի նյութական մշակույթը ներկայացնող ցուցանմուշները:

Հատուկ դահլիճ է հատկացված այն իրերը ցուցադրելու համար, որոնք վերաբերում են Մեֆյանների կառավարման շրջանին:

Թանգարանի վերջին բաժինը անվանում են «գանձերի դահլիճ»: Այստեղ ներկայացված են ոսկուց և արծաթից պատրաստված իրեր, մինչիսլամական և իսլամական շրջանների մի շարք արժեքավոր գտածոներ, ինչպես օրինակ, Քսերքսեսի ոսկյա գավաթը, Աքեմենյանների դարաշրջանի ոսկյա եզրազարդերը, Սասանյան շրջանի ոսկյա և արծաթյա գավաթներ, մատուցարաններ և այլ բազմապիսի թանգարժեք ու հազվագյուտ իրեր:

Գեղանկարչական արվեստի թանգարանը («Մուզե-յե հոնարհա-յե թազիյինի») սկսել է գործել 1961թ. սկսած: Ցուցանմուշները հիմնված են իրանական հայտնի կոլեկցիոներ Արդուլլա Ռահիմիի հավաքածուի վրա: Ժամանակին Իրանի մշակույթի և արվեստի նախարարությունը ձեռք է բերել այդ հավաքածուն և ստեղծել է թանգարան երկրի գեղանկարչության մասսայականացման համար:

Ցուցանմուշները հիմնականում վերաբերում են իրանական պատմության վերջին չորսհարյուր տարիներին և տեղաբաշխված են ութ դահլիճներում, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է գեղանկարչական և կիրառական արվեստի բնագավառի ստեղծագործությունները: Այստեղ լայնորեն ներկայացվում են ժողովրդական կիրառական արվեստի այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են դեկորատիվ վարագույրները, մետաքսյա և թավշյա կտորները, շալերը, իրանական էմալը (արծնապակի) դրվագազարդ իրերը, փորագրությունը պղնձի, արծաթի վրա, հայելիների շրջանակները, թանկարժեք իրերի համար տուփերը, սառը և տաք զենքերի նմուշներ և այլն:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ֆիրմանների (հրամանագրերի) հարստագույն հավաքածուն, հայտնի գեղագիրների ստեղծագործությունները, XX դարի իրանական խոշորագույն նկարիչ-մանրանկարիչ Հոսեյին Թահիր-զադե Բեհզադի աշխատանքները և այլն:

«Նեգարեստան» թանգարանը կամ իմամ Ռեզայի սրբավայրի թանգարանը բացվել է 1935թ. Մաշհադում: Նրա ցուցանմուշների մեծ մասը բաղկացած է արվեստի ստեղծագործություններից և տարբեր արժեքներից, որոնք սրբավայրին նվիրվել են շահերի, էմիրների և ազնվականության մյուս ներկայացուցիչների կողմից:

Մաշհադի քաղաքային թանգարանը ունի իսլամական շրջանի արվեստի ստեղծագործությունների և հին ձեռագրերի ու մանրանկարների հետաքրքիր հավաքածու: Նրա ցուցանմուշներից առավել հայտնի ու արժեքավոր է Ղուրանների հավաքածուն, որոնց մեջ առանձնանում է հսկա չափերի Բայսանկուրի Ղուրանը և Բաբուրի Ղուրանը: Մաշհադում է գտնվում նաև Նադիր-շահի դամբարան-թանգարանը:

Գորգերի թանգարանը Թեհրանում իր տեսակի մեջ եզակի է աշխարհում: Նրանում ներկայացված գորգերը վերաբերում են տարբեր ժամանակաշրջանների՝ միջնադարից սկսած մինչև մեր օրերը: Ցուցադրվում են Իրանի տարբեր շրջաններում, տարբեր ժողովուրդների կողմից

արտադրված գորգեր: Թանգարանի ցուցանմուշների մեջ իրենց տեղն են գրավում նաև իրանահայերի կողմից պատրաստված գորգերը:

Ոսկերչական իրերի թանգարանում ներկայացված են տարբեր ժամանակների իրանական շահերին և իրանական բարձրաշխարհիկ ազնվականությանը պատկանող և բարձր գեղարվեստական արժեք ներկայացնող իրերը, թանկարժեք և հազվագյուտ ադամանդներ, ալմաստներ և այլն, ինչպես նաև իրանական ու այլազգի ոսկերիչների ստեղծագործությունները:

Թեհրանում կա նաև կենդանաբանական թանգարան, Ջինապալատ, ապակյա և խեցեգործական իրերի թանգարան և այլն:

Թանգարաններ կան նաև Իրանի մյուս քաղաքներում: Սպահան, Շիրազ, Ղում, Թավրիզ, Ղազվին և մի շարք այլ քաղաքներում կան, օրինակ, պատմա-երկրագիտական թանգարաններ:

Բաց երկնքի տակ գտնվող թանգարան է Աքեմենյանների հին մայրաքաղաք Պերսեպոլիսը:

Իրանի ուշագրավ թանգարաններից է նաև Նոր Ջուղայի թանգարանը, որը գտնվում է Նոր Ջուղայի Ամենափրկչյան վանքին կից տարածքում: Այն հիմնադրվել է 1907թ., իսկ 1931թ. ձևավորվել է անվանի նկարիչ Մարգիս Խաչատրյանի կողմից: Թանգարանում հավաքված են իրանահայ և եվրոպացի նկարիչների բազմաթիվ արժեքավոր ստեղծագործություններ, (օրինակ XV-XVI դարերի իտալացի նկարիչ Հաննիբալ Կարաչչիի «Հիտուսի հուղարկավորությունը» կտավը), արձանիկներ, քանդակագործական աշխատանքներ, հայկական ձեռագրերի հարուստ հավաքածու, իրանական շահերի ֆիրմաններ, հին ու նոր գրքեր, պարբերական մամուլի հավաքածուներ և այլն: Թանգարանում ցուցադրվում են Ջուղայի մանրանկարչական դպրոցի աչքի ընկնող ստեղծագործություններ, հայ ասեղնագործության ընտիր նմուշներ, ազգային տարազներ, գորգեր, ազնիվ մետաղներից իրեր, հայկական և պարսկական հին դրամների նմուշներ, զարդանկարներ: Թանգարանում պահվում են նաև նշանավոր հայերի անձնական իրեր ու հազվագյուտ դիմանկարներ: Թանգարանի ուշագրավ ցուցանմուշներից են այն փայտյա ինքնաշեն տառերն ու տպագրական մեքենան, որոնցով Խաչատուր Կեսարացին Իրանում տպագրել է առաջին գիրքը: Այդ բոլորը ներկայումս պահվում է 70-ական թվականներին կառուցված նոր ու հարմարավետ թանգարանի շենքում:

Իրանում ժամանակակից գրադարանները հայտնվել են 20-30ական թվականներին: Ներկայումս երկրի խոշոր գրադարանները վերահսկվում են կառավարական տարբեր հիմնարկությունների և առաջին հերթին Իսլամական առաջնորդության և մշակույթի նախարարության կողմից: Կարևոր նշանակություն է տրվում հանրամատչելի դպրոցական մասնագիտական գրադարանների, մանկական և գյուղական գրադարանների ու ընթերցարանների ցանցի ընդլայնմանը:

Իրանի խոշորագույն գիտական գրադարանը «Ազգային գրադարան» է, որը հիմնադրվել է 1937թ.: Այն լայն պրոֆիլի գրադարան է: Բացի արևելյան և արևմտյան լեզուներով տպագիր գրականությունից, այդ գրադարանը հարուստ է իրանական ձեռագրերի ֆոնդերով, պարբերական հրատարակությունների հավաքածուներով: Գրադարանից օգտվելը անվճար է: Ազգային գրադարանը պարբերաբար հրատարակում է բիբլիոգրաֆիաներ, զանազան ուղեցույցներ և այլն:

Իրանական մեջլիսն ունի իր գրադարանը, որը հիմնադրվել է 1923թ.: Նրանում առկա է ձեռագրերի հարուստ հավաքածու: Գրադարանը սպասարկում է ոչ միայն մեջլիսի անդամներին, այլև դրսի ընթերցողներին, ուստի և համարվում է լայն պրոֆիլի ազգային հանրային գրադարան:

Երկրում կան նաև բազմաթիվ համալսարանական գրադարաններ, որոնցից ամենահայտնին և իր ֆոնդերով առավել հարուստը Թեհրանի համալսարանի կենտրոնական գրադարանն է, որը նույնպես ունի ձեռագրերի հարուստ հավաքածու: Այն գրքափոխանակության մեջ է աշխարհի բազմաթիվ հայտնի գրադարանների հետ:

Համալսարանական հարուստ գրադարաններ կան նաև Թավրիզում, Սպահանում, Շիրազում, Մեշհեդում և այլ համալսարանական քաղաքներում:

Թեհրանի խոշորագույն գրադարաններից մեկը Կենտրոնական գրադարանն է, որը կազմակերպվել է 1959թ.: Գրականության հարստությամբ աչքի է ընկնում նաև Մեշհեդում Իմամ Ռզայի սրբավայրի գրադարանը, որը Իրանի հնագույն գրադարաններից մեկն է: Կրոնական գրականությունից ու հարուստ ձեռագրական ֆոնդերից բացի, գրադարանի ֆոնդերում կա նաև մեծ թվով աշխարհիկ գրականություն պարսկերեն ու եվրոպական լեզուներով:

1979թ. օգոստոսի 6-ին ընդունվեց օրենք մամուլի մասին: Իսկ 1984թ. ուժի մեջ մտավ նոր օրենք, որով մինչև օրս կարգավորվում է մամուլի բնագավառի գործունեությունը:

1979թ. դեկտեմբերին ընդունված Իրանի սահմանադրության մեջ մամուլի մասին կա հատուկ հոդված (24), որտեղ ասվում է. «մամուլը ազատ է գրելու ցանկացած հարցի մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք հակասում են իսլամի հիմքերին կամ հասարակական բարքերին»:

1984թ. Մամուլի մասին օրենքի համաձայն՝ խոսքի ազատության ընդհանուր ղեկավարությունը, մամուլի, գրքերի, ցանկացած հրատարակության նկատմամբ հսկողությունը դրվում է Իսլամական առաջնորդության և մշակույթի (Էրշադ) նախարարության վրա, որն իրականացնում է Պրոբագանդայի նախարարության ֆունկցիաները: Մամուլի հետ կապված հարցերը պետական մակարդակով լուծելու համար ստեղծված է հատուկ խորհուրդ: Նրա կազմի մեջ ընդգրկված են՝ իսլամական առաջնորդության և մշակույթի նախարարը կամ նրա ներկայացուցիչը, օրենսդրական և դատական իշխանությունների ներկայացուցիչները, մեկ համալսարանական պրոֆեսոր (նշանակում է Բարձրագույն կրթության նախարարը) և տպագիր հրատարակությունների խմբագիրների գիլդիայի մեկ ներկայացուցիչ:

Բուն Իսլամական առաջնորդության և մշակույթի նախարարության մեջ մամուլի նկատմամբ հսկողությունը իրականացնում է մամուլի և հրատարակչությունների գործերի գծով Գլխավոր վարչությունը: Թեև 1984թ. օրենքով գրաքննությունը պաշտոնապես վերացել է, նշված վարչությունը իրականացնում է նախնական հսկողություն թերթերի նյութերի տեղաբաշխման և նրանց մատուցման համամասնության նկատմամբ: Այլ կերպ ասած, նրա խնդիրն է տեղեկատվական հոսքի կարգավորումը:

1994թ. տվյալներով ԻԻՀ-ում լույս էին տեսնում 439 պարբերականներ, որոնցից 343-ը Թեհրանում, իսկ 94-ը այլ քաղաքներում, այդ թվում 26 օրաթերթեր, 94 շաբաթաթերթեր, 25 երեկոյան թերթեր, 154 ամսագրեր և այլն:

Իրանական հրատարակությունների տիրաժների մասին ստույգ տեղեկությունները բացակայում են:

Առաջատար թերթերը: Թեհրանում հրատարակվող և համազգային նշանակություն ունեցող օրաթերթերն են.

«Քեյհան», որը հրատարակվում է 1941թ. սկսած: Այս թերթը հրատարակող կորպորացիան լույս է ընծայում նաև անգլերեն լեզվով շաբաթաթերթ (1959 թվականից)՝ «Քեյհան ինթերնեյշընլ» վերնագրով: «Քեյհան հավայի» լույս է տեսնում 1950 թվականից և նախատեսված է երկրի սահմաններից դուրս ապրող իրանցիների համար:

«Էթթելաաթ»: Լույս է տեսնում 1925թ. սկսած: Քաղաքական և գրական հրատարակություն է: Ունի մեծ հավելվածներ, որոնք ուղարկվում են բաժանորդներին, այդ թվում. «Էթթելաաթ»՝ քաղաքական, «Էթթելաաթ»՝ տնտեսական և այլն:

«Մեսալաաթ»: Կանոնավոր կերպով լույս է տեսնում 1986թ. հունվարից սկսած: Հիմնված է «Մեսալաաթ» կրոնական ֆոնդի կողմից:

«Ամրաթ» («Սրբեր»): Առավոտյան թողարկում է: Մինչև 1985 թ. հրատարակվում էր «Ազադեգան» անունով:

«Ջումհուրիե էսլամի» («Իսլամական հանրապետություն»): Առավոտյան թողարկում է: Սկսել է լույս ընծայվել 1979 թվականից սկսած, որպես նույն թվականին կազմակերպված Իսլամական Հանրապետության կուսակցության (ԻՀԿ) օրգան: 1987թ. ԻՀԿ ցրումից հետո թերթը շարունակում է լույս ընծայվել այդ տարիներին կազմակերպված հրատարակչական խմբի կողմից: Տպագրում է հիմնականում քաղաքական, տնտեսական, մշակութային և տեղեկատվական բնույթի լուրեր:

Թեհրանում լույս տեսնող կարևորագույն թերթերից են նաև «Համշահրի», «Իրան», «Սալաամ» և այլ պարբերականներ:

Մնացած թերթերը լույս են տեսնում մեծ քաղաքներում և նահանգների վարչական կենտրոններում, ներառյալ նաև Շիրազը, Սպահանը, Մեշհեդը, Թավրիզը, Ռեշտը, Սարին և այլն:

Օտար լեզուներով հրատարակվող թերթերից առաջատարներ են հանդիսանում անգլերեն լեզվով «Թեհրան թայմս»-ը և «Քեյհան ինթերնեշընլը»: երկու թերթերի տիրաժն էլ մեծ չէ (5-6 հազար):

Արաբերեն լեզվով լույս է տեսնում «Քեյհան» թերթը (Քեյհան ալ-Արաբի): Այդ նույն թերթը հրատարակվում է նաև թուրքերեն:

Թեհրանում լույս է տեսնում նաև հայերեն «Ալիք» օրաթերթը:

Ամսագրեր: Ամսագրերի կեսից ավելին հրատարակվում է պետական կազմակերպությունների կողմից: Լայն տարածում ունեն հետևյալ ամսագրերը. «Քեյհանե բաչչեհա» («Քեյհան երեխաների համար»), «Դանեսթանիհա» («Գիտելիքներ»), «Քեյհանե վարզեշի» («Սպորտա-

յին Քեյհան»), «Ֆոնյա-յե վարզեշ» («Սպորտային աշխարհ»), «Ֆիլմ» (ունի անգլերեն լեզվով մի քանի էջ), «Սանաթե համլոնաղլ» («Տրանսպորտային ինդուստրիա»):

Կարևորագույն գրական-գեղարվեստական ամսագրեր են հանդիսանում «Ադինա»-ն, «Ֆոնյա-ե տոխան»-ը: Ռեշտում լույս է տեսնում գրական ամսագիր «Նաղշ-ե դալամ»-ը: Բացի այդ լույս են տեսնում «Արմաղան» գրական և պատմական ամսագիրը, «Ամանդե» գրական-պատմական և գրական-քննադատական ամսագիրը, «Հանեշմանդ» գիտատեխնիկական հրատարակությունը, «Գոլ աղա» (երգիծական) ամսագիրը և այլն:

Անգլերեն լեզվով լույս է տեսնում «IRAN TODEY» տնտեսական-քաղաքական ամսագիրը:

Նշված թերթերից և ամսագրերից բացի, համեմատաբար ոչ մեծ տիրաժներով, լույս են տեսնում տարբեր կրոնական ու կրոնա-քաղաքական խմբերի ու աստվածաբանական կենտրոնների հրատարակություններ:

Վերջերս սկսել է լույս ընծայվել հայերեն լեզվով մշակութային և հասարակական «Ապագա» ամսագիրը:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱԴԻՈՆ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՊՄՀ խոշորագույն լրատվական գործակալությունը IRNA-ն է («Խաբար գոզարի-ե Ջումհուրի-ե Էսլամի»), որը Իրանի պաշտոնական լրատվական գործակալությունն է: Նա իր մասնաճյուղերն ունի Լոնդոնում, Բոննում, Բեյրութում, Իսլամաբադում, Նյու-Դելհիում և այլ վայրերում: Գործակալությունը պարսկերեն և անգլերեն լեզուներով հրատարակում է նորությունների բյուլետեն:

Թեհրանում օտարերկրյա մի շարք լրատվական գործակալություններ (Ֆրանս պրեսս, Անզա (Ռուսիա), Տանյուգ (Հարավսլավիա), Անատոլիա (Թուրքիա), Կիոդո (Ճապոնիա) և այլն ունեն գրասենյակներ:

Իրանական ռադիոն և հեռուստատեսությունը («Մեդիա վա Սիմայե Ջումհուրի-ե Էսլամի-ե Իրան») բացի պարսկերեն լեզվով հաղորդումներից, ձայնասփռում է նաև հաղորդումներ բազմաթիվ եվրոպական և արևելյան լեզուներով, այդ թվում նաև հայերենով:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից Իրանի ճարտարապետությունը հիմնված է այդ երկրի հարուստ ու հին ճարտարապետական ավանդույթների հենքի վրա: Ժամանակակից ճարտարապետությունը զարգանում է վերին աստիճանի արագ տեմպերով: Անվարան կարելի է ասել, որ ներկայումս երկրում, մասնավորապես Թեհրանում և այլ խոշոր քաղաքներում, շինարարությունը ստացել է անօրինակ թափ ու ծավալ: Կառուցվում են մեծ թվով բնակելի և հասարակական շինություններ, արդյունաբերական օբյեկտներ, հիդրոտեխնիկական կառույցներ և այլն: Լայնորեն կիրառվում են նոր ու թեթև շինանյութեր: Չնայած շինարարական բազմապիսի քարերի առկայությանը (մարմար, տուֆ, բազալտ, գրանիտ և այլն), Իրանում շենքերի կառուցման համար առավելությունը տրվում է թրծված աղյուսին: Իրանական ճարտարապետներին հաջողվել է ստեղծել սեփական ազգային ոճ:

ԻԻՀ-ում ճարտարապետական հուշարձանները գտնվում են պետության հսկողության ներքո (այդ թվում նաև միջնադարյան հայկական ճարտարապետական հուշարձանները):

Իրանում հին հայկական ճարտարապետությունը գլխավորապես ներկայացված է Նոր Ջուղայում, որտեղ կան XVII դարի մի շարք ուշագրավ ճարտարապետական կոթողներ (Ս. Ամենափրկչյան վանքը, Բեթղեհեմի եկեղեցին, Ս. Ստեփանոս, Ս. Սարգիս, Ս. Գևորգ, Ս. Աստվածածին, Ս. Մինաս և այլ եկեղեցիներ, հայ վաճառական-խոջաների սպարանքներ և այլն):

Հետպատերազմյան տարիներին Իրանի ճարտարապետական անդաստանում գործում էին մեծ թվով տաղանդաշատ հայ ճարտարապետներ: Ճարտարապետների այդ ավագ սերնդի մեջ աչքի էին ընկնում Պապիկ Թովմասյանը, Հարփիկ Թամրազյանը, Պոլ Աբգարը և ուրիշներ: Ներկայումս իրանահայ ճարտարապետական միտքը ներկայացված է բազմաթիվ տաղանդաշատ ճարտարապետներով:

ԿԻՆՈՆ

Կինեմատոգրաֆիան Իրանում սկսել է զարգանալ 20-ական թվականների վերջերին:

Մինչև իսլամական հեղափոխությունը Իրանը հեղեղված էր արևմտյան, առավելապես ամերիկյան ֆիլմերով: Այդ շրջանում կինոարտադրանք էին տալիս նաև իրանական կինոընկերությունները:

Հեղափոխությունից հետո արևմտյան ֆիլմերի հախուռն ներթափանցումը Իրան կասեցվեց, իսկ ապա ընդհանրապես դադարեցվեց: Կինոն ևս ենթարկվեց «իսլամական մշակութային հեղափոխության» ընդհանուր օրինաչափություններին:

ԻԻՀ-ում կինոյի հարցերով զբաղվում է Իսլամական առաջնորդության և մշակույթի նախարարությունը, որը և վերահսկում է ներմուծվող ֆիլմերի գործը:

ԻԻՀ-ը մեծ թվով ֆիլմեր է ներմուծում Չինաստանից, Ռուսաստանից և երրորդ աշխարհի երկրներից: Եվրոպայից ու Ճապոնիայից գլխավորապես ներմուծում է գիտա-ուսումնական ֆիլմեր:

Իրանում գործում է «Ֆարաբի կինոֆոնդը» («Բոնյադ-ե սինեմայ-ե Ֆարաբի»), որը ոչ միայն ֆինանսավորում է իրանական ֆիլմերի նկարահանումները, այլև իրականացնում է ֆիլմերի նկարահանման աշխատանքներ: Գոյություն ունեն նաև ֆիլմերի նկարահանման 19 ձեռնարկություններ, որոնցից 5-ը պետական են, 14 մասնավոր:

Ֆիլմեր է նկարահանում նաև Իրանի պետական հեռուստատեսությունը.

1948 թվականից Իրանում գործում է Իրանական ֆիլմերի ազգային արխիվը («Ֆիլմխանե-ե մելլի-ե Իրան»): Այն 1973թ. վերանվանվեց ֆիլմերի միջազգային ֆեդերացիայի արխիվի (NIFA).

ԻԻՀ-ում գործում են կինոնկարահանողների պատրաստման 5 դպրոցներ: 1982 թվականից պարսկերեն և անգլերեն լեզուներով լույս են տեսնում կինոպարբերականներ: Յուրաքանչյուր տարի ԻԻՀ-ում տեղի են ունենում կինոֆեստիվալներ, որոնցից առավել կարևորը «Միջազգային ֆաջր ֆիլմ» ֆեստիվալն է, որը տեղի է ունենում յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին: Միաժամանակ կրթության նախարարությունը ամեն տարի հոկտեմբերին կազմակերպում է գիտահանրամատչելի ֆիլմերի ֆեստիվալներ: Իսկ Մոսթազաֆան ֆոնդի մշակութային բաժինը տարեկան մեկ անգամ կինոֆեստիվալներ է կազմակերպում Թավրիզում:

Իրանական ֆիլմերը մասնակցում են նաև Մոսկվայի, Կաննի, Վենետիկի, Լոկարնոյի, Բեռլինի, Լոնդոնի, Բերգամոյի (Իտալիա), Սիդնեյի, Ստոկհոլմի, Բիլբաոյի, Ֆլորենցիայի, Կրակովի, Լեյպցիգի և այլ քաղաքների տարեկան կինոֆեստիվալներին:

Իրանական կինոարվեստի կազմավորման ու զարգացման գործում, որպես բեմադրիչներ ու դերասաններ, նշանակալից դեր՝ են խաղացել իրանահայ մի շարք արվեստագետներ՝ Արամայիս Աղամալյանը, Արմանը, Սամվել Խաչիկյանը, Արփիկ Բաղդասարյանը, Արփի Հովհաննիսյանը և ուրիշներ:

Իրանում «Ամբի-Ռաբի» անունը կրող առաջին համր կինոկատարերգությունը նկարահանվել է 1920թ., կինոբեմադրիչ Հովհաննես Օհանյանի կողմից: Հենց նա էլ Իրանում հիմնադրել է կինոարվեստի առաջին դպրոցը:

50-ական թվականների առաջին կեսին իրանական կինոարվեստի երկնակամարում սկսեցին փայլել երկու խոշոր արվեստագետներ՝ Մաջիդ Մոհսենին և Սամվել Խաչիկյանը: Արվեստագետ Ալի Նաքաֆին նշում է, որ Իրանում կինոարվեստի սկզբնավորումը պետք է վերագրել Սամվել Խաչիկյանին:

ԹԱՏՐՈՆԸ

1979թ. հեղափոխությունից հետո թատրոնների թիվը որոշ չափով կրճատվել է, ենթարկվելով «Իսլամական մշակութային հեղափոխության» օրենքներին: Այժմ Թեհրանում գործում է 11 թատրոն: Դրանցից ամենանշանավորը Վահդատ (Նախկին Ռուդաքի) թատրոնն է, որը սկզբնապես բացվել է որպես օպերայի և բալետի թատրոն: Նշանավոր է նաև Քաղաքային թատրոնը («Թեաթր-ե շահր»): Թատրոններ կան նաև խոշոր քաղաքներում՝ Մեշհեդում, Շիրազում, Սպահանում և Թավրիզում:

Երկրում գործում են նաև թատերական ուսումնական հաստատություններ:

Հայ թատրոնը Իրանում սաղմնավորվել է XIX դարի վերջին. 70-80-ական թվականներին Թավրիզում, Թեհրանում և Նոր Ջուղայում կազմակերպվում են դպրոցական բեմադրություններ և տնային թատերական ներկայացումներ: 1881թ. Թեհրանում հիմնվում է «Հայ թատրասիրաց ընկերությունը»: Ռաշտում, Թավրիզում և այլ քաղաքներում կազմակերպվում են սիրողական խմբեր, որոնց գլխավորապես մասնակցում էին Կովկասից եկած հայ դերասանները:

Իրանահայ համայնքի թատերական կյանքի աշխուժացմանը մեծապես նպաստել են Իրան հյուրախաղերի եկած հայ բեմի նշանավոր վարպետ-

ներ Աբելյանը, Մանվելյանը, Սիրանույշը, Ոսկանյանը, Արմենյան-Դուրյանը, Ժամենը և ուրիշներ:

Իրանահայ թատրոնի զարգացման գործում արդյունավետ ներդրում ունի տաղանդավոր հայ դերասան Վահրամ Փափազյանը, որը 1934թ. ժամանելով Իրան օգնություն է ցուցաբերել հայ և պարսիկ դերասաններին՝ բարձրացնելու իրենց կատարողական արվեստը:

Այդ բոլորով հանդերձ պետք է խոստովանել տակայն, որ իրանահայ թատրոնը, նույնիսկ մեր օրերում, չի բարձրացել սիրողական մակարդակից:

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՈՒԹՅՈՒՆԸ

Իրանը հնագույն քաղաքակրթության երկիր է: Միաժամանակ նրա տարածքը աչքի է ընկնում բնակլիմայական պայմանների մեծ բազմազանությամբ: Հետևաբար զբոսաշրջիկության համար այդ երկիրն ունի բավականաչափ հետաքրքիր վայրեր: Սակայն զբոսաշրջիկության ինդուստրիան չի կարողանում արձանագրել մեծ հաջողություններ: Դրա պատճառներից մեկն էլ կայանում է նրանում, որ այդ երկիրը գտնվում է Արևմուտքի կողմից «զբոսաշրջիկային շրջափակման մեջ»:

ԻՐԱՆԻ ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Ժամանակակից Իրանում հիմնականում օգտագործվում են երեք օրացույցներ. արևային հիջրայի իրանական օրացույց, լուսնային հիջրայի մահմեդական օրացույց և Գրիգորյան օրացույց: Մինչև 1925թ. շահական արքունիքում տարածված էր նաև կենդանական ցիկլի լուսնային-արևային օրացույցը:

Պաշտոնական օրացույցը՝ դա արևային հիջրայի օրացույցն է: Այն օգտագործվում է երկրի քաղաքացիական և պետական կյանքի բոլոր բնագավառներում: Լուսնային հիջրայի օրացույցից առավելապես օգտվում է մահմեդական հոգևորականությունը: Գրիգորյան օրացույցը տարածված է գլխավորապես արևմտաևրոպական լեզուներով հրատարակություններում:

Ներկայումս օգտագործվող արևային հիջրայի օրացույցը օգտագործման մեջ է մտցվել 1925թ. Մեջլիսի ընդունած հրամանագրով: Դա այսպես կոչված Ֆարսի-յե Շամսի (արևային-պարսկական) օրացույցն է, որը ինչպես նշվեց, հանդիսանում է Իրանական պետության պաշտոնական օրացույցը: Ըստ այդ օրացույցի, նոր տարին սկսվում է օրերի գարնանային հավասարեցման առաջին օրը (մարտի 21-ին): Հասարակ տարին ունի 365 օր, նահանջ տարին՝ 366: Տարին բաղկացած է 12 ամիսներից, առաջին վեց ամիսները ունեն 31-ական օր, հետևյալ 5 ամիսները՝ 30-ական օր և վերջին ամիսը հասարակ տարվա ընթացքում ունի 29 օր, իսկ նահանջ տարում՝ 30 օր: Տարին սկսվում է գարնանային գիշերահավասարման օրվանից: Ամենի հաճախ այդ օրը լինում է մարտի 21-ը, իսկ առանձին տարիներին՝ մարտի 20-ը կամ 22-ը:

Արևային հիջրայի ժամանակակից իրանական օրացույցի ամիսների անվանումը և ամիսների ընթացքում օրերի թիվը.

	Օրերի թիվը ամսվա ընթացքում	Օրերի թիվը տարվա սկզբից մինչև ամսվա վերջը:
1. Ֆարվարդին	31	31
2. օրդիբեհեշտ	31	62
3. խորդադ	31	93
4. թիր	31	124
5. մորդադ	31	155
6. շահրիվար	31	186
7. մեհր	30	216
8. աբան	30	246
9. ազար	30	276
10. դեյ	30	306
11. բահման	30	336
12. էսֆանդ	29 (30)	365 (366)

Արևային հիջրայի իրանական արևային օրացույցի ամիսները բաղկացած է յոթօրյա շաբաթից, որը սկսվում է շաբաթ օրվանից: Շաբաթվա պաշտոնական ոչ աշխատանքային օրեր են համարվում հինգշաբթին և ուրբաթը:

Շաբաթվա օրերի անվանումը.

շաբաթ	շամբե
կիրակի	եք-շամբե
երկուշաբթի	դո-շամբե
երեքշաբթի	սե-շամբե
չորեքշաբթի	չահար-շամբե
հինգշաբթի	փանջ-շամբե
ուրբաթ	ջում'է

Որպեսզի իրանական արևային հիջրեթի օրացույցի թվականը վերածվի գրիգորյան օրացույցի թվականին, անհրաժեշտ է.

1. արևային հիջրայի օրացույցով տարիների թվին ավելացնել 621.

2. Սղյուսակով որոշել թվականի (օրը և ամիսը) հերթական համարը՝ ըստ նշված արևային հիջրայի օրացույցի:

3. Պարզել, գրիգորյան օրացույցով որ ամսին և օրվան է պատկանում ըստ աղյուսակի գտնված հերթական թիվը: Դա էլ հենց կլինի որոնվող թիվը:

Որպեսզի գրիգորյան օրացույցի թիվը փոխադրվի իրանական արևային հիջրայի օրացույցի համապատասխան թվին, անհրաժեշտ է.

1. Գրիգորյան օրացույցի տարիների թվից հանել 621 թիվը:

2. Որոշել գրիգորյան օրացույցի թվականի հերթական համարը, այսինքն ամիսը և ամսաթիվը:

3. Գտնված թվից (այսինքն հերթական համարից) հանել այն օրերի թիվը, որոնք անցել են հունվարի 1-ից մինչև մարտի 21-ը (այսինքն նահանջ տարում 79 կամ 80 օր):

4. Աղյուսակով որոշել որոնվող թվականի հերթական թիվը, որը համապատասխանում է ստացված մնացորդին:

Հիջրեթի արևային օրացույցը, ինչպես և հիջրեթի լուսնային օրացույցը, լայն տարածում ունեն Իրանում: Մինչև 1925թ. լուսնային հիջրեթի օրացույցը հանդիսանում էր Իրանի պաշտոնական օրացույցը: Ներկայումս բոլոր մահմեդական տոները և սգո օրերը նշվում են լուսնային հիջրեթի օրացույցով: Այդ օրացույցով են հաճախ որոշվում նաև այն իրադարձությունները, որոնք կապված են անցյալում մահմեդական երկրների և կազմակերպությունների գործունեության հետ: Պարսկական միջնադարյան պատմագրության մեջ ևս թվականները նշվում են ըստ այդ օրացույցի:

Պետք է նշել, որ իրանական լուսնային հիջրեթը մասնակիորեն տարբերվում է արաբական լուսնային հիջրեթից: Արաբական լուսնային հիջրեթում սահմանված է երեսուն տարվա ցիկլերում նահանջ տարիների խստիվ հերթականություն: Յուրաքանչյուր ցիկլում 2, 5, 7, 10, 13, 16, 18, 21, 24, 26, 29 տարիները հանդիսանում են նահանջ տարիներ: Բացի այդ, բոլոր կենտ ամիսները ունեն 30-ական օր, իսկ զույգ ամիսները 29 օր, նահանջ տարիներին վերջին զույգ ամիսը ունի 30 օր: Իրանական լուսնային հիջրեթում նահանջ տարիների սահմանման և ամիսների մեջ օրերի քանակի հերթականության այդ կարգից հրաժարվել են: Միևնույն ամիսը տարբեր տարիներին կարող է ունենալ և 29 և 30 օր: Իրանական լուսնային հիջրեթի երեսնամյա ցիկլերում նահանջ տարիների հերթականությունը կայուն ու մշտական չէ և առանձին ցիկլերի համար որոշվում է առանձին:

Լուսնային հիջրեթի տարին հավասար է 354 օրվա՝ 29 կամ 30 օրերից բաղկացած 12 ամիսների: Ամիսների անվանումներն են. մուհարրամ, սաֆար, ռաբի-ուլ-ավվալ, ռաբի-ուլ-ախիր (կամ ռաբի-ուլ-սանի), ջամի-ուլ-ավվալ, ջամի-ուլ-ախիր, ռաջաբ, շաաբան, ռամազան, շավվալ, զու-լ-քաադե և զու-լ-հիջե:

Երեք տարվա ընթացքում լուսնի սինոդիկ պտույտից լուսնային հիջրեթի հետ մնալու պատճառով կուտակվում են «ավելորդ» օրեր, որոնք գումարվում են այսպես կոչված արտակարգ տարիների վերջին ամսին, որոնք համապատասխանում են մեր դարաշրջանի նահանջ տարիներին:

33 լուսնային տարիները համապատասխանում են 32 արևային տարիներին: Մահմեդական լուսնային օրացույցից ամսաթիվը գրիգորյան օրացույցի ամսաթվին և հակառակը փոխադրելու համար գոյություն ունեն հատուկ համատեղանակացուցային աղյուսակներ:

Որպեսզի իրանական լուսնային հիջրեթի տարեթիվը մոտավոր ձևով փոխադրվի գրիգորյան օրացույցի, կարելի է օգտվել հետևյալ բանաձևից.

$$S = Հ - \frac{Հ}{33} + 622$$

Որպեսզի ամսաթիվը մեր թվականությունից փոխադրվի լուսնային հիջրեթի, պետք է օգտվել հետևյալ բանաձևից.

$$Հ = S - 622 + \frac{S - 622}{32}$$

որտեղ S-ն՝ գրիգորյան թվականության տարին է, իսկ Հ-ն լուսնային հիջրեթինը:

Այս բանաձևերից օգտվելու դեպքում պետք է հիշել, որ լուսնային հիջրեթի վերջին ամիսները կարող են ընկնել հաջորդ տարվան:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Հայ-իրանական առնչությունները իրենց արմատներով գնում են դարերի խորքը: Հայերի և իրանական ժողովուրդներից մեկի՝ մեդացիների միջև առաջին շփումները վերաբերում են մ.թ.ա. 6-րդ դարին: Հույն պատմիչ Քսենոփոնը իր «Կյուրոպեդիայում» հաղորդում է, որ հայերը մեդացիների հարևաններն են, իսկ նրանց երկիրը՝ Արմենիան Մեդիայից կախյալ երկիր էր: Քսենոփոնը չի հիշատակում հայկական թագավորի անունը, սակայն խոսում է նրա որդի Տիգրանի մասին, որը մեդական թագավոր Աստիագեսի (մ.թ.ա. 584-553թ.թ.) պալատում աքեմենյան Կյուրոսի հասակակիցն ու զինակիցն էր: «Կյուրոպեդիայից» նաև տեղեկանում ենք, որ Մեդիայի մղած պատերազմների ժամանակ հայ թագավորը պարտավոր էր որպես կրտսեր դաշնակից մեդական թագավորին տրամադրել իր զինվորական ուժի կեսը, այսինքն 20.000 հետևազոր և 4.000 հեծելազոր: Բացի այդ, նա պետք է իր «ավագ դաշնակցին» հարկ վճարեր 50 տաղանդի չափով:

Պատմահայր Մովսես Խորենացու բերած տվյալները լրացնում են այս տեղեկությունները: Նա հաղորդում է, որ Կյուրոսի և Տիգրան Երվանդյանի մտերմությունը խիստ անհանգստացնում է Աստիագեսին կամ Աժդահակին: Ըստ ավանդության, հենվելով Կյուրոսի վրա, Տիգրանը ապստամբում է Աժդահակի դեմ, ազատում է նրան և Հայաստանը ազատագրում մարերի գերիշխանությունից: Շուտով Կյուրոսը, որը Աստիագեսի զորապետներից էր, ապստամբում է նրա դեմ և եռամյա պայքարի ընթացքում (մ.թ.ա 553-550թ.թ.) կործանում մեդական պետությունն ու դառնում Հին պարսկական պետության (մ.թ.ա. 550թ.) հիմնադիր, որը հայտնի է Աքեմենյան պետություն անունով:

Մարական թագավորության անկումից հետո Հայաստանը միաժամանակ վայելել է անկախություն: Սակայն շուտով Կյուրոսը Արմենիայի թագավորից պահանջում է կատարել իր վասալական պարտականությունները, մասնավորապես զորք ուղարկել իրեն և վճարել սահմանված հարկերը: Իր այդ պահանջն իրականացնելու համար մ.թ.ա 546թ. Կյուրոսը բանակ է շարժում դեպի Հայաստան և այն ենթարկում իրեն: Այստեղ հայկական զորքը, որպես պարսկական բանակին օժանդակող զինական ուժ, իր մասնակցությունն է բերում պարսիկների ռազմական արշավանքներին:

Կան բազմաթիվ վկայություններ այն մասին, որ ինչպես մարերի, այնպես էլ աքեմենյան թագավորների օրոք, հայերը մասնակցում էին տերության վարած պատերազմներին: Այսպես, հայտնի է, որ մ.թ.ա. 539թ. Կյուրոսի կազմակերպած արշավանքի ժամանակ Բաբելոնի դեմ, մասնակցել են նաև հայկական զորքերը: Հույն պատմիչ Հերոդոտը վկայում է, որ մ.թ.ա. 480 թվականին դեպի Հունաստան կազմակերպած Քսերքսեսի արշավանքին մասնակցել են նաև հայերը: Մանրամասնելով այդ իրողությունը պատմիչը նշում է, որ հայերը զինված են եղել փռյուգացիների նման: Անտիկ շրջանի մեկ այլ պատմիչ՝ Կուրտիոս Ռուֆոսը հայտնում է, որ մ.թ.ա. 331թ. Ասորեստանում, Գավգամելա կոչվող բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Ալեքսանդր Մակեդոնացու դեմ կռվող Դարեհ III Կոդոմայի զորաբանակում գտնվել է հայկական երկու զորամաս՝ բաղկացած 40.000 հետևազորից և 7.000 հեծելազորից: Հիշատակվում է նաև այդ զորամասերի հրամանատարների անունները՝ Օրոնտես (Երվանդ) և Միթրաուստես (Միհրվահիշտ):

Բնական է, որ Իրան ուղարկված հայկական զինվորական ստորաբաժանումները առանձին վայրերում ունեցել են իրենց բանակատեղիները, որոնք հանդիսացել են հայկական բնակավայրեր: Տեսակետ կա նաև այն մասին, որ Հայաստանի սահմաններից ժամանակավորապես դուրս գտնվող այս հայկական զորամասերից բացի, Աքեմենյան Իրանում գոյություն են ունեցել նաև առանձին վայրերում ցրված ոչ մեծ հայկական մշտական գաղթօջախներ: Հավանական է, որ դրանց բնակչության մի ստվար զանգվածը հանդիսացել է վաճառականներ, արհեստավորներ և այլն:

Հայ-իրանական առնչությունների դրվագները Կյուրոսի որդի Կամբյուսեսի, ինչպես նաև մոգ Գաումատայի կարճատև իշխանության օրոք

մեզ հայտնի չէ: Բայց դրա փոխարեն վերին աստիճանի ուշագրավ տեղեկություններ են մեզ հասել Դարեհ Ա-ի տիրապետության շրջանում հայ-իրանական հարաբերությունների վերաբերյալ: Այդ տեղեկությունները մենք քաղում ենք Դարեհ Ա-ի Բեհիստունյան արձանագրությունից, որը բացառիկ կարևոր աղբյուր է հայերի և իրանցիների շփումները հավաստի կերպով լուսաբանելու տեսակետից: Ի դեպ, մ.թ.ա. 6-րդ դարի այդ բնեռագիր արձանագրությունը առաջին գրավոր հիշատակարանն է, որտեղ խոսվում է «Ամինաս» երկրի մասին որպես առանձին քաղաքական միավորի: Աքեմենյանների Պերսեպոլիս մայրաքաղաքի խորաքանդակներում այսօր էլ կարելի է տեսնել հայ մարդու պատկերումը, որն ինքնին մի եզակի ու անկրկնելի իրողություն է:

Ենթադրվում է, որ հայերը կայսրության մյուս ժողովուրդների նման ողջունել են մոգ Գաումատայի քաղաքականությունը, հատկապես նրա համար, որ նա երեք տարով վերացրեց հարկերը և զորքի մատակարարումը, որը ծանր բեռ էր կայսրության ժողովուրդների համար: Ուստի պատահական չէ, որ երբ Դարեհը սպանեց Գաումատային և բարձրացավ Աքեմենյան հարստության գահի վրա, տերության ժողովուրդները, այդ թվում և հայերը, ապստամբեցին: Այդ ապստամբության ճնշման դրվագները վերարտադրված են Բեհիստունյան արձանագրությունում, որի մանրամասն ձևակերպումներից երևում է, որ հայկական ապստամբությունը ծավալվել է հուժկու թափով և Աքեմենյանների տիրապետության համար ստեղծել է մեծ վտանգ: Այլապես Դարեհը ստիպված չէր լինի Հայաստան ուղարկել երկու զորավար, որոնք հինգ անգամ ստիպված են եղել իրենց ուժերը չափելու ապստամբների հետ: Հայաստանի հպատակեցումը Դարեհը հանձնարարել էր ծագումով հայ մի զորավարի՝ Դադարշիշին, որը Հայաստանում ճակատամարտ է տալիս (մ.թ.ա. 522 թ.) հայերին, սակայն չարաչար պարտվում է: Դրությունը փրկելու համար Դարեհը Հայաստան է ուղարկում պարսիկ մի զորավարի Վահումիսա անունով, որը հայերի հետ ընդհարվում է Հայաստանի սահմաններից դուրս՝ Հյուսիսային Միջագետքի Իզալա կոչված վայրում: Երկրորդ վճռական ճակատամարտը արդեն տեղի է ունենում Հայաստանում, որով հայերի դիմադրությունը կոտրվում է և երկիրը կրկին հնազանդեցվում պարսիկներին (ըստ երևույթին մ.թ.ա. 521 թ.):

Ժամանակագրական նոր մեկնաբանության համաձայն, ոչ թե Դադարշիշն է սկսում ապստամբության ճնշման գործը, իսկ Վահումիսան

այն ավարտում է, այլ երկու զորավարները իրարից անկախ են վարում պատերազմական գործողությունները հայերի դեմ, ընդորում տարբեր ուղղություններով, մեկը Ասորիքից, մյուսը՝ Մարաստանից:

Գիտության մեջ հայտնվել է այն կարծիքը, որ ընդհանրապես նվաճված երկրների նկատմամբ Կյուրոսի վարած քաղաքականությունը աչքի է ընկել հանդուրժողականությամբ, իսկ մասնավորապես Հայաստանի նկատմամբ խաղացել է որոշակի դրական դեր:

Հայտնվել է նաև այն կարծիքը, որ Աքեմենյան պետության համակարգում հայերն ունեցել են առանձնահատուկ արտոնյալ վիճակ, որի պատճառները առավելապես քաղաքական էին: Աքեմենյանները հանձին հայերի տեսնում էին այն ուժը, որ կարող էր պատնեշ հանդիսանալ հյուսիսային ցեղերի դեմ և զսպել մարերին, կասեցնելով նրանց ձգտումը շարժվելու դեպի հարավ՝ Աքեմենյան պետության տարածքները: Որոշակի փաստեր կան, որոնք գալիս են ապացուցելու, որ ամբողջ Հայկական լեռնաշխարհը և Քուռ-Արաքսի ավազանում գտնվող տարածությունը, մինչև այժմյան Ղարաբաղի և Մուղանի դաշտերը, իսկ քիչ ավելի ուշ նաև Կասպից ծովի ափերը, պարսկական արքունիքը վստահել էր հայ ռազմիկ ցեղապետերին ու սատրապներին, որպեսզի նրանք պահպանեն հյուսիսային սահմանները:

Պատմաբան Մորուս Հասրաթյանը վերոհիշյալ հարցերի մասին առում է հետևյալ ուշագրավ դիտումը. «Հայաստանը երկու հարյուր տարի մնալով պարսից կայսրության կազմի մեջ որպես սատրապություններից երկուսը (13-րդ և 18-րդ) ունեցավ բնակչության զգալի քանակական աճ, զգալի տարածում և հայ բնակչության էթնիկ ավելի ուժեղ համախմբում: Հայ բնակչության տարածումը դեպի Արևելք և նրա տնտեսական, մշակութային կյանքի վերելքը, անշուշտ, ավելի արագ կատարվեց և ավելի մեծ չափերով, քան նախորդ հարյուրամյակի ընթացքում (Ք.Ա.612-520 թթ.)»: Անվանի պատմաբանի կարծիքով, շնորհիվ պարսկական պետականության բարյացակամ վերաբերմունքի դեպի Հայաստանը, վերջինս հնարավորություն ստացավ հետագայում դառնալու Հռոմից հետո երկրորդ հզոր տերությունը: «Սա պարտական էր ոչ միայն Արտաշեսյան հարստության հզոր գահակալների պետական իմաստությանը, հանճարին ու քաջերին, այլ այդ հարստության անմիջական նախորդը հանդիսացող, անտարակույս նաև ժառանգական նախորդը հանդիսացող, չորս հարյուրամյա երվանդունի հարստության

գործադրած քանքերին, մի հարստության, որի գոյության երկու երրորդը ընթացավ պարս-իրանական հզոր աշխարհակալության հովանու տակ՝ գտնվելով նրա կազմի մեջ»,— եզրակացնում է Մորուս Հասրաթյանը:

Պետք է ուշադրությունից դուրս թողնել նաև այն կարևոր հանգամանքը, որ Հայաստանի երվանդունի թագավորները ազգակցական կապեր ունեն Աքեմենյանների տոհմի հետ: Սորաբոնը երվանդունիներին սերված էր համարում Դարեհ Ա-ի զինակիցներից մեկից՝ Հիդարնեսից:

Մ.թ.ա. շուրջ 250 թվականին արևելքից պարների ցեղը ներխուժում է Իրանի տարածքը և հաստատվում Կասպից ծովի հարավ-արևելքում: Այդ ցեղի առաջնորդ Արշակը մ.թ.ա. 247 թվականին հայտարարվում է թագավոր: Այնուհետև պատմական ասպարեզ է իջնում Միհրդատ Ա Մեծը (մ.թ.ա. 171-138թթ.), որը դառնում է պարթևական աշխարհակալության հիմնադիր: Պարթևների նվաճողական նկրտումները անխուսափելիորեն ծավալվելու էին նաև հարևան Հայաստանի կողմը: Հայոց թագավոր Արտավազդի դեմ պատերազմի ժամանակ հասնելով հաջողության, պարթևները պատանդ են վերցնում թագաժառանգ Տիգրանին:

Սակայն Հայաստանի արագ հզորացումը և նրա աշխարհակալական ձգտումների վերելքը, որոնց իրականացնողը եղավ Տիգրան Բ-ն, պատնեշ կանգնեցրեց պարթևների լայնահուն տարածական ձգտումների առջև: Տիգրան Բ-ի հաղթական զորքերը պարթևներից հետ խլեցին հռչակավոր «Յոթանասուն հովիտները», այնուհետև ներխուժեցին Մարաստան և հասան մինչև Էկբատան, որը պարթևական տիրակալի նստավայրերից մեկն էր: Միաբեկված պարթևները հրաժարվեցին նաև Հյուսիսային Միջագետքի իրենց տիրույթներից: Պարթևական թագավոր Գոդերզը ծայր հուսահատության հասած հրաժարվում է նաև իր «արքայից-արքա» տիտղոսից, որն այնուհետև անցնում է հայոց արքային՝ Տիգրանին:

Սակայն պարթևական պետության վայրէջքը տևական բնույթ չունեցավ: Ընդամենը մի քանի տասնամյակ անց, հատկապես պարթև Հրահատ Գ-ի տիրապետության շրջանում, սկսեցին դրսևորվել պարթևների աշխարհակալական ձգտումների նոր վերելքի առաջին նշանները, որի նաև առաջին հարվածները ընդունողը պետք է լիներ Հայաստանը:

Արտաշեսյան հարստության անկումից հետո Հայաստանն ընկնում է արտաքին քաղաքական բուֆերային վիճակի մեջ և ներգրավվում

պարսկա-հռոմեական պայքարում մրցակցության մեջ: Ընդորում, գտնվելով Արևելքի ու Արևմուտքի շահերի բախման կենտրոնում, Հայաստանը հռոմա-պարթևական մրցակցության շրջանում ևս, գերազանցապես շարունակում էր ապրել Իրանի քաղաքական, կուլտուրական շահերով: Մասնավորապես հայկական ավագանու մեծագույն մասը քաղաքականապես հակված էր դեպի Իրանը՝ ընտրելով պարթևական կողմնորոշումը: Այդ ընտրության մեջ էականը միայն այն չէր, թե Հայաստանի համար որ վտանգն է ավելի մեծ՝ արևելյանը թե արևմտյանը: Թերևս որոշիչ դեր կատարեց այն հանգամանքը, որ Հռոմի գերիշխանությունը ավելի դաժան ու խիստ էր, քան պարթևներինը: Վերջիններս իրենց հպատակ ժողովուրդների նկատմամբ կիրառում էին հելլենիստական պետություններից, հատկապես սելևկյաններից ժառանգած կառավարման ձևերը, որոնց մեջ մեծ տեղ էր հատկացվում ինքնավարության սկզբունքին: Բացի այդ, մշակույթի, կրոնի, բարքերի, տնտեսաձևի, պետական կառուցվածքի և բազմաթիվ այլ տեսակետներից, հայերը շատ ավելի մոտ էին պարթևներին: Իզուր չէ, որ Տակիտոսը նշում է, որ «հայերը տեղադրությամբ և բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ էին կանգնած և խառնված էին նրանց հետ ամուսնություններով»:

Պատահական չէ, որ հայ-պարթևական այդ հարաբերությունները իրենց ակնառու դրսևորումներն են ունեցել ամենաբազմապիսի բնագավառներում. թե՛ լեզվական սերտ կապերի, թե՛ ընկերային բարքերի ու սովորությունների, թե՛ հոգևոր-մշակութային, էթնիկական, կրոնական, պատմական ամենատարբեր իրողությունների մեջ: Հիրավի, պարթևական պետության մշակութային հուժկու ազդեցությունը իր խորը դրոշմն է թողել նրա բոլոր հարևանների, այդ թվում նաև հայերի վրա: Պարթևական քաղաքակրթության խոշոր ազդեցությունը հայկականի վրա վկայված է բազմաթիվ փաստերով: Պարթևական շրջանում հայոց լեզուն հարստացավ պարսկական բազմաթիվ փոխառություններով: Հայտնի է նաև, որ հայկական գրերի ստեղծումից առաջ Հայաստանի պետական ու հասարակական կյանքում որպես գրավոր հաղորդակցման միջոց հունական գրին զուգահեռ օգտագործվել է պարսից գիրը, թերևս նաև պարսկերեն լեզուն: Պարսկերենը հունարենի հետ միասին եղել է հայ դպրոցի ու եկեղեցու գրական լեզուն, այն նույնիսկ պաշտոնական գործածության մեջ է եղել հայոց արքունիքում և տիրապետող բարձր

խավերի շրջանում: Այդ մասին վկայում է պատմահայր Մովսես Խորենացին: Սակայն անվիճելի է նաև այն իրողությունը, որ հայերն առհասարակ հանդես չեն եկել լոկ այս կամ այն քաղաքակրթությունը ընկալողի սոսկ կրավորական դերում, այլ իրենց տևական պատմական զարգացման ճանապարհին հաղորդակից լինելով տարբեր ժողովուրդների հետ, իրենց հերթին հախուռն թափով մասնակցել են գաղափարների խաչաձևման, հոգևոր-մշակութային արժեքների կերտման և քաղաքակրթությունների մշակման գործին, դրանով իսկ նպաստելով միմյանց ընդհանուր առաջադիմությանը:

Հայ արևելագետների կարևորագույն խնդիրներից մեկն է համակողմանի ուսումնասիրության ենթարկել հայկական մշակութային ազդեցությունը պարթևականի վրա, որովհետև հակառակը կատարվել է բավարար խորությամբ:

Հայաստանի պարթևական կողմնորոշումը ընդհանուր առմամբ (բացառությամբ առանձին միջադեպերի) շարունակվեց այնքան ժամանակ, որքան հարատևեց պարթևական պետությունը, այսինքն՝ մինչև մ.թ. 226 թվականը:

Հայ-իրանական փոխհարաբերություններն ու շփումները առանձնակի սերտ բնույթ ունեին Հայաստանում պարթևական ծագում ունեցող Արշակունիների դինաստիայի տիրապետության շրջանում (մ.թ. 63-428թ.թ): Հայտնի է, որ պարթևական աշխարհակալության միասնությունն ամրապնդելու համար պարթևական տիրակալներն աշխատում էին ենթակա թագավորությունների գահերի վրա բարձրացնել պարթև Արշակունիների հարստության ներկայացուցիչներին: Ըստ այնմ ծնունդ առավ Հայաստանը Արշակունիների թագավորության երկրորդ պետություն դարձնելու քաղաքական ծրագիրը: Նրա իրագործումը հեշտանում էր նրանով, որ այն կատարելապես համապատասխանում էր Հայաստանում տիրող տրամադրություններին՝ համակրանք պարթևների հանդեպ և ծայրահեղ ատելություն դեպի Հռոմը: Այսպիսով, պարթևական Վաղարշ Ա թագավորը (51-75թթ.) Մեծ Հայքի թագավոր է կարգում Տրդատ Ա Արշակունուն, կանխավ խոստանալով վերջ տալ գահակալական կռիվներին և երկրում ստեղծել կայուն իշխանություն: Հատկանշական է, որ հայկական գահի վրա Տրդատ Ա-ի նշանակման լուրը հայ ավագանու և ժողովրդի կողմից ընդունվում է ցնծությամբ: 54 թվականին Տրդատը, պարթևական զորքի գլուխ անցած, առանց դիմադրության հանդիպելու մտնում է Հայաստան:

Ի պատասխան դրա, մրցակից հռոմեական կայսրությունը 58-59 թվականներին Կորբուլոնի գլխավորությամբ մեծ զորաշարժ է կազմակերպում դեպի Հայաստան՝ պատժիչ նպատակներով: Հռոմեական բանակը գրավում է Մեծ Հայքի թագավորությունը և ավերում Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը

Սակայն 66թ. Տրդատ Ա Արշակունին Հռոմում Ներոն կայսեր կողմից թագադրվում է որպես հայոց թագավոր և Հայաստանում վերջնականապես հաստատվում է պարթև Արշակունիների հարստությունը, որը բռնում է հայացման ուղին: Աղբյուրների վկայությամբ, Տրդատ Ա-ը հայերի համար այնքան է հարազատ եղել, որ ժողովրդական զրույցներում նրա կերպարը համաձուլվել է Արտաշես Ա-ի կերպարին:

Այսպիսով Մեծ Հայքը, Պարթևստանից հետո, դառնում է Արշակունյաց երկրորդ թագավորությունը: Այս փաստը ինքնին գալիս է վկայելու, որ Հայաստանում Արշակունյաց հարստության տիրապետության մի քանի դարերի ընթացքում հայ-իրանական հարաբերությունները շարունակում էին աշխուժորեն զարգանալ: Այդ շփումների ու փոխազդեցությունների մասին ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը գրում է. «Հայաստանը, որը հին ժամանակներից ի վեր ներգրավված էր պարսկական պետությունների համաշխարհային քաղաքական ոլորտի մեջ, հարյուրամյակներ շփվում էր պարսիկների հետ միևնույն կուլտուրական աշխարհում: Այն ժամանակվանից, երբ Արշակունիները գրավեցին Պարսկաստանը և նրանց կրտսեր շառավիղը հաստատվեց Հայաստանում, երկու երկրների հասարակական-կենցաղային կապը ավելի սերտ դարձավ»:

226թ. Իրանում իշխանության գլուխ անցան Սասանյանները: Նրանց քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ ձեռք բերեց թշնամական դիմակայության և կոշտ առճակատման բնույթ, որի պատճառները գլխավորապես կրոնական-քաղաքական էին: Սասանյանների համար նախ կարևոր էր այն հանգամանքը, որ Հայաստանում իշխանության գլուխ էին կանգնած իրենց թշնամի Արշակունիների ազգակիցները: Այնուհետև, պատմության թատերաբեմում Սասանյան հարստության երևան գալուց հետո նրա և բյուզանդական կայսրության միջև ծայր առավ երկարատև զինված առճակատում, որի հիմնական առանցքը դարձյալ Հայաստանն էր: Վերջինիս և Իրանի միջև բացված անջրպետը ավելի խորացավ մանավանդ 301թ. Հայաստանում քրիստոնեությունը պաշտոնական կրոն հռչակվելուց, հետևաբար հայերի իրանական հավա-

տակցությունից հեռանալուց հետո: Այդ իրադարձությունը բնականաբար Սասանյանների մոտ ամրակայելու էր այն համոզումը, որ հոգևոր-կրոնական միասնության հիմքի վրա այսուհետև ամրապնդվելու է Հայաստանի կապը դավանակից Բյուզանդիայի հետ, իսկ հայ քաղաքական վերնախավի համակրանքը սկսելու է թեքվել դեպի արևմուտք: Դրա մեջ տեսնելով մեծագույն սպառնալիք իր քաղաքական շահերին, Սասանյան Իրանը աշխատում էր ինչպես բռնի ուժի, այնպես էլ գաղափարական պայքարի միջոցներով (զրադաշտականության բռնի տարածում) կասեցնել բյուզանդական ազդեցության ծավալումը ինչպես Հայաստանում և Իրանի սահմանակից մյուս երկրներում, այնպես էլ հենց բուն Իրանում, որտեղ քրիստոնեության տարածումը ձեռք էր բերել լուրջ հաջողություններ: Այս բոլորի հետևանքով, բնականաբար, հայ-իրանական քաղաքական հարաբերությունների մեջ տեղ էր գտնելու սուր լարվածություն, որն առանձին դեպքերում վերածվելու էր զինված դիմակայության, տեղիք տալով պատերազմների մի ամբողջ շարանի: Սասանյան խոշոր բանակները պարբերաբար հարձակվում էին Հայաստանի վրա, ավերում ու քանդում երկիրը, կողոպտում ու գերեվարում բնակչությանը: Հիրավի, հայ ժողովրդի համար սկսվում էր մաքառումների մի ծանր շրջան:

Բնական է, որ այդ առճակատման անխուսափելի հետևանքն էր հանդիսանալու երկու ժողովուրդների հոգևոր-մշակութային կապերի անկումը: Սակայն որքան էլ որ տարօրինակ ու անհավատալի է, նույնիսկ այդ շրջանում հայ-իրանական տնտեսական և մշակութային կապերը երբեք չխզվեցին, ապրելով միայն ժամանակավոր նահանջ:

Նշված շրջանի իրադարձությունները հայ պատմիչների կողմից արձանագրված են խիստ թանձր գույներով, որը համարյա նույնությամբ ժառանգել է նաև XIX-XX դարերի հայ գիտական պատմագրությունը և գեղարվեստական գրականությունը: Սակայն այդ իրադարձությունների անաչառ և նախորդ գնահատականների ազդեցությունից զերծ վերլուծությունը բերում է այն համոզման, որ չժխտելով ու չբացառելով հանդերձ այն ահռելի ավերածությունները, բռնությունները, ավերիչ դաժանությունները և հայ բնակչության բռնագաղթը դեպի Իրան, որոնք իրագործվեցին Սասանյանների կողմից Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ, որն ի դեպ միջնադարի համար երբեք չի կարելի դիտել որպես բացառիկ երևույթ, մեր օրերում հրամայական պահանջ է առա-

ջացել նորովի գնահատական տալու այդ իրադարձություններին: Ընդորում սա այն դեպքն է, երբ անհրաժեշտ է առաջնորդվել ոչ թե երևույթների արտաքին դրսևորումներով, այլ խորքային մեկնաբանությամբ: Ի դեպ, թեև հայ պատմագրության մեջ եղել են մարդիկ, որոնք այս կամ այն չափով վերոհիշյալ հարցում գնացել են հոտանքին հակառակ, սակայն պատմական ճշմարտության այդ նորովի լուսաբանման առաջնությունն ու պատիվը, ինչու չէ նաև համարձակ ու խիզախ քայլը, դարձյալ պատկանում է Մորուս Հասրաթյանին: Որպես իր տեսակետի հաստատման զորեղ կռվան, նա շեշտում է պատմաբանների ուշադրությունից դուրս մնացած այն կարևոր իրողությունը, որ Հայաստանի նկատմամբ ինչպես Պարթևական Իրանի, այնպես էլ Սասանյան Պարսկաստանի վեցդարյան գերիշխանության և ազդեցության շրջանում Հայաստանի բնակչությունը ոչ միայն չի նվազել, այլ ունեցել է որոշակի աճ: Այնուհետև, նա ոչ միայն չի դիմահեղվել, այլ «պահպանել է իր ուրույն էթնիկ նկարագիրը»: Այլ կերպ ասած, իրանական քաղաքակրթությունը միջնադարի այդ մռայլ ժամանակներում իսկ եղել է ոչ թե «մեռցնող», այլ «ապրեցնող», «զիջող», «ներող», գոյության իրավունք պարգևող քաղաքակրթություն: «Եվ ահա պարտավոր ենք և վաղուց ժամանակն է արձանագրել,— նշում է Մորուս Հասրաթյանը,— որ պարսկական քաղաքական, իրավական և տնտեսական ազդեցության շատ ավելի երկար ժամանակաշրջանում էր, որ մշակվեց հայկական նյութական և հոգևոր մշակույթը, որ հայ ժողովուրդը, իր ավագանու և մտավորականության նախաձեռնությամբ, 280-301 թվականներին մտավ նոր գաղափարախոսության՝ միաստվածության, այսինքն՝ նորամուտ քրիստոնեական կրոնի ներքո՝ հետզհետե նրան տալով իր ազգային, զուտ հայկական գույնը, հայկական պատշաճ տարազի մեջ: Սա հայերի մեծագույն ելույթն էր զրադաշտական Իրանի դեմ և պարսից արքունիքն ու ավագանին իրենց հզոր թևի տակ այդ ևս հանդուրժեցին: «Պարսից արքունիքը, փոխանակ ավելի խիստ բռնության դիմելու, որից հայկական դարավոր իրանական կողմնորոշումը շեղելու վախը կար միշտ, կրկին անցնում էր զիջման: Նույնիսկ ներման քաղաքականության»: Այդ քաղաքականությունը չի կարելի անվանել այլ կերպ, քան Իրանի ավանդություն դարձած քաղաքականություն:

Գաղտնիք չէ, որ հայկական նոր ու նորագույն պատմագրության էջերում այդ երևույթը սովորաբար մեկնաբանվում է որպես բացառապես

հայ ժողովրդի կողմից «զորեղ ու համառ» դիմադրության արդյունք: Չժխտելով այդ նշանակալից հանգամանքը, միաժամանակ հարկ է խորամուխ լինել այն խնդրի մեջ, թե այնուամենայնիվ որոնք էին այն դրդապատճառները, որոնք ստիպում էին Իրանական պետությանը հաշվի նստել «հայկական գործոնի» հետ և ըստ այնմ Հայաստանի նկատմամբ իրագործել «ներման» քաղաքականություն: Մնտարակույս առաջին և կարևորագույն պատճառը այն էր, որ Հայաստանը դարձյալ ծառայում էր որպես «հյուսիսային վահան» Կովկասի ռազմաշունչ ցեղերի դեպի հարավ կատարվող ավերիչ արշավանքների ճանապարհին: Նրա այդ դերի ռազմա-ստրատեգիական նշանակությունը դարերի ընթացքում այնքան մեծ ու նշանակալից է եղել Իրանի համար, որ միշտ «ներվել է» ըմբոստության և սեփական էթնիկ, կրոնական ու մշակութային դիմագիծը պահպանելու հայ ժողովրդի անզուսպ ձգտումը:

Հայ պատմիչների կողմից քրիստոնեության հալածանքները սասանյան թագավորների կողմից սովորաբար մեկնաբանվել են որպես զուտ կրոնական մոլեռանդության արդյունք: Սակայն իրականում դրանք իրենց հիմքում ունեցել են քաղաքական լուրջ պատճառներ: Պատահական չէ, որ երբ այսպես կոչված նեստորականները, 431 թ. Եփեսոսի տիեզերական ժողովից հետո խզեցին իրենց կապերը բյուզանդական ուղղափառ եկեղեցուց, որի հետևանքով արտաքսվեցին Բյուզանդական կայսրության սահմաններից (հոչակվելով հերձվածողներ) և հաստատվեցին Իրանում, Սասանյան կառավարող շրջանները համոզվեցին, որ նեստորական և միաբնակ (մոնոֆիզիթ) եկեղեցու հետևորդները, այդ թվում նաև հայերը, բոլորովին էլ համակրանքով չեն վերաբերվում բյուզանդացիներին, հետևաբար, և վերանում էին քրիստոնյաների հալածանքների քաղաքական մոտիվները: Եվ V դարի 80-ական թվականներից հետո երկու քրիստոնեական դավանանքները՝ նեստորականը և մոնոֆիզիթականը (որին հետևում էին նաև հայերը) ստացան լեգալ գոյության իրավունք ինչպես Իրանում, այնպես էլ նրա ժամանակակից երկրներում, այդ թվում նաև Հայաստանում: Ըստ այնմ Սասանյան պետության կողմից իսպառ դադարեցվեց նաև հայ ժողովրդի նկատմամբ կրոնական հալածանքների քաղաքականությունը:

V դարում Մեսրոպ Մաշտոցի կողմից գրերի ստեղծումից հետո Հայաստանում սկսվեց կրթական, մշակութային մի անանխընթաց վերելք, որն իրավամբ կոչվել է «հայկական ոսկեդար»: Այդ շրջանում հայ

ու կռվող տարրերից զրկելու և դրանով իսկ նրան վասալական հնազանդության մեջ պահելու նպատակով:

Առաջին տեղեկությունը Մասանյաններին՝ Հայաստանից տարած մեծ թվով գերիների մասին հաղորդում է Ագաթանգեղոսը: Նա հայտնում է, որ Մասանյան հարստության հիմնադիր Արտաշիր թագավորը (226-241) հարձակվելով Հայաստանի վրա... «իսաղայր գնայր, ասպատակ սիռէր զկողմանքք Հայաստան աշխարհին, զիստուն և զանասուն, զծեր և զտղայ, զերիտասարդ և զմանուկ առհասարակ խաղացուցանէր ի գերութիւն»:

Ենթադրվում է, որ այդ առաջին բռնագաղթը Մասանյանները կազմակերպել են իշխանության գլուխ գալուց ընդամենը երկու տարի հետո՝ 228 թվականին:

Մասանյանները Հայաստանի բնակչության մեկ այլ բռնագաղթ կազմակերպել են IV դարում: Շապուհ II-ի բանակը հարձակվում է Հայաստանի վրա և ահագին գերիներով հետ վերադառնում: Փավստոս Բուզանդը հայտնում է, որ «ադրքայից-արքայինս» չի հաջողվում գերիներին հասցնել բուն իրանական տարածքները, որովհետև հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը հայկական զորքերով հարձակվում և գերիներին հետ է խլում թշնամու ձեռքից:

Խաբեբայության ճանապարհով Տիզբոն կանչելով և հայոց Արշակ թագավորին Անհուշ բերդում բանտարկելուց հետո, Շապուհ II-ը մի խոշոր բանակ է ուղարկում Հայաստան, որը և կազմակերպում է իր մասշտաբներով մի աննախընթաց խոշոր բռնագաղթ: Այդ դեպքերի առթիվ Փավստոս Բուզանդը հաղորդում է. «եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձ մթերեալս՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն»: Ըստ պատմիչի տեղեկության, Շապուհը Արտաշատից գերի է տանում 40.000 ընտանիք, որից 31.000-ը հայ, իսկ 9.000-ը՝ հրեա:

Բացի Արտաշատից ու Վաղարշապատից, տասանյան զորքերը գերի են տանում նաև Երվանդաշատից 50.000 ընտանիք, որից 20.000 հայեր, 30.000 հրեաներ, Բագրևանդի Ջարեհավանից 13.000 ընտանիք, որից 5.000-ը հայեր, 8.000-ը հրեաներ, Ջարիշատից՝ 24.000 ընտանիք, որից 14.000-ը հրեաներ, 10.000-ը հայեր, Վանից՝ 23.000 ընտանիք, որից 5.000-ը հայեր, 18.000-ը հրեաներ, Նախիջևանից՝ 18.000 ընտանիք, որից 2.000-ը հայեր, 16.000 հրեաներ, Տիգրանակերտից գերության են քշում 40.000 ընտանիք և այլն:

Որքան էլ Փավստոս Բուզանդը չափազանցրած լինի գերիների թիվը, բոլոր դեպքերում միանգամայն հստակորեն ուրվագծվում է այն իրողությունը, որ Մասանյան արքան կազմակերպել էր վիթխարի մասշտաբների հասնող մի բռնագաղթ: Դա հաստատվում է նաև Մովսես Խորենացու հաղորդած տեղեկություններից: Խուժաստան և Եփրատ-Տիգրիսյան շրջաններ տեղափոխված մարդկային այդ հսկայական զանգվածը, ըստ Փավստոսի տեղեկության, օգտագործվում էր շինարարական աշխատանքներում:

Շապուհի բռնագաղթը հայ ժողովրդի պատմության մեջ արձանագրված առաջին նման կարգի ողբերգությունն էր: Անտարակույս այն զգալի չափով խախտեց հայ ժողովրդի բնականոն զարգացման ընթացքը, հարվածեց Հայաստանի արտադրողական ուժերին, ջլատեց նրա ռազմական և քաղաքական հզորությունը:

Շապուհի ավերածություններն ու գերեվարությունը նախորդեց հայ ժողովրդի քաղաքական անկախության վերացմանը և Հայաստանի երկու մասի բաժանվելուն՝ Մասանյան Իրանի և Հռոմի միջև, որը տեղի ունեցավ 387 թվականին:

Մասանյանները իրենց անվերջանալի պատերազմների ընթացքում միաժամանակ օգտագործում էին հայ ժողովրդի կենդանի ուժը իրենց թշնամիների դեմ պայքարում: Որպես վասալական երկիր, Հայաստանը պարտավոր էր զորամասեր հատկացնել արքայից-արքային: Եղիշեի և Ղազար Փարպեցու հաղորդած տեղեկությունները վկայում են, որ դեռևս Վարդանանց պատերազմից առաջ, ավելի լայն ծավալ էր ընդունել հայկական այրուձին իրանական պետության ռազմաքաղաքական շահերին օգտագործելու քաղաքականությունը:

Անկասկած Շապուհի կողմից քշված հայերը դարերի ընթացքում պետք է ենթարկվեին համաձուլման ու փոշիացման: Հիրավի, այդ հայերի ճակատագրի մասին պատմությունը բացարձակապես լռում է:

Սակայն մեզ հասած կցկտուր տեղեկություններից իմանում ենք, որ III-V դարերում Իրանում գոյություն են ունեցել հայ գաղթօջախներ:

VII դարում արաբների կողմից Իրանը նվաճելուց հետո հայ-իրանական տնտեսական, քաղաքական և մշակութային առնչությունները երբեք չընդհատվեցին: Ընդհակառակն, երկու ժողովուրդների արաբական խալիֆայության լծի տակ գտնվելը ստեղծում էր միասնության նոր որակներ, այս անգամ ճակատագրի ընդհանրության հիմքի վրա: Այդ

վիճակը ավելի ամուր կռվանների վրա խարսխվեց XI դարից սկսած, երբ Իրանը և Հայաստանը ընկան թուրք-սելջուկյան կայսրության, Չինգիզ խանի մոնղոլական պետության, ջելայիրյանների, Լենկ-Թեմուրի արյունոտ բռնապետության, Ղարա-Ղոյունլուների, թուրքմենական ու Թուրքական այլ ցեղային միությունների ծանր լծի տակ: Այսպիսով, հայ և իրանական ժողովուրդները մի քանի դար անընդմեջ ապրել են քաղաքական սոսկալի վայրիվերումների, կոտորածների, կողոպուտի, սանձարձակ ասպատակությունների, զանգվածային տեղահանությունների և գերեվարությունների մի շրջան:

Հաճախ երկու դրացի և ճակատագրով միմյանց հետ կապված ժողովուրդները համատեղ դիմադրություն են ցույց տվել օտարերկրյա նվաճողներին: Պարսիկ պատմաբան Իսմայիլ Ռայինը «Իրանցի հայերը» գրքում բազմաթիվ փաստեր է բերում այն մասին, որ իրանահայությունը պարսիկների հետ համատեղ կորովի դիմադրություն է ցույց տվել «մոնղոլ արյունարբու դահիճներին»:

Ենթադրվում է, որ երբ Իրանն ընկավ արաբական խալիֆաթի տիրապետության տակ, տեղի հայ բնակչությունը ընդունելով մահմեդականությունը, ձուլվել ու փոշիացել է:

Իրանում հայկական նոր գաղթօջախներ սկսել են ստեղծվել XI դարից, գլխավորապես սելջուկների կողմից կազմակերպված բռնի գաղթերի ու գերեվարությունների ճանապարհով: Կայուն կերպով հիմնավորվելով Իրանի տարածքում և այնտեղ ստեղծելով կենտրոնացված և ուժեղ պետականություն, սելջուկները աշխատում էին հնարավորին չափով փոխել այդ երկրի էթնիկական կազմը, միաժամանակ իրենց համար հայթայթելով ձրի աշխատուժ: Պատահական չէ, որ սելջուկները Հայաստանի բնակչությանը քշել տարել են գլխավորապես դեպի Իրան: Հայերի խոշոր գերեվարությունը սելջուկները կատարել են 1048 թվականին: Այդ բռնագաղթի մասին դեպքերին ժամանակակից ու ականատես պատմիչ Արիստակես Լաստիվերտցին գրում է, որ սելջուկները «իբրև գայլս քաղցեալս անյագալս ի կերակրոյ» մտնում են Հայաստան, ասպատակ տիառում, ավերում, քանդում, կողոպտում, տարանում և մեծ թվով գերիներ վերցրած հետ վերադառնում: Նրանք այդ նույնը կրկնում են նաև 1049 թվականին: Այնուհետև նման հարձակումները դառնում են սովորական երևույթ և պարբերաբար կրկնվում են Հայաստանի զույգ հատվածներում:

Այդ բռնագաղթերի ու տարագրությունների հետևանքով XI-XII դարերում Իրանի հյուսիսային շրջաններում, գլխավորապես Ատրպատականում (Թավրիզ, Մարաղա, Սուլթանիե և այլն) ինչպես նաև հարավում (Սպահանի մերձակա շրջաններում) ստեղծվում են հայկական նոր բնակավայրեր և գոյանում են հայ գաղթօջախներ: Բացի այդ, հայկական պետականության անկման հետևանքով, Մակուի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի, Ղարադաղի և այլ նահանգների հայկական շրջանները մտան իրանական պետության կազմի մեջ: Այդ շրջանում Իրանում հայերը այն աստիճանի հոծ թիվ են կազմել, որ նույնիսկ անհրաժեշտություն է զգացվել ստեղծելու երկու թեմեր, որոնք են Հեր և Ջարևանդի և Սալմաստի ու «դրանն Պարսից» թեմերը:

Մոնղոլական տիրապետության շրջանում (1220-1385) պարսկահայ գաղթօջախները էլ ավելի մեծացան, իրենց մեջ ընդունելով գաղթականական նոր հոսանքներ: Հայաստանում մոնղոլների կատարած ամենամեծ գերևարությունը տեղի է ունեցել 1236-1237 թվականներին, որի մասին հանգամանալից ու հավաստի տեղեկություններ է հաղորդում պատմիչ Կիրակոս Գանձակեցին:

Պետք է նշել նաև, որ մոնղոլական տիրապետության շրջանում հայ բնակչություն է տեղափոխվել Իրան նաև կամովին, ո՛չ բռնագաղթի ճանապարհով: Հայաստանում ստեղծված ծանր տնտեսական պայմանները, քաղաքական անապահովությունը, անձի և գույքի անվտանգության ապահովման հրամայականը ստիպել են մարդկանց կամովին լքել հայրենիքը և տեղափոխվել հարևան Իրան և հաստատվել առևտրաշատ և տնտեսապես բարվոք ու աշխույժ կենտրոններում, հատկապես Թավրիզ-Էրզրում բանուկ առևտրական ճանապարհների հանգուցային կայաններում: Մոնղոլական տիրապետության շրջանում Հայաստանից դեպի Իրան հայության այդ հոսքի հետևանքով, ստվարաթիվ հայ գաղթօջախներ են ստեղծվել Թավրիզում, Սուլթանիեում, Մարանդում, Խոյում, Սալմաստում, Մարաղայում, Ռեյում ինչպես նաև Կասպից ծովի ափերին՝ Ռեշտում և այլ քաղաքներում:

Առանձնապես խոշոր հայաշատ կենտրոն է հանդիսացել Թավրիզը (հայկական աղբյուրներում նա հիշատակվում է նաև Դավրեժ և Գանձակ Շահաստան անուններով): Այդ վաճառաշահ քաղաքում հայերի մեծ թվի մասին ուշագրավ վկայություններ է բերում վենետիկցի նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն, որը 1271 թ. իր ուղևորության ժամանակ

այցելել է այդ քաղաքը: Թավրիզում հոծ հայ բնակչության առկայության մասին տեղեկություններ ենք գտնում նաև XIV դարի հայկական աղբյուրներում: Այսպես, 1345թ. գրված հայկական մի ձեռագրի հիշատակագիր՝ Ներսես Գրիչը, Թավրիզը համարում է ոչ միայն Ֆարսերի, այլև հայերի մայրաքաղաք: Տեղեկություններ կան նաև այն մասին, որ այդ քաղաքի մոտակա շրջակայքում եղել են նաև հայկական գյուղեր: Աղբյուրներից մենք տեղեկանում ենք նաև, որ XIV դարում Թավրիզում եղել է երկու եկեղեցի՝ Ս.Սարգիս և Ս.Աստվածածին անուններով, իսկ հայ համայնքը բաժանված է եղել երեք հատվածների՝ Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների, կաթոլիկների և հունադավանների: Հիշատակարանների հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ այդ երեք հատվածների միջև անպակաս են եղել համայնքը պառակտող դավանաբանական վեճերը և կրոնական տուր առճակատումները: Կաթոլիկ եկեղեցու կենտրոնի՝ Վատիկանի քարոզիչ-միսիոներները եռանդուն գործունեություն են ծավալել Ատրպատականի հայաշատ կենտրոններում, աշխատելով «դարձի բերել» և կաթոլիկության գիրկը մտցնել տեղի հայությանը: Վատիկանի ջանքերով Թավրիզում, Մարաղայում և Սուլթանիեում ստեղծվում են քարոզչական երեք կենտրոններ: 1330թ. Վատիկանը հռոմադավան հայության համար հիմնադրում է եպիսկոպոսական թեմ դարձյալ Սուլթանիեում, որի առաջին թեմական առաջնորդն է հանդիսացել Հովհաննես Կոր անունով արքեպիսկոպոսը:

Թավրիզը հանդիսացել է Ատրպատականի հայ լուսավորչական թեմի առաջնորդական կենտրոնը:

Թավրիզի քրիստոնյա բնակչության վիճակի մասին մեզ հասած տեղեկությունները վերին աստիճանի ստեմանափակ են և կցկտուր: Սակայն առանձին հիշատակարաններ հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ մոնղոլական շրջանում հայերը ժամանակ առ ժամանակ ենթարկվել են կրոնական հալածանքների ու ճնշումների, ինչպես նաև զուտ աշխարհիկ բնույթի հարստահարությունների, ծանր հարկապահանջության և այլն: Վկայելով այդ մասին, անանուն մի հիշատակագիր գրում է. «...ազգի-ազգի հալածանս յարուցանէին ի վերայ քրիստոնէից, կապոյտ տալպանդ ետուն փաթաթել, ի տեղիս տեղիս եկեղեցիք ի հիմանց տապալեցին...»:

XIV-XV դարերում ձգտելով Սուլթանիեն դարձնել Արևելք-Արևմուտք տարանցիկ առևտրի խոշոր կենտրոն, մոնղոլական իշխանավորները,

հատկապես Էլխան Աղուն (1284-1291) բռնի կերպով Սուլթանիե են տեղափոխում մեծ թվով հայ վաճառականների և արհեստավորների, որի հետևանքով Սուլթանիեն վերածվում է պարսկահայ խոշոր գաղթօջախներից մեկի: Նրա դերը որպես աչքի ընկնող առևտրական և տնտեսական կենտրոնի էլ ավելի է մեծանում, երբ XIV դարի սկզբներին Էլխանության մայրաքաղաքը Թավրիզից տեղափոխվում է Սուլթանիե:

Ենթադրվում է, որ Սուլթանիեի հայ բնակչության մի մասը եկել է Անիից: Սուլթանիեում եղել է Թավրիզից անկախ հայկական թեմ, իր թեմական առաջնորդներով:

Սուլթանիեն միջազգային ցամաքային տարանցիկ առևտրում իր իշխող դիրքը պահպանեց մինչև Էլխանության անկումը՝ 1385 թվականը:

XIV-XV դարերում հայաշատ խոշոր կենտրոն է հանդիսացել նաև Խոյ քաղաքը: Այդ մասին մենք ուշագրավ տեղեկություններ ենք քաղում 1405թ. այդ քաղաքն այցելած իսպանացի ճանապարհորդ Կլավիխոյի հաղորդած տեղեկություններից:

Մակուն ևս հանդիսացել է Ատրպատականի հայկական խոշոր գաղթօջախներից մեկը: Նույն Կլավիխոն տեղեկացնում է, որ Մակուում ապրել են նաև կաթոլիկ հայեր: Մոնղոլական շրջանում հայկական գաղթօջախներ են գոյություն ունեցել նաև Մարաղայում, Մայմաստում, Ուրմիայում, Ռեշտում և այլն:

XIV դարի վերջերից մինչև XV դարի սկիզբը, այսինքն Իրանում նոր կառավարող հարստության՝ Մեֆյանների հանդես գալը, պարսկահայ գաղթօջախները ապրել են անընկարագրելի կողոպուտի, կոտորածների, կրոնական ու տնտեսական հալածանքների և գերեվարության մի տասկաղի շրջան: Հատկապես օրհասական է դառնում պարսկահայ գաղթօջախների վիճակը Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակ: Սակայն նրանից հետո ևս գաղթօջախներում շարունակվում են անընդմեջ ապստամբություններն ու ավերածությունները, հատկապես Ղարա-Յուսուֆի (1389-1405), Իսկանդարի (1420-1437), Ջհան շահի (1444-1466) արյունոտ տիրապետության շրջանում:

Մնարակույս վաչկատուն ցեղերի տիրապետության մղձավանջային այդ շրջանում պարսկահայ գաղթօջախները ծանր կորուստներ կրեցին: Նվազեց նրանցում բնակչության թիվը, մարեց տնտեսական աշխուժությունը, տեղի ունեցավ մշակութային անկում և այլն, սակայն այդ բոլորով հանդերձ, այդ գաղթօջախները չոչնչացան ու չվերացան և վերապրելով ծանր հոգևարքը, պահպանեցին իրենց գոյությունը:

Պետք է նշել սակայն, որ չնայած Իրանում XI-XV դարերում բավականին մեծ թվով հայ բնակչության առկայությանը, հայությունը դեռևս միասնական գաղութ չէր կազմում: Հայաբնակ այդ օջախները փոքրաթիվ էին, մասնատված ու ցրված:

XVI դարում իրանա-թուրքական հավերժ անընդմեջ և պտուտահեղ պատերազմների ընթացքում մարտնչող կողմերը ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած վայրերի բնակչությանը ենթարկում էին զանգվածային տեղահանության: Աղբյուրներից հայտնի է, օրինակ, որ թուրքերը բազմիցս Թավրիզից և Հյուսիսային Իրանի այլ քաղաքներից գերության են քշել հազարավոր հայ ընտանիքներ: Նույնպիսի քաղաքականություն էին վարում նաև Սեֆյան տիրակալները: Հատկապես շահ Թահմասպ I-ը Իրանի և Թուրքիայի միջև «մեծայալ տարածություն» ստեղծելու նպատակով, հաջող արշավանքների դեպքում, բռնի տեղահանության էր ենթարկում ինչպես Թուրքիայի, այնպես էլ Իրանի սահմանամերձ շրջանների բնակչությանը, նրանց վերաբնակեցնելով իր պետության ներքին շրջաններում:

Այսպիսով, առավելապես Արևմտյան Հայաստանի հայ բնակչության հաշվին, XVI դարում իրանահայ գաղթօջախը դառնում էր ավելի ստվարաթիվ: Նրա մեծացմանն ու ընդարձակմանը հետագայում նպաստեց նաև այն, որ թուրքական ծանր հարկապահանջության, հալածանքների, սոցիալական և ազգային ճնշման ու հարստահարությունների հետևանքով Արցախից, Սյունիքից ու մի շարք այլ շրջաններից հայ բնակչության առանձին խմբեր լքեցին հայրենիքը և գաղթեցին Իրան: Գաղթողների մեջ եղել են մի շարք հայ մելիքներ: Նրանց բոլորին շահ Աբբաս I-ը (1587-1629) ցույց է տվել սիրալիր ընդունելություն և հատկացրել բնակավայր Սպահանում:

1603 սեպտեմբերին բռնկեց հերթական թուրք-իրանական պատերազմը: Այս անգամ նախահարձակը Իրանն էր: Պարսկական բանակը գրավում է նախիջևանը և շարժվում Արարատյան դաշտ: Նրանք պաշարում են Երևանը, ուր ամրացել էր թուրքական կայազորը: Երևանի գրավումը ձգձգվում է, ուստի պաշարման ընթացքում իրանական մեկ այլ զորամաս անցնում է թուրքական սահմանը, առգրավում Վանի, Մանազկերտի, Ալաշկերտի, Էրզրումի, Բասենի, Խնուսի գավառները և այնտեղից գերեվարում ու Իրան քշում մեծ թվով հայերի:

Երևանը գրավելուց հետո, երբ տեղեկություններ են ստացվում, որ թուրքական զորաբանակը Սինան փաշայի հրամանատարությամբ հասել

է կարս, պատրաստվելով գրոհել շահական զորքերի վրա, շահ Աբբասը որոշում է իրագործել վաղուց մտահղացած իր դիվային ծրագիրը՝ կազմակերպել հայերի մեծ սուրգուն, այսինքն բռնագաղթ դեպի Իրան:

Եթե Արևելյան և Արևմտյան Հայաստանի բնակչության բռնի տեղահանությամբ շահ Աբբասը առավելապես հետապնդում էր ռազմագիտական նպատակներ, այն է՝ Իրանի և Թուրքիայի միջև ստեղծել «մեռյալ տարածություն», դժվարացնելու համար թուրքական բանակների առաջխաղացումը դեպի Անդրկովկաս և Իրան, ապա Անդրկովկասի և Հյուսիսային Իրանի վաճառաշահ քաղաքների և առաջին հերթին Արաքս գետի ձախափնյա հայաբնակ քաղաքներ Ջուղայի, Կանանդի, Բիստի, Ագուլիսի, Նախիջևանի, Օրդուբադի, Մեղրիի և այլն բնակչությանը բռնագաղթի ենթարկելով, նա գերազանցապես հետապնդում էր իր պետության համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք տնտեսական և քաղաքական նպատակներ: Շահը ցանկանում էր հայ վաճառականներին օգտագործել իր երկրի ներքին և արտաքին առևտուրը զարգացնելու գործում: Միաժամանակ նա ձգտում էր բաձրացնել երկրի կենտրոնական շրջանների, հատկապես Սեֆյան պետության նոր մայրաքաղաք Սպահանի, տնտեսական նշանակությունը, հարստացնել շահական գանձարանը և, վերջապես հայ վաճառականների օգնությամբ իրականացնել Իրանի արտաքին առևտրի ուղին թուրքական ցամաքային ճանապարհից դեպի հարավ՝ Պարսից ծոց տեղափոխելու իր վաղեմի ծրագիրը: Վերջինիս իրագործմամբ շահ Աբբասը մտադիր էր նաև տնտեսական հարված հասցնել իր հակառակորդ Օսմանյան Թուրքիային, զրկելով նրան իրանական հում մետաքսից գանձվող հսկայական մաքսատուրքերից:

Բռնագաղթը կազմակերպվեց անօրինակ դաժան եղանակներով: Առանձին ջոկատների բաժանված պարսկական զորքերը սկսում են տեղահան անել հայ բնակչությանը և քշել դեպի Իրան: Տեղահան արված գյուղերն ու ավանները նրանք այրում են, որպեսզի գաղթականները չկարողանան հետ վերադառնալ: Գաղթեցված հայ բնակչության թիվը անցնում է երեք հարյուր հազարից: Ըստ Առաքել Դավրիժեցու հաղորդած տեղեկության, տեղահան արված հայ բնակչության թափորը մեկ օրվա ճանապարհի երկարություն է ունեցել: Բռնագաղթի ենթարկվածների կեսից ավելին ոչնչանում է, շատերը ջրախեղդ են լինում Արաքսից անցման ժամանակ, ուժասպառ լինելով մեռնում են ճանապարհներին,

ոմանք ցրտահար են լինում կամ սովահար մեռնում, շատերն էլ գինվորների կողմից սրախողող են լինում: 1607 թ. մոլեգնում է նաև սովը, տանելով տասնյակ հազարավոր մարդկանց կյանք: Այսպիսով հարյուր հազարավոր մարդկանց տառապանքների գնով շահ Աբբաս I-ը իրականացնում էր իր մտահղացած վիթխարի ծրագիրը: Իրավացի է Մորուս Հասրաթյանը երբ գրում է. «Երեք ու կես դար առաջ տեղի ունեցած այս սրտաճմլիկ, դաժան արարքը խիստ բացասական ազդեցություն է թողել հայ պատմագրության և գրականության վրա, որից չեն ազատագրվել մինչև այժմ: Այդ ծանր պատկերները նկարագրելու հանգամանքը թույլ չի տվել, որ պատմաբանները հոգնություն ունենան թերթելու նաև դրան հաջորդած փաստական էջերը: Այդ բռնագաղթը կատարվեց հզոր թուրքական արշավանքները կասեցնելու նպատակով, ամայի տարածություն ստեղծելու նպատակով, միաժամանակ՝ առևտրական ուղիները փոխելու և Իրանի կենտրոնը ծաղկեցնելու համար և ոչ թե հայ տարրը ոչնչացնելու նպատակով»: Այդ բոլորից Մ. Հասրաթյանը կատարում է հետևյալ եզրահանգումը. «Դատության նոր դարաշրջանի արշալույսին Մեֆյան Իրանի շահերը հայերի նկատմամբ հանգեցին գրեթե նույն քաղաքական հանդուրժող տեսակետին, որպիսին ունեին հին Իրանի պետական գործիչները՝ աքեմենյան, պարթև և սասանյան արքաները, արքունիքը և ավագանին»:

Գաղթեցված բնակչության որոշ մասը տեղավորվեց Թավրիզում և նրա հարևան շրջաններում, մի մասը ցրվեց երկրի այլևայլ քաղաքներ ու շրջաններ՝ Քաշան, Համադան, Ղազվին, Սուլթանաբադի շրջանի Բուրվաթի և Գյաքլա շրջանները, Շիրազ և այլն:

Իրանում հում մետաքսի արտահանությունը զարգացնելու նպատակով շահը Կասպից ծովի մերձակա նահանգները՝ Գիլյան և Մազանդարան գաղթեցրեց հազարավոր հայ ընտանիքներ հում մետաքսի արտադրությամբ զբաղվելու համար: Նրանցից, ֆրանսիացի Շարդենի վկայությամբ, 40 տարուց հետո մնաց միայն մի փոքր մասը, իսկ մնացածները մահացան վատառողջ կլիմայի և կյանքի անասելի ծանր պայմանների հետևանքով:

Գաղթեցված բնակչության հիմնական զանգվածին շահը բնակեցրեց երկրի կենտրոնական շրջաններում, գլխավորապես իր մայրաքաղաք Սպահանում և շրջակա մահալներում (Ընջան, Ալինջան, Գանդիման, Ջրախոռ, Փերիա, Բուրվաթի, Քարվանդ), ինչպես նաև Բախթիարիում (Չհարմահալ):

Շահ Աբբասը արտակարգ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերել բանագաղթի ենթարկված առևտրական դասի, հատկապես միջազգային տարանցիկ առևտրի բնագավառում մեծ հաջող ձեռք բերած ջուղայեցի խոջաների նկատմամբ: Հատուկ հրովարտակով Սպահանի հարավային մասում, Զաեն-դերուդ գետի ափին, նա շահապատկան հողերից ջուղայեցիներին հատկացնում է մի ընդարձակ տարածություն՝ նոր ավան հիմնելու համար. ավանը ստանում է Նոր Ջուղա անունը: Այն սկսում է արագորեն կառուցվել ու բարգավաճել: Ի հիշատակ իրենց նախկին հայրենի բնակավայրերի, նորաստեղծ ավանի թաղամասերին տրվեցին համապատասխան անուններ՝ Ջուղայեցիների, Երևանցիների, Դաշտեցիների և այլն: Ժամանակակիցների վկայությամբ, Նոր Ջուղան հիմնադրվելուց ընդամենը երկու տասնամյակ անց, XVIII դարի 20-ական թվականներին, նա ուներ ավելի քան 30 հազար բնակչություն և իր ճոխությամբ, հարստությամբ ու ճարտարապետական շինությունների գեղեցկությամբ կարող էր մրցել նույնիսկ Մեֆյան շահերի մայրաքաղաքի հետ:

Ջուղայեցիներին Իրանի հետ կապելու և նրանց իր նպատակներին ծառայեցնելու համար շահ Աբբասը նոր ջուղայի բնակչությանը, հատկապես առևտրական դասին և հոգևորականությանը, տրամադրեց մի շարք արտոնություններ և իրավունքներ: Նախ, շահը ջուղայեցիներին թույլատրեց օգտվելու «Ավրքունի խաստերին» վերապահվող բոլոր իրավունքներից: Այդ արտոնությունից օգտվող շրջանները և քաղաքները Մեֆյան Իրանում համարվում էին արտոնյալ համայնքներ՝ մասնավորապես հարկային քաղաքականության բնագավառում և օգտվում էին կառավարության ամենալայն հովանավորությունից: 1606 թ. հրապարակված իր հրովարտակներից մեկում շահը հրամայում էր, որ Նոր Ջուղայի բնակչության նկատմամբ իր բոլոր հպատակները պարտավոր են վերաբերվել նույնպիսի բարյացակամությամբ, ինչպես վերաբերվում է ինքը շահը: Վերջինիս կողմից հրապարակված մի շարք այլ հատուկ օրենքներով ջուղայեցիների իրավունքները պաշտպանվում էին տեղական իշխանությունների կամայականություններից:

Շահը թույլ էր տվել հայերին դատարաններում ունենալ իրենց ներկայացուցիչները, որոշ վայրերում հայ գաղթականներին տեղավորելու համար արտաքսում էր մահմեդական բնակիչներին:

Մահմեդական մոլեռանդ ամբոխի թշնամական ելույթներից հայ վաճառականության անձի և գույքի ապահովության համար շահ Աբբաս I-ը

հրապարակեց հատուկ հրովարտակ, ըստ որի վաճառական հային սպանողը ենթարկվում էր մահապատժի:

Նոր Ջուղան ստացավ նաև ինքնակարության իրավունք: Առանց պարսկական իշխանությունների միջամտության նա ուներ քալանթար (քաղաքապետ) ընտրելու արտոնություն, որը իրավասու էր տնօրինելու Նոր Ջուղայի ներքին գործերը: Քալանթարի պաշտոնում սովորաբար ընտրվում էին Նոր Ջուղայի առավել հարուստ և ազդեցիկ վաճառականները, որոնք իրականացնում էին նաև գաղթօջախի պաշտոնական հարաբերությունները Մեֆյան իշխանությունների հետ: Քալանթարները գործուն մասնակցություն էին ցուցաբերում առավել կարևոր պետական գործերը լուծելու մեջ, հանդիսանում էին շահի խորհրդականները, մասնակցում էին օտարերկրյա դեսպանների հետ շահական արքունիքի բանակցություններին, հաճախ կազմակերպում էին օտարերկրյա դեսպանների ընդունելություններ և այլն:

Հակառակ Իրանում գոյություն ունեցող ավանդական կարգերին և շարիաթով հաստատված օրենքին, ըստ որի շահի քրիստոնյա հպատակը իրավունք չուներ պետության մեջ գրավելու բարձր վարչական պաշտոններ, շահ Աբբաս I-ը խախտելով այդ օրենքները և ըստ էության դեմ գնալով մահմեդական բարձր հոգևորականությանը, հայ ազդեցիկ խոջաներին շնորհում էր զանազան պաշտոններ: Աղբյուրներից մեկի վկայությամբ, խոջա Մարջան անունով ջուղայեցիներից մեկը շահ Աբբաս I-ի տիրապետության օրոք զբաղեցնում էր Մեֆյան կառավարության ֆինանսական վարչության գլխավոր կառավարչի պաշտոնը:

Խոջա-նոտաբլները մեծ դիրք ունեին նաև պարսկական արքունիքում:

Դատական վեճերը լուծվում էին տեղում, քեդխուդայի գլխավորությամբ, որը հանդիսանում էր քալանթարի տեղակալը: Հայերի և տեղական մահմեդականների միջև վեճեր ծագելու դեպքում, հաճախ շահ Աբբասի հրամանով, դատական իշխանությունները վճիռ էին կայացնում հօգուտ հայերի:

Մի խոսքով շահը հարուստ և ազդեցիկ ջուղայեցիներին տրամադրել էր այն բոլոր իրավունքներն ու արտոնությունները, որոնցից օգտվում էին Մեֆյան պետության բարձրաստիճան ներկայացուցիչները:

Շահ Աբբաս I-ը հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերել նաև կրոնական հարցում: Նա ոչ միայն չէր արգելակում Նոր Ջուղայում հայ-

կական եկեղեցիներ և վանքեր կառուցել ու գործին, այլև ինքն էր խրախուսում դրանց շինարարությունը, հաճախ այդ նպատակով նույնիսկ շահական գանձարանից բաց թողնելով միջոցներ: Իրանահայ բնակչության եկեղեցական և հասարակական գործերը ղեկավարելու համար XVII դարում ստեղծվում է թեմ, որի կենտրոնը դառնում է Նոր Ջուղան: Այս թեմի մեջ են մտել ոչ միայն Իրանի բազմաթիվ գաղթօջախների, այլև Հնդկաստանի, Բասրայի, Բաղդադի և մի շարք այլ վայրերի հայ համայնքները: Որպես հայկական Առաքելական եկեղեցու թեմական կենտրոն, Նոր Ջուղան նշանակալից դեր էր խաղում իրանահայերի հասարակական-մշակութային կյանքում:

Այն կարգուկանոնը, որով որոշվում էր Նոր Ջուղայի գաղթօջախի բնակչության իրավական վիճակը, բխում էր Սեֆյան կառավարության պետական քաղաքականության ընդհանուր բնույթից, որի նպատակն էր ընդլայնել Իրանի առևտրական և քաղաքական կապերը օտարերկրյա պետությունների հետ: Հայերի նկատմամբ հովանավորողական քաղաքականությունը շահ Աբբաս I-ի կառավարության կողմից դիտվում էր որպես այդ նպատակին հասնելու կարևորագույն միջոցառումներից մեկը: Իր կազմակերպած բռնագաղթից շատ չանցած, շահ Աբբաս I-ը եկավ այն համոզման, որ «այրված հողի» ռազմավարության հետևանքով Արևելյան Հայաստանի տարածքը դատարկվել է աշխատասեր, ձեռներեց և միաժամանակ հավատարիմ ու հնազանդ, հարկեր ու տուրքեր կանոնավոր վճարող հայ ազգաբնակչությունից, որին փոխարինելու են եկել գլխավորապես թուրքալեզու, անսանձ ու ինքնագլուխ քոչվորական ցեղեր, որոնց հետ Թուրքիան հեշտությամբ կարողանում է ընդհանուր լեզու գտնել: Բացի այդ, Հայաստանը դատարկելով հայերից՝ ամայի տարածություն ստեղծելու նպատակով, ինքը ոչ թե կանգնեցնում էր դեպի արևելք թուրքական ռազմերթի ճանապարհը, այլ ընդհակառակը, այդ ճանապարհները բաց էր անում նրանց առջև դեպի Կասպից ծովի հարավ-արևմտյան ափամերձը և Խորասան շարժվելու համար, որտեղից արևելք սկսվում էր թուրքական հոծ ու միատարր աշխարհը: Ուստի հայերի մեծ բռնագաղթից շատ չանցած, շահ Աբբասը հրամայեց իր մերձավոր զինակից, Երևանի խանության բեկլարբեկ Ամիրգունա խանին, տարագրության ենթարկված հայ բնակչության մի զգալի մասին հետ վերադարձնել հայրենիք: Կատարելով շահի հրամանը, Ամիրգունա խանը հոգ տարավ, որպեսզի մի քանի հայրյուր ամայա-

ցած հայկական գյուղերը արագ վերաշինվեն ու տնտեսապես հզորանան:

Օգտվելով վերոհիշյալ իրավունքներից և արտոնություններից, ինչպես նաև ստանալով առևտրի կատարյալ ազատության իրավունք, ջուղայեցի վաճառականները անմիջապես ձեռնամուխ եղան առևտրական լայն գործունեության: Ունենալով տարանցիկ առևտրի հարուստ փորձ և լավ ծանոթ լինելով հեմաշխարհային կարևոր շուկաներին, նրանք սկսեցին հանդես գալ որպես իրանա-եվրոպական առևտրի ամենախոշոր միջնորդներ: Նրանք ձեռք են բերում նաև իրանական հումմետաքսի արտահանման մենաշնորհը: Իրանահայ վաճառականների առևտուրը չէր սահմանափակվում լոկ Լևանտի շուկաներում: Իրենց ապրանքները բեռնավորելով սեփական կամ եվրոպական նավերի վրա, Միջերկրական ծովի վրայով նրանք տեղափոխում էին Ֆրանսիա, Հոլանդիա, Իսպանիա, Պորտուգալիա, իտալական քաղաք-հանրապետություններ, Անգլիա, Գերմանիա, Սկանդինավյան երկրներ և այլուր, որտեղ նրանք ունեին մշտական առևտրական ներկայացուցչություններ: Վկայելով այդ մասին, ֆրանսիացի Տուրնեֆորը գրում էր. «Նրանք ոչ միայն հանդիսանում են Լևանտյան առևտրի տերը, այլև եվրոպայի առավել մեծ քաղաքների առևտրի նշանակալից մասի տերը»:

Իրանահայ վաճառականները առևտրական լայն գործառնություններ էին կատարում նաև ասիական ու աֆրիկյան շուկաներում՝ հաճախակի լինում էին Տոնկինում, Սիամում, Տիբեթում, Բիրմայում, Հնդկաստանում, Ճավայում, Ֆիլիպիններում, Չինաստանում, Ճապոնիայում, Հաբեշստանում, Սուդանում և այլուր:

Այլ կերպ ասած, նրանք խոշոր դեր էին խաղում Արևելք-Արևմուտք միջազգային առևտրի մեջ: Ջուղայեցի վաճառականները անգնահատելի ծառայություններ էին մատուցում նաև իրանական ու արևելյան այլ ժողովուրդներին, ինչպես նաև հայ ժողովրդին եվրոպական մշակույթին հաղորդակից դարձնելով և ընդհակառակը՝ նպաստում էին այն բանին, որ եվրոպացիները ծանոթանան իրանական և ընդհանուր արևելյան մշակույթի, արհեստագործության, արվեստի հետ:

XVII դարի կեսերից սկսած իրանահայ վաճառականները սկսում են կազմակերպել առևտրական ընկերություններ, որոնք հնարավորություն են տալիս նրանց ընդլայնելու իրենց առևտրական գործունեությունը և ավելի կազմակերպված ձևով դիմագրավելու եվրոպական առևտրա-

կան կապիտալի ուժեղացող գրոհը: Այսպես կոչված «Ջուղայի հայ-առևտրական ընկերությունը» պայմանագրեր էր կնքում ոչ միայն օտարերկրյա առևտրական ընկերությունների, այլև առանձին պետությունների հետ: Հիշյալ ընկերությունն էր, որ 1667 և 1673թ.թ. առևտրական պայմանագրեր կնքեց Ռուսաստանի հետ, որոնց համաձայն նրան իրավունք էր տրվում ազատ առևտուր անել Ռուսաստանի, ինչպես նաև Ռուսաստանի վրայով՝ Արևմտյան Եվրոպայի երկրների հետ: Իրանահայ վաճառականների մի այլ ընկերություն Սուրաթում 1688թ. առևտրական պայմանագիր կնքեց անգլիական Արևելա-հնդկական ընկերության հետ, ըստ որի հայ վաճառականները հիշյալ ընկերությունից ստացան այն բոլոր արտոնություններն ու իրավունքները, որոնցից օգտվում էին անգլիական վաճառականները:

Հարկ է նշել, որ Ռուսաստանի հետ «Ջուղայի հայ առևտրական ընկերության» կնքած վերոհիշյալ պայմանագրերը հավասարազոր էին ռուս-իրանական առևտրական պայմանագրի, ուստի դրանք նպաստեցին այդ երկու երկրների միջև առևտրական, ինչպես նաև քաղաքական կապերի ամրապնդմանը: Փաստերը վկայում են, որ ցարական կառավարությունը այդ շրջանում Ռուսաստանի հետ իրանահայ վաճառականների առևտուրը դիտում էր որպես կարևոր քաղաքական միջոցառում, որն ընդունակ էր նպաստելու ռուս-իրանական առևտրական և քաղաքական կապերի ամրապնդմանը:

Սեֆյան շահերը վարպետորեն օգտագործում էին իրանահայ վաճառականների լայն առևտրական կապերը օտարերկրյա պետությունների հետ ոչ միայն առևտրական հարաբերություններ հաստատելու, այլև քաղաքական կապեր ստեղծելու համար: Առևտրական գործերով հայ վաճառականներին ուղարկելով Եվրոպա, Սեֆյան կառավարությունը միաժամանակ նրանց տալիս էր դիվանագիտական բնույթի հանձնարարություններ: Հայ խոջաները հատկապես գործուն մասնակցություն էին ցուցաբերում իրանա-եվրոպական բանակցություններում հակաթուրքական ռազմական դաշինք կնքելու, Իրանի արտաքին առևտրի ուղին թուրքական ճանապարհից դեպի Պարսից ծոց թեքելու, ինչպես նաև եվրոպական երկրների հետ առևտրական պայմանագրեր կնքելու հարցերում: Այսպես, 1603թ. շահի հրամանով Վենետիկի հանրապետություն է մեկնում իրանական դիվանագիտական մի առաքելություն, որի 12 անդամներից երեքը ջուղայեցիներ էին: Իսկ 1607թ. իրանահայ խոջա

Շիրազ անունով անվանի վաճառականը ուղևորվում է Վենետիկ, որպես Սեֆյան կառավարության դեսպան, թուրքերի դեմ ռազմական դաշինք և առևտրական պայմանագիր կնքելու համար բանակցություններ վարելու նպատակով: Նույն հարցերով խոջա Սաֆար անունով մի այլ վաճառական, որպես շահ Աբբաս I-ի դեսպան, 1608-1619 թ.թ. բանակցություններ էր վարում իսպանական թագավորի, Վենետիկի դոժի, Հռոմի պապի, Թոսկանայի մեծ դքսի և եվրոպական այլ քաղաքական գործիչների հետ:

Անշուշտ Իրանի հայ գաղթավայրերի բնակչության հիմնական մասը զբաղվածություն է հանդիսացել: Մեծ թիվ են կազմել նաև արհեստավորները: Հատկապես բարձր զարգացման էին հասել ոսկերչությունը, գորգագործությունը, կերպարագործությունը, ներկարարությունը և այլն: Իրանահայ արհեստավորները լայնորեն օգտվել են իրանական արհեստի հարուստ ավանդույթներից, իրենց հերթին մեծապես ազդելով նրա զարգացման վրա:

XVII դարի 70-80-ական թվականներից սկսած Իրանի տնտեսական անկմանը զուգընթաց, իրանահայության վիճակը սկսում է վատթարանալ: Պետության եկամուտների կրճատումը ստիպում է Սեֆյան կառավարությանը ուժեղացնել հարկապահանջությունը և առհասարակ տնտեսական ճնշումը: Շահական իշխանությունների հարստահարությունները դառնում են սովորական երևույթ: Ուժեղանում են նաև ազգային և կրոնական հալածանքները:

Եթե շահ Աբբաս I-ից հետո նրա գահը ժառանգած շահ Սեֆին (1629-1642) և շահ Աբբաս II-ը (1642-1666) իրանահայության նկատմամբ վարում էին հարաբերականորեն բարյացակամ քաղաքականություն, ապա շահ Սուլեյմանի (1666-1694) և նրա հետնորդ շահ Սուլթան Հուսեյինի (1694-1722) տիրապետության շրջանում Սեֆյան կառավարության տիրապետող վերնախավի քաղաքականությունը կտրուկ փոփոխության է ենթարկվում: Կառավարությունը ծանր հարկեր է դնում հատկապես Նոր Ջուղայի վրա, տարբեր պատրվակների տակ, այդ թվում մեղադրելով մահմեդական պետության սկզբունքների խախտման մեջ, սկսում է դրամ կորզել հայերից և այլն: Դրան գալիս է լրացնելու բռնի դավանափոխության քաղաքականությունը: Շահ Սուլթան Հուսեյինի կառավարման ժամանակ նույնիսկ հրապարակվեց մի օրենք, ըստ որի հային սպանող մահմեդականը կարող էր ազատվել պատժից, որպես

արյան գին վճարելով ոչ մեծ դրամական տուգանք, կամ որոշակի քանակությամբ ցորեն, կամ բրինձ:

Գյուղատնտեսության և արհեստների արտադրանքի կրճատումը հանգեցրեց Իրանի ապրանքափոխանակության ծավալի կտրուկ նվազեցման: Երկրի ընդհանուր տնտեսական անկման և արտահանության կրճատման պայմաններում կրճատվեց նաև հայ վաճառականության առևտուրն ու եկամուտները: Շատ հաճախ խաները և շահական ատիճանավորները կազմակերպում էին զինված ավազակախմբեր հայ վաճառականների առևտրական կարավանները կողոպտելու համար:

XVIII դարի վերջին առևտրի պայմանների վատթարացման, անձնական և գույքային ապահովության բացակայության, տնտեսական ճնշման քաղաքականության հետևանքով իրանահայ վաճառականությունը սկսեց ելք որոնել իր ունեցվածքն ու տեփական գոյությունը փրկելու համար: Նա սկսեց առևտրական շրջանառությունից հանել իր դրամների մի մասը և տեղավորել եվրոպական բանկերում: Արդեն XVII դարի 70-80ական թվականներից սկսում է Նոր Ջուղայի վաճառականության զանգվածային արտագաղթը դեպի Լևանտի առևտրական կենտրոնները. մասնավորապես Կ. Պոլիս, Զմյուռնիա, Հալեպ և այլն, ինչպես նաև եվրոպական ու ասիական երկրներ՝ Իտալիա, Ֆրանսիա, Հոլանդիա, Լեհաստան, Ռուսաստան, Հնդկաստան, Բիրմա, Ինդոնեզիա և այլն:

Իրանահայերի այդ նոր արտագաղթի հետևանքով Ասիայի և Եվրոպայի հայ գաղթօջախները, որոնցից մի քանիսը XVI-XVII դարերում հիմնվել էին Հին և Նոր Ջուղայեցի վաճառականների կողմից, գնալով ավելի բազմամարդ էին դառնում:

Նոր Ջուղան ապրեց առանձնակի ծանր օրեր աֆղանների արշավանքի ժամանակ: 1722թ. Մեֆյան պետության մայրաքաղաք Սպահանի պաշարման օրերին, աֆղանները սոսկալի ավերածության ու կողոպուտի ենթարկեցին նոր Ջուղան, գլխատեցին նրա քալանթարին, գերության քշեցին հարյուրավոր երիտասարդների և իրենց հարեմները լցրեցին բազմաթիվ հայ աղջիկներով: Միաժամանակ նրանք ստիպեցին Ջուղայի բնակչությանը որպես փրկագին վճարել 70 հազար թուման, որը վերջնականապես աղքատացրեց ու քայքայեց երբեմնի հարուստ այդ գաղթօջախը:

XVIII դարի 40-ական թվականներից, հատկապես 1747թ. Նադիր շահի սպանությունից հետո, դաշարների և զենդերի միջև իշխանության

համար մղվող պայքարը, ինչպես նաև Իրանում ծայր առած միջավատական արյունահեղ բախումները և դրանց հետևանքով երկրի տնտեսական վիճակի վատթարացումը, բացահայտ կողոպուտն ու հարկային ծանր լուծը իրանահայ բնակչության վիճակը դարձրին է՛լ ավելի անմխիթարական:

Այս բոլորի հետևանքով XVIII դարի կեսերին հայության արտագաղթի Իրանից ընդունեց ավելի ու ավելի համատարած բնույթ: Գաղութը դատարկվում ու անշքանում էր: Նրա բնակչության զգալի մասը հետագայում ևս շարունակեց արտագաղթը դեպի Հնդկաստան, Ռուսաստան, Հարավ-Արևելյան Ասիայի երկրներ, հարևան արաբական երկրներ և այլն:

Նոր Ջուղայի պատմության ուսումնասիրման երախտավոր Հարություն Տեր-Հովհաննիսյանցը նկարագրելով այդ գաղթօջախի նվազումը և անշքացումը, սրտի կսկիծով նշում է. «Նուազելով նուազեցաւ Ջուղայ և պակասելով պակասեցան բնակիչք նորա, ի հեռաւոր և յօտար տահմանս խոյս տուեալ գաղթականութեամբ, ուստի մի արժանի զարմացման եղիցի լսելն թէ երկոտասան հազար տուն բնակիչք Ջուղայու ի միջոց 250 ամաց իջին ցերիս հարիւր տունս»:

Իրանի հայ գաղթօջախները իրենց բազմադարյա գոյության ընթացքում ստեղծել են վերին աստիճանի ուշագրավ և արժեքավոր մշակութային արժեքներ: Հայաստանից Իրան գաղթեցված հայությունը իր հետ տարել է ոչ միայն հայ մշակութային արժեքներ՝ ձեռագրեր, արվեստի արժեքավոր ստեղծագործություններ և այլն, այլև հայ մշակույթի լավագույն ավանդույթները և դրանք արմատավորել իրանական հողում: Նոր բնակավայրում բարերար ազդեցություններ կրելով իրանական հարուստ մշակույթից և իր հերթին ազդելով նրա վրա, հայ վարպետները հայկական և տեղական մշակույթների համադրությամբ ստեղծել են ինքնատիպ և իր տեսակի մեջ անկրկնելի մի մշակույթ, որն իսկապես արժանի է հատուկ ուշադրության:

XVII-XVIII դարերում իրանահայ մշակույթի ամենաաչքի ընկնող օջախներից մեկն է հանդիսացել Նոր Ջուղան, ուր կենտրոնացած են եղել մեծ թվով ճարտարապետներ, նկարիչներ, քանդակագործներ, ձեռագիր ծաղկողներ և մոտավոր աշխատանքի մարդիկ: Այսօր էլ Սպահանի արվարձան Նոր Ջուղայում կարելի է տեսնել ու հիանալ հայ վարպետների ձեռքից կատարված անկրկնելի նկարազարդումները:

XVII դարի 30-ական թվականներից սկսած Նոր Ջուղայում սկսվեց լուսավորական ուժեղ շարժում: Միաժամանակ հախուռն ձևով սկսեց զարգանալ մտավոր-մշակութային կյանքը, որն անկասկած հայ ժողովրդի հոգևոր գանձարանը հարստացնելով ուշագրավ արժեքներով, համահայկական տարողությամբ նշանակություն ձեռք բերեց:

XVII դարի 30-ական թվականներին թեմի առաջնորդ Խաչատուր վարդապետ Կեսարացու քանքերով և նրա նախաձեռնությամբ հիմնվում է մի դպրոց, կամ ինչպես այն ժամանակ են կոչել՝ հաճախարան, որտեղ դասավանդվում էին ամենաբազմապիսի առարկաներ՝ երաժշտություն, բանաստեղծություն, համարողական արվեստ, քերականություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ, աստվածաբանություն և այլն: Այս դպրոցը տվել է մի շարք նշանավոր գործիչներ, որոնք կարևոր դեր են խաղացել ոչ միայն հիշյալ գաղթօջախի մտավոր և բարոյական առաջընթաց շարժման մեջ, այլև համայն հայկական մշակութային կյանքում:

XVII դարում Նոր Ջուղայի դպրոցներից աչքի ընկնող դեր է խաղացել նաև Ամենափրկիչ վանքի վանական դպրոցը, որի սաները ուսումնասիրել են նաև եվրոպական և ասիական լեզուներ: Դպրոցի հիմնական խնդիրներից մեկն է եղել երեխաներին սովորեցնել «արվեստ վաճառականության»: Այդ նպատակով վանական դպրոցի դասապետ Կոստանդ Ջուղայեցին գրում է մի դասագիրք «Աշխարհատոդով գիրք» վերնագրով, որտեղ բազմապիսի տեղեկություններ կան աշխարհի տարբեր երկրների առևտրական-տնտեսական կյանքի, արտադրվող ապրանքների, չափերի ու կշիռների, շրջանառության մեջ գտնվող դրամական միավորների և այլնի մասին: «Աշխարհատոդով»-ը ավելորդ անգամ վկայում է, որ չափազանց լայն են եղել աշխարհագրական այն տեսությունները, ուր հասել են ջուղայեցի վաճառականները:

XVII դարում Իրանի մի շարք հայաբնակ վայրերում՝ Շիրազում, Սպահանում և այլ տեղերում, եվրոպական կաթոլիկ միսիոներները բաց են անում դպրոցներ՝ բացառապես հայ երեխաների համար: Նույնանման մի դպրոց հիմնադրվում է նաև Նոր Ջուղայում, որի նպատակն էր հայ մանուկներից պատրաստել իրանա-եվրոպական առևտրի միջնորդ վաճառականներ և, վերջին հաշվով, կաթոլիկության մեջ ներգրավել հայ մատաղ սերնդին: Սակայն իրենց իսկ միսիոներների խոստովանությամբ, այս դպրոցը չի ունեցել առանձին հաջողություն, որովհետև

գաղթօջախի բնակչության մեծ մասը, որը համառ պայքար էր մղում իր ազգային-կրոնական ինքնուրույնությունը պահպանելու համար, խուսափել է երեխաներին ուսման տալ միսիոներների դպրոցում: Հետագայում՝ 1710թ. Նոր Ջուղայում բացվում են ևս երկու նոր դպրոցներ:

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում հիմնվում է նաև մատենադարան, որտեղ հավաքվում են Հայաստանից և այլ վայրերից բերված, ինչպես նաև Նոր Ջուղայում ընդօրինակված հարյուրավոր արժեքավոր ձեռագիր մատյաններ:

XVII-XVIII դարերում Նոր Ջուղայում մեծ զարգացման է հասնում մանրանկարչությունը, որմնանկարչությունը և գրչության արվեստը: Մեզ հասած փաստերը վկայում են, որ հիշյալ գաղթօջախներում եղել է նկարչական մի դպրոց, որի ներկայացուցիչներն իրենց վարպետությամբ, արվեստի բազմազանությամբ և բարձր գեղարվեստական ճաշակով աչքի են ընկել որպես իրանահայ արվեստում վրձնի անզուգական վարպետներ: Նրանք զարմանալի վարպետությամբ նկարազարդել են Ջուղայի հայկական եկեղեցիները, խոջայական ապարանքները, հայկական ձեռագիր մատյանները, ինչպես նաև գծել են իրենց ժամանակի նշանավոր անհատների դիմանկարները: Կարծիք կա այն մասին, որ հայ նկարիչներն են Եվրոպայից Իրան մտցրել կտավների վրա նկարելու արվեստը: Հաճենայն դեպս անժխտելի է, որ նրանք ազդեցություն են գործել իրանական նկարչական արվեստի վրա, իրենց հերթին ազդեցություններ կրելով նրանից:

Իրանահայ որմնանկարչության և մանրանկարչության ամենավառ դեմքերից է եղել Մինաս Թաղկողը, որը նկարազարդել է Շահ Աբբասի պալատները և Ջուղայի Շահրիմանյանների եկեղեցին: Ենթադրվում է, որ նա կատարել է նաև Էջմիածնի տաճարի մի քանի որմնանկարներ: Նոր Ջուղայի աչքի ընկող որմնանկարիչներից է նաև Հովհաննես Մրքուզը: Իսկ նկարչության լավագույն ներկայացուցիչներից է հանդիսացել Բոգդան Մալթանովը, որի պղնձե պնակի վրա կատարված Լեոնարդո Դա Վինչիի «Սուրբ ընթրիք»-ի պատճենահանությունը ջուղայեցի խոջա Զաքարը նվիրել է ռուսական Ալեքսեյ Միխայլովիչ ցարին: Մալթանովը ցարական արքունիքի կողմից հրավիրվում է Մոսկվա, որտեղ մեծ հռչակ է ձեռք բերում սրբանկարներ նկարելու արվեստի մեջ:

Նոր Ջուղայում բարձր զարգացման է հասել նաև ճարտարապետությունը, որի վկայությունը խոջայական շքեղ ապարանքներն են, բազմա-

թիվ եկեղեցիները, հասարակական շինությունները, ինչպես նաև Ջուղայի գերեզմանատան նուրբ ու բարձրարվեստ զարդանկարներով քանդակված խաչքարերն ու շիրմաքարերը:

Նոր Ջուղան հանդիսացել է նաև հայ հին տպագրության առաջին օջախներից մեկը: Խաչատուր Կեսարացու քանքերով այնտեղ հիմնվում է տպարան, որն առաջինն էր ոչ միայն Իրանում, այլև ամբողջ Միջին Արևելքում: Այդ ինքնաշեն տպարանում հրատարակված առաջին գիրքը 1638 թ. տպագրված «Սաղմոս ի Դավիթն» է: Այնուհետև լույս է տեսնում «Հարանց վարք»-ը (1641 թ.), «Խորհրդատետրը» (1641), «Ժամագիրք Աստենի»-ն (1642), ընդամենը չորս գիրք:

Այնուհետև Խաչատուր Կեսարացու աշակերտներից Հովհաննես վարդապետ Քթոշենցին 1646թ. եվրոպայից բերում է մի տպարան և Նոր Ջուղայում տպագրում մի շարք գրքեր, որոնցից առաջինը հանդիսանում է 1647 թ. տպագրված Ազարիա Ջուղայեցու «Պարզատումար»-ը:

Ջուղայեցիների կամ Հնդկաստանում և եվրոպայում վերընձյուղված նրանց անմիջական սերունդների քանքերով և նյութական օժանդակությամբ առաջին հայկական տպարանները հաստատվեցին Լիվոռնոյում, Ամստերդամում, Մարսելում, Էջմիածնում, Ս. Պետերբուրգում, Մադրասում, Կալկաթայում և մի շարք այլ հայաշատ կենտրոններում: Իրանահայության ծոցից դուրս են եկել նաև պատմիչներ, որոնցից առավել աչքի ընկնողներն են Առաքել Դավրիժեցին և Խաչատուր Ջուղայեցին:

XVII–XVIII դարերում նկատվել է նաև իրանահայ աշուղական գրականության և ժողովրդական բանահյուսության բավականին ակնառու վերելք: Այդ մասին են վկայում մեզ հասած արժեքավոր ու հուզիչ տաղերն ու բանաստեղծությունները:

XVII դարում հայ իրականության մեջ Նոր Ջուղան ոչ միայն կարևորագույն մշակութային կենտրոն էր, այլև առանց վերապահության կարելի է ասել, գերազանցապես նա էր տոն տալիս հայ մշակութային կյանքի մի շարք բնագավառներին, դրանց հաղորդելով թարմ շունչ ու կենսունակություն: Հայ քաղաքական կյանքի կարևորագույն լծակները ևս XVII դարում առավելապես գտնվում էին մեծահարուստ ջուղայեցի վաճառականների ձեռքերում:

Ընդհանրացնելով Սեֆյան դինաստիայի տիրապետության շրջանում Իրանի կազմի մեջ Արևելյան Հայաստանի, ինչպես նաև Իրանի հայ

գաղթօջախների սոցիալական, տնտեսական, մշակութային կացությունը, հայության անձի ու գույքի ապահովության խնդիրները, ինչպես նաև ամբողջությամբ վեցրած նրա զարգացման ու գոյատևման հնարավորությունները, պետք է արձանագրել, որ դրանք իրենց բոլոր բացասական ազդակներով (բռնի հավատափոխություն, կրոնական հալածանքներ, ծանր հարկապահանջություն և այլն) այնուամենայնիվ հայության համար եղել են դրական լիցք ունեցող տարիներ: Չի կարելի համակարծիք չլինել Մորուս Հասրաթյանի հետ, որն այդ առթիվ բերում է զորավոր ու տրամաբանական առումով հիմնավորված հետևյալ փաստարկները. «Հիշված 17-րդ դարի առաջին քսանամյակի և վերջին տասնամյակի մի քանի ծանր դեպքերը, 1620 թվականից 1695 թվականը, այսինքն՝ 75 տարի, մանավանդ միջին 50 տարին, Իրանի պետական սահմանների մեջ գտնվող Արևելյան Հայաստանում տիրեց բացառիկ խաղաղության մի ժամանակաշրջան: Կես դարի ընթացքում երկիրն ապրեց այնպիսի բնական ու ներգաղթի աճ և տնտեսական մշակութային վերելք, որ կարելի է համարել մի նոր հայկական վերածնություն...

Ըստ որոշ տվյալների, 1641-1666 թթ. քսանհինգամյակում, Արևելյան Հայաստանում՝ Արցախ Ղարաբաղից մինչև Ախուրյան, Արարատյան դաշտից մինչև Գողթան-Մեղրի, հարյուրավոր վերաշինված գյուղերում վերաշինվեց և վերստին կառուցվեց ավելի քան 500 եկեղեցի, շինվեցին տասնյակ կամուրջներ, գրվեցին հազարավոր ծաղկազարդված ձեռագրեր: Խոշոր վանքերը վերստացան իրենց կալվածքների մի մասը: 1629 թ. շահ Սեֆին հայ ժողովրդի հոգևոր կենտրոնը՝ Էջմիածինը ազատեց հարկերից և տուրքերից, տարեկան մի խոշոր գումար որպես «փիշքեշ» սկսեց տրամադրել վանքին, որի հետևանքով Էջմիածնի տնտեսական հզորությունը սկսեց արագ աճել և վերստացավ իր համահայկական հոգևոր կենտրոնի դերը, հզորացան հայ մելիքությունները»:

XVIII դ. երկրորդ կեսի սկզբներին Քերիմ խան Զանդի (1760-1779) տիրապետության շրջանում Իրանի հայ գաղթօջախը ձեռք բերեց հարաբերական հանգիստ: Իրեն «վաքիլ» հռչակած Քերիմ խանը ձգտում էր առևտրի ու տնտեսության համար ստեղծել բարենպաստ պայմաններ, որից հայերը չհապաղեցին անմիջապես օգտվել: Մի պահ դադարեց հայերի հախուռն արտագաղթը երկրից, ուժի մեջ մտան նրանց շնորհված արտոնություններն ու իրավունքները, երկրում սկսեց գործել օրենքը: Սակայն այդ հարաբերական անդորրը տևեց շատ կարճ: Իրանը

կոկին վերածվեց միջավատական պոյունտա մրցակցության դաշտի, այս անգամ իրանալեզու զենդերի և թուրքալեզու դաշտական ցեղի միջև, որի ընթացքում իրանահայությունը դարձյալ կորցնելով անձի և գույքի ապահովության ամեն տեսակի երաշխիքներ, կոկին իր ձեռքը վերցրեց հարազատ վայրերից գաղթելու ցուպը: Այդ պոյունախանձ կռիվները, որոնք ուղեկցվում էին ահասարսուռ դաժանություններով, ավարտվեցին դաշտարների հաղթանակով և 1797թ. Աղա մուհամեդ խանը իրեն հռչակեց շահ, Իրանում հիմք դնելով կառավարող մի նոր դինաստիայի, դաշտարների կամ դաշտական դինաստիային:

Միջավատական այդ տևական կռիվների պատճառով XVIIIդ. վերջին և XIXդ. առաջին քառորդին իրանահայ գաղթօջախներից շատերին մենք գտնում ենք խամրած վիճակում:

Ռուս-իրանական երկրորդ պատերազմի հետևանքով 1828թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրով նախատեսվում էր Իրանի հայ բնակչության ներգաղթ դեպի ռուսների կողմից գրավված Արևելյան Հայաստան: Թավրիզից, Խոյից, Սալմաստից, Ուրմիայից, Մարաղայից և այլ հայաշատ վայրերից հայրենիք՝ Երևանի և Նախիջևանի նահանգներ տեղափոխվեց շուրջ 45 հազար հայություն, որի հետևանքով Ատրպատականի հայության թվաքանակը զգալիորեն կրճատվեց: 1828-1830թթ. այդ իրադարձությունը նշանակոր է նրանով, որ դա հայ ժողովրդի պատմության մեջ առաջին ներգաղթն էր և առաջին հայահավաքը: Հատկանշական է, որ իրանական իշխանությունները և հատկապես գահաժառանգ Աբբաս-Միրզան, որին պատկանում էր Ատրպատականի դոմենը, աշխատում էր համոզել հայերին «չգայթակղվել ռուսների խոստումներով» և «չլքել երկիրը», խոստանալով լրացուցիչ պատոնություններ և իրավունքներ:

Ֆաթհ Ալի շահը (1804-1834) հայերին համարելով պետության համար օգտակար տարր, աշխատում էր Իրանում նրանց բնակության համար ստեղծել բնականոն պայմաններ: Նա սկսեց վարչական խստություններ բանեցնել պետության ինքնագլուխ և անսանձ տարրերի դեմ Իրանում բնակվող հայերի իրավունքներն ու պատիվը պաշտպանելու համար: Նա հայկական եկեղեցիներն ու վանքերը ազատում էր հարկերից, հրովարտակներ էր հրապարակում հայկական եկեղեցիներին դրամական նպաստ շնորհելու մասին և այլն: 1825թ. Ֆաթհ Ալի շահը անձամբ այցելեց Սպահան, տեղի անգուսպ տարրերին պատժելու համար,

որոնք հալածանքների էին ենթարկում Նոր Ջուղայի հայերին: Մունետիկների միջոցով Սպահանում տարածվում է շահի հրամանը. «եթե այսուհետև որևէ մեկը համարձակվի նեղել ու հալածել իմ հպատակ հայերին, կենթարկվի պատիժների»:

XIXդ. երկրորդ կեսին, Նասր-էդ-Դին և Մոզաֆֆար-էդ-Դին շահերի կառավարման շրջանում, ինչպես նաև խոշոր բարենորոգիչ Միրզա Թաղի խան Ամիր Նեզամի վարած հայանպաստ քաղաքականության հետևանքով, իրանահայության վիճակի մեջ դրական առումով կտրուկ փոփոխություններ տեղի ունեցան: Այդ գործիչները աշխատում էին մղում տալ Իրանի հայության գործարար և հոգևոր եռանդին ու ակտիվությանը: Երկիրը տնտեսական լճացման վիճակից դուրս բերելու, արհեստներն ու առևտուրը խթանելու նպատակով շահական կառավարությունը հրապարակեց մի շարք հրամանագրեր, որոնցով վերջ էր տրվում հայերի նկատմամբ եղած սահմանափակումներին, արգելվում էր նրանց բռնի հավատափոխությունը, կանոնավորում էր հայ քաղաքային և գյուղական բնակչությունից գանձվող հարկերի գործը, օրինականացնվում էին հայ եկեղեցիների կալվածքները և այլն: Հայերին նորից վստահվեցին արքունի և պետական բարձր պաշտոններ: Մի խոսքով օրենսդրական կարգով հայերը վերցվեցին պետության հովանավորության տակ: 1845թ. Նասր-էդ-Դին շահը հրապարակեց մի հրովարտակ, որտեղ ասվում էր, որ «Հայերը մեր լավ հպատակներն են, տերության հավատարիմ քաղաքացիները»:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հակառակ նրան, որ առհասարակ Իրանում բարձր հոգևորականությունը բուռն պայքարի մեջ էր արքունիքի դեմ, որը ջանքեր էր գործադրում թուլացնելու հոգևորականության տիրապետող ազդեցությունը, վերջինը հայության հանդեպ ցույց տված իր վերաբերմունքով կատարելապես համերաշխ էր ընթանում պալատի հետ: Այսինքն՝ նա էլ հովանավորում ու պաշտպանում էր հայությանը, մինչդեռ պալատի դեմ վարած իր պայքարի մեջ նա կարող էր շահերի ու կառավարության այդ քաղաքականությանը կրոնական գունավորում տալով՝ հատուկ մի գենք դարձնել իր համար:

Իրանական կառավարության և շիիթական բարձր հոգևորականության կողմից հայության նկատմամբ որդեգրած բարյացակամ դիրքորոշումը թուլացնում էր ամբոխային վատ վերաբերմունքը, չեզոքացնում հայության դեմ նյութված դավադրություններն ու հակահայ շարժումնե-

ը, մեղմացնում մահմեդականի և քրիստոնյայի միջև այդ ժամանակներում առկա խուլ ատելությունը և ստեղծում համեմատաբար դրացիական խաղաղ մթնոլորտ:

Պետք է նշել, որ մերձեցման պայմաններ ստեղծում էր նաև հայությունը, որը վերին աստիճանի օրինապահ էր և գնահատելի ծառայություններ էր բերում Իրանի տնտեսական, քաղաքական և կրթական-մշակութային կյանքին և կատարյալ վստահություն էր ներշնչում թե իշխանություններին և թե ժողովրդին:

XIX դ. երկրորդ կեսին իրանական կառավարության հայանպաստ քաղաքականության խոսուն վկայությունը կարող է հանդիսանալ նաև Իրանի հայ բնակչության արագ աճը: Եթե 1851թ. Իրանում կար շուրջ 20 հազար հայ բնակիչ, ապա 1890թ. այն կազմում էր 80 հազար:

Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Գևորգ եպիսկոպոսը 1855թ. հուլիսի 27-ին Նասր-Էդ-Դին շահին ներկայացնում է մի բողոքագիր՝ իրանահայ համայնքների ծանր դրության մասին, առաջարկելով մի շարք միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են կիրառել իրանահայ գաղթօջախները անկումից դուրս բերելու համար: Մասնավորապես նա խնդրում էր վերացնել «Ինամ Ջաֆարի» օրենքը, ըստ որի հավատափոխ հայը դառնում էր իր քրիստոնյա հարազատների ունեցվածքի միակ ժառանգորդը, արգելել հայերի հավատափոխությունը, վերջ տալ կալվածատերերի բռնություններին ու անօրինականություններին հայ գյուղացիության նկատմամբ, արգելել մահմեդականների կողմից հայ աղջիկներին փախցնելը և առևանգողներին պատժել, սիրով վարվել հպատակ հայերի հետ, արգելել անզավակ հայ մարդկանց գույքի գրավումը, թույլ տալ, որ հայ եկեղեցիները զանգակ հնչեցնեն, օրինականացնել հայ եկեղեցիների կալվածները և այլն:

Շահն ընդառաջել է Գևորգ եպիսկոպոսի խնդրանքին և բավարարել նրա առաջադրած բոլոր պահանջները, բացառությամբ մեկի. եկեղեցիների զանգարության թույլտվություն տալը, մտավախություն ունենալով, որ մոլեռանդ ամբոխը կարող է գրգռվել հայերի դեմ: Իր վերոհիշյալ որոշման մասին շահը հատուկ հրովարտակ է տվել Ատրպատականի հայոց թեմի առաջնորդին:

Իրանահայության դրությունը բարելավելու նպատակով Նասր-Էդ-Դին շահին է դիմել նաև Նոր Ջուղայի թեմի առաջնորդ Թադեոս վարդապետ Բեկնազարյանը (1831-1863): Իրանական արքունիքը նրա

խնդրանքին ևս ընդառաջ է գնացել, իրանահայությանը հատկացնելով մի շարք իրավունքներ և արտոնություններ: Այսպես, պարսկահայերը ազատվել են զորակոչից, նվազեցվել են Նոր Ջուղայի և Փերիայի հայ բնակչության հարկերը: Բացի այդ, ընդունվել է հատուկ որոշում, ըստ որի այսուհետև հայերից հարկը պետք էր գանձել այն չափով, ինչ չափով որ գանձվում էր տեղացի մահմեդական-պարսիկներից:

Արքունիքի միջամտությամբ կանոնակարգվել ու չափավորվել է կալվածատերերի կողմից հայ գյուղերից գանձվող հողային հարկը, սահմանափակվել գավառապետների շահատակությունները և այլն: Վերջապես Թադեոս վարդապետի միջամտությամբ, արքունիքը պատժիչ զորքեր է ուղարկել բախտիարի ցեղի ավազակների դեմ, որոնք շարունակաբար հարձակվել են հայկական գյուղերի վրա և թալանել բնակչության գույքը և անասունները:

Նասր-Էդ-Դին և Մոզաֆֆար-Էդ-Դին շահերի կողմից իրանահայությանը հատկացված արտոնությունների և իրավունքների շնորհիվ, հայությունը կատարելապես ազատ էր իր եկեղեցու, կրոնական ու դավանական խնդիրներում: Ամուսնական, ամուսնալուծական, ժառանգական և կրոնական խնդիրների լուծման իրավասությունը պատկանում էր Հայոց Առաքնորդարանին կամ կրոնական խորհրդին:

Հայ համայնքները Իրանի բոլոր վայրերում լայն ազատություն ունեին հիմնելու իրենց կրթական և մշակութային հիմնարկությունները, մշակելու իրենց դպրոցների ծրագրերը, կազմելու ներքին կանոնադրություններ և այլն: Ազատ էին մշակութային ամեն կարգի ձեռնարկներ իրագործելու: Դպրոցներում դասավանդումը ամբողջովին հայերեն էր: Երկրի հարավային նահանգներում բացի հայերենից, դպրոցներում դասավանդվում էր պարսկերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներ, իսկ հյուսիսային նահանգներում՝ ֆրանսերեն և ռուսերեն: Որպես կանոն, դպրոցական ծրագրերը ընդօրինակված էին Կովկասի հայկական դպրոցներում կիրարկվող ծրագրերից: Ուսուցիչների մեծամասնությունը հրավիրվում էր Կովկասից: Հետագայում Թավրիզի կենտրոնական դպրոցի հիմնադրվելուց ու շրջանավարտներ տալուց հետո, աստիճանաբար բարձրացավ տեղացի ուսուցիչների թիվը:

Հայերն ազատ էին բարեգործական և այլ կարգի ընկերություններ կազմակերպելու և մտավոր աշխատանքի անարգել գործունեության ասպարեզ ընտրելու: Այսպես կոչված «քարգոզարները», որոնք իրենց

կոչումով հաշտարար դատարանի դեր էին խաղում, մինչև 1921թվականը, այսինքն կապիտուլյացիոն իրավունքի վերացումը, իրավասու էին դատելու և լուծելու քրիստոնյայի և մահմեդականի միջև եղած վեճերը:

XIX դարում իրանահայ բնակչության ճնշող մեծամասնությունը հանդիսացել է գյուղացիությունը, քաղաքատիպ վայրերում՝ արհեստավորները: Հայերը զբաղվել են գլխավորապես այն արհեստներով, որոնք գործ չեն ունեցել սննդամթերքի հետ: Դրա պատճառը այն է, որ շարիաթի սահմանումով ուղղափառ մահմեդականը իրավունք չունի ուտելու այն սննդամթերքը, որին «անհավատ քրիստոնյայի ձեռք է կպել» (դա կոչվում է «նաջես»): Հայերին արգելված էր մսագործությամբ, հացագործությամբ և թաց մշակման հետ կապված մյուս մասնագիտություններով զբաղվել: Հայ արհեստավորները, հիմնականում, հանդիսանում էին՝ ոտայնագործները, ոսկերիչները, դարբինները, հյուսները, որմնադիրները, կոշկակարները և այլն: Հայկական գյուղերում բավականին զարգացած է եղել գորգագործությունը: Իրանահայերի գործած գորգերը հայտնի են եղել «Արմանիբաֆ» անունով և մեծ հռչակ են ունեցել միջազգային շուկաներում:

XIX դարում հայերը Իրանում հիմնականում բնակվում էին Ատրպատականի, Սպահանի, Գիլյանի, Մազանդարանի նահանգներում և ոչ մեծ թվով ցրված էին երկրի տարբեր մասերում:

Իրանահայերի հոգևոր-հասարակական կյանքը կենտրոնացված էր երկու թեմերում՝ Ատրպատականի (Թավրիզ կենտրոնով) և Սպահանի կամ Իրանա-Հնդկաստանի (Նոր Ջուղա կենտրոնով): Վերջինս ընդգրկում էր նաև Հնդկաստանում, Աֆղանստանում ու Հեռավոր Արևելքում գտնվող հայկական գաղթօջախները: Իրանի տարածքում Սպահանի թեմին ենթակա հայությունը կենտրոնացած էր գլխավորապես Նոր Ջուղայում, Սպահանում, Թեհրանում և մասամբ ցրված էր Գիլյանի, Մազանդարանի և Խորասանի նահանգներում:

Ատրպատականի թեմի ենթակա հայությունը ցրված էր Խոյի, Սալմաստի, Մակուի, Ուրմիայի, Բարանդուզի, Սուլդուզի, Սուջբուլաղի, Մարաղայի, Արդեբիլի և Ղարադաղի գավառներում: Ատրպատականի ամենահին հայաշատ կենտրոնը Թավրիզն էր, ուր հայերը հիմնականում կենտրոնացած էին երկու թաղերում՝ Ներքին կամ Ղալա և Դրսի կամ Լիլավայի:

Իրանահայերի իրավական դրության հիմքը կրոնա-եկեղեցական ինքնավարությունն էր, որը գաղութում արմատավորվել էր դեռևս XI դա-

ից: Գաղութի ինքնավարության մարմիններն են հանդիսացել թեմական առաջնորդարանները:

XII դ. սկզբից մինչև XVդ. 40-ական թվականները, այսինքն մինչև Կիլիկիայի հայկական պետության անկումը, իրանահայ գաղութի թեմերը ենթարկվում էին Հռոմկլային, որտեղ գտնվում էր հայոց կաթողիկոսությունը: 1441թ., երբ հայ Առաքելական եկեղեցու կաթողիկոսական աթոռը կրկին տեղափոխվեց Էջմիածին, Իրանում գտնվող թեմերը անցան նրա իրավասության տակ: Ինչպես հայտնի է, այդ ժամանակ Էջմիածինը գտնվում էր պարսից տիրապետության ոլորտում, ուստի հայոց կաթողիկոսը իր հոտը ղեկավարում էր համաձայն պարսիկ տիրակալների կողմից արձակած հրամանների (ֆիրմանների):

XIXդ. 40-50-ական թվականներից Իրանի հայ գաղթօջախներում, մասնավորապես Ատրպատականում, սկսվում է մշակութային վերելք: Բացվում են եվրոպական տիպի առաջին դպրոցները, գրադարաններ և կրթական-մշակութային այլ հաստատություններ: Իրանում հայկական ազգային դպրոցներին իրավական երաշխիք էր տրված շահերի մի քանի ֆիրմաններով: Հայկական աշխարհիկ դպրոցները, համաձայն այդ երաշխիքների, ունեցել են ներքին ինքնավարություն, դասավանդումը մայրենի լեզվով կատարելու իրավունք, սեփական ուսումնական ծրագրեր և այլն: Ազգային դպրոցների գոյությունը երաշխավորվում էր նաև 1906-1907թթ. սահմանադրությամբ:

Դեռևս 1833թ. մաղրասաբնակ Նոր Ջուղայեցի Գրիգոր Սամյանի կտակած գումարով Նոր Ջուղայում բացվել է մի դպրոց, որը տակավին նյութական դժվարությունների պատճառով երկար կյանք չի ունեցել և 1837թ. փակվել է: Ի դեպ, այդ դպրոցում երկու տարի դասավանդել է Մեսրոպ Թաղիադյանը: 1843թ. կալկաթաբնակ Հարություն Աբգարյանը դարձյալ Նոր Ջուղայում հիմնել է մի դպրոց՝ «Հայկական հայրենասիրական» անունով, որը գործել է 40 տարի: 1853թ. Բաթուայից երկու քույրեր՝ Մարիամ Հարությունյան և Թագուհի Մանուկյան, Նոր Ջուղայի Դավրեժ թաղում բաց են անում մի նոր դպրոց, որը գործել է 30 տարի շարունակ:

1845թ. Նոր Ջուղայում բացվել է գաղթօջախում առաջին իգական կամ օրիորդաց դպրոցը: Այն կառուցված էր Կատարինյան վանքին կից, ճավացի հայտնի վաճառական Մ. Հորդանանյանի նյութական աջակցությամբ: 1829թ. այն միացվեց տղաների դպրոցների հետ և կազմվեց

կրթական մեկ հաստատություն՝ «Նոր Ջուղայի Ազգային երկսեռ դպրոցներ» անունով:

1880թ. Ճավայից, Բիրմայից և Հնդկաստանից հանգանած միջոցներով Նոր Ջուղայում կառուցվում է դպրոցական մի խոշոր շենք և 1883թ. այնտեղ կենտրոնացվում տեղի մանր երեք դպրոցներ՝ անվանելով այն «Ազգային կենտրոնական դպրոց»: 1901-1905թ.թ. Մոսկվաբնակ Գևորգ Քանանյանցի կտակով Նոր Ջուղայում կառուցվում է մանկապարտեզի և միջնակարգ դպրոցի երկհարկանի շենք, ուր և տեղավորվում է «Ազգային կենտրոնական դպրոցը»: Նոր Ջուղայում դպրոցներ են ունեցել նաև հայ կաթոլիկները և հայ բողոքականները:

Ստրպատականում առաջին հայկական դպրոցը հիմնադրվել է 1835թ. Թավրիզում, որը հայտնի է «Վրամյան» անունով: XIXդ. երկրորդ կեսին Թավրիզում բացվեցին նաև «Աննայան», «Հայկազյան», «Թաքարյան» և այլ դպրոցներ: Թավրիզի առաջին իգական դպրոցը հիմնադրվել է 1879թ.: Մի վկայության համաձայն, օրիորդաց դպրոց հիմնելու միտքը արծարծել է Ռաֆֆին «Վրամյան» դպրոցում ուսուցիչ եղած ժամանակ: Սակայն հետադեմ պահպանողականները դիմադրում են և արգելք հանդիսանում օրիորդաց դպրոցի գործունեությանը: Ուստի օրիորդաց դպրոցի պաշտոնական բացումը կատարվում է 1877թ., «Վրամյան» դպրոցին կից մի շենքում, որը Աննա Թումանյանի հիշատակին այդ նպատակով նվիրել էին Թումանյան եղբայրները: 1909թ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ծրագրով Թավրիզում բացվեց թեմական երկսեռ միջնակարգ դպրոց:

Թեհրանում անդրանիկ հայ դպրոցը բացվել է 1870թ.: Այն կոչվում էր «Հայկազյան» և գտնվում էր Դարվազե Ղազվին թաղում: Այդ օրերին, մոտ երկու հարյուր ընտանիքներից բաղկացած համայնքը, իր մեծամասնությամբ, խմբված էր այդ թաղի Ս. Գևորգ եկեղեցու շուրջը: «Հայկազյան» դպրոցը իր տեսակի մեջ առաջինն է լինում Թեհրանում այն առումով, որ նա եվրոպական տիպի էր: Նասր-էդ-Դին շահը տարեկան երկու հարյուր թուման նպաստ էր հատկացնում այդ դպրոցին: 1891-1892թթ. Թեհրանում հիմնվեց առաջին իգական դպրոցը: 1891թ. Ազգային դպրոց բացվեց Դարվազե Ղազվին թաղում, իսկ 1903թ.՝ դպրոց Դարվազե Դովլաթի թաղում: 1910թ. Հասանաբադ թաղամասում, որտեղ այդ ժամանակ բնակություն էր հաստատել Թեհրանի հայ բնակչության մեծամասնությունը, կառուցվեց մի նոր դպրոց, որը ստացավ «Հայկազյան» անվանումը:

Ուսումնական գործը հետ չէր մնում նաև գավառներում, ուր սկսած XIXդ. վերջից բացվեցին տասնյակ դպրոցներ: Անցյալ դարի 70-ական թվականներին արդեն դպրոցներ կային Սալմաստի Հաֆթվան, Փայաքուկ, Ղալասար գյուղերում: Ամենի ուշ դպրոցներ բացվեցին նաև Մարնա, Սխթախանա, Մավրա և այլ գյուղերում: 1903թ. Ռաֆֆու ծննդավայրում՝ Սալմաստի Փայաքուկ գյուղում, կառուցվեց դպրոցի երկհարկանի շենք: XXդ. սկզբին դպրոցներ կային Սալմաստի գավառի գրեթե բոլոր հայաբնակ գյուղերում: 1904-1905թ.թ միայն Սալմաստի գավառի 11 դպրոցներում սովորում էր 800 աշակերտ:

XIXդ. վերջին և XXդ. սկզբին դպրոցներ բացվեցին Մարաղայում, Ուրմիայի, Մակուի և Ղարադաղի մի քանի գյուղերում, Համադանում, Ղազվինում, Մեշհեդում, Սուլթանաբադում, Ռաշտում, Էնզելիում և այլուր:

Իրանի հայկական դպրոցները իրենց վրա կրում էին Կովկասի հայկական կրթական կենտրոնների ազդեցությունը: Ընդհանրապես Կովկասից էին գալիս Իրանի հայկական դպրոցների տեսուչներն ու ուսուցչական խմբերը: Կովկասի հայ դպրոցների կրթական ծրագրերով էին առաջնորդվում Իրանի հյուսիսային նահանգների հայկական դպրոցները: Թիֆլիսն էր հայթհայթում ամբողջ Իրանի հայերին դասագրքերը: Իրանում ուսուցչությամբ էին զբաղվում բազմաթիվ ականավոր մտավորականներ՝ Մեսրոպ Թաղիադյանը, Ռաֆֆին, Վրթանես Փափազյանը, Հրաչյա Ամատյանը և ուրիշներ:

XIXդ. երկրորդ կեսին բացվում են նաև առաջին գրադարանները: 1847թ. Թավրիզի մի խումբ մտավորականների ջանքերով և դրսի հայերի օժանդակությամբ հիմնադրվում է Իրանում առաջին հայկական գրադարան-ընթերցարանը: Այնուհետև իրար հետևից գրադարաններ բացվեցին Նոր Ջուղայում, Ռաշտում, Թեհրանում և այլ քաղաքներում:

XIXդ. 70-80-ական թվականներին Թավրիզում, Թեհրանում և Նոր Ջուղայում սկսում է ձևավորվել նաև հայ թատերական կյանքը: 1881թ. Թեհրանում կազմակերպվել է «Թատերասիրաց ընկերություն»: Կովկասից, Պոլսից և այլ վայրերից հաճախակի Իրան են այցելել հայ թատերախմբեր:

Հայերը տարբեր քաղաքներում (Նոր Ջուղա, Շիրազ, Թեհրան, Ռաշտ, Թավրիզ և այլն) կառուցել են բազմաթիվ եկեղեցիներ: Իրանի հնագույն հայկական վանքերն են Ս. Թադեոս Առաքյալի (Ս. Թադե)

և Ստեփանոս Նախավկայի վանքերը, որոնք դասվում են հազվագյուտ կողքողների շարքում: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ եկեղեցին իրանահայության կյանքում խաղացել է չափազանց մեծ դեր:

XVIդ. վերջին Նոր Ջուղայի տպարանը իր տպագրական գործունեությունը դադարեցնելուց հետո, շուրջ երկու դար իրանահայ տպագրությունը լռում է, թեև արտասահմանյան գաղութներում քուղայեցիները շարունակում են տպագրական բեղուն մի գործունեություն: Պարսկահայ տպագրությունը վերստին վերակենդանանում է 1844թվականից սկսած, երբ Նոր Ջուղայի Ս. Կատարինյան օրիորդաց դպրոցի հիմնադիր, Ճավայում վերաբնակված Մանուկ Հորդանանյանը տպագրական մի սարք է ուղարկում իր ծննդավայրը՝ Նոր Ջուղա, որպես նվեր Ս. Ամենափրկչյան վանքին: Շուրջ երեսուն տարի անգործ մնալուց հետո 1872-1873թ.թ. տպարանը սկսում է տպագրել գրքեր:

1880-ական թվականներին հայկական տպարաններ են բացվում նաև Ռեշտում, Թավրիզում, Թեհրանում և այլուր:

XIXդ. վերջին և XXդ. սկզբին ծնունդ առան իրանահայ պարբերականները: Թեհրանում, Թավրիզում ու Նոր Ջուղայում հրատարակվեցին շուրջ երկու տասնյակ թերթեր ու ամսագրեր՝ «Շավիղ» (1894-1897), «Սստղ Արևելյան» (1896), «Գործ» (1903), «Նոր Ջուղայի լրաբեր» (1904-1908), «Ազգարար Առաջնորդարանի» (1904-1905), «Առավոտ» (1909-1911), «Զանգ» (1910-1911), «Թավրիզի հայտարարություններ» (1910-1912), «Արշալույս» (1912), «Ղարադաղ» (1912-1914), «Միտք» (1912-1914), «Խոսք» (1913) և այլն:

XIXդարում և XXդ. սկզբին Իրանի հասարակական-քաղաքական, տնտեսական և կրթական-մշակութային կյանքում իրենց արդյունավոր գործունեությամբ աչքի են ընկել մեծ թվով հայեր: Նրանցից շատերին վստահվել է արքունի և պետական բարձր պաշտոններ: Հիշատակենք դրանցից մի քանիսին. Միրզա Մելքում-խանը (եղել է Իրանի դեսպանը Լոնդոնում և Բեռլինում, միաժամանակ նա հայտնի է որպես Իրանի սահմանադրական շարժման նախահայր, հայտնի դրամատուրգ և լուսավորիչ), Ջհանգիր Էնիկոլոի Մամիկոնյան, (մեծ ծառայություններ ունի Իրանի ռազմական գործում և քաղաքացիական վարչության մեջ, եղել է նաև Իրանի գեղարվեստի նախարարը), Նարիման Մամիկոնյան-Էնիկոլոփյան (եղել է պարսից դեսպանը Կ. Պոլսում և Վիեննայում), Հովհաննես խան Մասեհյան (եղել է Իրանի արտակարգ և լիազոր

դեսպանը Բեռլինում, Լոնդոնում ու Տոկիոյում, ինչպես նաև իրանական մեջլիսի պատգամավոր: Շեքսպիրի հայերեն լավագույն թարգմանիչը), Սեթ խան Աստվածատուր, Հովհաննես խան Ազբալյան, Դավիթ խան Դավթյան, զորապետ Զոհրաբ խան Ամիր-Թոքիանե և այլն: Արքունի ոսկերիչներ են եղել Թուրապ խանը (Թադեոս Առաքելյան) և նրա զավակները՝ Ստեփան ու Տիգրան Իսմայիլ խանները, տաղանդավոր նկարիչ էր Հակոբ Հովնաթանյանը, հայտնի բժիշկներ էին Դավիթ խան Մկրտչյանն ու նրա որդիները և այլն:

Այդ նույն ժամանակաշրջանում Իրանում հայտնվում են նաև հայազգի մեծահարուստ արդյունաբերողներ և առևտրականներ: Դրանցից էին, օրինակ, Բաքվի նավթարդյունաբերող ընտանիքներից մեկը՝ Լիանոզովները (Լիանոզյանները), որոնք ցարական Ռուսաստանի անունից ձեռք էին բերել Կասպից ծովի իրանական մասի և հարակից գետերի ձկնարդյունաբերության կոնցեսիան և արտահանում էին մեծ քանակությամբ թանկարժեք ձկնեղեն ու խավիար: Պարսկահայ դրամատերերից ու վաճառականներից հայտնի էին նաև Թումանյան եղբայրները, որոնք նաև անվանի բարերարներ էին: Անկա են եղել նաև հայ-ռուսական համատեղ ընկերություններ՝ «Պչելա», «Ամիր» և այլն: Ամենի մեծ թիվ էին կազմում հայ մանր առևտրականները, արհեստավորները և քաղաքային բնակչության միջին խավերը:

XIXդ վերջերից սկսեց աշխուժություն ապրել նաև իրանահայ գաղութի հասարակական-քաղաքական կյանքը: Հրապարակ եկան քաղաքական կուսակցությունները: 1890 թվականից Հայ Հեղափոխական Դաշնակցության տեղական կոմիտեներն սկսեցին գործել սկզբում Ատրպատականում (Թավրիզ, Սալմաստ, Խոյ, Ուրմիա, Ղարադաղ), ապա նաև Գիլանում՝ (Էնզելի, Ռեշտ, Աստարա), ավելի ուշ Թեհրանում ու Նոր Ջուղայում: Թավրիզում, Ռեշտում, Թեհրանում և մի շարք այլ վայրերում կազմակերպվեցին նաև Հնչակյան կուսակցության կոմիտեներ:

1908-1909թթ. ստեղծվեց Իրանի Սոցիալ-Դեմոկրատական կուսակցությունը, որի կազմավորման գործում հայերն ունեցել են գործուն մասնակցություն:

Հայ ազգային-ազատագրական շարժումների տարիներին Իրանի հայաբնակ վայրերը դարձան հայդուկային և զինատար խմբերի կենտրոնատեղիներ: Վան-Վասպուրական ճանապարհը գնում էր Իրանի վրայով և հայդուկները Իրանի սահմանամերձ կայանները օգտագործում էին

որպես հենակետեր: Այդ տեսակետից կարևոր դեր խաղաց հատկապես ս.Թադեի (Թադեոս Առաքյալ) վանքը:

90-ական թվականների պարզուկհամիդյան զուլումի տարիներին, Օսմանյան կայսրությունում կազմակերպված հայկական ջարդերից մազապուրծ մեծ թվով հայեր ապաստան գտան Իրանի տարածքում:

Իրանահայությունը իր մասնակցությունն է բերել Իրանի 1905-1911 թվականների հեղափոխությանը և սահմանադրական շարժմանը: Հատկապես աչքի են ընկել եփրեմ խան Դավթյանը Արշակ Գաֆավյանը (Քեռի) : եփրեմ խանը հանդիսանում էր սահմանադրական կարգերի նորաստեղծ զինված ուժերի հրամանատարը: Չափազանց մեծ էր վերոհիշյալ հայ գործիչների դերը հակահեղափոխության դեմ պայքարի կազմակերպման գործում:

Իրանական հեղափոխությունից հետո Իրանի հասարակական-քաղաքական կյանքում նկատվեցին որոշ դրական տեղաշարժեր, այդ թվում նաև իրանահայության համար: Հայերն ընտրվեցին տեղական ինքնավարության մարմիններում՝ էնջումեններում: Երկրորդ գումարման մեջլիսում իրանահայությունը իրավունք ստացավ ունենալու երկու պատգամավոր: Այդ իրավունքից հայերը օգտվում են առ այսօր:

1908թ. փետրվարի 17-ին վերջնականապես կազմակերպվեց Թեհրանի հայոց ազգային խորհուրդը, որի խնդիրն էր, իբրև տեղի հայոց բարձրագույն իշխանություն, միջնորդ հանդիսանալ հայ համայնքի և կառավարության ու մեջլիսի միջև: 1911թ. Ազգային խորհուրդը պաշտոնապես ճանաչվեց պետության կողմից և կոչվեց «Թեհրանի հայոց համայնական վարչություն»: Այդ վարչության ընդունած օրենքով 1917թ. կազմվեցին Համադանի, Սուլթանաբադի և այլ հայաշատ վայրերի համայնական կազմակերպությունները, որոնց ներկայացուցիչներից էլ ստեղծվեց «Իրանահայ ընդհանուր խորհուրդը»:

Առաջին համաշխարհային պատերազմը իր ծանր հետևանքներն է թողել նաև իրանահայության վրա: 1918թ. թուրքական զորքերը մտնելով Մորպատական, կոտորել են զգալի թվով հայ բնակչություն, ավերել բազմաթիվ հայկական գյուղեր, թալանել ու կողոպտել հայ եկեղեցիներ և այլն: Արևմտահայության եղեռնից փրկված ու վերապրած բազմաթիվ հայեր ապաստան են գտել Իրանի հյուրընկալ հողում և արժանացել բարի ու ազնիվ իրանական ժողովրդի ասպնջական վերաբերմունքին:

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով, ինչպես ամբողջ հայության, նույնպես և նրա Իրանի հատվածի համար ստեղծված

վտանգավոր պայմանները առաջնահերթ խնդիր դարձրին այսպես կոչված «Պարսկական խորհուրդ» ստեղծելու հարցը: Դա հանդիսանում էր ամբողջ պարսկահայությունը ներկայացնող բարձրագույն մարմին: 1915-1916թ.թ. տագնապալից օրերին, երբ Ատրպատական ներխուժած թուրքական բանակը սպառնալիք էր ստեղծել հայ բնակչության համար, Պարսկահայ խորհուրդը, հիրավի, փրկարար դեր կատարեց վտանգված վայրերի հայ ազգաբնակչության համար:

Այն օրերին, երբ թուրքական զորքերը գրավել էին Ատրպատականն ու Քերմանշահ-Համադանը և սպառնում էին շարժվել Թեհրանի վրա և այդ ամբողջ տարածության վրա ապրող հայության հետ վտանգի ենթարկել նաև մայրաքաղաքի հայությանը, Պարսկահայ խորհուրդն իր դիմումներով մի կողմից հաջողեցնում է պաշտպանության խոստում ստանալ կառավարությունից, իսկ մյուս կողմից լայն հովանավորություն պատերազմում չեզոքություն պահպանած Իսպանիայի դեսպանատնից: Մասնավորապես Իսպանիայի դեսպանատունը համաձայնություն է տալիս Թեհրանում մի քանի մեծ շենքերի վրա պարզել իսպանական դրոշակներ, Թեհրանի հայությունը հավաքել այդ շենքերում և թուրքերի Թեհրանին մոտենալու ժամանակ իրենց հովանավորության տակ վերցնել մայրաքաղաքի հայ ազգաբնակչությանը:

Բարեբախտաբար պատերազմական գործողությունների՝ դաշնակիցների համար հաջող ընթացքի հետևանքով թուրքերը ստիպված եղան նահանջել թե՛ Ատրպատականից և թե՛ Համադանից և նրանց չհաջողվեց իրագործել իրենց չարաշուք ծրագրերը:

Իրանական կառավարությունը ևս այդ մեծ վտանգի ժամանակ ազդու կերպով պաշտպանեց իր քաղաքացի հայությանը, վճռականորեն արգելք հանդիսանալով թուրքերի կողմից հակահայկական ջարդերի ու խժդժությունների կազմակերպմանը: Մասնավորապես երբ թուրքական զորքերը մուտք գործեցին Թավրիզ, կառավարությունը ձեռնարկեց բոլոր միջոցները ապահովելու համար հայության կյանքն ու գույքը:

Ատրպատականի պյուռնոտ ընդհարումների, Վանի հերոսամարտի և սպա Վասպուրականի հայության գաղթի հետևանքով տարագիր հայության համար ստեղծվել էր անտանելի վիճակ: Այդ պայմաններում իրանահայությունը եղբայրական օգնության ձեռք մեկնեց հայությանը: Նա պատսպարեց փրկված որբերին և հենարան հանդիսացավ վերապրողներին:

1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո զգալի թվով հայեր պոտագաղթել են Իրան: Նման պոտագաղթ տեղի է ունեցել նաև 1920 թվականին, երբ Հայաստանի առաջին հանրապետության կործանումից հետո մեծ թվով հայեր ապաստան են գտել այդ երկրում:

Ի դեպ, Իրանը առաջին պետություններից մեկն էր, որ 1918թ. պաշտոնապես ճանաչեց Հայաստանի առաջին հանրապետության անկախությունը և դիվանագիտական, քաղաքական ու տնտեսական աջակցություն ցույց տվեց հայկական նորաստեղծ պետությանը:

Հայաստանում Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո իրանահայությունը չի զլացել իր օգնությունը հայկական երկրորդ հանրապետությանը: Սկիզբաքայ գաթաղխներից Թավրիզն առաջինն է եղել, որ կազմակերպել է Թավրիզի ՀՕԿ-ի մասնաճյուղը (1922թ. ապրիլի 21-ին): Շատ չանցած Հայաստանի օգնության կոմիտեներ են ստեղծվել Իրանի գրեթե բոլոր հայ գաղթօջախներում՝ Թեհրանում, Նոր Ջուղայում, Ռաշտում, Էնզելիում, Ղազվինում, Սիվազում, Նիշապուրում, Մեշհեդում և այլն:

30-ական թվականներին ստալինյան հալածանքների հետևանքով, Խորհրդային Միության տարածքից այսպես կոչված «Իրանահպատակ» հայերը բռնի կերպով դեպորտացվեցին դեպի Իրան, ստվարացնելով տեղի հայ գաղթօջախները:

Առհասարակ պետք է նշել, որ Հայաստանում խորհրդային կարգերի ժամանակ երկու երկրների միջև տնտեսական ու քաղաքական հարաբերությունները ըստ էության արհեստականորեն խզված են եղել: Այդ տարիներին Արաքս գետը ոչ թե երկու ժողովրդներին միացնող, այլ բաժանող գետ էր, որովհետև ապրելով կողք-կողքի, լինելով դարավոր հարևաններ, Հայաստանն ու Իրանը գործնականում չեն ունեցել շփման եզրեր: Թեև պետք է խոստովանել, որ այդ յոթ տասնամյակների ընթացքում հայ ժողովրդի կողմից երբեք չէր դադարել հետաքրքրությունը Իրանի, նրա ժողովրդի ու մշակույթի նկատմամբ:

Մինչև 30-ական թվականների կեսերը Ռեզա շահը խրախուսում էր իրանահայության գործադրած քանքերը հօգուտ Իրանի և նրա զարգացման: Սակայն պաշտոնական այցով Թուրքիա մեկնելուց և թուրքական հանրապետության նախագահ Մուստաֆա Քեմալին այցելություն տալուց հետո նա որդեգրեց հայահալած քաղաքականություն: Նախ

սկսվեց դպրոցներից: 1936թ. Ռեզա շահի հանձնարարությամբ կրթության նախարար մոլլա Թադայոնը մշակեց կրթական մի ծրագիր և հրահանգեց հայ դպրոցներին առաջնորդվել այդ ծրագրով: Դա նշանակում էր, որ հայկական դպրոցներում դասավանդումը պետք է կատարվեր պարսկերեն լեզվով, հետևաբար վերջ էր տրվում հայկական դպրոցների գոյությանը: Կրթության նախարարությունը գրավեց հայկական դպրոցների մի մասի կալվածքներն ու գույքերը: Ռեզա շահի ազգայնական քաղաքականությունը չէր սահմանափակվում լոկ հայ ազգային փոքրամասնության նկատմամբ կիրառված վերոհիշյալ քաղաքականությամբ: Պետական նոր կրթական ծրագիրը ստիպված էին ընդունել նաև ամերիկյան, անգլիական, ֆրանսիական միսիոներական դպրոցները:

Հայկական դպրոցների փակմանը հաջորդեց մշակութային աշխատանքների արգելումը: Չէր թույլատրվում հայերեն լեզվով կարդալ դասախոսություններ, կազմակերպել ներկայացումներ, տպագրել որևէ բան, նույնիսկ հասարակ հայտարարություն, մահազդ և մինչև անգամ այցեքարտ: Արտոնված էր միայն ՀՅԴ օրգան «Ալիք» թերթի հրատարակությունը, բայց խիստ գրաքննությունից հետո: Բոլոր հոդվածները պետք է թարգմանվեին պարսկերենի, ուղարկվեին ոստիկանության գրաքննության բաժին և թույլտվություն ստանալուց հետո միայն իրավունք կար տպագրելու: Հալածանքը տարածվեց նույնիսկ հայերեն լեզվով գրված ցուցանակների վրա: Առանց բացառության ջնջվեցին կամ հանվեցին հայերեն լեզվով գրված բոլոր ցուցանակները: Մուսանդները փողոցներում, ավտոբուսների մեջ ու շուկայում հայերեն խոսողներից պահանջում էին «հասկանալի» լեզվով խոսել:

Անշուշտ չի կարելի Ռեզա շահի վերոհիշյալ քաղաքականությունը բացատրել լոկ որպես հետևանք Մուստաֆա Քեմալի հակահայ հուշումների: Էականը այն էր, որ վարելով շեշտված ազգայնական-շովինիստական քաղաքականություն, Ռեզա շահը ձգտում էր երկիրը միատարր դարձնել, բոլոր ազգերին ու ժողովուրդներին համաձուլել մեկ միասնական «իրանական ազգի» մեջ: Ասիմիլյացման այդ քաղաքականությունը կիրառվում էր ոչ միայն հայերի, այլև ազերիների, քրդերի, արաբների և այլոց նկատմամբ: Կառավարությունը նույնիսկ Ատրպատականի թեմական առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին, մի խումբ հայ մտավորականների և դաշնակցական կուսակցության մի շարք ղեկավար գործիչների կանչեց Թեհրան, նրանց սաստելու

համար, մեղադրելով Թուրքիայում Արարատի շրջանի քրդական ապստամբության հետ կապեր ունենալու մեջ:

Այդ հայահալած քաղաքականությունը տևեց մոտ տասը տարի: Այդ տարիների ընթացքում իրանահայ գաղութը չհաշտվեց իրեն պարտադրված ազգային-մշակութային կյանքի այդ սահմանափակումների հետ: Համարյա բոլոր հայկական բնակավայրերում, տնային պայմաններում, կառավարության խուզարկու աչքից հեռու, կազմակերպվում էին հայոց լեզվի դասընթացներ, գրադարաններ, հայոց պատմություն ու գրականություն ուսումնասիրող խմբակներ և այլն: Հայ դպրոցական-կրթական կյանքը, այդպիսով շարունակվեց, սակայն «ընդհատակյա» պայմաններում: Այդ գործում չափազանց մեծ դեր խաղացին հայ կանայք և նրանց կազմակերպությունները: Ռեզա շահի անկումով (1941 թ.) վերացվեց հալածանքը և իրանահայությունը վերստին տեր կանգնեց իր իրավունքներին: Հայկական դպրոցները վերաբացվեցին, վերականգնվեցին նաև մշակութային և հանրային հաստատությունները, ապարեզ եկան մշակութային նորանոր միություններ: Առհասարակ պետք է նշել, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայկական դպրոցական ցանցի զարգացման ու ծավալման համար: Այդ տարիներին, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում, դպրոցական շինարարությունը հատկապես մեծ թափ ստացավ Թեհրանում, որի բնակչությունը հախուռն տեմպով աճում էր: Այսպես, իրար հետևից Թեհրանում բացվեցին «Դանայի», «Արամ», «Շահազիզ», «Հախնազարյան», «Մնի», «Շահ-Աբբաս», «Մարիամյան», «Արարատ», «Թունյան» և այլ դպրոցներ: Ճիշտ է, հայկական կոչված այդ դպրոցները հայկական էին միայն աշակերտների կազմով, որովհետև դասավանդումը նրանցում կատարվում էր պարսկերեն լեզվով, իսկ մայրենի լեզվի ուսուցումը դուրս էր ծրագրերից (տարրական դպրոցներում հայոց լեզվի դասավանդմանը հատկացվում էին խիստ սահմանափակ ժամեր):

Հետպատերազմյան տարիներին նոր դպրոցներ կազմակերպվեցին նաև երկրի հարավային (Աբադան և այլն), ինչպես նաև հյուսիսային շրջաններում (Մեշհեդ, Ռաշտ և այլն):

Տեղի թեմական մարմինների իրավասությանը ենթակա դպրոցներից բացի Թեհրանում կային նաև մասնավոր դպրոցներ:

70-ական թվականներին միայն Թեհրանում կային 22 հայկական դպրոցներ (ներառյալ մասնավորները): Դրանցից 5-ը միջնակարգ էին,

17-ը՝ տարրական: Մնացած դպրոցները տեղաբաշխված էին Սիվազ, Ուրմիա, Համադան, Մասքեդ-ե Սուլեյման, Ղազվին, Մեշհեդ, Էնզելի, Ռաշտ, Քերմանշահ (այժմ Բախթարան), Նոր Ջուղա, Թավրիզ, Աբադան և այլ քաղաքներում, ինչպես նաև գյուղական վայրերում: Իրանում հայկական դպրոցների նյութական վիճակը ծանր էր, որովհետև դրանք պահելու միջոցները հիմնականում գոյանում էին ուսման վարձից, ունևոր մարդկանց նվիրատվություններից, կոակներից և այլն:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո, 1946թ. կազմակերպվեց իրանահայության հայրենադարձություն դեպի Հայաստան: Հայրենիք վերադարձան 25-28 հազար հայ: Հայրենադարձության երկրորդ խոշոր ալիքը կազմակերպվեց 60-ական թվականներին: 1963թ. սկսվեց հայերի տեղափոխությունը Հայաստան: Մոտավոր հաշվումներով 1922-1972թթ. Իրանից Խորհրդային Հայաստան է վերադարձել մոտ 65 հազար հայ: Ներգաղթից հետո Իրանում համարյա գյուղական բնակչություն չմնաց, մասամբ տեղափոխվեց Հայաստան, մասամբ էլ ուրբանիզացման բուռն գործընթացի հետևանքով ամբողջապես տեղափոխվեց քաղաքները, մասնավորապես Թեհրան: Այժմ հատ ու կենտ հայկական գյուղեր են մնացել երկրի հարավում՝ Փերիայի շրջանում, հյուսիսում՝ Սորպասարանում, Արաքի (Նախկին Սուլթանաբադ) շրջանում և այլն: Նրանք գլխավորապես զբաղված են այգեգործությամբ, հացահատիկային կուլտուրաների մշակմամբ, մեղվաբուծությամբ, մասամբ նաև անասնապահությամբ: Կանանց շրջանում տարածված զբաղմունք է գորգագործությունը:

Ներկայումս իրանահայության ջախջախիչ մեծամասնությունը բնակվում է քաղաքներում, մասնավորապես Թեհրանում: Քաղաքային բնակչության շրջանում մեծ թիվ են կազմում այսպես կոչված «ազատ մասնագիտություններիո» ներկայացուցիչները՝ բժիշկներ, ինժեներներ, իրավաբաններ, գործարար մարդիկ և այլն: Սակայն հայերի հիմնական զանգվածը բաղկացած է արհեստավորներից և վաճառականներից: Խոշոր գործարանատերերը, դրամատերերը, (Մահակյան եղբայրներ, Աֆթանդիլյաններ, Բուդաղյաններ, Հարությունյաններ, Բաղդասարյաններ, Պատմագրյաններ, Արզումանյաններ, Կարագոզյաններ, Թելեֆյաններ, Թավթաքյաններ, Մարգսյաններ, Թովմասյաններ, Դավիթխանյաններ, Աբրահամյաններ, Ֆրանգյաններ, Միքայելյաններ և այլն), ինչպես նաև արվեստագետները և այլն 1979թ. իսլամական հեղափո-

խությունից հետո հիմնականում տեղափոխվել են արտասահման: Ուստի մեր օրերում նման մարդկանց թիվը կարելի է հաշվել մատների վրա: Ներկայումս, օրինակ, բավականին խոշոր ձեռնարկատերեր են հանդիսանում Սեպուհ, Նժդե և Վիգեն Ասլանյանները, Լևոն, Ժորիկ և Հենրիկ Սիարոնյանները, Շահբազյան եղբայրները, Ալբերտ Բաբայանը և ուրիշներ:

Մինչև XXդ. 40-ական թվականները Իրանահայ գաղութը պահպանում էր իր պատմական բաժանումը երկու թեմերի՝ Թավրիզի (Ատրպատականի) և Իրանա-Հնդկականի: Թեմերի կենտրոնները համապատասխանաբար Թավրիզն ու Նոր Ջուղան էին: 1944թ. նախկինում Իրանա-Հնդկական թեմի մեջ մտնող համայնքների մի մասից կազմվեց նոր՝ Թեհրանի թեմը՝ Թեհրան կենտրոնով:

Ներկայումս իրանահայ համայնքը բաղկացած է երեք թեմերից.

1. Հյուսիսային կամ Թավրիզի թեմ, որը միավորում է Իրանի հյուսիսային նահանգներում ապրող հայ բնակչությանը: Այս թեմի նախկին անունը (մինչև 1833թ.) եղել է Ատրպատականի թեմ: Նրա կենտրոնն է եղել Սուրբ Թադեոսի (Թադեի) վանքը՝ Մակուի շրջանում: 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո Ատրպատականի թեմի կենտրոնը Սուրբ Թադեոսի վանքից փոխադրվել է Թավրիզ: 1833թ. թեմը վերանվանվել է Թավրիզի թեմ, որը սակայն ավանդաբար ներկայումս ևս հաճախ անվանում են Ատրպատականի թեմ: Թեմի առաջնորդանիստ կենտրոնը Թավրիզ քաղաքն է:

Վարչական առումով այս թեմի մեջ այժմ մտնում են երեք նահանգներ: Դրանք են Արևելյան Ատրպատական (Թավրիզ կենտրոնով), Արևմտյան Ատրպատական (Ուրմիա կենտրոնով) և Արդեբիլի նահանգ (Արդեբիլ կենտրոնով):

Նախկինում Թավրիզը ունեցել է համեմատաբար մեծ թվով բնակչություն և հանդիսացել է Իրանի հայկական գաղութի աչքի ընկնող կրթական-մշակութային կենտրոն: Մինչև 70-ական թվականների վերջերը Թավրիզում բնակվում էր ավելի քան 10 հազար հայ: Մասամբ արտասահման արտագաղթելու, իսկ գլխավորապես Թեհրան տեղափոխվելու պատճառով 1998թ. մնացել էր ընդամենը 1200 հայ: Այդ նույն ժամանակ Ուրմիայի հայ բնակչությունը կազմում էր 2000 մարդ, այն դեպքում, երբ ոչ վաղուց այնտեղ ևս ապրում էին զգալի թվով հայեր: Շնչին թվով հայեր կան նաև Սալմաստում և Արդեբիլում:

Թավրիզի թեմի առաջնորդարանի տվյալներով, 1998թ. այդ թեմի մեջ մտնող հայ բնակչության ընդհանուր թիվը կազմում էր շուրջ 3500 հոգի:

1961թ. Թեմը անջատվեց Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից և միացվեց Կիլիկյան կաթողիկոսությանը: Այդ ժամանակվանից սկսած Թավրիզի թեմական առաջնորդներն սկսեցին նշանակվել Անթիլիասից:

1913-1948թ.թ. ընթացքում Թավրիզի թեմական առաջնորդ է եղել ճանաչված հոգևորական ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը:

Այժմ թեմի առաջնորդն է նշան վարդապետ Թոփուզյանը, որը միաժամանակ հանդիսանում է կաթողիկոսական փոխանորդ Կիլիկիայի կաթողիկոսության:

Թավրիզի թեմի բարձրագույն մարմինը թեմական պատգամավորական ժողովն է: Ինչպես և Իրանի մյուս թեմերում՝ թեմական խորհրդի նախագահը թեմական առաջնորդն է: Պատգամավորական ժողովն ու թեմական խորհուրդն ունեն իրենց մնայուն դիվանները:

Թավրիզում գործում է հայկական դպրոց, հայ մշակութային կենտրոն և «Արարատ» մարզադաշտը: Գործող եկեղեցիներ են Ս. Սարգիս և Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցիները: Պետք է նշել տակայն, որ ընդհանուր առմամբ ներկայումս Ատրպատականի թեմի շրջանակներում հայ մշակութային կյանքը խամրել է

Հյուսիսային կամ Թավրիզի թեմի տարածքում են գտնվում հայ ճարտարապետական այնպիսի արժեքավոր հուշարձաններ, ինչպիսիք են նշանավոր Ս. Թադեոս Առաքյալի (Ս. Թադեի), Ս. Ստեփանոս Նախավկայի և այլ վանքերը: Ս. Թադեոսի վանքը, որը տեղացի ազերիները անվանում են Կարա-Քիլիսե, գտնվում է Իրանական Ադրբեջանի տարածքում, Մակու քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա:

Ըստ ավանդության, վանքը հիմնվել է Ս. Թադեոս առաքյալի կողմից մի վայրում, ուր նախկինում եղել է հեթանոսական մեհյան:

Քրիստոնեության արշալույսին կառուցված, բազմիցս կործանված և հաջորդաբար վերաշինված այս վանքը այսօր ևս մեզ ներկայանում է իր վիթխարի, բայց միաժամանակ ներդաշնակ ծավալով:

Ս. Ստեփանոսի վանքը գտնվում է Իրանական Ադրբեջանի արևմտյան մասում, Հին Ջուղայից մոտավորապես 15 կմ հեռավորության վրա, Արաքսի հովտի լայնակի մի կիրճի մեջ:

Պատմականորեն վանքը գտնվել է Նախիջևանի հայկական նահանգի մեջ: Ս. Ստեփանոս նախավկայի վանքը հայտնի է նաև Դարաշամբի վանք անունով (ներկայումս մի ավերված գյուղի անունից):

Թավրիզի, Մարանդի, Ջուլֆայի, Նախիջևանին սահմանակից իրանական տարածքների, Մակուի, Ուրմիայի, Սալմաստի, Խոյի շրջաններում ևս ցրված են բազմաթիվ հայկական ճարտարապետական հուշարձաններ: Դրանցից հիշատակության արժանի են Սորհուլի Ղալչայի Ս. Հովհաննես եկեղեցին, Մորմորի, Դերիքի, Ս. Աստվածածին, Խոյի, Մուժումբարի, Ս. Հռիփսիմե և Ս. Ներսես, Ֆանայի, Սորմանավայի Ս. Սարգիս, Հաֆթվանի Ս. Գևորգ, Նախիջևան-Թաղիայի Ս. Աստվածածին, Գյարդաբադի Ս. Գևորգ, Ղարաբաղի (գյուղ Սալմաստից 20կմ հեռավորության վրա), Մահլազանի Ս. Խաչ, Գրիսի կամ Գրնիսի, Կարա Քիլիսայի Ս. Սարգիս, Հովվի եկեղեցին (Արաքսի ափին, Ջուղայից երկու կմ հեռավորության վրա), Տղմուտ գետի ափին գտնվող Սպիտակ կամ Ս. Գևորգ եկեղեցիները, Մահլաթի Գալագ քուրդի, Բարոնի գերեզմանատները իրենց խաչքարերով և այլն:

Վերոհիշյալ բոլոր հուշարձանները, ինչպես և առհասարակ երկրի տարբեր վայրերում գտնվող հայ մշակույթի մյուս հուշարձանները գտնվում են Իրանի մշակութային ժառանգության կազմակերպության հովանավորության ներքո:

2. Սպահանի և Հարավային Իրանի հայոց թեմ: Այս թեմի անունը մինչև 1960 թվականը պաշտոնապես եղել է Իրանա-Հնդկաստանի կամ Պարսկա-Հնդկաստանի Հայոց թեմ: Այն ձևավորվել է 1606թ., երբ Հայաստանից բռնագաղթված հայերին շահ Աբբաս Ի-ը բնակեցրեց Սպահանում, Ջայանդերուդ գետի ափին, որտեղ նրանք կառուցեցին Նոր Ջուղա հայկական ավանը:

Դեռևս XVII դարում, երբ հայ վաճառականները բնակություն են հաստատել Հնդկաստանում և Հեռավոր Արևելքի երկրներում, որտեղ ստեղծվել են հայկական նոր գաղթօջախներ, Նոր Ջուղայից Ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդը հոգևոր հովիվներ է ուղարկել այդ համայնքների համար: Դրա հետևանքով Հնդկաստանն ու Հեռավոր Արևելքը ևս մաս են կազմել Սպահանի թեմին, որից հետո այդ թեմը կոչվել է Իրանա-Հնդկաստանի Հայոց թեմ:

Մինչև 1945 թվականը ողջ պարսկահայությունը՝ բացի Ատրպատականի նահանգի հայերից, մաս է կազմել Իրանա-Հնդկաստանի թեմին:

Անցյալում, մինչև 1845 թվականը, Իրաքը (Միջագետքը) ևս մտել է այս թեմի մեջ:

Թեմի ներկա վարչական սահմանների մեջ են մտնում Սպահանը (որի շրջաններից մեկն է Նոր Ջուղան), Շահինշահր նորակառույց քաղաքը, Փերիո գավառը, Շիրազ քաղաքն ու Պարսից ծոցի առափնյա Խուզիստան նահանգը:

Թեմի առաջնորդանիստ կենտրոնը 1606թվականից մինչև օրս հանդիսանում է Նոր Ջուղան, որտեղ դեռևս XVII դարում Հայաստանից բռնագաղթի ենթարկված հայերի կողմից կառուցված Ս. Ամենափրկիչ վանքը հանդիսանում է Առաջնորդի նստավայրը: Այդ վանքը հայ մշակույթի պատմության մեջ հայտնի է որպես ամենաաչքի ընկնող կենտրոններից մեկը:

1920-1924թ.թ. թեմի առաջնորդն է եղել Մահակ Արքեպիսկոպոս Այվազյանը, որը թեմը գլխավորել էր նաև նախկինում՝ 1902-1912թ.թ.: Նրանից հետո թեմը գլխավորել է եպիսկոպոս Մեսրոպ (Մագիստրոս) Տեր-Մովսեսյանը (1926-1930): 1930թ. ընդհուպ մինչև 1945թ. Նոր Ջուղայի թեմական առաջնորդի տեղը թափուր էր: 1945թ. Էջմիածինը այստեղ ուղարկեց թեմական նոր առաջնորդ, եպիսկոպոս Վահան Կոստանյանին, որը պաշտոնավարեց մինչև 1949 թվականը:

1949-1961թ.թ. ընթացքում Իրանա-Հնդկաստանի թեմը առաջնորդ չի ունեցել: Մինչև 1958 թվականը այն վարչականորեն կապված է եղել Ս. Էջմիածնի կաթողիկոսության հետ: Սակայն 1958 թվականից, երբ տեղի ունեցավ եկեղեցական պառակտում, թեմն անջատվեց Էջմիածնից և վարչականորեն միացավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: 1961 թվականից սկսած մինչև 90-ական թվականների վերջերը թեմն ունեցել է Մնթիլիասից եկած վեց առաջնորդներ: Ներկայումս թեմի առաջնորդն է Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը, որն այդ պաշտոնը զբաղեցնում է 1978 թվականից սկսած:

Ի դեպ, 1958 թվականին, Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայ համայնքները անջատվելով Սպահանի թեմից, մնացին որպես Էջմիածնի կաթողիկոսությանը ենթակա հարանվանություններ:

Մինչև 1979թ. իսլամական հեղափոխությունը Նոր Ջուղան ունեցել է 10 հազար հայ բնակիչ: Այժմ հայերի թիվն այնտեղ հաստատապես նվազել է: Ներկայումս, ըստ Նոր Ջուղայի Առաջնորդարանի տվյալների, այնտեղ ապրում է շուրջ 7000 հայ բնակչություն: Այն հանդիսանում է

Սպահան քաղաքի կարևորագույն շրջաններից մեկը: Նոր Ջուղայում կան XVII դարում կառուցված երկու վանքեր (Ս. Ամենափրկչյան և Ս. Կատարինյան (կուսանաց մենաստան) և 9 եկեղեցիներ (Ս. Աստվածածին, Ս. Հակոբ, Ս. Բեթղեհեմ, Ս. Գևորգ, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Հովհաննես Մկրտիչ, Ս. Մինաս, Ս. Ներսես, Ս. Նիկողայոս): Հիշյալ եկեղեցիներից ոչ բոլորն են գործող:

Նոր Ջուղայում կան շատ փոքրաթիվ հայ կաթոլիկ և ավետարանական համայնքներ, որոնցից առաջինը ունի վանք, իսկ մյուսը եկեղեցի-աղոթատեղիներ, սակայն նրանք չունեն հոգևորականներ և կազմակերպված համայնքային կյանք:

Նոր Ջուղայում ներկայումս կան հետևյալ գործող հաստատություններն ու միությունները. «Գիշերօթիկ» (նախկին որբանոց) հաստատություն, «Նոր Ջուղայի հայոց ազգային ծերանոց», «Ղողոսխանյան ավանդից հանձնաժողով», «Ն. Ջ. Հայ կանանց գթության միություն», «Ն. Ջ. Հայուհյաց բարեգործական ընկերություն» «Փերիո կրթասիրաց» և «Ղահարմահալի ուսումնասիրաց» միություններ իրենց մասնաճյուղերով, «Մամուքայի Արշալույս Միություն», «Ն.Ջ. Հայ մարզա-մշակութային Արարատ միություն», «Իրանահայ ազգային-մշակութային միության» Նոր Ջուղայի մասնաճյուղ:

Թեմական խորհրդին անմիջականորեն ենթակա մարմիններից են՝ թեմի կրթական խորհուրդը (նախկին Նոր Ջուղայի Հայոց դպրոցների հոգաբարձությունը), Թեմի մշակութային հանձնախումբը, Բարեսիրական մարմինը, Գերեզմանատան բարեզարդման հանձնախումբը, Թեմի կպչվածա-տնտեսական մարմինը, Սբ. «Ամենափրկչյան» վանքի «Կոմիտաս» երգչախումբը և այլն: Կրոնական խորհրդի ենթակա մարմիններն են Կոակային տեսչությունն ու Ն.Ջ. Հայոց եկեղեցեաց վարչությունը:

Առաջնորդարանին ենթակա Նոր Ջուղայի հայոց կրթական հաստատություններն են՝ մանկապարտեզը, նախակրթարանը, տղաների և աղջիկների տարրական երկու առանձին դպրոցները «Ամրմեն» անունով, ինչպես նաև տղաների և աղջիկների երկու առանձին ուղեցույց և միջնակարգ դպրոցները՝ «Կատարինյան (արական) և «Գևորգ Քանանյան» (իգական) անունով:

1994-95 ուսումնական տարեշրջանում Նոր Ջուղայի հայոց դպրոցների հայ աշակերտության ընդհանուր թիվը եղել է շուրջ 1400, իսկ ամբողջ թեմի հայ դպրոցներինը՝ շուրջ 2000:

Սբ. Ամենափրկչյան վանքին կից գործում է 1636 թվականից հիմնված տպարանը, «Սբ. Ներսես Շնորհալի» գրադարանը, որն ունի շուրջ 25.000 կտոր գիրք և հայկական մասուլի հարուստ հավաքածու, թվով 751 գրչագրերով հարուստ ձեռագրատունը, Սբ. Ամենափրկչյան վանքի թանգարանը:

1961թ. Սպահանի պետական համալսարանի օտար լեզուների բաժնում հիմնադրվել է և մինչև օրս գործում է հայոց լեզվի և գրականության մասնաճյուղը՝ իր հայագիտական ամբիոնով հանդերձ:

Նոր Ջուղայից բացի, որոշ թվով հայեր են բնակվում նաև Սպահանում, ինչպես նաև նրանից դեպի հյուսիս, մոտ 30 կմ հեռավորության վրա գտնվող նորակառույց Շահինշահր քաղաքում, որտեղ վերջին 15-20 տարիների ընթացքում Իրանի տարբեր վայրերից հավաքվել են շուրջ 3000 հայեր: Շահինշահրում գործում են երկու տարրական դպրոցներ՝ «Մրբոց վարդանանց» և «Մասիս» անվանումներով: Ծրագրվում է կառուցել եկեղեցի: Բացի տեղի «Համայնքի վարչությունից», Շահինշահրում կան նաև «Հայ կանանց եկեղեցասիրաց միությունը», «Ն. Ջ. Հայ մարզամշակութային «Արարատ» միության, «Իրանահայ Ազգային-Մշակութային միության», ինչպես նաև «Փերիո կրթասիրաց միության» մասնաճյուղերը:

Իրանա-Հնդկաստանի թեմի կազմի մեջ ժամանակին մտել են՝ նաև հայ բնակչություն ունեցող գյուղական շրջաններ: Դրանցից են եղել, օրինակ, Սպահանից դեպի Արևմուտք ընկած Քյարվանդ գավառի մեջ մտնող զուտ հայաբնակ Դովլաթաբադ և Վերին Քրդեր գյուղերը, որոնց ողջ բնակչությունը 1946թ. հայրենադարձվել է Հայաստան: Գյուղական բնակչություն ունեցող շրջաններից են եղել նաև Փերիա, Չհարմահալ, և Բուրվարի գավառները: Այդ գավառներից այժմ միայն Փերիան է, որ դեռևս կապված է Սպահանի թեմին: Փերիայի շրջանում, որտեղ նախքան ներգաղթը՝ 40-ական թվականներին, շուրջ 30 հայկական գյուղերում ապրում էին մոտ 17 հազար հայեր, այժմ մնացել են միայն 7 հայաբնակ գյուղեր, որոնցից միայն Բոլորանն է, որ դեռևս զուտ հայաբնակ է, իսկ մյուսները պարսկախառն են: Այդ յոթ գյուղերն են՝ Խոյգան, Ղալաթլիք, Ղարելուն, Նամակերտ, Մնկերտ, Սվարան: Հիշյալ գյուղերից յուրաքանչյուրն ունեցել է իր եկեղեցին, իսկ Խոյգանն ու Նամակերտը նույնիսկ երեքական եկեղեցիներ: Այդ յոթ գյուղերի հայ բնակչությունը, որը զբաղվում է հողագործությամբ, ներկայումս կազ-

մում է շուրջ 500 շունչ: Փերիայում այլ ևս հայկական դպրոցներ չկան և երեխաները հաճախում են Նոր Ջուղայի կամ Շահինշահրի հայոց դպրոցները:

Հայաբնակ գավառ է հանդիսացել նաև Չիարմահալը, որը գտնվում է Սպահանից դեպի հարավ-արևմուտք 144 կմ հեռավորության վրա: Այն Փերիայից հետո եղել է Իրանի հայաշատ խոշոր գավառը: Այս գավառի հայ բնակչությունը ևս մասամբ հայրենադարձվել է Հայաստան, մասամբ տեղահան է եղել և մեկնել քաղաքներ, որի հետևանքով շրջանը ամբողջությամբ դատարկվել է հայերից:

Ինչ վերաբերում է Բուրվարի շրջանին, այն Արաքի (Նախկինում Սուլթանաբադ) հետ միասին 1945թ. կցվել է Թեհրանի հայոց թեմին:

Սպահանի և Հարավային Իրանի թեմի մեջ մտնող քաղաքներից է նաև Շիրազը, որը հանդիսանում է Ֆարս նահանգի կենտրոնը: Այդ քաղաքում առաջին հայերը բնակեցվել են XVII դարում՝ շահ Աբբաս I-ի օրոք: Քաղաքի հնագույն թաղամասերից մեկում մինչև օրս կա «բազարչեե արամանե» (հայկական շուկա), որտեղ գտնվում է 1662թ. կառուցված Շիրազի հայոց Սբ. Աստվածածին եկեղեցին: Ի դեպ, այդ եկեղեցում է քահանայագործել և յոթը տարի շարունակ Բաբաքուի կոչված լեռան վրա գտնվիշների հետ ճգնավորություն անելուց հետո Հնդկաստան մեկնել առաջին հայ մամուլի՝ «Մզդարարար» ամսագրի հիմնադիր ու խմբագիր՝ շիրազեցի Հարություն քահանա Շմավոնյանը:

Ներկայումս Շիրազի հայ գաղթօջախը հայաշունչ մի փոքրիկ համայնք է Ֆարսի նահանգում, որտեղ դեռևս բարգավաճում է հայ ազգային կյանքը: Շիրազը նախկինում ունեցել է հոծ հայ բնակչություն, սակայն վերջին 15-20 տարիների ընթացքում այն կտրուկ նվազել է: 1970-78 թվականներին այդ քաղաքում եղել են 70 հայ ընտանիքներ: Ներկայումս մնացել է միայն 40-50 ընտանիք:

Շիրազում ամենօրյա հայոց դպրոց չի եղել. տեղի հայ կանանց եկեղեցասիրաց Միության ջանքերով, տասնամյակներ շարունակ հայ մանուկներին տրվել է կրոնական հայեցի դաստիարակություն ուրբաթօրյա հայրենագիտության դասընթացների միջոցով:

Շիրազի հայ գաղթօջախն ունի իր համայնքի գործերը կառավարող «Շիրազի հայոց եկեղեցական վարչությունը», Թեհրանի հայ մարզական «Արարատ» կազմակերպության մասնաճյուղը, «Շիրազի հայ մշակութային միությունը»: 1977-79 թվականներին Շիրազում կառուցվել է

«Հայ տուն» կոչվող շենքը, որտեղ կենտրոնացել են եկեղեցական վարչության և առհասարակ տեղի հայ համայնքի կրթական, մշակութային, մարզական և այլ աշխատանքները: Շիրազում դեռևս գործում է Ս. Աստվածածին եկեղեցին, որի գավիթում Մեսրոպ Թաղիադյանի հիշատակին կառուցված է մի հուշարձան (Մ. Թաղիադյանը թաղված է Շիրազում, սակայն այլ վայրում):

Սպահանի թեմի մեջ են մտնում նաև Պարսից ծոցի առափնյա Խուզիստան նահանգի հայ բնակչություն ունեցող վայրերը: Սկսած 1920-ական թվականներից մինչև 1980 թվականը (Իրանա-Իրաքյան պատերազմի սկիզբը) Խուզիստանի նահանգի նավթային արդյունաբերության քաղաքներում (Մասջեդ Սուլեյման, Սիվազ, Անդիմեշկ, Աբադան, Խորրամշահր, Բանդար Մահշահր, Աղաջարի և այլն), եղել են հոծ թվով հայկական համայնքներ, որոնց թիվը այս կամ այն քաղաքում աճել կամ նվազել է նավթային ընկերության աշխատանքների ծավալման կամ սահմանափակման հետ: 1960-70-ական թվականներին Խուզիստանում եղել են շուրջ 10.000 հայեր: Այդ բոլորից ներկայումս մնացել է միայն Սիվազի հազիվ թե 400 շունչ հաշվվող փոքրաթիվ համայնքը: Աբադանում և Խորրամշահրում պատերազմի ավարտից հետո, այժմ բնակվում են մի քանի հայ ընտանիքներ և նավթային ընկերության անհատ պաշտոնյաներ: Նորոգվել են 1954թ. կառուցված Աբադանի հայոց եկեղեցին ու դպրոցը, որոնք ռմբակոծվել էին պատերազմի ընթացքում: Հիմնական վերանորոգման են ենթարկվել նաև դարձյալ Իրանա-Իրաքյան պատերազմի ժամանակ ռմբակոծված Սիվազի հայոց Սբ. Մեսրոպ եկեղեցին և «Ուսումնասիրաց միության» մասնաճյուղը:

Պարսից ծոցի Բուշեհր քաղաքում ևս մինչև 1979 թվականը գոյություն ուներ փոքրաթիվ հայկական համայնք: Քաղաքում կար նաև հայկական եկեղեցի, որը կառուցվել էր 1819թ.: Սակայն ներկայումս Բուշեհրում ապրող հայեր այլևս չկան:

Այժմ, ոչ ստույգ տվյալներով, Սպահանի և Հարավային Իրանի թեմի շրջաններում ապրում է շուրջ 10 հազար հայություն:

3. Թեհրանի կամ Կենտրոնական թեմ:

Թեհրանի կամ Կենտրոնական թեմը, ի տարբերություն նախորդ երկուսի, ստեղծվել է շատ ավելի ուշ, 1944թ. սեպտեմբերին: Դրա պատճառը կայանում է նրանում, որ Թեհրանում հայ բնակչության հախուռն աճ արձանագրվեց միայն 30-40-ական թվականներին:

Թեհրանի կամ կենտրոնական թեմը իր բնակչության թվով ներկայումս իրանահայ գաղութում ունի առաջատար դեր: Այդ թեմը իր Թեհրան կենտրոնով ընդգրկում է հետևյալ համայնքները. Թեհրան, Համադան, Մեշհեդ, Գորգան, Սարի, Ռաշտ, Էնզելի, Ղազվին, Արաք (Նախկին Սուլթանաբադ), Բախթարան (Նախկին Քերմանշահ): Ներկայումս Թեհրանում հայերը կենտրոնացած են ինչպես առանձին թաղամասերում (Մաջիդիե, Նարմաք, Զարքեշ և այլն), այնպես էլ բնակվում են խառը բնակչություն ունեցող թաղամասերում:

Թեհրանի, կամ կենտրոնական թեմի մեջ մտնող հայկական համայնքներից ամենահինը երկրի արևմուտքում գտնվող Համադան քաղաքի համայնքն է: Սակայն վերջին երեք տասնամյակների ընթացքում այնտեղից տեղի ունեցավ հայ բնակչության հախուռն հոսք դեպի Թեհրան: Արդեն 80-ական թվականներին քաղաքում բնակվում էր ընդամենը 16 ընտանիք՝ 50 շնչով:

Մեշհեդ քաղաքը Միջին Ասիային սահմանակից Խորասան նահանգի կենտրոնն է: Նախկինում այդ նահանգում բնակվել են զգալի թվով հայեր: Սակայն արդեն 60-ական թվականներին նահանգի 10 քաղաքներից ու գյուղաքաղաքներից հայաբնակ էին միայն Մեշհեդը, Ղուչանը և Նիշապուրը: Իսլամական հեղափոխությունից հետո հայերի մեծ մասը տեղափոխվեց Թեհրան և այժմ հիշյալ քաղաքներում բնակվում են հատ ու կենտ հայեր: 1982 թ. Մեշհեդում կար ընդամենը 200 հայ:

Կասպից ծովի հարավային և հարավ-արևելյան մասում (Մազանդարանի նահանգ) գտնվող յոթ քաղաքներում ու գյուղերում ևս կան հայեր, որոնց թիվը նույնպես կարելի է հաշվել մատների վրա: Գորգան քաղաքում և նրա շրջակա ավաններում նախկինում մեծ թվով հայեր են բնակվել: Սակայն 1980 թ. այնտեղ մնացել է շուրջ 200 շունչ:

1944 թ. Թեհրանի կամ կենտրոնական թեմի պաշտոնական հռչակումից հետո, 1945 թ. հունվարին Էջմիածինը որպես թեմական առաջնորդ Թեհրան ուղարկեց Վահան ծայրագույն վարդապետ Կոստանյանին, որը սակայն պաշտոնավարեց մինչև հունիս ամիսը և փոխարինվեց Նոր Ջուղա, որպես Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ: Թեհրանի թեմի առաջնորդի պաշտոնում նրան փոխարինեց Ռուբեն Դրամբյանը (1945 թ. հունվարից մինչև 1948 թ. դեկտեմբերը):

1960 թ. հունվարին Թեհրան թեմական առաջնորդ ուղարկվեց Անթիլիասից Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը, որը մինչև օրս անընդմեջ գլխավորում է այդ պաշտոնը:

Թեմական առաջնորդին ընտրում է Պատգամավորական ժողովը: Ժողովի պատգամավորները ընտրվում են թեմի մեջ մտնող քաղաքներից և գյուղերից: Պատգամավորական ժողովը ընտրում է թեմական խորհուրդ, ինչպես նաև անմիջականորեն իրեն հաշվետու վերահսկիչ հանձնաժողով: Թեմական խորհրդի ընտրություններին մասնակցում են միայն առաքելական եկեղեցու հետևորդ հայերը:

Թեհրանում է գտնվում Ազգային Առաջնորդարանը: Այդ քաղաքում կան 6 գործող հայ առաքելական եկեղեցիներ: Թեհրանում հայկական եկեղեցիների ընդհանուր թիվը ութն է: Ս. Թադեոս-Բարթուղիմեոս (Թեհրանի ամենահին եկեղեցին է, կառուցվել է XIX դ. սկզբին: Գտնվում է Թեհրանի հարավ-արևելքում), Ս. Սարգիս, Ս. Աստվածածին, Ս. Թարգմանչաց, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Գևորգ, Ս. Մինաս, Սրբոց Վարդանանց եկեղեցիները:

Իրանահայ երեք թեմերից յուրաքանչյուրը ինքնուրույն միավոր է, այսինքն նրանք չեն ենթարկվում մեկը մյուսին և առանձին-առանձին գտնվում են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո: Սակայն Թեհրանի թեմական առաջնորդը հանդիսանում է Իրանի միջեկեղեցական խորհրդի նախագահը:

Իրանահայ համայնքի իրավական կարգը հիմնված է կրոնաեկեղեցական ինքնավարության վրա՝ հանձինս գոյություն ունեցող երեք թեմերի: Դրանք իրենց կրոնական գործերը վարում են համաձայն Հայոց Առաքելական եկեղեցու կանոնների և ավանդույթների, ինչպես նաև յուրաքանչյուր թեմի կողմից ներկայացված կանոնդրության և դրանց հիման վրա գործող ժողովրդական մարմինների որոշումների:

Ընդհուպ մինչև 1967թ. այդ թեմերը պետության կողմից իրավական ճանաչում չունեին: Նշված թվականից դրանք որպես իրավական մարմիններ ճանաչվեցին պետության կողմից: 1979թ. Իրանի Իսլամական Հանրապետությունը նույնությամբ ճանաչեց այդ թեմերի գոյությունը: Ընդորում կառավարությունը ճանաչում է նաև այդ թեմերի աշխարհիկ իրավասությունները որպես համայնքի իշխանություն: Մասնավորապես թեմական մարմինները օգտվում են ընտանեկան ու ժառանգական հարցերի լուծման իրավունքից, ինչպես նաև ամուսնության, ապահովագրանի, որդեգրման, կտակի և այլ իրավաբանական բնույթի իրավասություններից: Քանի որ Իրանում տիրապետող մուսուլմանական իրավունքը անհաշտելի է երկրի հայ քրիստոնյա բնակչության ընտանեկան-ժառան-

գական իրավունքների հետ, ուստի կառավարությունը առանձնացրել է դրանք՝ որպես եկեղեցական ինքնավարության շրջանակներում իրականացվող իրավական նորմերի մի խումբ:

Իրանում առկա է նաև հայ կաթոլիկ կամ կաթոլիկ համայնք, որի անդամների թիվը մոտ 2000 շունչ է (ըստ Կաթողիկե Առաջնորդարանի տվյալների ավելի քան 3000 շունչ): Թեհրանում կաթոլիկ համայնքն ունի եկեղեցի, «Հայ Մշակութային կենտրոն», «Հիլոյան եղբայրներ» ծերանոց, «Մարիամ կույսերի կրթական հաստատություն», «Մանուց տուն» որբանոց, Կաթողիկե Առաջնորդարան: Կաթոլիկ հարանվանության հոգևոր պետն է Գերապայծառ Վարդան արքեպիսկոպոս Թեքեյանը:

Կասպից ծովի ափին, Մազանդարան նահանգում, 26 հազար քառ. մետր տարածության վրա կաթոլիկ համայնքն ունի «Հայկաշեն» անունով մի համալիր, որի կառուցման աշխատանքները իրականացրել է Ներսես ծայրագույն վարդապետ Թոսունյանը: Հայկաշենում թեհրանահայերն ունեն առանձնատներ ու բնակարաններ: Այնտեղ ամառն ամիսներին իրենց հանգիստն են անցկացնում բազմաթիվ հայեր, կազմակերպվում են պատանեկան ճամբարներ և այլն:

Իրանում գոյություն ունի նաև Հայ Ավետարանական եկեղեցու կրոնական հարանվանություն: Իբրև կրոնական տարր Իրանի հայ բողոքականները հարյուրամյա պատմություն ունեն: Ներկայումս Թեհրանի հայ բողոքականների թիվը չի անցնում 200 հոգուց: Բողոքականների փոքր համայնքներ կան նաև Նոր Ջուղայում, Թավրիզում, Արաքումն Համադանում: Հայ բողոքականների ընդհանուր թիվը Իրանում շուրջ 1500 շունչ է: 1994թ. հուլիսին Իրանի հայ բողոքական եկեղեցու հոգևոր պետ, վերապատվելի Թադեոս Միքայելյանը սպանվեց իրանական կառավարությանը ընդդիմադիր «Մոջահեդինե խալքե Իրան» կազմակերպության ահաբեկիչների կողմից:

Ներկայումս Թեհրանի հայ ավետարանական եկեղեցու հոգևոր պետն է վերապատվելի Վարդան Հովհաննիսյանը:

Բողոքականների Թեհրանի համայնքն ունի իր երկսեռ վեցամյա դպրոցը և «Հայ ավետարանական երիտասարդաց միությունը»:

Թեհրանում և Թավրիզում կան նաև որոշակի թվով «Հայ գալստականներ» կամ «Շաբաթականներ», որոնց հետևորդների թիվը զույգ քաղաքներում կազմում է 130 մարդ: Իրանում չնչին թիվ են կազմում նաև հայ ուղղափառներն ու ունիթորները:

Թեհրանը հանդիսանում է իրանահայ գաղութի խոշորագույն մշակութային կենտրոնը: Թեհրանում լույս է տեսնում «Ալիք» օրաթերթը, ոչ պարբերաբար նաև «Արաքս» ամսագիրը: Վերջերս սկսել է լույս ընծայվել «Ապագա» ամսագիրը: Գործում է հայ մարզական- մշակութային «Արարատ» կազմակերպությունը, նույնանուն մարզավանով հանդերձ, որն ունի յոթ հազար հանդիսատեսի համար նախատեսված ֆուտբոլի դաշտ, մի քանի մարզական դահլիճներ, երկու ջրավազան, սրճարան, ճաշարան, մատուռ և այլն: «Արարատ» կազմակերպությունն ունի նաև նույնանուն ֆուտբոլի և բասկետբոլի թիմեր, որոնք մասնակցում են Թեհրանի առաջնությանը:

Թեհրանում գործում են նաև մի շարք միություններ, բարեգործական հիմնարկություններ և ազգային այլ մարմիններ: Հիշատակենք դրանցից մի քանիսը. «Միփան», «Հահարմահալ», «Մարդարապատ», «Փայտակարան», «Նայիրի» «Թեհրանի հայ կանանց բարեգործական ընկերություն», «Հ. Հ. Ը Միություն», «Ավետիս Ավետիսյան բուժարան», «Նայիրի տպարան», «Նայիրի գրախանութ», «Կանանց եկեղեցական միություն» և այլն: Դեռևս 1931թ. Թեհրանում հիմնվել է «Հայ ակումբը», որն ունի ամառային և ձմեռային ռեստորաններ, հարսանյաց հանդեսներ կազմակերպելու սրահ և այլ հարմարություններ, որտեղ կազմակերպվում են գրական երեկույթներ, համերգներ, ցուցահանդեսներ և այլն:

Իրանահայ գաղութում, մասնավորապես Թեհրանում, կան նաև մասնագիտական բնույթի բազմաթիվ միություններ: Օրինակ, «Իրանի հայ գրողների միություն», «Հայ բժիշկների միություն», «Հայ ճարտարապետների և ճարտարագետների միություն», «Հայ համալսարանականների միություն», «Հայ լուսանկարիչների միություն», «Գրական շրջանակ» և այլն:

Ներկայումս Իրանում գործում են մոտ վեց տասնյակ հայկական դպրոցներ: Գաղութի թեմական մարմինների վրա են ընկնում դպրոցների նյութական բազայի պահպանման ու ամրապնդման, դպրոցական շենքերի կառուցման և այլ հոգսեր: Թեհրանի դպրոցներից առավել աչքի ընկողները հետևյալներն են. «Արարատ», «Արաքս», «Ալիշան», «Գոհար», «Թունյան միջնակարգ», «Ի. Մահակյան», «Իրան Փիրուզ», «Մարի Մանուկյան», «Մարիամյան», «Մարիամ», «Ե. Թովմասյան», «Նոր

Անի», «Վաչե Հովսեփյան», «Քուշեշ Դավթյան», «Նայիրի», «Ն. Գյուլբենկյան», «Շանթ», «Ռոստոմ», «Սողոմոնյան», «Մասուն» և այլն:

Թեհրանում, Սպահանում և Շահինշահրում գործում է «Իրանահայ Ազգային և Մշակութային Միությունը»: Մայրաքաղաքում են գործում նաև «Ռաֆֆի» և «Մանահին» մարզամշակութային միությունները:

Իրանում հայ ավանդական կուսակցություններից գործում է միայն Հայ Հեղափոխական Դաշնակցությունը: Հնչակյան և Ռամկավար ազատական կուսակցությունները որևէ ձևով ներկայացված չեն:

Իրանում կան նաև մեկ ու կես տասնյակից ավել հայկական մանկապարտեզներ, որոնցից վեցը գործում է Թեհրանում: Լավագույն մանկապարտեզներից մեկը «Սիսարոնյան» մանկապարտեզն է, որն ունի հիանալի հարմարություններ: Մանկապարտեզի շենքը կառուցել է Լևոն Սիսարոնյանը ի հիշատակ իր ծնողների:

1960 թվականից Սպահանի համալսարանում գործող հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը տարեկան ընդունում է 25 մարդ: 1995 թվականից Իրանի մասնավոր «Իսլամական ազատ համալսարանում» բացվել է հայագիտական ֆակուլտետ: Ի դեպ, այն բացվել է Երևանի Հրաչյա Աճառյան համալսարանի հետ կնքված համապատասխան համաձայնագրով:

1968թ. Թեհրանի պետական համալսարանում ևս ստեղծվել էր հայագիտական ֆակուլտետ, որն արդեն տարիներ է, ինչ փակվել է: Միայն օտար լեզուների ֆակուլտետի կազմում ներկայումս գործում է հայագիտական մի բաժանմունք:

Իրանի ռադիոյի արտասահմանյան հաղորդումների խմբագրության կազմում առկա է «Թեհրանի հայկական ռադիոժամը», որը օրական մեկ ժամ ձայնասփռում է հաղորդումներ հայերեն լեզվով:

Թեհրանում գործում է նաև «Հայերենագիտական կենտրոն» անունով հայկական ուսումնական մի հաստատություն, որի ունկնդիրները գիտելիքներ են ձեռք բերում հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և այլն: Թեհրանում և այլ քաղաքներում ժամանակ առ ժամանակ կազմակերպում են սիրողական մակարդակի ներկայացումներ, համերգներ և այլն:

Այսպիսով կարելի է անվարան ասել, որ իրանահայության շփումները իրանական քաղաքակրթության հետ երբեք չօտարացրին նրան հարազատ ակունքներից և Իրանում հայերը երբեք չհայտնվեցին ձուլման

վտանգի տակ: Դրանում անշուշտ իրանահայությունը պարտական է ոչ միայն իր զարմանալի կենսունակությանը, այլև իրանական պետականության և Իրանի բարի ու ազնիվ ժողովրդի մեծահոգությանը, հանդուրժողականությանը և բարյացակամ վերաբերմունքին:

Հայաստանի Հանրապետության հետ Իրանի առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնելու նպատակով 1992թ. կազմակերպվեց «Իրան-Հայաստան» առևտրական պալատը», որի նախաձեռնողն ու նախագահն է «Մաթի» առևտրա-տրանսպորտային ընկերության սեփականատեր Լևոն Միսրոնյանը: Պալատի մեջ ընդգրկված են գործարար մարդիկ ինչպես իրանահայերից, այնպես էլ իրանցիներից:

Իրանի խորհրդարանում (մեջլիս) իր ներկայացուցիչները ունենալու իրավունքը իրանահայերը ստացել են 1905-1911թ.թ. իրանական հեղափոխության ժամանակ: Այդ իրավունքը ելնում է ընտրական իրավունքի համապատասխան հոդվածից, որ ընդունել է երկրորդ գումարման մեջլիսը 1909թ.:

Սկզբում հայերը իրանական մեջլիսում ունեցել են մեկ պատգամավոր: Սակայն 1915թ. հետո գաղութի հայ բնակչությանը իրավունք է տրվել մեջլիսում ունենալու նաև երկրորդ պատգամավորը:

Ներկայումս իսլամական խորհրդարանում Իրանի հայ համայնքը ներկայացված է երկու պատգամավորներով: Հյուսիսային իրանահայության պատգամավորն է Վարդան Վարդանյանը, Հարավային իրանահայությանը՝ Արտավազդ Բաղումյանը: Մեջլիսի հայ պատգամավորները իրավասու են հայ բնակչության դիմումները և բողոքները քննարկելու, պետական ու ղեկավար մարմիններին միջնորդություններ հարուցելու և այլ իրավունքներից: Գաղութի թեմական մարմինները ևս երկրի նախարարությունների ու գերատեսչությունների հետ շփվում են այդ պատգամավորների միջոցով:

Մեջլիսում Իրանի կրոնական փոքրամասնությունները՝ հայերը, ասորիները, հրեաները և զրադաշտականները միասին վերցրած զբաղեցնում են 5 տեղ, որից երկուսը պատկանում է հայերին:

Թեհրանի հայոց թեմի Առաջնորդարանի տվյալներով, մինչև 1979 թվականի իսլամական հեղափոխությունը, Իրանում հայ բնակչության թիվը եղել է 200.000 մարդ, որից 78,5% բնակվում էր երկրի կենտրոնական, 9% հյուսիսային, իսկ 12% հարավային շրջաններում:

Ներկայումս Իրանում հայերի թիվը հաստատապես նվազել է, սակայն դժբախտաբար այդ առթիվ չկան ստույգ վիճակագրական տվյալներ:

1978-1979 թ.թ. իսլամական հեղափոխությունից հետո հայ բնակչության տեղաշարժերի պատճառով այժմ կենտրոնական նահանգում, մասնավորապես Թեհրանում է ապրում հայության մեծամասնությունը: Հեղափոխությունից հետո նկատվում էր հայ բնակչության արտագաղթ այլ երկրներ, մասնավորապես ԱՄՆ, Կանադա, Գերմանիա, Ավստրիա, Անգլիա, Հոլանդիա, Ֆրանսիա, Շվեդիա, Իսպանիա, Ավստրալիա և այլն: Այդ արտագաղթը բավականին շոշափելի տեմպերով դեռ շարունակվում է: Անկասկած Իրանի հայ բնակչության թիվը առաջիկայում դեռ միտում ունի նվազելու:

XX դարում ևս իրանահայ գաղութում մշակույթի և լուսավորության բնագավառում ձեռք բերվեցին նշանակալից հաջողություններ: Դարասկզբին երկրի հայաշատ վայրերում հիմնվեցին մի շարք դպրոցներ: 20-ական թվականներին, օրինակ, դպրոցներ հիմնվեցին Սիվազում, Սուլթանաբադում, Շիրամահալի, Փերիայի, Բուրվառի գավառների գյուղերում:

Այդ տարիներին հայ երեխաների մի մասը հաճախում էր ամերիկյան, անգլիական և ֆրանսիական միսիոներական դպրոցներ: Կյանքը հրամայողաբար պահանջում էր եվրոպական լեզուների իմացություն: Սակայն 30-ական թվականներին կառավարության կողմից լուսավորության բնագավառում իրագործած բարեփոխման հետևանքով, միսիոներական գրեթե բոլոր դպրոցները փակվեցին: Դա անհրաժեշտություն ստեղծեց ընդլայնելու հայկական դպրոցական ցանցը, որովհետև միսիոներական դպրոցների հայ աշակերտները գերադասում էին հաճախել հայկական դպրոցներ: 1932-1933 թթ. Թեհրանում հիմնվեց «Բուշեշ-Դավթյան» դպրոցը, դպրոց բացվեց նաև հարավի նավթարդյունաբերության խոշոր կենտրոնում՝ Մասջեդ-Սուլեյմանում: Միսիոներական դպրոցի փակման կապակցությամբ, հայկական դպրոցներում ավելի մեծ ուշադրություն դարձվեց օտար լեզուների դասաժամերի ավելացմանը:

XX դարում իրանահայ գաղթօջախը տվել է մի շարք անվանի գրողներ, գրականագետներ, թարգմանիչներ և այլն (Հովհաննես Մատեիյան, Հովսեփ Միրզայան, Արամ Գառոնե, Գևորգ Դարֆի, Մարգար Ղարաբեկյան (Դև), Լ. Կարապետ, Արմանտ, Հրանտ Ֆալյան, Գալուստ Խանենց, Զորայր Միրզայան, Վարանդ (Սուքիաս Քյուրքյան), Խաչիկ Խաչեր և ուրիշներ:

Գաղութը տվել է նաև գեղանկարիչների մի ամբողջ համաստեղություն: Հիրավի, նկարչական արվեստը իրանահայ մշակույթի մեջ դարձավ

առաջատար ու հարաճուն զարգացող բնագավառ: Թվարկենք առավել անվանի նկարիչներից մի քանիսին. Անդրե Սևրյուգյան (Դարվիշ), Սարգիս Խաչատրյան, Ավագ Հայրապետյան, Երվանդ Նահապետյան, Սմբատ Տեր-Կյուրեղյան, Միքայել Շահբազյան, Մարգո Գրիգորյան, Հարություն Մինասյան, Էդվարդ Այվազյան, Սեդրակ Ղազարյան, Միրակ Մելքումյան, Գրիգոր Վահրամյան, Մարգար Ղարաբեկյան (Հև), Հակոբ Վարդանյան, Արտաշես Գուրգենյան, Մարուսիա (Առաքելյան) Վահրամյան, Հրայր Կարապետյան, Կլարա Աբգարյան (Աբգար), Եսայի Շահիջանյան, Արթուր Սարգսյան, Անդրանիկ Բաբոմյան, Մարքո Գրիգորյան, Էդման Այվազյան, Սարգիս Ջաքարյան (Վարդուր), Աշոտ Մինասյան և այլն:

Երաժշտական արվեստի բնագավառում XX դարում աչքի են ընկել իրանահայ ընդամենը մի քանի արվեստագետներ ու երգահաններ՝ Լևոն Գրիգորյանը, որը խոշոր վաստակ ունի իրանահայության շրջանում երաժշտության զարգացման ու տարածման գործում, ականավոր երգահան Նիկոլ Գալանտերյանը, ջութակահար Բաբկեն Թամրազյանը, երգահան Համբարձում Գրիգորյանը, Աշոտ Պատմագրյանը, ճանաչված դաշնակահար-երգահան Էմանուել Մելիք-Ասլանյանը, դաշնակահար Վաչե Հասրաթյանը, խմբավար-երգահան Լորիս Ճգնավորյանը և ուրիշներ:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՉԵՌԲԵՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը հռչակվեց անկախ պետություն: Իրանի Իսլամական Հանրապետությունը առաջին պետություններից մեկն էր, որ պաշտոնապես ճանաչեց Հայաստանի նորոգ անկախությունը (1991 թ. դեկտեմբերին): Դրան հետևեց 1992 թ. փետրվարի 9-ին (1370 թ. բահմանի 20-ին) Թեհրանում ստորագրված հռչակագիրը՝ Հայաստանի և Իրանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ: Նույն օրը ստորագրվեց նաև մեկ այլ փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը, որով կողմերը հավաստում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատելու իրենց մտադրությունը, որպես գործունեության ելակետեր ընդունելով փոխադարձ տա-

ռածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի և միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքները:

Վերոհիշյալ փաստաթղթերը ստորագրեցին. հայկական կողմից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը, իրանական կողմից՝ Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարար, դոկտոր Ալի Աքբար Վելայաթին: Կողմերը համաձայնության եկան նաև այն մասին, որ վերոհիշյալ փաստաթղթերի ստորագրման պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Երևանում և Թեհրանում կբացվեն դեսպանություններ:

Այսպիսով հիմք դրվեցին երկու հարևան և ինքնիշխան պետությունների միջև պաշտոնական հարաբերություններին, որոնք բոլոր նախադրյալներն ունեին արագ և վերընթաց գծով զարգանալու համար: Դրա երաշխիքը նախ և առաջ կայանում էր նրանում, որ հայ-իրանական բարեկամական հարաբերություններն ունեին լավ պատմական հիմք: Այնուհետև, այդ պետությունների միջև գոյություն չուներ որևէ տարածքային կամ էթնիկական հիմնախնդիր, վեճ և այլն:

1992թ. փետրվարի 28-ին իր առաջին պաշտոնական այցով Երևան ժամանեց ԻԻՀ արտգործնախարար դոկտոր Ալի Աքբար Վելայաթին: Այցի հիմնական նպատակը փոխադարձ ծանոթությունն էր, միջազգային և տարածաշրջանային քաղաքական հարցերի վերաբերյալ կողմերի տեսակետների շարադրումը և անշուշտ հետագա մտադրությունների վերաբերյալ երկկողմանի ծրագրերի մշակումը: Բարեկամ երկրի բարձրաստիճան դիվանագետի և քաղաքական գործչի այցը խանդավառությամբ ընդունվեց հայ ժողովրդի կողմից: Դոկտոր Վելայաթին Հայաստանում արժանացավ բարձր պատիվների, որի մասին նա ծավալուն տեղեկատվություն հրապարակեց իրանական մամուլում: Երևանում ի թիվս վարչապետի, արտաքին գործերի նախարարի և այլն, բարձրաստիճան հյուրը ընդունվեց նաև ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից:

Հիրավի, այդ այցը նոր թափ հաղորդեց հայ-իրանական սկզբնավորվող հարաբերություններին: Իրանի արտաքին գերատեսչության ղեկավարը կարևորեց Իրանի համար Հայաստանի՝ որպես իր անմիջական և հուսալի հարևաններից մեկի, հետ համակողմանի հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը: Ծանոթանալով Ադրբեջանի և Թուրքիայի կողմից տրանսպորտային շրջափակման ենթարկված Հայաստանի ծանր վիճակի հետ, դոկտոր Վելայաթին շեշտեց, որ այստեղ-

տև Իրանը Հայաստանի համար կլինի աշխարհին հաղորդակցվելու ամենակարճ միջոցը և վերջինիս այլևս չեն սպառնա ցամաքային շրջափակումները:

Ի դեպ, Վելայաթիի այցի կարևորագույն նպատակներից մեկն էր նաև Իրանի միջնորդական առաքելության շրջանակներում ղարաբաղյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորման հնարավորություններն ուսումնասիրելու և քաղաքական նախաձեռնությունների շուրջ փոխըմբռնման եզրերի որոնումը: Այդ բանակցությունների արդյունքում կազմվեց մի փաստաթուղթ, որը հրապարակվեց 1992թ. մարտի 16-ին: Այն վերաբերում էր ղարաբաղյան կոնֆլիկտին Իրանի Իսլամական Հանրապետության միջնորդական առաքելության ստանձմանը:

1992թ. մարտին Հայաստան այցելեց նաև ԻԻՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մահմուդ Վայեզին: Երևանում ունեցած իր պաշտոնական հանդիպումների ժամանակ Իրանի փոխարտգործնախարարը ժխտեց որոշ քաղաքական ուժերի այն պնդումները, թե իբր ղարաբաղյան հակամարտությունն ունի կրոնական բնույթ: Մարտի 31-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իրանական դիվանագետին ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ը:

1992թ. ապրիլի 22-ին Հայաստան ժամանեց ԻԻՀ պատվիրակությունը՝ իրանական մեջլիսի հայազգի պատգամավոր Վարդան Վարդանյանի գլխավորությամբ: Պատվիրակությունը երևան էր բերել Իրանի հայ համայնքի հանգանակած միջոցներով ձեռք բերված և իրանական կառավարության աջակցությամբ ուղարկված 24 տոնն դեղորայք ու սնունդաթերք: Իրանի պատվիրակությանը ընդունեց ՀՀ Գերագույն Խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը:

Երկու երկրների հարաբերությունների հետագա զարգացման գործում շրջադարձային նշանակություն ունեցավ 1992թ. մայիսի 6-8-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և նրան ուղեկցող պատվիրակության պաշտոնական այցը Իրանի Իսլամական Հանրապետություն: Այցի ընթացքում քննարկման ենթարկվեցին հայ-իրանական տնտեսական և քաղաքական հարաբերություններին վերաբերող բազմապիսի հարցեր: Բանակցությունների արդյունքում ՀՀ նախագահի և ԻԻՀ նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի միջև ստորագրվեց համատեղ հայտարարություն «Համագործակցության, բարեկամության և բարիդրացիության մասին», որը դարձավ երկու երկրների միջպետական հարաբե-

ությունների հիմքում ընկած կարևորագույն փաստաթուղթը: Դրանով երկկողմ հարաբերությունները դրվում էին բարձր պետական մակարդակի վրա:

Փաստաթղթում նշվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ որպես իրավահավասար երկու բարեկամ և դրացի պետություններ, կզարգացնեն երկկողմանի հարաբերությունները: Երկու պետությունները՝ ելնելով միմյանց ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, միմյանց ներքին գործերին չմիջամտելու, ուժային սպառնալիքից ձեռնպահ մնալու, տարաձայնությունները խաղաղ ճանապարհով լուծելու, փոխադարձ շահերի, միջազգային պարտավորությունների նկատմամբ հարգանքի սկզբունքներից, ձեռնամուխ կլինեն իրենց հարաբերությունների զարգացմանը:

Համառեղ հայտարարության մեջ հատուկ շեշտվում էր, որ երկու պետությունները միմյանց ընդհանուր սահմանները դիտում են որպես խաղաղության սահմաններ: Հաշվի առնելով յուրաքանչյուր երկրում գոյություն ունեցող հնարավորությունները, երկկողմանի հարաբերություններն էլ ավելի զարգացնելու նպատակով, կողմերը համաձայնվում էին պատրաստել և կնքել համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր և առավելագույնս օգտագործել միմյանց հնարավորություններն ու ներուժը:

Թեհրանում գտնվելու օրերին, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և նրա գլխավորած բարձրաստիճան պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան Թեհրանի հայ համայնքի բազմահազար բնակչության հետ: Թեհրանահայությունը խանդավառ վերաբերմունք ցուցաբերեց Հայրենիքի ներկայացուցիչների նկատմամբ:

1992թ. ապրիլին, Երևանում «Հրազդան» հյուրանոցի ընդարձակ դահլիճում, վերին աստիճանի հանդիսավոր պայմաններում, տեղի ունեցավ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության պաշտոնական բացումը: Հայաստանի Հանրապետության ողջ դեկավարությունը, հայ մտավորականության՝ գիտնականների, գրողների, արվեստագետների հարյուրավոր ներկայացուցիչներ, մասնակցեցին այդ հանդիսավոր ու հիշարժան արարողությանը: Դեսպանության բացումից հետո գործերի հավատարմատարի պաշտոնը ստանձնեց փորձառու դիվանագետ Բահրամ Ղասեմին, որին հետագայում փոխարինեց երիտասարդ և եռանդուն Սիմադ Սոբհանին:

Մինչև 1994թ. երկու երկրների դիվանագիտական հարաբերությունները գտնվում էին հավատարմատարի մակարդակի վրա: Առաջինը իրանական կողմը բարձրացրեց հարաբերությունների մակարդակը և նույն 1994թ. Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնով երևան ժամանեց Համիդ Ռեզա Նիքքար Էսֆահանին:

Թեհրանում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը բացվեց քիչ ավելի ուշ՝ 1992թ. դեկտեմբերին: դրանից մոտ չորս ամիս առաջ, 1992 թ. սեպտեմբերի 23-ին, իրանական «Արիաթուր» օդային ընկերության չարտերային ինքնաթիռով, Իրանի մայրաքաղաք ժամանեց Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար նշանակված տողերիս հեղինակը, որն երկու տարի այդ կարգավիճակով պաշտոնավարելուց հետո՝ 1994թ. նոյեմբերի 9-ին նշանակվեց ԻԻՀ-ում Հայաստանի Հանրապետության առաջին արտակարգ ու լիազոր դեսպան: Վահան Բայբուրդյանը այդ պաշտոնը վարեց մինչև 1998թ. հուլիս ամիսը:

Թեհրանում Հայաստանի Հանրապետության դեսպանության պաշտոնական բացման արարողությունը տեղի ունեցավ 1992թ. դեկտեմբերի 22-ին: Բացման արարողությանը մասնակցում էին ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը իրեն ուղեկցող ստվարաթիվ պատվիրակության հետ, Իրանի արտգործնախարարության բարձրաստիճան դիվանագետներ, Թեհրանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, միջազգային զանազան կազմակերպությունների անդամներ, Թեհրանի հայ համայնքի հոգևոր իշխանությունների ներկայացուցիչներ՝ Գերաշնորհ Արտակ Արքեպիսկոպոս Մանուկյանի հայ կաթողիկե հարանվանության հոգևոր առաջնորդ, Գերապայծառ Վարդան արքեպիսկոպոս Թեքեյանի գլխավորությամբ, Սպահանի թեմի առաջնորդ Կորյուն արքեպիսկոպոս Պարսյանը, Ասորաստանի թեմի առաջնորդ Նշան Վարդապետ Թոփուզյանը, Իրանի հայ համայնքի բազմաթիվ անդամներ, հյուրեր և այլն: Դեսպանատանը կից փողոցներում հավաքվել էին հազարավոր թեհրանահայեր: Հայաստանի օրհներգի՝ «Մեր Հայրենիքիս» հնչյունների ներքո, Գագիկ Հարությունյանը և Վահան Բայբուրդյանը բարձրացրին Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ եռագույնը:

Նկատի ունենալով մի շարք կարևորագույն գործոններ, մասնավորապես Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը,

նրա ներկա իրողությունները, մասնավորապես Ադրբեջանի և Թուրքիայի կողմից տրանսպորտային շրջափակումը, Ռուսաստանի հետ ընդհանուր սահմանի բացակայությունը, Վրաստանում այդ ժամանակաշրջանում տեղ գտած ժամանակավոր ապակայունացումը և այլն, ի սկզբանե Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ Իրանի հետ հարաբերություններին տրվեցին առաջնություն և հույժ կարևորություն: Նման քաղաքական դիրքորոշումը պայմանավորված էր նաև նրանով, որ Իրանն իր առանձնահատուկ դիրքով, վիթխարի կենսական տարածությամբ, համաշխարհային նշանակություն ունեցող կոմունիկացիաներով, նրա ափերը ողողող Պարսից ծոցի և Օմանի ծովի առկայությամբ, իրենից ներկայացնում է կարևորագույն տնտեսական ու քաղաքական գործոն ոչ միայն տարածաշրջանում, այլև ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում: Բացի այդ, Իրանը մի յուրահատուկ կապող օղակ է ոչ միայն իր տահմանակից պետությունների, այլև ամբողջ տարածաշրջանների՝ Կովկասի, Միջին Ասիայի, Հնդկական թերակղզու, արաբական աշխարհի հետ: Հիրավի, Իրանը համաշխարհային մասշտաբով մի տարանցիկ կամուրջ է, աշխարհի կարևորագույն ռազմավարական շրջաններից մեկը: Այդ երկիրն ունի ոչ միայն պատկառելի բնական ու մարդկային ռեսուրսներ, այլև հսկայական տնտեսական ու ռազմական ներուժ: Միևնույն ժամանակ նա իրենից ներկայացնում է Մերձավոր ու Միջին Արևելքում ռազմաքաղաքական հարաբերակցությունը հավասարակշռող ազդու ուժ:

Այս բոլորն, անշուշտ, բանալի է հասկանալու համար, թե ո՞րն էր լինելու Իրանի դերն անկախ Հայաստանի կյանքում: Իրանը նախ և առաջ պատուհան է Հայաստանի համար՝ բացված դեպի արտաքին աշխարհ: Ընդորում, դա մշտական, կայուն և անփոփոխելի արժեք է: Մեժխտելի է նաև այն հանգամանքը, որ Հայաստանն ու Իրանը ներկա աշխարհի իրողություններում ունեն բազմաթիվ ընդհանուր, այդ թվում նաև ռազմավարական շահեր, առանձին դեպքերում նույնիսկ համանման խնդիրներ, տարբեր տեսակի ընդհանրություններ, վերջապես պատմական ավանդական կապեր և այլն:

Բնավ պատահական չէ, որ հենց սկզբից հայ-իրանական համագործակցության ամենաձգտումն ու ակտիվ բնագավառներն էին դառնալու առևտուրն ու տնտեսությունը: Հայաստանի շրջափակման և տնտեսական դժվարությունների պայմաններում Իրանի հետ համագործակցութ-

յան մեջ Հայաստանի Հանրապետությունը տեսնում էր տնտեսական առկա խնդիրների լուծման կարևորագույն ուղիներից մեկը: Այդ գործը կայուն հիմքերի վրա դնելու և արդյունավետ կերպով զարգացնելու նպատակով, 1992թ. նոյեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայ-իրանական հարաբերությունները համակարգող պետական հանձնախումբ», որը գլխավորեց ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը: Այն իսկապես իր խոշոր լուման ներդրեց հայ-իրանական տնտեսական հարաբերությունների աստիճանական զարգացման ու ծավալման գործում: Երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները խթանելու նպատակով, Թեհրանում ստեղծվեց նաև «Իրան-Հայաստան առևտրական պալատ»՝ իրանահայ գործարար, միջազգային բեռնափոխադրումների «Սաթի» ընկերության ղեկավար Լևոն Ահարոնյանի գլխավորությամբ: Պալատի մեջ ընդգրկվեցին ինչպես հայ, այնպես էլ իրանցի մեծ թվով գործարարներ:

Միանգամայն ակնհայտ էր, որ հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների սկզբնավորման ու ծավալման համար անհրաժեշտ էր Արաքս գետի վրա կառուցել Հայաստանն Իրանին կապող կամուրջ: Նրա գոյությունն անհրաժեշտ էր նաև Հայաստանի ցամաքային ճանապարհների շրջափակումը ճեղքելու և դեպի արտաքին աշխարհ դուրս գալու կենսական նշանակություն ունեցող խնդիրը լուծելու համար: Այդ կարևորագույն հարցին ընթացք տալու նպատակով, ստեղծվեց նախաձեռնող մի խումբ՝ Թելման Տեր-Պետրոսյանի (աշխատանքային խմբի ղեկավար), Ժորա Միրզաբեկյանի և Ալբերտ Ավետիսյանի գլխավորությամբ, որն անմիջապես ձեռնամուխ եղավ աշխատանքների: Նախաձեռնող խմբին գործուն աջակցություն էին ցույց տալիս իրանահայ հայրենասեր գործիչներ Լևոն Ահարոնյանը, Վիգեն Ասլանյանը և մի շարք այլ անձինք:

Հայաստանի Հանրապետության կառավարության գործուն աջակցությամբ՝ կարճ ժամանակամիջոցի ընթացքում, հնարավոր եղավ Արաքսի վրա՝ Մեղրու Ագարակ ավանի դիմաց, տեղադրել ժամանակավոր նավակամուրջ (պոնտոնային կամուրջ), որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1992թ. մայիսի 6-ին: Կամրջի բացման արարողության ժամանակ ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանն իր ելույթում նշեց, որ Մեղրու նավակամրջի շահագործումը մեծ ծրագրի սկիզբն է, որով մշտական կայուն կապ է ստեղծվում հարևան և բարեկամ երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ:

յան մեջ Հայաստանի Հանրապետությունը տեսնում էր տնտեսական առկա խնդիրների լուծման կարևորագույն ուղիներից մեկը: Այդ գործը կայուն հիմքերի վրա դնելու և արդյունավետ կերպով զարգացնելու նպատակով, 1992թ. նոյեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայ-իրանական հարաբերությունները համակարգող պետական հանձնախումբ», որը գլխավորեց ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը: Այն իսկապես իր խոշոր լուման ներդրեց հայ-իրանական տնտեսական հարաբերությունների ամրակայման զարգացման ու ծավալման գործում: Երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները խթանելու նպատակով, Թեհրանում ստեղծվեց նաև «Իրան-Հայաստան առևտրական պալատ»՝ իրանահայ գործարար, միջազգային բեռնափոխադրումների «Մաթիս» ընկերության ղեկավար Լևոն Սիարոնյանի գլխավորությամբ: Պալատի մեջ ընդգրկվեցին ինչպես հայ, այնպես էլ իրանցի մեծ թվով գործարարներ:

Միանգամայն ակնհայտ էր, որ հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների սկզբնավորման ու ծավալման համար անհրաժեշտ էր Արաքս գետի վրա կառուցել Հայաստանն Իրանին կապող կամուրջ: Նրա գոյությունն անհրաժեշտ էր նաև Հայաստանի ցամաքային ճանապարհների շրջափակումը ճեղքելու և դեպի արտաքին աշխարհ դուրս գալու կենսական նշանակություն ունեցող խնդիրը լուծելու համար: Այդ կարևորագույն հարցին ընթացք տալու նպատակով, ստեղծվեց նախաձեռնող մի խումբ՝ Թելման Տեր-Պետրոսյանի (աշխատանքային խմբի ղեկավար), Ժորա Միրզաբեկյանի և Ալբերտ Ավետիսյանի գլխավորությամբ, որն անմիջապես ձեռնամուխ եղավ աշխատանքների: Նախաձեռնող խմբին գործուն աջակցություն էին ցույց տալիս իրանահայ հայրենասեր գործիչներ Լևոն Սիարոնյանը, Վիգեն Ասլանյանը և մի շարք այլ անձինք:

Հայաստանի Հանրապետության կառավարության գործուն աջակցությամբ՝ կարճ ժամանակամիջոցի ընթացքում, հնարավոր եղավ Արաքսի վրա՝ Մեղրու Ագարակ ավանի դիմաց, տեղադրել ժամանակավոր նավակամուրջ (պոնտոնային կամուրջ), որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1992թ. մայիսի 6-ին: Կամրջի բացման արարողության ժամանակ ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանն իր ելույթում նշեց, որ Մեղրու նավակամրջի շահագործումը մեծ ծրագրի սկիզբն է, որով մշտական կայուն կապ է ստեղծվում հարևան և բարեկամ երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ:

Հիրավի, այդ ժամանակավոր կամուրջը դարձավ «փրկության ուղի», «հույսի կամուրջ», «կյանքի ճանապարհ», արյունատար անոթ, որը կոչված էր սնել շրջափակման հետևանքով հետզհետե հյուծվող մարմինը՝ Հայաստանի Հանրապետությունը: Այսպիսով, Իրանը եղբայրական օգնության ձեռք մեկնեց մեր մանուկ հանրապետությանը՝ ճեղքելու շրջափակման օղակը և դուրս գալու լայն աշխարհ:

Շուտով այդ կամուրջը դարձավ ուղևորների ու բեռների տեղափոխման բանուկ ճանապարհ: Մեղրիի շրջանում բացվեց սահմանային կետ, որն այնուհետև վերածվեց միջազգային անցումային կետի, սահմանագծում հիմնվեցին մաքսատներ և այլն: Սկսվեց Իրանի տարածքով տարանցիկ բեռների փոխադրումը Հայաստան: Ծայր առավ նաև Հայաստանի տարածքով իրանական բեռնատար մեքենաների տրանզիտային անցումը դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ:

Սակայն ժամանակավոր կամուրջն ի վիճակի չէր բավարարելու հարաճուն կերպով զարգացող հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների պահանջները: Ուստի ՀՀ և ԻԻՀ կառավարությունները՝ 1992թ. մայիսին 14-ին կնքված միջպետական համաձայնագրի համաձայն, ձեռնամուխ եղան համատեղ մշտական կամրջի նախագծման և կառուցման աշխատանքներին: Շնորհիվ Ավստրալիայի հայության դրամական աջակցության՝ հայկական կողմի համար գործնականում լուծվեց կամրջի շինարարության ֆինանսավորման խնդիրը:

Արաքսի վրա մշտական կամրջի շինարարությունն ավարտվեց 1995թ. դեկտեմբերին, իսկ Հայաստանի և Իրանի կողմից պաշտոնական բացումը կատարվեց 1996թ. հունվարի 9-ին:

Բացման արարողությանը մասնակցելու համար հայկական նորակառույց կամրջի վայրն էին ժամանել ՀՀ փոխնախագահ, հայ-իրանական կապերի համադրման պետական հանձնաժողովի նախագահ Գագիկ Հարությունյանը, նշված հանձնաժողովի անդամները, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահան Բայբուրդյանը, Մեղրու և Ղափանի շրջանի ղեկավարները: Իրանական կողմից ժամանել էին. ԻԻՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարար, Իրան-Հայաստան կապերի կոորդինացման հանձնաժողովի նախագահ Մորթեզա Մոհամմադխանը, հաղորդակցության, ճանապարհների և փոխադրումների նախարար Թորքանը, ԻԻՀ խորհրդարանի (մեջլիսի) հա-

Հիրավի, այդ ժամանակավոր կամուրջը դարձավ «փրկության ուղի», «հույսի կամուրջ», «կյանքի ճանապարհ», այդ անունատար անոթ, որը կոչված էր անել շրջափակման հետևանքով հետզհետե հյուծվող մարմինը՝ Հայաստանի Հանրապետությունը: Այսպիսով, Իրանը եղբայրական օգնության ձեռք մեկնեց մեր մանուկ հանրապետությանը՝ ճեղքելու շրջափակման օղակը և դուրս գալու լայն աշխարհ:

Շուտով այդ կամուրջը դարձավ ուղևորների ու բեռների տեղափոխման բանուկ ճանապարհ: Մեղրիի շրջանում բացվեց տահմանային կետ, որն այնուհետև վերածվեց միջազգային անցումային կետի, սահմանագծում հիմնվեցին մաքսատներ և այլն: Սկսվեց Իրանի տարածքով տարանցիկ բեռների փոխադրումը Հայաստան: Մայր առավ նաև Հայաստանի տարածքով իրանական բեռնատար մեքենաների տրանզիտային անցումը դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ:

Սակայն ժամանակավոր կամուրջն ի վիճակի չէր բավարարելու հարաճուն կերպով զարգացող հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների պահանջները: Ուստի ՀՀ և ԻԻՀ կառավարությունները՝ 1992թ. մայիսին 14-ին կնքված միջպետական համաձայնագրի համաձայն, ձեռնամուխ եղան հատուկ մշտական կամրջի նախագծման և կառուցման աշխատանքներին: Շնորհիվ Ավստրալիայի հայության դրական աջակցության՝ հայկական կողմի համար գործնականում լուծվեց կամրջի շինարարության ֆինանսավորման խնդիրը:

Արաքսի վրա մշտական կամրջի շինարարությունն ավարտվեց 1995թ. դեկտեմբերին, իսկ Հայաստանի և Իրանի կողմից պաշտոնական բացումը կատարվեց 1996թ. հունվարի 9-ին:

Բացման արարողությանը մասնակցելու համար հայկական նորակառույց կամրջի վայրն էին ժամանել ՀՀ փոխնախագահ, հայ-իրանական կապերի հաստատման պետական հանձնաժողովի նախագահ Գագիկ Հարությունյանը, նշված հանձնաժողովի անդամները, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահան Բայբուրդյանը, Մեղրու և Ղափանի շրջանի ղեկավարները: Իրանական կողմից ժամանել էին. ԻԻՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարար, Իրան-Հայաստան կապերի կոորդինացման հանձնաժողովի նախագահ Մորթեզա Մոհամմադխանը, հաղորդակցության, ճանապարհների և փոխադրամների նախարար Թորքանը, ԻԻՀ խորհրդարանի (մեջլիսի) հա-

յազգի պատգամավորներ Վարդան Վարդանյանը և Արտավազդ Բաղումյանը, Հայաստանի Հանրապետությունում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Ռեզա Նիքքար Էսֆահանին և պաշտոնատար այլ անձինք:

Մշտական կամրջի շահագործման հանձնումը նոր հզոր լիցք հաղորդեց հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերություններին: Երևանում բացվեց իրանական հայտնի բանկերից մեկի՝ «Բանք Մելաթի» բաժանմունքը, որը կոչված էր հեշտացնել երկու երկրների միջև առևտրական գործարքները, երկու երկրներում բացվեցին մասնավոր և պետական առևտրական ձեռնարկությունների մասնաճյուղեր, կազմակերպվեցին առևտրաարդյունաբերական ցուցահանդեսներ և այլն:

Անցած տարիների ընթացքում և՛ Հայաստանի, և՛ Իրանի մշտական ուշադրության կենտրոնում է եղել միմյանց միջև ցամաքային և օդային հաղորդակցության կատարելագործման ու զարգացման խնդիրը: Մինչև 1993թ. երկու երկրների միջև օդային կապն իրականացնում էր իրանական «Մրիաթուր» ընկերությունը: Իսկ 1993 թվականից սկսեց գործել Երևան-Թեհրան-Երևան օդային կանոնավոր թռիչքը, որն իրագործում է «Հայկական Ավիաուղիներ» ընկերությունը: 1996թ. հոկտեմբերի 31-ից Թեհրան-Երևան-Թեհրան չվերթով շաբաթական մեկ թռիչք սկսեց կատարել նաև իրանական «Քասպիան Էյրլայնզ» ավիաընկերությունը:

Երևանի և Թեհրանի միջև կանոնավոր ավտոբուսային երթևեկություն է իրագործվում հայկական և իրանական տրանսպորտային ընկերությունների կողմից: Երկու երկրների միջև խոշոր ծավալներով տեղի է ունենում ավտոմոբիլային բեռնափոխադրումներ, այդ թվում նաև տարանցիկ բեռների փոխադրում:

Հայաստանն ու Իրանը դարձել են միմյանց համար կարևորագույն առևտրական գործընկերներ: 1997 թվականին՝ 1994թ. համեմատությամբ, Հայաստանի ապրանքաշրջանառությունն Իրանի հետ ավելացավ մոտ երեք անգամ: Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի պատաքին առևտրի մեջ գրավեց առաջին տեղը: Երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների մեջ նորն այն էր, որ Իրանի մի շարք նահանգների (Ատրպատականի, Գիլյանի, Քերմանի, Սպահանի և այլն) գործարար շրջաններն ուղիղ և չմիջնորդավորված կապերի մեջ մտան Հայաստանի հետ:

1997-1998 թվականներին Հայաստան-Իրան առևտրատնտեսական հարաբերությունները հասան մի հանգրվանի, երբ անհրաժեշտություն

զգացվեց քանակական չափանիշներից անցում կատարել դեպի որակական չափանիշները: Կյանքը հրամայական խնդիր էր դնում վերացարկվել պարզ առևտուր վարելու քաղաքականությունից՝ որպես համագործակցության գերադաս սկզբունք, և երկու երկրների կապերը դիտարկել տնտեսական ինտեգրացման տեսանկյունից՝ հենված փոխշահագրգռման վրա: Այլ կերպ ասած, անհրաժեշտ էր տնտեսական հարաբերություններն առևտրի ոլորտից ավելի մեծ չափով տեղափոխել արտադրատնտեսական համագործակցության ոլորտ, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության բնագավառներ, խորացնել համագործակցությունը գիտության, նորագույն տեխնոլոգիաների, արդյունաբերական սարքավորումների, տեխնիկական գիտելիքների փոխանակման և այլ բնագավառներում:

Նշված շրջանում ավելի մեծ կարևորություն ձեռք բերեցին և էլ ավելի հեռանկարային դարձան համագործակցության ծրագրերը էներգետիկայի և տրանսպորտի բնագավառներում: 1995թ. կնքվեցին համաձայնագրեր Իրան-Հայաստան գազամուղի (Թավրիզ-Մեղրի), բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի, Արաքս գետի վրա համատեղ հիդրոէլեկտրակայանի կառուցման վերաբերյալ: 1997 թվականից սկսած բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը շահագործման է հանձնվել և Հայաստանը սկսել է ձեռնտու պայմաններով Իրանից ստանալ էլեկտրաէներգիա: Ինչ վերաբերում է գազամուղին, ապա նրա նախագծային աշխատանքներն արդեն ավարտվել են և առաջիկայում կսկսվի Հայաստանի համար այդ կարևորագույն խնդրի գործնական իրականացումը: Արդեն մի քանի տարի է, ինչ գործում է Իրան-Հայաստան ավտոմատ հեռախոսային կապը, որը գնալով կատարելագործվում ու տեխնիկապես նորացվում է: Նախագծեր կան Հայաստանն օպտիկա-թելքային հեռախոսային գծով Իրանի տարածքի վրայով կապելու Եվրոպայի և Ասիայի հետ: Իրանն իր մասնակցությունն է բերում Մեղրի-Երևան ավտոմայրուղու վերակառուցման ու բարեկարգման աշխատանքներին: Ակնառու հաջողություններ է ձեռք բերել նաև երկու երկրների արդյունաբերական հզորությունների կոոպերացումը, ստեղծվում են համատեղ ձեռնարկություններ և այլն: Բավական է ասել, որ 1997թ. տվյալներով Հայաստանում գործում էին 250 համատեղ հայ-իրանական ընկերություններ: 1997թ. Երևանում բացվեց իրանական ապրանքների բաշխման տերմինալ, որն ունի մեխանիկական բեռնավորման և բեռնաթափման կառամատույցներ, կապված է հայկական երկաթուղային ցանցին և այլն:

1997թ. Երևանում կազմակերպվեց իրանական արդյունաբերական և լայն սպառման ապրանքների խոշոր ցուցահանդես, որը վերստին եկավ վկայելու այն իրողությունը, որ հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունները թևակոխել են որակական զարգացման մի նոր էտապ: Դժվար չէ նկատել նաև, որ երկու երկրների տնտեսական համագործակցությունն ընդգրկել է նաև ենթակառուցվածքների ստեղծման բնագավառը:

Կարևոր է նկատի ունենալ, որ Հայաստանի շուկան՝ իր հնարավորությունների սահմանափակ լինելով հանդերձ, ԱՄՆ-ի կողմից տնտեսական շրջափակման մեջ գտնվող Իրանի համար գնալով ավելի ու ավելի է արժեքավորվում, մանավանդ, որ իրանական ներքին շուկան արդեն ձեռք է բերել կրիտիկական զանգված և կարիք ունի արտաքին նոր շուկաների:

Գաղտնիք չէ նաև, որ ներկայումս Հայաստանի տնտեսության զարգացման հաջողությունը մեծապես կախված է արտասահմանյան ներդրումներից: Թեև Իրանը՝ կապիտալների ավելցուկի բացակայության պատճառով, խուսափում է արտասահմանում ներդրումներ կատարելուց, սակայն փոքր բիզնեսի բնագավառում նա ինքն է դրսևորում նախաձեռնություն: Ինչպես, փոխշահավետության սկզբունքի վրա իրանական ներդրումների դեպքում, երկու երկրներն էլ կարող են լավագույնս օգտվել այդ համագործակցության պտուղներից:

Հայ-իրանական համագործակցության հսկայական հնարավորություններ կան գիտության և մշակույթի բնագավառներում: Հայերն ու իրանցիները երկու հզոր մշակույթ ունեցող ժողովուրդներ են և նրանց միջև մշակութային համագործակցությունը փոխադարձաբար կարող է հարստացնել երկու ժողովուրդներին և նպաստել ստեղծելու նոր որակներ և արժեքներ: Երկու երկրների միջև գիտական և մշակութային հարաբերությունների հիմքը դրվեց 1992թ. մայիսի 7-ին՝ կողմերի միջև ստորագրված համաձայնագրով, որի շնորհիվ նրանց միջև այդ բնագավառներում ևս ծավալվեցին ակնառու հարաբերություններ: Իրանը հատկապես մեծ հետաքրքրություն է դրսևորում Հայաստանի գիտատեխնիկական պոտենցիալի, ինչպես նաև հիմնարար գիտությունների բնագավառում նրա ունեցած ձեռքբերումների նկատմամբ: Այս բնագավառում կան համագործակցության անսպառ հնարավորություններ: Ներկայումս հայ և իրանցի գիտնականները սերտորեն համագործակցում

են նաև սեյսմիկ պաշտպանության ոլորտում, որը երկուստեք ունի կենսական նշանակություն:

Հայաստանի և Իրանի միջև երկկողմ գիտամշակութային կապերը զարգանում են պայմանագրային հիմքի վրա, սկսվել է լայն համագործակցություն, կատարվում են մշակույթի գործիչների փոխայցելություններ, կազմակերպվում են մշակութային բազմաթիվ միջոցառումներ, փառատոներ և այլն: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Թեհրանի իսլամական համալսարանում բացվել է հայագիտական բաժին, իսկ Երևանի Հրաչյա Աճառյանի համալսարանում՝ իրանագիտական բաժին:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետությունը զուրկ է արտաքին աշխարհ դուրս գալու համար հարմար կոմունիկացիաներից: Այդ բնական անհարմարությանն ավելանում է նաև հարևանների կողմից քաղաքական նպատակներով իրագործվող տրանսպորտային արհեստական շրջափակման մշտական հավանականությունը: Նման պայմաններում, անշուշտ, կենսական անհրաժեշտություն է դառնում Իրանը Հայաստանի հետ կապող երկաթուղագծի շինարարությունը, որն ի վիճակի կլինի Հայաստանի համար արտաքին աշխարհի հետ ապահովել հուսալի տրանսպորտային կապ:

Հիշյալ խնդիրը լուծելու համար, դեռևս 1992 թվականից, կատարվել են որոշակի քայլեր: Այսպես, 1992թ. մարտի 11-ին Երևան ժամանեց Իրանի հաղորդակցության, ճանապարհների և փոխադրումների նախարարության 14 հոգուց բաղկացած պատվիրակությունը՝ տրանսպորտի գծով փոխնախարար Մայիդ Նեժադի գլխավորությամբ: Ի թիվս մի շարք այլ հարցերի, պատվիրակության խնդիրն էր զբաղվել Իրանը Հայաստանի հետ կապող երկաթգծի շինարարության հնարավորությունների որոնումով: Այդ հարցի լուծումը կենսական անհրաժեշտություն է ներկայացնում Հայաստանի համար, որովհետև Երևան-Նախիջևան-Ջուլֆա-Թավրիզ երկաթգիծը՝ հայտնի իրադարձությունների պատճառով, փակվել է և չի գործում: Միանգամայն ակնհայտ է, որ բացման հեռանկարները նա մոտ ապագայում չեն երևում:

Ուստի վերոհիշյալ իրանական պատվիրակությունը՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարարության հետ համատեղ, սկսեց քննարկել Իրանը Հայաստանի հետ կապող երկաթուղագծի մի շարք տարբերակներ: Տարբերակներից մեկով նա-

խառնվում էր Մեղրիից երկաթգիծ կառուցել կամ դեպի Երասխական, կամ դեպի Ջերմուկ՝ հետագայում Մարտունի-Շորժա գծին միանալու պայմանով: Ինչ վերաբերում է այդ երկաթգծի իրանական հատվածին, ապա հայկական կողմի առաջարկած տարբերակով նպատակահարմար էր կառուցել Մեղրի-Ջուլֆա, կամ Մեղրի-Մարանդ հատվածը: Մինչդեռ իրանական կողմը գտնում էր, որ Իրանի տարածքում երկաթգիծ պետք է կառուցվի ոչ թե Ջուլֆայից մինչև Մեղրի, որի հեռավորությունը 64 կմ է, այլ Ալամդար քաղաքից մինչև Մեղրի 45 կմ երկարությամբ: Այս տարբերակը հիմնավորվում էր ոչ թե տնտեսական նպատակահարմարությամբ, այլ գլխավորապես ռազմաստրատեգիական նկատառումներով, գտնելով, որ երկաթգիծը Արաքսի ափերով անցնելու դեպքում՝ Նախիջևանի կողմից վտանգի ենթարկման հավանականությունը մեծանում է, մինչդեռ մյուս տարբերակի դեպքում, որը գալիս է երկրի խորքից և չի անցնում սահմանամերձ ճանապարհներով, այդ վտանգի հավանականությունը, ըստ էության, բացառվում է:

Պետք է նշել, որ հարցի քննարկումը վերջնական եզրահանգումներ չունեցավ, չնայած որ այն շարունակվում է արծարծվել մինչև օրս:

Միանգամայն ակնհայտ է, որ երկաթուղային այդ ծրագրի իրականացման դեպքում Հայաստանը հնարավորություն կստանա իրանական երկաթուղային ցանցի օգնությամբ ոչ միայն մուտք գործել դեպի հուսալի կոմունիկացիաները և դուրս գալ «լայն աշխարհ», մասնավորապես դեպի Պարսից ծոց, Հնդկաստան, Միջին Ասիա, Չինաստան և այլն, այլև ընդհանրապես բացառել իր տրանսպորտային հավանական շրջափակումները: Նույնիսկ Հայաստանի երկաթուղիների ապաշրջափակման դեպքում՝ այդ երկաթուղագիծը կարող է դառնալ այլընտրանքային և ապահովել Ադրբեջանից ու Թուրքիայից Հայաստանի տրանսպորտային կախվածության վերացումը:

- Նշված երկաթուղագծի շինարարությունը տնտեսական, քաղաքական և ռազմավարական առումով ձեռնտու է նաև Թեհրանին, որովհետև նա ձգտում է ստեղծել Իրանն Անկախ Պետությունների Համագործակցության երկրներին և Սև ծովի ավազանին կապող ցամաքային կոմունիկացիների մի ցանց: Այդ հարթության վրա Հայաստանի դերն ու նշանակությունն Իրանի համար՝ որպես կամուրջ դեպի հյուսիս ու արևմուտք, կարող է էապես բարձրանալ և դառնալ որոշիչ գործոն երկու երկրների տնտեսական և աշխարհաքաղաքական համագործակցության ամրապնդման համար:

Պետք է նկատի ունենալ նաև հետևյալ հանգամանքը. անկասկած Կասպյան նավթը Վրաստանի տարածքով դեպի թուրքական Ջեյհան նավահանգիստը հասցնելու նախագիծը մի կողմ է թողնում Հայաստանին, ավելի ճիշտ, նրան որոշակիորեն դուրս է թողնում տարածաշրջանային իրողությունների շրջանակից, որի արդյունքում նա նշանակալիորեն կարող է զրկվել իր աշխարհաքաղաքական կարևոր դերն օգտագործելու հնարավորությունից: Ի դեպ, միանգամայն ակնհայտ է, որ Թուրքիայի ակտիվ նախաձեռնությունները Կարս-Ախալքալակ-Մարաբդա երկաթուղու կառուցման ուղղությամբ նույնպես հանդիսանում է Հայաստանը և Իրանը շրջանցելու տարբերակ: Դա կարող է շատ բան փոխել տարածաշրջանի ուժերի դասավորության մեջ, թեև անշուշտ չի կարող ստեղծել սկզբունքորեն նոր իրավիճակ:

Այդ կապակցությամբ Հայաստանի համար առանձնապես կարևոր է դառնում միջազգային բեռնափոխադրումների այլընտրանքային մեկ այլ ուղու ստեղծումը, տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Թավրիզ-Մեղրի-Երևան-Բաթում (Փոթի) ավտոմայրուղուն, որն անկասկած հսկայական թափով կաշխատի նաև Հայաստանի քաղաքական հնարավորությունների մեծացման ուղղությամբ

Ճիշտ է, Հայաստանի նյութական հնարավորություններն առայժմ խիստ սահմանափակ են նման խոշոր նախագծեր իրականացնելու համար, սակայն նկատի ունենալով, որ խոսքը գնում է նրա քաղաքական ապագայի հարցին, անհրաժեշտ է ուղիներ որոնել այդ ծրագրերի իրականացման համար, ընդորում՝ մշտապես հիշելով, որ նման տրանսպորտային ցանցի ստեղծմամբ շահագրգռված են նաև Իրանը և Ռուսաստանը, ուստի և չի բացառվում նրանց մասնակցությունն այդ հարցի լուծմանը:

Ներկայումս Հայաստանի համար հույժ կարևոր է նաև Պարսից ծոցի Բանդար-Աբբաս նավահանգստի օգտագործման ծավալների մեծացումը: Արդեն մի քանի տարի է, ինչ խոշոր մասշտաբներով իրականացվում է Պարսից Ծոց-Իրան-Հայաստան սխեմայի օգտագործումն առևտրատնտեսական նպատակներով:

Բանդար-Աբբաս նավահանգիստը ծառայում է որպես փոխաբեռնման կետ Ծոցի ավազանի (հատկապես՝ Արաբական Միացյալ Էմիրություններ) և հարավ Արևելյան Ասիայի երկրներից տարանցիկ բեռներ Հայաստան տեղափոխելու համար: Բանդար-Աբբասի վրայով Հայաստանը

կապվում է նաև Հնդկական սուբկոնտինենտի խոշորագույն նավահանգիստներից մեկի՝ Կարաչիի հետ:

Մի խոսքով, Իրանի գլոբալ քաղաքական ծրագրերում գնալով ավելի հստակորեն է ուրվագծվում Հայաստանի գրաված հանգուցային տեղը, մանավանդ, եթե նկատի ունենանք հյուսիս-հարավ և Իրան-Մև Ծով-Արևմուտք ճանապարհների վրա նրա խաչմերուկային նշանակությունը: Իրանի քաղաքական շրջանակների կարծիքով, Հայաստանն իր մոնոէթնիկ կազմով, արդյունաբերական հնարավորություններով, գիտական ներուժով և այլն՝ հեռանկարային պետություն է:

Իրանի համար Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումը ձեռք է բերում խոշոր կարևորություն նաև այն առումով, որ Հայաստանը հանդիսանում է իր միակ սահմանակից քրիստոնյա պետությունը, ուստի նրա հետ բարիդրացիական հարաբերությունները կարող է հանդիսանալ մի օրինակելի նմուշաձև իսլամի և քրիստոնեության խաղաղ գոյակցության ցուցադրման համար՝ փարատելու համար Արևմուտքում լայնորեն տարածված այն տեսակետը, որ իրանական «Հեղափոխական բնույթի ֆունդամենտալիզմը» տոգորված է կրոնական այլամերժության ու հարձակողական ոգևորությամբ:

Միանգամայն ակնհայտ է նաև, որ ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետությունը կենսականորեն շահագրգռված է Հայաստանը ավելի եռանդուն կերպով ընդգրկել իր տարածաշրջանային քաղաքականության շրջանակների մեջ, ընդորում՝ ոչ միայն երկկողմ, այլև բազմակողմ հարաբերությունների հիմքի վրա: Այդ մասին է վկայում այն, որ արդեն գործող Իրան-Հայաստան-Թուրքմենստան եռակողմ համագործակցությունից բացի, դեռևս 1996 թ. ձևավորվեց նաև Իրան-Հայաստան-Հունաստան համագործակցությունը

Հանրագումարի բերելով վերևում ասվածը, անհրաժեշտ է շեշտել, որ Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի Հանրապետության տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացումը հայ ժողովրդի ազգային ու պետական շահերի տեսակետից ունի կենսական նշանակություն: Այդ հարաբերությունները հեռանկարային են և խոստումնալից: Ուստի անհրաժեշտ է ամեն կերպ ծավալել Հայաստանի հարավային հարևանի հետ ակտիվ կառուցողական քաղաքականություն: Իրանն այսօր կարևոր գործոն է Հայաստանի առջև դրված բազմակողմ ազգային շահերի ապահովման գործընթացում և կարելի է անվարան ասել, որ նրա այդ դերն ապագայում գնալով մեծանալու է:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ (1992-1998 թթ.)

1992 թ.

— 1992 թ. փետրվարի 9-ին Թեհրանում հաշվարկի ստորագրումը Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին:

— Համաձայնագիր ԻԻՀ և ՀՀ միջև հյուպատոսական համագործակցության վերաբերյալ:

— Համաձայնագիր ՀՀ արտաքին գործերի նախարարության և ԻԻՀ ԱԳՆ միջև կոնսուլտացիներ անց կացնելու մասին:

— Համաձայնագիր ՀՀ և ԻԻՀ միջև դիվանագիտական և ծառայողական անձնագիր ունեցող անձանց առանց մուտքի վիզայի ելումուտ ապահովելու մասին:

— Փետրվարին ԻԻՀ արտաքին գործերի նախարար դոկտոր Ալի Աքբար Վելայաթիի առաջին պաշտոնական այցը Հայաստան:

— Մարտին ԻԻՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մահմուդ Վայեզիի այցը Հայաստան:

— Ապրիլին ԻԻՀ պատվիրակության այցը Հայաստան իրանական մեջլիսի պատգամավոր Վարդան Վարդանյանի գլխավորությամբ:

— Ապրիլին Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության բացումը:

— Մայիսի 6-8-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի պաշտոնական այցն Իրան:

— Մայիսին ՀՀ և ԻԻՀ հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հաշվարկի ստորագրումը:

— Փոխըմբռնման հուշագրի ստորագրում Թեհրանի համալսարանի երկրաֆիզիկայի ինստիտուտի և ՀՀ կառավարությանն առընթեր Մեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության միջև:

— Համաձայնագիր ՀՀ և ԻԻՀ միջև ապրանքափոխանակության և ուղևորությունների ընդարձակման և ծավալման վերաբերյալ:

— Համաձայնագիր ՀՀ և ԻԻՀ միջև առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին:

Մշակութային և գիտական համագործակցության վերաբերյալ համաձայնագրի ստորագրում ՀՀ և ԻԻՀ միջև՝ 1992-1994թ.թ. համար:

— Համաձայնագրի ստորագրում ԻԻՀ նավթի նախարարության և ՀՀ վառելիքաէներգետիկայի նախարարության միջև:

— Բանկային համաձայնագրի ստորագրում ԻԻՀ Կենտրոնական բանկի և ՀՀ Կենտրոնական բանկի միջև:

— Մաքսային համաձայնագիր ՀՀ և ԻԻՀ միջև տարանցիկ, արտահանվող և ներմուծվող ապրանքների և ուղևորների երթևեկության վերաբերյալ:

— Совместное заявление глав государств в Тегеране 7 мая 1992 г.

— Tehran Communique on Mediation of the Islamic Republic of Iran 16 march 1992.

— Դեկտեմբերին Թեհրանում Հայաստանի Հանրապետության դեսպանության բացումը:

— Մայիսին Մեղրու նավակամրջի շահագործման հանձնումը:

— Մայիսին Միջպետական համաձայնագրի ստորագրում Արաքս գետի վրա համատեղ մշտական կամրջի նախագծման և կառուցման վերաբերյալ:

— Համաձայնագիր ՀՀ ԱԳՆ և Թեհրանի թեմի թեմական խորհրդի միջև:

— Համատեղ Հայտարարություն ՀՀ և ԻԻՀ միջև համագործակցության և բարիդրացիության մասին:

— Համատեղ հայտարարություն «Տարածաշրջանային սեյսմիկ անվտանգության համակարգ» ստեղծելու մասին:

1993 թ.

— Փոխըմբռնման համաձայնագրի ստորագրում տրանսպորտային համագործակցության վերաբերյալ:

— Առևտրական համաձայնագիր ՀՀ և ԻԻՀ միջև:

— Համաձայնագիր ՀՀ կապի նախարարության և ԻԻՀ փոստի, հեռագրի և հեռախոսի նախարարությունների միջև:

— Արձանագրություն առևտրական համաձայնագիրը գործարկելու մասին:

— Պայմանագիր ՀՀ տրանսպորտի ու հաղորդակցության նախարարության և Արևելյան Ատրպատականի նահանգապետարանի միջև:

— Հունիսին Երևանում ԻԻՀ առևտրաարդյունաբերական առաջին ցուցահանդեսի բացումը:

— Օգոստոսին Թեհրանում ՀՀ արդյունաբերության նախարարության ցուցահանդեսի բացումը:

— Հայաստանը մասնակցեց Թեհրանում տեղի ունեցած 11-րդ միջազգային կինոփառատոնին:

ԻԻՀ խորհրդարանական պատվիրակության այցը Հայաստան:

— Արևելյան Անդրկովկասի պատվիրակության այցը Հայաստան՝ փոխնախանգապետ Մոհամմեդ Ալի Խաթիբիի գլխավորությամբ (օգոստոս):

1994 թ.

— Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև ՀՀ Մեղրու շրջանի և ԻԻՀ Մարանդի գավառի միջև սահմանամերձ առևտրի մասին:

— ՀՀ և ԻԻՀ միջև դիվանագիտական հարաբերությունների մակարդակի բարձրացումը դեսպանի աստիճանի: Նոյեմբերի 9-ին Վահան Բայբուրդյանի նշանակումը ԻԻՀ-ում ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան:

— Համաձայնագիր ՀՀ կառավարությանը առընթեր ստանդարտացման, չափաբանության և սերտիֆիկացման վարչության և ԻԻՀ արդյունաբերության նախարարության ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի միջև ստանդարտացման, չափաբանության և սերտիֆիկացման բնագավառում համագործակցության մասին:

— Համաձայնագիր ՀՀ և ԻԻՀ կառավարությունների միջև մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, զբոսաշրջիկության և զանգվածային լրատվության միջոցների բնագավառներում:

— Երևանի և Թեհրանի միջև կանոնավոր ավտոբուսային երթևեկության բացումը հայկական և իրանական տրանսպորտային ընկերությունների կողմից:

— 1994 թ. ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և նրան ուղեկցող պատվիրակության այցը ԻԻՀ՝ Բանդար- Աբբաս-Բաֆղ երկաթուղու բացման հանդիսավոր արարողությանը մասնակցելու համար:

— 1994 թ. ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հանդիպումները և բանակցությունները ԻԻՀ նախագահ Աբբաս Հաշեմի Ռաֆսանջանիի հետ Պարսից ծոցի Քիշ կղզում: (Պատվիրակության կազմում էին գլխ-

նշվում նաև պետնախարար Վազգեն Մարգսյանը և արտգործնախարար Վահան Փափազյանը):

— ԻՀԼ խորհրդարանի (Մեջլիս) փոխնախագահ, ԻՀԼ Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ռոհանիի այցը Երևան:

— ԻՀԼ արտգործնախարար, դոկտոր Ալի Աքբար Վելայաթիի պաշտոնական այցը Երևան:

— Սեպտեմբերի 8-ին Երևանում բացվեց ԻՀԼ արդյունաբերական ապրանքների երկրորդ ցուցահանդեսը:

— 1994 թ. ՀՀ-ը մասնակցեց Թավրիզում տեղի ունեցած միջազգային ցուցահանդեսին:

— Փետրվարի 1-12-ին ՀՀ մասնակցությունը Թեհրանի Միջազգային կինոփառատոնին:

— Հունիսին Հայաստանում անց կացվեց իրանական կինոֆիլմերի փառատոն:

— Հունիսի 17-ին Երևանի հանրապետական գեղագիտական կենտրոնի ցուցասրահում բացվեց «Նկարում են Իրանի երեխաները» ցուցահանդեսը:

— Սեպտեմբերի 5-15-ը Երևանում կայացավ իրանական կինոֆիլմերի փառատոն:

— Երևանի տիկնիկային թատրոնի մասնակցությունը Թեհրանի տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնին:

— Հունիսի 22-ին Երևանի Հակոբ Պարոնյանի անվան թիվ 56-րդ պարսկերեն թեքումով դպրոցի աշակերտների այցը ԻՀԼ:

— Հունվարին ԻՀԼ ԱԳՆ Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների գլխավոր վարչության պետ Մորթեզա Բանքի այցը Երևան:

— Փետրվարի 27-ին ՀՀ ԱԳՆ պատվիրակության այցը ԻՀԼ-ի:

— Մայիսի 3-ին ՀՀ Փոխնախագահ Գագիկ Հարությունյանի պաշտոնական այցը ԻՀԼ-ն:

1994 թ. ՀՀ-ն և ԻՀԼ-ն խորհրդարաններում հայ-իրանական և իրան-հայկական բարեկամության պատգամավորական խմբերի ստեղծումը:

— Հունիսի 18-ին ԻՀԼ ԱԳՆ ընդհանուր հարաբերությունների և կապերի գծով փոխնախարար Մորթեզա Մատմադիի այցը Երևան:

— Նոյեմբերին ԻՀԼ Շինարարական ջիհադի նախարարության առաջին փոխնախարար Մոհամմադ Ջավադ Իրավանիի գլխավորած պատվիրակության այցը Երևան:

Հունվարի 11-ին Երևան ժամանեց ԻԻՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության պատվիրակությունը նախարար դոկտոր Մոհամմադ խանի գլխավորությամբ:

1995 թ.

— Արձանագրություն «Հայ-իրանական հարաբերությունները համակարգող պետական հանձնախմբի» և Իրան- Հայաստան կապերի կոորդինացման հանձնաժողովի առաջին համատեղ նիստի մասին:

— Փոխըմբռնման հուշագիր ԻԻՀ փոստի, հեռագրի և հեռախոսային կապի նախարարության և ՀՀ կապի նախարարության միջև 8 մգբ թվային ռադիոռելեային միջազգային հեռախոսակապ հիմնելու մասին:

— Միջազգային տրանսպորտային փոխադրումների համաձայնագրի կնքում ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև:

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ և ԻԻՀ միջև գյուղատնտեսական համագործակցության վերաբերյալ:

— Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափումը կանխելու վերաբերյալ:

— Անձնական համաձայնագրի ստորագրում ՀՀ և ԻԻՀ միջև:

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ առողջապահության նախարարության և ԻԻՀ առողջապահության, դեղագործության և բժշկական կրթության նախարարության միջև առողջապահության և բժշկագիտական ոլորտներում համագործակցության վերաբերյալ:

— 1995 թ. Համագործակցության վերաբերյալ համաձայնագիր ՀՀ և ԻԻՀ միջև:

1995 թ. Փոխըմբռնման հուշագիր ՀՀ մաքսային վարչության և ԻԻՀ մաքսային ծառայության միջև համագործակցության և հարաբերությունների մասին:

— Addendum Memorandum of understanding to Javanis and Armenergo contract.

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ և ԻԻՀ միջև փոխհարաբերությունների զարգացման և ընդլայնման վերաբերյալ:

— Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանություն մասին:

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ և ԻԻՀ միջև առողջապահության բնագավառում:

— Համաձայնագիր սպորտի վերաբերյալ:

— Համաձայնագիր առևտրի վերաբերյալ:

— Համաձայնագիր ԻԻՀ-ից հեղուկ գազ Հայաստան առաքելու վերաբերյալ:

— 1995թ. Հուշագիր Երևանում Կապույտ մզկիթի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների հետ կապված ԻԻՀ և ՀՀ միջև համագործակցության վերաբերյալ (1995թ. 13 հոկտեմբերի):

1995թ. Հուշագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև հաղորդակցության և տրանսպորտի բնագնավառում հարաբերությունների զարգացման վերաբերյալ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող նախագծերի իրականացման համար (1995թ. 26 հունիսի):

— Հունվարի 12-ին Երևանում իրանական «Բանք մելլաթ» բանկի մասնաճյուղի բացումը:

— Համաձայնագրի ստորագրում Իրան-Հայաստան գազամուղի կառուցման վերաբերյալ:

— Համաձայնագրի ստորագրում Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի կառուցման վերաբերյալ:

— Համաձայնագրի ստորագրում Արաքս գետի վրա համատեղ հիդրոէլեկտրակայանի կառուցման վերաբերյալ:

— Մայիսին ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանի պաշտոնական այցը ԻԻՀ:

— Հունիսի 1-ին աշխատանքային այցով Երևան ժամանեց ԻԻՀ պետ գործ. նախ. տեղակալ Մահմուդ Վայեզին:

— Մարտին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և նրան ուղեկցող պատվիրակության այցը ԻԻՀ՝ Մեշհեդ-Սարախս-Թաջան երկաթուղու բացման հանդիսավոր արարողությանը մասնակցելու համար: Այս այցի ընթացքում հիմք դրվեց Իրան-Հայաստան-Թուրքմենստան եռակողմ համագործակցությանը:

1996 թ.

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ և ԻԻՀ միջև առողջապահության բնագավառում:

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ քաղաքաշինության նախարարության և ԻԻՀ բնակարանաշինության և քաղաքաշինության նախարարության միջև (1996թ. հոկտեմբերի 9-ին):

— Դեկտեմբերին ԻԻՀ առաջին փոխնախագահ Հասան Հաբիբիի պաշտոնական այցը Երևան:

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ և ԻԻՀ միջև (դեկտեմբերի 28-ին):

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ կապի նախարարության և ԻԻՀ փոստի, հեռագրի և հեռախոսի նախարարության միջև (դեկտեմբերի 28-ին)

— Արձանագրության ՀՀ և ԻԻՀ էներգետիկայի գծով կառավարական հանձնաժողովների միջև (դեկտեմբերի 28-ին):

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ և ԻԻՀ միջև տրանսպորտի բնագավառում (դեկտեմբերի 28-ին):

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ մաքսային վարչության և ԻԻՀ մաքսային ծառայության միջև մաքսային համագործակցության բնագավառում (դեկտեմբերի 28-ին):

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ և ԻԻՀ միջև առևտրի բնագավառում (դեկտեմբերի 28-ին):

— Փոխըմբռնման հուշագիր ՀՀ և ԻԻՀ միջև ՀՀ արդյունաբերության և էներգետիկայի նախարարությունների և ԻԻՀ Գազի ազգային ընկերության, նավթաքիմիական արդյունաբերության և սոցիալական ապահովության կազմակերպությունների միջև (դեկտեմբերի 28-ին):

— Արաքս գետի վրա մշտական կամրջի բացումը (1996թ. հունվարի 9-ին):

— Իրանական «Քասպիան էյրլայնզ» ավիաընկերության կողմից Թեհրան-Երևան-Թեհրան կանոնավոր չվերթի բացումը (1996թ. հոկտեմբերի 31-ին):

— Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի շահագործման հանձնումը:

— Երևանում ԻԻՀ արդյունաբերության ցուցահանդեսի բացումը:

— Դեկտեմբերին Հայաստանի, Հունաստանի և Իրանի արտաքին նախարարների կողմից փոխըմբռնման հուշագրի ստորագրումը՝ եռակողմ համագործակցության վերաբերյալ:

1998 թ.

— ՀՀ կառավարական պատվիրակության այցը ԻԻՀ, օպերատիվ հարցերի գծով նախարար, Հայ-իրանական հարաբերությունները համակարգող հանձնախմբի նախագահ Շահեն Կարամանուկյանի գլխավորությամբ (1998թ. հուլիսին):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 3
Երկիրը և բնակչությունը 7
Ֆիզիկա-աշխարհագրական ակնարկ 7
Բնակչությունը 24
Լեզուները և գրությունը 55
Կրոնները և հոգևորականությունը 64
Պետական կարգը և հասարակական կազմակերպությունները 77
Պետական կարգը և վարչա-քաղաքական բաժանումը 93
Զինված ուժերը 94
Պատմությունը 98
Տնտեսությունը 157
Ընդհանուր բնութագիրը 157
Արդյունաբերությունը 159
Գյուղատնտեսությունը 178
Տրանսպորտը և կապը 184
Ֆինանսները 193
Դրամական համակարգը 195
Արտաքին տնտեսական կապերը 195
Մշակույթը, լուսավորությունը և կրթությունը 217
Լուսավորությունը և բարձրագույն կրթությունը 217
Գիտությունը և գիտական հիմնարկները 227
Առողջապահությունը 228
Թանգարանները 230
Գրադարանները 235
Մամուլը 236
Լրատվական գործակալությունները 238
Ռադիոն և հեռուստատեսությունը 238
Ճարտարապետությունը 239
Կինոն 239
Թատրոնը 241

Զրոսաշրջիկությունը 242
Իրանի օրացույցները 243
Հայ-իրանական առնչությունները և Իրանի հայ գաղթավայրը
հնագույն շրջանից մինչև մեր օրերը 247
Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության
ձեռք բերումից հետո 311
Հայ-իրանական հարաբերությունների տարեգրությունից
(1992-1998 թթ.) 326

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բաքուրդյան Վահան Առաքելի

Իրանն այսօր

(Տեղեկատու)

URKEY
Caspian Sea
IRAQ
Baghdad
LEGEND
Capital
Centre of Province
Centre of County
Other Town
Airport
International Boundary
Province Boundary
Freeway or Highway
Main Road
Secondary Road
Gravel Road
Railway
Permanent Lake
Seasonal Lake
Scale : 1: 5,000,000
KUWAIT
Kuwait
SAUDI
ARABIA
Persian Gulf
Manama
BAHREIN
QATAR

GENERAL MAP OF ISLAMIC REPUBLIC OF IRA

03
Հ-26

Արևելագիտ-պատմաբան, դիվանագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Բաբուջանը ծնվել է 1933թ. Վրաստանի Միութիւն քաղաքում: Սովորել է տեղի հայկական դպրոցում: 1949թ. տեղափոխվել է Երևան, որտեղ ավարտել է 25 կոմիսարների անվան միջնակարգ դպրոցը:

1957թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան (իրանական) բաժինը:

Ասպիրանտական ուսումնառությունն անցել է Մոսկվայում, ԽՍՀՄ գիտությունների անդամ-թղթակցի արևելագիտության ինստիտուտում, ծանոթացնելով Իրանի պատմության հարցերում:

Երկու տասնյակ տարուց ավել գիտական աշխատանքով է զբաղվել Հայաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտում, միաժամանակ բուհերում քառորդ դարից ավել զբաղվելով մանկավարժական շերտում գործունեությամբ:

1980թ. տեղափոխվել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտ՝ դեկանավարելով ընդհանուր պատմության ամբիոնը, իսկ ապա տասնմեկ տարի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնը:

1992թ. անցել է դիվանագիտական աշխատանքի: Նշանակվել է Իրանի Իսլամական Հանրապետությունում ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան: ՀՀ-Նախագահի հրամանագրով նրան շնորհվել է արտակարգ և լիազոր դեսպանի դիպլոմատիկական աստիճան:

1996թ. Իրանում իր դիվանագիտական առաքելությունն ավարտելուց հետո նշանակվել է ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդական Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հարցերով, միաժամանակ ծանրաբեռնվելով բազմաթիվ գիտական ու մանկավարժական գործունեությամբ:

Վահան Բաբուջանի գիտական հետաքրքրությունները ամփոփված են Հայաստանում և արտասահմանում տարբեր լեզուներով հրատարակված մի շարք ձեռնարկներ, մենագրություններում ու հարյուրից ավել հոդվածներում, որոնք նրան բերել են միջազգային ճանաչում: Ձեռնարկներով հանրաս է եղել բազմաթիվ միջազգային համաժողովներում: